

**ՀՀ ԳԱԱ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

**ԳՈՀԱՐ ՄԱՆՎԵԼԻ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ**

**ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ  
ՀԱՄԱԿԱՐԳԻ ԻՆԸ ՍՅՈՒՆԵՐԸ**

**ԵՐԵՎԱՆ**

**ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ**

**2025**

**ՀՏԴ 94(55):321**

**ԳՄԴ 63.3(5Իրան)+66.021**

**Ի 800**

**Աշխատությունը տպագրության են երաշխավորել  
ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի և  
ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի  
գիտական խորհուրդները**

Խմբագիր՝ պատմական գիտությունների թեկնածու,  
ԻԻՀ Խորհրդարանի (9-րդ և 10-րդ գումարումների) պատգամավոր  
**Կարեն Խանլարյան**

Իսկանդարյան Գոհար

Իրանի Իսլամական Հանրապետության կառավարման համա-  
Ի 800 կարգի ինը սյուները / Գ. Իսկանդարյան.- Եր.: ՀՀ ԳԱԱ «Գի-  
տություն» հրատ., 2025.- 348 էջ:

Մենագրությունը Իրանի պետական կառուցվածքի համապար-  
փակ և համակարգված ուսումնասիրություն է, որ բացահայտում է այն  
ինստիտուտների դերակատարությունը, որոնք ձևավորում և ապահո-  
վում են երկրի բազմաշերտ իշխանական համակարգի գործունեությու-  
նը: Աշխատությունը հիմնված է ինչպես ԻԻՀ Սահմանադրության, այն-  
պես էլ վերջին տասնամյակում հրատարակված տարալեզու աղբյուրնե-  
րի վրա:

Աշխատանքում ներկայացված են Իրանի պետական համակարգի  
հիմնական ինստիտուտները, դրանց ձևավորման կարգը, լիազորու-  
թյուններն ու գործառնությունները, փոխադարձ վերահսկողական մեխա-  
նիզմները, ինչպես նաև այն առանձնահատկությունները, որոնք Իրանի  
համակարգին հաղորդում են յուրօրինակություն և հաճախ բարդ ընկա-  
լելիություն:

Աշխատությունը նախատեսված է իրանագետների, արևելագետ-  
ների, քաղաքական գիտությունների մասնագետների, դիվանագետնե-  
րի, ինչպես նաև Իրանի պետական կառուցվածքով հետաքրքրվող լայն  
շրջանների համար:

ISBN 978-5-8080-1590-6

DOI: 10.54503/978-5-8080-1590-6

© Իսկանդարյան Գոհար, 2025

© ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ, 2025

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

|                                                               |     |
|---------------------------------------------------------------|-----|
| Ներածություն .....                                            | 5   |
| Պատմական ակնարկ .....                                         | 7   |
| Առաջնորդի ինստիտուտ .....                                     | 16  |
| Առաջնորդության Բանիմացների խորհուրդ .....                     | 29  |
| Ո՛վ և ինչպե՛ս կարող է ընտրվել Բանիմացների խորհրդի անդամ ..... | 31  |
| Սահմանադրության պահապանների խորհուրդ .....                    | 47  |
| Հանրապետության Նախագահ .....                                  | 62  |
| Ո՛վ և ինչպե՛ս կարող է ընտրվել ԻԻՀ Նախագահ .....               | 67  |
| Իրանի կառավարությունը .....                                   | 113 |
| Իսլամական խորհրդակցական ժողով (Մեշլիս) .....                  | 167 |
| Հայերի ներկայությունը Իրանի մեշլիսում .....                   | 193 |
| Համակարգի նպատակահարմարության ժողով .....                     | 197 |
| Իրանի Դատական իշխանություն .....                              | 209 |
| Իրանի Իսլամական Հանրապետության զինված ուժերը .....            | 250 |
| Իրանի Իսլամական Հանրապետության բանակ .....                    | 257 |
| Իսլամական հեղափոխության պահապանների կորպուս .....             | 282 |
| Վերջաբան .....                                                | 322 |
| Օգտագործված գրականության ցանկ .....                           | 326 |

ՆՎԻՐՈՒՄ ԵՄ ԱՄՈՒՄՆՈՒՄ՝  
ԱՐՏԱԿ ՇԱՔԱՐՅԱՆԻՆ, ԻՄ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ  
ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԱՊԱՎԵՆԻՆ

---

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության հարավային հարևան Իրանի Իսլամական Հանրապետությունը առավելապես փակ բնույթի պետական համակարգ ունի, ուստի, դրանում տեղի ունեցող գործողությունները, որպես կանոն, լայն քննարկման չեն դրվում: Հարևան երկրի հետ համագործակցելու գլխավոր առաջնահերթություններից մեկը երկրի պետական կառուցվածքը ճիշտ հասկանալն է: Թեպետ, սկզբունքորեն, Իրանի պետական կառավարման համակարգն ամբողջությամբ շարադրված է ԻԻՀ Սահմանադրության մեջ, բայց ձևակերպումները, բնականաբար նաև իրավաբանական խրթին բառապաշարը, երբեմն տարընթերցման տեղիք են տալիս: Ուստի, սույն աշխատանքով փորձ է արվել առավել մատչելի ներկայացնելու Իրանի կառավարման համակարգը: Սույն թեման փորձել են ուսումնասիրել թե՛ ԱՄՆ-ում, թե՛ Եվրոպայում և թե՛ ՌԴ-ում հատվածաբար: ՀՀ-ում մինչ այժմ առանձին ինստիտուտներին անդրադարձ եղել է, սակայն այս թեմայով ամբողջական ուսումնասիրություն չի իրականացվել:

«Իրանի պետական կարգը և կառավարման համակարգը» 2015 թվականից դասավանդման առարկա է դարձել ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի մագիստրատուրայի ուսանողների համար: Դասապրոցեսի ընթացքում ուսումնասիրվում են բոլոր ինստիտուտները, դրանց լիազորությունները և պարտականությունները, ցույց է տրվում համակարգի աշխատանքի մեխանիզմը, որը փաստացի գործում է ավելի քան 45 տարի:

Ուշագրավ է, որ Իրանի պետական համակարգում, երբեմն, նույն աշխատանքն իրականացնելու համար գործում է մի քանի ինստիտուտ, որոնք հետաքրքիր կերպով փոխլրացնում, երբեմն էլ՝ վերահսկում են միմյանց: Անշուշտ, երբեմն էլ խանգարում են, քանի որ միշտ չէ, որ հստակ է, թե կոնկրետ որի լիազորություններն են առավել գերակա: Դա, որոշ դեպքերում խառնաշփոթի առիթ դառնալով,

բարդացնում է Իրանի պետական համակարգն ամբողջովին հասկանալը: Այս երկվությունը միմյանց վերահսկելու հնարավորություն է ստեղծում, ինչպես նաև սրա պատճառով երբեմն որոշ նախարարություններ մեկը մյուսի վրա են բարդում աշխատանքը՝ հիմնավորելով, որ այն իրենց գործառույթից դուրս է:

Սույն աշխատությունը իրականություն է դարձել ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի՝ 2015–2025 թթ. ուստարիների ուսանողների բազմաթիվ հարցերի նրանց հետ քննարկումների արդյունքում:

## ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Իրանը<sup>1</sup> 2500 տարի շարունակ միապետական երկիր էր, որտեղ կառավարում էր շահը կամ շահնշահը: 1905–11 թթ. Սահմանադրական հեղափոխությունից, սահմանադրության ընդունումից հետո Իրանը փաստացի բացարձակ միապետությունից անցում կատարեց սահմանադրական միապետության: Երկրի Սահմանադրությունը բաղկացած էր Հիմնական օրենքից և Հիմնական օրենքի լրացումներից: Սակայն իրականում Իրանը դեռ հեռու էր սահմանադրական երկիր կոչվելուց, քանի որ շահն էր հիմնական որոշողը, իսկ մեջլիսի գոյությունը, հատկապես 1930-ական թվականների կեսերից սկսած, խիստ ձևական էր:

1920-ական թվականների Իրանի քաղաքական երկնակամարում երևաց մի նոր գործիչ՝ Ռեզա խանը, ում հետ մեծ հույսեր էր կապում առաջին հերթին Մեծ Բրիտանիան: Ռեզան, խիստ տպավորված Թուրքիայում գործող հանրապետական կարգերից, կարծում էր, որ Իրանում ևս պետք է տապալվեր միապետությունը, ստեղծվեր հանրապետություն, իսկ հանրապետության առաջին նախագահի դերում տեսնում էր իրեն: Սակայն Ռեզան, տապալելով թյուրքական ծագում ունեցող Ղաջարական հարստությունը, հանդիպեց իրանական հոգևորականության և ազնվականության դիմադրությանը և փաստացի հրաժարվեց հանրապետության ստեղծման գաղափարից և հիմնեց իր հարստությունը, որը վերջինը եղավ Իրանի պատմության մեջ:

Այս շրջանում Իրանում արդեն գոյություն ունեին պետական այնպիսի ինստիտուտներ, ինչպիսիք էին կառավարությունը՝ վարչապետի գլխավորությամբ, խորհրդարանը: Փաստացի, օրենսդիր-գործադիր ինստիտուտները արդեն 20-րդ դարի սկզբից սկսեցին

---

<sup>1</sup> Մինչև 1935 թ. երկիրը պաշտոնապես կոչվել է Պարսկաստան. Ռեզա շահը փոխեց երկրի անունը և պահանջեց, որ այդուհետ Ազգերի լիգան երկիրը կոչի Իրան:

գործել, բայց ասել, որ դրանք անկախ էին՝ սխալ կլիներ: Իրանում ողջ իշխանությունը պատկանում էր շահին, ուստի, այդ կառույցների դերը հիմնականում ձևական էր:

1926 թ. Ռեզան հռչակվեց Իրանի շահ՝ վերցնելով «Փահլավի» գահակալական ազգանունը:

Ազգանվան համար հիմք է ծառայել Սասանյան շրջանի միջին պարսկերենը՝ պահլավերենը, սակայն որոշ գիտնականներ նաև ենթադրում են, որ Փահլավիները Աքեմենյան Պարսկաստանի խոշոր ազնվական ընտանիքներից էին<sup>2</sup>:

Այս շրջանից ի վեր մեծ թափով սկսվեցին պետական ապարատի ձևավորման աշխատանքները: Կրթական և դատական համակարգերը, որոնք մինչ այդ հոգևորականության ձեռքում էին, առանձնացվեցին և դրվեցին պետության վերահսկողության ներքո. որևէ մեկը չէր կարող դատավարություն անցկացնել՝ առանց իրավաբանական կրթության: Դատերը պետք է իրականացվեին ոչ թե շարիաթի, այլ իրավական օրենսգրքերի հիման վրա, որոնք ստեղծվեցին ֆրանսիական օրենքների օրինակով: 1926 թ. ընդունվեց քրեական օրենսգիրքը, 1928 թ.՝ քաղաքացիականը<sup>3</sup>:

Ռեզա շահը հենց սկզբից ձեռնամուխ եղավ երկրի բոլոր խաներին (ավատապետերին) կենտրոնական կառավարությանը ենթարկելու գործընթացին: Նպատակն էր՝ մեծացնել բանակի և ուստիկանության քանակը, ստեղծել պետական կառավարման կենտրոնական համակարգ: Թվային առումով իրանական բանակը արագորեն ընդլայնվեց այդ ընթացքում. եթե 1921 թվականին այն 20,000-ից էլ պակաս էր, ապա 1923 թվականի վերջին այդ թիվը հասավ 40,000-ի՝ պահպանելով այդ ցուցանիշը մոտավորապես

---

<sup>2</sup> **Patrick Clawson, Michael Rubin, *Eternal Iran: Continuity and Chaos (The Middle East in Focus)*, 2005, Palgrave Macmillan, p. 52.**

<sup>3</sup> **Keddie, Nikki R. *Modern Iran*, Yale University Press, 2003, War and Reza Shah: 1914–1941, p. 89.**

մինչև 1926 թ<sup>4</sup>: Այդ նպատակով 1927 թ. ընդունվեց համընդհանուր զինապարտության մասին օրենքը, և մինչև 1941 թ. Իրանի զորքի թվաքանակը արդեն 100 հազար էր<sup>5</sup>:

Օրինակ վերցնելով Քեմալ Աթաթյուրքից, Ռեզա շահը Իրանում ևս ներդրեց անձնագրային համակարգ, բնակչությանը պարտադրվեց այսուհետ ունենալ ազգանուններ. դրանով հնարավոր եղավ մեծացնել բնակչության վրա պետության վերահսկողությունը և կառավարելի դարձնել երկիրը: Այսպիսով, պետական համակարգի հստակ կառուցվածքն ուրվագծվեց: Բարձրագույն պաշտոնյաները նշանակվում էին անձամբ Ռեզա շահի կողմից, հիմնականում իրեն վստահելի մարդկանց շրջապատից:

Իրականում Ռեզա շահի հեղինակությունը երկրում այնքան մեծ էր, որ կարելի է փաստել, որ ամբողջ երկիրը կառավարվում էր նրա կողմից. նույնիսկ մեջլիսը, որն, ըստ էության, օրենսդիր մարմին էր և պետք է քիչ թե շատ ազատություններ ունենար, փաստացի վերածվել էր գործիքի Ռեզա շահի ձեռքում:

1941 թ.՝ Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում, ԽՍՀՄ-ի, Անգլիայի, ԱՄՆ-ի ճնշման ներքո Ռեզա շահն արտաքսվեց երկրից, Իրանի գահ բարձրացավ թագաժառանգ Մուհամմադ Ռեզա Փահլավին, որն, ըստ էության, Իրանի 2500 տարվա միապետության վերջին արքան էր: Մուհամմադ Ռեզա շահ Փահլավիի օրոք կառավարման համակարգը հասկանալու համար կարևոր է նաև ուսումնասիրել նրա գրած աշխատությունները, որտեղ նա հստակ ներկայացնում է իր քաղաքական պատկերացումները երկրի կառավարման շուրջ: Պետք է փաստել, որ Մուհամմադ Ռեզա շահ Փահլավիի կառավարման առաջին տասնամյակն աչքի էր ընկնում առավել մեղմ քաղաքականությամբ: Քաղաքական դիկտատուրա գրեթե գոյություն չուներ, ինչի արդյունքում առաջացան

---

<sup>4</sup> **Stephanie Cronin**, *Opposition to Reza Khan within the Iranian Army, 1921–26*, Middle Eastern Studies, Vol. 30, No. 4 (Oct., 1994), p. 725.

<sup>5</sup> **Patrick Clawson, Michael Rubin**, p. 52.

բազմաթիվ կուսակցություններ, ընդդիմադիր մամուլ, տարատեսակ հասարակական կազմակերպություններ, որոնք էլ միավորվելով ի վերջո իշխանության բերեցին Մուհամմադ Մոսադեղին:

Թեպետ 1949 թ. Սահմանադիր ժողովն իրականացրել էր փոփոխություններ, որոնցով ընդարձակել էր շահի՝ որպես երկրի ղեկավարի, իրավասությունների շրջանակը, 1950-ական թվականներին Իրանում զգալիորեն բարձրացավ երկրի վարչապետ Մուհամմադ Մոսադեղի հեղինակությունը, և նա փորձեց էականորեն կրճատել շահի լիազորությունները: Մոսադեղը հաճախ կրկնում էր այս խոսքերը. «Շահը պետք է թագավորի, ոչ թե կառավարի»<sup>6</sup>: Նա բազմիցս օրինակ էր բերում Մեծ Բրիտանիայի կառավարման համակարգը՝ նշելով, որ ողջ Անգլիան սիրում է իր թագուհուն և թագավորին այն պատճառով, որ նրանք հեռու են կանգնած քաղաքականությունից<sup>7</sup>: Նա զրկեց շահին ռազմական, ֆինանսական և քաղաքական ազդեցությունից, միապետական իրավունքները կրճատեց՝ դարձնելով դրանք սահմանադրական: Թվում էր, թե Իրանն ասիական մի շարք պետությունների նման նույնպես բռնել էր հանրապետականության և միջին խավի դիրքերի կայունացման ուղին: 1925 թվականից ի վեր Իրանում կառավարության ձեռքում այդքան մեծ իշխանություն չէր կենտրոնացվել, և շահը երբևէ այդքան սահմանափակ իշխանություն չէր ունեցել<sup>8</sup>: Սակայն 1953 թ. Իրանում Միացյալ Նահանգների և Մեծ Բրիտանիայի ջանքերով տեղի ունեցավ պետական ռազմական հեղաշրջում, որի արդյունքում տապալվեց երկրի վարչապետ Մուհամմեդ Մոսադեղի կառավարությունը: Այս իրադարձություններից հետո շահը ամեն ինչ արեց, որպեսզի ուժեղացնի իր դիրքերը:

---

<sup>6</sup> **Scott A. Koch**, “Zendeabad, Shah!”: *The Central Intelligence Agency and the Fall of Iranian Prime Minister Mohammed Mossadeq*, August 1953, Washington, DC June 1998, p. 6.

<sup>7</sup> **Գ. Իսկանդարյան**, *Իրանա-ամերիկյան հարաբերությունները 1942–1960 թթ.*, Երևան, 2011, էջ 51:

<sup>8</sup> **Abrahamian E.**, *Iran Between Two Revolutions*, p. 274.

1957 թ. Սահմանադրությամբ շահին տրվեց մեջլիսի օրենքների վրա վետո դնելու իրավունք, ինչպես նաև մեջլիսը ցրելու հնարավորություն: Իսկ արդեն 1967 թ. շահն ստացավ բացարձակ իրավունք՝ իր թագաժառանգին նշանակելու համար<sup>9</sup>:

Մուհամմադ Ռեզա շահը, հոր օրինակին հետևելով, 1960-ականներից հետո որոշեց երկիրը կառավարել «ուժեղ ձեռքի» միջոցով, և ողջ գործընթացն իրականացվում էր նրա կամքին համահունչ: Որպեսզի ցույց տա, թե առաջադիմական հայացքներ ունի և քննադատության կողմնակից է, նրա ձեռամբ Իրանում ստեղծվեց երկու կուսակցություն՝ Մելլաթ և Մելլիյուն, որոնցից մեկը «խաղում էր» ընդդիմության, մյուսը՝ իշխանության դերը:

Մուհամմադ Ռեզայի օրոք ստեղծվեց նաև մեկ այլ օրենսդիր կառույց, ամերիկյան օրինակով՝ Սենատը<sup>10</sup>, որի անդամների կեսը նշանակվում էր բացառապես շահի կողմից: Հատկանշական է, որ նրա դիրքերի այս աստիճան ամրապնդումը մտահոգություն էր առաջացնում Միացյալ Նահանգների և Մեծ Բրիտանիայի մոտ, և նրանք բազմիցս զգուշացրել էին շահին, որ իշխանության նման մենաշնորհումը բացասական հետևանք է ունենալու ապագայում:

Մուհամմադ Ռեզա շահի կառավարման համակարգի փաստացի հիմքն ազգայնականությունն էր՝ խարսխված անցյալի իդեալականացման (դիցաբանություն) և հասարակության արդիականացման գաղափարի վրա<sup>11</sup>:

1970-ականների վերջերին Իրանում ակնհայտորեն հասունանում էր դժգոհության մեծ ալիք, որն ուղղված էր շահի, նրա իրա-

---

<sup>9</sup> *Իրանի Իսլամական Հանրապետության Սահմանադրություն (Հիմնական օրենք)*, Գառնիկ Բադալյանի թարգմանությամբ, Թեհրան, 2005, էջ 6:

<sup>10</sup> Սենատի գաղափարն ամրագրվել էր 1906 թ. Սահմանադրության մեջ՝ 3-րդ գլխի 45-րդ հոդվածով, սակայն այն իրականություն դարձավ միայն 1949 թ.՝ Մուհամմադ Ռեզա շահ Փահլավիի Սահմանադիր ժողովով իրականացրած փոփոխությունների ժամանակ, երբ որոշվեց, որ երկիրը պետք է ունենա նաև վերին պալատ՝ Սենատ:

<sup>11</sup> **Ջ.Բ. Боев**, *Представления о роли и месте монархии в Иране в работах последнего иранского шаха Мохаммеда Реза Пехлеви*, стр. 259.

կանացրած ներքին և արտաքին քաղաքականության, նրա ընտանիքի վայելքների, սոցիալական անարդարության, իշխանության մենաշնորհման դեմ: Այս շարժումն, ըստ էության, համակարգեց հոգևորականությունը՝ ի դեմս այաթոլլահի Խոմեյնիի, որը շահական բացարձակ իշխանության դեմ պայքարում էր դեռևս 1960-ական թվականներից: Խոմեյնիին միացան շահից դժգոհ խավերը, և արդեն 1978–79 թթ. տեղի ունեցավ Իսլամական հեղափոխությունը, և Մուհամմադ Ռեզա շահ Փահլավին, չկարողանալով ճնշել հեղափոխական ալիքը, ընտանիքի հետ մեկընդմիշտ լքեց երկիրը:

1979 թ. ապրիլի 1-ին համաժողովրդական հանրաքվեի արդյունքում Իրանի ժողովրդի 98,2%-ը քվեարկեց հոգուտ Իսլամական Հանրապետության ստեղծման: Իրանի որոշ գործիչներ փորձում էին նոր Սահմանադրության հիմք դարձնել 1906–1907 թթ. Սահմանադրությունը՝ պարզապես հանելով միապետական համակարգին վերաբերող դրույթները, սակայն այս գաղափարը բավարար թվով կողմնակիցներ չհավաքեց, և որոշվեց գրել նոր սահմանադրություն, որը պետք է արտահայտեր Իսլամական հեղափոխության գաղափարախոսությունը և ողջ պատկերացումները երկրի հետագա ընթացքի վերաբերյալ: 1979 թ. դեկտեմբերի 3-ին հանրաքվեի արդյունքում ընդունվեց նոր սահմանադրություն. ԻԻՀ բնակչության 65%-ը կողմ քվեարկեց այդ սահմանադրության կյանքի կոչմանը: Սահմանադրության հիմնական տեքստը բաղկացած է 14 բաժնից՝ 177 հոդվածից: ԻԻՀ Սահմանադրությունում փորձ է արվել միավորելու առաջին հայացքից անհնարին թվացող երկու գաղափարներ՝ հանրապետությունը և աստվածապետությունը: Այնուամենայնիվ, գոյություն ունեցող քաղաքական մոդելն արդեն 45 տարուց ավելի ապացուցել է իր կենսունակությունը և կառուցվածքային բարեփոխումներ իրականացնելու կարողությունը՝ օգտագործելով արևմտյան քաղաքական մտքի ձեռքբերումները՝ միևնույն ժամանակ հավատարիմ մնալով ազգային-կրոնական ինքնությանը: Այս սինթեզն է, որ յուրօրինակ է դարձրել Խոմեյնիի ստեղծած կառա-

վարման համակարգը: Ավելի կոնկրետ, Խոմեյնիի նորարարությունն այն էր, որ իշխանության կառավարման վերաբերյալ շիայական պատկերացումը նա համադրեց հանրապետականությամբ: Այսպիսով, Խոմեյնին միաձուլեց իսլամը և հանրապետականությունն ու սահմանադրությունը, ինչը բացառիկ երևույթ էր աշխարհում: Իրանի Սահմանադրության մեջ ներառվեցին շիայականության հիմնական դրույթները. միաստվածություն, ահեղ դատաստան, իմամաթ, շարիաթ, ինչպես նաև ամրագրվեց Վելայաթ-է Ֆաղիհի գաղափարը: Դասական շիայականությունում չկա սահմանադրությանը վերաբերող որևէ դրույթ: Ղուրանում շատ քիչ դրույթներ կան, որ վերաբերում են քաղաքական համակարգի ղեկավարմանը. դրանք հիմնականում լռում են կառավարման ձևի մասին: Որպես այդպիսին, «պետություն» եզրույթը չի հանդիպում իսլամի սկզբնաղբյուրներում. փոխարենը նրանք օգտագործում են զուտ մահմեդական եզրույթը համարվող իմամաթը (ղեկավարում) և խալիֆաթը (ժառանգականություն): Հետագայում այն օգտագործվեց մահմեդական պետությունը բնորոշելու համար:

Թե՛ սուննիները, թե՛ շիաները միակարծիք էին, որ մուսուլմանական աշխարհում ինքնիշխանության կրողը Ալլահն է, սակայն երկրային կառավարման մեխանիզմների շուրջ նրանք ունեցան լուրջ տարաձայնություններ:

Շիաները, ի տարբերություն սուննիների, անբեկանելիորեն ընդունում են իշխանության կրոնական ծագման փաստը: Իմամաթն արտահայտում է Ալլահի կամքը, և ոչ՝ ումմաթի (համայնքի): Իմամը, իբրև Ալլահի ուղիղ ներկայացուցիչ, չի ընտրվում և կախված չէ համայնքի կամքից, նրա իշխանությունը սրբազան է: Իսլամում բավականին լուրջ դիրք է զբաղեցնում նաև «իրավունքի աղբյուրը»: Կրոնական իրավունքը կամ շարիաթը, իրավական նորմերից բացի, ներառում է կրոնաբարոյական դրույթներ, որոնք հենվում են Ղուրանի վրա: Ըստ էության, Իրանի կառավարման համակարգի ներքո օգտագործվեցին շիայականության 5 սկզբունքներ:

րը՝ Թոհիդ, Ադալաթ, Նուբովվաթ, Իմամաթ և Մոադ<sup>12</sup>: Այս սկզբունքները իսլամի, միաժամանակ նաև Իրանի իրավական համակարգի և Սահմանադրության հիմքն են:

Իսլամական հեղափոխությունից հետո շիայական կրոնական նորմերը ներդրվեցին նորմատիվ իրավական ակտերում, ինչն աննախադեպ երևույթ էր շիայական ավանդության մեջ: Այսպիսով, Խոմեյնին կրոնը քաղաքականության հետ կապեց ավելի ամուր, քան այն երբևիցե տեղ էր գտել ավանդական շիայականությունում: Կառավարման համակարգում հիմնվեցին այնպիսի նոր կառույցներ, ինչպիսիք էին Սահմանադրության պահապանների խորհուրդը և Նպատակահարմարության ժողովը: Պետության յուրահատուկ կառուցվածքը, որը համալրված էր շիայականության կրոնական դրույթներով և Վելայաթ-է Ֆադիհի սկզբունքով, համարվում է Խոմեյնիի նորարարությունը:

Ըստ էության, շիայական համայնքի համար օրինական առաջնորդ կարող էր լինել «անբիժ», «անմեղ» իմամը: Շիայական համայնքին անհրաժեշտ եղավ նոր քաղաքական ուսմունք, որը կառաջարկեր այլ տեսակի պետություն, որտեղ ղեկավարն օրենքով կներկայացներ թաքուցյալ (բացակա) իմամի առաջնորդությունը: Այդպիսի ուսմունքի արդյունք դարձավ Վելայաթ-է Ֆադիհը<sup>13</sup>:

Շիայական հոգևորականությունը երկար ժամանակ միակարծության չէր գալիս այդ առաջնորդության սահմանումների վերաբերյալ: Նրանք բաժանվում էին երկու խմբի. հոգևորականության մի մասը սահմանափակ իշխանության կողմնակից էր, մյուսը՝ լիարժեք գերիշխանության: Սահմանափակ իշխանության կողմնա-

---

<sup>12</sup> Միաստվածություն, արդարություն, հավատ առ մարգարեների, հավատ առ տասներկու իմամների, հավատ առ մեռածների հարության և նրանց դատաստանի:

<sup>13</sup> «Վելայաթ» նշանակում է առաջնորդություն, գերիշխանություն, ֆադիհ մուսուլմանական իրավունքի գիտակ, համապատասխանաբար «վելայաթ-է Ֆադիհ» նշանակում է մուսուլման իրավագետի առաջնորդություն և գերիշխանություն:

կիցները գտնում էին, որ իրենց խնդիրն է՝ ուսումնասիրել և կատարելագործել ֆիզիք, ֆեթվաներ<sup>14</sup> արձակել, հավաքել խումար<sup>15</sup> և հովանավորել այրիներին ու որբերին: Հոգևորականության այս տեսակը երկար ժամանակ մեծամասնություն էր կազմում Իրանում: Այսպես, օրինակ, այաթոլլահ Բորուջերդին, ում կարծիքին մեծ տեղ էր տալիս Իսլամական հեղափոխության առաջնորդ այաթոլլահ Խոմեյնին, գտնում էր, որ հոգևորականները չպետք է ուղղակի միջամտեն քաղաքականությանը: Հոգևորականների այդ խումբը գտնում էր, որ կրոնավորները պետք է սահմանափակ իշխանություն ունենան, որպեսզի իսլամը մաքուր պահեն և չխառնվեն քաղաքականությանը: Կարծում էին, որ իշխանությունը հոգևորականների գործը չէ, աշխարհիկ երևույթ է. նրանց թվին էին պատկանում այաթոլլահներ Շարիաթմադարին և Գոլփայեգանին: Իսկ մյուս թեր՝ այաթոլլահ Խոմեյնիի գլխավորությամբ, գտնում էր, որ հոգևորականները պետք է առաջնորդեն երկիրը Վելայաթ-է Ֆաղիհի սկզբունքով: Փաստացի հաղթեց երկրորդ թեր՝

Իսլամական հեղափոխության հաջողությունից հետո կառավարման համակարգի վերաբերյալ Խոմեյնիի տեսակետները էականորեն տարբերվեցին Բորուջերդիի տեսակետներից: Խոմեյնին մետաֆիզիկական<sup>16</sup> իր եզրակացությունների միջոցով հանգեց այն գաղափարին, որ բարձրագույն հոգևորականությունը ոչ միայն կարող է, այլև պարտավոր է նախքան բացակա իմամ Մահդիի վերադարձն առաջնորդել համայնքին (ումմային)՝ միայնակ չթողնելով ստեղծված բարդ իրավիճակում:

Վելայաթ-է Ֆաղիհի հայեցակարգում Խոմեյնին տեսավ առաջացած ճգնաժամը լուծելու հնարավորություն: Փաստացի Վելայաթ-է Ֆաղիհի սկզբունքն ընդգծում է Ֆաղիհի (կրոնագետի)

<sup>14</sup> Ֆեթվա նշանակում է ծագած հարցերի մասին վճռորոշ հրովարտակ:

<sup>15</sup> «Խումար»-ը կրոնական հարկատեսակ է:

<sup>16</sup> **Alexander Knysh**, “*Irfan*” Revisited: Khomeini and the Legacy of Islamic Mystical Philosophy Author(s), Middle East Journal, Vol. 46, No. 4 (Autumn, 1992), pp. 631–653.

առաջնորդական դերակատարությունը ինչպես իսլամական հանրապետության քաղաքական ուղեգծի մշակման, այնպես էլ պետական ապարատի բոլոր ճյուղերի կառավարման նկատմամբ: Խոմեյնին իր ուսմունքում հենվում էր ինչպես դասական շիայականության ավանդականության, այնպես էլ արևմտյան օրենսդրության, փիլիսոփայության վրա: Հայտարարելով, թե վերադառնում են արմատներին, Խոմեյնին և իր կողմնակիցները Վելայաթ-է Ֆադիհի գաղափարի տակ դրեցին շատ ավելի լուրջ դրույթներ:

Երկրի ղեկն այդուհետ պատկանելու էր Առաջնորդին, և ԻԻՀ Սահմանադրությունն ամբողջովին հարմարեցվեց շիայականության գաղափարներին:

Իրանի Իսլամական Հանրապետությունը, ըստ էության, ստեղծվել է՝ խարսխվելով Այաթոլլահ Խոմեյնիի՝ 1970 թ. «Իսլամական իշխանություն» (Hukumat e-Islami) քաղաքական տրակտատի<sup>17</sup> գաղափարների վրա:

Այսօր Իրանն ունի հետևյալ բնութագիրը. «սահմանափակ բազմակարծություն, գերիշխող գաղափարախոսություն, մոբիլիզացիա և ուժեղ առաջնորդություն»<sup>18</sup>: Եվ այս ուժեղ առաջնորդությունն իրականացվում է Առաջնորդի կողմից: Իրանը մինչ այժմ ունեցել է երկու Առաջնորդ՝ Ռուհոլլահ Խոմեյնին և Ալի Խամենեին:

## **Առաջնորդ - (Ռահբար) - Rahbar-e Moazam-e Irân**

Իրանի պաշտոնական կրոնը իսլամն է և դրա Ջաֆարի-Ասնա-աշարի ուղղությունը, որն ընդունում է 12 իմամների գերիշխանությունը: Նրանք հավատում են, որ վերջին իմամը՝ Մահդին,

---

<sup>17</sup> *The Islamic Republic of Iran: An introduction*, Research paper 09/92, 11 December 2009, p. 15, <http://www.refworld.org/pdfid/4b41bca92.pdf>

<sup>18</sup> **Sergey Votyagov**, *Islamic Republic of Iran, Comparative National Systems*, November 19, 2009, p. 8.

թաքնվել է (բացակա է), և որ նրա վերադարձից հետո երկրում տիրելու է արդարություն: Իսկ մինչ Մահդիի վերադարձը երկիրը պետք է ղեկավարվի արդար ֆաղիհի միջոցով՝ իրականացնելով Աստծո կամքը:

Խոմեյնիի գաղափարախոսության մեջ անկյունաքարային տեղ զբաղեցրած Վելայաթ-է ֆաղիհը պետք է ունենա երկու կարևորագույն հատկանիշ. լինի բանիմաց, Աստվածային օրենքների գիտակ, ինչպես նաև լինի արդարամիտ՝ հենվելով հավատի և բարոյականության վրա: Խոմեյնիի մեծագույն ձեռքբերումը կարելի է համարել այն, որ նրան հաջողվեց բացառել ժառանգական կապի անհրաժեշտությունը բարեպաշտ իմամների հետ: Փոխարենը շիաները պետք է ընտրեն արդարամիտ ղեկավար: Սրանով հանդերձ Խոմեյնիին հաջողվեց շիայականությունը պահել իբրև ամբողջական և ինքնաբավ ուսմունք:

Վելայաթ-է ֆաղիհով Խոմեյնին արդարացնում էր կրոնապետերի մուտքը քաղաքականություն, ինչն ի սկզբանե շիայական իսլամին բնորոշ չի եղել: Ըստ այս հայեցակարգի՝ 12-րդ իմամի բացակայության ժամանակ շիաների ղեկավարումն անցնում է ֆաղիհներին՝ կրոնապետերին և մուջթահիդներին: Փաստենք, որ ԻԻՀ Սահմանադրության 1-ին գլխի 5-րդ հոդվածը և 8-րդ, գլխի 107-րդ հոդվածը նշված է. «Վալի է Ասրի՝ (Իմամ Մահդիի) բացակայության ժամանակ ԻԻՀ-ում առաջնորդությունը և ժողովրդի հովվապետությունն իրականացնում է արդար ու հավատացյալ, ժամանակի խնդիրներին քաջատեղյակ, համարձակ, նախաձեռնող և կազմակերպիչ ֆաղիհը՝ առաջնորդը, որն, ըստ 107-րդ հոդվածի, ստանձնում է իր պարտականությունները»<sup>19</sup>:

Փաստորեն, մարդուն տրվեց աստվածապետությանը բնորոշ իրավասություն՝ ուղղորդելու Իրանի ժողովրդին, սակայն 12-րդ իմամի հայտնվելու դեպքում նա պետք է ազատվի իր պարտական-

---

<sup>19</sup> *Իրանի Իսլամական Հանրապետության Սահմանադրություն*, էջ 35:

նություններից: Այսպիսով, Վելայաթ-է Ֆաղիհի գաղափարը հոգևորականությանը իրավունք տվեց առաջնորդելու Իրանը՝ խարսխվելով շիայական օրենքների վրա և դառնալով երկրի փաստացի գերագույն իշխանությունը:

Վելայաթ-է Ֆաղիհը կամ կրոնապետ առաջնորդը ունի ինչպես լիազորություններ, այնպես էլ պարտականություններ: Առաջնորդը երկրի ղեկավարի պաշտոնում՝ նոր երևույթ է, իր ունեցած իրավունքներով, պարտականություններով ու լիազորություններով: Ըստ Իրանի կառավարման համակարգի, իշխանության երեք թևերը՝ գործադիր, դատական և օրենսդիր իշխանությունները, պետք է կառավարվեն աստվածային օրենքներով՝ առաջնորդի միջոցով: Առաջնորդն իր իրավասությամբ և լիազորություններով բարձր է եռյակ իշխանությունից:

Վելայաթ-է Ֆաղիհը պարտավոր է որոշել Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքական ողջ համակարգի գործառույթը, ինչն ամրագրված է Սահմանադրության 110-րդ հոդվածով՝ խորհրդակցելով Նպատակահարմարության ժողովի անդամների հետ, որը ևս բաղկացած է բարձրագույն հոգևոր դասից: Առաջնորդի անմիջական պարտականությունների մեջ են մտնում համակարգի ընդհանուր քաղաքականության իրականացման վերահսկումը, հանրաքվեների անցկացման հանձնարարումը, ԶՈՒ հրամանատարության նշանակումը: Նա ունի պատերազմ հայտարարելու և խաղաղության դաշինք կնքելու կամ ԶՈՒ մոբիլիզացիայի հրաման տալու լիազորություն: Առաջնորդը կարգավորում է իշխանական երեք թևերի՝ օրենսդիր, գործադիր և դատական ոլորտների գործունեությունը, ձեռնամուխ է լինում համակարգում առաջացած այն խնդիրների լուծմանը, որոնք ի գործի չէ լուծելու Նպատակահարմարության ժողովը: Առաջնորդի վերջնական համաձայնությամբ ու ստորագրությամբ են հաստատվում Իրանի ժողովրդի կողմից ընտրված նախագահի լիազորությունները: Միևնույն ժամանակ նա իրավունք ունի պաշտոնից հեռացնելու երկրի նախագահին, եթե

դա է պահանջում պետության շահը, պայմանով, որ Բարձրագույն դատարանը հաստատի, որ նախագահը չի կատարում իր օրինական պարտականությունները կամ կատարել է դիրքի չարաշահում: Նրան է տրված համաներում հայտարարելու իրավունքը<sup>20</sup>, ինչը և Առաջնորդն անում է Իրանի համար կարևոր տոնակատարությունների ընդառաջ:

Ըստ Սահմանադրության՝ Առաջնորդն ունի լայն վերահսկողություն քաղաքականության ողջ ներկայնակի վրա, և նրա լիազորությունների մեջ են մտնում առանցքային պաշտոններում նշանակումները կամ այդ պաշտոններից ազատելը: Այդ թվում.

- Սահմանադրության Պահապանների խորհրդի վեց իրավաբանները,
- Դատական իշխանության ղեկավարը,
- ԻԻՀ ռադիոյի և հեռուստատեսության նախագահը (Ի.Գ. Խոսքը վերաբերում է «ԻԻՀ ձայն և պատկեր» կազմակերպության նախագահին),
- ԻՀՊԿ գլխավոր հրամանատարը,
- կանոնավոր գինված ուժերի հրամանատարը և գլխավոր շտաբի պետը (ուղղակի նշանակվում են Առաջնորդի կողմից)<sup>21</sup>,
- որոշ առանցքային նախարարներ ևս նշանակվում են Առաջնորդի կողմից:

Փաստացի Իրանի Իսլամական Հանրապետությունում Առաջնորդն ունի բացարձակ իրավունքներ՝ երկրի բոլոր ոլորտներում վերահսկողություն սահմանելու համար: Առաջնորդը, իր գերիշխանության ոլորտն ընդլայնելու նպատակով, կառավարության բոլոր ճյուղերում իր ներկայացուցիչներն ունենալու իրավունք ունի. նրանց թիվը հասնում է մոտ 2000-ի, որոնք ծառայում են որպես Առաջնորդի՝ կղերական տարածքային հանձնակատարներ: Առաջ-

---

<sup>20</sup> *Իրանի Իսլամական Հանրապետության Սահմանադրություն*, հոդված 110:

<sup>21</sup> **W. Buchta**, “Who rules Iran? The Structure of Power in the Islamic Republic”, Washington Institute for Near East Policy, 2000, p. 46.

նորդի հատուկ ներկայացուցիչները երբեմն ավելի մեծ իշխանություն են ունենում, քան նախարարները, երբեմն էլ խառնվում են երկրի ներքին գործերին՝ Առաջնորդի անունից<sup>22</sup>: Իրանագետ Նիկկի Կեդդիին, այնուամենայնիվ, կարևորում է, որ, ըստ սահմանադրության, «երկրի առաջնորդը, մյուս քաղաքացիների հետ միասին, հավասար է օրենքի առաջ»<sup>23</sup>:

Առաջնորդի գերիշխանությունը ցմահ է: Այն կարող է ընդհատվել միայն Սահմանադրության 111-րդ հոդվածի ուժով, եթե երկրի Առաջնորդն ի վիճակի չլինի իրականացնելու օրենսդրությամբ նախատեսված իր պարտականությունները, կամ եթե նա կորցրել է 5-րդ<sup>24</sup> և 109-րդ<sup>25</sup> հոդվածներում նշված որակական հատկանիշները. այդ մասին որոշումը կայացվում է Բանիմացների խորհրդի կողմից<sup>26</sup>: Մինչ այժմ Իրանի երկու Առաջնորդի դեպքում էլ այս օրենքը կյանքի չի կոչվել:

Առաջնորդն իր իշխանությունն իրականացնում է Բարձրագույն ղեկավարման գրասենյակի միջոցով, որը պարզապես կոչում են Առաջնորդի գրասենյակ: Այն կազմակերպում է Ալի Խամենեիի<sup>27</sup>

---

<sup>22</sup> “Decision on an urgent political crisis: Iran” Vienna International Model United Nations 07 – 11 August, 2005 <http://afa.at/vimun/review/2005SC-Paper.pdf>

<sup>23</sup> **N. Keddie**, *Modern Iran: Roots and results of revolution*, London, 2006, p. 303.

<sup>24</sup> ԻԻՀ առաջնորդությունն իրականացվում է արդար ու հավատարմ, ժամանակի խնդիրներին լավատեղյակ, համարձակ, նախաձեռնող ֆադիիք, *Իրանի Իսլամական Հանրապետության Սահմանադրություն*, էջ 35:

<sup>25</sup> Ֆեթվա կայացնելու գիտական որակավորումը, արդարությունը և աստվածասիրությունը, ղեկավարման կազմակերպչական ունակությունները:

<sup>26</sup> *Իրանի Իսլամական Հանրապետության Սահմանադրություն*, էջ 88, 89:

<sup>27</sup> Ալիի Խամենեին ԻԻՀ թվով երկրորդ հոգևոր առաջնորդն է, կառավարում է երկիրը՝ սկսած 1989 թ., մինչ այդ՝ 1980 թ., Խոմեյնին Խամենեիին նշանակում է Թեհրանի ուրբաթօրյա նամագ անող իմամ: Մի կարճ ժամանակաշրջան նա նշանակվել էր Չինված ուժերի փոխնախարար, այնուհետև նաև՝ Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի ղեկավար: 1981 թ. հունիսի 27-ին նրա նկատմամբ մահափորձ իրականացվեց, որից հետո նրա ձեռքը, ձայնալարերը և թոքերը լրջորեն վնասվեցին: 1981 թ. օգոստոսի 30-ին մահափորձ կազմակերպվեց գործող նախագահ Մուհամմադ Ալի-Ռաջայիի դեմ, և Խոմեյնիի համաձայնությամբ Խամենեին հոկտեմբերին մասնակցեց ընտրություններին և վաստակեց

հանդիպումները, ելույթները, այցերը, նրան տեղեկացնում է քաղաքական զարգացումների մասին: Գրասենյակը ղեկավարում են չորս հիմնական անդամները, որոնք հոգևորականներ են՝ Հոջաթ-օլ-Իսլամի կամ Այաթոլլահի կոչումներով: Գրասենյակում աշխատում են նաև 10 հատուկ խորհրդատուներ, որոնք կենտրոնացված են տարբեր բնագավառներում՝ արտաքին քաղաքականություն, մշակույթ, տնտեսություն, զինված ուժեր, մեդիա և այլն: Ընդհանուր առմամբ Իսամենեի գրասենյակում կամ դրան կից ենթաբաժիններում աշխատողների թիվը հասնում էր 600-ի՝ 2000 թվականի տվյալներով<sup>28</sup>:

Հարկ է նշել, որ Առաջնորդի խորհրդականներն Իրանի պետական համակարգում, թեկուզև ոչ բացահայտ, սակայն ունեն մեծ լիազորություններ իրենց ոլորտներում: Օրինակ, Իրանի արտաքին գործերի նախարարն այս պահին Աբբաս Արադչին է, իսկ Առաջնորդի՝ արտաքին քաղաքականության հարցերով խորհրդականը՝ նախկին արտգործնախարար Ալի Աքբար Վելայաթին է, և վերջինիս կարծիքը նույն արտաքին գործերի նախարարությունում չի կարող անտեսվել: Ավելին, կարելի է ասել, որ Ալի Աքբար Վելայաթին մեծ ազդեցություն ունի Իրանի արտաքին գերատեսչությունում, և նրա կարծիքը պարտադիր հաշվի է առնվում:

Իրանի Իսլամական Հանրապետության երկու Առաջնորդներն են՝ Իսլամական հեղափոխության Առաջնորդ այաթոլլահ Ռուհոլլահ Խոմեյնին (կառավարել է 1979–1989 թթ.) և այաթոլլահ Ալի Իսամենեին (1989 թվականից մինչև այսօր):

Ուշագրավ է, որ 1979 թվականի Սահմանադրության համաձայն, Առաջնորդ պետք է ընտրվեր Մարջա-է թաղիիդներից<sup>29</sup> որևէ

---

բնակչության 97% ձայների քվեն՝ դառնալով ԻԻՀ թվով երրորդ նախագահը: Նա վերընտրվեց 1985 թ. և այդ պաշտոնում մնաց մինչև Առաջնորդ դառնալը:

<sup>28</sup> **W. Buchta**, “Who rules Iran? The Structure of Power in the Islamic Republic”, pp. 46–47.

<sup>29</sup> Ըստ շիաների՝ մարգարեն համայնքային ողջ կյանքը հանձնել է իմամների ենթակայությանը: Իմամ Մահդիի բացակայությունից հետո շիայական հա-

մեկը: Այդ շրջանում հայտնի «մարջաներն» էին Աբու ալ-Ղասեմ Իսոյին, Մուհամմադ Ռեզա Գոլփեյգանին և Շահաբ էդ-Դին Մա-րաաշի Նաջաֆին, սակայն նրանք դեմ էին Խոմեյնիի Վելայաթ-է Ֆադիի հայեցակարգի մեկնաբանությանը և գտնում էին, որ Առաջ-նորդը չի կարող ղեկավարել բացակա իմամի փոխարեն: Հատկա-նշական է, որ հայտնի հոգևորականներից Այաթոլլահ Հուսեյն Ալի Մոնթազերին Իսլամական հեղափոխության սկզբում պաշտապ-նում էր Խոմեյնիի տեսակետները և կողմնակից էր Վելայաթ-է Ֆա-դիի հայեցակարգին: Ուստի Խոմեյնիի իրավահաջորդի հարմար թեկնածու համարվեց Այաթոլլահ Հուսեյն Ալի Մոնթազերին, որը մինչև 1979 թվականը չէր համարվում Մարջա, սակայն ուներ Մեծ այաթոլլահի կոչում և կարող էր ճանաչվել որպես Մարջա-է թաղ-լիդ: 1985 թվականին Բանիմացների խորհուրդը Մոնթազերին պաշտոնապես ճանաչեց որպես Խոմեյնիի իրավահաջորդ, սակայն հետագայում Մոնթազերիի հարաբերությունները վատացան Խո-մեյնիի հետ<sup>30</sup>, հատկապես, երբ 1988 թ. Մոնթազերին Իրանում

---

մայնքն, ըստ էության, մնացել է առանց առաջնորդի: Այս բացը լրացնելու համար 1864 թ. Մորթեզա ալ-Անսարին ձեռնարկում է «մարջայի» ինստիտուտի ձևավո-րումը, ըստ որի՝ մինչև Մահդիի վերադարձը շիայական համայնքի ղեկավարումը պետք է իր վրա վերցնի կրոնական որևէ հեղինակություն, որը պետք է ընկալվի որպես «ընդօրինակման աղբյուր»՝ «Մարջա-է թաղլիդ»: Յուրաքանչյուր հավա-տացյալ պարտավոր է իր համար ընտրել Այաթոլլահ, որից կօգտվի իբրև իմացութ-յան աղբյուր՝ «Մարջա-է թաղլիդ» և կիրականացնի նրա ֆաթվաները: Հավատաց-յալներն իրենց «Մարջա-է թաղլիդին» տալիս են իրենց տարեկան եկամտի  $\frac{1}{5}$ -ը՝ որպես կրոնական տուրք:

<sup>30</sup> Մոնթազերին եղել էր Իսլամական հեղափոխության ակտիվ մասնակից, Խոմեյնիի ջատագովը, որը երկար տարիներ պայքարել է միապետության դեմ: Սակայն 1980-ականների վերջերին Մոնթազերին համարձակվեց քննադատութ-յան ենթարկել իրանա-իրաքյան պատերազմի ժամանակ Իրանի վարած քաղաքա-կանությունը, մեղադրեց Այաթոլլահ Ռաֆսանջանին՝ զինված ուժերի գլխավոր հրամանատարին, մի շարք թերացումների մեջ, իսկ իր ելույթներից մեկի ժամա-նակ Մոնթազերին, դիմելով Ռաֆսանջանին՝ հորդորեց հրաժարվել խորհրդարա-նի խոսնակի պաշտոնից և ամբողջովին ուշադրությունը կենտրոնացնել պատե-րազմի վրա: Մեկ այլ ելույթով Մոնթազերին կոչ էր անում իշխանությանը՝ վերա-նայել իրենց մոտեցումները բանտարկյալների նկատմամբ: Իսկ համաձայն Մեհդի Քառուբիի (Իրանի Մեջլիսի նախագահ)՝ Մոնթազերիի և Խոմեյնիի հարաբերութ-յունները վատթարացան 1986 թ., երբ Մոնթազերին մի կոպիտ նամակ էր հղել Խո-

պահվող քաղաքական բանտարկյալների զանգվածային մահապատիժների առիթով նշեց, որ նման իրավիճակ չի եղել անգամ շահական Իրանում<sup>31</sup>: Ակնհայտ էր, որ դա չէր ներվելու Մոնթազերիին. 1989 թ. մարտին նա գրկվեց Խոմեյնիի իրավահաջորդը դառնալու հնարավորությունից, և Բանիմացների խորհուրդը կրկին լծվեց նոր թեկնածուի փնտրտուքին:

1989 թ. ապրիլի 24-ին Խոմեյնին նամակ գրեց ԻԻՀ նախագահ Ալի Խամենեիին՝ տեղեկացնելով նրան, որ նշանակում է քսան հոգու՝ Սահմանադրության վերանայման խորհուրդ ստեղծելու համար (գումարած ևս 5 հոգի՝ Մեջլիսից): Այս խորհրդի հիմնական առաքելությունն էր լինելու՝ լուծում տալ այն ներքին հակասությանը, որն առաջացել էր 1979 թ. Սահմանադրությամբ: Ըստ նոր փոփոխության՝ ԻԻՀ Առաջնորդ կարող էր դառնալ ոչ միայն Մարջա-էթաղլիդը, այլ նաև այաթոլլահներից որևէ մեկը: Տրվեց երկու ամիս ժամանակ՝ այս խնդիրը լուծելու համար, սակայն Խոմեյնին մահացավ հունիսի 3-ին և ականատես չեղավ վերանայմանը<sup>32</sup>:

Մինչ Բանիմացների խորհուրդը կգտներ և կառաջադրեր նոր Առաջնորդի թեկնածու, վերջինիս բոլոր պարտականությունները պետք է իրականացներ ժամանակավոր խորհուրդը, որի կազմի մեջ էին մտնում երկրի նախագահը, Դատական իշխանության ղեկավարը և մեկական հոգևորական Սահմանադրության պահապանների խորհրդից և Համակարգի նպատակահարմարության ժողովից:

---

մեյնիին, որով, իբրև թե, կասկածի տակ էր առել ընդհանրապես ողջ պետական համակարգը: Այս ելույթները և քննադատություններն ստիպեցին Խոմեյնիին՝ վերանայել իր իրավահաջորդի թեկնածությունը, և նա 1989 թ. մարտին իր ցուցակից վերջնականապես հանեց Մոնթազերիին: **Shahrugh Akhavi**, *The Thought and Role of Ayatollah Hossein'ali Montazeri in the Politics of Post-1979 Iran*, Iranian Studies, volume 41, number 5, December 2008, p. 651.

<sup>31</sup> **Hossein Ali Montazeri**, *Encyclopaedia Britannica*, Iranian cleric, հասանելի է 29.05.2020. <https://www.britannica.com/biography/Hossein-Ali-Montazeri>

<sup>32</sup> **Mehrzad Boroujerdi** and **Kouros Rahimkhani**, *The Office of the Supreme Leader: Epicenter of a Theocracy*, Indiana Series in Middle East Studies, 2016, p. 138.

Ըստ Սահմանադրության 107-րդ հոդվածի՝ Ռահբարը (Առաջնորդ) պետք է ընտրվեր Բանիմացների խորհրդի անդամների կողմից՝ ցմահ: Բանիմացները խորհրդատվություններ են անցկացնում բոլոր այն թեկնածուների հետ, որոնք համապատասխանում են Սահմանադրության պահանջներին: Սահմանադրության 109-րդ հոդվածում ներկայացված են Առաջնորդ լինելու պայմանները<sup>33</sup>: Եթե այդ չափանիշներին համապատասխանում է մի քանի թեկնածու, առաջնահերթությունը տրվում է այն անձին, որն իրավագիտության և քաղաքականության ասպարեզում ավելի գիտակ է:

Բանիմացների խորհուրդը 1989 թ. հունիսի 4-ին ԻԻՀ Առաջնորդի պաշտոնում առաջարկեց երկրի գործող նախագահ Ալի Խամենեին<sup>34</sup>: Թեպետ Խամենեին ոչ մարջա-է թաղլիդ էր, ոչ էլ այաթոլլահ, այլ միայն հօջաթ-օլ-իսլամ (միջին աստիճանի հոգևորական տիտղոս), ամեն դեպքում խորհուրդը Ռաֆսանջանիի անձնական միջնորդությամբ առաջարկեց Խամենեիի թեկնածությունը: Ֆրանսիայում բնակվող ԻԻՀ առաջին նախագահ Աբոլ Հասան Բանիսադրը, «Ռադիո Ֆարդային» տված հարցազրույցում հիշատակելով այդ ընտրությունները, փաստել է, որ «Խամենեիի ընտրությունը «կազմակերպված» էր Ալի Աքբար Հաշեմի Ռաֆսանջանիի կողմից, որը վարում էր նիստը: Առաջադրելով Խամենեիի թեկնա-

---

<sup>33</sup> ԻԻՀ Սահմանադրություն, հոդված 107, էջ 84, 85:

<sup>34</sup> Ալի Խամենեի տոհմը սերտ կապ ունի հոգևորականների հետ: Նրա հայրը սեյեդ Ջավադ Խամենեին էր, մորաքույրը Շեյխ Խիաբանիի կինն էր. վերջինս նաև երկրի վերջին վարչապետ Միր Հուսեյն Մուսավիի՝ «կանաչ» շարժման առաջնորդների տատիկն էր: Ալի Խամենեին ընտանեկան թելերով կապված է նաև Իրանի Մեջլիսի նախկին խոսնակ Հադադ-Ադելի հետ, որը հարում է պահպանողականների թեկին: Ուշագրավ է, որ Ա. Խամենեիի կրտսեր եղբայրը Իրանում տպագրում էր թերթեր, որոնցում բազմաթիվ հոդվածներ է հրապարակել ընդդեմ Վելայաթ-է ֆադիիի գաղափարի: **Н.М. Мамедова. Политическая система исламской республики иран: особенности и возможности трансформации**, стр. 155, <https://cyberleninka.ru/article/n/politicheskaya-sistema-islamskoy-respubliki-iran-osobennosti-i-vozmozhnosti-hnosti-transformatsii>

ծությունը՝ Ռաֆսանջանին համարում էր նրան թույլ և հեշտ կառավարելի առաջնորդ<sup>35</sup>:

Իրանի ազդեցիկ հոգևորական Մուհամմադ Մոռմենն իր հուշերում գրել է, որ մինչև Ալի Խամենեիի՝ Առաջնորդ ընտրվելը Բանիմացների խորհրդում գումարվել է գաղտնի հանձնաժողով: Նրա խոսքով գաղտնի հանձնաժողովը հավաքվել էր Խոմեյնիի մահից մեկ օր առաջ՝ 1989 թվականի հունիսի 3-ի կեսօրին, սակայն այդ օրը Խամենեին չէր ընտրվել գերագույն առաջնորդի իրավահաջորդ<sup>36</sup>:

Պետք է փաստել, որ այդ շրջանում Իրանում կար չորս Մարջա-է թաղլիդ, սակայն քաղաքական խմբերի վերակազմակերպման շնորհիվ քաղաքական մեծամասնությունը եկավ այն եզրակացության, որ լավագույն թեկնածուն Խամենեին է, քանի որ մարջաները կառավարման համակարգում փորձառություն չունեին<sup>37</sup>: Արդարության համար պետք է արձանագրել, որ Խամենեին իր ելույթում նշում է, որ սա Սահմանադրության խախտում է, և որ ինքը չի կարող լինել երկրի Առաջնորդ և իրավասու չէ զբաղեցնելու այդ պաշտոնը. «Ես իրականում արժանի չեմ այս պաշտոնին, ես գիտեմ դա, գուցե դուք նույնպես... ըստ Սահմանադրության, ես չեմ համապատասխանում այս պաշտոնին և հավատքի տեսակետից ձեզանից շատերը չեն ընդունի իմ խոսքը: Ինչպիսի՞ առաջնորդություն կլինի դա»<sup>38</sup>:

---

<sup>35</sup> **Frud Bezhan**, *Leaked Video of Khamenei Raises Questions about Iran's Supreme Leadership*, RadioFreeEurope RadioLiberty, January 11, 2018, <https://www.rferl.org/a/iran-khamenei-leaked-video-1989-questions-leadership/28969517.html>

<sup>36</sup> **Reza Haghighatnejad**, *Top Secret Committee Plans Successor for Supreme Leader*, <https://iranwire.com/en/features/1864>

<sup>37</sup> **Н.М. Мамедова**, *Политическая система Исламской Республики Иран: особенности и возможности трансформации*, стр. 162, <https://cyberleninka.ru/article/n/politicheskaya-sistema-islamskoy-respubliki-iran-osobennosti-i-vozmozhnosti-transformatsii>

<sup>38</sup> *Iran's Supreme Leader In 1989: "I Am Not Qualified"*, Radio Free Europe Radio Liberty, January 10, 2018, 30.05.2020 դրությամբ հասանելի էր <https://www.rferl.org/a/irans-supreme-leader-not-qualified/28966534.html> հղումով.

Ըստ էության, վճռվեց միջանկալ որոշում ընդունել. Խամենեիին ընտրել ժամանակավոր՝ մեկ տարով, որից հետո խորհուրդը պետք է գտներ և ընտրեր արժանի մեկին: Սակայն, ինչպես ցույց տվեց հետագան, որոշվեց պարզապես Սահմանադրության դրույթները հարմարեցնել Խամենեիին. Բանիմացների խորհուրդը Սահմանադրությունից պարզապես հանեց Խամենեիի պաշտոնավարմանը հակասող կետերը:

Կարծում ենք, որ, ըստ էության, նրա ընտրությունը պայմանավորված էր այն հանգամանքով, որ նա եղել է Խոմեյնիի մերձավորներից, գերազանց տիրապետել է Իրանի և մահմեդական աշխարհի արդի խնդիրներին և մեծ ներդրում է ունեցել հեղափոխության իրականացման մեջ ու նախագահել է Իրանի համար ծանրագույն շրջանում՝ իրանա-իրաքյան պատերազմի ժամանակ:

Խոմեյնիի որդին՝ Ահմադը, որը համարվում էր հոր հնարավոր իրավահաջորդը, մի առիթով գրել է Խամենեիին. «Իմամը (Խոմեյնին) Ձեզ էր համարում ամենաարժանի առաջնորդը Իսլամական Հանրապետության համար»<sup>39</sup>:

Փոփոխված Սահմանադրությունը, որով իրականացվեց Առաջնորդի ընտրությունը, փաստացի չէր համապատասխանում Սահմանադրության ոգուն, քանի որ անցկացվել էր առանց հանրաքվեի: Իրանի բարձրագույն իշխանությունն ուներ իրական վախճանադրի բացակայության պարագայում հնարավոր քառսի առաջացումից. չմոռանանք, որ իրանա-իրաքյան պատերազմը նոր էր ավարտվել, և կային բազմաթիվ չլուծված խնդիրներ:

Խամենեիին իրականում ընտրեցին մի խումբ ազդեցիկ քաղաքական գործիչներ, ապա հորդորեցին Բանիմացների խորհրդի անդամներին քվեարկել Խամենեիի օգտին, քանի որ այդ ժամանակ քաղաքական իշխանությունը կենտրոնացված չէր մեկ խմբի կամ մեկ մարդու ձեռքում: Ըստ Սադջապուրի՝ «այդ վիճակը շատ

---

<sup>39</sup> **K. Sadjatpour**, *Reading Khamenei: “The world view of Iran’s most powerful leader”*, 2009, p. 6.

տարբեր էր. իրավահաջորդության որոշում կայացնողների շրջանակը շատ ավելի փոքր էր»։ Պետք է փաստել նաև, որ 1989 թ. ընտրություններում մեծ դեր ունեցավ Այաթոլլահ Ռաֆսանջանին, ով Խոմեյնիի մահից հետո Բանիմացների խորհրդի հանդիպման ժամանակ հայտարարեց. «Եթե որևէ մեկը ժամանակին դարձել է Մեծ Այաթոլլահ, ապա այժմ նա չափազանց ծեր է՝ երկիրը կառավարելու համար»<sup>40</sup>։ Ստացվում է, որ Ռաֆսանջանին միտումնավոր փորձել է շրջանցել առկա Սահմանադրությունը և Առաջնորդ ընտրել իրենց ընկերական խմբից<sup>41</sup>։ Ռաֆսանջանին նաև նշեց, որ Խոմեյնին Խամենեին է երաշխավորել որպես իր իրավահաջորդ. հետևելով այդ առաջարկությանը, խորհուրդը Ալի Խամենեին ընտրեց որպես Առաջնորդ՝ 60 կողմ և 14 դեմ ձայներով<sup>42</sup>։ Իրականում Ռաֆսանջանին ամեն բան արել է՝ իր հին ընկերոջը և զինակցին առաջնորդ դարձնելու համար՝ պնդելով, որ դա Խոմեյնիի ցանկությունն էր։

Ուշագրավ է, որ այսօր Խամենեին Իրանի պետական համակարգում ունի նույն բացարձակ իշխանությունը, ինչն ուներ Մուհամմադ Ռեզա շահ Փահլավին՝ 1960–70-ական թվականներին։ Սակայն, ի տարբերություն շահի, Խամենեին չի ճանապարհորդում աշխարհով մեկ և աչքի է ընկնում զուսպ կենսակերպով<sup>43</sup>։

---

<sup>40</sup> **K. Sadjatpour**, *Reading Khamenei: “The world view of Iran’s most powerful leader”*, 2009, p. 6.

<sup>41</sup> Խամենեին և Ռաֆսանջանի ընկերությունը ձևավորվել է 1960-ական թթ., երբ երկուսն էլ երիտասարդ քաղաքական ակտիվիստներ էին, որոնք ամբողջությամբ կիսում էին իրենց ուսուցչի՝ Խոմեյնիի գաղափարները և մասնակցել էին հակամիապետական անհնազանդություններին։ Նրանք Փարիզից տարածում էին Խոմեյնիի ուղերձները։ Գաղափարակիցները կիսել էին ինչպես բանտային խուցը, այնպես էլ իշխանությունը։ Ռաֆսանջանին շահական շրջանում դատապարտվել է յոթ անգամ, Խամենեին՝ վեց։

<sup>42</sup> **K. Sadjatpour**, *Ibid.*

<sup>43</sup> Խամենեին լուսանկարներն արագ տարածվեցին համացանցում 2016 թ. մարտին, *On National Week of Natural Resources, the Leader planted a sapling*, Mar 8, 2016. <https://english.khamenei.ir/photo/3492/On-National-Week-of-Natural-Resources-the-Leader-planted-a-sapling>.

Խամենեին է որոշում երկրի արտաքին քաղաքականության ուղենիշները, որոնցից չի կարելի շեղվել: Իրանի արտաքին քաղաքականության առանցքային ուղղություններն են՝ պայքարը տարածաշրջանում ԱՄՆ-ի հեգեմոն դերի և Իսրայելի տարածաշրջանային հավակնությունների դեմ, աջակցությունը Պաղեստինի ժողովրդին և իսլամական գաղափարախոսության արտահանման ձգտումներին:

Այսօր, առավել քան երբևէ, Իրանում օրակարգային է, թե ով է գլխավորելու երկիրը Խամենեիի մահից հետո, և թե ընդհանրապես ինչպիսի քաղաքական կարգ կլինի Իրանում: Արդյոք գերիշխանությունը կրկին կպատկանի մեկ անձի՞, թե՞ կստեղծվի առաջնորդական կամ ղեկավարման խորհուրդ: Եվ, ընդհանրապես, Խամենեիից հետո հոգևորականությունը կկարողանա՞ պահել այն իշխանությունը, որ մինչ այժմ նրանց ձեռքում է եղել, թե՞ նրանց իշխանությունը փոքր-ինչ կնվազի, և առավելապես կմեծանա հանրապետականությունը: Սրանք հարցեր են, որոնք քննարկվում են թե՛ Իրանի ներսում, թե՛ Իրանից դուրս գտնվող վերլուծական կենտրոններում: Մեր կարծիքով մեկ անձի ձեռքում իշխանության նման կոնսոլիդացումը հղի է վտանգներով, և որ իշխանությունը պետք է բաժանվի հավասարապես, պետական ինստիտուտները պետք է աշխատեն անկաշկանդ:

2024 թ. տեղի ունեցան Բանիմացների խորհրդի վերջին ընտրությունները. վերլուծաբանների զգալի մասը գտնում է, թե հենց այս նոր ընտրված խորհրդին է վիճակված լինելու նոր Առաջնորդ ընտրելու բարդ գործը:

## **Առաջնորդության բանիմացների խորհուրդ – Majles-e khobregân-e rahbari**

Իրանի Իսլամական Հանրապետությունում գոյություն ունեն կառավարման այնպիսի ինստիտուտներ, որոնք բացակայում են աշխարհի մահմեդական մյուս երկրներում: Այդ ազդեցիկ ինստիտուտներից է Առաջնորդության բանիմացների խորհուրդը (այսուհետ՝ Բանիմացների խորհուրդ):

Իրանի Իսլամական Հանրապետության Սահմանադրության 107-րդ և 108-րդ հոդվածներում հանդիպում ենք «Բանիմացների խորհուրդ» ինստիտուտին, որը Հայաստանում մասնագիտական շրջանակներում առավելապես հայտնի է Փորձագետների, բանիմացների կամ էքսպերտների խորհուրդ անվամբ:

Այս ինստիտուտն ստեղծվել է Իսլամական հեղափոխությունից անմիջապես հետո, և դրա վրա դրվեց Իրանի Իսլամական Հանրապետության Սահմանադրության ստեղծման պարտականությունը: 1979 թ. դեկտեմբերին այն վավերացնելուց հետո, ըստ էության, Բանիմացների խորհուրդը լուծարվեց<sup>44</sup>, քանզի այլ գործառնություններ չունեին:

Իսլամական հեղափոխությունից հետո, երկրի ղեկավարումն իրականացվելու էր Առաջնորդի կողմից, որն ուներ բազմաթիվ լծակներ դրա համար: Սակայն առաջանում է խիստ տրամաբանական մի հարց՝ ինչպե՞ս էր տեղի ունենալու ԻԻՀ Առաջնորդի հաջորդ ընտրությունը Խոմեյնիի մահից հետո, և ո՞ր կառույցը ուներ նման լիազորություն: Ըստ էության, այս լիազորությունը որոշվեց դնել Բանիմացների խորհրդի վրա, և այն իր այս տեսքով առաջին անգամ գումարվեց 1982 թ.: Խոմեյնիի ջատագովներից Հոսեյն Ալի Մոնթազերին կարծում էր, որ Առաջնորդի ընտրությունը պետք է անցկացվեր երկու փուլով՝ սկզբում ընտրելով Բանիմացների խոր-

---

<sup>44</sup> *The Assembly of Experts*, June 13, 2011 <https://iranprimer.usip.org/resource/assembly-experts>.

հուրդը, այնուհետև այդ նույն խորհրդից ընտրելով նաև Առաջնորդ: Ինչպես վերևում նշել ենք, Մոնթագերին այդ բարձրագույն պաշտոնի հիմնական հավակնորդներից էր, սակայն հետագայում, Առաջնորդի հետ ունեցած հակասությունների պատճառով, նա զրկվեց այդ հնարավորությունից:

Սահմանադրության 107-րդ հոդվածում տեսնում ենք, որ «Իմամ Խոմեյնիի մահից հետո առաջնորդը նշանակվում է համաժողովրդական կարգով ընտրված Բանիմացների խորհրդի կողմից: Նշված բանիմացները խորհրդակցում են միմյանց, այնուհետ՝ բոլոր թեկնածուների հետ»: Սահմանադրության 108-րդ հոդվածում նշված է, որ «...բանիմացներին ներկայացվող պահանջները, նրանց թվաքանակը, ընտրության կարգը, ներքին աշխատանքային կանոնակարգը սահմանվում են օրենքով, որը ներկայացնում են 1-ին գումարման Սահմանադրության պահապանների խորհրդի ֆաղիհները, որոնք պետք է ընտրված լինեն ճայների մեծամասնությամբ, որից հետո այդ փաստաթուղթը պետք է հաստատվի երկրի Առաջնորդի կողմից: Դրանից հետո այդ օրենքի ցանկացած փոփոխություն կամ լրացում, կամ բանիմացների պատասխանատվությունների վերաբերյալ այլ կանոնների հաստատումը գտնվում է նրանց սեփական իրավասությունների շրջանակում»<sup>45</sup>:

Ըստ էության, փորձագետները պետք է խորհրդատվություններ անցկացնեն Սահմանադրության պահանջներին համապատասխանող բոլոր ֆաղիհ թեկնածուների հետ և ընտրեն լավագույնին: Սակայն իրականության մեջ, ինչպես ցույց տվեցին Խամենեիի ընտրությունները, թեկնածուի հոգևոր աստիճանը մեծ նշանակություն չունեցավ, որը սահմանադրությամբ էր ամրագրված. փոխարենը հաշվի առնվեցին թեկնածուի վարչական ղեկավարման փորձը և հոգևոր տարբեր սեգմենտների հետ ունեցած կապը, ինչպես նաև

---

<sup>45</sup> ԻԻՀ՝ *Սահմանադրություն, Երկրի առաջնորդը կամ երկրի ղեկավարման խորհուրդը*, էջ 84, 85:

Խոմեյնիից հետո կառավարման համակարգում ստատուս քվոյի պահպանումը:

## **Ո՛վ և ինչպե՛ս կարող է ընտրվել Բանիմացների խորհրդի անդամ**

Բանիմացների խորհրդի անդամների ընտրության կարգը սահմանված է 1982 թվականին ընդունված և 2006 թվականին փոփոխությունների ենթարկված «Առաջնորդության բանիմացների խորհրդի ընտրության գործադիր օրենքում»: Օրենքի առաջին գլխի համաձայն՝ Բանիմացների խորհրդի անդամների ընտրությունը տեղի է ունենում համաժողովրդական, փակ, գաղտնի քվեարկությամբ՝ Իրանում ընտրություններին մասնակցելու իրավունք ունեցող Իրանի Իսլամական Հանրապետության 15 տարին բոլորած այն քաղաքացիների կողմից, որոնք չունեն հոգեկան խնդիրներ և զրկված չեն հասարակական իրավունքներից<sup>46</sup>:

Մինչև թեկնածու դառնալը հոգևորականը պետք է իր փաստաթղթերը ներկայացնի Սահմանադրության պահապանների խորհուրդ, որոնց ուսումնասիրությունից հետո միայն կարող են հաստատել կամ մերժել տվյալ անձի թեկնածությունը: Թեկնածուն պետք է լինի իսլամական իրավագիտության գիտակ, պետք է հանձնի մի քանի քննություն իրավագիտության բնագավառից, այնուհետև Սահմանադրության պահապանների խորհրդի հաստատումից հետո միայն կարող է դառնալ թեկնածու, և Իրանի ժողովուրդն ընտրված թեկնածուների թվից կընտրի հարմար թեկնածուին:

---

<sup>46</sup> *Executive bylaws for the election of the Assembly of Experts of the leadership*, 1.04.2013 <http://irandaportal.syr.edu/executive-bylaws-for-the-election-of-the-assembly-of-experts-of-the-leadership>.

Բանիմացների խորհրդի թեկնածուն պետք է ունենա հետևյալ հատկանիշները՝

1. լինի հավատարիմ, վստահելի և ունենա բարոյական ազնվություն (իրականում անհասկանալի է այս պահանջի չափման մեխանիզմը – Ի.Գ.),

2. տիրապետի ֆադլիի (իսլամական իրավագիտության) բավարար գիտելիքների,

3. սոցիալական և քաղաքական հմտություններ ունենա և ծանոթ լինի օրվա խնդիրներին,

4. հավատարիմ մնա Իրանի Իսլամական Հանրապետության համակարգին,

5. նախկինում որևէ հայտարարություն արած չլինի քաղաքական կամ հասարակական կարգի դեմ<sup>47</sup>:

Գրանցումից և Սահմանադրության պահապանների խորհրդի հաստատումից հետո սկսվում է թեկնածուների քարոզարշավը, որի ընթացքում յուրաքանչյուր նահանգում ձևավորվում է «Բանիմացների քաղաքական գովազդի վերահսկիչ հանձնաժողով», որտեղ բոլոր թեկնածուներին հավասարության սկզբունքով տրվում է հեռուստա-ռադիո եթերային ժամանակ՝ իրականացնելու իրենց քարոզչական գործունեությունը:

Այսպիսով, ընտրելով Բանիմացների խորհուրդը, հանրությունը մանդատ է տալիս հոգևորականների բարձրագույն դասին՝ իր փոխարեն ընտրելու երկրի Առաջնորդին: Այս մեխանիզմը որոշ նմանություններ ունի ԱՄՆ նախագահ ընտրելու համար ժողովրդի քվեն ստացած ընտրիչների ինստիտուտին:

Բանիմացների խորհրդի ընտրության գործադիր օրենքի 7-րդ հոդվածի համաձայն, քվեարկության մասնակիցները կարող են քվեարկել մեկ անգամ, մեկ տեղամասում՝ օգտագործելով իրենց

---

<sup>47</sup> **Buchta W.**, *Who rules Iran? The structure of power in the Islamic Republic*, p. 60.

ծննդյան վկայականները<sup>48</sup>: Բանիմացների թիվը կախված է օսթանների՝ նահանգների թվից և բնակչության քանակից: 500 հազարից պակաս բնակչություն ունեցող նահանգը խորհրդում ստանում է մեկ տեղ<sup>49</sup>: Եթե նահանգի բնակչությունը 1 միլիոնից ավելի է, ապա յուրաքանչյուր կես միլիոն բնակչության համար Բանիմացների խորհրդում նահանգից հավելյալ մեկ թեկնածուի տեղ է հատկացվում<sup>50</sup>:

Թեպետ, ըստ Սահմանադրության, Բանիմացների խորհուրդը պետք է նաև հետևի Առաջնորդի կատարած աշխատանքներին, սակայն, փաստացի Խորհուրդը չունի գործող մեխանիզմներ՝ ազդելու Առաջնորդի այս կամ այն գործունեության վրա, իսկ քննարկումներն էլ պահվում են գաղտնի: Բարեփոխականների թևը երբեմն փորձում է, Բանիմացների խորհրդի լծակները օգտագործելով, փոքր-ինչ զսպել Առաջնորդի աճող հեղինակությունը, բայց մինչ այժմ էական առաջընթաց չի գրանցվել:

Հազվադեպ երևույթ է անգամ, որ Բանիմացների խորհրդի ներկայացուցիչը քննադատության ենթարկի Առաջնորդի իրականացրած քաղաքականությունը, բայց նման դեպքերը բացառված չեն: Օրինակ, Բանիմացների խորհրդի անդամ Այաթոլլահ Սայիդ Ալի Մուհամմադ Դասթգեյբը խիստ քննադատության ենթարկեց Առաջնորդին՝ ժողովրդական ցույցերը ճնշելու համար. «Գերագույն առաջնորդն ընտրվում է Բանիմացների խորհրդի կողմից, պարտավորվում է համակարգել իշխանության երեք ճյուղերի հարաբերությունները և չունի ոչ մի իրավունք ժողովրդի նկատմամբ»<sup>51</sup>:

---

<sup>48</sup> *Executive Bylaws for the Election of the Assembly of Experts of the Leadership* <https://irandataportal.syr.edu/executive-bylaws-for-the-election-of-the-assembly-of-experts-of-the-leadership>.

<sup>49</sup> **Аббас Манучихри**, *Политическая система Ирана*, Санкт Петербург, 2007, стр. 41.

<sup>50</sup> **Buchta W.**, *Who rules Iran? The structure of power in the Islamic Republic*, p. 60.

<sup>51</sup> *Ayatollah Dastgheib: Supreme Leader Has No Right on the People*, Payvand, <http://www.payvand.com/news/10/oct/1001.html>

Ըստ Բանիմացների խորհրդի կանոնադրության՝ նրանք կարող են Առաջնորդին անվստահություն հայտնել միայն նրա անգործունակության դեպքում: Ըստ Սահմանադրության 111-րդ հոդվածի. «Եթե երկրի առաջնորդն ի վիճակի չէ իրականացնելու օրենսդրական իր պարտականությունները, կամ կորցրել է 5-րդ և 109-րդ հոդվածներում նշված որակական հատկանիշները, կամ եթե հայտնի դառնա, որ նա ի սկզբանե չի բավարարել այդ պահանջներին, ապա նա պաշտոնանկ է արվում»<sup>52</sup> Բանիմացների խորհրդի կողմից: Ըստ էության, Բանիմացների խորհուրդը երբեք չի վիճարկել կամ քննադատել Առաջնորդին, թեև առանձին անհատներ երբեմն արտահայտել են իրենց մտահոգությունները երկրի որդեգրած ուղու նկատմամբ<sup>53</sup>:

Մինչև 2016 թ. Բանիմացների խորհրդի ընտրությունն առանձին կարգով էր իրականացվում, սակայն այդ ընտրություններին բնակչության պասիվ մասնակցությունը գործող իշխանություններին ստիպեց հետագայում ժողովրդի քվեն ապահովելու ելքեր գտնել, հակառակ պարագայում այն հակաօրինական էր համարվելու: Այնուհետև որոշվեց Բանիմացների խորհրդի ընտրությունը հարմարեցնել Մեջլիսի ընտրություններին: Վերջին ընտրությունը, 2015 թվականի փոխարեն, կայացել է 2016 թ., քանզի 2009 թվականին ընդունված նոր Ընտրական օրենսգրքի համաձայն, 4 տարին մեկ անգամ տեղի ունեցող խորհրդարանական ընտրությունները պետք է համընկնեն 8 տարին մեկ անգամ տեղի ունեցող Բանիմացների խորհրդի անդամների ընտրությունների հետ: Փաստացի բնակչությունը միանգամից ընտրում է և՛ Մեջլիսի իրենց նախընտրելի պատգամավոր, և՛ Բանիմացների խորհրդի անդամ: Սա միաժամանակ երկու խնդիր է լուծում. ապահովում է մարդկանց հոսքը

---

<sup>52</sup> *ԻԻՀ Սահմանադրություն*, Հոդված 111, էջ 88, 89:

<sup>53</sup> *The Assembly of Experts*, June 13, 2011, <https://iranprimer.usip.org/resource/assembly-experts>

տեղամաս և թույլ է տալիս կրճատել ընտրությունների համար նախատեսված ծախսերը:

2016 թ. Բանիմացների՝ թվով հինգերորդ խորհրդի ընտրության ժամանակ աննախադեպ թվով թեկնածուներ գրանցվեցին (800 թեկնածու, որից 16-ը՝ կին<sup>54</sup>), քանի որ կարծում էին, թե հենց այս խորհուրդն է ընտրելու հաջորդ Առաջնորդին՝ հաշվի առնելով Խամենեիի առողջական վիճակը: Սակայն Սահմանադրության պահապանների խորհուրդը ոչ բոլորին հաստատեց, և ժողովրդական ընտրությունների արդյունքում ընտրվեց 88 անդամ, որոնց մեջ՝ ոչ մի կին:

Բանիմացների խորհուրդը տարեկան գումարվում է երկու անգամ երկու օրով, սովորաբար Թեհրանում, անհրաժեշտության դեպքում կրկին կազմակերպվում են նիստեր: Անդամների հիմնական մասը կառավարության տարբեր հաստատություններում այլ պաշտոններ ևս զբաղեցնում են. նաև այդ պատճառով է ընտրվել այս ձևաչափը: Ըստ Վիլֆրեդ Բուչանի «Ո՛վ է կառավարում Իրանը» աշխատության՝ 1998 թ. տեղի ունեցած ընտրությունների արդյունքում Թեհրանի ընտրողները, ըստ բնակչության թվի, ընտրել են տասնվեց, Խորասանը՝ ութ, Խուզեստանը՝ վեց, իսկ Ֆարսը՝ հինգ պատգամավոր<sup>55</sup>: Այսօր Բանիմացների խորհուրդը բաղկացած է 88 անդամից, որոնք ընտրվել են 2024 թ. մարտի 1-ին: Բանիմացների խորհրդի նախագահ ընտրվեց Մուհամմադ Ալի Մովահեդի Քերմանին<sup>56</sup>: Ղումը ավանդաբար համարվում է Բանիմացների խորհրդի քարտուղարության նստավայրը:

---

<sup>54</sup> *Everything, you need to know about Iran's Assembly of Experts election*, February 9, 2016, <https://www.brookings.edu/blog/markaz/2016/02/09/everything-you-need-to-know-about-irans-assembly-of-experts-election/>

<sup>55</sup> **Wilfried Buchta**, *Who Rules Iran? The Structure of Power in the Islamic Republic*, p. 60.

<sup>56</sup> **Farhi F.**, *The Assembly of Experts*, 080.2015, <http://iranprimer.usip.org/resource/assembly-experts>

## Բանհիմացների խորհրդի ընտրությունների արդյունքները<sup>57</sup> (սկսած 1979-ից)

### Աղյուսակ 1.

| Ընտրություն          | Տարեթիվ    | Դիմորդների թիվը        | Հաստատված թեկնածուների թիվը | Բանհիմացների թիվը | Ընտրողների թիվը | Մասնակցողների թիվը  |
|----------------------|------------|------------------------|-----------------------------|-------------------|-----------------|---------------------|
| I ընտ. <sup>58</sup> | 03.08.1979 | 428, որից մեկը՝ կին    | 428, որից մեկը՝ կին         | 428               | 20,857,391      | 10,784,932 - 51.71% |
| II ընտ.              | 10.12.1982 | 168                    | 146                         | 82                | 23,277,871      | 18,013,061 - 77.38% |
| III ընտ.             | 08.10.1990 | 180                    | 109                         | 83                | 31,280,084      | 11,602,613 - 37.09% |
| IV ընտ.              | 23.10.1998 | 396, որից 9՝ կին       | 167                         | 86                | 38,570,597      | 17,857,869 - 46.30% |
| V ընտ.               | 15.12.2006 | 493, որից 10՝ կին      | 167                         | 86                | 46,549,042      | 28,321,270 - 60.84% |
| VI ընտ.              | 26.02.2016 | 801, որից 16՝ կին      | 161                         | 88                | 54,915,024      | 33,480,548 - 60.97% |
| VII ընտ.             | 01.03.2024 | 510, որից երկուսը՝ կին | 144                         | 88                | 61,172,298      |                     |

Հատկանշական է, որ Իրանի կանայք համառորեն պայքարում են, որպեսզի իրենք ևս Բանհիմացների խորհրդի մաս կազմեն: Թեև օրենքով արգելող դրույթ չկա, բայց վերջին 40 տարիների ընթացքում միայն առաջին՝ 1979 թ. Բանհիմացների խորհրդում է եղել մեկ կին՝ Մոնիե Գորջի Ֆարդը, ով մասնակցել է սահմանադրության կազմմանը, իսկ հաջորդ ընտրություններին նա ընդհանրապես հրաժարվել է մասնակցությունից: Տարիներ անց նա մեկնաբանել է Բանհիմացների խորհրդի աշխատանքներում չընդգրկվելու պատճառները: Նրա խոսքով, ինքը «ժողովրդից ստացել էր ավելի քան

<sup>57</sup> Assembly of Experts elections, Iran Data Portal, <https://irandataportal.syr.edu/assembly-of-experts-elections>

<sup>58</sup> Ըստ էության առաջին ընտրությունները նախատեսված էին միայն Սահմանադրության կազմման համար:

մեկ միլիոն քվե, սակայն 400 հազար ձայն հավաքած Շիրազի քաղաքներից մեկի ներկայացուցիչը հայտարարել էր, որ սա արդեն «մեղավոր ժողով է», քանի որ ներկա են 70 տղամարդ և մեկ կին»<sup>59</sup>: Որքան էլ Մոնիե Գորջի Ֆարդը պայքարել է իր իրավունքների համար, այն փաստացի ապարդյուն է եղել: Նրանից հետո՝ մինչև այժմ, որևէ կնոջ չի հաջողվել հաղթահարել Սահմանադրության պահապանների խորհրդի թույլատրելի շեմը: Ի տարբերություն Մեջլիսի ընտրությունների՝ կանայք և կրոնական փոքրամասնությունները, այդ թվում՝ նաև մուսուլմանները, որոնք շիա չեն, փաստացի իրավունք չունեն ընտրվելու Բանիմացների խորհրդում: 1998 թ. 9 կին էր հայտ ներկայացրել, 2006 թ.՝ տասը<sup>60</sup>, 2016-ին՝ 16 կին, 2024-ին՝ 2-ը, սակայն նրանցից և ոչ մեկը Սահմանադրության պահապանների խորհրդի հաստատումը չի ստացել: Ուշագրավ է, որ 2016 թվականի ընտրություններին գրանցված 16 կանանցից 10-ին հրավիրել էին մասնակցելու Բանիմացների խորհրդի թեկնածության քննությանը<sup>61</sup>: Բանիմացների խորհրդին մասնակցելու համար կանայք ստանում են կրթություն իսլամական սեմինարիայում: 2016 թ. կանանց իսլամական սեմինարիայի համար բյուջեից հատկացվել է 1,9 միլիարդ ուիալ<sup>62</sup>, սակայն Բանիմացների խորհրդին մասնակցելու պարտադիր քննության ժամանակ այդ սեմինարիայի բոլոր կին թեկնածուները որակագրկվել էին, քանի որ պահպանողական անդամները համոզված էին, որ կանանց պակասում են որակավորումը և բավարար գիտելիքները: Փաստացի ստեղծվում է իրարամերձ երկու իրավիճակ. մի կողմից՝ պաշտոնապես արգելք չկա, և

<sup>59</sup> *Nagofteha-ye khandani tanha zan-e tarikh-e khobregan*, <https://www.isna.ir/news/95022615758>

<sup>60</sup> **Shmidt P.**, *Understanding Iran's Assembly of Experts Vote*, 16.02.2016 <http://www.washingtoninstitute.org/policy-analysis/view/assembly-test>,

<sup>61</sup> Իջթիհադ՝ կրոնական-իրավական որոշումների ընդունում իրատեսական եղանակով՝ դիյասի (համեմատության) կամ ռայյի (տրամաբանության) հիման վրա:

<sup>62</sup> *Disqualifying the Qualified: Female Candidates & the Assembly of Experts*, 2016/02/22 <https://majlismonitor.com/en/2016/02/disqualifying-the-qualified-female-candidates-for-the-assembly-of-experts/>

ավելին՝ Իրանը պետական բյուջեից գումար է հատկացնում կանանց իսլամական սեմինարիայի համար, մյուս կողմից՝ այս 45 տարիների ընթացքում այդ սեմինարիաները փաստացի «ի վիճակի» չեն եղել պատրաստելու գեթ մեկ կին մոջթահեդ<sup>63</sup>, որը կկարողանար հաղթահարել պարտադիր քննությունը: Այսպիսով, կանայք մերժվում են Բանիմացների խորհրդի թեկնածու դառնալու հնարավորությունից՝ իսլամական հավաստագրերի բացակայության պատճառով<sup>64</sup>: Բայց կարծում ենք, որ վաղ թե ուշ Իրանի կանանց համառ դիմադրության արդյունքում կանայք ի վերջո կկարողանան հաղթահարել Սահմանադրության պահապանների խորհրդի կողմից մշակված բարձր նշաճողի բարդությունը և կդառնան Բանիմացների խորհրդի թեկնածու, բայց այդ ժամանակ, ամենայն հավանականությամբ, նրանք կբախվեն ընտրագանգվածի մերժմանը, քանի որ հասարակության պատկերացումներում ևս ամփոփված է, որ հոգևորականները պետք է լինեն միայն տղամարդիկ:

Հատկանշական է, որ պրոֆեսոր Մահջուր Զվեիրին ևս գտնում է, որ կանայք կրթություն ստանալու հարցում չեն զիջում տղամարդկանց, ապա ապագայում, ի վերջո, կանայք պետք է զբաղեցնեն իրենց արժանի տեղը Իրանի կառավարման համակարգում: «Բանիմացների խորհրդում կանանց հնարավոր ընդգրկման ճանաչումը կարող է լինել պետության կողմից պրագմատիկ արձագանք այս հզոր սոցիալական դասի առաջացմանը»<sup>65</sup>:

Թեև Բանիմացների խորհուրդը միակ մարմինն է, որը կարող է ընտրել Առաջնորդին կամ ազատել նրան զբաղեցրած պաշտոնից, այնուամենայնիվ, հարկ է նշել, որ խորհրդի անդամներ

---

<sup>63</sup> Արաբերեն՝ «իրավագետ»: Շիա մուսուլման, ով մեկնաբանում է կրոնական օրենքները և սկզբունքները:

<sup>64</sup> **Farideh Farhi**, *The Assembly of Experts*, [https://iranprimer.usip.org/sites/default/files/Politics\\_Farhi\\_Assembly%20of%20Experts\\_0.pdf](https://iranprimer.usip.org/sites/default/files/Politics_Farhi_Assembly%20of%20Experts_0.pdf)

<sup>65</sup> **Zweiri Mahjoob**, *Understanding Iran's Assembly of Experts*, Center for Iranian Studies, Durham University, 2006, p. 9. [https://www.academia.edu/64930705/Understanding\\_Iran\\_s\\_Assembly\\_of\\_Experts](https://www.academia.edu/64930705/Understanding_Iran_s_Assembly_of_Experts)

ընդ գտվում են Սահմանադրության պահապանների խորհրդի կողմից՝ ուսումնասիրության և հաստատման ժամանակ: Այսինքն, որևէ հոգևորական, որքան էլ բարձր լինի նրա հեղինակությունը, չի կարող շրջանցել Սահմանադրության պահապանների խորհուրդը<sup>66</sup>: Քանի որ Բանիմացների խորհրդի թեկնածուները ենթակա են Սահմանադրության պահապանների խորհրդի հաստատմանը, որն ինքնին ենթակա է Առաջնորդին, ստացվում է, որ քաղաքական մանևրի համար շատ քիչ ազատ տարածք է մնում:

Բանիմացների խորհուրդը բաղկացած է առաջնորդության խորհրդից և վեց հանձնաժողովականներից, որոնք հավաքվում են տարեկան երկու անգամ: Բանիմացների խորհրդի ղեկավարությունն ընտրվում է գաղտնի քվեարկությամբ՝ երկու տարով, և բաղկացած է ժողովի նախագահից, երկու փոխնախագահից, երկու քարտուղարից և երկու օգնականից:

Բանիմացների խորհրդի ժողովները տեղի են ունենում վեց ամիսը մեկ անգամ՝ դիտարկելու Առաջնորդ դառնալ ցանկացողների թեկնածությունը, գործող առաջնորդի համապատասխանությունը օրենքին: Գումարման վերջում զեկույցներ են ներկայացվում, որոնք միանգամայն գաղտնի են:

Բանիմացների խորհուրդը մինչև այժմ ունեցել է յոթ նախագահ, որոնց ընտրել է Հրատապ խորհուրդը. ստորև ներկայացնում ենք նրանց անունները և կառավարման շրջանը:

## **Աղյուսակ 2.**

|    | Անուն, ազգանուն              | Ընտրվելու տարեթիվը | Ազատվելու տարեթիվը |
|----|------------------------------|--------------------|--------------------|
| 1. | Ալի Մեշքինի                  | 12.11.1983         | 25.07.2007         |
| 2. | Ալի Աբբար Հաշեմի Ռաֆսանջանի  | 25.07.2007         | 8.03.2011          |
| 3. | Մուհամմադ Ռեզա Մահդավի Ղանիի | 8.03.2011          | 21.10.2014         |
| 4. | Մահմուդ Հաշեմի Շահրուդի      | 21.10.2014         | 10.03.2015         |

<sup>66</sup> Հաջորդ գլխում մանրամասն կներկայացվի, թե ինչպես է ձևավորվում Սահմանադրության պահապանների խորհուրդը:

|    |                                  |            |            |
|----|----------------------------------|------------|------------|
| 5. | Մոհամմադ Յազդի                   | 10.03.2015 | 24.05.2016 |
| 6. | Ահմադ Ջաննաթի                    | 24.05.2016 | 21.05.2024 |
| 7  | Մոհամմադ-Ալի Մովահեդի<br>Քերմանի | 21.05.2024 | Մինչև այժմ |

Բանիմացների խորհրդին խորհրդատվության համար հաճախ դիմում են նաև կառավարության անդամները, նախարարները: Եթե Մեջլիսում խնդրահարույց օրենք է ներկայացվում, որը Սահմանադրության պահապանների խորհուրդը մերժում է՝ Սահմանադրությանը հակասելու հիմնավորմամբ, ապա տվյալ օրենքը տրամադրվում է նաև Բանիմացների խորհրդին, որպեսզի նրանք ևս, Նպատակահարմարության ժողովից զատ, արտահայտեն իրենց կարծիքը և դիտարկումները:

Բանիմացների խորհրդի աշխատանքներն իրականացվում են Վարչական խորհրդի և հանձնաժողովների միջոցով: Կա Վարչական խորհրդի երկու տեսակ: Առաջինը Ավագների խորհուրդն է, որը ձևավորվում է ըստ տարիքի, որտեղ ընդգրկվում է 4 ավագ ներկայացուցիչ, որոնցից ամենատարեցը նշանակվում է նախագահ, հաջորդ ամենատարեց անդամը՝ փոխնախագահ, մյուս երկուսը՝ քարտուղարներ: Այս կազմի պարտականությունն է՝ վարել նորընտիր անդամների երդմնակալության արարողությունը: Վարչական խորհրդի կազմն ընտրվում է երկու տարի ժամկետով՝ փակ քվեարկությամբ<sup>67</sup>:

Վարչական խորհրդի նախագահն ընտրվում է ներկա անդամների ձայների բացարձակ, իսկ փոխնախագահները, քարտուղարները և գործավարները՝ ձայների հարաբերական մեծամասնությամբ: Բանիմացների խորհուրդը վարում է տարեկան աշխատանքների հաշվետվություն, բայց (ինչպես վերևում նշեցինք) այդ խորհրդի նիստերը գաղտնի են, հաշվետվությունները երբեք չեն

<sup>67</sup> *Structure of the Assembly of Experts*, <http://www.majlesekhobregan.ir/en/ashnayibamajles/View/3294/Structure-of-the-Assembly-of-Experts>

հրապարակվում<sup>68</sup>, և դրանց կարող է ծանոթանալ միայն Առաջնորդը:

Բանիմացների խորհրդում գործում է նաև վեց մշտական հանձնաժողով: Յուրաքանչյուր հանձնաժողով ունի 11 անդամ: Վեց հանձնաժողովներից մեկը կոչվում է «107–109 հանձնաժողով»՝ վկայակոչելով Իսլամական Հանրապետության Սահմանադրության 107-րդ և 109-րդ հոդվածները: Ըստ Բանիմացների խորհրդի անդամ Ահմադ Խաթամիի՝ կա նաև գաղտնի հանձնաժողով, որն զբաղվում է Առաջնորդի պաշտոնի հաջորդ թեկնածուների բացահայտմամբ. «15 տարի առաջ՝ Հեղափոխության Գերագույն առաջնորդի հետ հանդիպման ժամանակ, նա ասաց, որ մենք պետք է ունենանք առաջնորդի տասը թեկնածու: Այս կարծիքի հիման վրա ձևավորվեց գաղտնի հանձնաժողով՝ գտնելու այդ պաշտոնի հավանական թեկնածուներին»<sup>69</sup>: Իսկ 2016 թ. տեղեկատվության արտահոսք եղավ, ըստ որի՝ այդ գաղտնի հանձնաժողովն արդեն առանձնացրել է երկու հավանական թեկնածուների, սակայն անունները պահվում էին խստագույնս գաղտնի, ինչն իր հերթին բնականաբար ծնում էր տարատեսակ քննարկումներ ու վերլուծություններ: «Ղանուն» թերթին սրա մասին 2016 թ. հարցազրույց էր տվել Այաթոլլահ Ռաֆսանջանին՝ ասելով, որ նման եզրահանգման եկել են հարյուրավոր մարդկանց հետ քննարկման արդյունքում, և այն նախատեսված է արտակարգ իրավիճակի համար<sup>70</sup>: Փաստացի այս գաղտնի հանձնաժողովի աշխատանքներին Բանիմացների խորհրդի ոչ բոլոր անդամներն են մասնակցում: Բանիմացների խորհրդի անդամներից Ալի Շաֆիեյին անդրադարձել էր բոլորին հուզող մի հարցի. քանի որ Ռաֆսանջանին Բանիմացների

---

<sup>68</sup> **David E. Thaler, Alireza Nader**, *Mullahs, Guards, and Bonyads an Exploration of Iranian Leadership Dynamics*, 2010, p. 28.

<sup>69</sup> *Ahmad Khatami: Agha goftand shoma bayad dar astinetan 10 rahbar dashtebashed* <https://www.khabaronline.ir/news/642718>

<sup>70</sup> *Top Secret Committee Plans Successor for Supreme Leader*, <https://iranwire.com/en/features/1864>

խորհրդի ղեկավարն էր, այդ հանգամանքը կարող էր պատճառ դառնալ, որ վերջինս չընդգրկվի գաղտնի հանձնաժողովի ընտրած երկու թեկնածուների ցուցակում: Փաստացի Իրանի քաղաքական համակարգի վերին մասում գտնվող շատ քչերն ինչ-որ բան գիտեն ներգրավված անձանց կամ նրանց քննարկման մանրամասների մասին, և հենց գաղտնի հանձնաժողովի անդամներն են ծրագրում երկրի ապագայի ուղենիշը:

2005 թ. նախագահական ընտրություններում Ռաֆսանջանիի պարտությունից հետո Առաջնորդը, այնուամենայնիվ, չցանկացավ նրան ամբողջությամբ դուրս մղել քաղաքական գործընթացներից. 2007 թ. Ռաֆսանջանին ընտրվեց Բանիմացների խորհրդի նախագահ՝ առավելության հասնելով հիմնական մրցակից Ահմադ Ջանաթիի նկատմամբ: Ռաֆսանջանիի հաղթանակն իրանական հասարակության լայն շերտերում հույս արթնացրեց, որ ժամանակն է կատարելու բարեփոխումներ նաև Բանիմացների խորհրդում, և որ այդ փոփոխությունները խթան կհանդիսանան Իրանի քաղաքական ողջ դաշտի վերականգնման համար: Հատկանշական է, որ, հատկապես 2000-ականներից սկսած, երկրի քաղաքականության մեջ ամենադիմացկուն քաղաքական գործիչ Ռաֆսանջանին բազմիցս արտահայտել է իր դժգոհությունը Բանիմացների խորհրդի ոչ լիարժեք գործունեության վերաբերյալ: Ռաֆսանջանին, հղում անելով ԻԻՀ Սահմանադրությանը, նշում էր, որ Բանիմացների խորհուրդն իրավասու է վերահսկելու Առաջնորդի քայլերը, ինչը, սակայն, չի արվում: Նա կոչ էր անում կենդանություն տալ մոռացված 111-րդ հոդվածին և վերանայել Բանիմացների խորհրդի գործառույթը<sup>71</sup>: Նա գտնում էր, որ Առաջնորդի ինստիտուտը պիտի փոխարինվի Գերագույն առաջնորդության հանձնաժողովով՝ բաղկա-

---

<sup>71</sup> “Showdown: 6 Things to Know about Rafsanjani’s Confrontations with Conservatives”, Majlis Monitor, 27 January 2016, հասանելի է 31.05.2020 <https://majlismonitor.com/en/2016/01/showdown-6-things-to-know-about-rafsanjani-confrontations-with-conservatives/>

ցած մի քանի անհատներից, ովքեր կքննեն Առաջնորդի գերիշխանության հարցը: Ի դեպ, Շարք Դեյլիին տված հարցազրույցում Ռաֆսանջանին, հիշատակելով 1989 թ. Խոմեյնիի մահից հետո տեղի ունեցած ընտրությունների գործընթացը, նշել էր, որ այդ ժամանակ Խամենեին համաձայն էր այդ գաղափարի հետ<sup>72</sup>: Ռաֆսանջանիի այս տեսակետները բախվեցին Իրանի խիստ պահպանողական թևի ներկայացուցիչների դիմադրությանը: Եվ այս ելույթներից հետո էր, որ որոշվեց ընդհանրապես նվազեցնել Ռաֆսանջանիի դերակատարությունը քաղաքական գործընթացներում:

Ըստ էության, Ռաֆսանջանին նաև քննադատեց 2009 թ. կառավարության կողմից բնակչության նկատմամբ կիրառված ճնշումները, ինչը, բնականաբար, չէր կարող վրիպել Իրանի պահպանողական թևի ուշադրությունից: Սկսվեց նրա հեղինակազրկման գործընթացը, որը զուգորդվեց ընտանիքի անդամների նկատմամբ քաղաքական հետապնդումներով ևս:

Թեպետ Ռաֆսանջանին իրանական քաղաքական դաշտի հնարնակներից էր և համարվում էր Խոմեյնիից, Խամենեիից հետո ամենաազդեցիկ պետական գործիչը, այնուամենայնիվ, պահպանողական թևի ներկայացուցիչները 2011 թ. «ստիպեցին», որ նա այլևս չառաջադրվի այդ պաշտոնում, քանի որ, ըստ նրանց, Ռաֆսանջանին այլևս հրաժարվում էր «մեկ մարդու կառավարման» գծին ենթարկվելուց<sup>73</sup>: Այդպիսով, 2011 թ. մարտի 8-ին Բանիմացների խորհուրդն ստիպեց Ռաֆսանջանիին հեռանալ զբաղեցրած պաշտոնից, և նրան փոխարինեց պահպանողական թևի ներկայացուցիչ ալաթոլլահ Մուհամմադ Ռեզա Մահդավի Ղանին: Սակայն վերջինս 2014 թվականին կնքեց մահկանացուն, և Բանիմացների խորհրդի նախագահ ընտրվեց ըստ էության «բոլորի կողմից ընդունելի» Մահմուդ Հաշեմի Շահրուդին, որը պահպանողական էր, բայց չէր

---

<sup>72</sup> IBID

<sup>73</sup> *Iran's Rafsanjani Loses Key Post on Assembly of Experts*, March 08, 2011, [https://www.rferl.org/a/iran\\_rafsanjani\\_assembly\\_of\\_experts/2331272.html](https://www.rferl.org/a/iran_rafsanjani_assembly_of_experts/2331272.html)

դասվում կոշտ քաղաքականություն իրականացնողների շարքին, ինչպես, օրինակ, այաթոլլահ Մուհամմադ Թաղի Մեսրահ Յազդին կամ Ահմադ Խաթամին<sup>74</sup>: Պետք է նշել, որ սա միջանկյալ ընտրություն էր Ղանիի մահից հետո, իսկ հաջորդ ընտրությունը լինելու էր մեկ տարի հետո՝ 2015 թ.: 2015 թվականին Բանիմացների խորհրդի նախագահությունն ստանձնելու համար կրկին տեղի ունեցան ներքին ընտրություններ: Որքան էլ զարմանալի է, ոչ վաղ անցյալում Խորհրդի ղեկավարումից հրաժարված Ռաֆսանջանին կրկին ուժերը փորձեց. ընտրություններում 73 ձայնից նա ստացավ 47 քվե<sup>75</sup> և փաստացի հաղթանակեց պահպանողական թևի ներկայացուցիչ Մուհամմադ Յազդիին<sup>76</sup>: Յազդին ղեկավարելու էր Բանիմացների խորհուրդը մինչև հաջորդ տարվա՝ 2016 թ. փետրվարը, երբ ուղիղ քվեարկությամբ ժողովուրդը պետք է ընտրեր հաջորդ Բանիմացների խորհուրդը:

Թեպետ Բանիմացների խորհուրդը որևէ քաղաքական հայացք չի արտահայտում, իսկ անդամներն ունեն զանազան քաղաքական պատկերացումներ, սակայն 2015 թ. Բանիմացների խորհուրդը, ըստ էության, գտնվում էր ավանդականների և խիստ պահպանողականների ձեռքում: Վերինգի արդյունքում նույն թվականին խորհրդի բազմաթիվ բարձրաստիճան հոգևորականներ որակագրվեցին և չկարողացան մասնակցել սպասվելիք ընտրություններին, ոմանք էլ ընդհանրապես հրաժարվեցին դրան մասնակցելուց:

Այս ամենով հանդերձ, Բարեփոխականները և Կենտրոնամետները համոզված էին, որ առանձին-առանձին չեն կարողանա

---

<sup>74</sup> **Arash Karami**, “Shahroudi seen as likely candidate to head Assembly of Experts”, Al-Monitor, 27 October, 2014 <https://www.al-monitor.com/pulse/fr/originals/2014/10/shahroudi-nominated-assembly-experts.html>

<sup>75</sup> “Iran hardliner Yazdi picked to head Assembly of Experts”, BBC News, 10 March 2015, հասանելի է՝ 03.06.2021 <https://www.bbc.com/news/world-middle-east-31814087>

<sup>76</sup> Նա Իսլամական հեղափոխությունից հետո գլխավորել էր Մեջլիսը, իսկ մինչև 1999 թվականը եղել էր արդարադատության համակարգի ղեկավարը:

հաղթահարել Սահմանադրության պահապանների կողմից գտումը: Այդ իսկ պատճառով նրանք միավորվեցին՝ ձևավորելով «Հույսի ցուցակը»<sup>77</sup>, որը, փաստորեն, արդարացրեց նախկին նախագահ Խաթամիի և Հասան Ռոհանիի ակնկալիքները. նրանք Թեհրանում նախատեսված 16 տեղից զբաղեցրին 15-ը: Իսկ պահպանողականների կոշտ թևի ներկայացուցիչ Մուհամմադ Յազդին և Մուհամմադ-Թաքի-Մեսրահ-Յազդին կորցրին իրենց տեղերը Բանիմացների խորհրդում: Փաստացի, կոշտ թևի միակ ներկայացուցիչը, որը հաղթահարեց ընտրությունների շեմը, Ահմադ Ջանաթին էր<sup>78</sup>:

2016 թ. Բանիմացների խորհրդի ընտրություններից հետո խորհրդի նախագահ ընտրվեց 89-ամյա Ահմադ Ջանաթին, որը թեպետ ուներ բավականին հարուստ քաղաքական անցյալ, բայց բազմիցս խնդրել էր Առաջնորդին՝ իրեն ազատել տարատեսակ պարտականություններից: Նրա խնդրանքը մերժվեց, և նա գլխավորեց Բանիմացների խորհուրդը մինչև 2024 թ.: Ջանաթին նաև Սահմանադրության պահապանների խորհրդի քարտուղարն էր: Հատկանշական է, որ Իրանի քաղաքական դաշտում առկա է այն տեսակետը, որ Բանիմացների խորհրդի ղեկավարի ընտրության հարցում ժողովրդի կամքը հաշվի չի առնվում: Դրա վառ ապացույցն էր հենց 2016 թ. ընտրությունը, որը զուգորդվում էր նաև Մեջլիսի ընտրություններով: Որպես Մեջլիսի պատգամավորի թեկնածու՝ այաթոլլահ Ռաֆսանջանին հավաքել էր 2 մլն 301 ձայն, իսկ Ջանաթին՝ 1 մլն 321 ձայն, բայց Բանիմացների խորհրդի ղեկավար ընտրելու համար Ռաֆսանջանիի անունն անգամ չընդգրկվեց թեկնածուների ցուցակում<sup>79</sup>:

---

<sup>77</sup> *Analysis: 2016 Iranian Parliamentary & Assembly of Experts Election Results*, Majlis Monitor, 2016/03/07 <https://majlismonitor.com/en/2016/03/analysis-2016-iranian-parliamentary-assembly-of-experts-election-results/>

<sup>78</sup> *Iran elections: Reformists make gains in Assembly of Experts*, BBC News, 29 February 2016, հասանելի է՝ 03.06.2024, <https://www.bbc.com/news/world-middle-east-35684776>

<sup>79</sup> *Избирательная система Ирана не отражает волю народа*, 26.05.2016, <https://surli.cc/qrmcly>

Բանիմացների խորհրդի պատասխանատվությունն այն աստիճան կարևոր էր և այնքան վճռորոշ դերակատարություն ուներ պետության ապագայի համար, որ Իսլամական Հանրապետության հիմնադիր Իմամ Խոմեյնին այս կառույցի պատասխանատվությունը համարեց ավելի կարևոր, քան որևէ մեկ այլ կառույցինը և զգուշացրեց, որ «ամենաչնչին անփութությունը կամ անձնական շահը, Աստված մի արասցե, կհանգեցնի պատմության մեծագույն կործանմանը»<sup>80</sup>:

Բանիմացների խորհրդի պաշտոնական կայքէջը խորհրդի սույն կառույցը կարևորության մասին բաժնում տեսնում ենք այն դրույթները, որոնք, ըստ էության, մշակվել են Խոմեյնիի կողմից, և մինչև այժմ բարձրագույն հոգևորականությունը փորձում է անխախտ պահել այն: Թեև Բանիմացների խորհրդի դերը նկատելի չէ պետության ընդհանուր գործունեության մեջ, այն կարևոր նշանակություն ունի երկրի պետական համակարգի պահպանման համար: Խորհուրդը կանխում է Առաջնորդի բացակայության պատճառով համակարգում առաջացող հավանական ճգնաժամը՝ երաշխավորելով համակարգի օրինականությունը, և միաժամանակ զգոն հայացք պահում երկրի կառավարմանն առնչվող ռազմավարությունների մշակման վրա: Մի կողմից այն հետևում է գործող Առաջնորդի արդարացիությանը, կրոնական գիտելիքներին, խոհեմությանը և քաջությանը, իսկ մյուս կողմից՝ մտածում ապագա առաջնորդի ընտրության մասին<sup>81</sup>:

Այսպիսով, ամփոփելով ենթագլուխը՝ կարող ենք արձանագրել, որ Բանիմացների խորհուրդը կարող էր լինել Իրանի պետական համակարգի ամենաազդեցիկ ինստիտուտը, որտեղ հավաքված կլինեին հիմնականում Իրանի բարձրագույն հոգևոր դասը, և

---

<sup>80</sup> *Emam Khomeyni: Kuchektarin sahl engari, bozorgtarin faje'eye tarikh ra bevojud mi avarad* <https://www.isna.ir/news/96042212449/>

<sup>81</sup> *Ahamiyat-e majles-e khobregan-e rahbari*, <https://majlesekhobregan.ir/fa/cont/4680/>

Նրանք կկարողանային կանխարգելող դերակատարություն ունենալ Առաջնորդի իրականացրած այս կամ այն քաղաքականության նկատմամբ, ինչն ամրագրված է Սահմանադրությամբ: Բայց իրականությունն այլ է. նրանց գործունեությունը հասցված է նվազագույնի, և Բանիմացների խորհրդի գոնե բաց տեղեկատվական աղբյուրները չեն խոսում Առաջնորդի ինստիտուտի իրականացրած քաղաքականությանն ընդդիմանալու, քննադատելու որևէ իրական փորձի մասին: Այդպիսով, ըստ Սահմանադրության, Առաջնորդին վերահսկող կառույցը, ըստ էության, այսօր առավել նվազագույն դերակատարություն ունի երկրում:

## **Սահմանադրության պահապանների խորհուրդ – Shourā-ye Negahbān-e ghanoon-e asasi**

Իրանական կառավարման համակարգի թերևս ամենակարևոր եռյակը գլխավորում է Սահմանադրության պահապանների խորհուրդը (այս կառույցը երբեմն կոչում են նաև Դիտորդների խորհուրդ): Ի տարբերություն վերը նշված երկու ինստիտուտների, որոնք ուղղակի կամ անուղղակի ընտրվում են ժողովրդի կողմից, Սահմանադրության պահապանների խորհուրդը նշանակովի կառույց է: Սահմանադրության պահապանների խորհուրդը բաղկացած է 12 անդամից՝ վեց կրոնագետից (Ֆաղիհ), վեց իրավագետից (հողուղդան): Կրոնագետներին ուղղակի նշանակում է ԻԻՀ Առաջնորդը, իսկ իրավագետներին՝ Դատական իշխանության ղեկավարը, վերջինիս էլ ուղղակի նշանակում է Առաջնորդը: Իրավագետների ներկայացուցիչները պետք է ստանան Մեջլիսի հաստատումը: Այս դրույթը գետեղված է ԻԻՀ Սահմանադրության 91-րդ հոդվածում, որտեղ Սահմանադրության պահապանների խորհրդի գործառույթը նկարագրվում է այսպես. «Իսլամական խորհրդարանում (Մեջլիս) ընդունված որոշումների՝ իսլամի նորմերին և Սահ-

մանադրությանը համապատասխանությունն ապահովելու նպատակով ստեղծվում է Սահմանադրության պահապանների խորհուրդ»<sup>82</sup>:

Իշխանական երեք թերից Սահմանադրության պահապանների խորհուրդը, ըստ էության, իշխանական թերի միջև հավասարակշռությունը չխախտելով, միևնույն ժամանակ ապահովում է Առաջնորդի ներկայացվածությունը երեք թերում էլ: Դրանով իսկ Պահապանների խորհուրդը դառնում է Առաջնորդի ինստիտուտի կարևոր հենասյունը:

Սահմանադրության 92-րդ հոդվածի համաձայն՝ Սահմանադրության պահապանների խորհրդի անդամներն ընտրվում են վեց տարի ժամկետով, սակայն առաջին շրջանում՝ երեք տարի անց, յուրաքանչյուր խմբի անդամների կեսը վիճակահանությամբ փոխարինվում է նոր անդամներով<sup>83</sup>:

Սահմանադրության պահապանների խորհուրդը Իրանի Իսլամական Հանրապետության ամենաազդեցիկ ինստիտուտներից մեկն է, որը, ըստ էության, իր գործունեությամբ առավել բարձր դիրք է զբաղեցնում, քան խորհրդարանը: Այն փաստացի փորձում է իրականացնել վերին պալատի, Սահմանադրական դատարանի և ընտրական հանձնաժողովի որոշակի գործառույթների համադրություն: Սահմանադրության պահապանների խորհուրդն ունի օրենսդիր և դատական մարմինն բնորոշ լիազորություններ:

Սահմանադրության պահապանների խորհրդի գործառույթների առաջին բաժինն ամրագրված է ԻԻՀ Սահմանադրության 99-րդ հոդվածում, ըստ որի՝ Սահմանադրության պահապանների խորհուրդը վերահսկողություն է իրականացնում Բանիմացների խորհրդի ընտրությունների, նախագահական ընտրությունների, Իսլամական խորհրդի մեջլիսի պատգամավորների ընտրություններ-

---

<sup>82</sup> ԻԻՀ Սահմանադրություն, հոդված 91:

<sup>83</sup> ԻԻՀ Սահմանադրություն, հոդված 92:

րի և հանրաքվեների անցկացման վրա<sup>84</sup>: Փաստացի, կառույցի գլխավոր պարտականությունն է՝ կազմակերպել համապետական բոլոր ընտրությունները (բացառությամբ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների), կատարել գտման աշխատանք, թույլատրել կամ մերժել քաղաքացիների մասնակցությունն ընտրություններին: Ուշագրավ է, որ ընտրվող թեկնածուների այս վերինգր Խումեյնիի կառավարման տարիներին ենթարկվում էր հստակ գծագրված սահմանափակումների: Այն կիրառվում էր միայն կոմունիստների, սոցիալիստների, ազգայնականների, Իրանի ազատության շարժման անդամների, քրդերի և նման այլ խմբերի նկատմամբ, որոնք կասկածի տակ էին առնում Վելայաթ-է Ֆադիի գաղափարախոսությունը, կամ նրանց նկատմամբ, ովքեր ընդհատակյա ընդդիմության մաս էին կազմում<sup>85</sup>:

Եթե ԻԻՀ քաղաքացին ցանկանում է որպես թեկնածու մասնակցել համապետական որևէ ընտրության, պետք է ընտրությունների նախաշեմին դիմի Ներքին գործերի նախարարություն, լրացնի հարցաթերթիկը և տրամադրի անձնագրի պատճենը: Դրանից հետո Ներքին գործերի նախարարությունը, ուսումնասիրելով թեկնածուների փաստաթղթերը, անհամապատասխանության դեպքում հենց ինքն էլ կարող է մերժել քաղաքացու հայտը, իսկ եթե չի մերժվում, ապա քաղաքացու փաստաթղթերը հանձնվում է Սահմանադրության պահապանների խորհրդին: Վերոհիշյալ կառույցն էլ իր հերթին, փաստաթղթերն ստանալուց 5 օր անց, դրանք քննում է, կազմում արձանագրություն և այդ արձանագրության մեկ օրինակը տրամադրում է Ներքին գործերի նախարարությանը: Ըստ այդմ որոշվում է՝ տվյալ քաղաքացին կարո՞ղ է դառնալ թեկնածու, թե՞ ոչ: Այսինքն, Սահմանադրության պահապանների խորհուրդը, ըստ համակարգի նպատակահարմարության, կարող է գտել ոչ ցանկա-

---

<sup>84</sup> ԻԻՀ՝ *Սահմանադրություն*, հոդված 99:

<sup>85</sup> *Who Rules Iran?* p. 59.

լի քաղաքացիներին առանց բողոքարկման իրավունքի՝ այսպիսով ընտրությունների վրա ունենալով էական ազդեցություն<sup>86</sup>:

Որպես ապացույց՝ բերենք մի քանի օրինակ. 1997 թ. նախագահական ընտրություններին դիմել էր 238 քաղաքացի, սակայն թույլատրվեց մասնակցել միայն չորսին<sup>87</sup>: 2005 թ. նախագահական ընտրությունների համար գրանցվեց 1,014 քաղաքացի<sup>88</sup>, սակայն Սահմանադրության պահապանների խորհուրդը հաստատեց 8-ի թեկնածությունը<sup>89</sup>: 2017-ի նախագահական ընտրությունների ժամանակ դիմել էր 1,636 քաղաքացի, որից 137-ը՝ կին, սակայն հաստատվել էր վեցի թեկնածությունը, որոնց մեջ չկար և ոչ մի կին<sup>90</sup>: 2021-ի նախագահական ընտրարշավին դիմել էր 592 քաղաքացի, որոնցից 40-ը համապատասխանել էր Սահմանադրության պահապանների խորհրդի չափանիշներին, սակայն, ըստ էության, հաստատվել էր 7-ի թեկնածությունը<sup>91</sup>: Ուշագրավ է, որ 2021 թ. նախագահական ընտրապայքարից դուրս մնացին ԻԻՀ նախկին նախագահ Մահմուդ Ահմադինեժադը, ով կառավարել է երկիրը 8 տարի, և ԻԻՀ մեջլիսի նախկին նախագահ Ալի Լարիջանին, ով համարվում էր հիմնական ֆավորիտներից մեկը և Դատական իշխանության ղեկավար Է. Ռայիսիի հիմնական մրցակիցը: Այս կապակցությամբ Մահմուդ Ահմադինեժադը Պահապանների խոր-

---

<sup>86</sup> **Sergey Votyagov**, *Islamic Republic of Iran Comparative National Systems*, November 19, 2009, p 17. <http://citeseerx.ist.psu.edu/viewdoc/download;jsessionid=8C3C8E6AD1226203B74882708F47ED55?doi=10.1.1.714.4921&rep=rep1&type=pdf>

<sup>87</sup> *1997 Presidential Election, Iran Data Portal*, <https://irandataportal.syr.edu/1997-presidential-election>

<sup>88</sup> *2005 Presidential Election, Iran Data Portal*, <https://irandataportal.syr.edu/2005-presidential-election>

<sup>89</sup> Սկզբում հայտարարվել էր վեց թեկնածուի անուն, սակայն Առաջնորդի միջնորդությամբ ցուցակում ավելացվեց ևս երկու թեկնածու՝ բարեփոխիչների թեկից:

<sup>90</sup> *2017 Presidential Election, Iran Data Portal*, <https://irandataportal.syr.edu/presidential-elections/2017-presidential-election>

<sup>91</sup> *Iran Presidential Election to Feature 7 Candidates*, May 25, 2021, <https://www.voanews.com/middle-east/iran-presidential-election-feature-7-candidates>

հրդից բացատրություն պահանջեց նման որոշման համար, իսկ Սադեղ Լարիջանին՝ Ալի Լարիջանիի եղբայրը և նույն Սահմանադրության պահապանների խորհրդի անդամը, մայիսի 25-ին թվիթերյան իր միկրոբլոգում քննադատական ճառով հանդես եկավ ընդդեմ Սահմանադրության պահապանների գործելաոճի: Ըստ էության, Սադեղ Լարիջանին Սահմանադրության պահապանների խորհրդին մեղադրում էր կամայական որոշումներ ընդունելու մեջ, ինչպես նաև ակնարկում էր, որ կառույցից դուրս ուժերը ներագրում են կառույցի գործունեության վրա: Լարիջանին նշել էր, որ Սահմանադրության պահապանների խորհրդի որոշումներն ընդունելու ժամանակ մեծանում է «անվտանգության ապարատի» կործանարար ազդեցությունը<sup>92</sup>: Այս լարված մթնոլորտը ցրելու համար Առաջնորդը հանդես եկավ ելույթով, որով արտահայտեց իր դժգոհությունը որոշ քաղաքական գործիչների ընտրապայքարից դուրս թողնելու կապակցությամբ: Մայիսի 25-ին նախագահ Հասան Ռոհանին նամակ հղեց Առաջնորդին՝ թեկնածուների ցուցակում փոփոխություններ կատարելու կոչով<sup>93</sup> և ակնկալելով նրա միջնորդությունը: Թվում էր, թե կկատարվեն որոշ փոփոխություններ, ինչի նախադեպն արդեն եղել էր դեռևս 2005 թ.: Այդ ժամանակ էլ չէին հաստատվել Մոստաֆա Մոհինի և Մոհսեն Մեհրալիզադեի թեկնածությունները, և Թեհրանում անգամ ուսանողները ոտքի կանգնեցին՝ բողոքելով Սահմանադրության պահապանների խորհրդի որոշման դեմ: Մայիսի 22-ին Առաջնորդը միջնորդագիր հղեց Սահմանադրության պահապանների

---

<sup>92</sup> @AmoliLarijaniir, May 25, <https://twitter.com/amolilarijaniir/status/1397166112874409984?s=25&fbclid=IwAR29izBdC1krflb8KyY9ixE8nJCifg8IUKkjI7JV57dGHtdvhHKhTJrq3Hs>

<sup>93</sup> *Iran's President Rouhani urges greater "competition" in election*, 26/05/2021, <https://www.france24.com/en/live-news/20210526-iran-s-president-rouhani-urges-greater-competition-in-election>

խորհրդին, և այդ երկու թեկնածուները հայտնվեցին ցուցակում<sup>94</sup>: Այլ հարց է, որ նրանք չկարողացան հետագայում բավարար քվե հավաքել, բայց դրանով ստեղծվեց նախադեպ: Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ թեպետ Առաջնորդը, ըստ Սահմանադրության, չունի լիազորություններ՝ միջամտելու այլ կառույցների ներքին աշխատանքներին, սակայն ճգնաժամային պահերին այդ հարցերը լուծվում են Առաջնորդի անձնական հեղինակության միջոցով: Սակայն 2021 թ. չկրկնվեց 2005 թ. սցենարը, և Առաջնորդը շնորհակալություն հայտնեց Պահապանների խորհրդին կատարած աշխատանքի համար՝ նշելով, որ բոլորը պետք է հարգեն Սահմանադրության պահապանների խորհրդի որոշումը, իսկ այն անձը, ով երկրի առաջնորդ է եղել<sup>95</sup>, չպետք է ընդդիմություն դառնա, հակառակ պարագայում պատասխանատվության կենթարկվի<sup>96</sup>: Սա ուղղակի զգուշացում էր Մահմուդ Ահմադինեժադին:

Քանի որ Պահապանների խորհուրդը բաղկացած է 12 անդամից, և նրանցից ոմանք բավականին տարեց են, բնականաբար, ընտրական ողջ գործընթացը, ակնհայտորեն, նրանք չեն կարող ինքնուրույն վերահսկել: Այդ պատճառով Սահմանադրության պահապանների խորհրդի ներքո գործում են առանձին հանձնաժողովներ, և օրենքը թույլատրում է, որ թեկնածուների ուսումնասիրությունը և վերահսկողությունը կատարվեն հանձնաժողովների միջոցով:

Սահմանադրության պահապանների խորհրդի երկրորդ գործառույթն ամրագրված է ԻԻՀ Սահմանադրության 94-րդ հոդվածում, ըստ որի՝ Մեջլիսի ընդունած բոլոր որոշումները պետք է հանձնվեն Սահմանադրության պահապանների խորհրդի քննարկ-

---

<sup>94</sup> Hokm-e rahbar-e moazam-e enghelab khatab be shoura-ye negyahban: nesbat-e elam-e salahiyat-e aghayan-e doktor-e Mostafa Moin va Mohandes Mehralizadeh tajdid-e nazar surat girad <https://www.isna.ir/news/8403-01124>

<sup>95</sup> Խոսքը վերաբերում էր Մահմուդ Ահմադինեժադին:

<sup>96</sup> Ertebat-e tasviri ba nemayandegan-e majles-e shoura-ye eslami <https://farsi.khamenei.ir/video-content?id=47928>

մանը, և այն պարտավոր է առավելագույնը 10 օրվա ընթացքում քննության առնել և որոշել դրանց համապատասխանությունը իսլամի նորմերին և Սահմանադրությանը: Հակասություններ նկատելու դեպքում օրենքը վերադարձվում է Մեջլիսին՝ վերանայման: Հակասությունների բացակայության դեպքում որոշումն օրենքի ուժ է ստանում<sup>97</sup>: Ուշագրավ է, որ Մեջլիսի որոշումների՝ իսլամի նորմերի հետ հակասություններ հայտնաբերելիս վճիռը կայացվում է Պահապանների խորհրդի կրոնագետների մեծամասնության կողմից, իսկ Սահմանադրության հետ հակասության դեպքում՝ Պահապանների խորհրդի բոլոր անդամների մեծամասնության կողմից<sup>98</sup>: Ուշադրության է արժանի մի հանգամանք ևս. եթե Մեջլիսը գտնում է, որ տվյալ օրենքը կարիք չունի փոփոխության, և արձանագրվում է անհամաձայնություն Մեջլիսի և Սահմանադրության պահապանների խորհրդի միջև, այդ օրենքն ուղարկվում է Նպատակահարմարության ժողովին՝ ուսումնասիրելու և վերջնական կարծիք տալու համար:

Սահմանադրության 97-րդ հոդվածի համաձայն, Սահմանադրության պահապանների խորհրդին տրվում է իրավունք՝ ներկա գտնվելու և լսելու Մեջլիսի քննարկումները, որով կարագացնեն իրենց հետագա աշխատանքների կազմակերպումը<sup>99</sup>:

Աղյուսակ 3-ում պատկերավոր ներկայացված է 1980-ից մինչև 2015 թթ. Մեջլիսի ընդունած օրենքների և Սահմանադրության պահապանների խորհրդի կողմից դրանց հաստատումների կամ մերժումների թիվը:

---

<sup>97</sup> *ԻԻՀ Սահմանադրություն*, հոդված 94:

<sup>98</sup> *ԻԻՀ Սահմանադրություն*, հոդված 96:

<sup>99</sup> *ԻԻՀ Սահմանադրություն*, հոդված 97:

**Յուրաքանչյուր գումարման Մեջլիսի ընդունած օրենքների՝  
Սահմանադրության պահապանների խորհրդի կողմից  
հաստատման տոկոսը<sup>100</sup>**

**Աղյուսակ 3.**

| Մեջլիսի նստաշրջան | ՊԽ՝ օրենքի վերաբերյալ առաջին կարծիքի ամսաթիվը | ՊԽ՝ օրենքի վերաբերյալ վերջին կարծիքի ամսաթիվը | Մեջլիսի կողմից վավերացված օրենքների քանակը | ՊԽ կողմից օրենքների վերջնական հաստատված թիվը | Հաստատված օրենքները՝ տոկոսային արտահայտությամբ |
|-------------------|-----------------------------------------------|-----------------------------------------------|--------------------------------------------|----------------------------------------------|------------------------------------------------|
| Առաջին            | Հուլիսի 22, 1980                              | Մայիսի 26, 1984                               | 410                                        | 357                                          | 87,0%                                          |
| Երկրորդ           | Հուլիսի 5, 1984                               | Հունիսի 8, 1988                               | 336                                        | 284                                          | 84,5%                                          |
| Երրորդ            | Հունիսի 23, 1988                              | Հունիսի 15, 1992                              | 265                                        | 226                                          | 85,2%                                          |
| Չորրորդ           | Հուլիսի 17, 1992                              | Հունիսի 12, 1996                              | 357                                        | 321                                          | 89,9%                                          |
| Հինգերորդ         | Հուլիսի 29, 1996                              | Մայիսի 24, 2000                               | 371                                        | 326                                          | 87,9%                                          |
| Վեցերորդ          | Հունիսի 29, 2000                              | Մայիսի 26, 2004                               | 444                                        | 337                                          | 75,9%                                          |
| Յոթերորդ          | Հուլիսի 19, 2004                              | Հունիսի 11, 2008                              | 364                                        | 300                                          | 82,4%                                          |
| Ութերորդ          | Հուլիսի 2, 2008                               | Հունիսի 27, 2012                              | 355                                        | 301                                          | 84,8%                                          |
| Իններորդ          | Հուլիսի 7, 2012                               | Հուլիսի 4, 2015                               | 132                                        | 107                                          | 81,0%                                          |

Փաստացի, անմիջականորեն ժողովրդի կողմից ընտրվող Մեջլիսի ընդունած օրենքն օրինական ուժ չունի՝ առանց Սահմանադրության պահապանների խորհրդի հաստատման<sup>101</sup>:

Սահմանադրության պահապանների խորհրդի երրորդ գործառույթն ամրագրված է 98-րդ հոդվածում, ըստ որի՝ Սահմանա-

<sup>100</sup> Mehrzad Boroujerdi, Kouorsh Rahimkhani, *Postrevolutionary Iran: A Political Handbook* (Syracuse University Press, 2018), p. 58.

<sup>101</sup> *The Guardian Council*, May 21, 2013, IRNA, <https://en.irna.ir/news/80665495/The-Guardian-Council>

դրության մեկնաբանումը կատարվում է Պահապանների խորհրդի կողմից՝ վերջինիս անդամների ձայների ¾-ով<sup>102</sup>:

Ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ Պահապանների խորհուրդը, մերժելով Մեջլիսի ընդունած օրենքը, այն որակում է որպես «հակասություն շարիաթի սկզբունքներին», և միայն որոշակի դեպքերում է բացատրություն տրվում, թե ինչու է մերժվել այս կամ այն օրենքը, և թե դրա որ մասն է հակասում Սահմանադրության դրույթներին կամ իսլամական սկզբունքներին: Պարզաբանման ձևը սովորաբար լինում է խիստ հակիրճ. պարզապես նշում են այն ուղղությունը, որով պետք է կատարվեն փոփոխությունները: Սահմանադրության պահապանների խորհրդի և Մեջլիսի միջև առաջացած լուրջ խնդիրների դեպքում խորհրդի անդամներից մեկը կարող է լարվածությունը թուլացնելու համար դիմել հանրությանը՝ որոշակի պարզաբանում տալով վիճահարույց օրենքի վերաբերյալ:

Ուշադրության է արժանի հետևյալ փաստը. Մուհամմադ Խաթամիի առաջին նախագահության շրջանում Մեջլիսի մեծամասնություն կազմող բարեփոխականները, որքան էլ ցանկացան Դատական իշխանության աշխատանքները բարեփոխելուն միտված ծրագրեր մշակել և կյանքի կոչել, ըստ էության, դրանք տապալվեցին՝ հանդիպելով Սահմանադրության պահապանների խորհրդի լուրջ դիմադրությանը: Խաթամիի կառավարման շրջանում՝ 2000–2002 թթ., Պահապանների խորհուրդը մերժեց ավելի քան 50 օրինագիծ, այն հիմնավորմամբ, որ դրանք հակասում են իսլամական օրենքներին և Սահմանադրությանը<sup>103</sup>:

2002 թ. մարտին Իրանի մեջլիսն ընդունեց մի օրինագիծ, որի նպատակն էր՝ սահմանափակել խոշտանգումների և քրեական դատավարություններում հարկադիր խոստովանությունների կորզման

---

<sup>102</sup> *ԻԻՀ Սահմանադրություն*, հոդված 98:

<sup>103</sup> *Iran parliament backs reformist bill*, 10 November, 2002, [http://news.bbc.co.uk/2/hi/middle\\_east/2436427.stm](http://news.bbc.co.uk/2/hi/middle_east/2436427.stm)

պրակտիկան: Սակայն հունիսի 9-ին օրինագիծը մերժվեց Սահմանադրության պահապանների խորհրդի կողմից՝ այն պատճառաբանությամբ, որ սահմանափակում է դատավորների կողմից դատավճիռ կայացնելու իրավունքը, և, հետևաբար, որոշում կայացրեց, որ օրինագիծը դեմ է իսլամի սկզբունքներին<sup>104</sup>: Հարկ է ավելացնել, որ Իրանի Իսլամական Հանրապետությունը Միավորված ազգերի կազմակերպության անդամ է, միացել է ՄԱԿ-ի կոնվենցիաներին, այդ թվում՝ նաև՝ 1984 թ. դեկտեմբերի 10-ի 39/46 բանաձևին, որի 2-րդ հոդվածի 1-ին ենթաբաժնի դրույթն անդամ-երկրներից պահանջում է գործադրել ամեն ջանք՝ խոշտանգումների պրակտիկան բացառելու համար<sup>105</sup>, իսկ ԻԻՀ Սահմանադրության պահապանների խորհրդի կողմից սույն օրինագծի մերժումը փաստացի չի համապատասխանում այդ բանաձևի դրույթներին:

2004 թ. խորհրդարանական ընտրություններին ընդառաջ Մեջլիսը ևս մեկ օրենք ընդունեց, ըստ որի՝ պետք է փոխվեր ընտրությունների մասին օրենքը, և Սահմանադրության պահապանների խորհրդից պահանջվեց վերականգնել բոլոր մերժված թեկնածուներին<sup>106</sup>, բացի այն դեպքերից, երբ մերժումը հիմնավորված էր իրավական որևէ փաստաթղթով: Այսպիսով, Մեջլիսը փորձում էր սահմանափակել Սահմանադրության պահապանների խորհրդի

---

<sup>104</sup> *Iran: Veto on Torture Bill Condemned*, June 11, 2002, Human rights watch, <https://www.hrw.org/news/2002/06/11/iran-veto-torture-bill-condemned>

<sup>105</sup> Յուրաքանչյուր մասնակից-պետություն ձեռնարկում է օրենսդրական, վարչական, դատական կամ այլ արդյունավետ միջոցներ՝ իր իրավագործության ներքո գտնվող ցանկացած տարածքում խոշտանգումների դեպքերը կանխելու համար: *Конвенция против пыток и других жестоких, бесчеловечных или унижающих достоинство видов обращения и наказания* [https://www.un.org/ru/documents/decl\\_conv/conventions/torture.shtml](https://www.un.org/ru/documents/decl_conv/conventions/torture.shtml)

<sup>106</sup> Ուշագրավ է, որ մերժման մեջ կա երկու հասկացություն. «Ռադ-է-Սալահիյաթ», այսինքն՝ որակագրկում, և «Ադամ-է-Էհրազ-է-Սալահիյաթ», ինչը նշանակում է՝ անհամապատասխանություն ընտրական պայմաններին: Այս երկրորդը մերժման ավելի մեղմ տեսակ է, որը կարող է լինել թեկնածուին «բավարար չճանաչելու» պատճառով:

կողմից որակագրկման կամայական որոշումները<sup>107</sup>: Բնականաբար, Սահմանադրության պահապանների խորհուրդը միանգամից մերժեց այս օրինագիծը ևս:

Այս համատեքստում թվում է, թե Սահմանադրության պահապանների խորհուրդը կարող է իր վրա վերցնել նաև դատական նախադեպերի միասնական որոշումների համապատասխանությունն իսլամի նորմերին և Սահմանադրությանը, սակայն Խորհուրդն այդ իրավունքով Սահմանադրությամբ օժտված չէ, և Իրանում դատական նախադեպերի միասնական որոշումները հսկելու համար իրականում ոչ մի իրավասու մարմին գոյություն չունի: Սահմանադրության պահապանների խորհրդի իրավասությունները սահմանափակվում են միայն խորհրդարանի ընդունած օրենքների, այլ ոչ դատարանների որոշումների կատարման հսկողությամբ<sup>108</sup>:

2004 թ. փետրվարին՝ Մեջլիսի ընտրության ժամանակ, Սահմանադրության պահապանների խորհուրդը զտման իրավունքով կրճատեց բարեփոխիչների մասնակցությունը: Արդյունքում Մեջլիսում ընտրվածների 70%-ը կազմեցին պահպանողականները:

Պետք է նշել, որ Ներքին գործերի նախարարությունը 2004 թ. լուրջ անհանգստությամբ արձանագրեց, որ Սահմանադրության պահապանների խորհուրդն անհիմն գործեր էր հարուցել նախկին պատգամավորների և նախարարների դեմ՝ այդպիսով խոչընդոտելով նրանց ընտրվելու իրավունքը: Ներքին գործերի փոխնախարար Սեյեդ Մահմուդ Միր Լովին<sup>109</sup> նշեց, որ «Թեկնածուների մասին տեղեկությունների և վերլուծության հավաքումը պետք է անցկացվի փորձաքննության մի քանի մակարդակով: Որակագրկման գործընթացը չի կարող կախված լինել խոսակցություններից և ակ-

---

<sup>107</sup> Human Rights Watch, *Access Denied: Iran's Exclusionary Elections*, 12 June 2005, [https://www.hrw.org/legacy/backgrounders/mena/iran0605/2.htm#\\_Toc106176106](https://www.hrw.org/legacy/backgrounders/mena/iran0605/2.htm#_Toc106176106)

<sup>108</sup> *Աբուլֆազլ Ամերի Շահրաբի, Իրանի Իսլամական Հանրապետության իրավական համակարգը*, Ատենախոսություն, Երևան, 2018, էջ 75:

<sup>109</sup> Նա հարում էր բարեփոխականների ճամբարին:

նարկներից»<sup>110</sup>: Ուշագրավ է, որ 2021 թ. նախագահական ընտրությունների նախաշեմին վերոհիշյալ ազդեցիկ կառույցին մեղադրանք ուղղեց Սադեղ Լարիջանին<sup>111</sup>, ըստ որի՝ Սահմանադրության պահապանների խորհուրդը պետք է հիմնվի իրական փաստերի վրա, այլ ոչ կեղծ տեղեկատվության:

Սահմանադրության պահապանների խորհրդի մամուլի խոսնակ Մուհամմադ Ջահրումին, լարվածությունը մի փոքր թուլացնելու համար, ընդհանուր ներկայացրեց, թե ինչու են մերժել որոշ ներկայացուցիչների մասնակցությունը խորհրդարանական ընտրություններին: Ըստ նրա, մերժվածների 12,5%-ը ներգրավված էր եղել ֆինանսական կոռուպցիայի մեջ, 13,5%-ը ունեցել է բարոյական վատ նկարագիր, 14,5%-ը համակրում կամ մասնակցում էր հակահեղափոխական խմբավորումներին, 13,5%-ը չէր հավատում իսլամի դրույթներին, 6,8%-ը հանդես էր եկել հանրային այնպիսի կեղծելույթներով, որ անհանգստություն են պատճառում հանրությանը, 15,7%-ը ունեցել էր վատ հեղինակություն, 6,5%-ը գործել էր ընդդեմ ազգային անվտանգության, 16,5%-ը չէր հավատում Սահմանադրությանը<sup>112</sup>:

Սահմանադրության պահապանների խորհրդի կրոնագետների կազմն անհրաժեշտության դեպքում համալրվում է Առաջնորդի կողմից, եթե եղել է հրաժարականի դիմում, կամ արձանագրվել է անդամներից որևէ մեկի մահը: Այդպիսի օրինակներից էր վերջերս՝ 2020 թ. նոյեմբերին Մուհամմադ Յազդիի հրաժարականը, որից հետո Իրանի Առաջնորդը նրան փոխարինեց մեկ այլ անդամով՝ Ահմադ Խաթամիով: Յազդին, հղում անելով իր տարեց լինելուն և

---

<sup>110</sup> Human Rights Watch, *Access Denied: Iran's Exclusionary Elections*, 12 June 2005, [https://www.hrw.org/legacy/backgroundunder/mena/iran0605/2.htm#\\_Toc106176106](https://www.hrw.org/legacy/backgroundunder/mena/iran0605/2.htm#_Toc106176106)

<sup>111</sup> ԻԻՀ-ում զբաղեցրել է դատական իշխանության ղեկավարի պաշտոնը, աշխատել է Նպատակահարմարության ժողովում, Սահմանադրության պահապանների խորհրդում, Մեջլիսի նախագահ Ալի Լարիջանիի եղբայրն էր:

<sup>112</sup> Human Rights Watch, *Access Denied: Iran's Exclusionary Elections*, 12 June 2005, [https://www.hrw.org/legacy/backgroundunder/mena/iran0605/2.htm#\\_Toc106176106](https://www.hrw.org/legacy/backgroundunder/mena/iran0605/2.htm#_Toc106176106)

վատ առողջությանը, հեռացավ վերոհիշյալ կառույցից: Թեպետ այդ ժամանակ Սահմանադրության պահապանների խորհրդի նախագահ այսպիսի Ահմադ Ջաննաթին նրանից մեծ էր հինգ տարով<sup>113</sup> և բազմիցս խնդրել էր Առաջնորդին՝ իր վրա չդնել նմանատիպ պատասխանատու պաշտոններ, սակայն նա գործում էր համակարգում:

### **Սահմանադրության պահապանների խորհրդի ներկա կազմը<sup>114</sup>**

#### **Աղյուսակ 4.**

| Աստվածաբան                    |                         | Իրավագետ                         |                         |
|-------------------------------|-------------------------|----------------------------------|-------------------------|
| Անուն                         | Կգբաղեցնի պաշտոնը մինչև | Անուն                            | Կգբաղեցնի պաշտոնը մինչև |
| Ահմադ Ջաննաթի (քարտուղար)     | 2028                    | Սիամաք Ռահիփեյք (փոխքարտուղար)   | 2028                    |
| Մեհդի Շաբգենդեդար Ջահոոմի     | 2028                    | Աբբաս-Ալի Բադխոդայի              | 2028                    |
| Մուհամմադ Ռեզա Մոդառեսի Յազդի | 2028                    | Խեյրոլլահ Փարվին                 | 2028                    |
| Ահմադ Հոսեյն Խորասանի         | 2025                    | Ղոլամոեզա Մոլաբեյգի              | 2025                    |
| Ալիոեզա Առաֆի                 | 2025                    | Մուհամմադ-Հասսան Սադեղի Մոդադդամ | 2025                    |
| Ահմադ Խաթամի                  | 2025                    | Հադի Թահան Նազիֆ (Խոսնակ)        | 2025                    |

Հարկ է նշել նաև, որ երբ Սահմանադրության պահապանների խորհուրդը խիստ կրճատում է բարեփոխիչների թեկնածուների թիվը, լինի դա Մեջլիսի, թե նախագահի ընտրություններում, որպես կանոն, բարեփոխիչները դիմում են ընտրությունները բոյկոտելու մեխանիզմին:

<sup>113</sup> *Prolific Cleric Appointed as Member of Guardian Council*, Radio Farda, November 02, 2020, <https://en.radiofarda.com/a/a-younger-extremist-cleric-appointed-as-member-of-guardian-council/30926442.html>

<sup>114</sup> *The Constitutional Council* <https://www.shora-gc.ir/fa/members>

## Բանիմացների խորհրդի ընտրություններն՝ ըստ թվականների և մասնակցության ցուցանիշի<sup>115</sup>

### Աղյուսակ 5.

| Բանիմացների խորհուրդ |                                          |                             |
|----------------------|------------------------------------------|-----------------------------|
| Տարեթիվը             | Թույլ է տրվել մասնակցել<br>ընտրարշավին % | Ընտրողների<br>ակտիվությունը |
| 1979                 | 100                                      | 51.71                       |
| 1982                 | 86.9                                     | 77.38                       |
| 1990                 | 60.55                                    | 37.09                       |
| 1998                 | 36.86                                    | 46.3                        |
| 2006                 | 33.87                                    | 60.84                       |
| 2016                 | 20.1                                     | 60.97 <sup>116</sup>        |
| 2024                 | 28                                       | 41                          |

Բացի նախագահների թեկնածուների ընտրության հարցից, Սահմանադրության պահապանների խորհուրդն ուսումնասիրում է նաև Մեջլիսի ընտրություններին մասնակցող թեկնածուների ցանկը և համապատասխանության չափորոշիչներից ելնելով՝ որոշում, թե ով կարող է որպես թեկնածու մասնակցել Մեջլիսի ընտրություններին, ով՝ ոչ: Օրինակ՝ 2012 թ. Մեջլիսի ընտրություններին դիմել էր 12,123 քաղաքացի, սակայն Սահմանադրության պահապանների կողմից ընտրարշավին թույլատրվեց մասնակցել 6,229 քաղաքացու<sup>117</sup>:

<sup>115</sup> **Emma Borden and Suzanne Maloney**, *Wednesday Iran's Guardians' Council has approved a record-low percentage of candidates*. What will that mean for the upcoming vote? February 24, 2016 <https://www.brookings.edu/blog/markaz/2016/02/24/irans-guardians-council-has-approved-a-record-low-percentage-of-candidates-what-will-that-mean-for-the-upcoming-vote/>

<sup>116</sup> *2016 Assembly of Experts Election*, Fifth Experts Assembly Elections, Iran data portal, <https://irandataportal.syr.edu/assembly-of-experts-elections/2016-assembly-of-experts-election>

<sup>117</sup> **Emma Borden, Suzanne Maloney**, *Iran's Guardians' Council has approved a record-low percentage of candidates*. What will that mean for the upcoming vote? <https://www.brookings.edu/blog/markaz/2016/02/24/irans-guardians-council-has-approved-a-record-low-percentage-of-candidates-what-will-that-mean-for-the-upcoming-vote/>

**Ստորև ներկայացվում են 1980–2020 թթ. Սահմանադրության  
պահապանների խորհրդի կողմից Մեջլիսի  
ընտրություններում թեկնածուների թույլտվության և  
ընտրողների ակտիվության տոկոսները<sup>118</sup>**

**Աղյուսակ 6.**

| Մեջլիս              |                                           |                                |
|---------------------|-------------------------------------------|--------------------------------|
| Տարեթիվը            | Թույլ է տրվել մասնակցել<br>ընտրարշավին, % | Ընտրողների<br>ակտիվությունը, % |
| 1980                | 51,7                                      | 52,14                          |
| 1984                | 77,32                                     | 64,64                          |
| 1988                | 70,88                                     | 59,72                          |
| 1992                | 84,78                                     | 57,81                          |
| 1996                | 83,13                                     | 71,1                           |
| 2000                | 83,78                                     | 67,35                          |
| 2004                | 66,69                                     | 51,21                          |
| 2008                | 58,92                                     | 55,4                           |
| 2012                | 63,7                                      | 63,88                          |
| 2016 <sup>119</sup> | 51,38                                     | 61,64                          |
| 2020 <sup>120</sup> | 44,3                                      | 42,6                           |

Ամփոփելով պետք է փաստել, որ, Սահմանադրության պահապանների խորհուրդը, որն ուղղակի և անուղղակի նշանակվում է Առաջնորդի կողմից, ըստ էության ստանձնել է այնպիսի գործառույթներ, որոնց շնորհիվ պահպանվում են Իսլամական Հանրապետության արժեհամակարգը և գոյությունը: Այս պահին Սահմանադրության պահապանների խորհրդի քարտուղարն է պահպանողական թևի ներկայացուցիչ, 98-ամյա Ահմադ Ջանաթին, ով ամբողջովին վայելում է Առաջնորդի վստահությունը: Նա, լինելով ծայրա-

<sup>118</sup> Emma Borden, Suzanne Maloney, *Iran's Guardians' Council has approved a record-low percentage of candidates*. What will that mean for the upcoming vote? <https://www.brookings.edu/blog/markaz/2016/02/24/irans-guardians-council-has-approved-a-record-low-percentage-of-candidates-what-will-that-mean-for-the-upcoming-vote/>

<sup>119</sup> 2016 Parliamentary Election, <https://irandataportal.syr.edu/parliamentary-elections/2016-parliamentary-election>

<sup>120</sup> 2020 Parliamentary election, [https://irandataportal.syr.edu/2020-parliamentary-election#\\_ftn7](https://irandataportal.syr.edu/2020-parliamentary-election#_ftn7) ; [https://irandataportal.syr.edu/2020-parliamentary-election#\\_ftn7](https://irandataportal.syr.edu/2020-parliamentary-election#_ftn7)

հեղ պահպանողական թևի ներկայացուցիչ, միշտ առավել խիստ մոտեցում է ցուցաբերում ընտրություններին բարեփոխիչ գործիչների մասնակցությանը, ինչը վերաբերում է նաև լիբերալության տարրեր պարունակող օրենքների ընդունմանը, որոնք աներկբա հետ են ուղարկվում Մեջլիս՝ վերանայման, նշելով, որ տվյալ օրինագիծը չի բխում Իսլամական Հանրապետության գաղափարախոսության շահերից:

Պետք է փաստել, որ Սահմանադրության պահպանների խորհուրդը Իսլամական հեղափոխության և արժեհամակարգի օրենսդրական պաշտպանն է ու երաշխավորներից մեկը, որը օրենքի ուժով փորձում է երկիրը գերծ պահել յուրաքանչյուր հակաիսլամական գործողությունից:

## **Հանրապետության Նախագահ – Rayis Jomhur**

Իրանի Իսլամական Հանրապետության հաջորդ կարևոր ինստիտուտը նախագահի ինստիտուտն է, որին ընտրում են համապետական ընտրությունների արդյունքում:

Իրանի Իսլամական հեղափոխությունից, հանրապետության հիմնումից և Սահմանադրության հաստատումից հետո որոշվեց, որ երկրի ղեկավարությունը պատկանում է հոգևոր դասին՝ այսթուլահ Խոմեյնիի գլխավորությամբ, իսկ երկրի քաղաքացիական կյանքի խնդիրներով պետք է զբաղվեն Նախագահը, Մեջլիսը և Վարչապետը: Խոմեյնին հայտարարեց, որ նախագահի ինստիտուտը չի հակասում շիայական սկզբունքներին:

Իրանի Իսլամական Հանրապետության Սահմանադրության 9-րդ գլուխը նվիրված է գործադիր իշխանությանը՝ ԻԻՀ Նախագահի և նախարարների գործառույթներին: ԻԻՀ Սահմանադրության 113–142-րդ հոդվածները, ըստ էության, վերաբերում են հենց Նախագահի ինստիտուտի գործառույթներին:

ԻԻՀ Սահմանադրության 113-րդ հոդվածում նշվում է, որ երկրի Առաջնորդից հետո Նախագահը համարվում է երկրի երկրորդ բարձրաստիճան պաշտոնատար անձը: Նա պատասխանատու է ԻԻՀ Սահմանադրության կատարման համար և ղեկավարում է գործադիր մարմնի բոլոր ճյուղերը, բացի նրանցից, որոնք անմիջականորեն գտնվում են Առաջնորդի իրավասության տակ<sup>121</sup>: Հիշեցնենք, որ Առաջնորդի անմիջական վերահսկողության տակ են գտնվում Դատական իշխանությունը, զինված ուժերը և գործադիր իշխանության մի շարք նախարարություններ: Այսինքն, ԻԻՀ Նախագահի լիազորությունները, ըստ էության, սահմանափակ են:

Մինչև 1989 թ. Նախագահի գործառույթներն առավել սահմանափակ էին, քանի որ կար նաև Վարչապետի ինստիտուտը, որն զբաղվում էր հենց գործադիր իշխանությամբ: 1989 թ. Սահմանադրությունում կատարված փոփոխությունների արդյունքում Վարչապետի պաշտոնը վերացվեց, և նրա գործառույթները փոխանցվեցին Նախագահին, որից հետո Նախագահի ինստիտուտի կշիռն էականորեն մեծացավ:

Սահմանադրության 123-րդ հոդվածի համաձայն, Նախագահը պարտավոր է ստորագրել Մեջլիսի՝ իրեն ներկայացված որոշումները կամ հանրաքվեի արդյունքները, եթե դրանք անցել են բոլոր գործընթացները<sup>122</sup>: Նախագահի ստորագրությունն այս դեպքում փաստացի ձևական բնույթ է կրում, քանի որ 5 օրվա ընթացքում չստորագրելու դեպքում Մեջլիսի ղեկավարն իրավունք ունի այդ օրենքը հանձնելու պաշտոնական թերթերում հրատարակման, որոնք պարտավոր են 72 ժամվա ընթացքում հրատարակել այն<sup>123</sup>, իսկ տեղեկությունը հանրայնացնելուց հետո օրենքը համարվում է ուժի մեջ մտած: Նախագահը կարող է այլ երկրների ղեկավարնե-

---

<sup>121</sup> ԻԻՀ Սահմանադրություն, հոդված 113:

<sup>122</sup> ԻԻՀ Սահմանադրություն, հոդված 123:

<sup>123</sup> Аббас Манучихри, *Политическая система Ирана*, Санкт-Петербург, 2007, стр. 72.

րի հետ ստորագրել պայմանագրեր ու համաձայնագրեր, որոնք, ըստ իրանական Սահմանադրության 125-րդ հոդվածի, պետք է հաստատվեն Մեջլիսի կողմից և այնուհետև ստանան օրենքի ուժ: Նախագահի վերահսկողության տակ են գտնվում երկրի բյուջեի պլանավորումը և տնտեսական քաղաքականության մշակումը<sup>124</sup>: ԻԻՀ Նախագահի լիազորությունների շրջանակում է գտնվում դեսպանների նշանակման և հաստատման, ինչպես նաև օտարերկրյա դեսպանների հավատարմագրերի ընդունման գործառույթը<sup>125</sup>: Նախագահին է տրված պետական պարգևների հանձնման իրավունքը:

Նախագահի գլխավորած կառավարության անմիջական գործառույթների մեջ է մտնում նաև իր իշխանության ընդհանուր քաղաքականությունը մշակելը, սակայն այն մշակելուց մինչև հաստատելն անցնում է բազմաթիվ լուրջ գործընթացներով: Այդ քաղաքականությունը մշակվում է կառավարությանն առընթեր տարբեր հանձնաժողովների կողմից, այնուհետև ներկայացվում է կառավարությանը: Վարչակազմի կողմից ուսումնասիրվելուց և հավանություն ստանալուց հետո այն առաջարկվում է Առաջնորդին: Վերջինս այն ուղարկում է Նպատակահարմարության ժողովին: Նպատակահարմարության ժողովի տարբեր հանձնաժողովների տնտեսական, մշակութային, ակադեմիական, գիտական փորձագետներ ուսումնասիրում են այդ քաղաքականությունը և հաջորդիվ ներկայացնում Առաջնորդին: Վերջինս ստուգում է մշակված քաղաքականության համապատասխանությունը Իսլամական Հանրապետության սկզբունքներին, հաստատում և վերադարձնում է կառավարությանը, որպեսզի օրենքը հաստատվի Մեջլիսում<sup>126</sup>: Մեջլիսի հաստատումից հետո այն պետք է հաստատվի Սահմանադրության պահապանների խորհրդի կողմից, սակայն, որպես չգրված կանոն,

<sup>124</sup> ԻԻՀ Սահմանադրություն, հոդված 126:

<sup>125</sup> ԻԻՀ Սահմանադրություն, հոդված 128:

<sup>126</sup> *What are statuses and duties of «Expediency Council» in the Iranian system?* 21.08.2017, [https://english.khamenei.ir/news/5072/What-are-statuses-and-duties-of-the-Expediency-Council-in-the#\\_ftnref6](https://english.khamenei.ir/news/5072/What-are-statuses-and-duties-of-the-Expediency-Council-in-the#_ftnref6)

այս գործընթացով անցած օրենքները միանգամից հաստատվում են, քանի որ արժանացել են Առաջնորդի դրական արձագանքին:

Ուշագրավ է, որ Սահմանադրության 142-րդ հոդվածը նախատեսում է Նախագահի, նրա տեղակալների, նախարարների, ինչպես նաև նրանց կանանց ու երեխաների գույքի ստուգում Դատական իշխանության մարմնի ղեկավարի կողմից, ընդ որում պաշտոնավարելուց առաջ և հետո<sup>127</sup>:

Նախագահը նաև 12 մշտական անդամից բաղկացած Ազգային անվտանգության բարձրագույն խորհրդի ղեկավարն է: Դրա անդամները համակարգում են երկրի արտաքին քաղաքականության, պաշտպանական հետախուզության հարցերը: ԻԻՀ Նախագահն ազդեցություն ունի նաև Իսլամական մշակութային հեղափոխության գերագույն խորհրդի կադրերի ընտրության վրա, որոնք պատասխանատու են երկրի կրթական և մշակութային համակարգի բարելավման և խնդիրների լուծման համար:

Նախագահի գրասենյակի պարտականությունների մեջ է մտնում նաև նահանգապետների նշանակումը: Կառավարության նիստերը վարում է Նախագահը, իսկ նրա բացակայության դեպքում՝ առաջին փոխնախագահը:

ԻԻՀ Սահմանադրության 130-րդ հոդվածով Նախագահն իրավունք ունի հրաժարական տալու անհրաժեշտության պարագայում, ըստ որի, նա կարող է դիմում հղել երկրի Առաջնորդին, սակայն պետք է շարունակի կատարել իր պարտականությունները՝ մինչև հրաժարականի ընդունման պահը<sup>128</sup>:

Ուշագրավ է, որ նախագահի ենթակայության տակ գործում են տարբեր խորհուրդներ, որոնց վրա հենվելով՝ երկրի նախագահն իրականացնում է աշխատանքները: Մեջլիսի նախկին պատգամավոր Ռոբերտ Բեգլարյանը նշում է. «Իրանում գործում է շուրջ 104 Գերագույն խորհուրդ, որոնք գտնվում են Նախագահին կից:

---

<sup>127</sup> ԻԻՀ Սահմանադրություն, հոդված 142:

<sup>128</sup> ԻԻՀ Սահմանադրություն, հոդված 130:

Դրանց շարքին կարելի է դասել Մշակութային հարցերով գերագույն խորհուրդը, Կենսոլորտի վերաբերյալ գերագույն խորհուրդը, Վիրտուալ աշխարհի գերագույն խորհուրդը, ինչպես նաև Պաշտպանության խորհուրդը, որը գործում է Իրանի Ազգային անվտանգության բարձրագույն խորհրդի ենթակայության ներքո և ստեղծվել է Տասներկուօրյա պատերազմից հետո: Մշակութային հարցերով գերագույն խորհուրդն ունի բավականին լայն լիազորություններ: Օրինակ՝ եթե մշակվում է նախագիծ, որն առնչվում է կրթական կամ մշակութային ոլորտներին, այն կարող է վերաժվել օրենքի՝ շրջանցելով անգամ Մեջլիսը: Սա հաճախ դառնում է տարածայնությունների առիթ Մեջլիսի և Գերագույն խորհրդի միջև: Վիրտուալ աշխարհի գերագույն խորհրդի հիմնական գործառույթն ինտերնետային համակարգի վերահսկումն է. անհրաժեշտության դեպքում այն կարող է կառավարել և վերահսկել համացանցը: Երբ Իրանի Իսլամական Հանրապետության նախագահ ընտրվեց Մասուդ Փեզեշքյանը, նա հայտարարեց, որ իր կատարելիք առաջին քայլը լինելու է վիրտուալ աշխարհի զտումներին վերջ տալը: Նա կարծում էր, որ անհրաժեշտ է ապահովել ազատ մուտք ինչպես YouTube, այնպես էլ սոցիալական ցանցեր: Սակայն արդեն մեկ տարի է, ինչ նախագահը չի կարողանում իրականացնել այդ փոփոխությունը: Թեպետ նախագահը կարող է մեկ հրամանով լուծել խնդիրը, սակայն քանի որ Վիրտուալ աշխարհի գերագույն խորհրդում ընդգրկված են նաև հոգևոր դասի և Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի ներկայացուցիչներ, նա նախընտրում է հարցը կարգավորել բանակցությունների միջոցով՝ փորձելով հասնել ֆիլտրացիայի վերացման՝ իր իսկ հրամանով»<sup>129</sup>:

Սա վկայում է, որ այդ գերագույն խորհուրդները, ըստ էության, ունեն որոշակի ազդեցություն և իշխանություն Իրանում:

---

<sup>129</sup> Հարցազրույցներ ԻԻՀ Մեջլիսի նախկին պատգամավոր Ռոբերտ Բեզարյանի հետ, Երևան, օգոստոսի 28, 2025:

## Ո՞վ և ինչպե՞ս կարող է ընտրվել ԻԻՀ Նախագահ

ԻԻՀ Սահմանադրության 114-րդ հոդվածն արձանագրում է Նախագահի ինստիտուտի կառավարման ժամկետները, ըստ որի՝ Նախագահն ընտրվում է չորս տարի ժամկետով՝ ժողովրդի ուղղակի քվեարկության միջոցով, ընդ որում անընդմեջ կարող է ընտրվել երկու անգամ: Նա պետք է ընտրվի քաղաքական գործիչներից և համապատասխանի հետևյալ պայմաններին.

- ծագումով իրանցի, Իրանի քաղաքացի,
- կազմակերպական և ղեկավարման ունակություններ,
- արժանավայել կենսագրություն և աստվածասիրություն,
- կրոնականություն,
- հավատ Իսլամական Հանրապետության սկզբունքների նկատմամբ և պատկանելություն պաշտոնական կրոնին<sup>130</sup>:

Ըստ Սահմանադրության՝ Ներքին գործերի նախարարությունը պարտավոր է Նախագահի պաշտոնավարման ժամկետը լրանալուց առնվազն 5 ամիս առաջ սկսել հաջորդ ընտրությունների նախապատրաստական աշխատանքները:

Իրանում նախագահի թեկնածու դառնալու համար քաղաքացին, ով համապատասխանում է վերը նշված պահանջներին, առաջին հերթին անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնում է տեղական ոստիկանություն, որի հաստատումից հետո այն փոխանցվում է Սահմանադրության պահապանների խորհրդի ուսումնասիրությանը: Վերոնշյալ կառույցի ներկայացուցիչների կողմից փաստաթղթերի ուսումնասիրությունից հետո պաշտոնապես հայտարարվում են նախագահի թեկնածուների անունները: Նախագահն ընտրվում է ընտրողների ձայների բացարձակ մեծամասնությամբ: Եթե ընտրությունների առաջին փուլում թեկնածուներից որևէ մեկը չի հավաքել ձայների այդպիսի մեծամասնություն, ապա հաջորդ շաբաթվա ուրբաթ օրն անցկացվում է կրկնակի քվեարկություն:

---

<sup>130</sup> ԻԻՀ Սահմանադրություն, հոդված 115:

Երկրորդ փուլին մասնակցում են միայն առաջին փուլում առավելազույն ձայներ ստացած երկու թեկնածուները<sup>131</sup>:

Նոր նախագահի ընտրությունները պետք է անցկացվեն նախկին նախագահի լիազորությունների ավարտից նվազագույնը մեկ ամիս առաջ, իսկ այդ ընթացքում նախագահի պարտականությունները կատարում է նախկին նախագահը:

Նորընտիր Նախագահի երդմնակալությունը տեղի է ունենում Մեջլիսի նիստում, որին հրավիրվում են Դատական իշխանության ղեկավարը և Սահմանադրության պահապանների խորհրդի անդամները: Առաջնորդը պետք է այնուհետև ստորագրի ժողովրդի կողմից ընտրված նախագահի նշանակման հրամանագիրը:

Սահմանադրության 110-րդ հոդվածի 9-րդ ենթակետի համաձայն, Սահմանադրության պահապանների խորհրդի ուսումնասիրություններից զատ, փաստացի Առաջնորդը ևս պետք է համաձայնություն տա նախագահի թեկնածուների համար, բացառությամբ, եթե նախագահի թեկնածուն նախկին նախագահն է, այսինքն, արդեն մեկ անգամ ենթարկվել է Առաջնորդի ինստիտուտի ուսումնասիրությանը<sup>132</sup>:

Իրանի Սահմանադրությամբ կանանց համար չի սահմանափակվում նախագահ դառնալու հնարավորությունը, սակայն Իսլամական հեղափոխությունից ի վեր թեպետ բազմաթիվ կանայք դիմել են՝ ընտրապայքարին մասնակցելու համար, սակայն այս 45 տարիների ընթացքում որևէ կին չի դարձել անգամ նախագահի թեկնածու: Ռուս իրանագետ Դունասան նշում է, թե 2009 թ. ԻԻՀ պատմության մեջ առաջին անգամ Սահմանադրության պահապանների խորհրդի քարտուղարը հայտարարության մեջ նշել էր, թե նախագահական ընտրապայքարին մասնակցելու թույլտվություն

---

<sup>131</sup> *ԻԻՀ Սահմանադրություն*, հոդված 117:

<sup>132</sup> *ԻԻՀ Սահմանադրություն*, հոդված 110: Guardian Council, <https://www.hrw.org/legacy/backgrounder/mena/iran0605/2.htm>

ստացածների մեջ կարող է լինել նաև կին<sup>133</sup>: Բայց, ինչպես ցույց տվեց պատմությունը, որևէ կնոջ մինչև այսօր թույլ չի տրվել մասնակցել նախագահական ընտրապայքարին:

1989 թ.՝ երկրի վարչապետի պաշտոնի վերացումից հետո, Նախագահին կից ստեղծվեց առաջին փոխնախագահի ինստիտուտը, և վարչապետի հիմնական գործառույթների կիրարկումը դրվեց անմիջականորեն նրա վրա: Ի դեպ, իրանական օրենքը չի սահմանափակում փոխնախագահների թիվը, որպեսզի նրանք լավագույնս կարողանան իրականացնել իրենց աշխատանքները, ինչը մեծապես կախված է ստանձնած պարտականությունների ծավալից: Այս պատճառով է, որ առաջին փոխնախագահը, Նախագահի հետ համաձայնեցնելով, համակարգում է նախարարների կաբինետի և Նախագահի մյուս տեղակալների գործունեությունը<sup>134</sup>:

Նախագահը, Նախագահի տեղակալները, նախարարները և կառավարական ծառայողները չեն կարող ունենալ մեկից ավելի պետական պաշտոն: Բացառություն է ուսումնական և գիտական հիմնարկներում դասախոսական, հետազոտական պաշտոններ զբաղեցնելը: Նրանց արգելվում է հիմնել և ղեկավարել ընկերություններ<sup>135</sup>:

Իրանի Իսլամական Հանրապետությունում նախագահական ընտրություններ առաջին անգամ տեղի ունեցան 1980 թ. հունվարի 25-ին: Խոմեյնին արգելեց նախագահի պաշտոնում հոգևորականության ներկայացուցչի առաջադրումը՝ այդպիսով փորձելով պահպանել հավասարություն հոգևոր և աշխարհիկ թների միջև: Միննույն ժամանակ այս քայլով նա խոչընդոտեց մյուս ազդեցիկ հոգևորականներին՝ ստանալու հավելյալ իշխանական լծակներ:

---

<sup>133</sup> Дунаева Е.В., *Ирано-Славика*, ежеквартальный научный журнал, 2010 N1 (21), стр. 15

<sup>134</sup> Аббас Манучихри, *Политическая система Ирана*, Санкт-Петербург, 2007, стр. 71.

<sup>135</sup> ԻԻՀ *Սահմանադրություն*, հոդված 141:

1979 թ. փետրվարի 4-ին Ժամանակավոր հեղափոխական կառավարության առաջին վարչապետ նշանակված **Մեհդի Բազարգանը**, որը, ըստ էության, լիբերալ իսլամի կողմնակից էր, կիսում էր ընդդիմության հայացքները: Լինելով Մոսադեղի թիմի անդամ, վերջինիս տապալումից հետո նա տարիներ շարունակ պայքարել էր շահական միապետության դեմ: Ակտիվ մասնակցել էր Իսլամական հեղափոխությանը, սակայն, միևնույն ժամանակ, քաղաքական իսլամի հակառակորդ էր, փաստացի կիսում էր այաթոլիահ Թալեղանիի տեսակետները իսլամական կառավարման համակարգի հետ կապված, և տնտեսության զարգացման մեջ «երրորդ ուղու» կողմնակիցն էր: Բազարգանն ի սկզբանե դեմ էր երկրի՝ «Իրանի Իսլամական Հանրապետություն» անվանը և առաջարկում էր «Իրանի Իսլամական Ժողովրդական Հանրապետություն» անվանումը: Թեպետ հեղափոխությունն իրականացրել էր Խոմեյնին, և նա էր երկրի ղեկավարը, սակայն, ըստ Բազարգանի, Խոմեյնին ուներ «պարզունակ» պատկերացումներ Իրանի ապագա պետական համակարգի կառուցման վերաբերյալ և այդ իսկ պատճառով, ըստ էության, իրեն հանձնարարեց այդ գործը: Չնայած Բազարգանի պնդմանը, որ իշխանությունը պետք է անցնեցում փոխանցել, որտեղ պետք է տեղ գտնեին նաև շահի ուշացած խոստումներն ազատ ու թափանցիկ ընտրությունների վերաբերյալ, Խոմեյնին պահանջեց անմիջապես ձևավորել այլընտրանքային վարչակարգ, այն հիմնավորմամբ, որ շահի հետ ունեցած որևէ պայմանավորվածություն կարող է թուլացնել հեղափոխության քաղաքականությունը<sup>136</sup>:

Բազարգանը կտրականապես դեմ էր նաև փակ դատերի անցկացմանը՝ առանց մեղադրյալների պաշտպանական իրավունքի, քանզի գտնում էր, որ այդ գործելաոճը վնասելու է Իսլամական

---

<sup>136</sup> **Siavush Randjbar-Daemi**, *Building the Islamic State: The Draft Constitution of 1979 Reconsidered*, Iranian Studies, 2013, Vol. 46, No. 4, 6, p. 644.

հեղափոխության գաղափարներին: Այս ամենը լարվածություն մտցրեց Խոմեյնիի և Բազարգանի հարաբերությունների միջև:

Բազարգանը չկարողացավ վերահսկել երկրում ստեղծված ծանր վիճակը և Իրանում ԱՄՆ դեսպանատան գրավումից հետո հրաժարական տվեց, քանզի հստակ գիտակցեց, որ ի վիճակի չէ կանխելու բռնությունների այն ալիքը, որն սկսվել էր հեղափոխությունից անմիջապես հետո: Նա փաստացի կառավարեց ինն ամիս: Ուշագրավ է, որ 1980 թ. Բազարգանը որոշեց մասնակցել նախագահական ընտրապայքարին, սակայն նրա թեկնածությունը մերժվեց Սահմանադրության պահապանների խորհրդի կողմից<sup>137</sup>:

1993 թ.՝ իր մահից առաջ, նա հարցազրույց տվեց գերմանական պարբերականներից մեկին, որտեղ նախազգուշացնում էր, որ այդ շրջանում Իրանում իսլամի հանդեպ հիմնական սպառնալիքը գալիս է Իսլամական կառավարության ներքո ապրողների ձեռք բերած փորձից, և այս միտքը կիսում էին շատ նվիրյալ մահմեդականներ<sup>138</sup>: Նա ըստ էության նկատի ունի, որ մինչև Իսլամական հեղափոխությունը հանրությունը չէր պատկերացնում, թե ինչ բան է Իսլամական Հանրապետությունը, իսկ արդեն 1990-ականներին շատ լավ հասկանում էր Իսլամական Հանրապետության էությունը:

Իրանում առաջին նախագահական ընտրությունները կազմակերպվեցին 1980 թ. հունվարի 25-ին: Ուշագրավ է, որ ԻԻՀ Նախագահի առաջին ընտրությունների ժամանակ գրանցվել է 124 քաղաքացի, որից 96-ին թույլ տվեցին դառնալ նախագահի թեկնածու. հավակնորդների թվում էին Հասան Հաբիբին, Ահմադ Մադանին, Սադեդ Ղոթբզադեն, ով համարվում էր Խոմեյնիի հոգեզավակը, տնտեսության և ֆինանսների նախարար Աբուլհասան Բանիսադրը և այլք: Ընտրություններին մասնակցած քաղաքացիներից 10,709,330-ն

---

<sup>137</sup> **Daniel Brumberg, Farideh Farhi.** *“Power and Change in Iran: Politics of Contention and Conciliation”*, (2016), p. 190.

<sup>138</sup> **Ali Banuazizi,** *Faltering Legitimacy: The Ruling Clerics and Civil Society in Contemporary Iran*, International Journal of Politics, Culture and Society, Vol. 8, No. 4, 1995, p. 570.

իր քվեն տվեց անկախ թեկնածու համարվող **Աբուլհասան Բանիսադրին**:

Աբուլհասան Բանիսադրը նախընտրական իր ծրագրերում առանձնացնում էր անհետաձգելի և խիստ կարևոր մի քանի խնդիր, որոնք, ըստ նրա, պետք է գտնվեին ապագա նախագահի ուշադրության կենտրոնում. անկախություն, միասնականություն և երկրի տարածքային ամբողջականություն, տնտեսության վերականգնում, իրական անվտանգության ապահովում, «հոգևորի զարգացում», որը «Իրանին վերադարձվել է հեղափոխության շնորհիվ»<sup>139</sup>:

1980 թ. հունվարի 25-ին Աբուլհասան Բանիսադրը չորս տարով ընտրվեց ԻԻՀ Նախագահ, սակայն կառավարեց մեկ տարի և չորս ամիս: Նա համարվում էր Խոմեյնիի հավատարիմ զինակիցներից մեկը, որը հակաշահական պայքարին միացել էր դեռևս 1960-ականներին: 1963 թ.՝ հակաշահական հուզումների ժամանակ, նա հրազենային վիրավորում էր ստացել, իսկ մեկ տարի անց հեռացել էր երկրից՝ հանգրվանելով Ֆրանսիայում և միանալով իսլամական ընդդիմությանը: Հեղափոխությունից հետո նա զբաղեցրեց ֆինանսների և էկոնոմիկայի փոխնախարարի, այնուհետև՝ արտաքին գործերի նախարարի, ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի պաշտոնները: Փետրվարի 4-ին նա անցավ նախագահի պարտականությունների կատարմանը: Ուշագրավ է, որ Բանիսադրի երդմնակալությունը տեղի է ունեցել Իրանի հիվանդանոցներից մեկում, որտեղ սրտի կաթվածից հետո պառկած էր Խոմեյնին: Այն ազատությունները, որ Խոմեյնին տալիս էր Բանիսադրին՝ Իրանի պետական համակարգն ստեղծելու համար, երբեմն դուր չէին գալիս մյուս բարձրաստիճան հոգևորականներին: Ընտրություններից մեկ ամիս անց Բանիսադրը նշանակվեց նաև Հեղափոխության խորհրդի նախագահ, որն Իրանի քաղաքական համակարգի մշա-

---

<sup>139</sup> Л.Е. Авдеев, С.М. Алиев, А.З. Арабаджян, *Иранская революция 1978–1979. Причины и уроки*, М., 1989, стр. 214.

կողն էր<sup>140</sup>: Նշենք նաև, որ փետրվարին Խոմեյնին թույլ տվեց Բանիսադրին ստանձնել Իրանի զինված ուժերի գլխավոր հրամանատարի նշանակման իրավունքը, իսկ արդեն 1980 թվականի սեպտեմբերի 22-ին նա ստանձնեց իրանական զորքերի հրամանատարությունը իրանա-իրաքյան պատերազմի ընթացքում: Ըստ էության, Իսլամական հեղափոխության առաջին տարիներին փորձ էր արվում երկրում ուժեղացնելու նաև հանրապետական համակարգը:

Աբոլհասան Բանիսադրը, ըստ տնտեսագետների, այն եզակի մասնագետներից էր, որը կարողացավ կյանքի կոչել դեռևս 1950-ականներից սկիզբ առած «իսլամական տնտեսություն» հասկացությունը: Իսլամական հեղափոխությունից հետո «իսլամական կառավարման» տեսության իրականացման ընթացքում ի հայտ եկավ գործնականում իսլամական տնտեսությունը կյանքի կոչելու հնարավորությունը: Քանի որ Խոմեյնիի աշխատություններում տնտեսագիտության վերաբերյալ բավարար դրույթներ չկային, իսլամականացման բարեփոխումների համար երկխոսության հիմք ծառայեց առաջին Նախագահի՝ Աբոլհասան Բանիսադրի «Թոհիդյան»<sup>141</sup> տնտեսություն» գիրքը<sup>142</sup>: Ինչպես նշում է Ռ.Ի. Բեկկինը, Բանիսադրը դարձավ հիմնական տնտեսական գաղափարախոսը նորաստեղծ Իսլամական Հանրապետությունում<sup>143</sup>:

Սակայն Բանիսադրը կառավարեց Իրանի համար ծանրագույն ժամանակաշրջանում. ընթանում էր իրանա-իրաքյան պատերազմը, և առաջին տարիների անհաջողության մեջ Խոմեյնին մեղադրեց նրան: Պետք է նշենք նաև, որ Բանիսադրի կառավարման ժամանակ երկրի վարչապետ նշանակվեց Մուհամմադ Ալի Ռաջային, որին Նախագահը համարում էր ոչ բավարար չափով ինտելեկ-

---

<sup>140</sup> *Abolhasan Bani-Sadr* <https://www.britannica.com/biography/Abolhasan-Bani-Sadr>

<sup>141</sup> Արաբերենից է, թարգմանաբար՝ միաստվածություն:

<sup>142</sup> **Р.И. Беккин**, *Тоухидная экономика как разновидность исламской экономической модели*, Экономика и Религия, М, 2012, стр. 448.

<sup>143</sup> Там же, стр. 449.

տուալ, որպեսզի կարողանա գլխավորել կառավարությունը: Սակայն Ռաջայիի նշանակումով վերին էշելոններում է՛լ ավելի մեծացավ լարումը, ինչը խոչընդոտում էր տնտեսության զարգացման ծրագրերի կյանքի կոչմանը: Հստակ պայքար էր գնում Բանիսադրի և հոգևորականների միջև՝ իշխանության լծակների վրա ազդեցություն ունենալու համար: Բանիսադրը գտնում էր, որ ինչպես հարիր է հանրապետությանը, Նախագահը պետք է ունենա կառավարման էական լծակներ: Հոգևորականներն էլ, ընդհակառակը, փորձում էին մենաշնորհել իշխանությունը: Ալի Ռաջային էլ համարվում էր Մուհամմադ Բեհեշթիի դրածոն<sup>144</sup>, որն ինքն էր ցանկացել մասնակցել նախագահական ընտրություններին, սակայն Խոմեյնին մի քանի անգամ նշել էր, որ երկրի նախագահի ինստիտուտը պետք է պատկանի աշխարհիկ դասին: Սա խիստ կարևոր էր Խոմեյնիի համար հեղափոխության առաջին տարիներին, որպեսզի իշխանությունը բալանսավորված մնար հոգևորականների և աշխարհիկների միջև:

Մինչև պաշտոնից ազատվելը Բանիսադրը խոսեց այն մասին, որ երկրում չեն կատարվում Սահմանադրության պահանջները: Նա գտնում էր, որ այն, ինչ կատարվում էր երկրում, քիչ էր տարբերվում շահի վարչակարգի ժամանակներից<sup>145</sup>: Իսկ ավելի ուշ՝ 1981թ. օգոստոսի 20-ին, Բանիսադրը ամերիկյան ԷյԲիՍի հեռուստատեսությանը տված հարցազրույցի ժամանակ բացեց որոշ չափերտներ, ինչը լույս սփռեց Բանիսադրի և հոգևորականության միջև հարաբերությունների վատթարացման վրա: Նրա հաղորդմամբ, հրեաները իրանա-իրաքյան պատերազմի սկզբներին տևական ժամանակ գենք և ռազմական տեխնիկա են վաճառել Իրանին: Իր պնդմամբ, ինքը դեմ է եղել Իսրայելի հետ որևէ հարաբերություն ունենալուն, և կառավարության նիստին հանդես է եկել Իրաքի հետ հաշտության կնքման հայտարարությամբ, և նշել է, որ

---

<sup>144</sup> Դատական համակարգի ղեկավարն էր:

<sup>145</sup> *Судьбы иранских президентов*, 21 мая 2017, [https://rus.azattyq.org/a/world\\_seven\\_iranian\\_presidents/28500387.html](https://rus.azattyq.org/a/world_seven_iranian_presidents/28500387.html)

Իրանը չպետք է զբաղվի նմանատիպ գործարքներով<sup>146</sup>: Խոմեյնին, հղում անելով Սահմանադրության 110-րդ հոդվածի 10-րդ ենթակետին, որը հնարավորություն է տալիս «երկրի շահերից ելնելով՝ պաշտոնանկ անել նախագահին՝ Իսլամական խորհրդի մեջլիսի կողմից, համաձայն 89-րդ հոդվածի՝ այդ պաշտոնին նրա համապատասխան չլինելու վերաբերյալ որոշման առկայության դեպքում»<sup>147</sup>, Մեջլիսից պահանջեց ուսումնասիրել առաջացած խնդիրը: 1981 թ. հունիսի 21-ին Իրանի Մեջլիսը իմփիչմենթ պահանջեց Բանիսադրից՝ «Իսլամական հոգևորականության դեմ ուղղված գործողությունների» հիմնավորմամբ: Իսկ մեկ օր անց այաթոլլահ Խոմեյնին վավերացրեց Բանիսադրին Նախագահի պաշտոնից ազատելու փաստաթուղթը: Պետք է նշել, որ այդ օրերին Իրանում զանգվածային ցույցեր էին տեղի ունենում Բանիսադրի պաշտոնանկության դեմ: Ցույցերը դաժանորեն ճնշվեցին, մի շարք ակտիվիստներ, այդ թվում նաև մի շարք հայտնի առևտրականներ, որոնք միավորում էին իրանական շուկան և ժամանակին աջակցել էին Խոմեյնիին, մահապատժի ենթարկվեցին<sup>148</sup>: Բանիսադրը հետագայում, կնոջ շորեր հագած, ծպտված փախավ երկրից և հանգրվան գտավ Ֆրանսիայում և հենց այնտեղ էլ գրեց մեծ աղմուկ բարձրացրած իր գիրքը, որը կոչվում էր՝ «Իմ խոսելու ժամանակն է»: Աբուլհասան Բանիսադրի փախուստից հետո ԻԻՀ-ում 1981 թ. հուլիսի 24-ին համաժողովրդական ընտրություններում 12,779,050 քվե ստանալով՝ նախագահ ընտրվեց **Մուհամմադ Ալի Ռաջային**: Մինչև ընտրությունները նա երկրի վարչապետն էր, և նրա նախընտրական գլխավոր ծրագրերը միտված էին գյուղերի ուժեղացմանը, ուրբանիզացիայի գործընթացի թուլացմանը: Նա նշում էր, որ երկրում իշխանությունը պետք է պատկանի Առաջնորդին և իմամի հետևորդներին:

<sup>146</sup> *Сотрудничество в области вооружений между правящим режимом Ирана и сионистским образованием*, ООН Генеральная Ассамблея, А/36/518, 18 September, 1981, <https://digitallibrary.un.org>

<sup>147</sup> *ԻԻՀ Սահմանադրություն*, հոդված 110, 10-րդ ենթակետ:

<sup>148</sup> *Иранская Революция 1978–1979*, Причины и уроки, М., 1989, стр. 237.

Մուհամմադ Ռաջային համարվում էր հեղափոխության մեջ մեծ ներդրում ունեցած Մուհամմադ Բեհեշթիի գինակիցներից մեկը, որն զբաղեցնում էր դատական իշխանության ղեկավարի պաշտոնը:

Ալի Ռաջային, որն ընտրվել էր երկրի Նախագահ և պետք է կառավարեր չորս տարի, կառավարեց ընդամենը 28 օր: Նրա կառավարման կարճ ժամանակահատվածը համընկավ ԱՄՆ-ի դեսպանատան աշխատակիցների ազատ արձակման հետ: Ռաջային հավատարիմ էր հեղափոխության գաղափարներին, սիրում էր վարել համեստ կենցաղ և վայելում էր Խոմեյնիի վստահությունը: Օգոստոսի 30-ին, երբ Մուհամմադ Ալի Ռաջային հանդիպում էր երկրի վարչապետ Մուհամմադ Ջավադ Բահոնարի հետ Ազգային անվտանգության խորհրդի նիստի ժամանակ, տեղի ունեցավ ահաբեկչություն, որի ժամանակ զոհվեցին և՛ երկրի Նախագահը, և՛ առաջին անգամ վարչապետ նշանակված հոգևորական Բահոնարը<sup>149</sup>:

Այս ահաբեկչության կազմակերպման մեջ մեղադրվեց ընդդիմություն դարձած Մոջահեդին-է Խալը կազմակերպությունը, բայց վերջինս չստանձնեց այդ պայթյունի պատասխանատվությունը:

Մուհամմադ Ռաջայիի սպանությունից հետո՝ 1981 թ. հոկտեմբերի 2-ին, ԻԻՀ-ում համաժողովրդական արտահերթ ընտրություններ տեղի ունեցան: Ի սկզբանե Խոմեյնին հակված էր, որ երկրի Նախագահը և Վարչապետը պետք է ստացած լինեն աշխարհիկ կրթություն և չպետք է լինեն հոգևոր դասից՝ այդպիսով ապահովելով երկրի կառավարման համակարգի արդար բաժանումը հոգևոր և աշխարհիկ ուժերի միջև, սակայն ԻԻՀ Սահմանադրությունը չէր արգելում հոգևոր դասի ներկայացուցչի՝ Նախագահ դառնալու հանգամանքը: Ընտրություններին ցանկացավ մասնակցել 46 քաղաքացի, սակայն Սահմանադրության պահապանների խորհուրդը գրանցեց նրանցից 4-ին՝ Սեյյեդ Ալի Խամենեի, Սեյյեդ Ռեզա Ջավադեհի, Սեյյեդ Ալի-Աքբար Փարվարեշ և Հասան Ղաֆորի-Ֆարդ:

---

<sup>149</sup> *Иранская Революция 1978–1979, Причины и уроки*, М., 1989, стр. 241.

ԻԻՀ-ում բավականին մեծացել էր **Ալի Խամենեիի** հեղինակությունը, որը Խոմեյնիի հավատարիմ զինակիցն էր և մինչ այդ զբաղեցրել էր Պաշտպանության նախարարի (1980 թ.), իսկ իրանա-իրաքյան պատերազմի բռնկումից հետո գլխավորել Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսը: Միևնույն ժամանակ նա Թեհրանի ուրբաթօրյա նամագն իրականացնողն էր: 1981 թ. հունիսին նրա դեմ իրականացվեց մահափորձ Մոջահեդին-է Իսալքի կողմից, մամուլի ասուլիսի ժամանակ, նրա մոտ դրված ձայնագրիչում ումբ էր տեղադրված: Ստանալով ծանրագույն վնասվածք՝ այնուամենայնիվ նա ողջ մնաց<sup>150</sup>:

1981 թ. հոկտեմբերի 2-ի արտահերթ ընտրություններում 42-ամյա Ալի Խամենեին՝ Իսլամական Հանրապետության կուսակցությունից, հավաքելով 16,008,579 ձայն (95.05%)<sup>151</sup>, ընտրվեց ԻԻՀ Նախագահ: Խամենեիի ընտրությամբ հոգևորականությունը վերջնականապես ամբողջությամբ իր ձեռքը վերցրեց երկրի ղեկավարի պետական կառավարման համակարգը:

Երդմակալության իր ճառի ժամանակ նա երդվեց ճնշել «յուրաքանչյուր շեղում, ազատական կամ ձախակողմյան շարժում, որոնք ամերիկյան ազդեցության տակ կգտնվեն»<sup>152</sup>:

Ալի Խամենեիի կառավարման շրջանում կարծես մոռացության տրվեցին Թոհուլյան տնտեսության գաղափարները, և նոր ուժ տրվեց Իմամաթի<sup>153</sup> և Մոադի<sup>154</sup> գաղափարներին<sup>155</sup>:

---

<sup>150</sup> **Karim Sadjadpour**, *Reading khamenei: The World view of Iran's Most Powerful leader*, 2008, p. 5.

<sup>151</sup> *Second 1981 Presidential Election*, <https://irandataportal.syr.edu/second-1981-presidential-election>

<sup>152</sup> **Karim Sadjadpour**, *Reading khamenei: The World view of Iran's Most Powerful leader*, 2008, p. 5.

<sup>153</sup> Հավատ մեռած մարդկանց հարություն առնելու գաղափարի նկատմամբ:

<sup>154</sup> Հավատ ահեղ դատաստանի նկատմամբ:

<sup>155</sup> **Андрей Торин**, *Исламская революция в Иране и современная внешняя политика стран Востока*, 16.02.2017, *Международная жизнь*, <https://interaffairs.ru/news/show/16923>

Ինչպես արդեն նշվել է, Ալի Խամենեին կառավարել է Իրանի համար ամենածանր շրջանում, երբ ընթանում էր իրանա-իրաքյան պատերազմը. անհրաժեշտ էր մի կողմից ուշադրություն դարձնել ռազմաճակատում տեղի ունեցող գործողություններին, մյուս կողմից՝ ինչ-որ կերպ պահպանել կաթվածահար եղած տնտեսությունը: Ուշագրավ էր, որ Խամենեին իր բոլոր ելույթներում հիմնականում խոսում էր Իսլամական հեղափոխության արժեքների մասին՝ արդարություն, անկախություն, ինքնաբավություն, ակնհայտ ցուցադրում էր խոր հակադրությունը սիոնիստական գաղափարների և ամերիկյան առավելապաշտության նկատմամբ: Խամենեին աչքի էր ընկնում իր աշխատասիրությամբ, մարդկանց կարծիքները լսելու ունակությամբ և այդ ամենն ի մի բերելու հմտությամբ, ինչպես նաև չափազանց համեստ կյանք էր վարում, ինչն անգամ արձանագրել են արևմտյան մի շարք վերլուծաբաններ: Ինչպես նշվել է, նա «երբեք միայնակ ոչ մի լրջագույն որոշում չի ընդունել, սակայն երբեք ոչ մի կարևոր որոշում էլ չի ընդունվել առանց նրա գիտության»<sup>156</sup>: Ուշագրավ է, որ այդ շրջանում վարչապետի պաշտոնն առաջարկվեց տնտեսագետ Միր Հուսեյն Մուսավիին, որը թեպետ ազգակցական կապեր ուներ Ալի Խամենեիի հետ<sup>157</sup>, սակայն նրանք բավականին դժվար էին աշխատում միասին: Խամենեին անգամ պահանջել էր Միր Հուսեյն Մուսավիին ազատել աշխատանքից, սակայն Այաթոլլահ Խոմենինին դեմ էր եղել այդ քայլին<sup>158</sup>: 1985 թ. Իրանում թվով 4-րդ նախագահական ընտրություններին մասնակցեց երեք թեկնածու՝ Ալի Խամենեին, Մահմուդ Քաշանին և Հաբիրոլլահ Ասգարոլադին: Թեպետ ընտրելու իրավունք ունեցողների թիվը 22 միլիոնից հասել էր 25 միլիոնի, սակայն 1985 թ. նախագա-

---

<sup>156</sup> **Karim Sadjadpour**, *Reading Khamenei: The World view of Iran's Most Powerful leader*, 2008, p. 1.

<sup>157</sup> Միր Հուսեյն Մուսավիի տատիկը Ալի Խամենեիի հորաքույրն էր:

<sup>158</sup> *Судьбы иранских президентов*, 21 мая 2017, [https://rus.azattyq.org/a/world\\_seven\\_iranian\\_presidents/28500387.html](https://rus.azattyq.org/a/world_seven_iranian_presidents/28500387.html)

հական ընտրություններին մասնակցեց բնակչության 54,78%-ը, որից 12,203,870 մարդ իր քվեն տվեց Ալի Խամենեյին: Նրա նախագահության վերջին տարում մահացավ ԻԻՀ Առաջնորդ այաթոլլահ Խոմեյնին, և այդ ընթացքում իր ձեռք բերած հեղինակության, կապերի շնորհիվ նա ընտրվեց Իրանի հաջորդ Առաջնորդ:

1989 թ. օգոստոսի 28-ին Իրանում տեղի ունեցան նախագահական ընտրություններ: 79 քաղաքացի ցանկություն էր հայտնել մասնակցելու ընտրություններին, սակայն Սահմանադրության պահպանների խորհուրդը թույլ տվեց նախագահի թեկնածու դառնալ Ալի Աքբար Հաշեմի Ռաֆսանջանիին և Աբբաս Շեյբանիին: Վերջինս 1983–84 թթ. Թեհրանի համալսարանի ռեկտոր էր եղել, մասնագիտությամբ՝ ֆիզիկոս: Այդ պարագայում ակնհայտ էր ընտրության ֆավորիտը, և 15.5 միլիոն քաղաքացի ձայնը տվեց Ռաֆսանջանիին, 635 հազարը՝ Աբբաս Շեյբանիին: Հաղթանակած Նախագահը՝ Իրանի իսլամական հեղափոխության ակունքներում կանգնած այաթոլլահ **Ալի Աքբար Հաշեմի Ռաֆսանջանիին**, որը շահական շրջանում ենթարկվել էր հետապնդումների և մի քանի անգամ ձերբակալվել էր, իսկ հեղափոխությունից հետո հայտնվել քաղաքական երկնակամարի ամենաբարձր դիրքերից մեկում: Նա մի քանի անգամ զբաղեցրել է Մեջլիսի նախագահի պաշտոնը, իրանա-իրաքյան պատերազմի ընթացքում փաստացի նա էր կատարում Իրանի Իսլամական Հանրապետության բանակի գլխավոր հրամանատարի գործառույթները: 1989 թ. Ռաֆսանջանին ընտրվեց ԻԻՀ Նախագահ, նրա կառավարման շրջանը համընկավ իրանա-իրաքյան պատերազմի ավարտի հետ, ուստի նա լծվեց հետպատերազմական երկրի վերականգնման ծրագրերի իրականացմանը: Տնտեսությունը գրեթե ամբողջովին քայքայված էր, գնաճը հասել էր մեծ չափերի, իրանական արժույթը խիստ արժեզրկվել էր: Միևնույն ժամանակ, այս շրջանը համընկավ ԽՍՀՄ փլուզման հետ, որն Իրանի համար լայն դաշտ էր բացում նախկին Խորհրդային Միության՝ իրեն հարևան երկրներում զգալի ազդեցություն ունենալու ա-

ռումով: Ռաֆսանջանին Արցախյան առաջին պատերազմի տարիներին նաև հանդես եկավ որպես միջնորդ: 1992 թ. Իրանի ջանքերով կնքվեց զինադադար, որի ժամանակ կողմերը փոխանակվեցին գերիներով և աճյուններով: Այդ շրջանում Իրանի հեղինակությունը մեծացավ Կովկասում: 1992 թ. մարտի 19-ին ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բուտրոս Բուտրոս-Ղալին երախտագիտություն հայտնեց ՄԱԿ-ի անունից Իրանի միջնորդական առաքելության և խնդիրը խաղաղ ճանապարհով կարգավորելու փորձի համար<sup>159</sup>: Ռաֆսանջանին կարճ ժամանակաշրջանում կարողացավ մեծացնել նախագահի ինստիտուտի ազդեցությունը երկրում, ու թեև Իրանի ղեկավարն Առաջնորդն էր, բայց երկրի Նախագահը բավականին շատ հարցեր կարողանում էր լուծել, որոնք ստանում էին Առաջնորդի աջակցությունը: Ռաֆսանջանիին բնութագրելիս վերլուծաբանները որպես նրա անձնական կապիտալ կարևորում էին ցանկացած իրավիճակում հանրությանն իր տեսակետները հասցնելու ունակությունը և պետության ամենաբարձր օղակների վրա ազդելու կարողությունը<sup>160</sup>:

Ռաֆսանջանիի խնդիրն էր՝ Իրանում ԱՄՆ-ի դեսպանատան գրավումից, իրանա-իրաքյան պատերազմից հետո փորձել բարձրացնել Իրանի վարկանիշը և թեթևացնել այն ճնշումները, որ առկա էին Իրանի վրա: Իրանի Նախագահի նպատակն էր նաև, վերականգնելով տնտեսությունը, փորձել կանխել արտագաղթը, ինչը մեծ չափերի էր հասել հատկապես պատերազմի և սոցիալ-տնտեսական ծանր պայմանների հետևանքով: Բարեփոխումները, որ իրականացվում էին Նախագահի կողմից, հանգեցնում էին գյուղատնտեսական ապրանքների գների ազատականացման, պետա-

---

<sup>159</sup> **Գ. Իսկանդարյան**, *Հայաստան-Իրան հարաբերությունները անկախության ձեռքբերումից ի վեր*, Երևան, 2016, էջ 30:

<sup>160</sup> Hashemi Rafsanjani: *The Life, Times and Legacy of the Islamic Republic's Machiavelli*, Massarat, King Faisal Centre for Reserch an Islamic Stadies, February - March 2017, p. 6. <https://www.kfcris.com/pdf/d8ee509f82e591e75ae63e88efcefbdb35887b60cc596b.pdf>

կան մասնաբաժնի որոշակի սեփականաշնորհման, հասցեական օգնությունների սուբսիդավորման: Նրա կառավարման շրջանի առաջին հնգամյա պլանով նախատեսվում էր օտարերկրյա ներդրումների խրախուսում, թեև դա ամբողջովին հակասում էր Սահմանադրության օրենքներին<sup>161</sup>: Հարկ է նշել, որ Ռաֆսանջանիի կառավարման շրջանում մեծ ուշադրություն դարձվեց պատերազմի ընթացքում ավերված քաղաքների, գյուղերի, ճանապարհների վերականգնմանը:

Ռաֆսանջանիի կառավարման 2-րդ շրջանում դրվեց զարգացման երկրորդ հնգամյա ծրագրի հիմքը, որտեղ Ռաֆսանջանին խիստ հավակնոտ մոտեցում էր նախատեսում Իրանի համար՝ զարգացող տնտեսությունից արագ անցում զարգացած տնտեսության: Սակայն Ռաֆսանջանիի տնտեսական ազատականացումը չտվեց ցանկալի արդյունքներ, քանի որ, մի կողմից՝ պահպանողական հոգևորականները հաճախ չէին կիսում նրա տեսակետները և նրա դեմ ավելորդ խոչընդոտներ էին ստեղծում, մյուս կողմից՝ նա չէր կարողանում ի չիք դարձնել ամերիկյան պատժամիջոցներն ու արգելքները, որոնք մեծապես վնասում էին Իրանի տնտեսության զարգացմանը: 90-ականների կեսերին ԱՄՆ-ը Իրանի հետ առևտրի նկատմամբ տնտեսական էմբարգո սահմանեց, հետո էլ կիրառվեց դ'Ամատոյի օրենքը, որով խիստ սահմանափակվեց Իրանի հետ առևտուրը, Իրանի արտաքին պարտքը աճեց՝ հատելով 20 մլրդ դոլարը, սկսվեց տնտեսական զարգացման խափանումը: Բավական է մեջբերել ընդամենը երկու ընդհանրացնող թվեր. երկրի ՀՆԱ-ի դեֆլյատորը 1980–1990 թթ. կազմել է 14,4%, իսկ 1990–1999 թթ. գրեթե կրկնապատկվել է՝ հասնելով մինչև 26,7%-ի<sup>162</sup>:

Ռաֆսանջանիի կառավարման ընթացքում ձևավորվեցին որոշ սոցիալական ազատություններ, այդ թվում՝ կանանց թույլ

---

<sup>161</sup> **Р.И. Беккин**, *Тоухидная экономика как разновидность исламской экономической модели*, Экономика и Религия, М., 2012, 449.

<sup>162</sup> **Н.М. Мамедова**, *Политико-экономический аспект Диалога цивилизаций*, Иран: Диалог цивилизаций, М., 2003, стр 17.

տրվեց մուգ գլխաշորի փոխարեն կրել բազմերանգ գլխաշորեր, ինչպես նաև զուգագույլյաներ և բարձրակրունկ կոշիկներ, թույլ տրվեց ոչ սգո օրերին լսել նաև ժամանակակից երաժշտություն, կինոֆիլմերի երգեր, Ռաֆսանջանին առաջին փորձերը կատարեց տուրիզմի զարգացման ոլորտում:

1997 թ. ավարտվեց Ռաֆսանջանիի կառավարման երկրորդ շրջանը, և Իրանը կանգնեց հերթական նախագահական ընտրությունների շեմին: Երկրի վերնախավը լավ գիտակցում էր, որ անհրաժեշտ է ընտրել այնպիսի քաղաքական գործչի, որը կկարողանա Իրանը հանել ծանր տնտեսական վիճակից, իսկ դա հնարավոր էր միայն բարեփոխումների, օտարերկրյա կապիտալի մուտքի, պատժամիջոցների չեղարկման միջոցով: 1997 թ. Ներքին գործերի նախարարությունը նախագահական ընտրություններին մասնակցելու 238 հայտ ստացավ: Դրանք ուսումնասիրելուց, նախագահի թեկնածուին ակնհայտորեն չբավարարող մասնակիցներին դուրս թողնելուց հետո մնացած նյութերը փոխանցվեցին Սահմանադրության պահապանների խորհրդին: Ուսումնասիրություններից հետո նախագահի թեկնածու դարձան չորս քաղաքական գործիչ՝ Սեյյեդ Մուհամմադ Խաթամին, Ալի Աքբար Նաթեղ Նուրին, Սեյյեդ Ռեզա Զավառնեին և Մուհամմադ Ռեյշահին: Ընտրություններում հաղթանակ տարավ **Սեյյեդ Մուհամմադ Խաթամին**՝ ստանալով ԻԻՀ քաղաքացիների ավելի քան 20 մլն վստահության քվե, ինչն աննախադեպ արդյունք էր: Թեպետ իշխանությունները գրեթե համոզված էին, որ հաղթանակը պատկանելու է ԻԻՀ մեջլիսի Նախագահ Նաթեղ Նուրին, սակայն ժողովուրդը հստակ փոփոխություններ էր ուզում, և Խաթամիի օգտին հիմնականում ձայն տվեցին երիտասարդությունը, ուսանողությունը, կանայք: Խաթամիի նախընտրական հիմնական խոստումն էր՝ ամեն ինչ անել քաղաքացիական հասարակությունն ստեղծելու համար, ինչը կնպաստեր ժողովրդավարության մակարդակի բարձրացմանը: Եթե նախորդ Նախագահը՝ Ռաֆսանջանին, փորձում էր ազատականացնել

տնտեսությունը, ապա Խաթամիի ուշադրության կենտրոնում էր հասարակության ազատականացումը, և սա էր այն հիմնական հաղթաթուղթը, որի շնորհիվ ընտրություններին հասարակությունն այդչափ ակտիվ մասնակցեց և վստահության մեծ քվե տվեց Խաթամիին: Ուշագրավ է, որ Խաթամին դարձավ Իրանի այն Նախագահը, որի գաղափարախոսությունը, հակադրվելով ամերիկյան տեսաբան Հանթինգթոնի «Քաղաքակրթությունների բախում» տեսությանը, շատ ավելի ընդունելի դարձավ ողջ աշխարհում, քանզի առաջ էր քաշում «Քաղաքակրթությունների երկխոսություն» գաղափարը: Ինչպես Հանթինգթոնն էր նշում, որ չհամագործակցելու դեպքում լինելու է բախում, այնպես էլ Խաթամին էր առաջարկում երկխոսել, որպեսզի կանխվի բախումը: Իր ընտրություններից մեկ ամիս անց Խաթամին խոսեց «Քաղաքակրթությունների երկխոսության» մասին, որի գլխավոր նպատակն էր նախևառաջ Իրանը դուրս բերել այն քաղաքական մեկուսացումից, որում հայտնվել էր Իսլամական հեղափոխությունից հետո: Խաթամին, նախկինում զբաղեցնելով Մշակույթի նախարարի պաշտոնը, լավ գիտակցում էր, որ մշակույթի միջոցով կարելի է ավելին իմանալ, ավելին բացատրել ժողովուրդներին, և նա գտնում էր, որ խնդիրները շատ ավելի դյուրին կլինի լուծել, եթե ժողովուրդները միմյանց հետ խոսեն, երկխոսեն: Սակայն այս ամենում պետք է առանցքային դեր ունենար ժողովուրդների և պետությունների իրավահավասարության սկզբունքը:

Խաթամիի ջանքերով, ի վերջո, սպորտը տարանջատվեց քաղաքականությունից, և ամերիկացի մարզիկներին մուտքի թույլտվություն տրվեց, որպեսզի վերջիններս կարողանան մասնակցել ԻԻՀ-ում տեղի ունեցող մարզական մրցումներին:

Ենթադրվում է, որ Խաթամիի իշխանության գալով, վերջինիս քաղաքականության համար առավելապես նախընտրելի դարձան շիայականության երկու կարևորագույն սկզբունքները՝ Նաբովաթը և

Իմամաթը<sup>163</sup>: Իսաթամին ևս, Ռաֆսանջանիի օրինակով, ցանկանում էր ընդլայնել Նախագահի ինստիտուտի դիրքերը Իրանում:

Ուշագրավ է, որ նրա կառավարման տարիներին Մեջլիսում հաղթեցին բարեփոխիչների, լիբերալ հայացքներ ունեցող քաղաքական գործիչների հոսանքները, որոնք Նախագահի հետ համատեղ փորձում էին իրականացնել լուրջ բարեփոխումներ: Սակայն Մեջլիսի օրենքները չէին կարող հասնել Նախագահի ստորագրմանը, քանզի բխվում էին Սահմանադրության պահապանների խորհրդի հակադրությանը, որտեղ հիմնականում պահպանողական թևի ներկայացուցիչներն էին: Եթե ուշադրություն դարձնենք աղյուսակ 3-ին, ապա կտեսնենք, որ Իրանի մեջլիսի պատմության մեջ Սահմանադրության պահապանների խորհրդի կողմից օրենքների ռեկորդային քանակի մերժում գրանցվել է հենց 2000–2004 թթ.: Մերժվել էր Մեջլիսի ընդունած օրենքների 24,1 %-ը, որովհետև դրանց իրագործման դեպքում է՛լ ավելի կմեծանար Իսաթամիի և բարեփոխականների հեղինակությունը, քանզի դրանք Իսաթամիի նախընտրական հիմնական խոստումներին էին առնչվում: Հատկանշական է, որ Իսաթամիին երկրում կոչում էին Այաթոլլահ Գորբաչով՝ հիմնվելով այն հանգամանքի վրա, որ ԽՍՀՄ առաջին և վերջին Նախագահ Գորբաչովի նման նա ևս փորձում էր երկրում կարևորել խոսքի ազատությունը և քաղաքացիական հասարակության դերը: Ի դեպ, Իսաթամին ոչ միայն երկրում քաղաքացիական հասարակության կառուցմանը, տնտեսական խնդիրների հաղթահարմանը, այլև երկրի հեղինակության վերականգնմանը: Իսաթամին ԻԻՀ առաջին Նախագահն էր, ում 1999 թ. ընդունեց Հոռմի պապը, նա նաև այցելեց բազմաթիվ եվրոպական երկրներ: Ուշագրավ էր նաև Իսաթամիի այցը Հայաստանի Հանրապետություն 2004 թվականին. պետք է արձանագրել, որ նա ԻԻՀ միակ Նախագահն էր, որն այցելել էր Ցեղասպանության հուշահամալիր և լսել

---

<sup>163</sup> *Исламская революция в Иране и современная внешняя политика стран Востока* <https://interaffairs.ru/news/show/16923>

Հայաստանի Հանրապետության տեսակետները Ցեղասպանության վերաբերյալ:

2001 թ. Իրանում նախագահական ընտրությունների նախօրեին արմատական թևի ներկայացուցիչները ցուցադրեցին իրենց ուժը: Սահմանադրության պահապանների խորհուրդը հանդես եկավ մի շարք առաջարկություններով, որոնք ուղղված էին ազատ քաղաքական քննարկումների սահմանափակմանը: Փակվեցին ավելի քան 37 պարբերականներ, ձերբակալվեցին մի շարք լրագրողներ և քաղաքական գործիչներ, ռազմական ուժերն օգտագործվեցին՝ ուսանողական ցույցերը ցրելու համար<sup>164</sup>: Այս ամենն ազդեց 2001 թ. նախագահական ընտրությունների ակտիվության վրա, և եթե նախորդ ընտրություններին մասնակցել էր Իրանի քաղաքացիների 79,92%-ը, ապա 2001 թ. մասնակցել էր 66,77%-ը: Սակայն, այս ամենով հանդերձ, Իրանի ընտրողները համառ դիմադրություն ցուցաբերեցին, և Իրանի պատմության մեջ առաջին անգամ քաղաքացիները 1 մլն-ով ավելի ձայն տվեցին վերընտրվող նախագահին: Խաթամիի երկրորդ ընտրության ժամանակ ձայների ընդհանուր թիվը գիջել էր առաջին ընտրության ընդհանուր ձայներին: Սա խոսում էր այն մասին, որ Իրանի քաղաքացիները խիստ անհրաժեշտություն ունեին բարեփոխումների: Իրանի ուսանողության մի ստվար հատված ցույց էր տալիս իր վերաբերմունքը պահպանողականության դեմ, և անդադար բողոքի ակցիաներ կամ ցույցեր էին կազմակերպվում: Ցույցերի հիմնական կարգախոսներն էին՝ «Իշխանությունը՝ ժողովրդին», «Խամենեիի հրաժարական»<sup>165</sup>: Պետք է արձանագրել, որ Խաթամին, ավարտելով նախագահական իր երկրորդ շրջափուլը, ընդհանրապես դուրս մղվեց կառավարական համակարգից:

2005 թ. Իրանը կրկին նախագահական ընտրությունների նախաշեմին էր և փաստացի պահպանողականներն ստացել էին

---

<sup>164</sup> **Н.М. Мамедова**, *Политико-экономический аспект Диалога цивилизаций*, Иран: Диалог цивилизаций, стр. 20.

<sup>165</sup> Известия 16.06.2003.

ռևանջի լիակատար հնարավորություն, քանզի փորձում էին ցույց տալ, որ բարեփոխիչների թևը, ի դեմս Խաթամիի, չի կարողացել իրականացնել տված խոստումները: Դրան գումարած երկրում հասունացավ հակապետական շարժում, և այն քաղաքացիները, որոնք ընտրել էին Խաթամիին, հասկացան, որ հանուն ազատության իրենց պայքարն առոչինչ է, քանզի բախվելու են այնպիսի պետական ինստիտուտների, որտեղ հիմնականում պահպանողական ներկայացուցիչներն են: Պահպանողականների դիրքերի ամրապնդմանը թերևս նպաստեց նաև 2001 թ. սեպտեմբերի 11-ից հետո Բուշի կողմից Իրանը «Չարիքի առանցքի» երկրների շարքին դասելու քաղաքականությունը: Ընդդիմադիր պահպանողականներն ընդգծում էին, թե Խաթամին իզուր է փորձում ԱՄՆ-ի հետ երկխոսության քայլեր ձեռնարկել, քանի որ արդյունքում, միևնույն է, ԱՄՆ-ը չի փոխելու իր քաղաքականությունը Իրանի նկատմամբ, և Իրանն ստիպված կլինի միակողմանի գիջումների գնալ: Կարծում ենք, որ այս հանգամանքները բերեցին կոնկրետ ընտրական համակարգի որոշակի ճգնաժամի, քանզի ի դերն ելավ Նախագահի ինստիտուտի սահմանափակվածության հանգամանքը: Սա էր պատճառը, որ թեպետ 2005 թ. ընտրության իրավունք ունեցողների թիվը 4,5 միլիոնով ավելացել էր (46,786,418), սակայն ընտրությանը մասնակցեց բնակչության 62,84%-ը կամ 29,400,857 քաղաքացի: Ի դեպ, նշենք, որ այս ընտրություններն աչքի ընկան նաև երկրորդ փուլով, որը մինչ այդ Իրանում նախագահական ընտրությունների ժամանակ տեղի չէր ունեցել: Այս ընտրություններն աչքի ընկան նաև նախագահ դառնալ ցանկացողների քանակով. 1014 քաղաքացի դիմում հանձնեց ՆԳՆ, և նրանցից միայն ութը հաստատվեց Սահմանադրության պահապանների խորհրդի կողմից<sup>166</sup>:

Թեկնածուներն էին՝ Ալի Աքբար Հաշեմի Ռաֆսանջանին, Մահմուդ Ահմադինեժադը, Մեհդի Քառուբին, Մուհամմադ Բադեր

---

<sup>166</sup> 2005 Presidential election, Iran Data Portal, <https://irandataportal.syr.edu/2005-presidential-election>

Ղալիբաֆը, Մոստաֆա Մոհինը, Ալի Լարիջանին, Մոհսեն Մեհր-Ալիզադեհը: Թեպետ ընտրությունների առաջին փուլում ձայների մեծամասնությունն հավաքեց Ռաֆսանջանին, և թվում էր՝ նրա հաղթանակն աներկբա է, սակայն ձայները չբավարարեցին առաջին փուլով հաղթանակի համար: Առաջին փուլում Ռաֆսանջանին հավաքեց քվեների 21%-ը, իսկ 2-րդ տեղում էր Մահմուդ Ահմադինեժադը՝ 19,4%-ով: Իրանի պատմության մեջ առաջին անգամ գրանցվեց երկրորդ փուլ: Երկրորդ փուլի ընթացքում ընտրողների մասնակցության թվաքանակն ավելի նվազեց: Եթե առաջին փուլում մասնակցել էր ընտրության իրավունք ունեցող քաղաքացիների 62,84%-ը, ապա 2-րդ փուլում ակտիվությունը կազմեց 59,76%, սակայն ուժերն սկսեցին միավորվել երկու թեկնածուների շուրջ: Պահպանողականների բոլոր թներն սկսեցին աջակցել Մահմուդ Ահմադինեժադին, նրան էր աջակցում նաև պետական սեկտորը: Ահմադինեժադը, լինելով քաղաքացիական անձ, խոստանում էր նոր զարկ տալ Իսլամական հեղափոխության գաղափարներին:

Նոր պահպանողականները կարողացան իրենց կարգախոսներով համոզել Իրանի լայն հասարակությանը, որ բարեփոխիչների օրոք երկրում խորացել է կոռուպցիան, և որ բարեփոխիչները սերտորեն համագործակցել են Արևմուտքի հետ: Իր հերթին Ահմադինեժադի թիմը խոստանում էր, որ արմատախիլ կանի կոռուպցիան, կվերաբաշխի հարստությունը, կվերացնի աղքատությունը և ամուր կպահպանի Իսլամական Հանրապետության դիրքերը<sup>167</sup>:

Հարկ է նշել, որ Ահմադինեժադը տարիներ շարունակ աշխատել էր նաև Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսում և ուներ նաև նրանց որոշ աջակցությունն այս շրջանում: Այսպիսով, ընտրությունների երկրորդ փուլի արդյունքներով 17,248,782 ձայնով հաղթեց մինչ այդ քաղաքական ներկայանալով շատ աչքի չընկած, Թեհրանի քաղաքապետ, ուլտրաձայրահեղա-

---

<sup>167</sup> **Գ. Իսկանդարյան**, *ԻԻՀ՝ 2008–2010 թթ. Արտաքին և ներքին քաղաքական հիմնական խնդիրները*, Եվրասիա, Երևան, 2012, հ. 1, էջ 57, 58:

կան հայացքներով հայտնի **Մահմուդ Ահմադինեժադը**, որը հենվեց ավանդական միջին և ցածր խավերի վրա: Ալի Աքբար Հաշեմի Ռաֆսանջանին հավաքեց 9,210,853 ձայն<sup>168</sup>:

Ահմադինեժադի ընտրությունից հետո Իրանի պետական համակարգի կենտրոնները փաստացի հայտնվեցին ծայրահեղականների ձեռքում: Ըստ Ե.Վ. Դունասայի եզրահանգման. «թվում էր, թե ստեղծված իրավիճակը պետք է հանգեցներ իսլամական վարչակարգի է՛լ ավելի ուժեղացմանը և աջակողմյան ուժերի ճամբարի համախմբմանը: Բայց գործնականում ամբողջ իշխանության անցումը պահպանողականների ձեռքը, ի հակառակ տրամաբանության, նպաստեց պահպանողական ճամբարի շերտավորման գործընթացի ակտիվացմանը և առավել պրագմատիկ խմբերի առանձնացմանը»<sup>169</sup>:

Մահմուդ Ահմադինեժադի կառավարման 100 օրը դեռ չէր լրացել, երբ 2005 թ. հոկտեմբերի 26-ին նա մասնակցեց «Աշխարհն առանց սիոնիզմի» խորագրով գիտաժողովին, որտեղ նշեց. «Ինչպես ասել է իմամ Խոմեյնին, Իսրայելը պետք է ջնջվի աշխարհի երեսից: Իսլամական աշխարհը թույլ չի տա իր դարավոր թշնամուն ապրել մահմեդական աշխարհի կենտրոնում»<sup>170</sup>: Այս հայտարարությանն արագ արձագանքեց ողջ աշխարհը: Սկզբում ԻԻՀ-ում արտասահմանյան դեսպաններից շատերին թվաց, թե խնդիրը թարգմանության հետ է կապված, սակայն հետո պարզ դարձավ, որ թարգմանիչները չեն սխալվել, իսկ Ահմադինեժադը մի քանի օր անց կրկնեց իր հայտարարությունը՝ դրանով իսկ ամրագրելով նախորդ ելույթը: Այս ելույթից սկսած՝ Իրանը հայտնվեց Արևմուտքի խոշորացույցի տակ, դրանից բացի, Ահմադինեժադը հրաժարվեց

---

<sup>168</sup> 2005 Presidential election, Iran Data Portal, <https://irandataportal.syr.edu/2005-presidential-election>

<sup>169</sup> Дунаева Е.В. Развитие политического процесса в Иране в 2005–2012 гг., Иран при М. Ахмадинежаде, М., 2013, стр. 15.

<sup>170</sup> Գ. Իսկանդարյան, *Իրանում տեղի ունեցող վերջին իրադարձությունների շուրջ*, Նորավանք, Երևան, 2005, էջ 26:

կյանքի կոչել նաև Խաթամիի միջուկային ծրագրի վերաբերյալ կնքված «հավելյալ արձանագրությունը»<sup>171</sup> և սկսեց աստիճանաբար չկատարել այն պարտավորությունները, որոնք նախորդ Նախագահին ստանձնել էր Ատոմային էներգիայի միջազգային գործակալության (ԱԷՄԳ) առջև: Իրանն աստիճանաբար մեկուսացավ, և ուրանի հարստացման ոլորտում երկրի գործունեությունը դարձավ ոչ թափանցիկ ԱԷՄԳ-ի համար, ինչն էլ նպաստեց Իրանի դեմ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բանաձևերի կիրառմանը:

2005 թ. վերջին Իրանի Մեջլիսն ընդունեց օրենք, ըստ որի՝ եթե ԱԷՄԳ-ն իրանական հարցը հանձնի ՄԱԿ-ի ԱԽ-ին, ապա Իրանը կդադարեցնի համագործակցությունը ԱԷՄԳ-ի հետ: Դեկտեմբերին այդ օրենքը վավերացվեց Նախագահի կողմից: 2006 թ. հուլիսի 31-ին ընդունվեց թիվ 1696 բանաձևը Իրանի միջուկային ծրագրի վերաբերյալ: ԱԷՄԳ-ն հայտարարեց. «Երեք տարվա աշխատանքներից հետո չենք կարող երաշխավորել, որ Իրանում չկան չհայտարարագրված միջուկային նյութեր, և որ Իրանը դադարեցրել է ուրանի հարստացման աշխատանքները»<sup>172</sup>: Հարկ է նշել, որ վերոհիշյալ բանաձևը բավականին մեղմ էր շարադրված: Իրանին կոչ էր արվում անհապաղ դադարեցնել ուրանի հարստացման աշխատանքները, ամբողջական տեղեկատվություն տրամադրել ԱԷՄԳ-ի աշխատակիցներին, ինչը կնպաստեր Իրանի նկատմամբ վստահության բարձրացմանը:

Իրանական կողմը շուտով հանդես եկավ պատասխան հայտարարությամբ, որտեղ նշված էր. «ՄԱԿ-ի ԱԽ-ն ընդունել է անօրինական որոշում, քանի որ Իրանը, հենվելով Միջուկային զենքի չտարածման պայմանագրի IV կետի II ենթակետի վրա, ինչի համա-

---

<sup>171</sup> Ըստ այս հավելյալ արձանագրության, որը կնքվել էր Խաթամիի կառավարման վերջին տարիներին, ԱԷՄԳ-ի ներկայացուցիչներն անակնկալ այցեր և ուսումնասիրություններ կատարելու իրավունք ունեին:

<sup>172</sup> Резолюция 1696 (2006), принятая Советом Безопасности на его 5500-м заседании 31 июля 2006 года, Совет Безопасности, ООН, Distr.: General 31 July 2005, [https://www.iaea.org/sites/default/files/unsc\\_res1696-2006\\_rus.pdf](https://www.iaea.org/sites/default/files/unsc_res1696-2006_rus.pdf)

ձայն՝ յուրաքանչյուր երկիր իրավասու է խաղաղ ճանապարհներով օգտագործել միջուկային էներգիան, շարունակելու է իր գործունեությունը»<sup>173</sup>: Միևնույն ժամանակ, Իրանը հայտարարում էր, որ «Միջուկային զենքի չտարածման պայմանագրի II հոդվածի համաձայն՝ չի ձգտել և չի ձգտում ունենալու միջուկային զենք»<sup>174</sup> :

Քանի որ Իրանը չէր կատարել ՄԱԿ-ի ԱԽ բանաձևը, ԱԷՄԳ-ի կողմից իրականացված մի շարք այլ ուսումնասիրությունների ու քննարկումների արդյունքում դեկտեմբերի 23-ին ՄԱԿ-ի ԱԽ-ն ընդունեց մեկ այլ՝ թիվ 1737<sup>175</sup> բանաձևը: ԻԻՀ Նախագահ Մահմուդ Ահմադինեժադն այդ բանաձևի ընդունման վերաբերյալ հայտարարեց. «Իրանի հետ հարաբերությունները կարգավորելու իր շանսը Արևմուտքը կորցրեց: Այդ թղթի կտորով նրանք ուզում են վախեցնել իրանցիներին»<sup>176</sup>: Այս հայտարարությամբ Ահմադինեժադը է՛լ ավելի մեծացրեց լարումը Իրանի դեմ, և հետագա տարիներին մեկը մյուսից ավելի ծանր պատժամիջոցներ կիրառվեցին ՄԱԿ-ի ԱԽ-ի միջոցով, ինչն էականորեն ազդեց Իրանի տնտեսության վրա, իրանական արժույթն անկում ապրեց, մարդկանց կենսամակարդակն էականորեն վատացավ:

Իրանի կողմից ՄԱԿ-ի ԱԽ երկու պատժամիջոցների անտեսումից հետո ընդունվեցին հաջորդ պատժամիջոցները, որոնք առավել կոշտ էին և հարվածում էին Իրանի տնտեսությանը, նպաստում Իրանի մեկուսացման խորացմանը, դրանք էին՝ N° 1747 (2007 թ. մարտի 24-ի)<sup>177</sup>, N° 1803 (2008 թ. մարտի 3-ի)<sup>178</sup>, N° 1835

---

<sup>173</sup> *Советский Союз в борьбе за разоружение. Сборник документов*, М., 1977, стр. 43–50.

<sup>174</sup> **Գ. Իսկանդարյան**, *Իրանի նկատմամբ ՄԱԿ-ի ԱԽ-ի (2006–2007 թթ.) ընդունած բանաձևերի շուրջ*, Մերձավոր Արևելք, Երևան, 2007, էջ 47:

<sup>175</sup> *Security Council Imposes Sanctions on Iran for Failure to Halt Uranium Enrichment*, Unanimously Adopting Resolution 1737 (2006), <http://www.un.org/press/en/2006/sc8928.doc.htm>

<sup>176</sup> *Президент Ирана: резолюция ООН – «обрывок бумаги»*, <http://www.emigranty.ru/news.php?nid=29731>

<sup>177</sup> *Resolution 1747 (2007) Adopted by the Security Council at its 5647<sup>th</sup> meeting on 24 March 2007*, [https://www.iaea.org/sites/default/files/unsc\\_res1747-2007.pdf](https://www.iaea.org/sites/default/files/unsc_res1747-2007.pdf)

(2008 թ. սեպտեմբերի 27-ի)<sup>179</sup>, N° 1929 (2010 թ. հունիսի 9-ի)<sup>180</sup> բանաձևերը, որոնք պահանջում էին նախ կիրառել նախորդ ընդունված բանաձևերը և ավելացնում նոր պահանջներ ու պատժամիջոցներ:

Քանի որ տնտեսական վիճակը վատանում էր, ինչն առաջին հերթին զգում էր սոցիալապես անապահով խավը, որն Ահմադինեժադի հիմնական հենարանն էր, նա որոշեց իրականացնել մի շարք սոցիալական ծրագրեր, ինչպես, օրինակ՝ անապահով շերտերի սուբսիդավորումը, որն էլ տվեց իր պտուղները հաջորդ՝ 2009 թ. ընտրությունների ժամանակ: Ահմադինեժադի կառավարման տարիներին երկրում առաջացած սոցիալ-տնտեսական ծանր իրավիճակի պատճառով արտագաղթն էական չափերի էր հասել. ԱՄՆ և եվրոպական երկրների վիզաներ ստացողների թիվն աճեց 20–30%-ով, տեղի ունեցավ ուղեղների արտահոսք<sup>181</sup>: Արտագաղթի թվերն ակնհայտ երևում են նաև ընտրության իրավունք ունեցողների ցուցակից: Որպես կանոն, ամեն 4 տարին մեկ ընտրողների թիվն աճում է միջինը 3–4 միլիոնով. 2005 թ. ընտրության իրավունք ունեցողների թիվը 46,786,418 էր<sup>182</sup>, մինչդեռ 2009 թ. այդ թիվը ոչ միայն չէր աճել, այլև նվազել էր՝ հասնելով 46,199,997-ի<sup>183</sup>: Սա, թերևս, Իրանի Իսլամական Հանրապետության ընտրությունների պատմության եզակի դրվագներից էր, որ տոկոսի նման նվազում

---

<sup>178</sup> *Security Council Tightens Restrictions on Iran's Proliferation-sensitive Nuclear Activities, Increases Vigilance Over Iranian Banks, has states inspect cargo*, <http://www.un.org/press/en/2008/sc9268.doc.htm>

<sup>179</sup> *Security Council Reaffirms Earlier Resolutions on Iran's Uranium Enrichment, Calls on Country to Comply with Obligations 'Fully and Without Delay'* <http://www.un.org/press/en/2008/sc9459.doc.htm>

<sup>180</sup> *Security Council Imposes Additional Sanctions on Iran, Voting 12 in Favour to 2 Against, with 1 Abstention* <http://www.un.org/press/en/2010/sc9948.doc.htm>

<sup>181</sup> **Shirin Hakimzadeh**, *Iran: A Vast Diaspora Abroad and Millions of Refugees at Home*, Migration Policy Institute, September 1, 2006, <https://www.migrationpolicy.org/article/iran-vast-diaspora-abroad-and-millions-refugees-home>

<sup>182</sup> *2005 Presidential Election, Iran Data Portal*, <https://irandataportal.syr.edu/2005-presidential-election>

<sup>183</sup> *2009 Presidential Election, Iran Data Portal*, <https://irandataportal.syr.edu/2009-presidential-election>

էր գրանցվել, ինչը, ամենայն հավանականությամբ, Ահմադինեժադի վարած քաղաքականության հետևանքն էր: Սակայն, ընտրության իրավունք ունեցող քաղաքացիների թվաքանակի նվազմամբ հանդերձ, ընտրության ակտիվությունն ապահովվեց: Ահմադինեժադի իրականացրած մի շարք սոցիալական ծրագրերի արդյունքում միջին ու ցածր եկամուտ ունեցող քաղաքացիներն ակտիվորեն մասնակցեցին ընտրությանը՝ իրենց ձայնը կրկին տալով Մահմուդ Ահմադինեժադին: 2009 թ. Սահմանադրության պահապանների խորհուրդը նախագահ դառնալու ցանկություն ունեցող 475 քաղաքացիներից թույլ տվեց մասնակցել 4-ին՝ Մահմուդ Ահմադինեժադին, Սեյյեդ Միր Հուսեյն Մուսավիին, Մոհսեն Ռեզայիին, Մեհդի Քառուբիին: Առաջին փուլով հաղթանակեց Մահմուդ Ահմադինեժադը՝ ստանալով ընտրողների ձայների 63,1%-ը: Սակայն այս ընտրություններն աչքի ընկան հատկապես հետընտրական պայքարով, «Կանաչ շարժման» ցույցերով, որտեղ հիմնական կարգախոսն էր՝ «ու՛ր է իմ ձայնը»՝ պնդելով, որ ընտրությունները, ըստ էության, կեղծված են: Դժգոհության ալիքը ավելի մեծացավ, երբ Հանրային հեռուստատեսությունը հայտարարեց Ահմադինեժադի հաղթանակը՝ 63%-ով, որը հաստատվեց Առաջնորդի կողմից<sup>184</sup>: Բողոքի ալիք բարձրացավ հիմնականում մեծ քաղաքներում, սկսվեցին հակակառավարական ելույթներ, թշնամու կերպարի ստեղծում: Ներքոհիշյալ աղյուսակից ակնհայտ երևում է, որ եթե 2009 թ. հունիսի 15-ին հակառակորդի կերպարում հանդես էին գալիս Ահմադինեժադը և նրան հովանավորող Բասիջ ուժերը<sup>185</sup>, ապա սեպտեմբերի 7-ին «Կանաչ շարժման» կողմնակիցներն սկսեցին նվազ ուշադրություն դարձնել Ահմադինեժադի կերպարին և, փոխարենը, կենտրոնացան Առաջնորդ Ալի Խամենեյի վրա՝ գտնելով, որ բավականին մեծ է նրա անուղղակի, իսկ նույններից սկսած՝ նաև ուղղակի ազդեցությունն այս ամենի վրա:


---

<sup>184</sup> **Arash Reisinezhad**, *The Iranian Green Movement: Fragmented Collective Action and Fragile Collective Identity*, 24 Feb 2014., *Iranian Studies*, p. 201.

<sup>185</sup> Ըստ էության Ժողովրդական աշխարհագրային ուժեր են:

## Հակառակորդի կերպարը Կանաչ շարժման մեջ՝ ըստ Արաշ Ռեիսինեզադի<sup>186</sup>

Կանաչ շարժման մեջ հակառակորդի մարմնավորումը



Ակնհայտ է, որ ընդդիմությունը փորձում էր «Կանաչ շարժումը», որն սկսել էր որպես ընտրական, հետագայում նաև հետընտրական գործիք, վերափոխել հակապետական անհնազանդության: «Կանաչ շարժումը», ըստ էության, ամենախոշոր անհնազանդությունն էր Իսլամական հեղափոխությունից հետո: Այս լայնամասշտաբ ցույցերի պատճառներից էր նաև այն, որ Իրանի երիտասարդությունն օրեցօր առավել շատ ազատություններ էր պահանջում, քան համակարգը կարող էր տրամադրել, ինչն էլ հանգեցնում էր բողոքի, անհնազանդությունների:

Ի վերջո, «Կանաչ շարժումը» ճնշվեց: Սակայն Իրանի հոգևոր դասը և զինվորականությունն այս ամենի մեջ նախևառաջ մեղադրում էին Ահմադինեժադին՝ երկիրը ոչ ճիշտ կառավարելու համար, և փորձում էին ընդհանրապես կաղապարել նրա գործողու-

<sup>186</sup> **Arash Reisinezhad**, *The Iranian Green Movement: Fragmented Collective Action and Fragile Collective Identity*, 24 Feb 2014, Iranian Studies, p. 205.

յունները: ԻԻՀ Նախագահի և Առաջնորդի միջև առաջին լարվածությունը նկատվեց 2009 թ. հուլիսին, երբ Ալի Խամենեին պաշտոնից հեռացրեց փոխնախագահ Էսֆանդիար Ռահիմ Մաշայիին, որը, ԶԼՄ-ների հավաստմամբ, Ահմադինեժադի խնամին էր: Չհամաձայնելով Առաջնորդի որոշման հետ՝ Նախագահը վերջինիս նշանակեց իր աշխատակազմի ղեկավարի պաշտոնում<sup>187</sup>:

Հաջորդ լարվածությունը գրանցվեց, երբ ԻԻՀ Նախագահը, առանց Առաջնորդի հետ քննարկելու, պաշտոնից ազատեց արագորժնախարար Մանուչեհր Մոթաքիին, ով այդ պահին աշխատանքային այցով գտնվում էր Սենեգալում և տեղյակ չէր Նախագահի այդ որոշման մասին:

Սակայն, առկա տեղեկատվության համաձայն, Ահմադինեժադն իր թիմակիցների հետ միասին արդեն բացահայտ անտեսում էր Առաջնորդի մի շարք հրամաններ՝ փորձելով ստվերել նրա հեղինակությունը և մեծացնել Նախագահի լիազորությունները: Ըստ «MIGnews»-ի՝ հունիսի 3-ին Իրանի Իսլամական հեղափոխության պահապանների խորհրդի հրամանատար Մոհամմադ Ալի Ջաֆարին դիմել է Առաջնորդին, որպեսզի վերջինս թույլ տա ձերբակալել ԻԻՀ Նախագահ Մահմուդ Ահմադինեժադին: Ինչպես հավաստիացնում է գործակալությունը, հրամանատարի պահանջը եղել է՝ ձերբակալել բոլոր նրանց, ովքեր մասնակից են եղել Խամենեիի տապալման փորձին: Առաջնորդը թույլ է տվել ձերբակալել բոլորին, բացի Նախագահից<sup>188</sup>:

Ուշագրավ է, որ ինչպես վերջին երկու Նախագահները՝ Ալի Աքբար Հաշեմի Ռաֆսանջանին և Մոհամմադ Խաթամին, հետո էլ Մահմուդ Ահմադինեժադը, փորձում էին մեծացնել Նախագահի ինստիտուտի դերը՝ հավակնելով ավելի մեծ ազատության: Ահմա-

---

<sup>187</sup> BBC, *By James Reynolds, Analysis: Row between Iranian leaders comes to a head*, 7 May 2011, <http://www.bbc.co.uk/news/world-middle-east-13312907>

<sup>188</sup> *Ахмадинежад может закончить карьеру на высшем*, (13.06.2023) [http://web.archive.org/web/20110605060125/http://www.mignews.com/news/society/world/030611\\_32819\\_21470.html](http://web.archive.org/web/20110605060125/http://www.mignews.com/news/society/world/030611_32819_21470.html)

դինեժադն իր նախագահության երկրորդ շրջանում նախաձեռնել էր մի գործընթաց, որը հարվածում էր հոգևոր դասի շահերին: Հիշեցման համար նշենք, որ Իրանի պաշտոնական կրոնը իսլամն է և դրա՝ Ջաֆարի-Ասնա-աշարի ուղղությունը, որը ճանաչում է 12 իմամների գոյությունը<sup>189</sup>: Եվ, ինչպես աշխատանքի սկզբում նշել ենք, Առաջնորդը համարվում է 12-րդ իմամ Մահդիի տեղապահը: Մահմուդ Ահմադինեժադի նախագահության շրջանում նկարահանվեց վավերագրական մի ֆիլմ այն մասին, թե ինչպես է Մահդին վերադառնում: Ահմադինեժադի կառավարությունում էլ դրվեց մի աթոռ, որն այդպես էլ մնաց Ահմադինեժադի կառավարման ողջ ընթացքում, որը նախատեսված էր Մահդիի համար: Իր ելույթներից մեկում նա նշել էր. «Այսօր մենք պետք է մեր քաղաքական, տնտեսական, մշակութային քաղաքականությունը սահմանենք իմամ Մահդիի վերադարձի քաղաքականության հիման վրա»<sup>190</sup>: Այսինքն, ստացվում էր, որ Առաջնորդի մնալն արդեն անիմաստ էր դառնում, քանի որ նա Մահդիի տեղապահն էր, իսկ եթե Մահդին գալիս է, ապա տեղապահն անելիք չունի: Պատասխանը եղավ մեկը. ձերբակալվեց Ահմադինեժադի ողջ հավատարիմ շրջանակը, և, փաստացի, Նախագահը չէր կարողանում աշխատել: Անգամ, իբրև բողոք, Նախագահը 11 օր աշխատանքի չհաճախեց, սակայն շուտով նրան հասկացրին, որ նման դեպքում աշխատանքը չկատարելու հիմնավորմամբ նա իմփիչմենթի կենթարկվի: 2011 թ. խիստ լարված էին իշխանության 3 մարմինների՝ Առաջնորդի, Նախագահի և խորհրդարանի փոխհարաբերությունները, ինչը հղի էր անկանխատեսելի զարգացումներով: Նախագահը, տեսնելով Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի (ԻՀՊԿ) հավատարմությունն Առաջնորդի ինստիտուտին, այդուհետ սկսեց համեմատաբար զուսպ ներքին քաղաքականություն վարել:

---

<sup>189</sup> ԻԻՀ՝ *Մահմանադրություն*, հոդված 12:

<sup>190</sup> **Ilan Berman**, *Understanding Ahmadinejad, The American Foreign Policy Council, Washington*, June 2006, No. 1, p. 3. <https://www.afpc.org/uploads/documents/UnderstandingAhmadinejad.pdf>

Ահմադինեժադը Նախագահի պաշտոնում կառավարեց մինչև 2013 թ.՝ աշխատելով նոր բարդություններ չստեղծել իր համար:

2013 թ. հունիսի 14-ին Իրանում տեղի ունեցան նախագահական հերթական ընտրությունները, որոնց ցանկանում էր մասնակցել ԻԻՀ 686 քաղաքացի, սակայն Սահմանադրության պահապանների խորհուրդը թույլատրեց ընդամենը 8-ին՝ Հասան Ռոհանի, Մուհամմադ Բադեր Ղալիբաֆ, Սաիդ Ջալիլի, Մոհսեն Ռեզայի, Ալի Աքբար Վելայաթի, Մուհամմադ Ղարազի, Ղոլամ Ալի Հադդադ-Ադել և Մուհամմադ Ռեզա Արեֆ. վերջին երկուսը ինքնաբացարկ հայտարարեցին ընտրություններից առաջ: Ձայների մեծամասնությամբ առաջին փուլում հաղթանակեց **Հասան Ռոհանին**՝ հավաքելով 18,692,500 (50,60%) ձայն<sup>191</sup>: Հասան Ռոհանին հոգևոր դասից էր և ԻԻՀ-ում տարիներ շարունակ զբաղեցրել էր բարձր պաշտոններ: 1980 թվականից նա 20 տարի գործել էր Մեջլիսում, եղել էր Բանիմացների խորհրդի, Նպատակահարմարության ժողովի, Ազգային Անվտանգության բարձրագույն խորհրդի անդամ, սակայն նախընտրական փուլում աչքի ընկավ իր որոշակի լիբերալ հայացքներով: Ընտրությունների ժամանակ նրան աջակցություն ցուցաբերեցին նախկին նախագահներ Մուհամմադ Խաթամին և Ալի Աքբար Հաշեմի Ռաֆսանջանին: Վերջինիս Սահմանադրության պահապանների խորհուրդն արգելել էր մասնակցել ընտրություններին, քանի որ տարիքային ցենզն այլևս թույլ չէր տալիս<sup>192</sup>: Այս առումով խիստ հետաքրքրական էր, որ երբ Ռոհանին առաջին անգամ մասնակցում էր նախագահական ընտրություններին, արևմտյան մամուլը նրան կոչում էր լիբերալ, իսկ հետագայում՝ չափավոր, երբեմն՝ բարեփոխիչ թևի ներկայացուցիչ: Փորձում էին վերլուծել և հուսալ, որ Ռոհանին իսկապես հարում է լիբերալ կամ բարեփոխիչների հոսանքին: Ռոհանիի կենսագրությունում շատ կարևոր մի

---

<sup>191</sup> 2013 Presidential election, <https://irandataportal.syr.edu/2013-presidential-election>

<sup>192</sup> Новый президент Ирана Хасан Роухани: кто он? [https://www.bbc.com/russian/international/2013/06/130615\\_iran\\_rouhani\\_profile](https://www.bbc.com/russian/international/2013/06/130615_iran_rouhani_profile)

հատված կա. նա եղել էր այաթոլլահ Խոմեյնիի հետևորդներից և Իսլամական հեղափոխության ժամանակ միացել էր նրան Ֆրանսիայում: Սկզբունքորեն դժվար է պատկերացնել, թե նա ինչպես կարող էր ունենալ լիբերալ հայացքներ՝ արևմտյան արժեհամակարգի պատկերացմամբ:

Ռոհանին խոստանում էր ընտրվելու դեպքում ազատել քաղաքանտարկյալներին, ապահովել քաղաքացիական իրավունքները, վերադարձնել ազգին իր արժանապատվությունը: Հեռուստաբանավեճերի ժամանակ նա անգամ խոսեց մինչ այդ կարծես արգելված թեմաներից՝ ՄԱԿ-ի ԱԽ պատժամիջոցներից, տնտեսության վրա դրանց ազդեցությունից, ինչպես նաև Միացյալ Նահանգների հետ հարաբերությունների կարգավորումից<sup>193</sup>: Ուշագրավ է, որ ընտրություններից հետո ԱՄՆ նախագահ Բ. Օբամայի նախաձեռնությամբ տեղի ունեցավ հեռախոսազրույց երկու երկրների նախագահների միջև, ինչն անսախառնեալ էր 1979 թ. նոյեմբերի 4-ից ի վեր<sup>194</sup>:

Իրանի միջուկային խնդրին առնչվող բանակցային գործընթացը 2015 թ. սկսեց ավելի կառուցողական ուրվագծեր ստանալ: Ի վերջո, 5+1 ձևաչափը<sup>195</sup> և հատկապես ԱՄՆ-ի և Իրանի արտգործնախարարների երկար քննարկումներից ու մի շարք հարցեր հստակեցնելուց հետո՝ 2015 թ. հուլիսի 14-ին, կողմերը եկան վերջնական համաձայնության, ստորագրվեց Համատեղ գործողությունների համապարփակ ծրագիր (Joint Comprehensive Plan of Action-JCPA, հայերեն՝ ՀԳՀԾ)<sup>196</sup>, որը գնահատվեց պատմական, դարի համաձայնագիր:

---

<sup>193</sup> Там же.

<sup>194</sup> Տե՛ս **Obama**, *Iran's Rouhani hold historic phone call*, Sat Sep 28, 2013, <http://www.reuters.com/article/us-un-assembley-iran-idUSBRE98Q16S20130928>

<sup>195</sup> ՄԱԿ-ի ԱԽ մշտական հինգ անդամները, գումարած՝ Գերմանիան, բանակցում էին Իրանի հետ միջուկային ծրագրերի շուրջ:

<sup>196</sup> Տե՛ս *Joint Comprehensive Plan of Action*, <https://www.state.gov/e/eb/tfs/spi/iran/jcpoa/>

Իրանի Նախագահ Ռոհանին հեռուստատեսությամբ հայտարարեց, որ դա նոր էջ է աշխարհի հետ Իրանի փոխհարաբերություններում, ու ավելացրեց, որ իրանցիների աղոթքներն ի վերջո «իրականացան»: Իսկ թվիթերում Ռոհանին գրեց. «... սա մի օր է, որ մեր երիտասարդությունը նորից երազի պայծառ ապագայի մասին»<sup>197</sup>: Ռոհանիի և արտաքին գործերի նախարար Մուհամմադ Ջավադ Ջարիֆի հեղինակությունը երկրում չափազանց բարձրացավ, ինչն սկսեց անհանգստացնել Իրանի ծայրահեղ պահպանողական թեին, ինչպես նաև ԻՀՊԿ-ին: Միևնույն ժամանակ արձանագրենք, որ Բարաք Օբաման չշտապեց ՀԳՀԾ-ի համաձայնագիրը ներկայացնել Կոնգրեսի հաստատմանը, և այն «ժառանգություն» մնաց հաջորդ նախագահին: Կարծում ենք, որ Օբաման կանխատեսում էր, թե ինչ ճակատագիր կունենա դրա քննարկումը Կոնգրեսում և չցանկացավ դա իր նախագահության օրոք անել:

ԱՄՆ-ի նախագահական նախընտրական մրցավազքի ժամանակ՝ 2016 թ., Դ. Թրամփը խոստացել էր, որ ընտրվելու պարագայում վերանայելու է ՀԳՀԾ-ն: Արդեն Նախագահ Թրամփը FOX news-ին տված հարցազրույցում Իրանը կոչեց «Ահաբեկչական թիվ մեկ պետություն», իսկ Իրանի հետ միջուկային պայմանագիրը որակեց «վատթարագույն գործարք»<sup>198</sup>: Եվ սկսեց քննարկել այդ համաձայնագրից ԱՄՆ-ի դուրս գալու հարցը: Իրականում Թրամփի այս քայլը պարարտ հող նախապատրաստեց Իրանում պահպանողականների համար, քանի որ նրանք սկսեցին քննադատել Ռոհանիի կառավարությանը: Առաջնորդ Ալի Խամենեին արձագանքեց՝ նշելով, որ ինքը բազմիցս զգուշացրել էր չվստահել Միա-

---

<sup>197</sup> *The Final Deal: Rouhani Statement*, July 14, 2015 <http://iranprimer.usip.org/blog/2015/jul/14/final-deal-rouhani-statement>

<sup>198</sup> *Trump: Iran has been “Emboldened” by Nuclear Deal*, Published on Feb 5, 2017, <https://www.youtube.com/watch?v=9yNqt-sDKvw>

ցյալ Նահանգներին, և որ ինքը թույլ է տվել բանակցել, բայց ոչ այդպիսի պայմանագիր ստորագրել<sup>199</sup>:

Թեպետ Միացյալ Նահանգներն սկսեց միակողմանի պատժամիջոցներ կիրառել Իրանի նկատմամբ, ինչն էլ առիթ դարձավ պահպանողական թևի համար՝ անդադար քննադատելու Ռոհանիի իշխանությանը, սակայն ակնհայտ նկատվում էր Հասան Ռոհանիի հանդեպ հանրության համակրանքը, ինչն էլ արձանագրվեց 2017 թ. նախագահական ընտրությունների ժամանակ: Ի դեպ, պետք է նշել, որ ընտրությունների նախաշեմին ձերբակալվել էր Ռոհանիի եղբայրը՝ Հոսեյն Ֆերեյդունը, ինչը մի շարք փորձագետներ դիտարկում էին որպես ճնշման մեխանիզմի գործադրում Ռոհանիի վրա, որպեսզի նա հրաժարվի ինքնուրույն քաղաքականություն իրականացնելու իր փորձերից, հատկապես Արևմուտքի հետ հարաբերությունները կարգավորելու իր ուղղվածությունից: Իրանի պահպանողականներին խիստ անհանգստացնում էր Ռոհանիի հեղինակության աճը, որը կարողացել էր բանակցությունների արդյունքում գալ համաձայնության, և, երկիր էին վերադարձվել ԱՄՆ-ում սառեցված իրանական գումարների մի մասը, որոնք շահական Իրանը հատկացրել էր ԱՄՆ-ին՝ զենք ձեռք բերելու համար, սակայն հեղափոխությունից հետո դրանք սառեցվել էին: Ռոհանին կարողացավ հետ բերել այդ գումարները՝ իրենց տոկոսներով հանդերձ, ինչը կազմեց շուրջ \$1,7 միլիարդ<sup>200</sup>:

2017 թ. ԻԻՀ նախագահական հաջորդ ընտրություններին 1,636 քաղաքացի, այդ թվում՝ 137 կին, ցանկություն հայտնեց մասնակցելու ընտրարշավին: Ներքին գործերի նախարարության և Սահմանադրության պահապանների խորհրդի զտումների շնորհիվ

---

<sup>199</sup> *Analysis: Iran supreme leader comments signal strategy shift*, By Jon Gambrell, May 23, 2019, <https://apnews.com/article/ali-khamenei-donald-trump-persian-gulf-tensions-tehran-international-news-cad4384061504c1b959a5533bae2e59e>

<sup>200</sup> **Glen Kessler**, *Was Obama's \$1.7 billion cash deal with Iran prohibited by US law?* March 1, 2018, <https://www.washingtonpost.com/news/fact-checker/wp/2018/03/01/was-obamas-1-7-billion-cash-deal-with-iran-prohibited-by-u-s-law/>

ԻԻՀ նախագահական ընտրություններին մասնակցեց վեց թեկնածու՝ Հասան Ռոհանին, Էբրահիմ Ռայիսին, Սեյյեդ Մուստաֆա Միրսալիմը, Սեյյեդ Մուստաֆա Հաշեմի Թաբան, Էսհադ Ջահանգիրին և Մուհամմադ Բադեր Ղալիբաֆը. վերջին երկուսն ընտրություններից առաջ ինքնաբացարկ հայտնեցին: Ակնհայտ էր, որ պահպանողական թեն իր ուժերն էր կենտրոնացնում և ամբողջովին աջակցում Էբրահիմ Ռայիսին, իսկ բարեփոխիչներն սկսեցին սև PR իրականացնել Ռայիսի նկատմամբ: Ռայիսի մասով քաղաքական դաշտ նետվեց 1988 թ. նրա մասնակցությունը «մահվան հանձնաժողովի» աշխատանքներին, որի շրջանակներում, որոշ տվյալներով, 5–6 ամսվա ընթացքում մահապատժի է ենթարկվել 25–30 հազար մարդ: Ռայիսին էլ ողջ ընտրարշավի ժամանակ Ռոհանիի կառավարությանը մեղադրում էր ապիկարության մեջ:

Ռոհանին իր ընտրագանգվածին կոչ էր անում չվախենալ այն փոքրամասնությունից, որի ձեռքում այս պահին գտնվում են մեծ բարձրախոսներ, և սա չի նշանակում, որ նրանք կարող են իրենց հետ վարվել այնպես, ինչպես ուզում են: Այս հայտարարության սլաքները կարծես ուղղված էին հենց բարձրագույն հոգևոր դասի կողմը: Ուշադրության էր արժանի այն, որ ընտրարշավի ժամանակ Նախագահն անդադար ներկայացնում էր իր թիմի բանակցային հաջողությունները և փորձում էր դիվիդենտներ շահել, որին հաջորդեց Առաջնորդի խիստ և քննադատական մոտեցումը, երբ նա կոչ արեց Իրանի ժողովրդի հաղթանակը չվերագրել որևէ որոշակի ուժի:

Ի վերջո, ընտրություններում առաջին փուլով հաղթեց Հասան Ռոհանին՝ հավաքելով 23,636,652 միլիոն ձայն, իսկ Ռայիսի օգտին քվեարկեց 15,835,794 քաղաքացի: Առաջնորդի կողմից Ռայիսին նշանակվեց Դատական իշխանության ղեկավար, և, այդպիսով, նա մաս կազմեց իշխանությունների գործունեությանը:

Ռոհանիին մեծ թվով ձայներ տվել էին հատկապես երիտասարդությունը, կանայք, ազատական մտածողությամբ քաղաքացիները: Ուշագրավ է, որ նրանք ակնկալում էին, թե Ռոհանին իր կա-

նավարություն կվերցնի կին նախարարի (ինչը նույնիսկ արել էր Ահմադինեժադը), սակայն Ռոհանին գերադասեց սուր առճակատման մեջ չմտնել Առաջնորդի հետ և իր կաբինետը կազմեց՝ Առաջնորդի հետ խորհրդակցելով<sup>201</sup>:

Ըստ ԻԻՀ-ում ՀՀ դեսպան Գրիգոր Առաքելյանի՝ Առաջնորդը «Շնորհավորական խոսք չի հնչեցրել միայն 2017 թվականին վերընտրված Նախագահ Ռոհանիի երդմնակալության արարողությունից առաջ: Պատճառը, թերևս, նախորդ ընտրություններում Ռախիսիի հետ մրցապայքարում կրոնապետի կամքին հակառակ Ռոհանիի տարած հաղթանակն էր»<sup>202</sup>:

2018 թ. մայիսի 8-ին ԱՄՆ նախագահ Դ. Թրամփը միակողմանի և մեծ «հանդիսավորությամբ» դուրս եկավ Համատեղ գործողությունների համապարփակ ծրագրից՝ հաշվի չառնելով իր դաշնակիցների՝ Մեծ Բրիտանիայի, Գերմանիայի և Ֆրանսիայի կարծիքը: Մայիսի 8-ին ԱՄՆ Նախագահի ուղերձից հստակ զգացվում էր, որ խնդիրը ոչ այնքան Իրանի միջուկային ծրագրի մեջ է, որքան Իրանի տարածաշրջանային ակտիվությունը զսպելու և հնարավորության դեպքում գործող վարչակարգը փոխելու ձգտման մեջ<sup>203</sup>:

Դեռևս 2015 թ. ՀԳՀԾ-ի շնորհիվ եվրոպական բանկերում իրանական որոշ գումարներ ապաստոցվեցին, և Իրանի ժողովուրդը հույս ուներ, թե դրանք կներդրվեն երկրի սոցիալական վիճակը կարգավորելու գործում: Սակայն դրանց զգալի մասը ներդրվեց՝ սիրիական ճգնաժամը կարգավորելու համար: Իրանի ղեկավարությունն առավել նպատակահարմար գտավ ուշադրության կենտրոնում պահել անվտանգության խնդիրները, քան ներքին սո-

---

<sup>201</sup> *In Iran, Rouhani Begins 2nd Term with Signs He's Yielding to Hard-Liners*, By Thomas Erdbrink, Aug. 3, 2017, <https://www.nytimes.com/2017/08/03/world/middleeast/iran-hassan-rouhani-ayatollah-khamenei.html>

<sup>202</sup> *Ռախիսին Իրանի սպազա հոգևոր առաջնորդ*, 14/07/2021, <https://azg.am/am/2021070911/>

<sup>203</sup> President Donald Trump Delivers Remarks on Iran Deal - May 8, 2018 | CNBC, May 8, 2018, <https://www.youtube.com/watch?v=-QiMvernIL0https://www.youtube.com/watch?v=-QiMvernIL0>

ցիալական հարցերը: 2017 թ. դեկտեմբերի 28-ին Իրանում հասունացած դժգոհությունները թեև առաջին հերթին ուղղվեցին կառավարության դեմ, քանի որ առաջին անհրաժեշտության ապրանքները թանկացել էին, սակայն հետագայում Հասան Ռոհանիի բացատրություններից հետո ժողովրդական ցամաքն ալիքն ուղղվեց դեպի Առաջնորդը: Սոցիալական բնույթի դժգոհություններում վանկարկվող հիմնական կարգախոսներն էին՝ արդեն սովորական դարձած՝ «Ո՛չ Գազային, ո՛չ Լիբանանին, կյանքս կտամ միայն Իրանին, թողե՛ք Սիրիան, մտածեք մե՛ր մասին»<sup>204</sup>: Սոցիալական բնույթի բողոքի ակցիաները քաղաքական երանգներ ստացան: Այս ամենը ցույց է տալիս, որ Իրանում առկա են համակարգային լուրջ խնդիրներ: 2018 թ. հունվարի 2-ին Առաջնորդն անդրադարձավ ստեղծված իրավիճակին. այաթոլլահ Ալի Խամենեին մեղադրեց երկրի թշնամիներին՝ հակակառավարական ցույցերին աջակցելու համար: Իսկ Նախագահ Հասան Ռոհանին էլ հայտարարեց, որ քաղաքացիները բողոքի գործողություններ կազմակերպելու լիակատար իրավունք ունեն՝ ընդգծելով, որ մարդկանց միակ մտահոգությունը տնտեսության վիճակը չէ, մարդիկ դժգոհ են նաև կոռուպցիայի ծավալներից և թափանցիկության բացակայությունից<sup>205</sup>:

Սակայն երբ Ռոհանին տեսավ, որ սոցիալական բնույթի ընդվզումները վերափոխվում են հակապետական քայլերի, նա կանխեց ամեն տեսակի ցույցերի ծավալումը, որոնք իրենց չափերով անգամ համեմատվում էին Կանաչ շարժման հետ:

Հատկանշական է, որ սկսած Ռաֆսանջանիի նախագահությունից, ապա նաև Խաթամիի, Ահմադինեժադի, այնուհետև՝ Ռոհանիի օրոք, կառավարման երկրորդ շրջանում ակնհայտ տեսնում ենք

---

<sup>204</sup> Josie Ensor, Rare public protests spread across Iran amid spiraling inflation, The Telegraph, 29 December 2017, <https://www.telegraph.co.uk/news/2017/12/29/rare-public-protests-spread-across-iran-amid-spiraling-inflation/>

<sup>205</sup> **Անուշ Մկրտչյան**, «Եթե Իրանը լուրջ խնդիրների առաջ կանգնի, մենք շատ լուրջ դժվարություններ ենք ունենալու», Հունվար 02, 2018, <https://www.azatutyun.am/a/28951541.html>

բավականին կտրուկ փոփոխություն Առաջնորդ-Նախագահ հարաբերություններում, և, ակնհայտորեն, նախագահները փորձում էին մեծացնել իրենց ինստիտուտի և Մեջլիսի լիազորությունները:

2020 թ. ամբողջ աշխարհն ընկղմվեց COVID համավարակի մեջ: Անգամ այս պայմաններում Իրանը գտնվում էր ԱՄՆ-ի միակողմանի պատժամիջոցների տակ, և, իրանական կողմի պնդումներով Միացյալ Նահանգներն անգամ արգելք էր դնում դեղերի և սարքավորումների վրա, որոնք խիստ անհրաժեշտ էին ԻԻՀ-ին: Դրան գուգահեռ, Պարսից ծոցում խիստ մեծացել էր լարումը ԱՄՆ-ի ռազմական ուժերի և ԻԻՀ զորամիավորումների միջև, տարածաշրջանն ամեն օր գտնվում էր պայթյունավտանգ իրավիճակում: Այս լարված մթնոլորտը փոքր-ինչ լիցքաթափելու համար Իրանի Նախագահը հեռախոսազրույց ունեցավ Կատարի էմիրի հետ, որն անմիջապես տեղադրվեց պաշտոնական լրահոսում. դրանում Նախագահը նշել էր, որ «իրենք ուշիուշով հետևում են Պարսից ծոցում տեղի ունեցող զարգացումներին, սակայն չեն ձգտում առճակատման»<sup>206</sup>:

2020 թ. փետրվարի 19-ին COVID համավարակի պայմաններում Իրանում տեղի ունեցան Մեջլիսի ընտրություններ, որոնց ժամանակ հիմնականում հաղթեցին պահպանողական թևի ներկայացուցիչները: Սա հստակ ազդակ էր, որ հաջորդ նախագահը լինելու է պահպանողական թևի ներկայացուցիչ, և քանի որ Առաջնորդը կառավարության մաս էր դարձրել Էբրահիմ Ռայիսիին, ապա անգամ այդ հանգամանքից ենթադրվում էր, թե ով է լինելու 2021 թ. հաջորդ նախագահը:

2021 թ. հունիսի 18-ին Իրանում տեղի ունեցան նախագահական ընտրություններ, որոնց ընտրության իրավունք ունեցող 59,310,307 քաղաքացուց մասնակցեց ընդամենը 28,989,529-ը<sup>207</sup>,

---

<sup>206</sup> *President Rouhani Holds Phone Talks with Qatari Emir*, 2020-04-25, <https://irangov.ir/detail/337987>

<sup>207</sup> *2021 Presidential Election, Iran Data Portal*, <https://irandataportal.syr.edu/2021-presidential-election>

ինչը խոսում էր այն մասին, որ հանրությունը մոտիվացված չէր նախագահական մրցապայքարով, քանի որ նախապես արդեն կանխատեսելի էր, թե ով է դառնալու ԻԻՀ հաջորդ Նախագահ: 592 քաղաքացի դիմել էր՝ նախագահ դառնալու համար, ՆԳՆ-ն հաստատել էր 40-ի թեկնածությունը և նրանց տվյալները ուղարկել Սահմանադրության պահապանների խորհուրդ, որոնք էլ, իրենց հերթին գտելով, թույլ տվեցին նախագահական ընտրություններին մասնակցել ընդամենը 7 քաղաքացու: Նախագահի թեկնածուներն էին՝ Սեյյեդ Էբրահիմ Ռայիսին, Մոհսեն Ռեզային, Աբդոլնասեր Հեմմաթին, Սեյյեդ Ամիր-Հոսեյն Ղազիզադեհ-Հաշեմին: Սայիդ Ջալիլին, Ալիոեզա Ջաքանին և Մոհսեն Մեիր-Ալիզադեն ընտրություններից առաջ ինքնաբացարկ հայտարարեցին: Առանց լուրջ խոչընդոտների հանդիպելու, Էբրահիմ Ռայիսին հենց առաջին փուլում էլ հաղթանակ տարավ՝ հավաքելով 18,021,945 ձայն:

Նախընտրական քարոզչության ընթացքում նա կենտրոնացել էր առավելապես Իրանի տնտեսական թեմաների վրա և խոստացել երկիրը շուտափույթ դուրս բերել ֆինանսական ճգնաժամից, որը ծագել էր ԱՄՆ-ի պատժամիջոցների հետևանքով, ինչպես նաև պայքարել կոռուպցիայի դեմ:

Սակայն 2024 թվականի մայիսի 19-ին՝ Ադրբեջանից Իրան ուղղաթիռով մեկնելու ժամանակ, Նախագահի ուղղաթիռը վթարի ենթարկվեց. գոհվեցին Իրանի Նախագահը, արտաքին գործերի նախարարը: Կյանքի կոչվեց ԻԻՀ Սահմանադրության 131-րդ հոդվածը, որի համաձայն՝ Նախագահի մահվան դեպքում աշխատանքները համակարգում է Նախագահի առաջին տեղակալը երկրի Առաջնորդի համաձայնությամբ, և 50 օրվա ընթացքում կազմակերպվում են նախագահական նոր ընտրություններ: 2024թ. հուլիսի 5-ին Իրանում տեղի ունեցան նախագահական ընտրություններ, որտեղ 16,384,403 ձայնով հաղթեց բարեփոխական թևի ներկայացուցիչ Մասուդ Փեզեշքիանը:

## ԻԻՀ Նախագահի ընտրությունները 1980-2021 թթ.<sup>208</sup>

### Աղյուսակ 7.

| Ընտր. | Ամսաթիվը   | Քվեարկող.<br>թիվը | Փաստացի<br>քվեները   | Ման.<br>ակտիվ. % | Գրանց.<br>թեկն.            | Հաստ.<br>թեկ. | Հաղթողը                             | Հաղթողին տրված<br>քվեների քանակը |
|-------|------------|-------------------|----------------------|------------------|----------------------------|---------------|-------------------------------------|----------------------------------|
| 1-ին  | 25.01.1980 | 20,993,643        | 14,162,887           | 67.42            | 124                        | 96            | Սեյյեդ Աբու-<br>հասան Բա-<br>նիսադը | 10,709,330 (75.6%)               |
| 2-րդ  | 24.07.1981 | 22,687,017        | 14,573,803           | 64.24            | 71                         | 4             | Մուհամմադ<br>Ալի Ռաջայի             | 12,779,060 (90.0%)               |
| 3-րդ  | 2.10.1981  | 22,687,017        | 16,847,717           | 74.26            | 46                         | 4             | Սեյյեդ Ալի<br>Խամենեի               | 16,008,679 (95.05%)              |
| 4-րդ  | 16.08.1985 | 25,993,802        | 14,238,587           | 54.78            | 50                         | 3             | Սեյյեդ Ալի<br>Խամենեի               | 12,206,012 (85.0%)               |
| 5-րդ  | 28.08.1989 | 30,139,598        | 16,452,677           | 54.59            | 79                         | 2             | Աքբար Հա-<br>ջեմի Ռաֆ-<br>սանջանի   | 15,550,528 (94.0%)               |
| 6-րդ  | 11.06.1993 | 33,156,055        | 16,796,787           | 50.66            | 128                        | 4             | Աքբար Հա-<br>ջեմի Ռաֆ-<br>սանջանի   | 10,566,499 (63.0%)               |
| 7-րդ  | 23.05.1997 | 36,466,487        | 29,145,745           | 79.92            | 238                        | 4             | Սեյյեդ Մու-<br>համմադ<br>Խաթամի     | 20,138,784 (69.1%)               |
| 8-րդ  | 08.06.2001 | 42,170,230        | 28,155,819           | 66.77            | 814                        | 10            | Սեյյեդ Մու-<br>համմադ<br>Խաթամի     | 21,659,053 (77.0%)               |
| 9-րդ  | 17.06.2005 | 46,786,418        | 29,400,857           | 62.84            | 1014                       | 8             | Մահմուդ<br>Ահմադինե-<br>ժադ         | 17,248,782 (61.7%)               |
|       |            |                   | Ուփուլ<br>27,958,931 | Ուփուլ<br>59.76  |                            |               |                                     |                                  |
| 10-րդ | 12.06.2009 | 46,199,997        | 39,371,214           | 85.21            | 475                        | 4             | Մահմուդ<br>Ահմադինե-<br>ժադ         | 24,592,793 (63.1%)               |
| 11-րդ | 14.06.2013 | 50,483,192        | 36,821,638           | 72.94            | 686                        | 8             | Հասան<br>Ռոհանի                     | 18,692,600 (50.60%)              |
| 12-րդ | 19.06.2017 | 56,410,234        | 41,366,085           | 73.30%           | 1,636 (որից<br>137-ը՝ կին) | 6             | Հասան<br>Ռոհանի                     | 23,636,652<br>57.14%             |
| 13-րդ | 18.06.2021 | 59,310,307        | 28,989,529           | 48.80<br>%       | 592 (որից<br>40-ը՝ կին)    | 7             | Սեյյեդ Էր-<br>բահիմ Ռայ-<br>խի      | 18,021,945<br>62.16%             |
| 14-րդ | 05.07.2024 | 61,452,321        | 24,437,321           | 39.77%           | 81 (որից<br>4-ը՝ կին)      | 6             | Մասուդ<br>Փեզեշքիան                 | 16,384,403<br>54.76%             |

Վերլուծելով տվյալ տեղեկատվության թվային նկարագիրը՝ գալիս ենք հետևյալ եզրահանգման. Իսլամական հեղափոխություն-  
նից անմիջապես հետո տեղի ունեցած առաջին նախագահական  
ընտրությունների շուրջ ոգևորությունը բավականին մեծ էր, ինչն

<sup>208</sup> Նյութերը հավաքել և ի մի ենք բերել Iran Data Portal-ից, ստուգել ենք այլ աղբյուրների օգնությամբ, հավաստիացել ինֆորմացիայի ճշգրիտ լինելու մեջ <https://irandataportal.syr.edu/>

արտահայտվեց նաև նախագահ դառնալու ցանկություն ունեցողների թվով: Ուշագրավ է նաև, որ Սահմանադրության պահապանների խորհուրդն առաջին նախագահական ընտրությունների ժամանակ մեծ գտումներ չէր իրականացրել. 124 դիմողից 96 քաղաքացի դարձավ ԻԻՀ Նախագահի թեկնածու: Սա խոսում էր նաև այն մասին, որ Սահմանադրության պահապանների խորհրդի ստուգման մեխանիզմները դեռևս ամբողջովին ձևավորված չէին, և այդքան խիստ մոտեցումներ ի հայտ չեկան: Բնակչությունն ընտրությունների նկատմամբ իր հետաքրքրությունն արտահայտեց 67,42% ակտիվությամբ: Արդյունքում ընտրվեց ԻԻՀ հեղափոխության ակունքներում կանգնած, տնտեսագիտության ոլորտում իր ուրույն խոսքն ասած Աբուլհասան Բանիսադրը: Հաջորդ ընտրությունները, որ փաստացի տեղի ունեցան 1,5 տարի հետո, կրկին արտահայտեցին բնակչության համախմբվածությունն Իսլամական հեղափոխության գաղափարների շուրջ, իսկ քաղաքացիների մասնակցության ակտիվությունը կազմեց 64,24%: Այս անգամ Սահմանադրության պահապանների խորհուրդը գտում իրականացրեց, և 71 թեկնածուից ընդամենը չորսը դարձավ նախագահի թեկնածու: Սա արդեն հստակ ցույց տվեց, որ Սահմանադրության պահապանների խորհուրդն աշխատանքի իր գործիքակազմը հիմնականում արդեն ստեղծել էր: Սակայն այս ընտրությունների արդյունքում ընտրված Մուհամմադ Ալի Ռաջայիին վիճակված չէր շարունակել երկրի կառավարումը՝ մահափորձի պատճառով: Նույն թվականի հոկտեմբերի 2-ին ԻԻՀ 3-րդ Նախագահ ընտրվեց Ալի Խամենեին, որը բավականին փորձառություն և հեղինակություն ուներ՝ Իսլամական հեղափոխության համար անմիջական պայքարի և նորաստեղծ հանրապետությունում տարբեր պատասխանատու պաշտոններ զբաղեցնելու բերումով: Ուշագրավ է, որ նույն տարում տեղի ունեցած երկու ընտրությունների դեպքում թեպետ ընտրության իրավունք ունեցողների թիվը փաստացի նույնն էր, սակայն, լավ հասկանալով երկրում տիրող ծանր վիճակը, հաշվի առնելով նաև Ալի

Խամենեիի հեղինակությունը, այս ընտրություններին նախորդների համեմատ երկու միլիոնով ավելի ընտրող մասնակցեց: Եթե ԻԻՀ երկրորդ Նախագահի ընտրության ժամանակ մասնակցության իրավունք ունեցող քաղաքացիների 64,24%-ը կատարեց իր քաղաքացիական պարտքը, ապա 3-րդ ընտրություններին, որում հաղթեց Ալի Խամենեին, մասնակցեց ընտրության իրավունք ունեցող քաղաքացիների 74,26%-ը: Այլ էր պատկերը 4-րդ ընտրության ժամանակ. թեպետ ընտրության իրավունք ունեցողների թիվն աճել էր 3 միլիոնով, սակայն 1985 թ. ընտրություններին փաստացի մասնակցեց 14 միլիոնից ավելի մարդ, որն ընտրության իրավունք ունեցողների 54,78%-ն էր: Ակտիվության նվազումը կարող ենք կապել իրանա-իրաքյան հյուծող պատերազմի հետ, որի ժամանակ բնակչության նպատակն էր՝ օր առաջ տեսնել պատերազմի ավարտը: Միևնույն ժամանակ չենք կարող չարձանագրել, որ վերընտրված Ալի Խամենեին ավելի քիչ ձայներ ստացավ իր առաջին ընտրության համեմատ: Եթե 1981 թ. նա ստացել էր ժողովրդի 16 մլն քվեն, ապա չորս տարի անց նրան ընտրել էր 12 միլիոն քաղաքացի: Հինգերորդ ընտրության ժամանակ 5 միլիոնով ավելացավ ընտրության իրավունք ունեցողների թիվը, և փաստացի 2 միլիոնով ավելի քաղաքացի մասնակցեց նախորդ ընտրությունների համեմատ: 6-րդ նախագահական ընտրությունների ժամանակ ընտրության իրավունք ունեցողների թիվը թեպետ ավելացել էր 3 միլիոնով, սակայն ընտրությանը փաստացի մասնակցել էր գրեթե նույնքան մարդ, որքան 5-րդ ընտրության ժամանակ, ինչը վկայում էր ընտրությունների նկատմամբ բնակչության հետաքրքրության պակասի մասին: Ավելին, ԻԻՀ բնակչությունն իր հստակ վերաբերմունքն արտահայտեց Ռաֆսանջանիի վարած քաղաքականության նկատմամբ, և եթե առաջին ընտրությունների ժամանակ տվել էր 15,5 միլիոն քվե, ապա նրա երկրորդ ընտրության ժամանակ քաղաքացիները տվեցին 10,5 միլիոն ձայն, ինչը ռեկորդային ցածր էր՝ մինչ այդ գրանցված բոլոր նախագահների ընտրության արդյունքների համեմատ:

Ընդհանրապես, պետք է արձանագրել, որ ԻԻՀ-ում կարծես կա չգրված օրենք, համաձայն որի՝ գործող նախագահը երկրորդ անգամ ևս պետք է ընտրվի և փորձի տրամաբանական ավարտին հասցնել տնտեսական և արտաքին քաղաքական իր այն ծրագրերը, որոնք խոստացել է: Թեպետ Ռաֆսանջանին մեծ ջանքեր ներդրեց՝ Իրանի տնտեսական վիճակը բարելավելու համար, նա մեծ ուշադրություն էր դարձնում արտաքին քաղաքականությանը, հատկապես Կովկասում և Միջին Ասիայի երկրներում, սակայն բնակչությունը դժգոհ էր երկրում կոռուպցիայի, հովանավորչության ծավալներից, որն արտահայտվեց նաև ընտրությունների ժամանակ: Հաջորդ՝ 7-րդ ընտրությունները, որ տեղի ունեցան 1997 թ., Իրանի՝ ընտրելու իրավունք ունեցող քաղաքացիները մեծ ակտիվություն ցուցաբերեցին և աննախադեպ բարձր քվե տվեցին չափավոր լիբերալ հայացքներով հայտնի Մուհամմադ Խաթամիին: Ընտրության իրավունք ունեցող քաղաքացիների 79,92%-ը մասնակցեց ընտրությանը. այդպիսի ակտիվություն չէր գրանցվել անգամ հեղափոխությունից հետո տեղի ունեցած ընտրության ժամանակ, որն իրականացվել էր մեծ խանդավառության պայմաններում: Ընտրության արդյունքում ԻԻՀ քաղաքացիները կրկնակի ավել քվե տվեցին Խաթամիին՝ նախորդ՝ Ռաֆսանջանիի վերընտրության համեմատ: Իրանի՝ ընտրական իրավունք ունեցող 20 միլիոնից ավելի քաղաքացի ձայնը տվեց բարեփոխումներ և որոշակի ազատություններ խոստացած քաղաքական գործչին: Ուշագրավ է նաև, որ 8-րդ ընտրությունները ևս բովանդակությամբ տարբերվեցին մնացած ընտրություններից: Նախ, մինչ այդ նախորդ բոլոր ընտրություններում արձանագրված հիասթափությունն այս անգամ չնկատվեց. նկատի ունենք, որ բոլոր նախագահները նախորդ ընտրության համեմատ նվազ ձայներ էին հավաքել: Խաթամին իր երկրորդ ընտրության ժամանակ հավաքեց 21,659,000 ձայն, 1,5 մլն ձայնով ավելի, քան նախորդ ընտրություններում: Սակայն պետք է արձանագրել նաև, որ թեպետ նրա երկրորդ ընտրության ժամանակ ընտրելու իրա-

վունք ունեցողների թիվն աճել էր 5,7 միլիոնով, սակայն ընտրությանը նախորդի համեմատությամբ մասնակցել էր մեկ միլիոնով պակաս քաղաքացի: 9-րդ նախագահական ընտրությունները շատ թեժ էին, քանի որ նախկին Նախագահ Ալի Աքբար Հաշեմի Ռաֆսանջանին որոշեց մասնակցել ընտրություններին՝ օգտվելով Սահմանադրությամբ վերապահված իրավունքից, որը Նախագահին թույլ էր տալիս հետագայում ևս վերընտրվել: Իրանում առաջին անգամ գրանցվեց երկրորդ փուլ. մինչ այդ նախագահներն ընտրվել էին մեկ փուլով: Այս ընտրությունները ռեկորդային էին նաև նրանով, որ 1014 քաղաքացի նախագահ դառնալու ցանկություն էր հայտնել, թեպետ Սահմանադրության պահապանների խորհուրդն ընտրություններին մասնակցելու թույլտվություն տվեց ընդամենը 8 քաղաքացու: Այս ընտրություններն աչքի ընկան նաև նրանով, որ երկար տարիներ անց նախագահ ընտրվեց աշխարհիկ ներկայացուցիչ Մահմուդ Ահմադինեժադը: Անհրաժեշտ ենք համարում նշել, որ աշխարհի գրեթե բոլոր վերլուծաբաններն այդ օրերին միաբերան կանխատեսում էին Ռաֆսանջանիի հաղթանակը, սակայն ընտրություններում հաղթանակեց ուլտրաձայրահեղական հայացքներ ունեցող Մահմուդ Ահմադինեժադը, որը, բնականաբար, չունեւ նույն քաղաքական կշիռը, ինչ Ռաֆսանջանին: 10-րդ ընտրությունները, թերևս մեկընդմիջտ կման Իրանի պատմության մեջ, քանզի Մահմուդ Ահմադինեժադի կառավարման առաջին փուլի ընթացքում Իրանի նկատմամբ ծայրաստիճան մեծացան լարումն ու պատժամիջոցները, ինչն իր հերթին առաջացրեց սոցիալական ծանր շրջան, որն էլ հանգեցրեց արտագաղթի մեծ տեմպերի: Դասկնհայտ երևում է անգամ ընտրության իրավունք ունեցողների թվաքանակի նվազմամբ: Եթե ուշադրություն դարձնենք վերը նշված աղյուսակին, ապա կնկատենք, որ յուրաքանչյուր նախագահական ընտրությունների ժամանակ ընտրության իրավունք ունեցողների թվաքանակն աճում է միջինը 3–4 միլիոնով, սակայն 10-րդ ընտրության ժամանակ այդ թիվը ոչ միայն չէր աճել, այլև ունեցել

էր նվազման միտում: Սակայն պետք է նաև նշել, որ եղել են տարիներ, երբ Իրանի իշխանությունները թույլ են տվել նաև արտերկրում գտնվող իրանցիներին քվեարկություններին մասնակցել դեսպանատներում, երբեմն էլ արգելել են. սա ևս կարող էր որոշ ազդեցություն ունենալ ընտրողների թվի վրա: Ուշագրավ է նաև, որ թեպետ ընտրության իրավունք ունեցողների թվաքանակը նույնն էր մնացել, սակայն փաստացի ընտրության մասնակցողների թիվը գրեթե 10 միլիոնով ավելացել էր, այսինքն, եթե 2005 թ. փաստացի ընտրությունների առաջին փուլին մասնակցել էր 29,400,857 քաղաքացի, ապա 2009 թ. ընտրությունները ռեկորդային էին, և գրանցվեց աննախադեպ ակտիվություն. 39,371,214 քաղաքացի մասնակցեց ընտրություններին, ինչը կազմեց ընտրության իրավունք ունեցողների 85,21%-ը: Սա կապված էր նաև նախագահական ընտրություններից առաջ գրանցված մեծ լարման հետ: Ահմադինեժադի հիմնական մրցակիցն էր Միր Հուսեյն Մուսավին, որն Իրանի վերջին վարչապետն էր եղել: Այդ շրջանում ամբողջ Մերձավոր Արևելքում փոթորկում էին տարատեսակ գունավոր հեղափոխությունները<sup>209</sup>, որի նմանօրինակությամբ Իրանում սկսվեց «Կանաչ շարժումը»: 10-րդ ընտրություններն աչքի ընկան հատկապես հետընտրական ցույցերով, որտեղ հիմնական կարգախոսն էր՝ «ո՛ւր է իմ քվեն», «ու՛ր է իմ ձայնը», որով կասկածի տակ էին առնվում տեղի ունեցած ընտրությունները: Պաշտոնական տվյալների համաձայն՝ Իրանի Նախագահ Մահմուդ Ահմադինեժադն ստացել էր 24,592,793 քվե: Ընտրություններին հաջորդեց բախումների, դժգոհությունների, ձերբակալությունների, մահապատիժների, տնային կալանքների ժամանակաշրջանը: Այս ընտրությունները

---

<sup>209</sup> Ըստ էության, Արաբական գարունը գունավոր հեղափոխությունների շարքից էր, որն սկսվեց իբրև սոցիալական բողոք, սակայն որի նպատակն էր՝ Մերձավոր և Միջին Արևելքում ստեղծել անկայունության գոտի, որի շնորհիվ տարածաշրջանի հետ կապ ունեցող յուրաքանչյուր պետություն բախվելու էր տարաբնույթ խնդիրների: Նման գործողություններ տեղի ունեցան Լիբիայում, Սիրիայում, Իրաքում:

ծանր հետևանք ունեցան նաև Ահմադինեժադի վրա, քանզի ընտրություններից հետո վերջինիս կողմնակիցները և ինքն անձամբ ևս հայտնվեցին մեծ ճնշումների տակ ինչպես հասարակության, այնպես էլ հոգևոր դասի ու գինվորականության կողմից: Վերջին երկու առանցքային ուժերը մեղադրում էին Ահմադինեժադին, որ այս լրջագույն խնդիրներն առաջացել են միայն ու միայն նրա ապակառուցողական քաղաքականության պատճառով:

11-րդ ընտրությունները, որոնք տեղի ունեցան 2013 թ., համընկան Միացյալ Նահանգների Նախագահ Բարաք Օբամայի կառավարման տարիների հետ, որն ամեն կերպ փորձում էր Իրանին նստեցնել բանակցությունների սեղանի շուրջ՝ միջուկային ծրագրի կապակցությամբ: Հստակ էր, որ Իրանում պետք է ընտրություն կատարեին չափավոր բարեփոխականների կամ լիբերալների միջև, որպեսզի կարողանան ԱՄՆ-ի հետ գալ համաձայնության: 11-րդ ընտրություններին Իրանի քաղաքացիները, ի տարբերություն 10-րդ ընտրությունների, պակաս մասնակցային ակտիվություն գրանցեցին, սակայն մասնակցության տոկոսը կրկին պատկառելի էր՝ 72,94%, որից 50,60%-ը ձայնը տրվեց Հասան Ռոհանիին, որը երկար տարիներ պետական բարձր պաշտոններ էր զբաղեցրել: Հասան Ռոհանին ընտրվելով իր շուրջը համախմբեց հիմնականում արտերկրում կրթություն ստացած լավագույն մասնագետներին և փորձեց իրականացնել նախընտրական խոստումները՝ լուծել Իրանի տնտեսության ճգնաժամը: Կարճ ժամանակամիջոցում՝ 2015 թ., Վիեննայում կարողացան Իրանի միջուկային ծրագրի շուրջ գալ համաձայնության, ինչն էլ իր հերթին նպաստեց ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի պատժամիջոցների վերացմանը: Արևմտյան մի շարք գործարարներ որոշեցին ներդրումներ անել Իրանի տնտեսությունում. սա մեծ էյֆորիա առաջացրեց երկրում, և Իրանի Նախագահի ու արտգործնախարարի հեղինակությունը խիստ մեծացավ:

Սակայն այդ էյֆորիան երկար չտևեց, քանի որ 2016 թ. ԱՄՆ-ի Նախագահական ընտրություններում հաղթեց Հանրապետական կուսակցության ներկայացուցիչ Դոնալդ Թրամփը, որն աչքի էր ընկնում հակաիրանական ելույթներով և խոստացել էր ընտրվելու դեպքում չեղարկել ՀԳՀԾ, որն, ըստ էության, համաձայնություն էր ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի հինգ մշտական անդամների հետ մի կողմից և Գերմանիայի և Իրանի միջև մյուս կողմից:

Իրանում 2017-ը ևս ընտրությունների տարի էր. հասարակությունը գիտակցում էր, որ պետք է միասնական լինի և ցույց տա իր համերաշխությունը գործող իշխանություններին: Ընտրության իրավունք ունեցող քաղաքացիներից մասնակցեց 73,3%-ը, որից 57,14%-ն իր քվեն տվեց Հասան Ռոհանիին. սա ավելին էր, քան Նախորդ ընտրություններում իր հավաքած ձայները: Սա կապված էր Հասան Ռոհանիի՝ տնտեսությունը վերականգնելու ջանքերի հետ: Ռոհանիի երկրորդ Նախագահության ընթացքը ևս խիստ ծանր շրջան էր, քանի որ Իրանը, կատարելով իր ստանձնած պարտականությունները, այնուամենայնիվ, ընկնում էր Միացյալ Նահանգների միակողմանի պատժամիջոցների տակ, որից տնտեսությունը կրկին ծանր վիճակում էր հայտնվել, և միայն 2021 թ. ԱՄՆ-ի Նախագահի փոփոխության արդյունքում Իրանի հետ կրկին սկսեցին բանակցել, որպեսզի վերադառնան ՀԳՀԾ-ին, և պատժամիջոցների մի զգալի հատվածը հանվեց:

13-րդ ընտրությունները տեղի ունեցան 2021 թ. հունիսին և աչքի ընկան ընտրության իրավունք ունեցողների պասիվությամբ: Թեպետ ընտրության իրավունք ունեցողների թիվն աճել էր՝ հասնելով 59,310,307-ի, սակայն վերջին ընտրություններին մասնակցել էր միայն 48%-ը, այսինքն՝ 28,989,529 քաղաքացի: Պետք է արձանագրել, որ Իրանի Իսլամական Հանրապետության Նախագահի ընտրությունների ժամանակ մասնակցության այսքան ցածր տոկոս երբեք չէր գրանցվել, սակայն սա կարող է կապված լինել ոչ միայն նրա հետ, որ Իրանում մոլեգնում էր COVID 19-ի համավարակը, այլ

Նաև այն հանգամանքի հետ, որ Սահմանադրության պահապանների խորհուրդը մի շարք քաղաքական գործիչների արգելել էր մասնակցել ընտրություններին, որոնք համարվում էին հիմնական ֆավորիտները: 592 դիմումատուներից ընտրություններին մասնակցել թույլատրվել էր ընդամենը 7-ին, որոնցից երկուսն էին չափավոր բարեփոխականների թևից, իսկ հինգը պահպանողականների թևից էին: Ընտրություններում հենց առաջին փուլով հաղթեց ԻԻՀ Դատական իշխանության ղեկավար, պահպանողական թևի ներկայացուցիչ Էբրահիմ Ռայիսին՝ հավաքելով 18,021,945 ձայն, որը կազմում էր ընտրությանը մասնակցածների ձայների 62,16%-ը<sup>210</sup>: Նրա հիմնական ծրագրային դրույթներից էր՝ պայքարել Իրանում կոռուպցիայի դեմ և վերականգնել Իրանի դիրքերն ինչպես Կովկասում, այնպես էլ Մերձավոր Արևելքում:

Սակայն Էբրահիմ Ռայիսի ուղղաթիռի վթարից հետո Իրանում տեղի ունեցան 14-րդ նախագահական ընտրությունները: Ընտրելու իրավունք ունեցող 61,452,321 քաղաքացիներից Մասուդ Փեզեշքիանի օգտին քվեարկել է 16,384,403-ը:

## **Իրանի կառավարությունը – Heyatedovlat-e Iran**

Երկրի Նախագահն անմիջական պատասխանատվություն է կրում գործադիր իշխանության գործառույթների համար:

Համաձայն Սահմանադրության 133-րդ հոդվածի՝ նախարարներին նշանակում և Մեջլիսի հաստատմանը ներկայացնում է Նախագահը: ԻԻՀ Մեջլիսում 2021 թ. կառավարության կազմի հաստատումը տևեց հինգ օր, և Մեջլիսը հաստատեց Ռայիսի առաջադրած բոլոր նախարարներին, բացառությամբ կրթության նախա-

---

<sup>210</sup> 2021 Presidential election, <https://irandataportal.syr.edu/2021-presidential-election>

րարի թեկնածուի<sup>211</sup>: Ի դեպ, Մեջլիսը գրեթե բոլոր կառավարությունների դեպքում էլ մերժել է այս կամ այն թեկնածուի առաջադրումը: Բացառություն են Իրանի Իսլամական Հանրապետության արտաքին գործերի, կապի և տեղեկատվության, հետախուզության, պաշտպանության նախարարները, որոնք ավանդաբար նշանակվում են Առաջնորդի համաձայնությամբ: Նախագահը ղեկավարում է նախարարների կաբինետը, վերահսկում նրանց գործունեությունը և իր որոշումները համապատասխանեցնում է կառավարության և նախարարությունների գործունեությանը<sup>212</sup>: Իսկ ԻԻՀ Սահմանադրության 138-րդ հոդվածի համաձայն. «...կառավարությունը կարող է իր իրավասության տակ գտնվող որոշ հարցերի վավերացումը հանձնել մի քանի նախարարներից կազմված հանձնաժողովներին: Այդ հանձնաժողովների՝ օրենքների սահմաններում ընդունած որոշումները Նախագահի կողմից հաստատվելուց հետո ենթակա են կատարման...»<sup>213</sup>: Նախարարների խորհրդի կամ նախարարներից յուրաքանչյուրի կողմից կանոնակարգերը, շրջաբերականները և գործնական որոշումներն ընդունվում են՝ օրենքի կատարման հետ կապված թերությունները շտկելու, բացերը լրացնելու և վարչական պարտականությունների կատարումը դյուրացնելու նպատակով<sup>214</sup>:

Նախագահը կարող է նախարարին ազատել աշխատանքից, սակայն նա Մեջլիսից պետք է կրկին վստահության քվե ստանա նոր նախարարի համար: Փաստացի Մեջլիսը կարող է սահմանափակել Նախագահի իրավունքներն այս առումով ևս, քանի որ կարող է օրենքի ուժով չհաստատել Նախագահի առաջադրված թեկնածությունը նախարարի պաշտոնի համար:

---

<sup>211</sup> *Iran Parliament Gives Vote of Confidence to all but one Raisi Minister*, Wednesday, 25.08.2021, <https://old.iranintl.com/en/iran/iran-parliament-gives-vote-confidence-all-one-raisi-minister>

<sup>212</sup> ԻԻՀ Սահմանադրություն, հոդված 133, 134:

<sup>213</sup> ԻԻՀ Սահմանադրություն, հոդված 138:

<sup>214</sup> **Աբուլֆազլ Ամերի Ճահրաբի**, *Իրանի Իսլամական Հանրապետության իրավական համակարգը*, Ատենախոսություն, Երևան, 2018, էջ 43, 44:

Մեջլիսի կողմից հաստատվելու պարագայում նախարարն անցնում է իր բուն պարտականությունների կատարմանը՝ մշակելով և կառավարությանը ներկայացնելով իր ոլորտի զարգացման տեսլականը: Նախարարն իրավունք ունի նախարարությունում իրականացնելու նշանակումներ և ազատումներ, բարձրացնելու աշխատակիցների պաշտոնները, կանխելու աշխատանքային գործընթացը խախտելու փորձերը:

Կառավարության կազմը հետևյալն է. նախագահ, առաջին փոխնախագահ, 12 փոխնախագահ, աշխատակազմի ղեկավար, 19 նախարար, Կենտրոնական բանկի, Ատոմային միջազգային գործակալության, պլանավորման և բյուջետավորման կազմակերպության, Իրանի Ստանդարտների ազգային կազմակերպության ղեկավարներ, Շրջակա միջավայրի պաշտպանության կազմակերպության, Գիտության և տեխնոլոգիայի, Իրավական, Կանանց և ընտանիքի, Տնտեսական, Խորհրդարանական հարցերով նախագահի տեղակալներ, Նահատակների և վետերանների գործերի հիմնադրամի ղեկավար (2023 թ. տվյալներով)<sup>215</sup>: Ըստ անհրաժեշտության, նախարարությունները կարող են միավորվել կամ առանձնացվել, սակայն այս ամենն իրականացվում է օրենսդիր մարմնի թույլտվությամբ:

### **ԻԻՀ նախարարություններն են.**

#### ***Գյուղատնտեսական ջիհադի նախարարություն – Vezārat-e Jahād-e Keshāvarzī***

Իրանում գյուղատնտեսությունն ունի դարերի պատմություն, սակայն, որպես այդպիսին, Գյուղատնտեսության նախարարությունը հիմնվել է 1941 թ., հետագայում՝ 1972 թ., այս նախարարության լիազորությունների մեջ է մտցվել նաև բնական պաշարների վե-

---

<sup>215</sup> *Government of Islamic Republic of Iran, Cabinet*, <https://irangov.ir/cat/500> (24.05.2023)

րահսկողությունը: Իսլամական հեղափոխությունից հետո այն վերանվանվեց Գյուլատնտեսական և շինարարական ջիհադի նախարարություն, իսկ արդեն 2001 թ. այն պարզապես կոչվեց Գյուլատնտեսական ջիհադի նախարարություն: Կառույցը պատասխանատու է Իրանում գյուլատնտեսության զարգացման, գյուլատնտեսական առևտրի, գյուլատնտեսությանը պետական աջակցություն ցուցաբերելու, տարերային աղետների պատճառով առաջացած խնդիրների չեզոքացման, գյուլացիների խնդիրներին լուծումներ տալու համար: Գյուլատնտեսական ջիհադի նախարարությունն իրականացնում է հետազոտություններ՝ գյուլատնտեսության, ինչպես նաև հողի և ջրային ռեսուրսների օգտագործման զարգացման նպատակով:

### ***Արդյունաբերության, հանքերի և առևտրի նախարարություն – Vezārate Sannat, Madan va Tejārat***

Նախարարությունն այս կարգավիճակով ձևավորվել է 2011 թ.: Նախարարության անմիջական պարտականությունների մեջ են մտնում երկրի ներքին և արտաքին առևտրի կառավարումը, երկրի արդյունաբերության և հանքերի վերաբերյալ գործունեության մշակումը: Արդյունաբերության, հանքերի և առևտրի նախարարությունը պատասխանատու է արդյունաբերության, հանքարդյունաբերության, ինչպես նաև ներքին և արտաքին առևտրի բնագավառում քաղաքականություն մշակելու համար:

### ***Կրթության և դաստիարակության նախարարություն – Vāzart-e Āmōzesh-e vâ Prevārsh***

Ղաջարական դինաստիայի թագավորության ընթացքում կրթական համակարգը Պարսկաստանում խիստ սահմանափակ բնույթ ուներ և հասանելի չէր բնակչության լայն խավերին: Ղաջարների շրջանում դասավանդումն իրականացվում էր երկու ձևով՝ աշխարհիկ դպրոցներում և կրոնական Մաքթաբխաններում: Երեխա-

ները հիմնականում սովորում էին գրել, կարդալ, ուշադրություն էին դարձնում կրոնական գիտելիքներին: Ուսուցիչները հիմնականում հոգևորականներ էին: Բարձրագույն կրթություն կարող էին ստանալ Ղոմի և Սպահանի Մեդրեսներում կամ Հոգեներում՝ ամբողջովին կրոնական ուղղվածությամբ: Սակայն 19-րդ դարի կեսերից եվրոպական երկրների հետ շփումների ավելացման արդյունքում Պարսկաստանում բացվեցին միսիոներական դպրոցներ Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Միացյալ Նահանգների կողմից, որտեղ սկզբում հաճախում էին Իրանի ոչ մահմեդական համայնքների երեխաները, իսկ 20-րդ դարի սկզբներից սկսեցին հաճախել նաև Իրանի հարուստ և բարձրաստիճան պաշտոնյաների երեխաները, որոնցից մեկը հենց Ռեզա շահի որդին էր՝ Մուհամմադ Ռեզա Փահլավին:

1925 թ. Իրանի շահ դարձած Ռեզա Փահլավին թեպետ տառանաչ չէր, սակայն լավ գիտակցում էր, որ առաջնահերթ պետք է իրականացնի բարեփոխումների ծրագիր և փորձի երկրում արմատախիլ անել անգրագիտությունը: Սա խիստ կարևոր էր Ռեզա շահի համար, քանի որ անգրագիտության և սնոտիապաշտության դեմ պայքարելով՝ նա Իրանում աստիճանաբար թուլացնելու էր կրոնական ֆանատիզմի դիրքերը և հիմք էր դնելու իրանական ազգայնականությանը: Ռեզա շահը ձգտում էր ստեղծել ժամանակակից պետություն, որը հավատարիմ կլիներ պարսկական ազգայնականությանը: Կրթությունը համարվում էր այս ճանապարհի հիմնական միջոցը: Ռեզա շահի օրոք հիմնադրվեց կրթության առաջին համակարգը, և այս զարգացումն ի վերջո պետք է միսիոներներին դուրս մղեր կրթության ոլորտից<sup>216</sup>:

1926–27 թթ. Պարսկաստանի կրթության նախարարությունը բոլոր միսիոներական դպրոցներից պահանջեց իրենց կրթական ծրագրերը համապատասխանեցնել երկրի պետական դպրոցների

---

<sup>216</sup> **John H. Lorentz**, *Educational Development in Iran: The Pivotal Role of the Mission Schools and Alborz College*, Iranian Studies, September 2011, Vol. 44, No. 5, Alborz College, p. 649.

կրթական ծրագրին: Մինչև 1929 թ. Պարսկաստանում կար շուրջ 50 օտարերկրյա դպրոց, դրանցից 25-ը ամերիկյան միսիոներական դպրոցներ էին, որոնց գործունեությունն աստիճանաբար կասեցվեց<sup>217</sup>: 1933 թ. Ռեզա շահը փակեց Իրանի հյուսիս-արևմուտքում ավելի քան 100 տարի գործող Ամերիկյան Բողոքական միսիոներական դպրոցները: Շահի նախաձեռնությամբ 1934 թ. Իրանում ընդունվեց համալսարան հիմնելու մասին օրենքը, իսկ արդեն հաշված տարիներ անց Իրանի համալսարանում գործում էր հինգ հիմնական բուհ՝ արվեստի, բնագիտական, բժշկական, իրավաբանական և ճարտարագիտական:

Սակայն դասախոսների անբավարար թիվը չէր նպաստում բարձր մակարդակի ուսանողություն ունենալուն, ուստի Իրանի իշխանությունները որոշեցին ֆինանսներ հատկացնել՝ տարեկան մոտ 100 ուսանողի արտերկիր ուղարկելու համար, որոնց մոտավորապես 35%-ը պետք է հետագայում զբաղվեր մանկավարժությամբ<sup>218</sup>: Սակայն այս միջոցառումները կարող էին լուծել միայն երիտասարդ սերնդի կրթվածության հարցը, իսկ Ռեզա շահը ցանկանում էր, որ ավագ սերունդը, որը զրկված էր եղել բավարար չափով կրթվելու հնարավորությունից, ևս ստանա կրթություն: Այդ իսկ պատճառով 1936–1937 թթ. Իրանում բացվեց մոտ 1500 երեկոյան դպրոց մեծահասակների համար: Իսկ արդեն 1935 թ. մարտին Իրանում հիմնվեց Գիտությունների ակադեմիան, որի առաջնային խնդիրներից էր՝ երկրում զարգացնել գիտությունը և մաքրել պարսկերենն օտար բառերից: Բայց գիտական անաչառությունը պահելու համար պետք է արձանագրել, որ այս բարեփոխումները հիմնականում արդյունք տվեցին մայրաքաղաքում և խոշոր քաղաքներում: Այդուհանդերձ, կասկածից վեր է, որ Ռեզայի ներդրած

---

<sup>217</sup> **Banani Amin**, *Modernization of Iran, 1921–1941*, Stanford, California, 1961, p. 89.

<sup>218</sup> **Joseph. M. Upton**, *The History of Modern Iran*, p. 54.

ջանքերի շնորհիվ էր, որ երկրում հիմք դրվեց աշխարհիկ լիարժեք կրթությանը, որի հիմնական վերահսկողը դարձավ պետությունը:

Ռեզա շահի որդի Մուհամմադ Ռեզա Փահլավին այս հարցում ևս փորձեց շարունակել հոր կիսատ թողած գործը և ամեն գնով պայքարել անգրագիտության դեմ: 1955 թ. Թրումենի դոկտորինի 4-րդ կետի համաձայն՝ ԱՄՆ-ում ուսում ստացող 1170 իրանցիներին ցույց տրվեց ընդհանուր առմամբ 4,7 մլն դոլարի նյութական օգնություն<sup>219</sup>, ինչը նպաստեց արտերկրում կրթություն ստացողների թիվը կրկնապատկելուն: 1957–65 թթ. Իրանի պետական միջոցներով կրթություն ստանալու համար ԱՄՆ ուղևորվեց 6521 իրանցի, որոնցից 3802-ը (58%-ը) ստացան ԱՄՆ-ի քաղաքացիություն և չվերադարձան հայրենիք<sup>220</sup>:

1963 թ. Սպիտակ հեղափոխության շրջանակներում ստեղծվեց 50-հազարանոց լուսավորության կորպուս, որոնք շրջում էին գյուղերով ու գյուղաքաղաքներով և պայքարում էին անգրագիտության դեմ<sup>221</sup>: Ուշագրավ է, որ Իրանի շահը 1960-ականների վերջերին որոշում կայացրեց Իրանի կրթական համակարգում առավել մեծ տեղ հատկացնելու ճշգրիտ գիտություններին՝ հումանիտար գիտության փոխարեն, ինչը տարիներ անց պետք է նպաստեր երկրի արդյունաբերականացմանը, մեքենաշինության, մեխանիկայի, դեղագործության զարգացմանը:

1978–79 թթ. տեղի ունեցած Իսլամական հեղափոխությունից հետո Իսլամական Հանրապետության նոր իշխանությունները ևս մեծ ուշադրություն դարձրին կրթության մակարդակի բարձրացմանը և շարունակեցին պայքարել անգրագիտության դեմ:

---

<sup>219</sup> **Գ. Իսկանդարյան**, *Իրանա-ամերիկյան հարաբերությունները 1942–1960 թթ.*, Երևան, 2011, էջ 131:

<sup>220</sup> **Дорошенко Е.**, *Иран*, Специальный бюллетень, N 12/103/, с. 43–44.

<sup>221</sup> *Twelve Speeches by His Imperial Majesty Mohammad-Reza Pahlavi Aryamehr, Shahanshah of Iran on Ideological Basis of Iran's National and International Policy*, Tehran, 1971. *Extract from the Speech at the University of Bucharest on receiving a Honorary "Doctor of Political Law" Degree* (Bucharest, May 27, 1966) p. 34–35.

Այսօր Կրթության և դաստիարակության նախարարությունը պատասխանատու է երեխաների, դեռահասների կրթության ապահովման և ուսուցիչների վերապատրաստման համար: Բոլորի համար ստեղծված են հավասար պայմաններ՝ անվճար միջնակարգ կրթություն և ֆիզիկական դաստիարակություն ստանալու համար, ինչպես նաև աշխատանքներ են տարվում բարձրագույն կրթության մատչելիության ուղղությամբ: Մինչև 1964 թ. Կրթության և դաստիարակության նախարարության լիազորությունների մեջ էին մտնում նաև բարձրագույն կրթության հետ կապված խնդիրները, սակայն հետագայում՝ Գիտության, հետազոտության և տեխնոլոգիաների նախարարության ստեղծումից հետո, բարձրագույն կրթության ապահովման պատասխանատվությունը և համալսարաններում կրթական գործընթացին հետևելը հանձնարարվեց այս գերատեսչությանը:

Այսօր Իրանի կրթության և դաստիարակության նախարարության առաջնային պարտականություններն են՝ ուշադրություն դարձնել կրթության և դաստիարակության ոլորտում պետական քաղաքականության հիմնարար սկզբունքների, կրթական ծրագրերի հաստատմանը և իրականացմանը: Նախարարությունը վերահսկում է ուսումնական գրականության հրատարակությունը, իրականացնում է ուսուցիչների վերապատրաստում միջնակարգ դպրոցների համար:

### ***Հետախուզության նախարարություն – Vezarat-e Ettela'at Keshvar***

1953 թ. Իրանում տեղի ունեցած ռազմական հեղաշրջումից հետո ակնհայտ դարձավ, որ շահի իշխանության պահպանման համար անհրաժեշտ էր ստեղծել Ազգային անվտանգության և տեղեկատվության կազմակերպություն: Միացյալ Նահանգներն Իրան ուղարկեց գնդապետ Ստեֆան Ջ. Մեդին, որպեսզի նա օգնի Իրանում գաղտնի ոստիկանություն ստեղծելու գործում: Շուտով բոլո-

րին քաջ հայտնի դարձավ ՍԱՎԱՔ հապավումը (Սազման-է Էթթելա'աթ վա Ամնիյաթ-է Քեշվար): Կառույցն ստեղծվեց 1957 թ., և դրա առաջին ղեկավարը դարձավ գեներալ Թեյմուր Բախտիարը, շահի կնոջ՝ Սորայայի հորեղբայրը<sup>222</sup>: ՍԱՎԱՔ-ի ստեղծման գործում իրենց ուրույն դերն ունեցան Իսրայելի հետախուզական ծառայությունը՝ Մոսադ-ը, ԱՄՆ-ի ԿՀՎ-ն և Հետաքննությունների դաշնային բյուրոն, ինչպես նաև Ֆրանսիայի և Անգլիայի համապատասխան մարմինները<sup>223</sup>:

Իսլամական հեղափոխությունից անմիջապես հետո հեղափոխականներն առաջին հերթին զբաղվեցին հենց այս կազմակերպության վերափոխմամբ, քանզի այս կառույցն էր, որ տարիներ շարունակ հետապնդել ու ճնշել էր ընդդիմադիրներին:

Հետախուզության և անվտանգության նախարարությունը կամ, ինչպես այն այսօր կոչում են Իրանում՝ ՎԱՎԱՔ<sup>224</sup>-ը, ստեղծվել է 1984 թվականին՝ որպես ՍԱՎԱՄԱ-ի<sup>225</sup> իրավահաջորդ կազմակերպություն: ՎԱՎԱՔ-ի առաջին գործողություններից մեկը 1980-ականներին Իրանի տարածքում շրջանային կենտրոնների համակարգի ստեղծումն էր, երբ Խոմեյնին համախմբեց հեղափոխականներին: Ուշագրավ է, որ 90-ական թվականներին ՎԱՎԱՔ-ի ներկայացուցիչներն սկսեցին վերապատրաստում անցնել ՌԴ Արտաքին հետախուզության ծառայությունում: Ըստ հետազոտող Կարլ Էնթոնի Ուեգեի, ի լրումն ավանդական հետախուզական

---

<sup>222</sup> **Esposito John L.**, *The Islamic Threat Myth or Reality?* N.Y., 1995, p. 104. **Abrahamian E.**, *Iran Between to Revolutions*, p. 419. **Maziar Behrooz**, *Rebels with a Cause, The Failure of the Left in Iran*, London–N. Y, 2000, p. 1.

<sup>223</sup> **Գ. Իսկանդարյան**, *Իրանա-ամերիկյան հարաբերությունները 1942–1960 թթ.*, Երևան, 2011, էջ 134:

<sup>224</sup> Vezarat-e Ettela'at va Amniyat-e Keshvar

<sup>225</sup> Sazman-e Ettela'at Va Amniat-e Melli-e-Iran, Հետախուզության և ազգային անվտանգության նախարարությունը, որն ըստ էության անցումային կազմակերպություն էր Իրանի շահի նախահեղափոխական կառավարության ՍԱՎԱՔ գաղտնի ոստիկանության կազմակերպության և ԻԻՀ Հետախուզության և անվտանգության նախարարության միջև:

հմտությունների, ՌԴ Արտաքին հետախուզության ծառայություններում Իրանի Հետախուզության և անվտանգության նախարարության անձնակազմին վերապատրաստելիս ուսուցանել են ՊԱԿ-ի՝ ապատեղեկատվության հին մեթոդները, որոնք Հետախուզության և անվտանգության նախարարությունում անվանում են Նեֆաղ (արաբերեն բառ է և նշանակում է «պառակտում» կամ «երեսպաշտություն»)՝<sup>226</sup> Այս կառույցի անդամների թիվը, ըստ Ֆրանսիական հետախուզության հետազոտական կենտրոնի, հասնում է մոտ 15,000-ի, որոնց մի մասը գործում է արտերկրում՝ իրանական կազմակերպությունների, ներառյալ բարեգործական և մշակութային կենտրոնները, Իրանի դեսպանատների հովանու ներքո՝<sup>227</sup>:

Փաստացի Իրանի գաղտնի հետախուզությունը, որն ստեղծվել էր ԱՄՆ-ի կողմից, տարիներ շարունակ վերապատրաստվել էր ԱՄՆ-ի, Իսրայելի, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի նույնօրինակ կառույցներում: Թեպետ հեղափոխությունից հետո կառույցի աշխատակիցների մեծ մասը հեռացավ երկրից, բանտարկվեց կամ մահապատժի ենթարկվեց, ինչի հետևանքով որոշ առումով կորսվեց ինստիտուցիոնալ հիշողությունը, սակայն, այնուամենայնիվ, կային նաև այլ եղանակներ, որոնցով կառույցում պահպանվեցին գիտելիքներն ու հմտությունները: Ըստ էության, այդ ամենին գումարվեցին նաև ՌԴ Արտաքին հետախուզության ծառայության 1990-ականների փորձն ու ունակությունները:

Իսլամական հեղափոխությունից ի վեր ՎԱՎԱԲ-ի ղեկավարը, համաձայն Վելայաթ-է ֆադիհի տեսլականի, եղել է ոչ թե տեխնոկրատ, այլ կրոնական հեղինակություն՝<sup>228</sup>: Թեպետ նախարար-

---

<sup>226</sup> **Carl Anthony Wege**, *Guide to the Study of Intelligence Iran's Intelligence Establishment*, The Intelligence Journal of U.S. Intelligence Studies, Vol. 21, Number 2, Summer 2015, p.65, <https://www.afio.com/publications/WEGE%20Iranian%20Intel%20Services%202015%20Sep%2001%20FINAL.pdf>

<sup>227</sup> Ibid

<sup>228</sup> *Iran's Clerical Spymasters*, Asia Times, July 21, 2007: Նմանապես Իրանում գործում է մի համակարգ, որը փաստացի նման է «հսկիչ կոմիսարների» կա-

րությունը կառավարության ենթակայության տակ է գտնվում, սակայն նախարարը նշանակվում է Առաջնորդի կողմից և ուղղակի պատասխանատու է նրան: Այս կառույցը, թերևս, ամենաազդեցիկն է և, Իրանի մյուս նախարարությունների համեմատ, ամենամեծ աջակցություն ստացողը՝ նյութատեխնիկական, ֆինանսական և կապերի առումով: Այն ոչ ռազմական կառավարական կազմակերպություն է, որը գործում է ինչպես Իրանի ներսում, այնպես էլ նրա սահմաններից դուրս: Կառույցը դասվում է Մերձավոր Արևելքի ամենամեծ և ամենադինամիկ հետախուզական գործակալությունների շարքում<sup>229</sup>:

Նախարարությունն ունի 15 վարչություն՝ անվտանգության, հակահետախուզության, արտաքին գործողությունների, տեխնոլոգիական, քաղաքական, գնահատումների ու ռազմավարական հարցերի, հետազոտական, կրթական վարչությունները<sup>230</sup>:

Նախարարության հիմնական գործառույթներն են.

- Ներքին և արտաքին հետախուզական տվյալների հավաքումը, վերլուծությունը, դասակարգումը,

---

ռուցվածքի. պետական կառավարման յուրաքանչյուր ոլորտում առկա են հոգևորականներ, որոնք անմիջականորեն ենթարկվում են Առաջնորդին և հաշվետու են նրան: Խիստ էական է նաև այն հանգամանքը, որ Իրանի Հետախուզության և անվտանգության նախարարության (MOIS) ղեկավար կազմի զգալի հատվածը կրթություն է ստացել Ղոմ քաղաքում գործող «Մադրասե-յե Հաքքանի» աստվածաբանական ուսումնարանում: Տե՛ս նաև՝ **Wilfred Buchta, Who Rules Iran. Konrad Adenauer Stiftung**, 2000, p. 166. Նշված «Հաքքանի» դպրոցը հիմնադրվել է Հոջաթե կազմակերպության կողմից, որը կիսագաղտնի հակասուննի միավորում է՝ գաղափարապես մերժող Իրանի հետհեղափոխական համակարգի հիմնասյուն հանդիսացող Վելայաթ-է Ֆադիհի դոկտրինը: Տե՛ս նաև՝ *“Shi’ite Supremacists Emerge from Iran’s Shadows,” Asia Times* September 9, 2005, [http://www.atimes.com/atimes/Middle\\_East/GI09Ak01.html](http://www.atimes.com/atimes/Middle_East/GI09Ak01.html). (մուտք 28.07.2007)

<sup>229</sup> Iran’s Ministry of Intelligence and Security: A profile, a Report Prepared by the Federal Research Division, Library of Congress under an Interagency Agreement with the Combating Terrorism Technical Support Office’s Irregular Warfare Support Program December 2012, <https://irp.fas.org/world/iran/mois-loc.pdf>

<sup>230</sup> **Լ. Հովսեփյան, Ա. Հովհաննիսյան, Ս. Մինասյան, Տարածաշրջանի ռազմական տեղեկագիրք**, Երևան, 2016, էջ 113:

▪ ԻԻՀ անկախության, անվտանգության և տարածքային ամբողջականության դեմ դավադրության, դիվերսիոն գործողությունների, լրտեսության, խռովության բացահայտումը,

▪ հետախուզական գործակալական ցանցի, նորությունների, փաստաթղթերի, ձայնագրությունների, նախարարության անձնակազմի պաշտպանությունը,

▪ կազմակերպության և հաստատությունների աշխատակիցների ուսուցումը և աջակցությունը՝ իրենց կարևոր գրառումները, փաստաթղթերը պաշտպանելու գործում<sup>231</sup>:

Նախարարության ղեկավարը նշանակվում է ԻԻՀ Առաջնորդի՝ Խամենեիի կողմից<sup>232</sup>:

Սակայն 2025 թվականին Իսրայելի կողմից Իրանի դեմ իրականացված ռազմական գործողությունները բացահայտեցին կառույցի թույլ և խոցելի կողմերը:

### ***Իրանի կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն – Vâzart-e Ertebatat vâ Fanavri-ye Etelâ'at***

Մինչև 1876 թ. Իրանի հեռագրատունը ենթարկվել է Կրթության նախարարությանը, իսկ երբ 1877 թվականի մարտի 12-ին Ալի-Ղուլի խան Հեդայաթը նշանակվեց Իրանի Հեռագրության առաջին նախարար, Նասեր-էդ-Դին շահ Ղաջարի հրամանով փաստացի ստեղծվեց Հեռահաղորդակցության նախարարությունը<sup>233</sup>: 1904 թ. Թեհրանում սկսեցին գործել նաև հեռախոսային ուղիները, 1908 թ. միավորվեցին Հեռագրատան և փոստի նախարարությունները, իսկ 1929 թ. Մեջլիսի առաջարկով Հեռագրատան նախարարությունը գնեց հեռախոսային ընկերության բաժնետոմսերը և ձևավորեց Փոստի, հեռագրի և հեռախոսի նախարարություն: Առաջին նախա-

---

<sup>231</sup> Նույն տեղում:

<sup>232</sup> **Omer Carmi**, *Raisi's National Security Team*, September 10, 2021, <https://iranprimer.usip.org/blog/2021/aug/13/raisis-national-security-picks+>

<sup>233</sup> *A Brief History of the Ministry of Telecommunications and Information Technology*, <https://www.ict.gov.ir/en/topmainmenu/aboutus>

րար նշանակվեց Միրզա Ղասեմ խան Սուրետաֆիլը: 2000-ական թվականներին աշխարհում տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը և նոր տեխնոլոգիաների աճի թափը հաշվի առնելով՝ Փոստի, հեռագրի և հեռախոսի նախարարությունը 2004 թվականին վերանվանվեց Հեռահաղորդակցության և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն<sup>234</sup>:

Այս նախարարության առաքելության և պարտականությունների մեջ են մտնում օրենքների և կանոնակարգերի պատշաճ կատարումը վերահսկելը և երկրի հեռահաղորդակցության, փոստային և տեղեկատվական տեխնոլոգիաների ցանցերի զարգացման և սպասարկման չափանիշները պահպանելը: Մինևույն ժամանակ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացման համար նախարարությունը վարում է վիճակագրություն և մոնիթորինգ ուղիղապի և տեխնիկայի հարցերով զբաղվող կազմակերպությունների, նախագծերի և այլ ցուցանիշների վերաբերյալ, որպեսզի ապահովի ոլորտի առավել արդիական աշխատանքը: Նախարարության հիմնական պարտականություններից է ոլորտում տեղական արտադրությանն աջակցելու քաղաքականության մշակումը:

Ըստ էության, կապի, տեղեկատվական տեխնոլոգիաների և անվտանգության ոլորտներն ամբողջովին գտնվում են պետական լուրջ վերահսկողության ներքո: Որպես ապացույց կարող ենք նշել, որ արտերկրից եկող յուրաքանչյուր ինֆորմացիա անցնում է լուրջ գրաքննություն, իսկ երկրում տեղի ունեցող ցույցերի ժամանակ արդեն սովորական է դարձել սոցիալական ցանցերի և կապի միջոցների արգելափակումը:

Ըստ էության, կարող ենք արձանագրել, որ այսօր Իրանի Իսլամական Հանրապետության տեղեկատվական և կապի տեխնոլոգիաների նախարարության հիմնական գործառույթներից են հաղորդակցության տեխնոլոգիաների, հեռահաղորդակցության և

---

<sup>234</sup> Նույն տեղում:

փոստային ծառայությունների, զանգվածային հաղորդակցության, ներառյալ ինտերնետի զարգացման համար պետական քաղաքականություն մշակելը և իրավական կարգավորման գործառնությունները կյանքի կոչելը:

Փաստացի ռադիոյի և հեռուստատեսության վերահսկման գործառնությունները դրված են մեկ այլ կառույցի վրա, որն Իրանում առավել հայտնի է որպես «ԻԻՀ ձայն և պատկեր» անվամբ:

***Իրանի Իսլամական Հանրապետության Ձայն և պատկեր (Իրանի հեռուստառադիոնկերություն) – Sedā va Simāye Jomhūrīye Eslāmīye Īrān***

ԻԻՀ Սահմանադրության 12-րդ գլխի 175-րդ հոդվածն ամբողջովին նվիրված է մի կազմակերպության, որը կոչվում է Իրանի Իսլամական Հանրապետության Ձայն և պատկեր: Այս կառույցը 1979 թ. փոխարինելու եկավ Իրանի ազգային ռադիոյի և հեռուստատեսությանը: Թեպետ այս կառույցը նախարարության կարգավիճակ չունի և փաստացի անկախ է կառավարությունից, այնուամենայնիվ դրա ղեկավարը նշանակվում և պաշտոնից ազատվում է անմիջապես Առաջնորդի կողմից: Այդ կազմակերպությունը վերահսկվում է Նախագահի, Դատական իշխանության ղեկավարի և Մեջլիսի նախագահի ներկայացուցիչների մասնակցությամբ կազմված խորհրդի կողմից<sup>235</sup> (երկուական մարդ իշխանության երեք թներից, Ի.Գ.):

Այսպիսով, Ձայն և պատկերը, լինելով անկախ մարմին, ենթակա չլինելով կառավարությանը, ըստ էության իրականացնում է Իսլամական հեղափոխության գաղափարների արտահանման ծրագիրը: Հեռուստատեսության և ռադիոյի միջոցով ամբողջ աշխարհում տարբեր լեզուներով տարածվում են Իսլամական հեղափոխության գաղափարները և Իսլամական Հանրապետության արժեհամակարգը: Առկա տեղեկատվության համաձայն՝ այս կազմակեր-

---

<sup>235</sup> ԻԻՀ Սահմանադրություն, հոդված 175:

պության տարեկան բյուջեն 2009 թ. կազմել է 900 մլն ԱՄՆ դոլար, և այն ունեցել է 46,000 աշխատակից աշխարհի ավելի քան 20 երկրների մասնաճյուղերում<sup>236</sup>:

Իր կանոնադրության համաձայն՝ Ձայն և պատկերի քաղաքականության ընդհանուր սկզբունքները ներառում են հետևյալը.

1. «Իսլամի գերակայությունը բոլոր հեռարձակվող ծրագրերի նկատմամբ և իսլամական արժեհամակարգից դուրս ծրագրերից խուսափելը»,

2. Իսլամական հեղափոխության, ինչպես նաև Սահմանադրության ոգու գերակայությունը բոլոր ծրագրերի հանդեպ,


3. Առաջնորդի՝ որպես իսլամական իրավագետի տեսակետների իրականացում:

Առանձնակի ուշադրության է արժանի կանոնադրության 8-րդ կետը, այն է՝ «Ձայն և պատկերը պետք է ողջունի քննադատությունը», բայց բնական հարց է առաջանում՝ ինչը քննադատել, եթե օրենքով արդեն իսկ սահմանված է, որ հեռահաղորդակցությունը պետք է բխի միայն իսլամական արժեհամակարգի ոգուց: Պարզ է դառնում, որ 8-րդ կետը վերաբերում է արժեհամակարգի ոգուց շեղվելու, ծրագրերի, տեխնիկական ձևերի և գեղարվեստական մանրությունների հետ կապված թերություններին:

«Ձայն և պատկերի» հեռուստառադիոհաղորդումները սփռվում են ինչպես մայրաքաղաքում, այնպես էլ մարզերում: Ստորև ներկայացնում ենք ԻԻՀ «Ձայն և պատկերի» գծապատկերը.

---

<sup>236</sup> *Structure of Iran's State-Run TV IRIB*, 16 December 2009, <https://fas.org/irp/dni/osc/iran-tv.pdf>




Սրանից բացի, ԻԻՀ «Ձայն և պատկերն» ունի արտաքին ծառայություններ, որոնցով փաստացի իրականացվում է Իրանի պաշտոնական գաղափարախոսության տարածումը, փորձում աշխատել իրանական սփյուռքի հետ, ինչպես նաև փաստացի իրականացվում է շիայական գաղափարախոսության տարածում:

Այսպես, Sahar TV-ի գործառույթն է՝ տարածել Իսլամական հեղափոխության գաղափարախոսությունը և ներկայացնել լուրեր ադրբեջաներեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, բոսնիերեն, քրդերեն և ուրդու լեզվով<sup>238</sup>: Al-Kawthar TV-ն արաբախոս լսարանի համար է, որտեղ ներկայացվում են շիայական իսլամի մտքերը, գաղափարները և մշակույթը: 2006 թվականից ինտերնետ-կայան համարվող Qods TV-ն հիմնականում ներկայացնում է Իրանի դիր-

<sup>237</sup> Islamic Republic of Iran Broadcasting.

<sup>238</sup> *Structure of Iran's State-Run TV IRIB*, 16 December 2009, <https://fas.org/irp/dni/osc/iran-tv.pdf>

քորոշումն արաբա-իսրայելական խնդրի նկատմամբ: Մինչդեռ Al-Alam արաբալեզու ալիքը միտված է արաբական աշխարհին ներկայացնելու Իրանի տեսակետները հատկապես 2011 թ. սեպտեմբերի 11-ից հետո տեղի ունեցող զարգացումների նկատմամբ. թիրախը Մերձավոր Արևելքի և Պարսից ծոցի լսարանն է, թեպետ ալեհավաքով կարելի է միանալ աշխարհի յուրաքանչյուր վայրից: Թերևս ամենահայտնին Press TV-ն է, որն անգլերեն լրատվական ալիք է՝ ստեղծված CNN-ի և BBC-ի օրինակով<sup>239</sup>:



Հատկանշական է, որ աշխատանքներ են տարվում նաև Իրանից արտագաղթած քաղաքացիների հետ: 1997 թ. հիմնվեց Ջամե-Ջամ ցանցը, որը ներառում է IRIB 1, IRIB 2, IRIB 3 ալիքները: Նպատակն է՝ պահպանել արտասահմանում բնակվող իրանցիների իսլամական ինքնությունը: IRIB 1-ն իր ծրագրերը հեռարձակում է Եվրոպա՝ այնտեղ ապրող իրանցիների համար, IRIB 2-ը Կանադայում և ԱՄՆ-ում բնակվող իրանցիների համար է, իսկ IRIB 3-ը՝ Ասիայում և Ավստրալիայում բնակվող իրանցիների համար<sup>240</sup>: Նմանատիպ լուրջ և ծավալուն աշխատանք է իրականացվում նաև ուղիղ ցանցերով:

<sup>239</sup> *Structure of Iran's State-Run TV IRIB*, 16 December 2009, <https://fas.org/irp/dni/osc/iran-tv.pdf>

<sup>240</sup> *Structure of Iran's State-Run TV IRIB*, 16 December 2009, <https://fas.org/irp/dni/osc/iran-tv.pdf>

Ստորև ներկայացնում ենք Ձայն և պատկեր կազմակերպությանը պատկանող ալիքների ամբողջ ցանկը (պաշտոնական կայքի տվյալներով)<sup>241</sup>:

| Ներքին հեռուստատեսային ալիքներ | Միջազգային հեռուստատեսային ալիքներ | Նահանգային հեռուստատեսային ալիքներ | Մասնավոր հեռուստատեսային ալիքներ | Ռադիո-ցանցեր            |
|--------------------------------|------------------------------------|------------------------------------|----------------------------------|-------------------------|
| 1-ին ալիք                      | Արաբական ֆիլմերի ալիք              | Ատրպատական ալիք                    | Սպորտային հեռուստատեսային ալիք   | Ռադիո «Ավա»             |
| 2-րդ ալիք                      | «Ալ-քուսար» ալիք                   | Սահանդ ալիք                        | Լուրերի 2-րդ ալիք                | Ռադիո «Գոֆթեգու»        |
| 3-րդ ալիք                      | «Հաուսա» ալիք                      | Սպահան ալիք                        | «Ջամ» ալիք                       | Ռադիո «Մոսարեֆ»         |
| 4-րդ ալիք                      | «Սահար» ալիք                       | Ալբորգ ալիք                        | «Նամա» ալիք                      | Ռադիո «Դորան»           |
| 5-րդ ալիք                      |                                    | Սեբալան ալիք                       | Երիտասարդական ալիք               | Սպորտային ռադիո         |
| Լուրերի ալիք                   |                                    | Իլամ ալիք                          | «Նավա» ալիք                      | Տնտեսական լուրերի ռադիո |
| Սպորտային ալիք                 |                                    | Բուշեիր ալիք                       | «Արա» ալիք                       | Ռադիո «Իրան»            |
| «Նասիմ» ալիք                   |                                    | Ջահանբին ալիք                      | «Ջիր» ալիք                       | Ռադիո «Նեմայեշ»         |
| «Թամաշա» ալիք                  |                                    | Աբադան ալիք                        | «Այամ» ալիք                      | Ռադիո «Սաբա»            |
| «Փույա» ալիք                   |                                    | Իսդրասան ալիք                      | «Միրաս-է արյա» ալիք              | Ռադիո «Թեհրան»          |
| Ֆիլմերի ալիք                   |                                    | Աթրաք ալիք                         | «Լաբիք» ալիք                     | Ռադիո «Զիարաթ»          |
| Շոու ալիք                      |                                    | Իսալիջ-է ֆարս ալիք                 | «Քերթար» ալիք                    | Մշակութային ռադիո       |
| «Մոթանադ» ալիք                 |                                    | Իսուգեսթան ալիք                    | «Ռոյա» ալիք                      | Երիտասարդական ռադիո     |
| «Դուրան» ալիք                  |                                    | Աշրադ ալիք                         | «Ռազվին» ալիք                    | Ռադիո «Փայամ»           |
| Կրթական                        |                                    | Համավան                            | «Նեմա-է                          | Ռադիո                   |

<sup>241</sup> *Pakhsh-e zende-ye shabake-haye television* <https://telewebion.com/channels?fbclid=IwAR2dqp2y6N2gxn3IzYidXhtflNcP0Xe6ete6GXa073XqCvyevZGBvPPPL6ao>

|                    |  |                 |                            |                    |
|--------------------|--|-----------------|----------------------------|--------------------|
| ալիք               |  | ալիք            | Ղորան» ալիք                | «Թեշավաթ»          |
| Առողջապահական ալիք |  | Ֆարս ալիք       | «Թեքիէ-է սոխանոանի 1» ալիք | Առողջապահական ուղի |
| «Օֆուլ» ալիք       |  | Ղազվին ալիք     | «Թեքիէ-է սոխանոանի 2» ալիք | Ռադիո «Մոնասեբաթի» |
| «Օմիդ» ալիք        |  | Լորեսթան ալիք   |                            | Ռադիո «Թարթիլ»     |
| «Սեփեհր» ալիք      |  | Նուր ալիք       |                            | Ռադիո «Հաուսա»     |
| «Ֆարաթար» ալիք     |  | Քերման ալիք     |                            |                    |
| Ջամ 1 ալիք         |  | Ջագրուս ալիք    |                            |                    |
| Ջամ 2 ալիք         |  | Դանա ալիք       |                            |                    |
| Ջամ 3 ալիք         |  | Քիշ ալիք        |                            |                    |
|                    |  | Գուլեսթան ալիք  |                            |                    |
|                    |  | Բարան ալիք      |                            |                    |
|                    |  | Քորդեսթան ալիք  |                            |                    |
|                    |  | Յագդ ալիք       |                            |                    |
|                    |  | Թարաբեսթան ալիք |                            |                    |
|                    |  | Աֆթաբ ալիք      |                            |                    |
|                    |  | Մահաբադ ալիք    |                            |                    |
|                    |  | Համադան ալիք    |                            |                    |
|                    |  | Խավարան ալիք    |                            |                    |
|                    |  | Սեմնան ալիք     |                            |                    |

Քանի որ մեր օրերում սկսել է առաջնային տեղ զբաղեցնել համացանցը, որը, ըստ էության, գտնվում է Տեղեկատվական և կապի տեխնոլոգիաների նախարարության ենթակայության ներքո, երբեմն ի հայտ են գալիս սուր հակասություններ երկու կողմերի միջև: Այդ հակասությունները հատկապես նկատելի դարձան ինտերնետային հեռուստատեսության լիցենզիա տրամադրելու հարցում, երբ նախարարությունը փորձեց օգտվել ընդլայնված թողունակության հնարավորությունից՝ խթանելով ինտերնետ հեռուստա-

տեսությունը՝ որպես լրատվամիջոցների բազմազանության նոր միջոց: Այնուամենայնիվ, 2016-ին IRIB-ը բոլոր մասնավոր ինտերնետ հեռուստատեսային մատակարարներին ծանուցեց, որ Իրանի տեղեկատվական և կապի տեխնոլոգիաների նախարարության կողմից իրենց տրված լիցենզիաներն անվավեր են՝ պնդելով, որ միայն IRIB-ն ունի լիցենզիաներ տրամադրելու իրավասություն: Հեռարձակողն սկսել է սեփական լիցենզիաները տրամադրել 2017 թվականին<sup>242</sup>:

Երկու կառույցների միջև այս տարաձայնություններն աճի միտում ունեն՝ հաշվի առնելով թվային մեդիայի արագ զարգացումը:

### ***Իրանի էկոնոմիկայի և ֆինանսների նախարարություն – Vezârat-e Eqtesâd va Omur-e Dârâiy***

Իրանի տնտեսական և ֆինանսական գործերի նախարարության հիմնական գործառույթը կառավարության տնտեսական և ֆինանսական քաղաքականության մշակումն ու իրականացումն է, ինչպես նաև երկրում ֆինանսների կազմակերպման ոլորտում ընդհանուր կառավարումը: Այս նախարարությունը, թերևս, Իրանի ամենաերկար պատմություն ունեցող նախարարություններից մեկն է, թեպետ ժամանակ առ ժամանակ անունը վերափոխվել է: Ֆինանսների նախարարությունը 1906 թ. հիմնել է Իրանի շահ Մոզաֆար էդ-Ռինը:

Տնտեսական և ֆինանսական գործերի նախարարությունն այսօր զբաղվում է ֆինանսական շուկաների և միջազգային ֆինանսական կենտրոնների ուսումնասիրությամբ, երկրի այդ ոլորտի ռազմավարական պլանավորմամբ, ներդրումային քաղաքականությամբ, բյուջետային, հարկային, ապահովագրական, արժույթային և բանկային գործունեությամբ, խթանում է փոքր և միջին բիզնեսի զարգացումը, վերահսկում է բաժնետոմսերի և արժեթղթերի շուկան, իրականացնում է աուդիտորական գործունեություն, որոշում է

---

<sup>242</sup> *The Battle Over Internet Protocol Television (IPTV)*, “IIIP November 2016,” Small Media, December 20, 2016, <https://smallmedia.org.uk/news/iiip-november-2016>

երկիր ներմուծվող ապրանքների մաքսային վճարների արժեքը և ապրանքների ցանկը: Ապրանքների և ծառայությունների առևտրի ոլորտում քաղաքականություն մշակող կազմակերպությունների և ինստիտուտների մեծ մասը պատկանում է Տնտեսական հարցերի և ֆինանսների նախարարությանը<sup>243</sup>:

***Առողջապահության, բուժման և բժշկական կրթության նախարարություն – Vezarât-e Behdâšti-e, Darmân o Âmôzeš-e Pezeški***

Բժշկությունն Իրանում ունի հնագույն ավանդույթներ, սակայն եվրոպացիների ազդեցության շնորհիվ երկրում զարկ տրվեց ժամանակակից բժշկական ուսումնասիրություններին: Իրանի վեզիր Ամիր-Բաբիր Թաղի-խանը (1847–1851), «Դարուլ-Ֆենունե»-ն վերազինելով, այն դարձրեց նաև բժշկության ուսումնասիրության վայր: Ֆաթի Ալի շահի կառավարման շրջանում եվրոպացիները փորձեցին պայքար ծավալել Իրանում մուլեգնած ջրծաղկի դեմ, սակայն բնակչությունը նոր դեղորայքի նկատմամբ թերահավատությամբ էր լցված: Այս ծրագիրը կարողացան կյանքի կոչել միայն Իրանի թագաժառանգ Աբբաս Միրզայի ընտանիքին պատվաստելուց հետո<sup>244</sup>: Եվ տարիներ անց ջրծաղկից մահերի թիվը կտրուկ նվազման միտում գրանցեց:

Ռեզա շահ Փահլավին բարեփոխումների մի ամբողջ շարք իրականացրեց, դրանց թվում նաև առողջապահության վիճակի բարելավումը: Այդ նպատակով 1927 թվականի փետրվարի 2-ին շահը հրաման արձակեց երկրի առողջապահական հաստատությունների կենտրոնացման մասին, որի հիման վրա «...երկրի բոլոր առողջապահական հաստատությունները կենտրոնացվեցին և

---

<sup>243</sup> *The Memorandum of the Foreign Trade Regime of the Islamic Republic of Iran Ministry of Commerce*, 2009, <https://web.archive.org/web/20130310232210/http://www.irantradelaw.com/wp-content/uploads/2010/03/Irans-Foreign-Trade-Regime-Report.pdf>

<sup>244</sup> Разумный В.В., Ищенко В.Б., *Медицина в Каджарском Иране XIX века*, «Архонт» Выпуск № 6 (9). 2018 г., стр. 65–66.

սկսեցին կառավարվել Առողջապահության գլխավոր վարչության կողմից»<sup>245</sup>: Եթե 1924 թ. Իրանի 14000 քաղաքացուն բաժին էր հասնում մեկ բժիշկ, ապա 1935 թվականին այս բարեփոխումների շնորհիվ յուրաքանչյուր 4000 մարդուն էր բաժին հասնում մեկ բժիշկ: Ռեզա շահի հրամանով Մեշհեդում կառուցվեց ժամանակակից հիվանդանոց, որտեղ սկսեցին աշխատել գերմանացի բժիշկներ: Թեհրանի համալսարանին կից կառուցվեց հազար մահճակալով հիվանդանոց: Ռեզա շահի նախաձեռնությամբ հիմնվեցին բարեգործական Առյուծ և Արև (Շիր-օ-Խորշիդ/ Իրանական Կարմիր խաչ) կազմակերպությունը, Մոր և մանկան առողջության պահպանման կենտրոնը, սակայն, այս ամենով հանդերձ, առողջապահական կարիք ունեցող բնակչության 0.2%-ը կարող էր ապավինել բժշկական օգնության ծառայություններին, որոնք հիմնականում կենտրոնացած էին Թեհրանում: Գյուղերում բնակվողներն առողջության հետ կապված հարցերով հիմնականում դիմում էին հեքիմներին<sup>246</sup>:

Առողջապահության բնագավառում Ռեզա շահի քաղաքականությունը շարունակվեց նրա որդու՝ Մուհամմադ Ռեզա շահ Փահլավիի օրոք: 1941 թ. հոկտեմբերի 30-ին կառույցը վերանվանվեց «Առողջապահության նախարարություն»: 1976 թ. առողջապահության, սոցիալական ապահովության, բժշկական և սոցիալական ծառայությունների ապահովման, ընտանիքի պլանավորման սկզբունքները ևս դրվեցին այս նախարարության վրա, ուստի նախարարությունը կրկին վերանվանվեց «Առողջապահության և բարեկեցության նախարարություն»<sup>247</sup>:

---

<sup>245</sup> **Verulava, Tengiz.** 2006. *Health Care System in the Islamic Republic of Iran.* Insurance, Health Policy & Management, [https://www.researchgate.net/publication/270646645\\_Health\\_Care\\_System\\_in\\_the\\_Islamic\\_Republic\\_of\\_Iran](https://www.researchgate.net/publication/270646645_Health_Care_System_in_the_Islamic_Republic_of_Iran)

<sup>246</sup> **Е.А. Дорошенко,** *Шиитское духовенство в двух революциях: 1905–1911 и 1978–1979 гг.,* М, 1998, стр. 136–137.

<sup>247</sup> **Verulava, Tengiz.** 2006. *Health Care System in the Islamic Republic of Iran.* Insurance, Health Policy & Management, [https://www.researchgate.net/publication/270646645\\_Health\\_Care\\_System\\_in\\_the\\_Islamic\\_Republic\\_of\\_Iran](https://www.researchgate.net/publication/270646645_Health_Care_System_in_the_Islamic_Republic_of_Iran)

Պետք է արձանագրել, որ Ռեզա շահի, այնուհետև՝ Մուհամմադ Ռեզա շահ Փահլավիի կառավարման տարիներին իրականացրած հետևողական աշխատանքի, պարտադիր պատվաստումների շնորհիվ մահացությունների թիվը կրճատվեց, իսկ կյանքի տևողությունը երկարեց: Մուհամմադ Ռեզա Փահլավին 1949 թ. հրաման արձակեց, որով երկրի քաղաքացիները պարտադիր պետք է պատվաստվեին մալարիա հիվանդության դեմ. նրա այս հրամանը վերաճեց առողջապահական իրական մի արշավի, որի շնորհիվ երկրում էականորեն նվազեց այս հիվանդությունից մահացությունների թիվը: 1960-ական թվականներին Սալիտակ հեղափոխության շրջանակներում Մուհամմադ Ռեզա Փահլավին ստեղծեց Առողջապահության կորպուսներ, որպեսզի լուծի երկրում ծանացած առողջապահական խնդիրները: Բացվեցին մի շարք բժշկական կենտրոններ, որի արդյունքում 1976 թ. Իրանի 2000 բնակչին արդեն հասնում էր մեկ բժիշկ, հիվանդանոցային մահճակալների թիվը յուրաքանչյուր 1000 քաղաքացու հաշվարկով հասնում էր 1,5 մահճակալի: Առողջապահությունն զգալիորեն ավելի հասանելի էր դարձել հասարակության համար<sup>248</sup>:

Այս ամենով հանդերձ, առողջապահական հիմնարկներն ամբողջովին չէին կարողանում լուծել երկրում առկա առողջապահական խնդիրները, որի հիմնական պատճառներն էին՝ Իրանի դեմոգրաֆիական աճը և ոչ բավարար քանակի բժշկական անձնակազմը: Այսպիսով, 1977 թվականին Իրանի բնակչության 65%-ը դեռ զրկված էր բժշկական օգնություն ստանալու հնարավորությունից: Ոչ բոլոր երեխաներն էին պատվաստում ստանում: Հետևաբար, իրանական գյուղերում տարածված էին մանկական այնպիսի վարակիչ հիվանդություններ, ինչպիսիք էին կարմրուկը, դիֆթերիան, պոլիոմիելիտը, տուբերկուլյոզը<sup>249</sup>:

---

<sup>248</sup> **А. Ходунов**, *Демографическая модернизация Ирана (вторая половина XX – начало XXI века*, Демографическое Обозрение, 2017. ТОМ 4, No 2, стр. 68.

<sup>249</sup> **А. Ходунов**, *Демографическая модернизация Ирана (вторая половина XX – начало XXI века*, Демографическое Обозрение, 2017, том 4, No 2, стр. 70.

Իսլամական հեղափոխությունից հետո՝ 1979 թ. փետրվարի 17-ին, Իրանի առողջապահության նախարարության հիմքի վրա ստեղծվեց Առողջապահության և բժշկական կրթության նախարարությունը: Այսօր այդ կառույցն իրականացնում է առողջապահության պետական քաղաքականությունը, բժշկական պարտադիր ապահովագրություն, բժշկական օգտագործման համար նախատեսված դեղամիջոցների շրջանառություն, բուժօգնություն, վերականգնողական գործընթացի, բժշկական փորձաքննություն, սանիտարահամաճարակային խնդիրների լուծում, ինչպես նաև բժշկական բուհական և հետբուհական կրթության մատուցում: Նախարարությունը ոչ միայն վերահսկում է երկրի բուժհաստատությունները, այլև պատասխանատու է երկրում գործող բժշկական համալսարաններում բարձրակարգ կրթություն մատուցելու համար:

#### **Առողջության առաջնային պահպանման հաստատությունները (2001 թ.)<sup>250</sup>**

| <b>Առողջապահական հաստատության տեսակը</b> | <b>Քանակը</b> |
|------------------------------------------|---------------|
| Գյուղական ամբուլատորիա                   | 16278         |
| Գյուղական առողջապահական կենտրոն          | 2361          |
| Քաղաքային առողջապահական կենտրոն          | 2261          |
| Բուժկետ                                  | 1176          |

#### **Հիվանդանոցների և հիվանդանոցային մահճակալների քանակը<sup>251</sup>**

|                         | 1988  | 1995  | 2003   |
|-------------------------|-------|-------|--------|
| Հիվանդանոցներ           | 525   | 609   | 730    |
| Հիվանդանոցային մահճակալ | 77805 | 96402 | 110797 |

<sup>250</sup> **Verulava, Tengiz.** 2006. *Health Care System in the Islamic Republic of Iran.* Insurance, Health Policy & Management, p. 7. [https://www.researchgate.net/publication/270646645\\_Health\\_Care\\_System\\_in\\_the\\_Islamic\\_Republic\\_of\\_Iran](https://www.researchgate.net/publication/270646645_Health_Care_System_in_the_Islamic_Republic_of_Iran)

<sup>251</sup> **Verulava, Tengiz.** 2006. *Health Care System in the Islamic Republic of Iran.* Insurance, Health Policy & Management, p. 10. [https://www.researchgate.net/publication/270646645\\_Health\\_Care\\_System\\_in\\_the\\_Islamic\\_Republic\\_of\\_Iran](https://www.researchgate.net/publication/270646645_Health_Care_System_in_the_Islamic_Republic_of_Iran)

Մինչև Իսլամական հեղափոխությունը Իրանում գործում էր յոթ բժշկական, երեք ատամնաբուժական և երեք դեղագործական համալսարան: Վերջին երեք տասնամյակում դրանց թիվն էականորեն աճել է: 1980-ականներին հիմնադրվեց ևս 10 համալսարան: Այնուամենայնիվ, կրթական հաստատությունների աճն ու զարգացումը հասան իրենց գագաթնակետին Առողջապահության և բժշկական կրթության նախարարության ստեղծմամբ: 1994 թվականի դրությամբ բժշկական կրթության ոլորտում պաշտոնապես ստեղծվել էր 34 բժշկական, 13 ատամնաբուժական և 9 դեղագործական բուհ: Զուգահեռաբար աճել է սննդի, առողջապահության, բուժքույրական, մանկաբարձական համալսարանների թիվը<sup>252</sup>:

**Բժշկական, ատամնաբուժական և դեղագործական համալսարանների թիվը ԻԻՀ-ում վերջին 4 տասնամյակում<sup>253</sup>**

| Տարի | Բժշկություն | Ատամնաբուժություն | Դեղագործություն |
|------|-------------|-------------------|-----------------|
| 1969 | 7           | 3                 | 3               |
| 1974 | 9           | 4                 | 3               |
| 1989 | 28          | 7                 | 7               |
| 1994 | 34          | 14                | 9               |
| 1997 | 35          | 15                | 9               |
| 2008 | 36          | 15                | 11              |

Համաձայն համաշխարհային առողջապահական կազմակերպության՝ 2015 թ. զեկույցի՝ Իրանում առողջապահության ոլորտում մեկ շնչին բաժին ընկնող ընդհանուր ծախսերը 2005–2013 թվականներին 155,2 ԱՄՆ դոլարից աճել են մինչև 432,3 ԱՄՆ դոլար, որից առողջապահության ոլորտի համար պետական ընդհանուր ծախսերը 68,6 ԱՄՆ դոլարից հասել են 176,3 ԱՄՆ դոլարի<sup>254</sup>: Այս

<sup>252</sup> **F. Azizi**, *Medical Education in the Islamic Republic of Iran: Three Decades of Success*, *Iranian J Publ Health*, Vol. 38, Suppl. 1, 2009, p. 20.

<sup>253</sup> Նույն տեղում, էջ 21:

<sup>254</sup> *Health profile 2015*, Islamic Republic of Iran, p. 22, chrome-extension://efaidnbmnnnibpcajpcglclefindmkaj/https://iris.who.int/bitstream/handle/10665/253768/EMROPUB\_2016\_EN\_19265.pdf?sequence=1&isAllowed=y

ամենը խոսում է այն մասին, որ ԻԻՀ կառավարությունը հետևողական աշխատանք է իրականացնում՝ առողջապահության ոլորտը զարգացնելու համար:

Պետք է ավելացնել նաև, որ առողջապահական խնդիրների լուծումից ու բժշկական կրթություն մատուցելուց բացի, այս կառույցը պատասխանատու է նաև դեղագործության ոլորտի զարգացման համար: Առողջապահության և բժշկական կրթության նախարարությունը երկրի դեղագործության ոլորտի հիմնական շահառուն է: The Social Security Investment Co. (SSIC) ընկերությունն Իրանի խոշորագույն հոլդինգն է, որը պատկանում է նախարարությանը, ներկայումս տիրապետում և վերահսկում է դեղարտադրող 22 ընկերություն, և դրան է վերագրվում Իրանում դեղագործական արտադրանքի 40%-ը<sup>255</sup>:

Իրանի առողջապահության և բժշկական կրթության նախարարության համար իսկական մարտահրավեր դարձավ COVID-19-ը, սակայն պետք է նաև արձանագրել, որ Իրանն այն երկրներից մեկն էր, որն արտադրեց սեփական պատվաստանյութը՝ COVIran Barekat-ը, և փորձեց պայքարել ամբողջ աշխարհում մոլեգնող վիրուսի դեմ: Իսկ երկրի Առաջնորդն էլ առաջիններից մեկն էր, ով պատվաստվեց սեփական արտադրության պատվաստանյութով, ինչը ցուցադրեցին հանրային հեռուստատեսությամբ<sup>256</sup>: Ուշագրավ է, որ Իրանում հիմնականում հաջողվել է պատվաստել բնակչության մեծ մասին: Ըստ նախարարության տվյալների՝ 64,473,721 իրանցիներ ստացել են COVID-19-ի դեմ պատվաստանյութի առաջին չափաբաժինը, իսկ 57,762,530 մարդ՝ երկրորդ չափաբաժինը<sup>257</sup>:

---

<sup>255</sup> *Pharmaceuticals*, Monday, October 20, 2008, <https://web.archive.org/web/20110707183052/http://www.atiehbahar.com/Resource.aspx?n=1000012>

<sup>256</sup> *Imam Khamenei received the first dose of the Iranian Covid vaccine June 25, 2021*, <https://www.youtube.com/watch?v=laP4eGzsi3g>

<sup>257</sup> *Health Ministry's Updates on COVID-19 – May 19, 2022-05-19*, <https://irangov.ir/detail/387062>

Ուշագրավ է, որ այս գերատեսչությունն այն հազվագյուտ կառույցներից է, որը ժամանակին ունեցել է կին նախարար՝ ի դեմս Մարգիյեհ Վահիդ Դասթգերդիի՝ Մահմուդ Ահմադինեժադի երկրորդ նախագահության ժամանակաշրջանում:

Այսպիսով, ամփոփելով կարող ենք վստահաբար նշել, որ ԻԻՀ կառավարությունը մեծ ջանքեր է գործադրում առողջապահության ոլորտը զարգացնելու ուղղությամբ: Այս ոլորտում իրականացվում են բազմաթիվ փորձարկումներ, սկսած քաղցկեղի դեմ պայքարելու համար իզոտոպների, սեփական արտադրության տարատեսակ դեղորայքի ստեղծումից, վերջացրած անգամ կենդանիների կլոնավորման ծրագրերով, ինչը վկայում է գիտատեխնիկական ոլորտում շարունակական նպատակային աճի մասին, այն էլ Իրանի նկատմամբ տարբեր սահմանափակումների ֆոնին: Այսօր Իրանը տարածաշրջանում փորձում է զարգացնել նաև առողջապահական տուրիզմը, որից հիմնականում օգտվում են իսլամական երկրների բյուջետային բուժառու-տուրիստները:

***Գիտության, հետազոտությունների և տեխնոլոգիաների նախարարություն – Vezārate 'Olum, Tahqiqāt va Fanāvāri***

Գիտության և տեխնոլոգիայի զարգացումը շարունակական գործընթաց է, և Իրանում, ըստ էության, ճիշտ հիմքեր են դրվել այս ոլորտի զարգացման համար: Եթե հարյուր տարի առաջ Ռեզա շահի գլխավոր խնդիրը բնակչության գրագիտության մակարդակի բարձրացումն էր, ապա նրա որդու խնդիրն էր՝ ոչ միայն բարձր մակարդակի վրա պահել համընդհանուր գրագիտության աստիճանը, այլև զարկ տալ գիտությանը, օգնել Իրանի գիտնականներին՝ հաղորդակից լինել համաշխարհային գիտատեխնիկական զարգացումներին: Ինչպես վերևում նշել ենք, Մուհամմադ Ռեզա շահը 1960-ականների վերջերին որոշում կայացրեց Իրանի կրթական համակարգում մեծ տեղ հատկացնելու ճշգրիտ գիտություններին, որը տարիներ անց տվեց իր պտուղները: Իսլամական հեղափոխությունից հետո ևս երկրում բավական մեծ ուշադրություն է դարձվել գի-

տության ու տեխնոլոգիաների զարգացմանը: Համաշխարհային գիտության զարգացման ոլորտում Իրանն այսօր ունի իր ուրույն տեղն ու դերը: Ուշագրավ է, որ թեպետ Իրանը գտնվում էր բավականին խիստ պատժամիջոցների ներքո, սակայն դա չի խոչընդոտել այս ողջ ընթացքում իրանցի և արևմտյան գիտնականների համագործակցությունը: 2008–2014 թթ. Իրանի գիտնականները հիմնականում համագործակցել են ԱՄՆ-ի, Կանադայի, Մեծ Բրիտանիայի և Գերմանիայի գիտնականների հետ, համահեղինակությամբ տպագրել գիտական հոդվածներ: Ի դեպ, ամենից շատ նրանք տպագրվել են ճարտարագիտության և քիմիայի ոլորտներում<sup>258</sup>: Վերը նշված բոլոր գործողությունների արդյունքում 2012 թ. Իրանը ճանաչվեց գիտության մեջ արագ աճ գրանցող երկրներից մեկը՝ աշխարհում զբաղեցնելով 17-րդ տեղը գիտական արտադրությամբ զբաղվողների ինդեքսում<sup>259</sup>: 2021 թ. Իրանն այդ հորիզոնականը բարելավեց՝ զբաղեցնելով 16-րդ տեղը: Նանոտեխնոլոգիաների արտադրության առումով, ըստ իրանական մամուլի, երկիրը 4-րդ տեղն է զբաղեցնում աշխարհում, բիոտեխնոլոգիայի և օդատիեզերական արդյունաբերության առումով աշխարհում զբաղեցնում է համապատասխանաբար 7-րդ և 9-րդ հորիզոնականները<sup>260</sup>:

Իրանն այսօր էլ բյուջեից մեծ գումարներ է հատկացնում, որպեսզի է՛լ ավելի զարգացնի կրթության և գիտության մակարդակը: Եթե 2013 թ. կրթության ոլորտի պետական ծախսերը կազմել էին ՀՆԱ-ի 3,7%-ը, ապա գիտության զարգացման նպատակների սյունակում 2025 թ. այն պետք է կազմի ՀՆԱ-ի 7 %-ը<sup>261</sup>:

---

<sup>258</sup> **Киумарс Аштариан**, *Косвенным образом международные санкции принесли некоторые преимущества науке, технологиям и инновациям в Иране*, стр. 389–390, [https://en.unesco.org/sites/default/files/usr15\\_iran\\_ru.pdf](https://en.unesco.org/sites/default/files/usr15_iran_ru.pdf)

<sup>259</sup> *Iranian science shows world's fastest growth: ranks 17<sup>th</sup> in science production in 2012*, <https://www.ncbi.nlm.nih.gov/pmc/articles/PMC3732862/>

<sup>260</sup> *Iran ranked 16<sup>th</sup> in world in science production terms*, <https://en.mehrnews.com/news/169554/Iran-ranked-16th-in-world-in-science-production-terms>

<sup>261</sup> **Киумарс Аштариан**, *Косвенным образом международные санкции принесли некоторые преимущества науке, технологиям и инновациям в Иране*, стр. 389–390, [https://en.unesco.org/sites/default/files/usr15\\_iran\\_ru.pdf](https://en.unesco.org/sites/default/files/usr15_iran_ru.pdf) 393

Ուշագրավ է, որ 2007 թ. տվյալներով Իրանի բուհերում սովորող արական սեռի 567,557 ներկայացուցիչ նախընտրել է գիտատեխնիկական ոլորտը, իսկ 2013 թ. նրանց թիվը հասել է 1,131,621-ի: 2007 թ. ինժեներիայի ոլորտում ցանկացել են ինքնադրսևորվել իգական սեռի 208,086 ներկայացուցիչ, իսկ 2013 թ. նրանց թիվը հասել է 373,415-ի: Կանայք առավելապես ակտիվ են հասարակագիտության ոլորտում: Եթե 2007 թ. այս ոլորտում կրթություն ստացել էր 823,637 կին, ապա 2013 թ. նրանց թիվը կազմել է 1,124,533: Եթե 2007 թ. հասարակագիտական ոլորտում սովորում էր 517,651 տղամարդ, ապա 2013 թ. եղել է 804,119 ուսանող, այսինքն՝ 2013 թ. արական սեռի ներկայացուցիչների թիվն ավելի պակաս էր հասարակագիտական ոլորտում, քան կանանց թիվը 2007 թ.<sup>262</sup>:

Ամփոփելով եզրահանգում ենք, որ ԻԻՀ իշխանությունները մեծ ուշադրություն են դարձնում կրթության, ինչպես նաև գիտության զարգացմանը: Դրա վառ վկայությունն են ուրանի հարստացման գծով անառարկելի հաջողությունները, հրթիռաշինության մեջ նշանակալի արդյունքները, դեղագործական ոլորտում իր ուրույն խոսքն ասելու ունակությունը: Իրանում գիտությամբ հիմնականում զբաղվում են Իրանի տարբեր բուհերում, կան առանձին լաբորատորիաներ, հումանիտար ոլորտի հետազոտական և ուղեղային կենտրոններ: Իրանում այսօր գործում է Գիտությունների ակադեմիան, որը խորհրդատվական մարմին է, և 2023 թ. դեկտեմբերին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի և Իրանի ակադեմիայի միջև կնքվեց համագործակցության հուշագիր:

### ***Աշխատանքի և սոցիալական բարեկեցության նախարարություն – Vâzart-e Te'avn-e, Kar-e vâ Refah-e Ejtema'i-ye Iran***

2011 թ. ԻԻՀ-ում միավորվեցին երեք նախարարություններ՝ Աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարությունը,

---

<sup>262</sup> **Киумарс Ашгариан**, *Косвенным образом международные санкции принесли некоторые преимущества науке, технологиям и инновациям в Иране*, Диаграма 15,3, стр. 396, [https://en.unesco.org/sites/default/files/usr15\\_iran\\_ru.pdf](https://en.unesco.org/sites/default/files/usr15_iran_ru.pdf)

որն ստեղծվել էր դեռևս 1950-ական թվականներին, Կոռպերացիայի նախարարությունը, որը հիմնվել էր 1991-ին, և 2004 թ. ստեղծված Սոցիալական ապահովության և պաշտպանության նախարարությունը: Այս նախարարության հիմնական գործառնության շրջանակներում են գտնվում երկրի ժողովրդագրական պատկերի մշտադիտարկումը և ծնելիության խթանման ծրագրերի քաղաքականության կարգավորումը, քաղաքացիների կենսամակարդակի՝ աշխատավարձի ու կենսաթոշակի, ինչպես նաև սոցիալական ծառայությունների ոլորտում պետության որդեգրած քաղաքականության իրականացումը: Այս նախարարության գործառնությունների մեջ են մտնում նաև ձեռներեցության խթանմանը միտված ծրագրերի կազմումը և մշտադիտարկումը: Ամեն տարի այս նախարարության ջանքերով կազմակերպվում են բիզնես-ֆորումներ, որոնց նպատակն է՝ Իրանի գործարար աշխարհի դերակատարներին ծանոթացնել միմյանց հետ, ստեղծել համագործակցության նոր հնարավորություններ:

### ***Արտաքին գործերի նախարարություն – Vezārat-e Omūr-e Khārejeh***

Իրանի դիվանագիտությունն ունի հազարամյակների պատմություն, իր ավանդույթները, գրված և չգրված կանոնները: Պարսկական դիվանագիտությունն աշխարհին հայտնի է որպես լավագույններից մեկը: Սակայն որպես միասնական կառույց Իրանի արտաքին գործերի նախարարությունն ստեղծվել է 1821 թ.<sup>263</sup> լինելով Իրանի առաջին նախարարությունը: Այն կոչվել է Արտաքին գործերի կազմակերպություն<sup>263</sup>: Ինչպես և բոլոր երկրներում, Արտաքին գործերի նախարարությունը պետական գործադիր մարմին է, որն իրականացնում է երկրի կապն արտաքին աշխարհի հետ: Դրա անմիջական պարտականությունն է՝ մշակել արտաքին քաղաքականության ռազմավարություն, որը կրիսի պետության ընդհանուր

<sup>263</sup> *Vezārat-e Omūr-e Khārejeh* <https://mfa.gov.ir/>

Նպատակներից ու շահերից, ներկայացնել կառավարությանը և հաստատման պարագայում կյանքի կոչել այն:

ԻԻՀ ԱԳՆ հիմնական գործառնություն է՝ մշակել ԻԻՀ արտաքին քաղաքականությունը, առաջարկել ծառացած խնդիրների լուծման մեխանիզմներ, կազմակերպել աշխատանքներն օտարերկրյա պետությունների և միջազգային կառույցների հետ, առաջարկել դեսպանների թեկնածուներ, որոնք պետք է հաստատվեն Նախագահի կողմից: ԻԻՀ շահերն արտերկրում ներկայացվում և պաշտպանվում են դեսպանատների և ներկայացուցչությունների միջոցով:

Արտաքին գործերի նախարարը համարվում է երկրի գլխավոր բանակցողը երկրի արտաքին հարաբերությունների տարբեր առանցքային խնդիրների հարցերով: Արդյունքների մասին նա զեկուցում է Նախագահին: Նախարարը, ըստ էության, ներկայացնում է Իրանը երկկողմ և բազմակողմ բանակցություններում և ստորագրում է միջազգային պայմանագրեր: Սակայն սա չի նշանակում, որ ԻԻՀ-ում միակ փաստացի բանակցողն արտաքին գործերի նախարարն է: Առաջնորդը կարող է հանձնարարել քաղաքական կամ ռազմական ոլորտի հանրահայտ որևէ դեմքի՝ իրականացնել այս կամ այն դիվանագիտական առաքելությունը: Օրինակ, ԻՀՊԿ Ղոդս ստորաբաժանման ղեկավար գեներալ Ղասեմ Սուլեյմանին 2015 թ. եռօրյա այցով մեկնել էր ՌԴ, հանդիպել ինչպես բարձրաստիճան գինվորականների, այնպես էլ նախագահ Վ. Պուտինի հետ: Քննարկման նյութ էին դարձել Սիրիայում, Իրաքում, Եմենում, Լիբանանում տեղի ունեցող վերջին զարգացումները<sup>264</sup>: Մինչ այդ՝ առաջին այցի ժամանակ՝ հուլիսին, նա կարողացել էր համոզել ՌԴ Նախագահին և բարձրաստիճան գինվորականներին, որ Սիրիական խնդրի լուծմանը ՌԴ մասնակցությունը կարող է փո-

---

<sup>264</sup> *Bozorgmehr Sharafedin, Iranian commander Soleimani meets Putin in Moscow, December 16, 2015, [https://www.reuters.com/article/uk-mideast-crisis-iran-russia-idukkb0t21ny20151216?fbclid=iwar3jzofmuxqrw6es2faatjazi45uczihgzzlj69rk\\_e2h3gkt6fakedtaie](https://www.reuters.com/article/uk-mideast-crisis-iran-russia-idukkb0t21ny20151216?fbclid=iwar3jzofmuxqrw6es2faatjazi45uczihgzzlj69rk_e2h3gkt6fakedtaie)*

խել իրավիճակը<sup>265</sup>: Այսինքն՝ ԻՀՊԿ Ղոդս ստորաբաժանման ղեկավարը, ով ի պաշտոնե անմիջականորեն հաշվետու է Առաջնորդին, փաստացի լիազորություն ուներ հանդիպելու այլ երկրի առաջին դեմքի հետ, քննարկելու և գալու որոշակի համաձայնության: Հաջորդ դեպքը գրանցվեց 2019 թ., երբ Սիրիայի Նախագահ Բաշար ալ-Ասադը ժամանեց Թեհրան, և, իրանական մի շարք աղբյուրների պնդմամբ, այցը կրկին կազմակերպվել էր Ղասեմ Սուլեյմանիի կողմից: Ուշագրավ էր, որ հանդիպմանը մասնակցում էին Առաջնորդը, Նախագահ Ռոհանին, Սիրիայի Նախագահ Բաշար ալ-Ասադը, Ղոդս ստորաբաժանման ղեկավար Ղասեմ Սուլեյմանին, սակայն արտաքին գործերի նախարար Մուհամմադ Ջավադ Ջարիֆը չկար: Ըստ ԻՄՆԱ լրատվականի՝ Ջարիֆը չէր հրավիրվել հանդիպմանը, ինչից հետո արտգործնախարարն անմիջապես հրաժարականի դիմում էր ներկայացրել: Նա նշել էր. «Իմ հանկարծակի հրաժարականը, հուսով եմ, ահագանգող դեր կունենա, որպեսզի վերականգնվեն ԱԳՆ-ի իրական և օրինական դիրքերը միջազգային գործընթացներում»<sup>266</sup>: Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ ԻՀՀ-ում թեպետ կա արտաքին գործերի նախարար, սակայն արտաքին խնդիրներով զբաղվում են ինչպես Առաջնորդի վստահությունը վայելող գործիչները, այնպես էլ Առաջնորդի՝ արտաքին հարցերով խորհրդական Ալի Աքբար Վելայաթին: Վերջինս նախկինում եղել է արտաքին գործերի նախարար, համարվում է Իրանի ազդեցիկ դիվանագետներից մեկը, նրա հանդիպումները, ըստ էության, լինում են գաղտնի և շատ հազվադեպ են լուսաբանվում:

Կառուցվածքային առումով ԱԳՆ-ն բաժանվում է երեք խոշոր ստորաբաժանման, դրանք էլ, իրենց հերթին, առանձին վարչութ-

---

<sup>265</sup> **Laila Bassam, Tom Perry, How Iranian general plotted out Syrian assault in Moscow OCTOBER 6, 2015,** <https://www.reuters.com/article/us-mideast-crisis-syria-soleimani-insigh-idUSKCN0S02BV20151006?fbclid=IwAR0vG1prW-cwb4z6AaMUipilkBWI3DBUXvPkFMpxpdc1oLeQxCMWNljPc9Y>

<sup>266</sup> *Zarif hopes his resignation be a wake-up call*, 26 February 2019, <https://en.isna.ir/news/97120703593/Zarif-hopes-his-resignation-be-a-wake-up-call>

յունների ու բաժինների: Ստորաբաժանումները կառուցվել էին ըստ աշխարհագրական բաժանումների՝ Մերձավոր Արևելքի և Աֆրիկայի վարչություն, Եվրոպայի, Հյուսիսային և Հարավային Ամերիկաների վարչություն, Ասիախաղաղօվկիանոսյան տարածաշրջանների վարչություն: Սակայն այս ձևաչափը փոփոխության ենթարկվեց 2019 թ.: Այդուհետ աշխատանքը փոխնախարարների մակարդակով բաժանվեց արդեն ոչ թե աշխարհագրական առումով, այլ ըստ ոլորտների, օրինակ՝ քաղաքական հարաբերությունների համակարգում, տնտեսական դիվանագիտության համակարգում, հյուպատոսական, իրանական սփյուռքի և խորհրդարանի գործերի համակարգում, միջազգային իրավական հարցեր և բազմակողմ դիվանագիտություն<sup>267</sup>:

Իրանն ունի դեսպանատներ աշխարհի բազմաթիվ երկրներում, որոնց հետ ունի դիվանագիտական հարաբերություններ, ինչպես նաև գլխավոր հյուպատոսություններ: Բացի այդ, Իրանն ունի ՄԱԿ-ում մշտական ներկայացուցչություններ Նյու Յորքում, Վիեննայում և Ժնևում:

### ***Արդարադատության նախարարություն – Vezārat-e Dādgoštari***

Քանի որ Իրանի պետական համակարգում գործում է տարանջատ Դատական իշխանություն, ապա, ըստ էության, Իրանի արդարադատության նախարարության գործառույթներն առավել սահմանափակ են: Այն արդարադատության ոլորտում գործադիր քաղաքականության իրականացնողն է, ապահովում է դատախազական գործունեությունը, դատաբժշկական փորձաքննությունը, նոտարական գրանցման նկատմամբ պետական հսկողությունը, անշարժ գույքի հաշվառումը:

---

<sup>267</sup> Ministry of Foreign Affairs, IRI, [https://en.mfa.ir/portal/tabbedalbumsnew?at=photo&id=3&title=Deputies&fbclid=IwAR3REEOqLBGt9XDjtxBcYiWh0T8mWBmJNAJm6pBZRKwrM0Y8Ic7\\_SuEwz3o](https://en.mfa.ir/portal/tabbedalbumsnew?at=photo&id=3&title=Deputies&fbclid=IwAR3REEOqLBGt9XDjtxBcYiWh0T8mWBmJNAJm6pBZRKwrM0Y8Ic7_SuEwz3o)

ԻԻՀ Սահմանադրության 11-րդ գլուխն ամբողջովին նվիրված է Դատական իշխանությանը, սակայն 160-րդ հոդվածը վերաբերում է արդարադատության նախարարի գործառույթներին: Համաձայն այդ հոդվածի, արդարադատության նախարարն ընտրվում է դատական իշխանության ղեկավարի կողմից՝ Նախագահի ներկայացրած թեկնածուներից: Դատական իշխանության ղեկավարը կարող է արդարադատության նախարարին փոխանցել բոլոր ֆինանսական, վարչական իրավունքները<sup>268</sup>, այդ թվում՝ ողջ անձնակազմի աշխատանքի ընդունման կամ ազատման իրավունքը. բացառություն է դատավորների նշանակումը<sup>269</sup>: Արդարադատության նախարարի գործառույթների մեջ են մտնում իշխանության երեք ճյուղերի՝ դատական, գործադիր և օրենսդիր միջգերատեսչական կապերի պահպանումը, դատական համակարգի վերաբերյալ օրինագծերի պատրաստումը և Մեջլիսի հաստատմանը ներկայացնելը:

Ելնելով Իրանում եռյակ իշխանությունների տարանջատման սահմանադրական սկզբունքից՝ Իրանում արդարադատության նախարարությունը սահմանափակ լծակ ունի դատաիրավական համակարգի վրա և կարող է իր գործունեությունն իրականացնել միայն՝ խարսխվելով Դատական իշխանության վրա:

### ***Պաշտպանության և զինված ուժերի աջակցության նախարարություն – Vezârat-e defa' va poštibâni-ye niruhâ-ye mosallah***

Պաշտպանության և զինված ուժերի աջակցության նախարարությունը մինչև 1984 թ. կոչվում էր Ազգային պաշտպանության նախարարություն: 1989 թ. Պաշտպանության և Հեղափոխության պահապանների նախարարությունները միավորվեցին մեկ նախարարության մեջ, որը վերանվանվեց Պաշտպանության և զինված ուժերի աջակցության նախարարություն: Այս նախարարությունը չի

<sup>268</sup> ԻԻՀ Սահմանադրություն, հոդված 160:

<sup>269</sup> **Гамов А.** Юридическая и судебная система Исламской Республики Иран, 12 ноября, 2003, <http://www.iimes.ru/?p=3040#more-3040>

զբաղվում դաշտային օպերատիվ հրամանատարությամբ, այլ իրականացնում է վարչական և տնտեսական գործունեություն, զբաղվում է պլանավորմամբ, ֆինանսական, նյութատեխնիկական և ռազմական անհրաժեշտ պարագաներով ապահովում է ինչպես ԻԻՀ բանակին, այնպես էլ Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսին, Տեղեկատվության նախարարությանը, Ջինված ուժերի գլխավոր շտաբին: Պատասխանատու է արտաքին հետախուզության և քաղաքացիական բնակչության ու զինված ընդդիմության շրջանում հակահետախուզության համար<sup>270</sup>: ԻԻՀ պաշտպանության նախարարության գործառույթի շրջանակներում է տարբեր երկրների զինված ուժերի նախարարությունների հետ համագործակցության կազմակերպումը, կարող է ստորագրել երկկողմ փոխըմբռնման հուշագրեր, պայմանագրեր, ինչպես նաև իրականացնել պահեստազորի ուսուցում: Նախարարության ենթակայության ներքո են գտնվում ռազմական տեխնիկայի նախագծման և արտադրության մի շարք հաստատություններ: Դրանց թվին է պատկանում **Իրանի էլեկտրոնային արդյունաբերությունը**, որն արտադրում է էլեկտրոնային սարքավորումներ՝ ռադարներ, արբանյակներ, իսկ 2015 թ. ցուցադրեց Ղազան ռադիոլոկացիոն կայանը, որը 450կմ շառավղով միաժամանակ բացահայտում է 100 թիրախ<sup>271</sup>:

**Պաշտպանական արդյունաբերության կազմակերպությունն** ընկերությունների կոնգլոմերատ է, որի գործառույթը երկրի զինված ուժերին անհրաժեշտ արտադրական և տեխնիկական կարողություններով ապահովելն է: Այս կառույցի նախատիպը ձևավորվել էր 1973 թ., երբ Արևմուտքից մեծ թվով զենք, զինամթերք ձեռքբերելուն զուգահեռ, Իրանն սկսեց սեփական որոշ զինամթեր-

---

<sup>270</sup> **Сажин В.И., Бондарь Ю.М.**, *Военная мощь Исламской Республики Иран*. М.: Издательство Московского университета, 2014, с. 33–34.

<sup>271</sup> *Разработки Электронной промышленности Ирана* <https://imp-navigator.livejournal.com/390247.html?fbclid=IwAR20gitNR-Fu10x2hSOFGZzIGPC7wxOi3hF-ERbQRNLJneKxC73nYS98R2Y>

քի արտադրությունը՝ Ռազմական արդյունաբերության կազմակերպության ջանքերով: Իսլամական հեղափոխության շրջանում այս կառույցի աշխատանքները դադարեցվեցին, սակայն վերահաս իրանա-իրաքյան պատերազմի, ինչպես նաև Իրանին զենքի մատակարարման արևմտյան էմբարգոյի հետևանքով ստեղծված ծանր իրավիճակն ստիպեց Իրանի իշխանություններին՝ վերանայել այս ծրագիրը: 1992 թ. այն սկսեց արտադրել տանկեր, զրահափոխադրիչներ, հրթիռներ, սուզանավեր և կործանիչներ<sup>272</sup>:

**Օդատիեզերական արդյունաբերության կազմակերպությունն** առանցքային դերակատարություն ունի Իրանի տիեզերական ակտիվների զարգացման և արտադրության մեջ՝ իր ենթակայության ներքո ունենալով հետազոտական կենտրոններ, գործարաններ: Այս կառույցի կարևորագույն արդյունքներից մեկը «Շահաբ» բալիստիկ հրթիռների արտադրությունն է, ինչպես նաև նորագույն ԱԹՄ-ների՝ «Շահեդ-136»-ի ստեղծումը, իսկ 2021 թ. Իրանը ցուցադրեց իր նոր՝ «Քաման» ԱԹՄ-ն:

Իրանի անօդաչու թռչող սարքերի ծրագիրը երկրի զինված ուժերի չորս ռազմավարական սյուներից մեկն է: Իրանի անօդաչու թռչող սարքերի ծրագրի զարգացման գործում մեծ դեր են ունեցել Qods Aviation Industry Co, Iran Aircraft Manufacturing Industrial Co և Shahed Aviation Industries ընկերությունները: Այս ընկերությունները նախագծել են Իրանի ամենաառաջադեմ անօդաչու թռչող սարքերը<sup>273</sup>:

**Իրանի ավիացիոն արդյունաբերության կազմակերպությունը** հիմնվել է դեռևս 1966 թ.՝ Իրանի քաղաքացիական և ռազմական ավիացիոն արդյունաբերությունը պլանավորելու, վերահսկելու և կառավարելու նպատակով: Ներկայումս կառույցը

---

<sup>272</sup> *Iran Launches Production of Stealth Sub*, [https://www.foxnews.com/story/iran-launches-production-of-stealth-sub?fbclid=IwAR2so3EX\\_ybXAMgcSwTtuGromkXEDOiZ7g4g35Jr\\_AfY4uvtdcqW\\_Bpd2L4](https://www.foxnews.com/story/iran-launches-production-of-stealth-sub?fbclid=IwAR2so3EX_ybXAMgcSwTtuGromkXEDOiZ7g4g35Jr_AfY4uvtdcqW_Bpd2L4)

<sup>273</sup> *Iran's Drone Industry: Past, Present and Future*, 2nd January 2023, <https://fairbd.net/iran-drone-industry-history/>

պատասխանատու է SAHA, HESA, PANHA և քաղաքացիական ավիացիայի ընկերությունների համար: Իրանի ավիացիոն արդյունաբերության կազմակերպությունը, ՌԴ-ի համագործակցությամբ, փորձում է արտադրել 210 ուղևորի համար նախատեսված TU-214, TU-204 ինքնաթիռներ<sup>274</sup>:

Պաշտպանության և զինված ուժերի նյութատեխնիկական ապահովման նախարարության ենթակայության տակ է գտնվում նաև **Ծովային արդյունաբերության կազմակերպությունը**, որն արտադրում է ռազմական և քաղաքացիական նշանակության նավեր, «Ղաեմ» դասի սուզանավ, «Ղադիր» դասի փոքր սուզանավ, փոքր արագընթաց մոտորային նավակներ<sup>275</sup>: Ձեռնարկել է հակա-նավային թևավոր հրթիռի նախագծման և արտադրության պլանավորումը: **Պաշտպանական նորարարությունների հետազոտությունների կազմակերպությունը** պատասխանատու է բանակի կողմից կիրառվող զարգացող տեխնոլոգիաների խթանման համար: Ըստ Ատոմային էներգիայի միջազգային գործակալության՝ այս կառույցը կապված է իրանական միջուկային ծրագրերի շրջանակում հետազոտություններ իրականացնելու հետ: **Ազգային աշխարհագրական կազմակերպությունն** անհրաժեշտության դեպքում նախարարությանը տրամադրում է ռազմական քարտեզներ, ինչպես նաև խորհրդատվություն ազգային սահմանների և աշխարհագրական ծառայությունների հետ կապված հարցերի շուրջ: Վերջին տարիներին Իրանի Ազգային աշխարհագրական կազմակերպությունը կարողացել է փոխել օդային լուսանկարչության համակարգը՝ առաջին անգամ իրականացնելով թվային լուսանկարչություն նոր համակարգերով, իրականացրել է քաղաքների, ավանների

---

<sup>274</sup> *Iran Aviation Industries Organization (IAIO)*, 7 авг. 2019 г. <https://www.globalsecurity.org/military/world/iran/iaio.htm>

<sup>275</sup> *Marine Industries Group, Iran Watch*, <https://www.iranwatch.org/iranian-entities/marine-industries-group>

րի, երկրի սահմանների լուսանկարում, և մի շարք քարտեզներ արդեն հասանելի են օգտատերերի համար<sup>276</sup>:

### ***Ճանապարհների և քաղաքաշինության նախարարություն – Vezārat-e Rāh-e va Shahrsāzi***

Այս նախարարությունը Իրանի այն գերատեսչություններից է, որոնք պատմական ճանապարհ են անցել: 1877 թ. Նասր-էդ-Դին շահի հրամանով առաջին անգամ ստեղծվեց Հանրային աշխատանքների նախարարությունը, որի գործառույթների շրջանակում էր գտնվում ճանապարհների ու կամուրջների կառուցումը: 1936 թ. այն վերանվանվեց Ճանապարհների նախարարության, իսկ 1974 թ.՝ Մուհամմադ Ռեզա շահ Փահլավիի օրոք, այն վերանվանվեց Ճանապարհների և տրանսպորտի նախարարություն՝ ներառելով նաև հանրային տրանսպորտի հետ կապված խնդիրների լուծման գործառույթը: 2011 թ. այս նախարարությունը միավորվեց Քաղաքաշինության նախարարության հետ և վերանվանվեց «Ճանապարհների և քաղաքաշինության նախարարություն»<sup>277</sup>, որի անմիջական պարտականություններից են ինչպես ճանապարհների, կամուրջների կառուցումն ու վերանորոգումը, այնպես էլ քաղաքաշինության զարգացմանը միտված ծրագրերի իրականացումը: Այս կառույցը վերահսկում է երկրի ինչպես ավտոմոբիլային, երկաթուղային ուղիները, ներառյալ մետրոպոլիտենը, այնպես էլ օդանավակայանները, նավահանգիստները: 2022 թ. փետրվարի 8-ին նախարարությունը խոսեց 30 ծրագրերի մեկնարկի մասին, որոնք ներառում էին Իմամ Խոմեյնի, Բուշեիր, Գենավե, Չաբահար, Շահիդ Ռաջայի և Էնզելի նավահանգիստների արդիականացումը, որի համար ներդրվել էր 269,4 մլն դոլար: Միևնույն ժամանակ ներդրվել էր

---

<sup>276</sup> *National Report of Geomatics in Islamic Republic of Iran*, [https://unstats.un.org/unsd/geoinfo/rcc/docs/rccap19/crp/E\\_Conf.102\\_CRP2\\_Iranian%20NationalReport\\_Final.pdf](https://unstats.un.org/unsd/geoinfo/rcc/docs/rccap19/crp/E_Conf.102_CRP2_Iranian%20NationalReport_Final.pdf)

<sup>277</sup> *Ministry of Roads and Urban Development, The History*, <https://web.archive.org/web/20170205103404/http://mrud.ir/en/History>

78,930 մլն դոլար՝ տրանսպորտային տեխնիկայի արդիականացման, սահմանային տերմինալի զարգացման, ճանապարհային ու տիկանության կետերի կառուցման, ասֆալտապատ ճանապարհների բարեկարգման, ինչպես նաև սպառողների սպասարկման համալիրների կառուցման համար: 109,105 մլն դոլար ներդրվել էր ընդհանուր երկաթգծերի ցանցի պարկի վերաթարմացման, երկաթուղային նշանների և կայարանների արդիականացման համար: Ավիացիայի ոլորտի զարգացման համար ներդրվել էր 12,2 մլն ԱՄՆ դոլար՝ Բանդար Աբբաս, Ջահեդան, Սարավան և Խորրամաբադ օդանավակայանների արդիականացման և թռիչքային շարժակազմերը բարեկարգելու համար: 3,06 միլիոն ԱՄՆ դոլար էլ ներդրվել էր Գիլան նահանգի օդերևութաբանական կայանների գործարկման համար<sup>278</sup>:

Ըստ էության, այս նախարարության անմիջական մասնակցությամբ պետք է գործարկվի Հյուսիս-Հարավ ճանապարհը, որն այսօր խիստ ռազմավարական նշանակություն ունի տարածաշրջանում ուժերի վերադասավորման համար: Միջազգային տրանսպորտային այս ճանապարհը պետք է Հնդկաստանը, Իրանը և Ռուսաստանը կապի միմյանց: Այս նախարարությունը փաստացի պետք է զբաղվի նաև Մետաքսի ճանապարհի իրանական հատվածի կենսագործունեությամբ: Եվ, նախարարի խոսքով, առաջիկա չորս տարիների ընթացքում երկրում ամբողջովին վերափոխվելու է տրանսպորտային համակարգը<sup>279</sup>:

Նախարարության երկրորդ և ոչ պակաս կարևոր գործառույթն է՝ երկրում բնակարանաշինության և քաղաքաշինական ծրագրերի իրականացումը, որը բազմամիլիոնանոց երկրի և հատ-

---

<sup>278</sup> *Министерство транспорта и градостроительства Ирана открывает 500 проектов по всей стране*, 08.02.2022, [https://iran.ru/news/economics/119823/Ministerstvo\\_transporta\\_i\\_gradostroitelstva\\_Irana\\_otkryvaet\\_500\\_proektov\\_po\\_vsey\\_st\\_rane](https://iran.ru/news/economics/119823/Ministerstvo_transporta_i_gradostroitelstva_Irana_otkryvaet_500_proektov_po_vsey_st_rane)

<sup>279</sup> *Министр дорог Ирана заявил о трансформации транспорта страны в ближайшие 4 года*, 4 окт. 2022 г., <https://shorturl.at/cpAD0>

կապես երիտասարդների թվի գերակայության պայմաններում բավականին լուրջ խնդիրների հաղթահարման ծրագրեր է ենթադրում: Հարկ է հիշեցնել նաև, որ բնակարանաշինության առավել մատչելի ծրագրերի իրականացման փորձեր արվեցին ԻԻՀ Նախագահ Մահմուդ Ահմադինեժադի կառավարման տարիներին՝ մատչելի սոցիալական բնակարաններով ապահովելով երիտասարդ ընտանիքներին:

### ***Մշակույթի և իսլամական ուղղորդման նախարարություն – Vâzart-e Farheng-e vâ Ershad-e Eslâmi***

Այս նախարարությունը հիմնվել է Իսլամական հեղափոխությունից հետո՝ 1987 թ.: Այս կառույցի ուղադրության կենտրոնում են գտնվում երկրի մշակույթի, արվեստի, պատմամշակութային ժառանգության, կինեմատոգրաֆիայի հետ կապված խնդիրները, միջազգային մշակութային և տեղեկատվական համագործակցությունը: Այս նախարարության նպատակն է՝ աջակցությունը հասարակության հոգեմտավոր աճին, հասարակության պաշտպանությունը օտար մշակույթների ազդեցությունից, Իսլամական մշակույթի և արվեստի զարգացումը և տարածումը, Իրանի իսլամական հեղափոխության նպատակների ու խնդիրների պարզաբանումը և իսլամական արժեքների քարոզումը, աշխարհի մահմեդականների միասնականությանը նպաստելը և այլն<sup>280</sup>: Նախարարության անմիջական գործառույթի մաս է կազմում Իրանի քաղաքացիների՝ ազգային մշակույթին առավել հաղորդակից լինելուն նպաստելը: Այս առումով ուղագրավ էր Իրանի Նախագահ Ռայիսիի կոչը ԻԻՀ մշակույթի և իսլամական ուղղորդման նախարարին՝ խնդրելով հեշտացնել գրքերի հասանելիությունը յուրաքանչյուր քաղաքացու հա-

---

<sup>280</sup> Ministry of Culture and Islamic Guidance, Introduction of Ministry, 3 Mar 2013 – 31 Aug 2022, <https://web.archive.org/web/20170120205936/> ; <http://www.farhang.gov.ir/en/profileofministry/responsibilities>

մար, քանի որ շատ կարդացող քաղաքացին ավելի մոտ է սեփական մշակույթին: Այսօր Իրանում գրանցված է 3800 գրադարան<sup>281</sup>:

Այս նախարարությունը նաև զբաղվում է Իրանի քաղաքացիների Հաջի և տարբեր երկրներ ամենամյա ուխտագնացությունների կազմակերպման գործընթացով:

Իսլամական մշակույթի և ուղղորդման նախարարության ջանքերով տարբեր երկրներում բացվում են նաև մշակութային կենտրոններ. 2023 թ. փետրվարի 6-ին այդպիսի մի կենտրոն էլ բացվեց Մոսկվայում, որտեղ, բացի մշակութային ոլորտի համագործակցությունից, մեծապես համագործակցելու են նաև լրատվամիջոցները<sup>282</sup>:

Իրականում այս նախարարությունը կարող է կոչվել «Իրանի փափուկ ուժի իրականացման նախարարություն»: Այն, ըստ էության, աշխարհի տարբեր երկրներին ցույց է տալիս իրանական հարուստ մշակույթը, փորձում համագործակցության եզրեր գտնել՝ գրքի հրատարակությունից մինչև ֆիլմարտադրություն: Ուշագրավ է, որ 2022 թ. նոյեմբերին Տաջիկստանում տեղի ունեցավ իրանական մշակութային միամսյակ, որին նախորդել էին Իրանում Տաջիկստանի մշակութային մեկշաբաթյա միջոցառումները: Տաջիկստանում Իրանի Իսլամական Հանրապետության մշակույթի և իսլամական ուղղորդման նախարար Մուհամմադ Մեհդի Էսմայիլին նշել էր, որ «մշակութային, տնտեսական և քաղաքական ոլորտներում հարևան երկրների հետ փոխգործակցությունը Իրանի կառավարության օրակարգում է»: Իրանցի նախարարն ընդգծել էր, որ «Իրանի նպատակն է՝ շարժվել Տաջիկստանի հետ մշակութային, պատմական, ժառանգական և ինքնության ընդհանրությունների

---

<sup>281</sup> *Министр культуры: Иран возглавляет мусульманские государства по количеству библиотек*, 15 нояб. 2022, <https://shorturl.at/ghA4>

<sup>282</sup> *В Тегеране и Москве откроются культурные центры*, 6 февр. 2023, <https://shorturl.at/atuU6>

ուղղությամբ, և այդ ճանապարհը կբերի հարաբերությունների անընդհատ ընդլայնման»<sup>283</sup> :

Ի դեպ, նշենք, որ սույն նախարարությունն ունի կրոնական փոքրամասնությունների գծով գերատեսչություն, որը, ի թիվս այլ հարցերի, զբաղվում է նաև հայ համայնքի մշակութային հարցերով:

### ***Ներքին գործերի նախարարություն – Vâzarat-e Keshvar***


Իրանի ներքին գործերի նախարարությունը ունի երկարատև գործունեության պատմություն: 1901 թ. առաջին անգամ Պարսկաստանում հիմնադրվեց կառույց, որը պետք է հետևեր երկրում տեղի ունեցող ներքին խնդիրներին: Ռեզա շահի շրջանում, երբ մտցվեց ազգանուն ունենալու պարտադիր պահանջը, արձանագրվեցին մարդկանց ծնունդն ու մահը, ներդրվեց անձնագրային համակարգը, ինչը մեծացրեց բնակչության նկատմամբ ոստիկանական համակարգի հսկողության հնարավորությունները:

ԻԻՀ ներքին գործերի նախարարությունը գործադիր իշխանության ճյուղերից մեկն է, որի հիմնական գործառույթն է՝ վերահսկել երկրի ներսում տեղի ունեցող գործընթացները, ապահովել երկրի ներքին անվտանգությունը, իրականացնել հասարակական կարգի պաշտպանություն ողջ երկրում, համակարգել պետական անվտանգության, իրավապահ մարմինների և ոազմական ուժերի միջև գործողությունները: Այս կառույցը կազմակերպում է հանրապետական և տեղական ընտրությունները, անմիջականորեն իրականացնում է իրավակարգավորման մշակումներ և ունի դրանց իրականացման գործառույթներ, աշխատանքներ է իրականացնում միգրացիայի բնագավառում պետական քաղաքականության մշակման և իրականացման ոլորտում: Ներքին գործերի նախարարու-

---

<sup>283</sup> Dushanbe (IP) – Iran’s Minister of Culture and Islamic Guidance said that interaction with neighboring countries in cultural, economic, and political sectors is on the agenda of the Iranian government <https://iranpress.com/content/69118/interaction-with-neighbors-one-pillar-iran-foreign-policy-minister>

յան ճյուղավորումներն առավել մանրամասն տե՛ս ստորև բերված գծապատկերում<sup>284</sup>:



<sup>284</sup> Report of Achievements and Performance of the Ministry of the Interior  
<https://web.archive.org/web/20160420033049/http://www.moi.ir/portal/File/ShowFile.aspx?ID=eb9523e0-0334-450f-9945-7eb2455689f5>

## **Նավթի նախարարություն – Vezârat-e Naft**

Իրանում առաջին անգամ նավթ հայտնաբերվել է 1908 թվականի սկզբներին Մասջեդե-Սուլեյմանում՝ Վիլյամ դ'Արսիի գլխավորությամբ: Մեծ Բրիտանիայի կառավարությունը խորամանկությամբ կարողացավ ձեռք բերել դ'Արսիին պատկանող կոնցեսիոն իրավունքը, որի շնորհիվ էլ հետագայում ձևավորվեց Անգլո-պարսկական նավթային ընկերությունը (1935 թվականից՝ Անգլո-իրանական նավթային ընկերություն)<sup>285</sup>: Նավթի հորատման, մշակման, գտման աշխատանքներն իրականացվեցին Անգլո-իրանական նավթային ընկերության միջոցով: 1951 թ. մարտի 12-ին հիմնվեց Իրանի ազգային նավթային ընկերությունը, որի հիմքի վրա էլ 1980 թ. հիմնվեց Նավթի նախարարությունը:

Իրանը 2021 թվականին OPEC շրջանակներում հում նավթ արտադրող հինգերորդ խոշորագույն պետությունն էր, իսկ 2020 թվականին՝ բնական գազի երրորդ խոշորագույն արտադրողն աշխարհում: 2021 թ. տվյալներով Իրանը ունի նավթի և բնական գազի ապացուցված պաշարների աշխարհի խոշորագույն հանքավայրերից մեկը՝ զբաղեցնելով երրորդ տեղն աշխարհում՝ նավթի, և երկրորդ տեղը՝ բնական գազի ամենամեծ պաշարներով: Չնայած իր առատ պաշարներին՝ Իրանի հում նավթի արդյունահանումը 2017 թվականից ի վեր նվազել է, քանի որ նավթարդյունաբերությունը տարիներ շարունակ ենթարկվել է միջազգային պատժամիջոցների<sup>286</sup>:

Իրանի Նավթի նախարարության կառուցվածքի մաս են կազմում գլխամասային գրասենյակը և չորս հիմնական դուստր ձեռնարկությունները՝ Իրանի ազգային նավթային ընկերությունը (NIOC), Իրանի ազգային գազային ընկերությունը (NIGC), Իրանի նավթավե-

---

<sup>285</sup> **Գ. Իսկանդարյան**, *Իրանա-ամերիկյան հարաբերությունները 1942–1960 թթ.*, էջ 157, 158:

<sup>286</sup> *Analysis – Energy Sector Highlights*, <https://www.eia.gov/international/overview/country/IRN>

րամշակման և բաշխման ազգային ընկերությունը (NIORDC) և Իրանի ազգային նավթաքիմիական ընկերությունը (NPC)<sup>287</sup>:

Իրանի ազգային նավթային ընկերությունը (NIOC) փաստացի ստեղծվել է Իրանի նավթարդյունաբերության ազգայնացման շրջանում՝ 1951 թվականից, և դրա հիմնական գործառույթը նավթի արդյունահանումն էր, նոր հանքերի հետախուզումը, հորատումը, նավթի և գազի արտահանման քաղաքականության մշակումը:

Իրանում նավթաքիմիական արդյունաբերությունը սկիզբ է առել 1950-ական թվականներից: 1950-ականների վերջին Իրանում ստեղծվեց քիմիական գործակալություն՝ նավթաքիմիական արդյունաբերությունը խթանելու համար: 1958 թվականին Ֆարս նահանգի Մարվդաշտ քաղաքում կառուցվեց քիմիական պարարտանյութերի գործարան: Քանի որ նավթաքիմիական արդյունաբերության աճը պահանջում էր ավելի լայն մասնագիտացված գործունեություն և հետագա համակարգում նավթի և գազի արդյունաբերության հետ, անհրաժեշտ էր ստեղծել կազմակերպություն՝ նավթաքիմիական արդյունաբերությունը զարգացնելու և ղեկավարելու համար: Այդ իսկ պատճառով 1963 թվականին ստեղծվեց Ազգային նավթաքիմիական ընկերությունը (NPC)՝ Իրանի ազգային նավթային ընկերության (NIOC) ենթակայության տակ: Բոլոր արտադրական ընկերությունների սեփականաշնորհումից հետո Ազգային նավթաքիմիական ընկերությունը, հենվելով ավելի քան հինգ տասնամյակների փորձի վրա և օգտվելով մարդկային ու մտավոր կապիտալից, զբաղվում է մակրոպլանավորմամբ, քաղաքականության մշակմամբ, նավթաքիմիական արդյունաբերության կայուն զարգացմանն աջակցությամբ<sup>288</sup>:

---

<sup>287</sup> Ministry of Petroleum, <https://en.mop.ir/en-US/en.mop/5746/page/Ministry-Of-Petroleum>

<sup>288</sup> National Iranian Petrochemical Company, <https://en.mop.ir/en-US/en.mop/5755/page/National-Iranian-Petrochemical-Company>

Իրանի նավթի վերամշակման և բաշխման ազգային ընկերությունը (NIORDC) ստեղծվել է 1992 թ.: Այս կառույցի հիմնական գործառնությունն է նավթի արդյունահանումը, փոխադրումը և բաշխումը:

Իրանի ազգային գազային ընկերությունը (NIGC) հիմնվել է 1965 թվականին՝ 25 միլիարդ իրանական ռիալ սկզբնական կապիտալով: Այդ շրջանից սկսած՝ Իրանի գազի արտահանումը և վաճառքը նպաստեցին երկրի զարգացմանը, այն ընդլայնեց իր հնարավորությունները, ձեռք բերվեցին նորագույն սարքավորումներ, և պատրաստվեցին ու վերապատրաստվեցին սեփական մասնագետները: Այսօր Իրանի ազգային գազային ընկերությունը ի վիճակի է ինքնուրույն լուծելու գազի հետ կապված բոլոր գործընթացները՝ միջազգային ճանաչված չափանիշներին համապատասխան<sup>289</sup>: Իրանի ազգային գազային ընկերությունը (NIGC) զբաղվում է գազի գտման, տեղափոխման և բնակչությանը, արդյունաբերական գործարաններին գազ մատակարարելու աշխատանքներով: Իրանի գազի արտահանման ազգային ընկերությունը (NIGEC) ստեղծվել է 2003 թվականին, որպեսզի վերահսկի երկրի գազային բոլոր նախագծերը:

### ***Էներգետիկայի նախարարություն – Vezârat-e Niru***

Իրանի էներգետիկայի նախարարությունը ևս նոր կառույց չէ. այն հիմնվել է դեռևս 1936 թ. Ռեզա շահի օրոք՝ «Էլեկտրաէներգիայի պետական ձեռնարկություն» անվամբ: Կառույցի հիմնական նպատակն էր՝ մայրաքաղաք Թեհրանի տներին և փողոցներին մատակարարել էլեկտրաէներգիա: 1943 թվականի մայիսի 20-ին ընդունվեց օրենք, որի համաձայն՝ կազմակերպությանը թույլ տրվեց օգտագործել նաև ջրային ռեսուրսները՝ էլեկտրաէներգիա ստանալու նպատակով: 1960-ական թվականներին Իրանի տարբեր շրջաններում (Լար, Լաթիան, Դորոճան, Ջարրինե Ռուդ և այլն)

---

<sup>289</sup> *National Iranian Gas Company*, <https://en.mop.ir/en-US/en.mop/5753/page/National-Iranian-Gas-Company>

ջրամբարների ամբարտակների կառուցումից հետո՝ Սպիտակ հեղափոխության շրջանակներում, կազմակերպությունը 1964 թ. վերանվանվեց «Ջրի և էլեկտրաէներգիայի նախարարություն» անվամբ: Էներգետիկայի նախարարությունը պատասխանատու է ջրի, էլեկտրաէներգիայի և կոյուղաջրերի ծառայությունների մատակարարման և պահանջարկի կառավարման համար: Կազմակերպության հիմնական գործառույթների մեջ են մտնում.

- Երկրի ջրային պաշարների վերահսկումը, ջրամատակարարման ծրագրերի իրականացումը և դրանք սպառման կենտրոններ տեղափոխելը,

- քաղաքներում և արտադրական միավորներում կոյուղաջրերի հոսքի վերահսկումը,

- էլեկտրաէներգիայի փոխանցման և բաշխման ծրագրերի իրականացումը՝ մարզային էլեկտրաէներգետիկ ընկերությունների ստեղծման և էլեկտրաէներգիայի օգտագործման վերահսկման տեսքով:

Ջրի և էլեկտրաէներգիայի նախարարությունը կազմված էր Թեհրանի ջրային կազմակերպությունից, Թեհրանի էլեկտրական ընկերությունից, Անկախ ոռոգման ընկերությունից, Ջրամատակարարման գլխավոր վարչությունից, Լարի և Լաթիանի ամբարտակների պահպանության գրասենյակից և այլ կազմակերպություններից<sup>290</sup>:

1975 թ. Մեջլիսի որոշմամբ նախարարությունը վերանվանվեց «Էներգետիկայի նախարարություն»: 1970-ական թվականներին Իրանում սկսեցին ակտիվորեն աշխատանքներ իրականացնել ատոմային էներգիայի ուղղությամբ, որի արդյունքում 1978 թվականի մայիսի 10-ին էներգետիկայի նախարարությանը հանձնարարվե-

---

<sup>290</sup> *The Ministry of Energy*, <https://moe.gov.ir/%D9%88%D8%B2%D8%A7%D8%B1%D8%AA-%D9%86%D9%8A%D8%B1%D9%88/%D8%AA%D8%A7%D8%B1%D9%8A%D8%AE%DA%86%D9%87>

ցին ատոմային էլեկտրակայանների կառուցման և շահագործման աշխատանքները<sup>291</sup>:

Ատոմային էներգիայի կազմակերպության հիմնադիր օրենքի (կանոնադրության) 1-ին հոդվածը, որը հաստատվել է 1974 թվականին, սահմանում է դրա ստեղծման հիմնական նպատակը՝ ջրամշակման կայանների ստեղծում՝ ջրի աղազրկման նպատակով, միջուկային արդյունաբերության համար անհրաժեշտ հումքի արտադրություն, վերը նշված ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ գիտական, տեխնոլոգիական ենթակառուցվածքի ստեղծում, ինչպես նաև երկրի միջուկային էներգիայի հետ կապված բոլոր հարցերի համակարգում և մոնիթորինգ<sup>292</sup>:

Սակայն Իսլամական հեղափոխությունից հետո որոշվեց Էներգետիկայի նախարարությունից վերցնել ատոմային էներգիայի նկատմամբ վերահսկողությունը, և դրա համար ստեղծվեց առանձին կազմակերպություն:

Էներգետիկայի նախարարության հիմնական գործառույթներն այսօր հետևյալն են.

- մշակել պետական քաղաքականություն էներգետիկայի, ջրային ռեսուրսների բնագավառի համար,

- իրականացնել ոլորտային գիտահետազոտական աշխատանքներ, ինչպես նաև աշխատանքներ տանել գիտատեխնիկական կադրերի պատրաստման ուղղությամբ:

Վերը նշված հիմնական նպատակներն իրականացնելու համար Իրանի էներգետիկայի նախարարությունում գործում են ներքոհիշյալ հիմնական վարչությունները.

- Բյուջեի պլանավորման և ֆինանսավորման վարչություն,
- Ջրային ռեսուրսների վարչություն,

---

<sup>291</sup> Mir **M. Hosseini**, *Foundation of The Ministry of Energy*, [https://web.archive.org/web/20161222031006/http://fouman.com/Y/Get\\_Iranian\\_History\\_Today.php?artid=1334](https://web.archive.org/web/20161222031006/http://fouman.com/Y/Get_Iranian_History_Today.php?artid=1334)

<sup>292</sup> *A Brief Introduction to the Atomic Energy Organization of Iran*, <https://aeoi.org.ir/en/portal/home/?47317/%d8%b5%d9%81%d8%ad%d9%87-about-us>

- Մարդկային ռեսուրսների զարգացման և գիտական հետազոտությունների վարչություն,

- Էլեկտրաէներգիայի և էներգետիկայի զարգացման վարչություն,

- Վարչակազմի և խորհրդարանի հետ կապի վարչություն<sup>293</sup>:

Ներկայումս Էներգետիկայի նախարարության գլխամասը՝ որպես քաղաքականության մշակման, մակրոպլանավորման և մոնիթորինգի պատասխանատու, ունի նախարարի չորս տեղակալ և 22 կառուցվածքային ստորաբաժանում<sup>294</sup>:

Պետք է արձանագրել, որ ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարության և Իրանի Էներգետիկայի նախարարության միջև առկա է բավականին խոր համագործակցություն, ներառյալ մի շարք ծրագրեր. 2003 թ. կնքված պայմանագրով Պուշկինի լեռնանցքում կառուցվել է հողմակայան՝ իրանական գումարներով<sup>295</sup>, առկա է սեզոնային էլեկտրաէներգիայի փոխանակման ծրագիր, «Գազ՝ էլեկտրաէներգիայի դիմաց» ծրագիր: Նախատեսվում է կյանքի կոչել Հյուսիս-Հարավ Էներգետիկ քառակողմ կապի<sup>296</sup>, Երրորդ էլեկտրահաղորդման գծի, ինչպես նաև Մեղրիի հեկ-ի կառուցման ծրագրերը: Այս ծրագրերի կյանքի կոչմամբ հնարավոր կլինի Հայաստանը դուրս բերել էներգետիկ շրջափակումից, և Հայաստանն իր էներգիայի ավելցուկի համար կարող է գտնել նոր շուկա:

---

<sup>293</sup> Ministry of Energy, <https://moe.gov.ir/%D9%88%D8%B2%D8%A7%D8%B1%D8%AA-%D9%86%D9%8A%D8%B1%D9%88/%D8%AA%D8%A7%D8%B1%D9%8A%D8%AE%DA%86%D9%87>

<sup>294</sup> Structure and Organizational arrangement of the Ministry of Energy, <https://moe.gov.ir/About-Us/Structure>

<sup>295</sup> ԲԷՑ ՓԲԸ ներդրումային և դրամաշնորհային ծրագրերը, <http://www.minenergy.am/page/502>

<sup>296</sup> Ինչպե՞ս կարող է Երևանը պահպանել իր տեղը «Հյուսիս-Հարավ» էներգետիկ միջանցքում, <https://armeniasputnik.am/20210214/inchpes-karox-e-erevan-pahpanel-ir-tex-hyusus-harav-energetik-mijancqum-26436166.html>

***Մշակութային ժառանգության, ձեռարվեստի և զբոսաշրջության նախարարություն – Vâzart-e Miras-e Farhangi-ye, Gârdwshigâri-ye vâ Sânai'-ye Dâsti-ye Iran***

Իրանի Իսլամական հեղափոխությունից հետո ձևավորված Իսլամական հեղափոխական խորհրդի առաջարկով 1978 թվականին ստեղծվեց Իրանի մշակույթի և բարձրագույն կրթության նախարարությունը՝ Մշակույթի և արվեստի նախարարության, ինչպես նաև Գիտության և բարձրագույն կրթության նախարարության միավորմամբ: 1987 թ. մարտին Իրանի մշակույթի և բարձրագույն կրթության նախարարության հիմքի վրա ստեղծվեց Իրանի Իսլամական Հանրապետության մշակութային ժառանգության, ձեռարվեստի և զբոսաշրջության նախարարությունը: Կառույցի հիմնական գործառույթն է՝ մշակույթի, արվեստի, կինեմատոգրաֆիայի և լրատվամիջոցների բնագավառում մշակել պետական քաղաքականություն և իրականացնել իրավակարգավորման մշակման գործառույթներ:

Այս նախարարության հիմնական գործառույթն է՝ հավատքի և բարեպաշտության միջոցով նպաստել հասարակության հոգեմտավոր զարգացմանը, հասարակությանը պաշտպանել օտար մշակույթների ազդեցությունից, փոխարենը զարգացնել իսլամական մշակույթը և արվեստը և նպաստել դրա տարածմանը, բարձրացնել հասարակության իրազեկվածության մակարդակը կյանքի տարբեր ոլորտներում, իրականացնել Իրանի Իսլամական հեղափոխության նպատակների ու խնդիրների բացատրություն, ստեղծել աշխարհի մահմեդականների մերձեցման և միասնության պայմաններ<sup>297</sup>:

Նախարարության ներքո գործում են.

Կինեմատոգրաֆիայի և տեսալսողական աշխատանքների կազմակերպությունը,

---

<sup>297</sup> *Introduction of Ministry, Content strategies of Ministry of Culture and Islamic Guidance*, <https://web.archive.org/web/20170120205936/> ; <http://www.farhang.gov.ir/en/profileofministry/responsibilities>

Հանրային մշակույթի խորհուրդը,  
Տեսախաղերի ազգային հիմնադրամը,  
Հաջի և Զիյարաթի կազմակերպությունը,  
Վաքֆ-երի և բարեգործական կազմակերպությունը,  
Մշակույթի և իսլամական կապերի կազմակերպությունը,  
Մզկիթներին կից մշակութային օջախների շտաբները,  
Մշակույթի, արվեստի և կապի գիտահետազոտական ինստի-  
տուտը,

Իսլամական Հանրապետության «ԻՌՆԱ» տեղեկատվական  
գործակալությունը,

Հանրային գրադարանը,

Մշակութային ժառանգության ընկերությունը<sup>298</sup>:

Փաստացի, Իրանը «փափուկ ուժի» քաղաքականությունը  
իրականացնում է այս կառույցի միջոցով ևս:

2016 թվականի դեկտեմբերի 21-ին «Հայաստանի Հանրապե-  
տության տնտեսական զարգացման և ներդրումների նախարա-  
րության և Իրանի Իսլամական Հանրապետության մշակութային  
ժառանգության, ձեռարվեստի և զբոսաշրջության նախարարության  
միջև զբոսաշրջության բնագավառում համագործակցության մա-  
սին» փոխըմբռնման հուշագիր է ստորագրվել<sup>299</sup>: Համագործակ-  
ցության շրջանակներում իրականացվող միջոցառումներն ուղղված  
են Հայաստանի և Իրանի միջև զբոսաշրջության բնագավառում հե-  
տագա համագործակցության ամրապնդմանը, երկու երկրների  
միջև զբոսաշրջային այցելությունների աճի ապահովմանը և ՀՀ-  
ԻԻՀ տարածաշրջանային զբոսաշրջային միասնական արդյունքի  
ձևավորմանը և միջազգային շուկայում պատշաճ ներկայացմանը:

---

<sup>298</sup> Ministry of Culture and Islamic Guidance, <https://web.archive.org/web/20170108172507/http://www.farhang.gov.ir/en/affiliatedorganizations>

<sup>299</sup> ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության և ԻԻՀ  
մշակութային ժառանգության, ձեռարվեստի և զբոսաշրջության կազմակերպության  
միջև զբոսաշրջության բնագավառում համագործակցության մասին <https://www.mineconomy.am/media/1497/1937.pdf>

Մասնավորապես իրականացվել է հայկական և իրանական զբոսաշրջային օպերատորների և մասնագիտացված լրագրողների համար ճանաչողական այցերի կազմակերպում<sup>300</sup>:

2022 թ. վերոհիշյալ նախարարության և Տուրիզմի հայկական ֆեդերացիայի ջանքերով Սիսիան քաղաքում կազմակերպվեց «Նավասարդ» հայ-իրանական մշակութային խոհանոցային փառատոն, որի շրջանակներում փորձ արվեց ցույց տալու խոհանոցների նմանությունը և տարբերությունը<sup>301</sup>: Եվ այս միջոցառումը իրականացվում է արդեն ամեն տարի:

Այս կառույցի պարտականությունն է նաև՝ զարգացնել տուրիզմը: Հարկ է նշել, որ Իրանում բավականին զարգացած է ինչպես ներքին տուրիզմը, այնպես էլ արտերկրյա զբոսաշրջությունը: Իրանցիները սիրում են հանգստանալ այլ վայրերում, հատկապես իրանական մեծ տոների ժամանակ, որոնցից ամենակարևորը, թերևս, Նովրուզի՝ իրանական Նոր տարվա տոնակատարությունն է: Միևնույն ժամանակ վերջին տարիներին Իրանը ևս մեծ հետաքրքրություն է առաջացրել, և տուրիստական մեծ հոսքեր են գրանցվում դեպի այդ երկիր: «Իոնա» գործակալության տվյալներով 2022 թ. գրեթե 3 մլն զբոսաշրջիկ է այցելել Իրան, որոնց առջև բաց են եղել մոտ 800 թանգարաններ<sup>302</sup>: Իրանը վերջին տարիներին որոշ երկրների նկատմամբ հանեց պարտադիր վիզային ռեժիմը, ինչով և նպաստեց տուրիզմի զարգացմանը: Ըստ էության, տուրիզմի զարգացմամբ Իրանը ոչ միայն ստանում է եկամուտներ (2023 թ. տվյալներով՝ 2,5 մլրդ ԱՄՆ դոլարին համարժեք), այլև կազմաքանդում է Արևմուտքի կողմից Իրանին դիվականացնելու, իրանաֆոբիայի փորձերը: Քանզի զբոսաշրջիկները, մեկ անգամ

---

<sup>300</sup> Հայաստանում պատրաստվում են պատշաճ ընդունել Նովրուզի օրերին երկիր այցելող իրանցիներին <https://armenpress.am/arm/news/968452/>

<sup>301</sup> «Նավասարդ» հայ-իրանական մշակութային խոհանոցային փառատոն, <https://int-heritage.am/navasard-armenian-iranian-cultural-cuisine-festival/>

<sup>302</sup> Почти 3 млн туристов посетили Иран за последние 11 месяцев, <https://ru.irna.ir/news/84857491/Почти-3-млн-туристов-посетил-Иран-за-последние-11-месяцев>

լինելով Իրանում, վայելում են իրանական հյուրընկալությունը, ծանոթանում են բազմադարյան հարուստ իրանական մշակույթին՝ բնականաբար հետագայում կիսվելով իրենց տպավորություններով պոտենցիալ այլ զբոսաշրջիկների հետ: Այսպիսով, ընդհանուր առմամբ, նախարարության անմիջական գործառույթի մեջ է մտնում փափուկ ուժի միջոցով արտերկրում Իրանի նկատմամբ կարծրատիպերի փոփոխմանը նպաստելը:

### ***Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն – Vezârat-è Varzeš-o javânân***

Սպորտի նկատմամբ սերը Իրանում դարերի պատմություն ունի, սակայն առանձին նախարարություն հիմնվել է 2011 թ., ըստ էության, Իրանի ֆիզիկական դաստիարակության կազմակերպության և երիտասարդության ազգային կազմակերպության միավորման արդյունքում: Այսօր նախարարության հիմնական առաքելությունն է՝ իրականացնել մշակութային և կրթական ծրագրեր, երիտասարդությանն ուղղված քաղաքականություն, աշխատանքներ երիտասարդների կարողությունների զարգացման ուղղությամբ: Այստեղ կենտրոնանում են Իրանի Իսլամական հեղափոխության գաղափարախոսության վրա, նպաստում են ինչպես պրոֆեսիոնալ սպորտին, այնպես էլ առանձնակի ուշադրություն են դարձնում կանանց սպորտի զարգացմանը: Նախարարության ուշադրության կենտրոնում են գտնվում Իրանի մարդկային կապիտալի զարգացման խնդիրները:

Ստորև ներկայացնում ենք Իրանում կենտրոնական կառավարության իրականացրած փոփոխությունները սպորտի կառույցի նկատմամբ.

1935 – Ազգային սպորտային ասոցիացիայի հիմնում,

1960 – Ինտեգրում կրթության նախարարությանը,

1971 – Սպորտի և հանգստի կազմակերպության հիմնում,

1977 – Սպորտի և հանգստի կազմակերպության կազմալուծում և միավորում կրթության նախարարությանը,

1979 – Ֆիզիկական դաստիարակության կազմակերպության հիմնում, որը կառավարության մաս է կազմել,

2011 – Սպորտի և երիտասարդության նախարարության հիմնում<sup>303</sup>.

Այսօր նախարարությունը սերտ համագործակցում է Ազգային օլիմպիական կոմիտեի հետ, դրա ենթակայության տակ են գտնվում նաև մարզաձևերի ազգային ֆեդերացիաները, սպորտային ակումբները: Նախարարության գլխավոր խնդիրն է նաև՝ Իրանի հասարակությանը, հատկապես երիտասարդությանը, առողջ ապրելակերպի մաս դարձնելը, որոնք կհետևեն իրենց առողջությանը և անհրաժեշտ պահին պիտանի կլինեն երկրին:

Երիտասարդության և սպորտի նախարարությունը որոշում և իրականացնում է սպորտի զարգացման ռազմավարությունը, որն այնուհետ ներկայացվում է կառավարության վերջնական հաստատմանը, նախարարության անմիջական ուշադրության ներքո ստեղծում է սպորտային ակումբներ և կազմակերպություններ՝ որպես պետական և հասարակական մարմիններ, պլանավորում և ղեկավարում է իրանական սպորտն ազգային և միջազգային մակարդակներում: Նախարարության անմիջական պատասխանատվության տակ է գտնվում միջազգային սպորտային համաժողովներում երկիրը ներկայացնելը, սպորտի ազգային համակարգի կազմակերպումը և մարզական օրացույցի պատրաստումը: Իրանի Իսլամական Հանրապետությունում սպորտի կարևորումը նպատակ ունի ոչ միայն երիտասարդ սերնդին նախապատրաստելու իրենց դերին՝ որպես հասարակության արդյունավետ անդամներ, այլ նաև նրանց պատրաստելու իրենց հայրենիքի պաշտպանությանը<sup>304</sup>:

---

<sup>303</sup> **Morteza Dousti, Mahmood Goodarzi, Haroon Asadi, M. Khabiri, *Sport policy in Iran*, March 2013, International Journal of Sport Policy 5(1):151–158, p. 6, DOI: 10.1080/19406940.2013.766808**

<sup>304</sup> **Morteza Dousti, Mahmood Goodarzi, Haroon Asadi, M. Khabiri, *Sport policy in Iran*, March 2013, International Journal of Sport Policy 5(1):151–158, p. 5, DOI: 10.1080/19406940.2013.766808**

Այսպիսով, ինչպես ակնհայտ է դառնում, Իրանում սպորտի և երիտասարդության նախարարության վրա դրված է մեծ պատասխանատվություն, որն է՝ կրթել, դաստիարակել առողջ սերունդ, որը պետք է կրի Իսլամական արժեհամակարգը ոչ միայն երկրի դրոշը բարձրացնելով աշխարհի տարբեր սպորտային միջոցառումների ժամանակ, այլ նաև ունակ կլինի պաշտպանելու իսլամական արժեհամակարգը ընդհանրապես:

### **Իսլամական խորհրդակցական ժողով (Մեջլիս) – Majles-e Showrā-ye Eslāmī**

ԻԻՀ հաջորդ ընտրովի մարմինն է Մեջլիսը, որն առկա ինստիտուտներից ամենաերկար պատմություն ունեցողն է թերևս: Իրանում Մեջլիսը հաստատվել է դեռևս 1905–11 թթ. Սահմանադրական հեղափոխությունից հետո, սակայն շահական Իրանում մեջլիսի գոյությունը, ըստ էության, խիստ ձևական էր: Մինչև 1979 թ. իսլամական հեղափոխությունը Մեջլիսը Իրանի երկպալատ օրենսդիր իշխանության ստորին պալատն էր. Իրանում գործում էր նաև վերին պալատ՝ Սենատը, որը Իսլամական հեղափոխությունից հետո լուծարվեց, իսկ դրա գործառույթները, ըստ էության, դրված են Սահմանադրության պահապանների խորհրդի վրա:

Մեջլիսը օրենսդիր մարմին է, սակայն դրա ընդունած օրենքները անպայմանորեն վերանայվում են Սահմանադրության պահապանների խորհրդի կողմից, որպեսզի չհակասեն Սահմանադրությանը և Իսլամի նորմերին, իսկ Մեջլիսի պատգամավորները մինչև համապետական ընտրությունները զտվում են Սահմանադրության պահապանների խորհրդի կողմից, ինչպես Նախագահի թեկնածուի դեպքում:

Թեպետ ԻԻՀ Սահմանադրության 58–59-րդ հոդվածներով Մեջլիսը և հանրաքվեն համարվում են Իրանի օրենսդիր ինստիտուտները, սակայն իրականում, Իսլամական հեղափոխությունից

հետո առաջին տասնամյակում, ըստ Աբուլֆազլ Ամերիի, օրենսդրության համար ստեղծվել են բազմազան ինստիտուտներ, որոնք աններդաշնակ սահմանել են օրենքներ, ինչը Իրանի իրավական համակարգում անորոշության և երբեմն էլ խնդիրների առաջացման պատճառ է դարձել<sup>305</sup>: Այստեղ իրավագետը, կարծում ենք, ուղիղ քննադատության է ենթարկում ինչպես Սահմանադրության պահապանների խորհրդի աշխատանքները, այնպես էլ օրենսդրական իշխանության համակարգն առհասարակ:

Հատկանշական է, որ ԻԻՀ Սահմանադրության 6-րդ գլուխը, որն ամենամեծն է Սահմանադրության մեջ, ամբողջությամբ նվիրված է երկրի օրենսդիր իշխանության գործառույթներին. ըստ այդ գլխի՝ Իսլամական խորհրդի Մեջլիսը կազմավորվում է ժողովրդի ներկայացուցիչներից՝ ուղղակի փակ գաղտնի քվեարկության միջոցով<sup>306</sup>: Նրանք Մեջլիսում աշխատում են չորս տարի, և յուրաքանչյուր ընտրություն պետք է կազմակերպվի նախքան նախորդ գումարման պատգամավորների լիազորությունների դադարումը, որպեսզի երկիրը չմնա առանց Մեջլիսի<sup>307</sup>: Այսօր ԻԻՀ Մեջլիսում գործում է 290 պատգամավոր. նրանց թիվը պայմանավորված է ժողովրդագրական, քաղաքական, աշխարհագրական և այլ գործոններով: Տասը տարին մեկ անգամ պատգամավորների թիվը կարող է բարձրանալ<sup>308</sup>: Ընտրված պատգամավորներից յուրաքանչյուրը երդվում է իր Սուրբ գրքի վրա՝ խոստանալով պաշտպանել Իրանի ժողովրդի, Իսլամական հեղափոխության, Իսլամական Հանրապետության հիմնադրույթները, լինել ժողովրդի վստահելի ներկայացուցիչը<sup>309</sup>:

---

<sup>305</sup> **Աբուլֆազլ Ամերի Ճահրաբի**, *Իրանի Իսլամական Հանրապետության իրավական համակարգը, Ատենախոսություն*, Երևան, 2018, էջ 183:

<sup>306</sup> ԻԻՀ Սահմանադրություն, հոդված 62:

<sup>307</sup> ԻԻՀ Սահմանադրություն, հոդված 63:

<sup>308</sup> ԻԻՀ Սահմանադրություն, հոդված 64:

<sup>309</sup> ԻԻՀ Սահմանադրություն, հոդված 67:

Ուշագրավ է, որ Սահմանադրության 71-րդ հոդվածը Մեջլիսին իրավունք է վերապահում՝ Սահմանադրության շրջանակներում ընդունելու ցանկացած օրենք<sup>310</sup>, սակայն արդեն հոդված 72-ը մանրամասնում է, որ Մեջլիսը չի կարող ընդունել այնպիսի օրենքներ, որոնք կհակասեն երկրի պաշտոնական կրոնով սահմանված սկզբունքներին կամ Սահմանադրությանը: Դրա վերաբերյալ որոշումը կայացվում է Սահմանադրության պահապանների խորհրդի կողմից՝ 96-րդ հոդվածի համաձայն<sup>311</sup>:

Մեջլիսի լիազորությունների մեջ է մտնում պայմանագրերի, համաձայնագրերի և միջազգային այլ փաստաթղթերի վավերացումը<sup>312</sup>: Ուշագրավ է, որ կառավարությունը Մեջլիսի թույլտվությամբ կարող է վարկեր տրամադրել և ստանալ, կամ անվերադարձ օգնություն տրամադրել երկրի ներսում և արտասահմանում<sup>313</sup>, սակայն, միննույն ժամանակ, կտրականապես արգելվում է առևտրի, արդյունաբերության, գյուղատնտեսության, լեռնաարդյունաբերության և ծառայությունների բնագավառներում, կազմակերպություններ և ընկերություններ ստեղծելու նպատակով, արտասահմանցիներին արտոնության տրամադրումը<sup>314</sup>: Պետք է նշել, որ Մեջլիսը երկրի ցանկացած ոլորտում հետաքննություններ իրականացնելու իրավասություն ունի<sup>315</sup>:

Ըստ ԻԻՀ Սահմանադրության 133-րդ հոդվածի՝ նախարարները նշանակվում են Նախագահի կողմից և ներկայացվում են Մեջլիսին՝ վստահության քվե ստանալու համար<sup>316</sup>: Մեջլիսն իր այս լիազորությունը օգտագործել է ըստ պատշաճի՝ նոր նախագահներ

---

<sup>310</sup> ԻԻՀ Սահմանադրություն, հոդված 71:

<sup>311</sup> ԻԻՀ Սահմանադրություն, հոդված 72:

<sup>312</sup> ԻԻՀ Սահմանադրություն, հոդված 77:

<sup>313</sup> ԻԻՀ Սահմանադրություն, հոդված 80:

<sup>314</sup> ԻԻՀ Սահմանադրություն, հոդված 81:

<sup>315</sup> **Владимир Сажин**, *Парламентские выборы в Иране и их влияние на внутреннюю и международную политику*, *Международная жизнь*, 04.03.2020 <https://interaffairs.ru/news/show/25567>

<sup>316</sup> ԻԻՀ Սահմանադրություն, հոդված 133:

րին պահելով լարվածության մեջ: Իրանական խորհրդարանի դերի ցուցիչ է այն, որ վերջին 40 տարվա ընթացքում՝ Մեջլիսի տարբեր գումարումների ժամանակաշրջանում, կառավարության ոչ մի կազմ, որն առաջադրվել է նորընտիր Նախագահի կողմից, ամբողջովին և միաձայն չի հաստատվել<sup>317</sup>:

Ինչպես նշեցինք, ԻԻՀ Մեջլիսում գործում է 290 պատգամավոր, որոնցից հինգի տեղը պատկանում է կրոնական փոքրամասնություններին: Դրանցից երկուսը պատկանում են հայ համայնքին, որոնցից մեկը պետք է ներկայացնի երկրի հյուսիսային շրջանների հայության շահերը, մյուսը՝ հարավային: Մնացած երեք մանդատները բաժանվում են հետևյալ կերպ. զրադաշտականներին տրվում է մեկ մանդատ, մովսիսականներին՝ մեկ մանդատ, իսկ ասորիները և խալդիացիները միասին կիսում են մեկ մանդատ:

Մեջլիսի քննարկումներում հաճախ են լսվել հակակառավարական ելույթներ, բայց ոչ երբեք՝ հակապետական: Եվ դա ունի իր բացատրությունը. համաձայն Խորհրդարանական ընտրությունների ընտրական օրենսգրքի 28-րդ հոդվածի 3-րդ ենթակետի՝ Մեջլիսի պատգամավորության թեկնածու կարող է դառնալ այն քաղաքացին, որն ընդգծված հավատարմություն է ցուցաբերել Սահմանադրությանը և Վելայաթ-է Ֆադիհի գաղափարախոսությանը<sup>318</sup>:

Այնուամենայնիվ, Մեջլիսը ԻԻՀ ողջ գոյության ընթացքում մնում է Իրանի խնդիրների քաղաքական քննարկումների հիմնական հարթակը:

ԻԻՀ Նախագահի կամ Մեջլիսի պատգամավորների ընտրությունների պարագայում, երբ խոսում ենք համակարգում առկա ուժերի մասին, նրանց հաճախ ներկայացնում ենք այնպիսի եզրույթներով, որոնք համընդհանուր ընկալելի են, օրինակ՝ պահպա-

---

<sup>317</sup> **Владимир Сажин**, *Парламентские выборы в Иране и их влияние на внутреннюю и международную политику*, *Международная жизнь*, 04.03.2020 <https://interaffairs.ru/news/show/25567>

<sup>318</sup> *Խորհրդարանական ընտրությունների ընտրական օրենսգիրք*, հոդված 28, <https://irandataportal.syr.edu/the-electoral-law-for-parliamentary-elections>

նողականներ, չափավորներ, երբեմն էլ օգտագործում ենք լիբերալ կամ լիբերալ-բարեփոխիչներ եզրույթը: Այս ամենն արվում է, քանի որ Իրանում կուսակցություններ չկան<sup>319</sup>: Ըստ էության, յուրաքանչ-յուր ընտրությունից առաջ Իրանում համախմբվում են տվյալ շրջանում առկա խնդիրների շուրջ նույնական հայացքներ ունեցող մարդիկ և պայքար ծավալում ընտրություններում: Պարտությունից կամ անգամ հաղթանակից հետո էլ այդ խմբերում տեղի է ունենում տեսակետների փոփոխություն, որի արդյունքում անդամները կարող են մի տեղից մյուսը շարժվել:

Պետք է նշել նաև, որ վերը նշած երեք ուղղություններն էլ, իրենց հերթին, բաժանվում են տարբեր թևերի, տարբեր մասերի՝ կենտրոնամետներ, ֆունդամենտալիստներ, ծայրահեղականներ, որոնք ևս միշտ պայքարի մեջ են՝ իրենց նպատակներին հասնելու մեթոդների վերաբերյալ: Եվ սրանով է պայմանավորված, որ ժամանակակից Իրանի քաղաքականության մեջ հաճախ տեսնում ենք, թե ինչպես են քաղաքական գործիչները մի թևից մյուսն անցնում:


Մեջլիսի ընտրություններում ներգրավվում են խումբ-խմբակցություններ, հոսանքներ-թևեր, դաշինք-համախմբումներ, որոնց մեծ մասը, նույնիսկ Մեջլիս մտնելու դեպքում, ենթարկվում է նորանոր ձևափոխումների: Իրանում կարծես սովորական երևույթ է, որ միևնույն թեկնածուն ընտրություններից մեկում հանդես գա որպես առավել չափավոր թևի ներկայացուցիչ, իսկ մյուսում հարի բարեփոխականներին կամ պահպանողականներին:

---

<sup>319</sup> Կուսակցությունների դասակարգման ամենատարածված չափանիշներից մեկը գաղափարախոսություն ունենալն է, որը փոփոխման ենթակա չէ: Կուսակցությունները ունենում են ներքին կազմակերպական կառուցվածք, ըստ որի էլ առանձնացվում են կադրային և զանգվածային կուսակցություններ: Եթե կադրայինը լինում է առավել փոքրաքանակ, ապա զանգվածայինը բազմաքանակ է, որի ֆինանսական հոսքերը ապահովվում են անդամավճարներով, դրանք ունեն կուսակցական ամուր օղակներ: Կուսակցությունները դասակարգվում են աջերի, ձախերի և կենտրոնամետների: Ըստ էության, միայն այս վերջին հատվածն է, որ Իրանում գործում է ընտրությունից ընտրություն:

Փաստացի վերը նշված ձևակերպումները գործածվում են՝ զուտ նրանց տեսակետները տարանջատելու, խնդիրներին մոտենալու և լուծումներ տալու միջոցները բացահայտելու համար, բայց իրականում ինչպե՞ս կարող է դասական առումով լիբերալ լինել հոգևորականության ներկայացուցիչը, հատկապես այն ներկայացուցիչը (օրինակ՝ Հասան Ռոհանին), որը մասնակցել է Իսլամական հեղափոխությանը, տարիներ շարունակ զբաղեցրել է Իրանի տարբեր ղեկավար պաշտոններ, այդ թվում՝ գործել է Սահմանադրության պահապանների խորհրդում, եղել է Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար:

Իրանի քաղաքական խմբակցությունների դասակարգումը, ըստ Փայամ Մոհսենի, գծապատկերով ներկայացնում ենք ստորև<sup>320</sup>.



<sup>320</sup> Payam Mohseni, *The 2016 Iranian Parliamentary Elections Payam Mohseni and the Future of Domestic Politics under the JCPOA*, p. 8, 2016, [https://www.belfercenter.org/sites/default/files/pantheon\\_files/files/publication/Iran%20Elections%20-%20web\\_0.pdf](https://www.belfercenter.org/sites/default/files/pantheon_files/files/publication/Iran%20Elections%20-%20web_0.pdf)

Գծապատկերից պարզ է դառնում, որ երկրում հիմնականում գործում է երկու թև՝ Աստվածապետականները և Հանրապետականները: Այս երկու թևերի գոյությունը, թերևս, լեգիտիմացվում է հենց երկրի անվամբ՝ Իսլամական Հանրապետություն, որտեղ «Իսլամական» եզրույթի ներքո հավաքված են հիմնականում այն գաղափարակիցները, որոնք գտնում են, որ Իրանի առաջ ծառացած խնդիրները պետք է լուծվեն համաձայն Ղուրանի, Շարիաթի սկզբունքներով, իսկ Հանրապետություն եզրույթի ներքո հավաքվում են այն քաղաքական գործիչները, որոնք գտնում են, որ հանուն Իրանի ապագայի, այնուամենայնիվ, Աստվածապետականին զուգահեռ պետք է առավել ուշադրություն դարձնեն հանրապետականությանը: Բնականաբար, այդ ուղղությունները իրենց հերթին բաժանվում են նաև ենթաճյուղերի:

Որոշ աղբյուրներ նշում են, որ Իրանի Մեջլիսն առանցքային դերակատարում չունի ԻԻՀ կարևորագույն քաղաքական որոշումների կայացման ժամանակ: Որոշումները, որպես կանոն, ընդունվում են ԻԻՀ քաղաքական-կղերական էլիտայի կողմից ոչ ֆորմալ բանակցությունների արդյունքում՝ Առաջնորդի, իր գրասենյակի և, ի վերջո, Ազգային անվտանգության բարձրագույն խորհրդի շրջանակներում<sup>321</sup>:

ԻԻՀ Մեջլիսի պատգամավորի թեկնածու դառնալու համար քաղաքացին, եթե զբաղեցնում է այլ պաշտոն, պետք է առնվազն երեք ամիս առաջ հրաժարական տա: Պատգամավորների թեկնածությունը հաստատվում է երկու հաստատությունների՝ Գործադիր խորհրդի և Սահմանադրության պահապանների խորհրդի կողմից: Գործադիր խորհուրդը յուրաքանչյուր թեկնածուի համար սահմանում է 7 պայման, որոնց բավարարման դեպքում պատգամավորի թեկնածությունը ներկայացվում է Սահմանադրության պահապան-

---

<sup>321</sup> **Владимир Сажин**, *Парламентские выборы в Иране и их влияние на внутреннюю и международную политику*, Международная жизнь, 04.03.2020 <https://interaffairs.ru/news/show/25567>

ների խորհրդին, որն էլ վերջնական հաստատում կամ մերժում է թեկնածությունը: Գործադիր խորհրդի ներկայացրած 7 պայմանները հետևյալն են.

1. Հավատք և խորին նվիրում իսլամի և Իրանի Իսլամական Հանրապետության համակարգի հիմնարար սկզբունքների հանդեպ,
2. ԻԻՀ քաղաքացիություն,
3. Ընդգծված հավատարմություն Սահմանադրությանը և Վելայաթ-է Ֆադլիի գաղափարախոսությանը,
4. Առնվազն մագիստրոսի որակավորում,
5. Դատվածության և ընտրատարածքում վատ համբավի բացառում,
6. Ֆիզիկական առողջություն. տեսողության, լսողության, խոսքի հետ կապված խնդիրների բացակայություն,
7. Պատգամավորի թեկնածուն պետք է լինի 30–75 տարեկան<sup>322</sup>:


Մեջլիսի ընտրությունները, ինչպես արդեն վերը նշեցինք, կազմակերպվում են չորս տարին մեկ անգամ՝ Ներքին գործերի նախարարության կողմից: Ընտրական համակարգը հիմնված է փոփոխված մեծամասնական քվեարկության համակարգի վրա, քանի որ խորհրդարանի անդամի մի քանի մանդատ ունեցող ընտրատարածքներում ընտրողներն ունեն այնքան քվե, որքան անհրաժեշտ է եղած մանդատները լրացնելու համար: Ներքոհիշյալ գծապատկերում ներկայացված է, թե քայլերի ինչ հաջորդականությամբ է ԻԻՀ քաղաքացին դառնում ԻԻՀ Մեջլիսի պատգամավորի թեկնածու:

Մեջլիսի թեկնածության հաստատման գործընթացի մեխանիզմը՝ պատկերավոր, ըստ Բահման Բախթիարի<sup>323</sup>.

---

<sup>322</sup> *Խորհրդարանական ընտրությունների ընտրական օրենսգիրք*, հոդված 28, <https://irandataportal.syr.edu/the-electoral-law-for-parliamentary-elections>

## Սահմանադրության պահապանների խորհրդի վերանայում



Այն թեկնածուները, որոնք ի վիճակի են ստանալու առաջին փուլում տրված ձայների առնվազն մեկ քառորդը, համարվում են

<sup>323</sup> **Bahman Baktiari**, *Parliamentary Politics in Revolutionary Iran*, The Institutionalization of Factional Politics, University of Florida Press, 1996, p. 244.

ընտրված: Ընտրությունների երկրորդ փուլն անցկացվում է այն շրջաններում, որտեղ մեկ կամ ավելի տեղեր մնում են չլրացված: Թեկնածուների թիվը, որոնք կարող են մասնակցել ընտրությունների երկրորդ փուլին, սահմանափակվում է մեկ մանդատ ունեցող ընտրական շրջանում ստացվելիք մանդատի կրկնակի թվով (այսինքն՝ երկու), իսկ մի քանի մանդատ ունեցող ընտրական շրջանում՝ տրվելիք մանդատների թվի մեկուկես անգամ ավելի թվով: Ընտրությունների երկրորդ փուլում առավելագույն ձայներ հավաքած թեկնածուներն ստանում են վիճարկվող մանդատները<sup>324</sup>:

Մեջլիսի ընտրություններից հետո որոշվում է, թե ով է գլխավորելու Մեջլիսը: Մեջլիսի նախագահ է ընտրվում այն թեկնածուն, որն ամենից շատ ձայներ է ստացել Մեջլիսի պատգամավորների կողմից: Մեջլիսի նախագահը ունենում է նաև երկու տեղակալ կամ փոխխոսնակ, որոնք ընտրվում են մեկ տարի ժամկետով և հաջորդ տարի կարող են վերընտրվել: Մեջլիսի նախագահն ընտրվում է պատգամավորների թվի ձայների մեծամասնությամբ: Իսլամական հեղափոխությունից հետո իրանական խորհրդարանն ունեցել է յոթ խոսնակ կամ նախագահ: 1980–89 թթ. Մեջլիսը գլխավորում էր Հաշեմի Ռաֆսանջանին, 1989–1992 թթ. նրան փոխարինեց Մեհդի Բառուբին, 1992–2000 թթ.՝ Ալի Աքբար Նաթեղ-Նուրին, 2000–2004 թթ.՝ Մեհդի Բառուբին, 2004–2008 թթ. Մեջլիսը գլխավորել է Ղուլամ-Ալի Հադդադ-Ադելը, 2008–2020 թթ.՝ Ալի Լարիջանին, իսկ 2020 թ. պառլամենտական ընտրությունների արդյունքում Մեջլիսը գլխավորեց Մուհամմադ Բադեր Ղալիբաֆը:

Մեջլիսի խոսնակը հնարավորություն ունի վերահսկելու Մեջլիսի և Նախագահի ինստիտուտի միջև հարաբերությունները: Օրինակ, նախկին խոսնակ Ղուլամ Ալի Հադդադ Ադելը, որը նաև խնամիական կապի մեջ է Առաջնորդ Իսլամական հեղափոխության խոսնակի հետ, մինչև իր կառավարման վերջին ամիսները նկատելի մեղմ վերաբերմունք ուներ Մահմուդ Ահմադինեժադի վարչակազմի հանդեպ: Լարիջանին՝


---

<sup>324</sup> **Yasmin Alem**, *Duality by Design: The Iranian Electoral System*, 2011, p. 32–33.

Նախորդ Մեջլիսի խոսնակը, առավել քննադատական մոտեցում է ցուցաբերել Ահմադինեժադի նկատմամբ, հատկապես, երբ խոսքը վերաբերում էր արտաքին քաղաքականության իրականացմանը կամ միջուկային ծրագրին, և անգամ ակնարկել էր, որ Մեջլիսը կարող է դեմ լինել Ահմադինեժադի իրականացրած քաղաքականության որոշ ասպեկտներին:

Այնուամենայնիվ, արտաքին քաղաքականության շուրջ Նախագահի հետ տարաձայնությունները չեն փոխում այն փաստը, որ Մեջլիսի պատգամավորների ճնշող մեծամասնությունը զբաղվում է տեղական խնդիրներով: 290 պատգամավորների, թերևս, միայն մեկ քառորդն է հետաքրքրված ավելի լայն խնդիրներով<sup>325</sup>:

Ուշագրավ է, որ Իսլամական հեղափոխության սկզբից Մեջլիսում հիմնական տեղերը պատկանում էին հոգևոր դասին, սակայն տարիների ընթացքում նվազման միտում է արձանագրվել, ինչը կարելի է պատկերավոր տեսնել ներքոհիշյալ աղյուսակում՝ 1980–2016 թվականների համար<sup>326</sup>:



<sup>325</sup> **David E. Thaler, Alireza Nader, Shahram Chubin, Jerrold D. Green, Charlotte Lynch Mullahs**, *Guards, and Bonyads an Exploration of Iranian Leadership Dynamics*, RAND, 2010, p. 28.

<sup>326</sup> **Yasmin Alem**, *Duality by Design: The Iranian Electoral System*, p. 32–33, p. 42.

**Իրանի Մեջլիսի աշխատանքները իրականացվում են նաև հետևյալ հանձնաժողովների միջոցով.**

Էներգետիկայի հանձնաժողով,

Էկոնոմիկայի հանձնաժողով,

Ազգային անվտանգության և արտաքին քաղաքականության հանձնաժողով,

Առողջության և բուժօգնության հանձնաժողով,

Քաղաքացիական հարցերի հանձնաժողով,

Մշակութային հանձնաժողով,

Դատաիրավական հանձնաժողով,

Սահմանադրության 90-րդ հոդվածի հանձնաժողով,

Կրթության, հետազոտությունների և տեխնոլոգիաների հանձնաժողով,

Պլանավորման, բյուջեի և հաշվարկների հանձնաժողով,

Սոցիալական հարցերի հանձնաժողով,

Արդյունաբերության և հանքերի հարցերով հանձնաժողով,

Գյուղատնտեսության, ջրի և բնական պաշարների հարցերով հանձնաժողով,

Ներքին գործերի հանձնաժողով,

Կողմնակցության ներքին կանոնակարգերի հանձնաժողով:

Պետք է արձանագրել, որ այս հանձնաժողովները համագործակցում են նույն ոլորտում գործառույթներ ունեցող նախարարությունների հետ, իսկ դրանց նախագահներն իրավասու են պաշտոնական հանդիպումներ ունենալու տարբեր պետությունների նույն ոլորտի պատասխանատուների հետ: Յուրաքանչյուր հանձնաժողով իր կազմից ընտրում է ղեկավար, որն ունենում է երկու տեղակալ, երկու քարտուղար և մեկ զեկուցող:

Բացի հանձնաժողովներից, Իրանի Մեջլիսում գործում են նաև բարեկամական խմբեր, որոնք փորձում են այլ երկրների օրենսդիր մարմինների հետ հարաբերություններ պահպանել: Իրան-Հայաս-

տան բարեկամության խմբի մեջ ավանդաբար ընդգրկված են Իրանի հայ համայնքից ընտրված երկու հայազգի պատգամավորները:

### **Վերջին 11 գումարումների Մեջլիսների ձևավորման պատմությունը՝ համառոտ**

1980 թ. մարտի 14-ին ԻԻՀ **առաջին Մեջլիսի** ընտրությունների ժամանակ 3,694 քաղաքացի ցանկություն հայտնեց դառնալու Մեջլիսի պատգամավոր, որից 90-ը՝ կին, սակայն ընտրություններին թույլատրվեց մասնակցել 1,910-ին, որից չորսը՝ կին<sup>327</sup>: Իսլամական հեղափոխությունից հետո առաջին անգամ Իրանում պառլամենտական ընտրությունների ժամանակ հաղթող ճանաչվեց Իսլամական Հանրապետություն կուսակցությունը, որը 270 տեղից ստացավ 85-ը, և տեղերի նման թիվ որևէ այլ ուժ չկարողացավ ստանալ: Մնացած ուժերը հետագայում փոքր խմբերով միացան Իսլամական Հանրապետություն կուսակցությանը: Հատկանշական է, որ դեռևս 1950-ականներին ձևավորված և այդքան տարի շահի վարած քաղաքականության դեմ պայքարած Ազգային ճակատի թեկնածուներից չորսը հաղթահարեց շեմը, սակայն նրանց մանդատները մերժվեցին «Ամերիկյան գործակալներ» կամ «մեծ հողատերեր» լինելու պատճառաբանությամբ<sup>328</sup>: Մեջլիսի նախագահ ընտրվեց Ալի Աքբար Հաշեմի Ռաֆսանջանին:

Մեջլիսի **երկրորդ ընտրությունները** տեղի ունեցան 1984 թ. ապրիլի 15-ին: Այս շրջանում ընտրական ռեգիստրներ գոյություն չունեին, և 16 տարին բոլորած յուրաքանչյուր քաղաքացի կարող էր ընտրություններին մասնակցել ընտրական ցանկացած տեղամասում: Այս ընտրությունների ժամանակ Իրանի Ազատության շարժումը գլխավորած նախկին վարչապետ Մեհդի Բազարգանը բոյ-

---

<sup>327</sup> 1980 parliamentary election, <https://irandataportal.syr.edu/1980-parliamentary-election>

<sup>328</sup> **Bahman Baktiari**, *Parliamentary Politics in Revolutionary Iran: The Institutionalization of Factional Politics*. University Press of Florida, 1996, p. 69.

կոտեց ընտրությունները՝ դա պատճառաբանելով իրենց շտաբի վրա հարձակմամբ: Ընտրություններում մեծ թվով ձայներ հավաքեցին հիմնականում անկախ պատգամավորները, սակայն, որպես կազմակերպված խմբակցություն, հիմնական մանդատներն անցան Իսլամական Հանրապետություն կուսակցությանը, և Հաշեմի Ռաֆսանջանին վերընտրվեց Մեջլիսի նախագահի պաշտոնում<sup>329</sup>: Համոզված լինելով ընդդիմության թուլացած լինելու մեջ՝ իսլամական կոալիցիայի մեջ առաջացան անհամաձայնություններ. դա 1984 թ. Մեջլիսի ընտրություններում հանգեցրեց պառակտման, որի արդյունքում ծնվեցին ձախակողմյան և աջակողմյան խմբակցությունները, որոնք էլ սկսեցին գերակշռել իրանական քաղաքականության մեջ<sup>330</sup>:

1988 թ. պառլամենտական **երրորդ ընտրությունների** ժամանակ հիմնականում պայքարում էին քաղաքական երեք թևեր. Թեհրանի պայքարող հոգևորականության միությունը կամ Jame-ye Ruhaniyat-ը, որը համալրել էր աջակողմյան թևի ներկայացուցիչներին, Թեհրանի պայքարող հոգևորականների ասամբլեան կամ Majma-ye Ruhaniyun-ը, որը համալրել էր ձախակողմյան թևի ներկայացուցիչներին, ինչպես նաև Ճնշվածների և ունեզրկվածների կոալիցիան: Իրանա-իրաքյան պատերազմը դեռ չէր ավարտվել, Խոմեյնիի հեղինակությունը երկրում անքննելի էր, և ժողովուրդը նպատակահարմար գտավ ձայների մեծամասնությունը տալ պահպանողական թևին: Մեջլիսի նախագահ ընտրվեց պահպանողական թևի ներկայացուցիչ Մեհդի Բառուբին<sup>331</sup>:

1992 թ. **չորրորդ խորհրդարանական** ընտրություններին մասնակցելու հայտ ներկայացրեց ԻԻՀ 3,233 քաղաքացի, որից 82-ը՝

---

<sup>329</sup> *Iran 1984*, [http://archive.ipu.org/parline-e/reports/arc/IRAN\\_1984\\_E.PDF](http://archive.ipu.org/parline-e/reports/arc/IRAN_1984_E.PDF)

<sup>330</sup> **Yasmin Alem**, *Duality by Design: The Iranian Electoral System*, p. 74.

<sup>331</sup> **Bahman Bakhtian**, *Parliamentary Elections in Iran*, *Iranian Studies*, vol. 26, num. 3–4, Summer/Fall 1993, p. 380.

կին, սակայն բուն ընտրություններին թույլ տվեցին մասնակցել 2,741 թեկնածուի, որից 9-ը՝ կին<sup>332</sup>:

Չորրորդ պառլամենտական ընտրությունների ժամանակ պրագմատիկները և պահպանողական թևի ներկայացուցիչներն ակնհայտորեն միավորվեցին ընդդեմ արմատականների՝ կազմելով կռալիցիա, և դրա գործունեությունը հետագայում ապացուցեց իր կենսունակությունը: Ռաֆսանջանին հարցազրույցներից մեկում խոսել է երկրում առկա պառակտման մասին. «Մենք ունեցել ենք նախագահական ընտրություններ, բայց այնտեղ լուրջ մրցակցություն չի եղել... Անցած երկու-երեք տարիների ընթացքում բաց ամբիոններից քննարկվել են լուրջ հարցեր: Այժմ ի հայտ են եկել իրական և սուր տարաձայնություններ, և ժողովուրդը պետք է ընտրի»<sup>333</sup>:

Ընտրություններում հիմնական պայքարը գնում էր Jame-ye Ruhaniyat-ի և Majma-ye Ruhaniyun-ի միջև: Jame-ye Ruhaniyat-ը, որը գլխավորում էր Նախագահ Հաշեմի Ռաֆսանջանին, հանդես էր գալիս Խոմեյնիի շրջանի ներքին և արտաքին քաղաքականության վերանայման գաղափարներով, մինչդեռ Majma-ye Ruhaniyun-ը գտնում էր, որ պետք է ապահովել Խոմեյնիի դարաշրջանի շարունակականությունը: Ի վերջո, փոփոխությունների կողմնակիցները հաղթանակ տարան՝ Իսլամական Հանրապետությունում բացելով նոր փուլ<sup>334</sup>: Նրանց մոտեցումներն էականորեն տարբերվում էին միմյանցից, սկսած արտաքին ու ներքին քաղաքականությունից, տնտեսության կառուցվածքից, մինչև համակարգային բնույթի խնդիրներ: Պրագմատիկ թևի ներկայացուցիչները Ռաֆսանջանիի գլխավորությամբ վերահսկողություն ստանձնեցին օրենսդիր, ինչպես նաև գործադիր իշխանության վրա, որով Իսլամական Հան-

---

<sup>332</sup> 1992 Parliamentary Election, Fourth Parliamentary Election <https://irandataportal.syr.edu/1992-parliamentary-election>

<sup>333</sup> **Farzin Sarabi**, *The Post-Khomeini Era in Iran: The Elections of the Fourth Islamic Majlis*, p. 93.

<sup>334</sup> **Farzin Sarab**, *The Post-Khomeini Era in Iran: Tthe Elections of the Fourth Islamic Majlis*, Middle East Journal, Vol. 48, no. 1, Winter 1994, pp. 89–90.

րապետությունում ամրագրվեց նոր փուլ. քաղաքական հարցերի լուծումները փոխանցվեցին Նախագահին<sup>335</sup>: Մեջլիսի չորրորդ նստաշրջանի ղեկավար դարձավ Ալի Աքբար Նաթեղ-Նուրին:

**Հինգերորդ մեջլիսի** ընտրությունները տեղի ունեցան 1996 թ. մարտի 8-ին, որին մասնակցելու հայտ ներկայացրեց 8,365 քաղաքացի, որից 320-ը՝ կին, ընտրություններին թույլ տրվեց մասնակցել 6,954-ին<sup>336</sup>: *Majma-ye Ruhaniyoun*-ը, որը, ըստ էության, արմատական պահպանողականների թևն էր, ընտրությունների առաջին փուլում ստացավ 110 տեղ, «Կառուցվող Իրանը» ստացավ 80 տեղ, այլը՝ 20 տեղ, մնացած 22 տեղը պետք է լրացվեր 2-րդ փուլի ընթացքում<sup>337</sup>: Փաստացի. «Կառուցվող Իրանը», որը գլխավորում էր Նախագահ Ռաֆսանջանին, վերջինիս ջանքերով 2-րդ փուլում փորձ արեց Մեջլիսում պահպանելու հարաբերակցությունը: Մեջլիսի աշխատանքները գլխավորեց Մեհդի Քառուբին:

**Վեցերորդ մեջլիսի** ընտրությունները տեղի ունեցան 2000 թ. փետրվարի 18-ին, պատգամավորի թեկնածու դառնալու ցանկություն արտահայտեց 6,853 քաղաքացի, որոնցից 504-ը՝ կին, ընտրապայքարին թույլ տրվեց մասնակցել 5,742-ին, որոնցից 13-ը՝ կին. նրանք արդեն նախկին 270 տեղի փոխարեն պայքարում էին 290-ի համար<sup>338</sup>: Մոտավորապես 650 քաղաքացու դիմում մերժվեց, և մերժման պատճառը Մեջլիսի պատգամավոր դառնալու պահանջները չբավարարելն էր. ոմանք չունեին բավարար կրթություն, ոմանց տարիքային ցենզը թույլ չէր տալիս, իսկ ոմանք էլ նախորդ պաշտոններից չէին հրաժարվել՝ պատգամավորի թեկնածու դառ-

---

<sup>335</sup> **Farzin Sarabi**, *The Post-Khomeini Era in Iran: The Elections of the Fourth Islamic Majlis*, 94.

<sup>336</sup> 1996 Parliamentary election, Fifth Parliamentary Election, <https://irandataportal.syr.edu/1996-parliamentary-election>

<sup>337</sup> *Parliamentary Chamber: Majles Shoraye Eslami, Elections held in 1996*, [http://archive.ipu.org/parline-e/reports/arc/2149\\_96.htm](http://archive.ipu.org/parline-e/reports/arc/2149_96.htm)

<sup>338</sup> 2000 Parliamentary Election, <https://irandataportal.syr.edu/2000-parliamentary-election>

Նալու համար: Նրանց մեծ մասը Մուհամմադ Խաթամիի կողմնակիցներն էին<sup>339</sup>: Այս ամենով հանդերձ, Մեջլիսի ընտրության հենց առաջին փուլում պարզ դարձավ, որ Բարեփոխիչները վերահսկելու են Մեջլիսը, ինչն առաջին անգամ էր տեղի ունենում 1979 թ. Իսլամական հեղափոխությունից ի վեր: Առաջին փուլում 290 տեղից 170-ն անցավ Բարեփոխիչներին, ինչը նշանակում էր, որ բարեփոխիչ Նախագահ Խաթամիի գլխավորությամբ նրանք փորձելու էին համագործակցել Արևմուտքի հետ: 45 տեղ անցավ պահպանողականներին, 10 տեղ զբաղեցրին անկախ պատգամավորները: «Մայիսի 23 ճակատը», որի մեջ ընդգրկվել էր բարեփոխիչների թևի 18 ներկայացուցիչ, ի վերջո հավաքեց 222 տեղ, 54 տեղ էլ հավաքեց «Իմամի ուղու հետևորդների կոալիցիան», 14 տեղ՝ անկախ պատգամավորները: Վեցերորդ Մեջլիսի նախագահ ընտրվեց արդեն բարեփոխիչներին հարած Մեհդի Քառուբին, որը Խաթամիի դաշնակիցն էր և Մեջլիսի ղեկավարի պաշտոնն զբաղեցրել էր 1989–2002 թթ.: Այն ժամանակ նա հարում էր պահպանողականներին, այս շրջանում արդեն նրա հայացքները առավել մոտ էին բարեփոխիչներին, և նրա հետագա համագործակցությունն արդեն կապված էր հենց այս թևի հետ:

Սա իսկապես մեծ հաղթանակ էր բարեփոխիչների համար, բայց մի բան է՝ Իրանում ընտրվել Նախագահ կամ Մեջլիսում հավաքել ձայների մեծամասնություն, ամբողջովին այլ բան է՝ կարողանալ կյանքի կոչել ծրագրային այն դրույթները, որի ջատագովն ես: Հայտնի է, որ Սահմանադրության պահպանների խորհուրդը հենց այս Մեջլիսի ժամանակ է ամենից շատ չեղարկել օրինագծեր, ընդհանուր առմամբ՝ 107 օրինագիծ, որոնք վերաբերում էին քաղաքացիների սոցիալական ազատություններին, դատական իշխանության բարեփոխմանը: Այսպիսով, հանրությանը հստակ ցուցադրվեց պետական կառավարման համակարգի ուժը, որի համա-

---

<sup>339</sup> *Iran (Islamic Republic of) Parliamentary Chamber: Majlis Shoraye Eslami Elections Held in 2000*, [http://archive.ipu.org/parline-e/reports/arc/2149\\_00.htm](http://archive.ipu.org/parline-e/reports/arc/2149_00.htm)

ձայն, անկախ նրանից, թե որ ուժը կգլխավորի օրենսդիր ու գործադիր մարմինները, միևնույն է, երկրում պահպանվելու են Իսլամական հեղափոխության գաղափարները:

Այս ընտրությունների ժամանակ որոշվեց փոփոխել Մեջլիսի պատգամավորներին ընտրելու տարիքային նվազագույն շեմը՝ այն 16-ից բարձրացնելով 17-ի<sup>340</sup>:

2004 թ. փետրվարի 20-ի Իրանում պետք է տեղի ունենային թվով **յոթերորդ մեջլիսի** ընտրությունները. 290 պատգամավորական տեղի համար պայքարելու հայտ ներկայացրեց 8,172 ԻԻՀ քաղաքացի, որոնցից 827-ը՝ կին: Սահմանադրության պահապանների խորհուրդը թույլ տվեց ընտրապայքարին մասնակցել 5,450 քաղաքացու, որոնցից 12-ը՝ կին<sup>341</sup>: Ի սկզբանե, Սահմանադրության պահապանների խորհուրդը մերժել էր 3,600 թեկնածուի, որոնց մեծ մասը բարեփոխականներն էին: Խաթամիի՝ բոլորին գրանցելու հետ կապված բողոքից և պահանջից հետո (կարծում ենք, նաև ժողովրդական հուզումներից խուսափելու համար) Սահմանադրության պահապանների խորհուրդը վերանայեց որոշումը, և նրանց մեկ երրորդին թույլ տրվեց մասնակցել ընտրությանը: Նախորդ Մեջլիսի խոսնակ Քառուբին բացահայտ մեղադրանք հնչեցրեց Սահմանադրության պահապանների խորհրդի հասցեին՝ նշելով, որ այդ կառույցը դուրս է գալիս իր լիազորությունների շրջանակից, քանի որ նրա խնդիրն է՝ ապահովել օրենսդրության համապատասխանեցումը Իսլամին, սակայն Սահմանադրության առանցքային գլուխներում առկա ձևակերպումներն աղոտ են ներկայացված, ինչը թույլ է տալիս Սահմանադրության պահապանների խորհրդին՝ տարբեր կերպ մեկնաբանել դրանք<sup>342</sup>: Բարեփոխականները խիստ

---

<sup>340</sup> *Iran (Islamic Republic of) Parliamentary Chamber: Majlis Shoraye Eslami Elections Held in 2000*, [http://archive.ipu.org/parline-e/reports/arc/2149\\_00.htm](http://archive.ipu.org/parline-e/reports/arc/2149_00.htm)

<sup>341</sup> *2004 Parliamentary election, Seventh Parliamentary Election*, <https://irandataportal.syr.edu/2004-parliamentary-election>

<sup>342</sup> *Iran (Islamic Republic of) Elections in 2004*, [http://archive.ipu.org/parline-e/reports/arc/2149\\_04.htm](http://archive.ipu.org/parline-e/reports/arc/2149_04.htm)

անհանգստացած էին, քանի որ չորս տարի աշխատելուց հետո Մեջլիսի ընտրությունների առաջին փուլում հաղթանակեցին պահպանողական թևի խմբակցությունները. արձանագրվեց հետևյալ պատկերը. պահպանողական խմբակցություններին տրվեց 156 տեղ, բարեփոխականներին՝ 39, անկախներին՝ 31<sup>343</sup>: Մեջլիսի խոսնակ դարձավ Ղուլամ-Ալի Հադդադ-Ադելը: Պարզ էր, որ բարեփոխական նախագահ Իսաթամիի համար է՛լ ավելի դժվար էր լինելու կյանքի կոչել իր ծրագրերն այս պայմաններում:

2008 թ. մարտի 14-ին Իրանում կայացան թվով **ութերորդ մեջլիսի** ընտրությունները, որին մասնակցելու հայտ ներկայացրեց 7,597 քաղաքացի, որոնցից 590-ը՝ կին: Սահմանադրության պահպանների խորհուրդը տարբեր պատճառաբանություններով հաստատեց նրանցից միայն 4,476-ին, որոնցից 8-ը՝ կին<sup>344</sup>:

Ընտրելու իրավունքի տարիքային շեմը բարձրացվեց, և այդ իրավունքից կարող էին օգտվել 18 տարին լրացած բոլոր քաղաքացիները:

Պետք է հիշեցնել, որ 2005 թ. Իրանում Նախագահ էր ընտրվել ուլտրաձայրահեղական թևի ներկայացուցիչ Մահմուդ Ահմադինեժադը, որը թեպետ աշխարհիկ էր, բայց աչքի էր ընկնում Խոմեյնիի գաղափարները վերածնելու ջատագովությամբ: Նախկին Նախագահ Մուհամմադ Իսաթամին 2007 թ. հայտարարել էր, որ 2008 թ. Մեջլիսի ընտրությունների համար կմիավորի և կգլխավորի բարեփոխականների թևը: Կոալիցիայի մեջ ընդգրկվեց նախկին Նախագահ Մուհամմադ Իսաթամիի եղբայր Մուհամմադ Ռեզա Իսաթամիի հիմնադրած «Իսլամական Իրանի մասնակցության ճակատը» և «Իրանի Իսլամական հեղափոխության Մոջահեդինների

---

<sup>343</sup> *Iran (Islamic Republic of) Elections in 2004*, [http://archive.ipu.org/parline-e/reports/arc/2149\\_04.htm](http://archive.ipu.org/parline-e/reports/arc/2149_04.htm)

<sup>344</sup> *2008 Parliamentary election, Eighth Parliamentary Election* <https://irandataportal.syr.edu/2008-parliamentary-election>

կազմակերպությունը»՝ նախկին Նախագահ Ալի Աքբար Հաշեմի Ռաֆսանջանիի գլխավորությամբ:

Պահպանողականների թնում առավելապես աչքի էր ընկնում Սկզբունքայնականների (Principalists) Միացյալ ճակատը, որն ստեղծվեց՝ հենց 2008 թ. ընտրություններին մասնակցելու համար, այաթոլլահ Մուհամմադ-Ռեզա Մահդավի Քանիի և այդ պահին գործող Նախագահ Մահմուդ Ահմադինեժադի կողմից: Մյուս պահպանողական թևն իրեն կոչում էր Սկզբունքայնականների ընդարձակ ճակատ: Վերջինը Սկզբունքայնականների Միացյալ ճակատից անջատվել էր հենց 2008 թ. ընտրությունների նախաշեմին, քանզի գտնում էին, որ ցուցակի վերին համարներում շատ էին Մահմուդ Ահմադինեժադի կողմնակիցները, և կարծում էին, որ Մեջլիսը պետք է առավել անկախ լինի Նախագահից: Այս թևի ներկայացուցիչներին համախմբեցին Թեհրանի այդ ժամանակվա քաղաքապետ Մուհամմադ Բադեր Ղալիբաֆը, Մոհսեն Ռեզային և Ալի Լարիջանին<sup>345</sup>:

Տնտեսության վիճակը և Միջուկային ծրագրի հարցը դարձել էին նախընտրական քննարկումների հիմնական թեման: Թե՛ բարեփոխականները և թե՛ անգամ որոշ պահպանողականներ քննադատում էին Մահմուդ Ահմադինեժադի վարած քաղաքականությունը: Ի վերջո, ընտրություններից հետո պարզ դարձավ, որ ութերորդ Մեջլիսում 200 տեղ զբաղեցնելու էին պահպանողական թևի ներկայացուցիչները, մոտավորապես 50 տեղ անցավ բարեփոխականներին, 40 տեղ էլ՝ անկախ պատգամավորներին: Ըստ էության, թվերը խիստ հարաբերական էին, քանի որ ընտրված պատգամավորների մի մասն ընտրություններից հետո փոխում էր իր քաղաքական հայացքները՝ միաժամանակ փոխելով ճամբարները: Ըստ Ներքին գործերի նախարարի՝ բարեփոխականները վերցրել էին

---

<sup>345</sup> Dr. **Farideh Farhi**, *Iran's 2008 Majlis Elections: The Game of Elite Competition*, <https://www.brandeis.edu/crown/publications/middle-east-briefs/pdfs/1-100/meb29.pdf>

Մեջլիսի ձայների 16.4 %-ը, այսինքն՝ 47 կամ 48 տեղ<sup>346</sup>։ Անկախներից ոմանք միավորվեցին պահպանողականների հետ՝ ընդհանուր թիվը հասցնելով 210-ի, իսկ բարեփոխականներին բաժին հասավ 60 տեղ՝ անկախների թեկնածուների հաշվին<sup>347</sup>։ Բարեփոխականները խիստ հիասթափված էին, հատկապես Թեհրանում ստացված փոքրաթիվ ձայներից։ Ալի Լարիջանին գլխավորեց ութերորդ Մեջլիսը։ Պետք է արձանագրել նաև, որ 2008 թ. Մեջլիսի ընտրություններն աչքի ընկան ընտրողների ցածր մասնակցությամբ։

2012 թ. մարտի 12-ին ԻԻՀ քաղաքացիներն ընտրում էին թվով **իններորդ Մեջլիսը**, որին մասնակցելու ցանկություն էր հայտնել 5,405 քաղաքացի, որից 428-ը՝ կին, բուն ընտրություններին մասնակցել թույլատրվել էր 3,444 թեկնածուի, որից 9-ը՝ կին։ Ուշագրավ է, որ այս ընտրություններում քաղաքացիները հետաքրքրություն ցուցաբերեցին, և ընտրելու իրավունք ունեցող քաղաքացիների 63.88%-ը մասնակցեց պառլամենտական ընտրություններին<sup>348</sup>։ Ընդհանուր առմամբ, 290 տեղից 180 տեղը բաժին հասավ պահպանողականների տարբեր թների, այդ թվում՝ Սկզբունքայականների միացյալ ճակատն ստացավ մոտ 100 տեղ, Իսլամական հեղափոխության կայունության ճակատը՝ 40 տեղ, Մահմուդ Ահմադինեժադին աջակցող Միաստվածության և արդարության ճակատը հավաքեց 20 տեղից էլ պակաս։ Իսլամական հեղափոխությունից ի վեր առաջին անգամ բարեփոխականները բոլորտեցին ընտրությունները, քանի որ 2009 թ. գրանցված Կանաչ շարժման հետևանքով ձերբակալվել էին մեծ թվով բարեփոխականներ, իսկ նրանց ղեկավարները գտնվում էին տնային կալանքի

---

<sup>346</sup> Dr. **Farideh Farhi**, *Iran's 2008 Majlis Elections: The Game of Elite Competition* <https://www.brandeis.edu/crown/publications/middle-east-briefs/pdfs/1-100/meb29.pdf>

<sup>347</sup> *Iran (Islamic Republic of) Elections in 2008*, [http://archive.ipu.org/parline-e/reports/arc/2149\\_04.htm](http://archive.ipu.org/parline-e/reports/arc/2149_04.htm); [http://archive.ipu.org/parline-e/reports/arc/2149\\_08.htm](http://archive.ipu.org/parline-e/reports/arc/2149_08.htm)

<sup>348</sup> *2012 Parliamentary Elections*, <https://irandataportal.syr.edu/2012-parliamentary-elections>

տակ<sup>349</sup>: Ընտրությունների ժամանակ բարեփոխականների մանդատներին տիրանալու համար հիմնական պայքարը գնում էր պահպանողականների թևերի միջև<sup>350</sup>: Ընտրությունների նախաշեմին Մահմուդ Ահմադինեժադի կառավարությունը քննադատության էր ենթարկվում գրեթե բոլոր քաղաքական թևերի կողմից, ոչ միայն սոցիալ-տնտեսական ճգնաժամի և միջուկային ծրագրի ոլորտում անհաջողությունների, այլև Իրանում բողոքի այն ալիքների համար, որոնք ցնցել էին երկիրը 2009 թ. ընտրություններից հետո. քննադատում էին նաև Ահմադինեժադին՝ Առաջնորդին ընդդիմալու փորձերի համար: 2012 թ. Մեջլիսի ընտրությունների արդյունքում խոսնակի պաշտոնը կրկին վստահվեց Ալի Լարիջանիին:

2016 թ. փետրվարի 26-ին Իրանի հասարակությունն ընտրում էր **տասներորդ Մեջլիսը**՝ Իսլամական հեղափոխությունից ի վեր: Հասարակությունը խիստ հետաքրքրված էր ընտրություններով, քանզի մեկ տարի առաջ երկրի ղեկավարությանը հաջողվել էր Արևմուտքի հետ հասնել համաձայնության Իրանի Միջուկային ծրագրի վերաբերյալ. այդպիսով, մասնակցության ակտիվությունը կազմեց 61.64%: 12,123 քաղաքացի<sup>351</sup> դիմել էր՝ մասնակցելու պառլամենտական ընտրություններին, թույլ էին տվել մասնակցել 6,229-ին<sup>352</sup>: Հիմնական պայքարն ընթանում էր կրկին Բարեփոխականների դաշինքի (որը գլխավորում էին ԻԻՀ նախկին Նախագահ Մուհամմադ Խաթամին, Մուհամմադ Ռեզա Արեֆը) և պահպանողականների թևերի միջև, որը միավորել էր Ղոլամ Ալի Հադդադ Ադելը: Սահմանադրության պահպանների խորհրդի գտումների արդյունքում շահեկան դիրքում հայտնվեցին պահպանողականները:

---

<sup>349</sup> *Iran (Islamic Republic of) Elections in 2012*, [http://archive.ipu.org/parline-e/reports/arc/2149\\_12.htm](http://archive.ipu.org/parline-e/reports/arc/2149_12.htm)

<sup>350</sup> *Реформистские партии Ирана решили игнорировать парламентские выборы, назначенные на март 2012*, 24.12.2011, <https://tass.ru/politika/535466>

<sup>351</sup> *2016 Parliamentary Election*, <https://irandataportal.syr.edu/parliamentary-elections/2016-parliamentary-election>

<sup>352</sup> *Iran (Islamic Republic of) Elections in 2016*, <http://archive.ipu.org/parline-e/reports/2149.htm>

2015 թ. կնքված ՀԳՀԾ-ից հետո Ռոհանիի կառավարության հեղինակությունն աննախադեպ բարձրացավ, և պահպանողականների թնն օգտագործեց Մեջլիսում ունեցած իր ողջ ներուժը, ինչպես նաև Սահմանադրության պահապանների խորհրդի գործառույթները՝ արգելափակելով Ռոհանիի կառավարության՝ անգամ սահմանափակ թվով բարեփոխումների փորձերը: Իսկ կոռուպցիան և ոչ էֆեկտիվ կառավարումը, այդ թվում նաև՝ ֆինանսատնտեսական գործընթացներում, հոշոտում էին ՀԳՀԾ-ի շնորհիվ երկրին ընձեռված հնարավորությունները<sup>353</sup>:

2016 թ. Հասան Ռոհանին, միավորելով բարեփոխականներին, չափավոր պահպանողականներին և լիբերալ հայացքներ ունեցող հոգևոր և քաղաքական գործիչներին, ձևավորեց «Հույսի ցուցակ», և բոլորը մասնակցեցին միաժամանակ տեղի ունեցող և՛ Բանիմացների խորհրդի, և՛ Մեջլիսի ընտրություններին. նպատակն էր՝ երկու կառույցներում էլ նվազեցնել ծայրահեղ պահպանողականների ներկայությունը<sup>354</sup>: Ակնհայտ էր, որ գործող Նախագահ Հասան Ռոհանին գոհ էր ընտրությունների առաջին փուլից, ինչն էլ արտահայտեց թվիթերյան իր միկրոբլոգում՝ հետևյալ խոսքերով. «Փառք Իրանի պատմությունը կերտող ժողովրդին: Եկեք բացենք նոր էջ՝ հենվելով տաղանդավոր հայրենակիցների և համաշխարհային հնարավորությունների վրա»<sup>355</sup>:

Արդյունքում 125 տեղ ստացան պահպանողականները, Ռոհանիի կողմնակիցները՝ 133 տեղ, անկախներն ստացան 26 տեղ,

---


<sup>353</sup> **Владимир Сажин**, *Парламентские выборы в Иране и их влияние на внутреннюю и международную политику*, Международная жизнь, 04.03.2020 <https://interaffairs.ru/news/show/25567>

<sup>354</sup> *Выборы в Иране: четыре главных вопроса и ответа*, 26 февраля 2016, [http://www.bbc.com/russian/international/2016/02/160226\\_iran\\_elections\\_guide](http://www.bbc.com/russian/international/2016/02/160226_iran_elections_guide)

<sup>355</sup> *Hassan Rouhani*, Feb 29, 2016, [https://twitter.com/HassanRouhani/status/704352856292384768?ref\\_src=twsrc%5Etfw%7Ctwcamp%5Etweetembed%7Ctwterm%5E704352856292384768%7Ctwgr%5E%7Ctwcon%5Es1\\_&ref\\_url=https%3A%2F%2Firanprimer.usip.org%2Fblog%2F2016%2Ffeb%2F29%2Felection-results-1-parliament](https://twitter.com/HassanRouhani/status/704352856292384768?ref_src=twsrc%5Etfw%7Ctwcamp%5Etweetembed%7Ctwterm%5E704352856292384768%7Ctwgr%5E%7Ctwcon%5Es1_&ref_url=https%3A%2F%2Firanprimer.usip.org%2Fblog%2F2016%2Ffeb%2F29%2Felection-results-1-parliament)

կրոնական փոքրամասնությունները՝ 5 տեղ: Ի դեպ, 2016 թ. Մեջլիսում էր, որ գրանցվեց մինչ այդ ընտրված կին պատգամավորների ամենամեծ թիվը, ինչը, անշուշտ, Ռոհանիի և նրա թիմակիցների ներդրած գործուն ջանքերի շնորհիվ էր հնարավոր դարձել: Ներքոհիշյալ գծապատկերում կարելի է տեսնել, որ կանայք Մեջլիսում համեմատաբար շատ տեղեր են զբաղեցրել Մուհամմադ Խաթամիի կառավարման ընթացքում, այնուհետև՝ Հասան Ռոհանիի:

Տղամարդկանց և կանանց համամասնությունը Մեջլիսում<sup>356</sup>



**Մեջլիսի տասնմեկերորդ ընտրությունները** տեղի ունեցան 2020 թ. փետրվարի 21-ին. բնակչության ակտիվությունը բավականին ցածր էր՝ 42.57%, ինչը կապված էր COVID 19-ի համաճարակի հետ, որն արդեն մուտք էր գործել Իրան: Մասնակցելու հայտ էր ներկայացրել 16,145 քաղաքացի, որոնցից 1,937-ը՝ կին, ընտրություններին մասնակցելու թույլտվություն ստացավ 7,148 քաղա-

<sup>356</sup> *The Iran Primer*, <https://iranprimer.usip.org/blog/2020/jan/30/trends-parliamentary-elections>

քացի<sup>357</sup>: Մասնակցության ցածր մակարդակի պատճառներից մեկն էլ այն էր, որ թեկնածուների գրանցման ընթացքում բարեփոխականների թեկնածուների գրանցումները մեծ մասամբ մերժվում էին, իսկ հասարակությունն իր ձայնն ավելի շատ պատրաստ էր տալու բարեփոխականներին, քան պահպանողականներին: Միևնույն ժամանակ, բարեփոխականների կողմնակիցները եկել էին եզրակացության, որ ԱՄՆ-ի կողմից միակողմանի պատժամիջոցների պարագայում իշխանություններն ի գործու չէին լինելու լուծելու երկրում առաջացած խնդիրները: Ստեղծվեց մի իրավիճակ, որի արդյունքում բարեփոխականները՝ Ռոհանիի թիմը, բավականին քիչ ներկայացվածություն ունեցավ ԻԻՀ Մեջլիսում: Արդեն գրանցված թեկնածուների տվյալների համաձայն, անգամ անկախ պատգամավորների թիվն ավելի մեծ էր, քան բարեփոխականներինը: Ընտրություններից հետո Մեջլիսում մեծ թիվ կազմեցին ավելի կոշտ քաղաքականության հետևորդները՝ պահպանողականները: Նրանք ստացան 191 տեղ, բարեփոխականները՝ 16, իսկ անկախ պատգամավորները՝ 34<sup>358</sup>: Ակնհայտ էր, որ այս ընտրությունները և այն մեթոդաբանությունը, որ կիրառվեց Մեջլիսի ընտրական մեխանիզմում, արդեն պարզորոշ ցույց էին տալիս, թե հաջորդ տարի՝ 2021 թ., նախագահական ընտրություններում որ ուժն է հաղթանակելու, և թե ով է լինելու հիմնական ֆավորիտը:

2024 թ. կրկին Մեջլիսի ընտրությունների տարի էր: 24,829 քաղաքացի հայտ էր ներկայացրել՝ մասնակցելու Մեջլիսի ընտրություններին, սակայն Սահմանադրության պահպանների խորհուրդը հաստատեց 15,200-ի թեկնածությունը, որոնցից՝ 1,713 կին<sup>359</sup>:

---

<sup>357</sup> 2020 Parliamentary Election, <https://irandataportal.syr.edu/2020-parliamentary-election>

<sup>358</sup> *Iran's 2020 Parliamentary Elections: A one-sided Contest*, 04 Mar 2020, <https://rasanah-iiis.org/english/monitoring-and-translation/reports/irans-2020-parliamentary-elections-a-one-sided-contest/>

<sup>359</sup> 2024 Parliamentary election, <https://irandataportal.syr.edu/parliamentary-elections/2024-parliamentary-election>

Ընտրություններին մասնակցեց ընտրության իրավունք ունեցող 25 մլն մարդ, ինչը կազմում է մոտ 41%<sup>360</sup>, որն ավելի ցածր էր, քան COVID 19-ի համաճարակի ժամանակ մասնակցությունը: Այս պատմական նվազագույն մասնակցությունը տեղի ունեցավ 2022–2023 թթ. հակակառավարական զանգվածային բողոքների, արևմտյան պատժամիջոցներից տուժած երկրի տնտեսական խորացող խնդիրների պատճառով աճող հանրային դժգոհության ֆոնին: Մյուս կողմից էլ բարեփոխականները կոչ էին արել բոյկոտել ընտրությունները: Այսպիսով, 2024 թ. Իրանի Մեջլիսի ընտրությունների արդյունքում խորհրդարանը ձևավորվել է գերազանցապես խիստ պահպանողական ներկայացուցիչներից, ինչը վկայում է քաղաքական համակարգում ուժերի հստակ վերադասավորման մասին՝ ի նպաստ իսլամական հեղափոխության ավանդապաշտ ուղեգծի շարունակման:

Ամփոփելով սույն գլուխը՝ գալիս ենք այն եզրակացության, որ թեպետ Իրանի Մեջլիսն ընտրովի կառույց է, սակայն այն ազատորեն չի կարող օգտագործել իր իրավունքները և ընդունել այն օրենքները, որ նպատակահարմար է գտնում: Դրանք անպայմանորեն ստուգվում են ԻԻՀ Սահմանադրության պահապանների խորհրդի կողմից: Ինչպես արձանագրում է Աբուլֆազլ Ամերի Շահրաբին իր ատենախոսության մեջ. «...շատ հաճախ իսլամի սկզբունքները, սովորությունները և ծիսակարգերն Իրանում խոչընդոտում են ժողովրդավարության տարածումը»<sup>361</sup>՝ այսպիսով անուղղակի փաստելով, որ Մեջլիսը շատ հաճախ չի կարողանում իրականացնել ժողովրդի կողմից իրեն տրված մանդատը, քանզի, միևնույն է, այդ օրենքները պարտադիր ստուգվելու են Սահմանադրության պահապանների խորհրդի կողմից: Կիսում ենք նրա մեկ այլ տեսակետ ևս. «Ժողովուրդն իր ընտրած պատգամավորներին ձայն է տվել, որպեսզի

---

<sup>360</sup> *Iran Vote turnout hits historic low amid discontent* [https://www.reuters.com/world/middle-east/unofficial-reports-put-iran-election-turnout-around-40-2024-03-02/?utm\\_source=chatgpt.com](https://www.reuters.com/world/middle-east/unofficial-reports-put-iran-election-turnout-around-40-2024-03-02/?utm_source=chatgpt.com)

<sup>361</sup> **Աբուլֆազլ Ամերի Շահրաբի**, *Իրանի Իսլամական Հանրապետության իրավական համակարգը*, Ատենախոսություն, Երևան, 2018, էջ 32:

նրանք զբաղվեն ընթացակարգերի ընդունմամբ, և նրանց այդ պարտականությունն այլոց հանձնման կամ վերալիազորման ենթակա չէ: Ուստի, գործադիր իշխանության ներկայացուցիչների կողմից օրենքի սահմանումը հակասում է ժողովրդի այդ ընտրությանը<sup>362</sup>: Խոսքը վերաբերում է Սահմանադրության պահապանների խորհրդի՝ ըստ էության գերլիազորություններին:

Միևնույն ժամանակ, եթե երկրում առկա է որևէ խնդրահարույց հարց, ապա դրա իրական քննարկման հարթակը Մեջլիսն է: Դրա ցայտուն օրինակներից էր այն, որ ինչպես մինչ ՀԳՀԾ կնքումը, այնպես էլ դրանից հետո Մեջլիսը պահանջում էր գործող արագորժնախարարից՝ 3 ամիսը մեկ անգամ հաշվետվություն ներկայացնել Մեջլիսին, թե ինչպիսի զարգացումներ կան այդ ոլորտում:

## Հայերի ներկայությունը Իրանի մեջլիսում

ԻԻՀ Սահմանադրության 13-րդ հոդվածի համաձայն՝ իրանահայությանը տրվել են ներքին մշակութային և կրոնական ինքնավարության լայն իրավունքներ<sup>363</sup>: Մեջլիսում հայ համայնքը ներկայացվածության իրավունք ստացավ 1905–1911 թթ.՝ Սահմանադրական շարժումից անմիջապես հետո: 1978–79 թթ. Իսլամական հեղափոխությունից հետո պահպանվեց նույն իրավունքը, որն ամրագրվեց Սահմանադրության 64-րդ հոդվածում<sup>364</sup>: Մեջլիսի հայ պատգամավորներից մեկն ընտրվում է հյուսիսային շրջաններից, մյուսը՝ հարավային:

Իրանում խորհրդարանական ընտրությունների ժամանակ թեկնածություն առաջադրում են հիմնականում Դաշնակցություն կուսակցության ներկայացուցիչները: Ընտրություններին մասնակ-

---

<sup>362</sup> Նույն տեղում, էջ 43:

<sup>363</sup> **Օ. Փահլևանյան, ԻԻՀ Սահմանադրությունը և պետական կառուցվածքը**, Երևան, 1997, էջ 19:

<sup>364</sup> Նույն տեղում, էջ 20:

ցելու ցանկություն հայտնած թեկնածուներից կազմվում է մոտ 50 հոգանոց ցուցակ, որն ուղարկվում է համայնքային ոստիկանություն, որտեղ ստուգվում են նրանց մասին ամբողջական տեղեկությունները և ընտրում մոտ 30-ին, որոնց շարքերից էլ իրանահայերն ընտրում են երկուսին:

Վերջին 45 տարիների ընթացքում աշխատանքներ են իրականացրել հետևյալ իրանահայ գործիչները՝ Թեհրանի և հյուսիսային շրջանից՝ Հրայր Իսալաթյան, Վարդան Վարդանյան (4 նստաշրջան), դոկտ. Լևոն Դավթյան, Գևորգ Վարդան (2 նստաշրջան), դոկտ. Կարեն Իսանլարյան (2 նստաշրջան), Արա Շահվերդյան (2 նստաշրջան): Սպահանի և հարավային շրջանից՝ դոկտ. Հրաչ Խաչատրյան, Արտավազդ Բաղումյան (4 նստաշրջան), Ժորժիկ Աբրահամյան (2 նստաշրջան) և Ռոբերտ Բեգլարյան (3 նստաշրջան), Գեղարդ Մանսուրյան: Նշենք, որ իրանահայերն ընտրությունը կատարում են համայնքի եկեղեցիներում, դպրոցներում հատկացված վայրերում և ընտրում են միայն իրենց 2 պատգամավորներին:

Նրանց ջանքերով քննարկվել և լուծում են ստացել համայնքին վերաբերող մի շարք խնդիրներ. դրանց թվին են պատկանում հայոց դպրոցների, կրոնի ու հայոց լեզվի դասավանդման հարցերի հետ կապված խնդիրները:

Ուշադրության են արժանի նաև կրոնական փոքրամասնություններին վերաբերող ծիսական, իրավական ու դատական-ժառանգական բազմաթիվ իրավունքներն օրենսդրական դաշտում շահեկանորեն ամրագրելու շուրջ տևական ժամանակ իրականացրած աշխատանքները, որի արդյունքում խնդիրները հաղթահարվել կամ նվազագույնի են հասցվել:

Իրանահայ պատգամավորները տարիներ շարունակ պայքարել են՝ ապահովելու և հաստատելու հետևյալ իրավունքներն ու դրանց հետ կապված համապատասխան օրինագծերը.

– «Դիէ»-ի<sup>365</sup> (արյան հարկի) հավասարեցում մուսուլմանի և ոչ մուսուլմանի համար,

– Պետական տարեկան բյուջեից հատկացում կրոնական փոքրամասնություններին,

– Պետական հաստատություններում (մասնավորապես ուսումնադաստիարակչական) կրոնական փոքրամասնությունների աշխատանքային արտոնություն:

Իսկ որպես քաղաքական ձեռքբերում՝ իրանական պառլամենտում առաջին անգամ ներկայացվեց մի օրինագիծ, որով առաջարկվում էր ապրիլի 24-ը ճանաչել որպես Հայոց ցեղասպանության օր: Այդ օրինագծի համար ստորագրել էր ԻԻՀ 32 պատգամավոր, ինչն աննախադեպ երևույթ էր<sup>366</sup>:

Դաշտային աշխատանք կատարելու ժամանակ հարցազրույցների շարք է իրականացվել Մեջլիսի նախկին պատգամավոր Կարեն Խանլարյանի հետ՝ խոսելով այն մեխանիզմների մասին, որոնց միջոցով հայությունն իրեն հուզող հարցերը բարձրացնում է կառավարության առջև:

Մեջլիսի նախկին պատգամավոր Կ. Խանլարյանի կարծիքով հայության խնդիրները ԻԻՀ կառավարության առջև բարձրացվում են ամենատարբեր միջոցներով՝ նամակագրության, կենդանի շփման միջոցով, անհրաժեշտության դեպքում խնդիրը կարող է բարձրացվել անգամ օրենսդիրների մակարդակով:

---

<sup>365</sup> Մարդկային կյանքի կորստի հանգեցնող երեք միջադեպերում, օրենքով նախատեսված պատժից զատ, մեղավորը պարտավոր է նաև համապատասխան արյան գին վճարել, որը յուրաքանչյուր տարի որոշվում է Կենտրոնական բանկի կողմից՝ հաշվի առնելով հեղափոխության առաջնորդի տեսակետը: Միջադեպերը դասակարգված են ըստ հետևյալ դեպքերի. բացարձակ սխալ, որը հանգեցրել է մահվան, ոչ դիտավորյալ սպանություն, օրինակ՝ ավտովթար, և դիտավորյալ սպանություն: Արման Փոլադյան, Իրանի կրոնական փոքրամասնություններ, 27.03.2010, <https://www.lragir.am/2010/03/27/33471/?fbclid=IwAR2bwlmlloVq38Ea2ahfUG23J9XAYyR0j8Xc0iW87-YhGiGEbGeMHdTmuyU>

<sup>366</sup> «Բարեկարգչական 6-րդ մեջլիսը» եւ իրանահայութեան պատգամավորները... <https://shorturl.at/dhkrI>, տես նաև [http://www.diplomat.am/publ/authors/derenik\\_meliqean/1/87-1-0-1534](http://www.diplomat.am/publ/authors/derenik_meliqean/1/87-1-0-1534)

Հարավային շրջանի պատգամավոր Ռոբերտ Բեգլարյանն էլ ներկայացրեց, թե օտար միջավայրում ապրող հայերը, հաշվի առնելով կրոնի գործոնը, ինչ խնդիրների են բախվում: Ըստ նրա՝ կրոնական փոքրամասնությունների համար նախատեսված օրենքով նրանց թույլ չեն տալիս մասնակից դառնալ որոշակի աշխատանքների. զինվորական և անվտանգության մարմիններում աշխատել չի թույլատրվում, թեև դա Սահմանադրությամբ կամ որևէ այլ օրենքով ամրագրված չէ: Դա չգրված օրենք է: Երկրի բարձրագույն պաշտոնների, դատավորների, ինչպես նաև երկրի բարձրագույն հաշվեքննիչ մարմինների աշխատանքային նկարագրի մեջ ամրագրված է, որ աշխատակիցը պետք է պարտադիր լինի իսլամադավան: Մինչդեռ մյուս բնագավառներն այս առումով ազատ են:

Արդեն երկու տարի է, ինչ կրոնական փոքրամասնություններին քվոտա է տրվում. օրինակ, որոշակի պաշտոնների նկարագրերում գրվում է, որ անձը պետք է լինի իսլամի հետևորդ կամ ԻԻՀ Սահմանադրությամբ ընդունված կրոնական փոքրամասնության անդամ, այսինքն՝ դրանով հայերի առաջ իրական դուռ է բացվում: Բայց դժվարություններ դեռևս առկա են<sup>367</sup>:

Ամփոփելով, կարող ենք գալ այն եզրակացության, որ թեև հայերը կրոնական փոքրամասնությունների մեջ ամենից արտոնյալ պայմաններում են գտնվում, քանի որ ունեն երկու տեղ, ինչը պայմանավորված է հայերի թվով, այնուամենայնիվ այդ տեղերն առավել նոմինալ են, քանի որ նրանք ընտրվել են միայն հայ համայնքի կողմից: Նրանք ներկայացնում են հիմնականում իրանահայության շահերը, փորձում աջակցել ԻԻՀ Մեջլիս - ՀՀ Ազգային ժողով բարեկամության խմբի աշխատանքներին:

---

<sup>367</sup> Հարցազրույցներ ԻԻՀ Մեջլիսի պատգամավորներ Կարեն Խանդարյանի և Ռոբերտ Բեգլարյանի հետ, Թեհրան, նոյեմբեր 3, 2012:

## Համակարգի նպատակահարմարության ժողով – **Majma'-e Taškhīs-e Maslahat-e Nezām**

Իսլամական հեղափոխությունից հետո մեկը մյուսի հետևից ձևավորվեցին Իրանի պետական նոր կառույցները: Իրանի Մեջլիսի հաստատմամբ պատգամավորներն սկսեցին իրենց պատկերացումներին, գիտելիքներին ու հմտություններին համապատասխան զբաղվել օրենսդիր գործունեությամբ: Իրանա-իրաքյան պատերազմից հետո, երբ երկիրը լծվեց տնտեսական խնդիրների հաղթահարման գործին, բնականաբար պահանջվում էին նաև գործադիր իշխանության դիրքերի ամրապնդում և օրենսդրական բազայի ստեղծում: Տնտեսության զարգացման առաջին հնգամյա ծրագիրը մշակվեց դեռևս Խոմեյնիի կենդանության օրոք, և Մեջլիսում նախնական նախագիծը քննարկելու ժամանակ այն դարձավ կատաղի հակասությունների պատճառ<sup>368</sup>:

Քանի դեռ այդ անհրաժեշտ կառույցը՝ Նպատակահարմարության ժողովը, չէր ստեղծվել, պետական համակարգում ակնհայտորեն մեծանում էր լարումը: Մեջլիսի մի շարք օրենքներ Սահմանադրության պահապանների խորհրդի կողմից մերժվում և վերադարձվում էին Մեջլիս՝ վերանայվելու: Նույն օրենքը կարող էր վերանայվելուց հետո էլ արժանանալ նույն ճակատագրին: Խնդիրը, թերևս, այն էր, որ Սահմանադրության մեջ ամրագրված որոշ օրենքներ ամբողջովին չէին համապատասխանում իսլամական շարիաթի օրենքներին, կամ պատգամավորները քաջատեղյակ չէին իսլամի մի շարք օրենքներից, իսկ Սահմանադրության պահապանների խորհրդի անդամները երբեմն այլ կերպ էին մեկնաբանում օրենքները, որից էլ առաջանում էր ճգնաժամը: Ստեղծված իրավիճակը, բնականաբար, ծնում էր լարում, և նմանատիպ խնդիրների

---

<sup>368</sup> **Мамедова Н.М.,** *Политическая система Исламской Республики Иран: особенности и возможности трансформации*, Контуры глобальных трансформаций, том 11, номер 3, 2018, стр. 158.

լուծման համար անհրաժեշտ էր լինում Առաջնորդի միջամտությունը: Սակայն Առաջնորդը ևս ցանկություն չունեի ամեն անգամ մտնելու Մեջլիսի և Սահմանադրության պահապանների խորհրդի վեճերի մեջ, քանի որ դա հակասում էր նաև Իսլամական Հանրապետության մասին այաթոլլահ Խոմեյնիի արտահայտած տեսակետներին, ըստ որի՝ Առաջնորդը չպետք է ուղղակիորեն միջամտի համակարգի որևէ ինստիտուտի գործունեությանը և պետք է լուրջ վարի հավասարակշռողի դերակատարություն:

Իշխանության երեք ճյուղերի ղեկավարները նամակ գրեցին Առաջնորդին՝ խնդրելով նոր մարմին ստեղծելու հրաման արձակել՝ Մեջլիս - Սահմանադրության պահապանների խորհուրդ վեճը լուծելու համար: Ի պատասխան, Խոմեյնին գրեց մի նամակ, որտեղ, ի մասնավորի, նշել էր. «Թեպետ, ըստ իս, բանիմացներին մանրագնին ուսումնասիրելուց հետո... հաղթահարվել են ծանր իրավիճակներ, և թվում էր, թե կարիք չկա դիմելու այս քայլին, սակայն Մեջլիսի իսլամական խորհրդի և Սահմանադրության պահապանների խորհրդի միջև տարաձայնությունները վերացնելու համար պետք է ստեղծվի Ասամբլեա, որը բաղկացած կլինի Սահմանադրության պահապանների խորհրդի բարձրաստիճան ֆաղիհներից՝ հազրաթներից, հօջաթ օլ-իսլամներից... Քննարկվող հարցի շուրջ խորհրդակցություններից հետո որոշումը պետք է ընդունվի Ասամբլեայի անդամների ձայների մեծամասնությամբ....»<sup>369</sup>:

Պետության գործունեության նկատմամբ իսլամի սահմանափակումները հանելու համար Այաթոլլահ Խոմեյնին օգտագործեց «մասլահաթ» հասկացությունը (շահ, նպատակահարմարություն)՝ դրանով իսկ հաշտեցման եզրեր գտնելով կրոնական նորմերի ու

---

<sup>369</sup> **Аббас Манучихри**, *Политическая система Ирана*, Санкт Петербург, 2007, стр. 42–43.

նացիոնալության միջև, որով միևնույն ժամանակ ամրապնդեց Առաջնորդի իշխանությունը<sup>370</sup>:

Թեև Սահմանադրության նախնական տարբերակում Նպատակահարմարության ժողովի մասին որևէ հոդված առկա չէր, սակայն ստեղծված իրավիճակը Իրանի բարձրագույն ղեկավարությանն ստիպեց մտածել նմանատիպ նոր կառույցի ստեղծման մասին, և 1988 թ. որոշում կայացվեց Իրանի բարձրագույն իշխանությանը կից մի կառույցի ստեղծման մասին, որի հիմնական առաքելությունը կլինեին ԻԻՀ Մեջլիսի և Սահմանադրության պահապանների խորհրդի միջև առաջացած խնդիրները լուծելը: Համակարգի նպատակահարմարության ժողովն ընտրովի մարմին չէ և համարվում է նաև Իրանի բարձրագույն իշխանության խորհրդակցական մարմին:

Խոմեյնիի մահից հետո հոգևորականները համաձայնեցին փոփոխություններ մտցնել Սահմանադրության մեջ: Վարչապետի պաշտոնը վերացվեց, Համակարգի նպատակահարմարության ժողովն ընդգրկվեց պետական բարձրագույն համակարգի կազմի մեջ<sup>371</sup>:

1989 թ. Սահմանադրության փոփոխության ժամանակ Սահմանադրության 8-րդ գլխում ավելացվեց 112-րդ հոդվածը, որը վերնագրված է՝ «Երկրի առաջնորդը կամ երկրի ղեկավարման խորհուրդը», ըստ որի՝ «Համակարգի նպատակահարմարությունը որոշող խորհուրդը կազմավորվում է երկրի Առաջնորդի հրահանգով՝ որոշելու նպատակահարմարությունն այն դեպքում, երբ Սահմանադրության պահապանների խորհուրդը գտնում է, որ Մեջլիսի

---

<sup>370</sup> **В.Ф. Марчуков, И.Ю. Зобова**, *Социально-политические системы стран Среднего Востока (Турция, Иран, Афганистан) (с углубленным изучением истории и культуры ислама)*, Курс лекций, Казань, 2012, стр. 76, [chrome-extension://efaidnbmnnnnibpcajpcgclefindmkaj/https://kpfu.ru/docs/F1027564676/4\\_Zobov\\_lekts.pdf](chrome-extension://efaidnbmnnnnibpcajpcgclefindmkaj/https://kpfu.ru/docs/F1027564676/4_Zobov_lekts.pdf)

<sup>371</sup> **Мамедова Н.М.**, Политическая система Исламской Республики Иран: особенности и возможности трансформации, *Контурь глобальных трансформаций*, том 11, номер 3, 2018, стр. 158.

որոշումը չի համապատասխանում շարիաթի նորմերին կամ Սահմանադրությանը, իսկ Մեջլիսը, ելնելով պետական նպատակահարմարությունից, համաձայն չէ Սահմանադրության պահապանների խորհրդի որոշման հետ»<sup>372</sup>: Պետք է արձանագրել, որ այսօր ցանկացած օրենքի նկատմամբ Մեջլիսի և Սահմանադրության պահապանների միջև առաջացած վեճը լուծվում է Նպատակահարմարության ժողովի կողմից, և վերջինիս որոշումը անբեկանելի է: Փաստենք, որ ժողովրդի կողմից չընտրված մարմնի՝ Համակարգի նպատակահարմարության ժողովի ընդունած որոշումները վարկանշային առումով առավել մեծ ուժ են պարունակում, քան ժողովրդի կողմից ընտրված Մեջլիսի ընդունած օրենքները:

Նպատակահարմարության ժողովի միջոցով լուծված և կյանքի կոչված օրենքների շարքին են պատկանում պատիժների մասին օրենսդրությունը, Թմրամոլության դեմ պայքարի մասին օրենքը, Աշխատանքի մասին օրենքը<sup>373</sup>: Վերջինը տարաձայնությունների լուրջ առարկա էր դարձել Մեջլիսի և Սահմանադրության պահապանների խորհրդի միջև, ինչպես նաև մաքսանենգության դեմ պայքարի մասին օրենքը և այլն<sup>374</sup>: Փաստացի, Նպատակահարմարության ժողովի հիմնական գործառույթն է՝ Մեջլիսի և Սահմանադրության խորհրդի միջև առաջացած խնդրի շուրջ գտնել կոնսենսուսային տարբերակ, որը համահունչ կլինի Իրանի ազգային շահերին, Սահմանադրությանը և Իսլամի նորմերին, և այն ներկայացնել Առաջնորդի դատին:

Սակայն հետագայում Նպատակահարմարության ժողովի լիազորություններն ընդլայնվեցին՝ ժողովի վրա դնելով նաև համակարգի ընդհանուր քաղաքականության մշակման գործընթացին

<sup>372</sup> *ԻԻՀ Սահմանադրություն*, հոդված 112:

<sup>373</sup> *What are statuses and duties of “Expediency Council” in the Iranian system?* 21.08.2017 <https://english.khamenei.ir/news/5072/What-are-statuses-and-duties-of-the-Expediency-Council-in-the>

<sup>374</sup> **Аббас Манучихри**, *Политическая система Ирана*, Санкт Петербург, 2007, стр. 44.

մասնակցելու առանցքային դերակատարություն<sup>375</sup>: «Սահմանադրության 110 հոդվածի առաջին և երկրորդ ենթակետերով նպատակահարմարության ժողովը մշակում է երկրի ընդհանուր քաղաքականությունը և վերահսկում դրա իրականացումը: Իսկ 8-րդ ենթակետով արձանագրում է. «Համակարգի նպատակահարմարությունը որոշող խորհրդի օգնությամբ (պետք է լուծվեն) պետության այն դժվարությունների հաղթահարումը, որոնք հնարավոր չէ լուծել սովորական եղանակով»: Եվ քանի որ նպատակահարմարության ժողովը հաճախ չի հավաքվում, և նիստերը ուշ-ուշ են անցկացվում, Առաջնորդը, օգտագործելով իր իրավունքը, համաձայն սահմանադրության 110 հոդվածի 2-րդ ենթակետի, պետք է սահմանել «Վերահսկողություն պետության ընդհանուր քաղաքական գծի նկատմամբ», 2019 թ. ապրիլին ստեղծեց «Համակարգի ընդհանուր քաղաքականությունն ըստ պատշաճի իրականացման Վերահսկման գերագույն կոմիտե»<sup>376</sup>: Այսպիսով, ըստ Բեգլարյանի, ԻԻՀ նպատակահարմարության ժողովի ենթակայության տակ ստեղծվել է Վերահսկման գերագույն կոմիտե՝ բաղկացած 15 հոգուց, և այն «այս պահին ավելի մեծ հեղինակություն ունի, քան Նպատակահարմարության ժողովը, քանի որ Առաջնորդը՝ համաձայն 110-րդ հոդվածի 11-րդ կետի, իր որոշ իրավունքներ հանձնել է Նպատակահարմարության ենթակայության տակ գտնվող 15 հոգանոց այդ կոմիտեին»<sup>377</sup>: Այսինքն՝ Մեջլիսը ինչ օրենք որ հաստատում է, բացի այն, որ ուղարկվում է Սահմանադրության պահապանների խորհրդին, որպեսզի այն չհակասի Սահմանադրությանը և շարիաթին, զուգահեռ նույն օրենքը ուղարկվում է Նպատակահարմարության ժողովի ենթակայության տակ գտնվող կոմիտեին, որպես-

<sup>375</sup> *What are statuses and duties of “Expediency Council” in the Iranian System?* 21.08.2017 <https://english.khamenei.ir/news/5072/What-are-statuses-and-duties-of-the-Expediency-Council-in-the>

<sup>376</sup> Հարցազրույցներ ԻԻՀ Մեջլիսի նախկին պատգամավոր Ռոքեդոն Բեգլարյանի հետ, Երևան, օգոստոսի 28, 2025, ՀՀ:

<sup>377</sup> Նույն տեղում:

զի նրանք էլ ստուգեն՝ համապատասխանո՞ւմ է արդյոք օրենքը ընդհանուր քաղաքականությանը: «Սա երբեմն բողոք է առաջացնում Մեջլիսի պատգամավորների մեջ, քանզի նրանք մեղադրում են այս կոմիտեին, որ նրանք նոր օրենսդրություն են իրականացնում: Մինչդեռ Վերահսկման գերագույն կոմիտեն էլ պատասխանում է, որ իրենք օրենսդրություն չեն իրականացնում, այլ ցույց են տալիս՝ օրենքը հակասո՞ւմ է ընդհանուր քաղաքականությանը, թե՛ ոչ: Այս խնդիրը բարձրացավ հատկապես աղմկահարույց FATF քննարկման ժամանակ (Financial Action Task Force հակաահաբեկչական փողերի լվացման հարցով), որին Իրանը մաս չի կազմել և դրա պատճառով էլ ենթարկվել է բազմաթիվ պատժամիջոցների»: Մեջլիսը այս հարցի կապակցությամբ երկար ժամանակ որոշում չէր կարողանում կայացնել: Այնուհետև տեղափոխվեց Նպատակահարմարության ժողով, և կառույցը խնդիր չտեսավ օրենքում, մինչդեռ Նպատակահարմարության ժողովին կից ենթակա կոմիտեն տեսավ լրջագույն խնդիր, ըստ որի այն հակասում է ընդհանուր՝ ռազմավարական քաղաքականությանը<sup>378</sup>:

Ըստ էության, վերջին տարիներին Իրանի օրենսդրական գործընթացում ձևավորվել է հետևյալ պրակտիկան. երբ Մեջլիսը ընդունում է օրենք, այն փոխանցվում է երկու տարբեր մարմինների: Նախ՝ Սահմանադրության պահապանների խորհրդին՝ օրենքի՝ իսլամին և Սահմանադրությանը համապատասխանությունը գնահատելու նպատակով, և երկրորդ՝ Նպատակահարմարության խորհրդակցական խորհրդին (կամ կոմիտեին)՝ երկրի ընդհանուր ռազմավարական ուղղություններին դրա համապատասխանությունը գնահատելու համար:

Այդ կառուցակարգի շրջանակներում, «եթե կոմիտեն արձանագրում է որևէ հակասություն օրենսդրական ակտում, վերջինս ուղարկվում է Սահմանադրության պահապանների խորհուրդ, որն

---

<sup>378</sup> Հարցազրույցներ ԻԻՀ Մեջլիսի նախկին պատգամավոր Ռոբերտ Բեգլարյանի հետ, Երևան, օգոստոսի 28, 2025, ՀՀ:

էլ պատասխանատու է Մեջլիսին տրամադրել հիմնավոր եզրակացություն այն մասին, թե օրինագծի որ դրույթներն են հակասում իսլամական նորմերին, որը՝ ազգային ռազմավարությանը»<sup>379</sup>:

ԻԻՀ Սահմանադրության 177-րդ հոդվածի համաձայն՝ Նպատակահարմարության ժողովին տրվում են այլ լիազորություններ ևս, օրինակ՝ Սահմանադրության վերանայման խորհրդի աշխատանքներին մասնակցելը<sup>380</sup>:

Ուշադրության է արժանի մեկ այլ հանգամանք ևս. այն է՝ իշխանությունները կարողանում են խելամտորեն օգտագործել Իրանի այս բարդ կառավարական համակարգը: Պետական համակարգի այս բարդ շրջափուլերը նպաստում են, որ Իրանը միջազգային այս կամ այն օրենքը կամ փաստաթուղթն ընդունելու անհրաժեշտության դեպքում ժամանակ չահի՝ միևնույն ժամանակ միջազգային կառույցներին ցույց տալով, որ գործընթացը իրականացման փուլում է: Այսպիսով, Մեջլիսում կարող են քննարկվել դատական իշխանության բարեփոխման ծրագրեր կամ միջուկային ոլորտին վերաբերող հարցեր, քննարկումը կարող է ուղեկցվել կառավարությանը քննադատող ելույթներով՝ ընդգծելով խոսքի ազատության պարտադիր դրույթը, սակայն, երբ դրա վերաբերյալ ընդունվի օրինագիծ, այն կարող է չհաստատվել Սահմանադրության պահպանների խորհրդի կողմից: Ըստ ընթացակարգի՝ այդ օրինագիծը հետագայում կներկայացվի Նպատակահարմարության ժողովին, որը պետք է որոշի դրա կարևորությունը: Այս գործընթացի համար բավական ժամանակ է անհրաժեշտ: Թերևս, նման դեպքերի շարքում կարող ենք դասել ինչպես 2015 թ. Մեջլիսում Իրանի և հնգյակի միջև Վիեննայում կնքված պայմանագրի քննարկումը, այնպես

---

<sup>379</sup> Հարցազրույցներ ԻԻՀ Մեջլիսի նախկին պատգամավոր Ռոքեդոն Բեգլարյանի հետ, Երևան, օգոստոսի 28, 2025, ՀՀ:

<sup>380</sup> ԻԻՀ Սահմանադրություն, հոդված 177:

էլ ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի վերաբերյալ կոնվենցիայի մասին օրինագիծը<sup>381</sup>:

Նպատակահարմարության ժողովի անդամները, բացի իշխանության երեք թևերի՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների ղեկավարներից, նաև քաղաքական և կրոնական ներկայացուցիչներն են, որոնք ուղղակի նշանակվում են Առաջնորդի կողմից<sup>382</sup>: Նպատակահարմարության ժողովի անդամների թիվը այս տարիների ընթացքում ենթարկվել է փոփոխության. ժողովի անդամներ են Սահմանադրության պահապանների խորհրդի վեց ներկայացուցիչ, որոնք իրենց որոշումները կայացնելիս այս ժողովում այլևս չպետք է հիմք ընդունեն շարիաթը, այլ պետք է խարսխվեն պետության շահի վրա: 2022 թ. Նպատակահարմարության ժողովի նշանակված անդամների թիվը 35-ն է:

Նպատակահարմարության ժողովի լիազորությունների ժամկետը հինգ տարի է: Կառույցն ունի նախագահ, քարտուղար<sup>383</sup>:

Նպատակահարմարության ժողովը ունի ինչպես մշտական, այնպես էլ հատուկ հանձնաժողովներ և քարտուղարություն:

Մշտական հանձնաժողովներն են.

1. Գիտական, մշակութային և սոցիալական հանձնաժողովը,
2. Քաղաքական, պաշտպանության և անվտանգության հանձնաժողովը,
3. Կառուցվածքային և արտադրական հանձնաժողովը,
4. Առևտրի և վարչական հանձնաժողովը,
5. Իրավաբանական և դատական հանձնաժողովը<sup>384</sup>:

---

<sup>381</sup> *Iran's parliament votes to combat financing of terrorism*, 07.10.2018, <https://www.dw.com/en/irans-parliament-votes-to-combat-financing-of-terrorism/a-45788328>

<sup>382</sup> **Аббас Манучихри**, *Политическая система Ирана*, Санкт Петербург, 2007, стр. 44.

<sup>383</sup> *Иран: оппозиционные политические группы, силовые структуры, избранные проблемы в области прав человека, верховенство права Сборник ИСП Июль 2015 г.*, р. 13–14.

Մշտական հանձնաժողովի անդամները պետք է ներգրավվեն մեկ կամ երկու հանձնաժողովի աշխատանքներում: Յուրաքանչյուր հանձնաժողով ունի ղեկավար, տեղակալ և քարտուղար, որոնք նշանակվում են 1 տարի ժամկետով և կարող են վերընտրվել հաջորդ տարիների ընթացքում՝ համաձայն ներքին կանոնադրության 7-րդ կետի<sup>385</sup>:

Քարտուղարության հիմնական պարտականությունն է՝ կազմակերպել մշտական հանձնաժողովի աշխատանքները, ինչպես նաև պահպանել պետական այլ կառույցների, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների հետ կապը:

Նպատակահարմարության ժողովի կանոնադրությունը մշակվել և ընդունվել է Ժողովի անդամների կողմից, այնուհետև այն հաստատվել է Առաջնորդի կողմից<sup>386</sup>:

Փաստացի, Նպատակահարմարության ժողովը բաժանվում է երկու խմբի՝ սովորական կամ ընթացակարգային և արտակարգ: Ներքին կանոնադրության 8-րդ կետը սահմանում է սովորական հանդիպումների ժամանակացույցը. ժողովները հրավիրվում են երկու շաբաթը մեկ անգամ, իսկ արտակարգ ժողովի հրավիրման ժամանակացույցը, ըստ ներքին կանոնադրության 21-րդ և 22-րդ կետերի, կարող է որոշվել սովորական ժողովի ժամանակ՝ Խորհրդի նախագահի թույլտվությամբ կամ անդամների մեկ երրորդի գրավոր խնդրանքի դեպքում<sup>387</sup>:

---

<sup>384</sup> *Internal Bylaw of the Expediency Council (The Council for Expediency of the System)* <https://irandataportal.syr.edu/http-www-maslahat-ir-index-jspfkeyidsiteid3pageid409>

<sup>385</sup> *Internal Bylaw of the Expediency Council (the Council for Expediency of the System) [majma'-e tashkhis-e maslehat-e nezam]* <https://irandataportal.syr.edu/http-www-maslahat-ir-index-jspfkeyidsiteid3pageid409>

<sup>386</sup> *ԻԻՀ Մահմանադրություն*, հոդված 111, 112:

<sup>387</sup> *Internal Bylaw of the Expediency Council (the Council for Expediency of the System) [majma'-e tashkhis-e maslehat-e nezam]* <https://irandataportal.syr.edu/http-www-maslahat-ir-index-jspfkeyidsiteid3pageid409>

Ուշադրության է արժանի նաև Նպատակահարմարության ժողովի մեկ գործառույթ ևս, որն ամրագրված է Սահմանադրության 111-րդ հոդվածով, ըստ որի՝ Առաջնորդի մահվան կամ պաշտոնից ինքնակամ հրաժարվելու դեպքում Բանիմացների խորհուրդը պետք է հնարավորինս շուտ որոշի և ներկայացնի նոր Առաջնորդին: Սակայն մինչև այդ պահը երկրի ղեկավարի պարտականությունները պետք է կատարի Խորհուրդը, որի կազմի մեջ մտնում են երկրի Նախագահը, դատական իշխանության ղեկավարը և մեկ ֆաղիհ (բարձրաստիճան հոգևորական) Սահմանադրության պահպանների խորհրդից. վերջինիս ընտրում է Համակարգի նպատակահարմարության ժողովը: Եթե վերոնշյալ անձանցից որևէ մեկը ինչ-որ պատճառով չի կարող կատարել իր պարտականությունները, ապա Համակարգի նպատակահարմարության ժողովի ընտրությամբ նրա փոխարեն նշանակվում է մեկ այլ անձ, որպեսզի ֆաղիհները մեծամասնություն կազմեն<sup>388</sup>:

Նպատակահարմարության ժողովի միջոցով փորձում են լուծում տալ ոչ միայն ԻԻՀ Մեջլիսի և Սահմանադրության պահպանների խորհրդի միջև լարվածություններին, այլև ընդհանրապես կառավարման համակարգում առաջացած խնդրահարույց և ճգնաժամային իրավիճակներին. Առաջնորդի կողմից հանձնարարություն ստանալու պարագայում Նպատակահարմարության ժողովը պետք է փորձի վերացնել կառավարման համակարգում առաջացած խոչընդոտները: Նպատակահարմարության ժողովն ունի իրավունք նաև իր տեսակետներն արտահայտելու նախարարների՝ տարբեր խնդիրների հետ կապված քննությունների վերաբերյալ: Այս լիազորություններն ամրագրված են Սահմանադրության 110-րդ, 111-րդ, 112-րդ, 177-րդ հոդվածներում:

Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ երկրի Սահմանադրությունը ԻԻՀ այլադավան քաղաքացիներին թույլ չի տա-

---

<sup>388</sup> ԻԻՀ Սահմանադրություն, հոդված 111:

լիս ինտեգրվել երկրի փաստացի բարձրագույն իշխանությունում: Ինչպես կրոնական փոքրամասնությունները՝ հայերը, ասորիները, զրադաշտները և մովսիսականները, այնպես էլ Իսլամի սուննի ուղղության հավատացյալները չեն կարող դառնալ երկրի Առաջնորդ, Սահմանադրության պահապանների խորհրդի, Բանիմացների խորհրդի, ինչպես նաև Նպատակահարմարության ժողովի անդամ<sup>389</sup>:

Նպատակահարմարության ժողովի ստեղծման պահին խորհրդի անդամների թիվը 13-ն էր, իսկ ղեկավարը այսօրվա Առաջնորդ Այաթոլլահ Ալի Խամենեին էր: Վերջինիս՝ Առաջնորդ դառնալուց հետո, Նպատակահարմարության ժողովը գլխավորեց նրա գինակիցը՝ Ալի Աքբար Հաշեմի Ռաֆսանջանին, որն այդ պաշտոնում մնաց ընդհուպ մինչև իր մահը: 1997 թ. Առաջնորդի կողմից հրաման արձակվեց, ըստ որի՝ Նպատակահարմարության ժողովում իրականացվեցին մի շարք փոփոխություններ. ստեղծվեցին մշտական և ժամանակավոր հանձնաժողովներ՝ Առաջնորդի գլխավորությամբ: Այդ ժամանակ անդամների թիվը մեծացավ՝ հասնելով 34-ի: 2005 թ. հոկտեմբերին Առաջնորդը Նպատակահարմարության ժողովին կառավարության բոլոր ճյուղերի նկատմամբ «վերահսկողական» լիազորություններով օժտեց՝ համաձայն Սահմանադրության, ինչպես նաև իր որոշ լիազորություններ դրեց Նպատակահարմարության ժողովի վրա<sup>390</sup>: Վերլուծաբանները գտնում էին, որ Նպատակահարմարության ժողովին նման լիազորություններով օժտելը առավելապես կապված է դրա ղեկավար Ալի Աքբար Ռաֆսանջանիի անձի հետ, որը 2005 թ. նախագահական ընտրություններում պարտվել էր հանրությանը ոչ այնքան հայտնի Մահմուդ Ահմադինեժադին: Ըստ նույն աղբյուրի, այս արտոնություն

---

<sup>389</sup> *Rights Denied: Violations against ethnic and religious minorities in Iran*, p. 27–28.

<sup>390</sup> *Special Reports | Iran: Who holds the power? - BBC NEWS* [http://news.bbc.co.uk/2/shared/spl/hi/middle\\_east/03/iran\\_power/html/expediency\\_council.stm](http://news.bbc.co.uk/2/shared/spl/hi/middle_east/03/iran_power/html/expediency_council.stm)

յունները տալով, Առաջնորդը փորձել էր իր հին զինակցին, այնուամենայնիվ, պահել իր կողքին: 2007 թ. ձևավորված խորհուրդն արդեն կազմված էր 37 անդամից. Ռաֆսանջանին փաստացի այլևս չընդգրկվեց Սահմանադրության պահապանների խորհրդում<sup>391</sup>:

Ստորև ներկայացնում ենք Նպատակահարմարության ժողովի նախագահներին՝ ըստ իրենց պաշտոնավարման ժամանակաշրջանի. Ալի Խամենեին զբաղեցրել է այդ պաշտոնը 1988 թ. փետրվարի 7-ից մինչև 1989 թ. հունիսի 4-ը: 1989 թ. հոկտեմբերի 4-ից մինչև 2017 թ. հունվարի 8-ը՝ մինչև իր մահը, այդ կառույցը գլխավորեց Ալի Աքբար Հաշեմի Ռաֆսանջանին, որին փոխարինեց Ալի Մովահեդի-Քերմանին՝ 2017 թ. փետրվարի 1-ից մինչև նույն թվականի օգոստոսի 14-ը: 2017 թ. օգոստոսի 14-ից մինչև 2018 թ. դեկտեմբերի 24-ը՝ իր մահը, կառավարեց Մահմուդ Հաշեմի Շահրուդին, մեկ օր կառավարեց Ալի Մովահեդի-Քերմանին<sup>392</sup> մինչև տեղի կունենալին հաջորդ ընտրությունները՝ 2018 թ. դեկտեմբերի 29–30-ին, իսկ դեկտեմբերի 30-ից մինչև այսօր կառույցը գլխավորում է Սադեղ Լարիջանին: Այսօր կառույցն ունի 39 անդամ:

Այսպիսով, Իրանի պետական համակարգում ամենից ուշ ստեղծված Նպատակահարմարության ժողովն այն յուրահատուկ ինստիտուտն է, որը փորձում է բալանսավորել իշխանությունը՝ թույլ չտալով որևէ մեկ մարմնի գերակայությունը մյուսի նկատմամբ: Այն ԻԻՀ Առաջնորդի կառավարման համակարգի կարևորագույն գործիքակազմերից է, որում փաստացի ընդգրկվում են ինչպես հոգևոր դասի ներկայացուցիչներ, այնպես էլ աշխարհիկ քաղաքական գործիչներ, սակայն նրանց միավորում է մեկ բան. նրանք նշանակվում են Առաջնորդի կողմից, ինչից կարող ենք են-

---

<sup>391</sup> *Иран при М.Ахмадинежаде. Памяти А. З. Арабджяна*, Москва, 2013, стр. 21.

<sup>392</sup> *Che kyasi dar foghdan-e Ayatollah Shahrudi majma-e tashkhis-e maslahat ra edare mi konad?* <https://www.mashregnews.ir/news/923687>

թադրել, որ նրանք բոլորը Առաջնորդի հավատարիմ գաղափարակիցներն են:

## **Իրանի Դատական իշխանություն - Ghve-e ghazai**

ԻԻՀ առանցքային պետական կառույցներից է դատական իշխանությունը, որը զարգացման բավականին հետաքրքիր փուլեր է անցել:

651 թ. Իրանում իսլամը հռչակվեց պետական կրոն և այդուհետ ցանկացած սովորույթ, ծես կամ շահի հրաման չէր կարող կյանքի կոչվել, եթե հակասեր իսլամի սկզբունքներին: Անցել է ավելի քան 13 դար, սակայն իսլամական կանոններն ու սովորույթները դեռ կարգավորում են հասարակական հարաբերությունները: Ըստ էության, Իսլամական իրավունքը (շարիաթը) կարելի է համարել կրոնական հրամանների և հանձնարարությունների մի ամբողջություն, որն արտահայտում է Աստծո կամքը: Իսլամի ընդհանուր նկարագիրը ներառում է պաշտամունքի մասին հրամաններ և քաղաքական-իրավական կանոններ<sup>393</sup>:

Աշխարհում հայտնի իրավական համակարգերն են՝ ռոմանագերմանական, անգլո-սաքսոնական, սոցիալիստական, արևելյան, որը ներառում է հնդկաճապոնական մոդելը, և իսլամական իրավական համակարգերը: Իսլամական իրավական համակարգի վառ օրինակ է Իրանը, որտեղ իրավական համակարգը հիմնված է կրոնի, Աստծո կողմից մարգարեի միջոցով տրված գաղափարների և կանոնների վրա<sup>394</sup>:

Մինչև 20-րդ դարը Իրանի դատական իշխանությունը, ըստ էության, խարսխված էր ավանդական սովորույթների և կրոնական

---

<sup>393</sup> **Աբուլֆազլ Ամերի Ճահրաբի**, *Իրանի Իսլամական Հանրապետության իրավական համակարգը*, Ատենախոսություն, Երևան, 2018, էջ 17:

<sup>394</sup> Նույն տեղում, էջ 28:

սկզբունքների վրա, և նահանգներից յուրաքանչյուրի առաջնորդն ինքն էր զբաղվում ծագած խնդիրների լուծմամբ: Դատական համակարգը Իրանում փոփոխության ենթարկվել է առաջին հերթին 1905–11 թթ. Սահմանադրական հեղափոխությունից հետո: 1906 թ. Իրանում տեղի ունեցած Սահմանադրական հեղափոխության հետևանքով երկրի իրավական համակարգը արդիականացվեց, և դրվեց ռոմանագերմանական իրավական համակարգի հիմքը:

Հարկ է նշել, որ 1907 թ. լրացուցիչ օրենքի 2-րդ հոդվածում նախատեսված էր սահմանադիր խորհրդում ունենալ հինգ բարձրաստիճանի հոգևորական, որոնք պետք է հսկեին հիմնական օրենքի այս կամ այն հոդվածի, ինչպես նաև դրա սկզբունքներին համապատասխանող օրենքների ընդունումը՝ վետո դնելու իրավունքով, սակայն դա չկիրառվեց և կորցրեց ուժը, թեև կարող էր դառնալ փոխհամաձայնության միջոց միապետության և շիա հոգևորականության միջև<sup>395</sup>: Դաջարական հարստության տապալումից հետո իշխանության եկած Ռեզա Փահլավին մեծապես փորձում էր կրկնօրինակել Թուրքիայի Հանրապետության Նախագահ Քեմալ Աթաթյուրքի բարեփոխումները: Այդ բարեփոխումներից ամենակարևորը, թերևս, դատական համակարգի արդիականացումն էր, որի հիմքը, ըստ էության, հանդիսացել է ռոմանագերմանական համակարգը, և որի մեջ ներառված են ֆրանսիական, բելգիական և շվեյցարական իրավական համակարգերի բաղադրիչներ<sup>396</sup>: Այդ հարցում Ռեզա շահին օգնեց Արդարադատության նախարար Աբդուլհոսեյն Թեյմուրթաշը, որպեսզի Իրանի դատական համակարգն արդիականացվի արևմտյանի օրինակով:

Իրանի՝ 1906 թվականին ընդունված Սահմանադրությունը, որը վերանայվել է 1907, 1925, 1949 և 1967 թվականներին, աշխար-

---

<sup>395</sup> Նույն տեղում, էջ 92:

<sup>396</sup> **Sahar Maranlou**, *Access to Justice in Iran: Women, Perceptions, and Reality*, Cambridge University Press: 05 December 2014, p. 57.

հի հնագույն սահմանադրություններից է և ունեցել է շարունակական ուժ<sup>397</sup>:

Սակայն Ռեզա շահի և նրան հաջորդած Մուհամմադ Ռեզա Փահլավիի գահակալման տարիներն աչքի չընկան քաղաքական ազատության ժամանակաշրջանով, և, ըստ էության, Սահմանադրական միապետությունը կյանքի չկոչվեց, քանզի երկրում բոլոր հարցերը լուծվում էին շահի գիտությամբ և թույլտվությամբ. անգամ երկրում գործող երկու կուսակցությունները՝ Մարդումս ու Մելլիյունը, ստեղծվել էին շահի թույլտվությամբ՝ որպես կառավարական և ընդդիմադիր ուժեր: Դատական համակարգը ևս ամբողջովին գտնվում էր շահի վերահսկողության ներքո: 1950–60-ական թվականներին Իրանի դատական համակարգում աշխատում էր մասնագիտական պատրաստվածություն անցած ընդամենը 1600 դատավոր, որոնք չէին հասցնում արդյունավետ իրականացնել իրենց մասնագիտական գործունեությունը: Սա էր նաև պատճառներից մեկը, որ 1963 թ. Սպիտակ հեղափոխության ծրագրի շրջանակում շահն ուշադրություն դարձրեց նաև Դատական համակարգում առկա խնդիրների լուծմանը և հիմնեց Արդարության տներ, որոնք համալրված չէին արհեստավարժ մասնագետներով և քննում էին քաղաքացիական պարզունակ գործերը<sup>398</sup>:

1978–79 թթ. Իսլամական հեղափոխությունից հետո կրոնական կանոնները սկզբունքների հիմք դարձան բոլոր դատարանների համար: Փաստացի երկրորդ մեծ փոփոխությունը դատական իշխանությունն արձանագրեց Իսլամական հեղափոխության ժամանակ, երբ պետական ամբողջ համակարգը խարսխվեց մի կողմից հանրապետական գաղափարախոսության, մյուս կողմից՝ իսլամի նորմերի վրա: Հեղափոխությունից անմիջապես հետո շահական

---

<sup>397</sup> **Gordon B. Baldwin**, *The Legal System of Iran*, International Lawyer, 1973, p. 495, <https://scholar.smu.edu/cgi/viewcontent.cgi?article=3947&context=til>

<sup>398</sup> **Gordon B. Baldwin**, *The Legal System of Iran*, International Lawyer, Vol. 7, No. 2, p. 498. <https://scholar.smu.edu/cgi/viewcontent.cgi?article=3947&context=til>

օրենսդրությունը լուծարվեց, և Մեջլիսի կողմից հաստատվեցին «Ընդհանուր իրավասության» դատարանները, և, փաստացի, Իրանի ամբողջ տարածքում աշխատանքի անցան հոգևորական դատավորները:

ԻԻՀ իրավական համակարգ ասելով առաջին հերթին հասկանում ենք Իրանի պետության իրավական կանոնակարգերի ու օրինաչափությունների ամբողջությունը, որը ներառում է իրավաբանական կազմակերպությունների և դրանք միմյանց կապող տեխնիկական սկզբունքների ամբողջություն՝ փիլիսոփայական և սոցիալական իդեալներով և իրավաբանական աղբյուրներով: ԻԻՀ-ում իրավական աղբյուր են համարվում նաև սովորույթներն ու ավանդույթները: Այսպիսով, իրավական համակարգը կանոնների ու օրինաչափությունների ամբողջություն է:

Ուշադրության է արժանի ԻԻՀ Սահմանադրության 4-րդ հոդվածը, որտեղ նշվում է, որ քաղաքացիական, քրեական, ֆինանսական, տնտեսական, վարչական, մշակութային, ռազմական, քաղաքական և այդ կարգի բոլոր օրենքները պետք է հիմնված լինեն իսլամական նորմերի վրա<sup>399</sup>: Այդպիսով, Սահմանադրությամբ ամրագրվում է, որ Իրանում տեղի ունեցող յուրաքանչյուր գործողություն պետք է համահունչ լինի Իսլամի նորմերին, այլապես այն, ըստ էության, դատապարտված է ձախողման: Սակայն իրավագետ Աբուլֆազլ Ամերի Շահրաբին վստահեցնում է, որ «Թեպետ ԻԻՀ Սահմանադրության 4-րդ և 72-րդ հոդվածներով պարտադրվում է օրենքի համապատասխանեցում իսլամի սկզբունքներին, սակայն առևտրի, քաղաքացիական, վարչարարության ոլորտների օրենքները, ինչպես Իսլամական հեղափոխությունից առաջ, այնպես էլ այժմ, հենվում են ռոմանագերմանական իրավական կարգերի վրա»<sup>400</sup>:

---

<sup>399</sup> *ԻԻՀ Սահմանադրություն*, հոդված 4, էջ 34, 35:

<sup>400</sup> **Աբուլֆազլ Ամերի Շահրաբի**, *Իրանի Իսլամական Հանրապետության իրավական համակարգը*, Ատենախոսություն, Երևան, 2018, էջ 33:

Իրանը Աստվածապետական համակարգ ունեցող պետություն է, ուստի բնական է, որ այստեղ պետք է արտահայտված լինեն իսլամի դերն ու ազդեցությունը կյանքի բոլոր ոլորտներում՝ քաղաքական, տնտեսական և հասարակական: Յուրաքանչյուր պետություն իրավական իր համակարգը ձևավորում է համաձայն սեփական ժողովրդի ցանկության և նպատակների, որոնք ամրագրվում են օրենքներով և տեղ գտնում Սահմանադրության մեջ: 1979 թ. հանրաքվեի արդյունքում Իրանի բնակչության 98%-ը կողմ արտահայտվեց նման համակարգի ստեղծմանը: Հարկ է նշել, որ Իրանում ընտրության իրավունք ունեցող 20,857,391 քաղաքացուց ընտրությանը մասնակցել էր 20,440,108-ը, և ընդունվել էր Իսլամական Հանրապետություն ստեղծելու գաղափարը: Նույն թվականի հանրաքվեի արդյունքում 15,690,142 քաղաքացի, այսինքն՝ բնակչության 75,23%-ը, հաստատեց նաև ԻԻՀ Սահմանադրությունը<sup>401</sup>:

Պետք է նշել, որ Իրանի Իսլամական Հանրապետության Դատական իշխանությունը մինչև այժմ առնվազն երկու անգամ լրջագույն փոփոխության է ենթարկվել: Առաջին արմատական փոփոխությունը կարող ենք թվագրել 1989 թ., երբ վերանայվեց ԻԻՀ Սահմանադրությունը, իսկ երկրորդ անգամ այն վերափոխվել է 1994 թ., երբ փոփոխվեց Ընդհանուր դատարանների մասին օրենքը:

ԻԻՀ Սահմանադրությունը կազմված էր 12 գլխից և 175 հոդվածից, սակայն 1989 թ. Սահմանադրական բարեփոխումներից հետո գլուխների թիվը ավելացավ՝ հասնելով 14-ի, իսկ հոդվածների թիվը՝ 177-ի: Ղուրանի պատվիրանների և շարիաթի օրենքների հիման վրա ստեղծված Սահմանադրության համաձայն, ԻԻՀ իրավական համակարգն ամբողջովին հիմնված է կրոնական գաղափարների վրա, և բոլոր օրենքներն ու որոշումները բխում են իսլամի սկզբունքներից:

---

<sup>401</sup> *Referenda*, <https://irandataportal.syr.edu/referenda>

Մինչև 1989 թ. Սահմանադրական բարեփոխումները Իրանի բարձրագույն դատական մարմինը համարվում էր Դատական գերագույն խորհուրդը: Բարեփոխումներից հետո, Սահմանադրության 157-րդ հոդվածի համաձայն, Դատական գերագույն խորհուրդը լուծարվեց, և այդ խորհրդի պարտականությունները և լիազորությունները դրվեցին Դատական իշխանության ղեկավարի վրա:

ԻԻՀ առանցքային պետական կառույցներից մեկի՝ Դատական իշխանության լիազորությունները, իրավունքներն ու պարտականություններն ամրագրված են ԻԻՀ Սահմանադրության 11-րդ գլխում: Ըստ 11-րդ գլխի 156-րդ հոդվածի՝ ԻԻՀ Դատական իշխանությունն անկախ իշխանություն է, որը պաշտպանում է հասարակական և անձնական իրավունքները և պատասխանատու է արդարության իրականացման համար<sup>402</sup>: Նույն օրենքի հինգ ենթակետերում արձանագրված են Դատական իշխանության պարտականությունները, ըստ որոնց՝ կառույցը պետք է պայքարի անարդարությունների, չարաշահումների դեմ, քննի բողոքները, վեճերը և անհամաձայնությունները, նպաստի թշնամանքի վերացմանը, ինչպես նաև քննարկի օրենքով նախատեսված այլ գործերի հետ կապված անհրաժեշտ միջոցառումների կազմակերպումը և կայացնի դատավճիռներ: Դատական իշխանության լիազորությունների մեջ են մտնում հասարակական իրավունքի վերականգնումը, արդարության և օրինական ազատությունների զարգացումը, օրենքների ճիշտ կատարման նկատմամբ վերահսկողությունը, հանցագործությունների բացահայտումը և իրավական ակտերով սահմանված իսլամական քրեական պատիժների իրականացումը, անհրաժեշտ միջոցառումների օգնությամբ հանցագործությունների կանխումը և հանցագործների վերադաստիարակումը<sup>403</sup>:

Դատական իշխանությունը հասարակական և անձնական իրավունքների պաշտպանության երաշխավորն է, որը պատասխա-

---

<sup>402</sup> ԻԻՀ Սահմանադրություն, հոդված 156:

<sup>403</sup> Նույն տեղում:

նատու է արդարադատության իրականացման համար, ուստի իսլամական նորմերին դրա համապատասխանությունը պարտադիր է: Սահմանադրության 157-րդ հոդվածի համաձայն, երկրի Առաջնորդը Դատական իշխանության մարմինների պարտականություններն ի կատար ածելու, դատական, վարչական և գործադիր բոլոր մարմինների գործունեությունը համադրելու նպատակով 5 տարի ժամկետով նշանակում է դատական գործերին քաջածանոթ մոջթահեդ՝ արդարացի և գործունյա **դատական իշխանության ղեկավար**: Նա համարվում է Դատական իշխանության բարձրագույն պաշտոնյան<sup>404</sup>: Փաստորեն դատական ոլորտի նկատմամբ երկրի Առաջնորդի անուղղակի վերահսկողությունն իրականացվում է Դատական իշխանության ղեկավարի միջոցով<sup>405</sup>: Սրա վառ օրինակներից է, երբ 2012 թվականի հոկտեմբերին ԻԻՀ Նախագահ Մահմուդ Ահմադինեժադը խնդրանքով դիմեց Դատական իշխանության ղեկավարին՝ այցելելու իր գինակիցներին Թեհրանի Էվին բանտում, սակայն նրան մերժեցին: Ի պատասխան, Ահմադինեժադը և նրա շրջապատը մեղադրեցին դատական իշխանությանը, որ վերջիններս ազատագրկման միջոցով հետապնդումների են ենթարկում իրենց քաղաքական հակառակորդներին՝ Նախագահի մերձավոր կողմնակիցներին<sup>406</sup>:

Իրանի դատական կառույցը ներառում է Հեղափոխական դատարանների յոթանասուն մասնաճյուղ, առկա են 205 հանրային քաղաքացիական, 99 հատուկ քաղաքացիական, 86 առաջին և 156 երկրորդ ատյանի քրեական, ինչպես նաև խաղաղության դատարանները, որոնք ներառում են սովորական դատարանները (124),

<sup>404</sup> ԻԻՀ Սահմանադրություն, հոդված 157:

<sup>405</sup> **Աբուլֆազլ Ամերի Ճահրաբի**, *Իրանի Իսլամական Հանրապետության իրավական համակարգը*, Ատենախոսություն, Երևան, 2018, էջ 25:

<sup>406</sup> **Sahar Maranlou**, *Access to Justice in Iran: Women, Perceptions, and Reality*, Cambridge University Press: 05 December 2014, p. 74.

հաշտության անկախ դատարանները (125) և Գերագույն վճռաբեկ դատարանները (22):

**Արդարադատության նախարարը** պատասխանատու է գործադիր և օրենսդիր իշխանությունների հետ դատական իշխանության հետ փոխհարաբերությունների բոլոր հարցերի համար: Արդարադատության նախարարության ենթակայության ներքո են գտնվում դատաբժշկական փորձաքննության ծառայությունը, անշարժ գույքի գրանցման և հաշվառման պետական նոտարական բաժինը, իրավաբան-փորձագետների անձնակազմը<sup>407</sup>:

Արդարադատության նախարար ընտրվում է ԻԻՀ Նախագահի կողմից՝ Դատական իշխանության ղեկավարի ներկայացրած թեկնածուներից, և նրա ընտրությունը պետք է հաստատի Մեջլիսը: Նա պատասխանատու է Դատական իշխանության և իշխանության մյուս ճյուղերի միջև հարաբերությունների համար: Գերագույն դատարանի նախագահը և գլխավոր դատախազը նշանակվում են Դատական իշխանության ղեկավարի կողմից: Ի դեպ, արդարադատության նախարարը իրավասու չէ նշանակելու կամ ազատելու դատավորներին և նրանց անձնակազմին, մինչդեռ իրավունք ունի զբաղվելու ֆինանսական, վարչական իրավունքներով, եթե կա Դատական իշխանության ղեկավարի հանձնարարություն:

Առաջնորդի կողմից նշանակված Դատական իշխանության նախագահն ունի մի շարք պարտականություններ՝ Իսլամական Հանրապետության նորմերին համապատասխան դատական որոշումների նախագծերի պատրաստում, դատավորների նշանակում ու աշխատանքից ազատում<sup>408</sup>: ԻԻՀ Սահմանադրության 162-րդ հոդվածի համաձայն, Դատական իշխանության ղեկավարի անմի-

---

<sup>407</sup> **А. Гамов**, *Юридическая и судебная система Исламской Республики Иран*, 2003, <http://www.iimes.ru/?p=3040&fbclid=IwAR0LsKJSJAYZwhHJMNCLPpM0G4P9VKrRAR6uH0WCukZoTHmjucG2tSMMT2k>

<sup>408</sup> **Արուվֆազլ Ամերի Ճահրարի**, *Իրանի Իսլամական Հանրապետության իրավական համակարգը*, Ատենախոսություն, Երևան, 2018, էջ 26:

ջական իրավունքների շրջանակում է գտնվում երկրի գերագույն դատարանների դատավորների հետ խորհրդակցելուց հետո նրանց նշանակումը այդ պաշտոններում՝ 5 տարի ժամկետով<sup>409</sup>:

ԻԻՀ Սահմանադրության 158-րդ հոդվածն ամբողջովին վերաբերում է Դատական իշխանության ղեկավարի պարտականություններին: Դրանք են.

1. 156-րդ հոդվածով նախատեսված կարգի համաձայն, արդարադատության համակարգում պատասխանատվության համապատասխան շրջանակներ ունեցող մարմինների ստեղծումը,

2. Իսլամական Հանրապետության համապատասխան օրինագծերի մշակումը,

3. Դատավորի պաշտոնում նշանակել արդար և արժանի անձանց, հեռացնել նրանց իրենց զբաղեցրած պաշտոնից, փոխել նրանց ծառայության վայրը կամ զբաղեցրած պաշտոնը, հանձնարարել հատուկ պարտավորություններ, ապահովել մասնագիտական առաջխաղացում, իրականացնել նման վարչական պարտավորություններ՝ օրենքի համաձայն<sup>410</sup>:

Դատական իշխանության ղեկավարը համարվում է նաև ԻԻՀ ներքոհիշյալ կառույցների անդամ.

- Ազգային անվտանգության բարձրագույն խորհուրդ,
- Սահմանադրության վերանայման խորհուրդ,
- Հաշտեցման խորհուրդ,
- Երկրի ղեկավարության ժամանակավոր խորհուրդ:

Դատական իշխանության ղեկավարը իրավասու է իր երկու ներկայացուցիչներին նշանակելու ԻԻՀ հեռուստառադիոհեռարձակման կազմակերպության գործունեության վերահսկողության

---

<sup>409</sup> ԻԻՀ Սահմանադրություն, հոդված 162:

<sup>410</sup> ԻԻՀ Սահմանադրություն, հոդված 158:

խորհրդում, ինչպես նաև շիա իրավաբանների թեկնածուներ է առաջարկում Բանիմացների խորհրդում<sup>411</sup>:

Փաստորեն դատական ողջ իշխանությունը գտնվում է մեկ մարդու՝ Դատական իշխանության ղեկավարի ձեռքում, և քանի որ նա էլ նշանակվում է Առաջնորդի կողմից, ապա վերջինիս վերահսկողությունը իշխանության այս թևի նկատմամբ լիովին ակնհայտ է: Դատական իշխանությունն անուղղակի վերահսկում է իշխանության գործադիր թևի գործունեությունը<sup>412</sup>: Դրա վառ օրինակն է այն, որ Դատական իշխանության ղեկավարի անմիջական լիազորությունների շրջանակում է գտնվում Իրանի ռադիոհեռուստատեսության վերահսկման խորհրդում երկու ներկայացուցիչների նշանակումը, ինչպես նաև Սահմանադրության պահապանների խորհրդում շիա իրավաբանների թեկնածության առաջադրումը, որոնց միջոցով իրականացվում են ԻԻՀ բոլոր ընտրությունները, Մեջլիսի օրենքների հաստատումը կամ մերժումը:

Իրանի դատական համակարգը բավականին խրթին է և իր կենսագործունեությունը հիմնականում իրականացնում է **Բարձրագույն դատական խորհրդի** միջոցով: Այս կառույցը համակարգում է դատական համակարգի աշխատանքները: Բարձրագույն դատական խորհուրդը, որը բաղկացած է վեց անդամից՝ Դատական իշխանության ղեկավարից, Գերագույն դատարանի նախագահից, գլխավոր դատախազից և երեք դատավորներից, որոնք ընտրվում են փակ գաղտնի ընտրության միջոցով երկրի բոլոր դատավորների թվից և հենց նրանց կողմից՝ հինգ տարի ժամկետով: Արդարադատության նախարարը կարող է ներկա լինել խորհրդի նիստե-

---

<sup>411</sup> **А. Гамов**, *Юридическая и судебная система Исламской Республики Иран*, 2003, <http://www.iimes.ru/?p=3040&fbclid=IwAR0LsKJSJAYZwhHJMNCLPpM0G4P9VKrRAR6uH0WCukZoTHmjucG2tSMMT2k>

<sup>412</sup> **Արուվֆազլ Ամերի Ճահրարի**, *Իրանի Իսլամական Հանրապետության իրավական համակարգը*, Ատենախոսություն, Երևան, 2018, էջ 26:

րին<sup>413</sup>: Բարձրագույն դատական խորհուրդն ստեղծում է հատուկ հանձնաժողով՝ օրենքների մշակման համար, որոնք համապատասխան քննարկումից հետո ընդունվում են խորհրդի կողմից և ներկայացվում Մեջլիսի քննարկմանը<sup>414</sup>:

Պետք է փաստել, որ Դատական իշխանությունը, այնուամենայնիվ, անկախ մարմին չէ, քանզի դրա ղեկավարը ուղղակիորեն նշանակվում է Առաջնորդի կողմից: Դատական իշխանության ղեկավարն էլ, ըստ այդմ, աշխատանքները կազմակերպում է Բարձրագույն դատական խորհրդի կողմից, որը ունի ներքոհիշյալ լիազորությունները.

- դատավորների նշանակում և փոխարինում,
- Նախագահի դեմ ուղղված բողոքների քննում (եթե այդպիսիք առկա են) այն դեպքում, եթե նա խախտել է օրինական պարտականությունները և լիազորությունները,
- դատական հարցերի վերաբերյալ օրենսդրական նախաձեռնությունների նախապատրաստում՝ Մեջլիսին ներկայացնելու համար,
- վճռաբեկ բողոքների քննարկում<sup>415</sup>:

Իրանում գործում են բազմաթիվ դատարաններ, որոնց նպատակն է՝ ըստ ոլորտների իրականացնել արդարադատություն: Իրանի դատական իշխանությանն առընթեր այնպիսի դատարաններ կան, որ աշխարհի մյուս երկրներում նման դատարանների գործունեությունը գտնելը խիստ բարդ կլինի: Իրանի դատարաններն են.

---

<sup>413</sup> **П.А. Гусенова**, *Общая характеристика судебной системы Исламской Республики Иран*, Зарубежное право, Сер. 14 Вып. 2, Санкт-Петербургский государственный университет, 2016, стр 86-87.

<sup>414</sup> **А. Гамов**, *Юридическая и судебная система Исламской Республики Иран*, 2003, <http://www.iimes.ru/?p=3040&fbclid=IwAR0LsKJSJAYZwhHJMNCLPpM0G4P9VKrRAR6uH0WCukZoTHmjucG2tSMMT2k>

<sup>415</sup> **П.А. Гусенова**, *Общая характеристика судебной системы Исламской Республики Иран*, стр 87.

- Գերագույն դատարանը,
- Վարչական արդարադատության դատարանը,
- Գերագույն քաղաքացիական դատարանը,
- Գերագույն քրեական դատարանը,
- Ստորին քաղաքացիական դատարանը,
- Ստորին քրեական դատարանը,
- Քաղաքացիական հատուկ դատարանը,
- Մասնագիտացված դատարանը,
- Ռազմական դատարանը,
- Իսլամական հեղափոխական դատարանը,
- Հոգևորականության հարցերով մասնագիտացված դատարանը,
- Ֆինանսական դատարանը,
- Դատական կարգապահության բարձրագույն դատարանը,
- Գլխավոր տեսչական մարմինը:

Դատավոր կարող է դառնալ միայն արդարամիտ մուսուլման տղամարդը, որը լավ ծանոթ է կրոնին և համարվում է իսլամական իրավական համակարգի փորձագետ: Թեև շիա մահմեդական կանայք կարող են հանդես գալ որպես խորհրդատու դատավորներ, բայց նրանք իրավունք չունեն գլխավորելու դատարանում ընթացող դատավարությունը<sup>416</sup>. նրանք հիմնականում ընտանեկան հարցերով դատերի ժամանակ դատավորին օգնելու պարտականություն ունեն: Բոլոր դատարանների ղեկավարների պաշտոնները, բացի ռազմականից, ըստ էության, զբաղեցնում են հոգևորականները:

Ըստ իրավագետ Խալեդիի՝ մահմեդական երկրներում գործում է իսլամական դատավարությունների համակարգը: «Այն համապատասխանեցվում է իսլամի սկզբունքներին և նորմերին: Այս համակարգում ինքնության և դատավարության միջև դասակար-

---

<sup>416</sup> *Iran, Submission to the Committee on Economic, Social and Cultural Rights (Amnesty International Publications, 2012) 49<sup>th</sup> Session, Pre-sessional Working Group (21-25 MAY 2012), p. 5.*

գում չի կատարվում: Դատավորն է գործի քննության և դատավճռի կայացման պատասխանատուն: Դատավորի միասնական համակարգից զատ, էական է նաև այն, թե հանցագործությունը թեթև՝, միջի՞ն, թե՞ ծանր է որակվել: Թեպետ հանցագործությունը մեկ անգամ է հետաքննվում, դատավորի վճիռը վերջնական է և փոփոխման ենթակա չէ: Հազվադեպ է լինում, երբ վճիռը վերանայվում է»<sup>417</sup>: Իրանում բավականին մեծ թիվ են կազմում դատական գործերն ընդհանրապես: Ըստ Աբուլֆազլ Ամերի Շահրաբիի՝ տարեկան ութ միլիոն դատական գործ է ներկայացվում դատարան, և դատարաններն էլ, դատական վարույթներն արագացնելու և ժամանակ շահելու նպատակով, այն, ինչպես հարկն է, չեն քննում և վերջնական որոշում կայացնելու համար բավարար ջանքեր չեն ներդնում: Բոլոր դեպքերում դատավորների և իրավաբանների համար երկրի Գերագույն դատարանի բարձրագույն ատյանների կողմից հաստատված որոշումների անհասանելիության պատճառով դատական նախադեպերը չունեն բավարար կայունություն և կիրառություն երկրի դատական իշխանությունում<sup>418</sup>:

Իրանի Դատական իշխանությունը հիմնված է բազմաշերտ դատական համակարգի վրա, որտեղ դատարանները մասնագիտացման ֆունկցիոնալ ոլորտներ ունեն: Ավելին, հանցագործության ծանրությունը երբեմն բնորոշում է դատարանների իրավասությունը:

Մինչ հանրային դատարանները բոլոր վեճերի նկատմամբ ունեն ընդհանուր իրավասություն, առկա են նաև մասնագիտացված դատարաններ, ինչպիսիք են՝ Իսլամական հեղափոխական դատարանը, ռազմական դատարանը, հատուկ հոգևոր դատարա-

---

<sup>417</sup> **Խալեդի Ա.**, *Քրեական դատավարության կարգերը*, 11 տպ., Շահրե Դանեշ, Թեհրան, 2011, էջ 19, 20, ըստ **Աբուլֆազլ Ամերի Շահրաբիի**, *Իրանի Իսլամական Հանրապետության իրավական համակարգը*, Ատենախոսություն, Երևան, 2018, էջ 165:

<sup>418</sup> **Աբուլֆազլ Ամերի Շահրաբի**, *Իրանի Իսլամական Հանրապետության իրավական համակարգը*, Ատենախոսություն, Երևան, 2018, էջ 66:

նը, դատական կարգապահության բարձրագույն դատարանը և վարչական արդարադատության դատարանը, որոնք ունեն մասնագիտացման գործառնական ոլորտներ՝ սահմանափակված որոշակի հանցագործությունների կամ վեճերի քննությամբ<sup>419</sup>:

Իրանի դատական համակարգի մասին որոշակի պատկերացումներ կազմելու համար անհրաժեշտ է հակիրճ ներկայացնել ողջ դատական իշխանության ներկայակերպ՝ դատարաններով հանդերձ: Ըստ Աբբաս Մանուչեհրի՝ ԻԻՀ դատական ողջ ապարատի գործունեությունը, օրենքների ճիշտ կիրառելիությունը իրականացվում են Գերագույն դատարանի և Երկրի գլխավոր տեսչական մարմնի միջոցով: Եթե Գերագույն դատարանը վերահսկում է օրենքի կիրառումը բոլոր դատարաններում, ապա Գլխավոր տեսչությունը պատասխանատու է պետական բոլոր կառույցներում օրենքի իրականացման, դրանից խուսափելու դեպքերի բացահայտման, հետաքննության միջոցով նման դեպքերը պարզելու համար<sup>420</sup>:

ԻԻՀ Սահմանադրության 161-րդ հոդվածի համաձայն, **Գերագույն դատարանը** կազմավորվում է դատական իշխանության ղեկավարի ներկայացրած կանոնակարգի հիման վրա՝ դատարանների կողմից օրենքների կատարման և դատական իշխանության կողմից միասնական գործունեության և օրենքներով սահմանված պարտականությունների իրականացման համար<sup>421</sup>:

ԻԻՀ գերագույն դատարանի ղեկավարը նշանակվում է Դատական իշխանության ղեկավարի կողմից, վերջինս էլ, ինչպես վերը նշել ենք, նշանակվում է անմիջականորեն Առաջնորդի կողմից:

- Իրանում Գերագույն դատարանն ստեղծվել է, որպեսզի վերահսկի Իրանի դատարաններում օրենքների պատշաճ կատարու-

---

<sup>419</sup> *The Iranian Judiciary: A Complex and Dysfunctional System*, October 12, 2016, [https://iranhrdc.org/the-iranian-judiciary-a-complex-and-dysfunctional-system/#\\_Toc462333463](https://iranhrdc.org/the-iranian-judiciary-a-complex-and-dysfunctional-system/#_Toc462333463)

<sup>420</sup> **Аббас Манучихри**, *Политическая система Ирана*, стр. 82

<sup>421</sup> *ԻԻՀ Սահմանադրություն*, հոդված 162:

մը, դատական ընթացակարգերի կատարման միատեսակությունը և, բնականաբար, իրականացնի օրենքով իրեն վերապահված այլ պարտականություններ: Ուշագրավ է, որ Գերագույն դատարանը անհրաժեշտության դեպքում իրավասու է արտահայտելու իր կարծիքը այս կամ այն դատական գործի արդարացիության վերաբերյալ, որից հետո դատարանը կարող է փոփոխված դատավճիռ կայացնել, եթե համաձայն է Գերագույն դատարանի կարծիքի հետ<sup>422</sup>: Սրանից կարող ենք եզրահանգել, որ դատական համակարգը, այնուամենայնիվ, անկախ չէ, ինչպես նշվում է Սահմանադրության մեջ, քանզի դրա վրա կարող է ազդել Գերագույն դատարանի կարծիքը:

Յուրաքանչյուր նահանգում գոյություն ունեն երեք դատավորից բաղկացած վերաքննիչ դատարաններ, որոնք վարույթ են ընդունում տվյալ նահանգի առաջին ատյանի դատարանների կայացրած վճիռների դեմ բողոքները: Հանրապետության բոլոր դատարանները, դատական և ոչ դատական ատյանները գլխավորում է Երկրի գերագույն դատարանը<sup>423</sup>: Ի դեպ, Գերագույն դատարանին է վերապահված նաև դատարանների միջև հնարավոր վեճերի հարթման լիազորությունը<sup>424</sup>:

Գերագույն դատարանի լիազորությունները թույլ են տալիս, որ նա երկրի գործող Նախագահին ենթարկի պատասխանատվության, եթե վերջինս չի կատարում իր անմիջական պարտականությունները: Իսկ ԻԻՀ Սահմանադրության 110-րդ հոդվածի 10-րդ ենթակետի համաձայն, ԻԻՀ Առաջնորդը, հենվելով այդ փաստարկի վրա, կարող է երկրի Նախագահին ազատել պաշտոնից, եթե առ-

---

<sup>422</sup> **А. Гамов**, *Юридическая и судебная система Исламской Республики Иран*, 2003, <http://www.iimes.ru/?p=3040&fbclid=IwAR0LsKJSJAYZwhHJMNCLPpM0G4P9VKrRAR6uH0WCukZoTHmjucG2tSMMT2k>

<sup>423</sup> **Արուֆազլ Ամերի Ճահրարի**, *Իրանի Իսլամական Հանրապետության իրավական համակարգը*, Ատենախոսություն, Երևան, 2018, էջ 137:

<sup>424</sup> **П.А. Гусенова**, *Общая характеристика судебной системы Исламской Республики Иран*, стр. 88.

կա է Գերագույն դատարանի վճիռը պաշտոնական դիրքի չարաշահման վերաբերյալ<sup>425</sup>:

Գերագույն դատարանը պետք է ստուգի քրեական դատարանի կողմից ընդունված մահապատժի, անդամահատման կամ քարկոծման մասին վճիռները, մինչև դրանք ի կատար ածելը<sup>426</sup>: Բայց ինչպես նշել ենք վերը, ըստ Աբուլֆազլ Ամերի Շահրաբիի, գործերն այնքան շատ են լինում, որ բավարար ժամանակ չի մնում՝ խորքային ուսումնասիրություն կատարելու համար, և վճիռները խիստ հազվադեպ են ենթարկվում փոփոխության:

Սակայն, վերոհիշյալ ատյաններից գատ, կան նաև ոչ դատական ատյաններ, որոնցում ղեկավարների նշանակումն ու ազատումն իրականացվում են գործադիր իշխանության կողմից և դուրս են Դատական իշխանության իրավասությունների շրջանակից<sup>427</sup>:

Գերագույն դատարանին զուգահեռ գործում է **Գլխավոր դատախազությունը**, որը կառավարվում է Գլխավոր դատախազի, առաջին տեղակալի և դատախազի մի քանի օգնականների միջոցով:

1994 թ. Մեջլիսը հաստատեց Ընդհանուր և Իսլամական հեղափոխության հեղափոխական դատարանների դատավարությունների մասին օրենքը, որից հետո դատախազությունը 5 տարի ժամկետով դադարեցրեց իր գործունեությունը: Հետագայում դատախազության ինստիտուտի պակասն ակնհայտ դարձավ Դատական իշխանությունում, ուստի դատական համակարգի առաջարկով Մեջլիսը 2002 թ. քննարկման դրեց դատախազության գործունեության վերաբերյալ նախագիծը, ըստ որի՝ հանցագործության նախաքննությունը պետք է իրականացվի դատախազության կող-

---

<sup>425</sup> *ԻԻՀ Մահմանադրություն*, հոդված 110:

<sup>426</sup> **П.А. Гусенова**, *Общая характеристика судебной системы Исламской Республики Иран*, стр. 88.

<sup>427</sup> **Աբուլֆազլ Ամերի Շահրաբի**, *Իրանի Իսլամական Հանրապետության իրավական համակարգը*, Ատենախոսություն, Երևան, 2018, էջ 141:

մից: Սակայն այս մարմինն արգելված է վարույթ ընդունել քաղաքացիական իրավունքի և քաղաքական հանցագործությունների վերաբերյալ գործերը, բայց, ըստ իրանցի իրավագետի, հազվադեպ է լինում, որ դատախազության քննիչը նախաքննություն իրականացնի որոշ քաղաքական հանցագործությունների գործերով, որոնք գտնվում են տվյալ նահանգի քրեական դատարանի իրավասության ներքո<sup>428</sup>:

ԻԻՀ Սահմանադրության 173-րդ հոդվածի համաձայն, Դատական իշխանության ղեկավարի ենթակայությամբ ստեղծվել է **Վարչական արդարադատության դատարան**, որի հիմնական գործառույթն է քաղաքացիների իրավունքների վերականգնումը: Այս կառույցը համեմատաբար նոր է դատական համակարգի մեջ, որը լիազորված է հետաքննելու վարչական իրավախախտումները, որոնք կատարվել են բացառապես պետական ծառայողների կողմից<sup>429</sup>: Կառույցի լիազորությունների շրջանակում է գտնվում պաշտոնատար անձանց անօրինական գործողությունների դեմ քաղաքացիների բողոքների քննությունը, քաղաքացիների խախտված իրավունքների վերականգնումը: Վարչական մարմիններում օրինականության վերահսկման և գործերի ճիշտ վարույթի նպատակով Դատական իշխանության ղեկավարին կից ստեղծվել է Գլխավոր տեսչություն<sup>430</sup>:

Վարչական արդարադատության դատարանը մեծ թվով մասնաճյուղեր ունի ողջ երկրում, որոնցից յուրաքանչյուրն ունի նախագահ և տեղակալ: Որպես կանոն, դատարանի առաջին մասնաճյուղի նախագահը նաև Վարչական արդարադատության դա-

---

<sup>428</sup> **Աբուլֆազլ Ամերի Ճահրաբի**, *Իրանի Իսլամական Հանրապետության իրավական համակարգը*, Ատենախոսություն, Երևան, 2018, էջ 139:

<sup>429</sup> *The Iranian Judiciary: A Complex and Dysfunctional System*, October 12, 2016, [https://iranhrdc.org/the-iranian-judiciary-a-complex-and-dysfunctional-system/#\\_ftn139](https://iranhrdc.org/the-iranian-judiciary-a-complex-and-dysfunctional-system/#_ftn139)

<sup>430</sup> **Աբուլֆազլ Ամերի Ճահրաբի**, *Իրանի Իսլամական Հանրապետության իրավական համակարգը*, Ատենախոսություն, Երևան, 2018, էջ 26:

տարանի նախագահն է: Գերագույն վարչական դատարանն ունի մեծ թվով վերաքննիչ ստորաբաժանումներ, որոնցից յուրաքանչ-յուրն ունի նախագահ և երկու խորհրդական<sup>431</sup>:

ԻԻՀ Սահմանադրության 174-րդ հոդվածը **Գլխավոր տեսչության** ստեղծման հիմքն է, ըստ որի՝ Դատական իշխանության կողմից վարչական մարմիններում օրինականության վերահսկման և գործերի ճիշտ վարույթը Դատական իշխանության ղեկավարին կից կազմակերպելու նպատակով ստեղծվում է Գլխավոր տեսչությունը<sup>432</sup>:

Դրա հիմնական գործառույթներն են՝ վերահսկել օրենքների պատշաճ կատարումը և վարչական մարմիններում գործերի ճիշտ վարումը, բոլոր հարցերի վերաբերյալ քաղաքացիական պահանջների քննումը, դրանց նախնական հետաքննումը, խախտումների փաստերի հայտնաբերումը և դրանք դատարանին փոխանցելը<sup>433</sup>: Գլխավոր տեսչությունը գտնվում է Դատական իշխանության ղեկավարի անմիջական վերահսկողության ներքո: Ռազմական դատախազությունը և ռազմական դատարանները, Հեղափոխական դատախազությունը և հեղափոխական դատարանները, Բանտերի կազմակերպությունները և անշարժ գույքի գրանցման և հաշվառման կազմակերպությունը ևս գտնվում են Դատական իշխանության ղեկավարի վերահսկողության ներքո<sup>434</sup>:

---

<sup>431</sup> *Иран: оппозиционные политические группы, силовые структуры, избранные проблемы в области прав человека, верховенство права*, Сборник ИСП Июль 2015 г., стр. 171, [https://www.refworld.org/cgi-bin/texis/vtx/rwmain/opendo\\_cpdf.pdf?reldoc=y&docid=57b71856a](https://www.refworld.org/cgi-bin/texis/vtx/rwmain/opendo_cpdf.pdf?reldoc=y&docid=57b71856a)

<sup>432</sup> *ԻԻՀ Սահմանադրություն*, հոդված 174:

<sup>433</sup> **П.А. Гусенова**, *Общая характеристика судебной системы Исламской республики Иран*, стр. 89.

<sup>434</sup> **А. Гамов**, *Юридическая и судебная система Исламской Республики Иран*, 2003, <http://www.iimes.ru/?p=3040&fbclid=IwAR0LsKJSJAYZwhHJMNCLPpM0G4P9VKrRAR6uH0WCukZoTHmjucG2tSMMT2k>

Պետք է արձանագրել, որ Իրանում գործող դատարանները բաժանվում են երկու խմբի՝ **ընդհանուր դատարաններ և հատուկ դատարաններ**:

Ընդհանուր դատարաններն զբաղվում են քաղաքացիական և քրեական գործերով: Ավելի կոնկրետ, ընդհանուր դատարանների շրջանակը համալրում են Գերագույն և Ստորին քրեական դատարանները, ինչպես նաև Գերագույն և Ստորին քաղաքացիական դատարանները:

Հանցագործությունների, զոհերի կամ հանցագործների որոշակի խմբերով զբաղվող հատուկ դատարանների շարքին են դասվում Հեղափոխական և Հոգևորականների համար նախատեսված դատարանները<sup>435</sup>:

Հոգևորականների հատուկ դատարանն զբաղվում է այն հանցանքներով, որոնք ենթադրաբար կատարվել են հոգևորականների կողմից կամ հոգևորականների դեմ: Ըստ հոգևորականների հատուկ դատարանի կանոնադրության՝ դատարանի գերագույն դատավորը նշանակվում է Իրանի Առաջնորդի կողմից:

Մյուս դատավորները նշանակվում են Հոգևորականների հատուկ դատարանի դատախազի առաջարկությամբ և հաստատվում Դատական իշխանության ղեկավարի կողմից<sup>436</sup>:

**Գերագույն քաղաքացիական** դատարանի լիազորությունների շրջանակում է գտնվում բոլոր իրավական և ոչ հայցային գործերի քննությունը<sup>437</sup>: Այս դատարանի որոշումները վերջնական են և

---

<sup>435</sup> **Nargess Tavassolian**, *The future of Iran: Judicial reform Reform within the Judiciary of Iran*, <https://lif.blob.core.windows.net/lif/docs/default-source/future-of-iran/2012-future-of-iran-by-nargess-tavassolian-reform-within-the-judiciary-of-iran.pdf?sfvrsn=0>

<sup>436</sup> **Nargess Tavassolian**, *The future of Iran: Judicial reform Reform within the Judiciary of Iran*, <https://lif.blob.core.windows.net/lif/docs/default-source/future-of-iran/2012-future-of-iran-by-nargess-tavassolian-reform-within-the-judiciary-of-iran.pdf?sfvrsn=0>

<sup>437</sup> Ոչ հայցային գործերը վեճ չեն պարունակում, քննվում են դիմումի կարգով, օրինակ՝ իրավաբանական փաստի հաստատումով:

բողոքարկման ենթակա չեն, բացառությամբ այն դեպքերի, երբ դատավորի գործողությունները չեն համապատասխանում դատական էթիկային, կամ երբ մեկ այլ դատավոր տվյալ դատավորի գործողություններում նկատել է անհամաձայնություն օրենքի կամ իսլամական կանոնների հետ, կամ եթե դատավորի որակավորումը համարվում է անբավարար՝ գործին ընթացք տալու համար<sup>438</sup>:

Գերագույն քաղաքացիական դատարանը բաղկացած է նախագահողից, դատավորից և փորձագետից: Փորձագետի պարտականությունների մեջ է մտնում՝ մինչ դատական գործընթացն սկսելը ուսումնասիրել գործը, դրա հետ կապված իր գրավոր մեկնաբանությունները և մոտեցումները դատարանին ներկայացնելը, որոնք հաշվի են առնվում դատավարության ժամանակ: Դատավարությունն իրականացվում է նախագահող դատավորի և երկրորդ դատավորի կողմից: Սակայն եթե դատավորը համարվում է բարձր որակավորում ունեցող մոջթահեդ, ապա այդ դեպքում փորձագետի մեկնաբանությունների անհրաժեշտությունը չեղարկվում է: Բարձրագույն քաղաքացիական դատարանի իրավասության մեջ ներառվում են բոլոր իրավական և դատական գործերը<sup>439</sup>:

Իրանում քրեական և քաղաքացիական դատաքննություններն ընթանում են երկու փուլով: Երբ որևէ դատական գործ քննվում է դատարանում, քաղաքացին իրավունք ունի առնվազն մեկ անգամ բողոքարկելու դատավճիռը այլ՝ ավելի բարձր դատարանում: Նահանգների վերաքննիչ դատարանները քննում են բոլոր կարևոր դատական գործերը: Սակայն արձանագրենք, որ Իսլամական հեղափոխությունից հետո առաջին 10 տարում Իրանում դատավորի վճռի նկատմամբ վերաքննություն պահանջելը համար-

---

<sup>438</sup> **П.А. Гусенова**, *Общая характеристика судебной системы Исламской республики Иран*, стр 89.

<sup>439</sup> **А. Гамов**, *Юридическая и судебная система Исламской Республики Иран*, 2003, <http://www.iimes.ru/?p=3040&fbclid=IwAR0LsKJSJAYZwhHJMNCLPpM0G4P9VKrRAR6uH0WCukZoTHmjucG2tSMMT2k>

վում էր հակադրություն կրոնին, ըստ էության՝ վերաքննություն պահանջելն ընդունելի չէր:

Սակայն, ըստ գործող օրենքի, առաջին ատյանի կամ Վերաքննիչ դատարանի որոշման դեմ անձը կարող է իր բողոքը ներկայացնել և քննություն պահանջել երկրի Գերագույն դատարանում: Բայց, ինչպես վերը նշեցինք, այս դրույթը հակասում է իսլամի դատավարության սկզբունքներին և պատկերացումներին, ուստի, իսլամական իրավաբանական և կրոնական աղբյուրների համաձայն, դատավարության միափուլ և միադատավոր լինելու սկզբունքը պարտադիր հանգամանք է, այսինքն՝ դատերը քննվում են միայն մեկ փուլով, մեկ դատավորով<sup>440</sup>: Այս ամենով հանդերձ, Իրանում գոյություն ունեն բողոքարկման ատյաններ, որոնք կարող են վերանայել որոշ գործեր, և եթե նախնական դատավճիռը հակասում է հայցվորի պահանջին՝ Իրանի քաղաքացիական դատավարության օրենսգրքի 426-րդ հոդվածի համաձայն, ապա դատական գործը կարող է ամբողջովին վերանայվել: Բողոքարկման տարբերակները նկարագրված են ստորև: **Բողոքարկման առաջին ատյանի դատարանում** դատապարտյալը հենց նույն դատարանում կարող է բողոքարկել հեռակա կարգով կայացրած վճիռը, քանի որ պատասխանողն անձամբ ներկա չի գտնվել դատարանի նիստերից ոչ մեկին, նրան չեն ծանուցել դատի մասին և, այդ ամենով հանդերձ, առաջին ատյանի դատարանը որոշում է կայացրել: **Բողոքարկում նահանգի վերաքննիչ դատարանում** հնարավոր է, եթե վճիռ կայացրած դատավորն ինքը կամ մեկ այլ դատավոր նկատում է տեղի ունեցած սխալը: Իրանի քաղաքացիական դատավարության օրենսգրքի 331-րդ հոդվածի համաձայն, դատարանների վճիռները վերաքննության ենթակա են հետևյալ դեպքերում. 1. ֆինանսական վեճեր, երբ գումարը գերազանցում է 300 հազար թումանը, թեպետ Իրանում գործում է նաև հաշտարարի ինստիտու-

---

<sup>440</sup> **Աբուլֆազլ Ամերի Ճահրաբի**, *Իրանի Իսլամական Հանրապետության իրավական համակարգը*, Ատենախոսություն, Երևան, 2018, էջ 141:

տը, որը լիազորված է քննելու մինչև 5 մլն թումանի հասնող պահանջները, 2. ոչ ֆինանսական վեճերով կայացված բոլոր վճիռները, 3. վճիռները, որոնք վերաբերում են վեճի կողմնակի հանգամանքներին, մինչդեռ բուն վեճը ենթակա է վերաքննության<sup>441</sup>:

**Վճռաբեկ բողոքարկում երկրի գերագույն դատարանում** հնարավոր է, սակայն իրականում վարույթ ընդունվում են շատ սակավաթիվ գործեր: Այս դատարանի վճիռը վերջնական է:

**Գերագույն քրեական դատարանի** կազմը նման է Գերագույն քաղաքացիական դատարանին: Իրականում քրեական դատավարության օրենքն առաջին անգամ կյանքի է կոչվել 1909 թ.: Մահմեդական երկրներում հիմնականում գործում է իսլամական դատավարությունների համակարգը, որն ամբողջովին բխում է իսլամի սկզբունքներից և նորմերից:

Գերագույն քրեական դատարանի լիազորությունների մեջ է մտնում քրեական այնպիսի հանցագործությունների քննությունը, որոնք ենթադրում են մահապատժի վերաբերյալ դատավճռի կայացում, մահապատժի կիրառման ձևի որոշում, երկրից քաղաքացու արքտորում, մարդու մարմնի անդամահատման դատավճիռ, մինչև 10 տարվա ազատազրկում, երկու միլիոն ռիալից ավելի տուգանք, ինչպես նաև դատապարտված անձի գույքի ավելի քան 2/5-ի բռնագրավում<sup>442</sup>: Գերագույն քրեական դատարանի որոշումները վերջնական են, սակայն շատ քիչ դեպքերում, օրինակ, եթե գրանցվել է դատավորի սխալ, կամ իսլամի սկզբունքներին հակասող վճռի կատարումը կանխելու նպատակով, բացառություն է արվում, և գործը կարող է բողոքարկվել Գերագույն դատարանում: Նման դեպքերում տարաձայնությունների համաձայնեցման գործընթացը տեղի է ունենում քրեական ատյանների միջև՝ Բարձրագույն քաղա-

---

<sup>441</sup> Նույն տեղում, էջ 143, 144:

<sup>442</sup> **А. Гамов**, *Юридическая и судебная система Исламской Республики Иран*, 2003, <http://www.iimes.ru/?p=3040&fbclid=IwAR0LsKJSJAYZwhHJMNCLPpM0G4P9VKrRAR6uH0WCukZoTHmjucG2tSMMT2k>

քացիական դատարանի գործընթացների նմանությամբ:

Անդրադառնալով մահապատժի թեմային՝ հարկ է նշել, որ Իրանում մահապատժի կարող են ենթարկվել թմրանյութերի տարածման, հոմոսեքսուալ կապերի, դիտավորությամբ այլ մարդու կյանքից զրկելու, պետության և վարչակարգի դեմ քայքայիչ գործողություններ ծավալելու, ահաբեկչության մեջ մեղադրվելու, Մուհամմադ Մարգարեին վիրավորելու, կրոնի ուրացման, ամուսնական դավաճանության և այլ դեպքերում: Արձանագրենք, որ, ըստ իրանական մամուլի, 2014 թ. հոկտեմբեր ամսվա կտրվածքով երկրում իրականացվել էր ոչ պակաս, քան 200 մահապատիժ, ըստ ընդդիմության՝ այդ թիվը հասնում է 600-ի<sup>443</sup>: Մեկ այլ աղբյուր նշում է, որ 2013 թ. Իրանում մահապատժի է ենթարկվել 500 մարդ, որից 5-ը՝ հրապարակավ: 2021 թ. Իրանում գրանցված մահապատիժների թիվը հասել է 314-ի, իսկ 2022-ին՝ 576-ի<sup>444</sup>:

Ուշագրավ է, որ մուսուլմանական իրավունքը քրեական իրավունքի վերջնական համակարգ չի ձևավորել, քանի որ դատական գործընթացը խարսխվում է կրոնի սկզբունքների վրա, որտեղ քրեական հանցագործություն հասկացությունը միախառնվում է կրոնական իմաստով մեղքի հասկացության հետ: Իրանի իրավական համակարգում մինչ օրս կիրառվում են շարիաթական երկու հիմնական ինստիտուտները՝ Ղեսասը (ակն ընդ ականի իրավունք) և Դիեն (արյան փոխհատուցում), որոնք տուժողի իրավահաջորդներին հնարավորություն են տալիս ընտրելու պատժի կամ փոխհատուցման եղանակը:

Համաձայն իսլամական քրեական օրենսգրքի՝ Իրանում քրեական պատիժները բաժանված են չորս տեսակի, և ուշագրավ է, որ

---

<sup>443</sup> *Иран, Human rights watch*, 2015, [https://www.hrw.org/sites/default/files/related\\_material/iran\\_ru.pdf](https://www.hrw.org/sites/default/files/related_material/iran_ru.pdf)

<sup>444</sup> *Death Penalty 2022, Recorded executions skyrocket to highest figure in five years*, Amnesty International, <https://www.amnesty.org/en/latest/news/2023/05/death-penalty-2022-executions-skyrocket/#:~:text=Recorded%20executions%20in%20Iran%20soared,while%20Egypt%20executed%2024%20individuals.>

քրեական դատարանները մինչև այժմ կիրառում են ավանդույթի ուժով եկած մի շարք օրենքներ: Դրանցից է, օրինակ Ղեսասը՝ «ակն ընդ ական» օրենքը: Հիշեցնենք, որ այս հոդվածով աղմկահարույց գործ սկսվեց, երբ Իրանի քաղաքացի 30-ամյա Մաջիդ Մովահեդին, սիրահետելով 32-ամյա Ամենի Բահրամին, մերժում է ստանում ամուսնության առաջարկի կապակցությամբ, և Մաջիդը, դարանակալելով Ամենիին, ծծմբաթթու է լցնում նրա երեսին: Աղջիկը կուրանում է, և անգամ 19 վիրահատությունները չեն օգնում նրան: Դատարանը կայացնում է որոշում՝ Ղեսասի օրենքի համաձայն, այն է՝ Մաջիդի ամեն աչքի մեջ կաթեցնել 5-ական կաթիլ ծծմբաթթու<sup>445</sup>: Պատիժը կիրառելու պահին աղջիկը որոշում է հետ կանգնել իր պահանջից:

Հաջորդը Դիեի օրենքն է: Մարդկային կյանքի կորստի հանգեցնող երեք դեպքերում, օրենքով նախատեսված պատժից զատ, մեղավորը պարտավոր է նաև համապատասխան արյան գին վճարել, որը յուրաքանչյուր տարի որոշվում է Կենտրոնական բանկի կողմից՝ հաշվի առնելով Առաջնորդի տեսակետը: Միջադեպերը դասակարգված են ըստ հետևյալ դեպքերի. բացարձակ սխալ, որը հանգեցնում է մահվան, ոչ դիտավորյալ սպանություն, օրինակ՝ ավտովթար (Իրանն այս խնդրում աշխարհում զբաղեցնում է առաջին հորիզոնականներից մեկը) և դիտավորյալ սպանություն<sup>446</sup>:

Այսպիսով, եթե Գերագույն քրեական դատարանի իրավասությունը ներառում է քրեական հետապնդում հատկապես ծանր հանցագործությունների մեղադրանքով, ապա ստորին քրեական դատարանները քննում են ավելի թեթև պատիժներ ենթադրող գործերը: Իրանում այս թեմայի հետ կապված աղմկահարույց գործ

---

<sup>445</sup> *Ameneh Bahrami: was I right to pardon the man who blinded me with acid?*  
<https://www.theguardian.com/world/2015/apr/26/ameneh-bahrami-interview-iran-acid-attack-blinded>

<sup>446</sup> **Արման Փոլադյան**, *Իրանի կրոնական փոքրամասնությունները*, 27.03.2010  
<https://www.lragir.am/2010/03/27/33471/?fbclid=IwAR2bwllmloVq38Ea2ahfUG23J9XA YyR0j8Xc0iW87-YhGiGEbGeMHdTmuyU>

տեղի ունեցավ 2006 թ., երբ Նազանի Ֆաթեհիի նկատմամբ Իրանի դատարանը մահապատժի վճիռ կայացրեց՝ կախաղան բարձրացնելու եղանակով, այն մեղադրանքով, որ Նազանին դիտավորությամբ սպանել էր մի տղամարդու։ Սակայն սպանության դրդապատճառը իրականում ընկալելի էր, և հնարավորություն տրվեց Նազանին՝ արյան գինը վճարելով ազատվել մահապատժից։ Երեք տղամարդ փորձել էին բռնաբարել 17-ամյա Նազանին և նրա 16-ամյա զարմուհուն։ Նազանին դանակահարել էր նրանցից մեկին<sup>447</sup>։ Դատարանի որոշմամբ Նազանին մեղավոր էր ճանաչվել՝ պաշտպանության ողջամիտ միջոցները գերազանցելու համար, և պարտավորվել զոհի հարազատներին վճարել արյան գինը։

Հոդուդ պատիժը այն պատիժներից է, որի տեսակը, չափը և ծանրությունը սահմանվում են շարիաթով։ Այս պատիժը կիրառվում է ամենածանր հանցագործությունների ժամանակ, այն է՝ հանցանքն Ալլահի դեմ։ Հոդուդի օրենքով դատապարտվեց Իրանի քաղաքացի, ծագումով արաբ բանաստեղծ 32-ամյա Հաշեմի Շաբանին։ Նրան մեղավոր ճանաչեցին Մոհաբեբեի (Աստծո դեմ պատերազմի) մեջ։ Նա խոստովանել էր, որ կապ է ունեցել անջատողական ահաբեկչական կազմակերպությունների հետ<sup>448</sup>։

Հաջորդ օրենքը Թաազիբաթն է, որի աստիճանը ինչ-ինչ պատճառներով չի կարող որոշվել շարիաթով, և Գերագույն դատարանի դատավորը խնդիրը լուծում է «աղլ» կոչվող օրենքի համաձայն. նա որոշումը կայացնում է՝ հանցանքը կատարածի նկատմամբ տուգանք նշանակելով կամ նրան ազատությունից զրկելով։ Իրանի Քրեական օրենսգրքի առանձնահատկություններից մեկը, թերևս, երևում է հենց Թաազիբաթի մեջ։ Ընդ որում, եթե ոչ մահմեդականը սպանում է մահմեդականին, ապա պատիժը կլինի Ղեսաս, այսինքն՝

---

<sup>447</sup> *Retrial for girl due to hang for killing rapist*, <https://www.independent.co.uk/news/world/middle-east/retrial-for-girl-due-to-hang-for-killing-rape-431113.html>

<sup>448</sup> *Execution of Arab Iranian poet Hashem Shaabani condemned by rights groups*, <https://www.theguardian.com/world/2014/feb/13/iran-middleeast>

մահապատիժ, սակայն եթե մահմեդականը սպանում է ոչ մահմեդականին, Ղեսաար չի կիրառվում, և պատիժը ենթակա է Թաազիրաթի՝ համաձայն հինգերորդ գրքի 310-րդ հոդվածի<sup>449</sup>:

### ***Ստորին քաղաքացիական դատարան***

Իրանում իրավական հարաբերությունների և քաղաքացիական իրավունքների որոշման և տարաձայնությունների լուծման գլխավոր աղբյուրը համարվում է 1928 թ. ընդունված քաղաքացիական օրենսգիրքը, որի համաձայն՝ ընդհանուր իրավասության դատարաններում վարույթ են ընդունվում բոլոր իրավական հարցերը, այդ թվում՝ հասարակության շրջանում քաղաքացիական իրավունքների իրացման իրավունքը:

Ստորին քաղաքացիական դատարանները վճռում են ժառանգության, համատեղ ունեցվածքը կիսելու, նյութական պահանջների (մինչև 2 միլիոն ռիալ) հարցերը<sup>450</sup>: Այս դատարաններն ունեն իրենց բաժանմունքները ողջ երկրով մեկ:

Այս դատարանի որոշումների բողոքարկումն իրականացվում է Բարձրագույն քաղաքացիական դատարանում, որի որոշումը վերջնական է և բողոքարկման ենթակա չէ: Ուշագրավ է, որ գործերի մեծ թվի, ինչպես նաև այն պատճառով, որ Իրանն ընտրել է ոմանագերմանական դատական համակարգը, քաղաքացիական դատավարությունն իրականացվում է մեկ ժամից պակաս տևողությամբ:

Քաղաքացիական հանրային դատարանների նիստերը սովորաբար նախագահում է դատավորը կամ նրա տեղակալը: Բոլոր գործողությունները, մասնավորապես դատաքննությունները, այս

---

<sup>449</sup> *Joint Submission by Abdorrahman Boroumand Foundation, The Advocates for Human Rights, Association for Human Rights in Kurdistan of Iran-Geneva, Iran Human Rights, and World Coalition against the Death Penalty*, p 5.

<sup>450</sup> **А. Гамов**, *Юридическая и судебная система Исламской Республики Иран*, 2003, <http://www.iimes.ru/?p=3040&fbclid=IwAR0LsKJSJAYZwhHJMNCLPpM0G4P9VKrRAR6uH0WCukZoTHmjucG2tSMMT2k>

դատարանների կողմից իրականացվում են քաղաքացիական դատավարության օրենսդրությանը համապատասխան: Սակայն վերջնական որոշումը կայացնում է նախագահող դատավորը<sup>451</sup>: Ստորին քաղաքացիական դատարաններում կան այնպիսի ստորաբաժանումներ, որոնք բացառապես զբաղվում են ընտանեկան գործերով. դրանք հայտնի են որպես ընտանեկան դատարաններ: Այս ստորաբաժանումներում գործում է նախագահող դատավորի կին-օգնականի ինստիտուտ, որը դատավորին ներկայացնում է իր եզրակացությունները՝ նախքան դատավորի վճռի կայացումը<sup>452</sup>:

Որպեսզի մի շարք հարցեր լուծվեն առանց դատարան մտնելու, քանզի վերջիններս խիստ ծանրաբեռնված են, 2000 թ. Մեջլիսում քննարկման թեմա դարձավ **Հաշտարար խորհուրդների** հիմնադրման անհրաժեշտությունը, որն այսօր զբաղվում է բացառապես ֆինանսական հարցերով՝ քննելով մինչև հինգ միլիոն թումանի հասնող գործերը, վարորդական խախտումները, վարձատուի և վարձակալի միջև վեճերը, ժառանգության, հանգուցյալի ունեցած պարտք ու պահանջների հետ կապված որոշումները: Պետք է արձանագրել, որ Իրանում մարդկանց քաղաքացիական իրավունքների ու ֆինանսական վեճերի վարույթի ընդունման գլխավոր ատյաններն են՝ յուրաքանչյուր նահանգի դատարանը, ապա՝ տվյալ նահանգի վերաքննիչ դատարանը, այնուհետև, հատուկ պայմանների պահպանմամբ, այն վարույթ է ընդունվում երկրի Գերագույն դատարանի կողմից<sup>453</sup>:

---

<sup>451</sup> *Иран: оппозиционные политические группы, силовые структуры, избранные проблемы в области прав человека, верховенство права* Сборник ИСП Июль 2015 г. стр. 170, [https://www.refworld.org/cgi-bin/texis/vtx/rwmain/opendo\\_cpdf.pdf?reldoc=y&docid=57b71856a](https://www.refworld.org/cgi-bin/texis/vtx/rwmain/opendo_cpdf.pdf?reldoc=y&docid=57b71856a)

<sup>452</sup> Там же.

<sup>453</sup> **Արուվֆազլ Ամերի Ճահրարի**, *Իրանի Իսլամական Հանրապետության իրավական համակարգը*, Ատենախոսություն, Երևան, 2018, էջ 140:

### ***Հատուկ քաղաքացիական դատարան***

Հատուկ քաղաքացիական դատարանը բնույթով հանրային դատարան է, որի իրավասությունները հավասարեցված են և՛ քաղաքացիական, և՛ քրեական դատարաններին՝ միաժամանակ: Այն պատասխանատու է՝ ընտանեկան վեճեր, ամուսնալուծության, խնամակալության, ժառանգության և նմանատիպ այլ հարցեր քննելու համար: Թեպետ այս դատարանը ամենացածր հիերարխիկ մակարդակում է, այնուամենայնիվ դրա որոշումները վերջնական են և ենթակա չեն բողոքարկման<sup>454</sup>:

### ***Ստորին քրեական դատարան***

Ստորին քրեական դատարանների իրավասության ներքո են գտնվում այն իրավախախտումները, որոնք չեն մտնում բարձրագույն քրեական դատարանների քննությանը ենթակա գործերի մեջ, օրինակ՝ քաղաքային իշխանությունների գործունեության և ճանապարհատրանսպորտային պատահարների վերաբերյալ գործերը: Այս դատարանի որոշումները ևս ենթակա չեն բողոքարկման բարձրագույն քրեական դատարանում<sup>455</sup>:

Այս դատարանները նիստերն անցկացնում են գլխավոր դատավորի կամ նրա տեղակալի նախագահությամբ. տեղակալը նախագահում է միայն այն դեպքում, եթե գլխավոր դատավորը բացակայում է:

Իրանի բոլոր քաղաքներում գոյություն ունեն ստորին քրեական դատարաններ, որոնց նշանակած պատիժները կարող են բողոքարկվել նույն քաղաքի Գերագույն քրեական դատարանում: Բնականաբար, ծանր հանցագործությունների դեպքում, որոնց հա-

---

<sup>454</sup> **П.А. Гусенова**, *Общая характеристика судебной системы Исламской Республики Иран*, Зарубежное право, Вестник Санкт-Петербургского Университета, Сер. 14 Вып. 2, стр. 90.

<sup>455</sup> **А. Гамов**, *Юридическая и судебная система Исламской Республики Иран*, 2003, <http://www.iimes.ru/?p=3040&fbclid=IwAR0LsKJSJAYZwhHJMNCLPpM0G4P9VKrRAR6uH0WCukZoTHmjucG2tSMMT2k>

մար նախատեսված է մահապատիժ կամ ցմահ ազատազրկում, նախնական դատական նիստը տեղի է ունենում նահանգային քրեական դատարանում, որին սովորաբար մասնակցում է երեքից հինգ դատավոր: Նրանց ընդունած որոշումները կարող են բողոքարկվել միայն Գերագույն դատարանում<sup>456</sup>:

Իրանում կան նաև, այսպես կոչված, **անկախ ստորին քաղաքացիական դատարաններ**, որոնք զբաղվում են մինչև 4 միլիոն ռիալի չափով ֆինանսական հայցերով, փաստաթղթերի կեղծման փաստերով և քաղաքացիական կացության գրանցման հարցերով: Որոշ դեպքերում դրանց հանձնարարվում է ստորին քրեական դատարանների իրավասության ներքո գտնվող որոշ գործերի քննումը ևս<sup>457</sup>:

Ինչպես վերը նշել ենք, Իրանի դատական իշխանությունը ուրույն է և աչքի է ընկնում տարբերվող դատական համակարգով: Իրանում գոյություն ունեն **մասնագիտացված դատարաններ՝** կոնկրետ հանցանքների համար. Ռազմական դատարան, Իսլամական հեղափոխության դատարան, Հոգևորականների հարցերով հատուկ դատարան և ՋԼՄ-ների գործերի հետ կապված դատարան: Եթե ռազմական դատարանի մասին ԻԻՀ Սահմանադրության մեջ առկա է հղում, ապա Իսլամական հեղափոխության, Հոգևորականների և Մամուլի հարցերով դատարանների մասին Սահմանադրության մեջ որևէ խոսք չկա:

### ***Իսլամական հեղափոխության դատարան***

Հեղափոխության դատարանի ստեղծումն Իսլամական հեղափոխության հաղթանակի արդյունքն էր: Միապետության տա-

---

<sup>456</sup> *Иран: оппозиционные политические группы, силовые структуры, избранные проблемы в области прав человека, верховенство права*, Сборник ИСП Июль 2015 г. <https://www.refworld.org/cgi-bin/tehis/vtx/rwmain/opendocpdf.pdf?reldoc=y&docid=57b71856a>

<sup>457</sup> **П.А. Гусенова**, *Общая характеристика судебной системы Исламской республики Иран*, стр. 90.

պալումից անմիջապես հետո սկսեցին մեկը մյուսի հետևից ստեղծվել իսլամական «հեղափոխական տրիբունալներ»: Երբ արդեն ստեղծվեց հեղափոխական տրիբունալների մեծ ցանց, այաթոլլահ Խալիսալին ինքն իրեն հռչակեց գլխավոր դատախազ և ձևավորեց Գերագույն հեղափոխական տրիբունալը»<sup>458</sup>:

Հեղափոխությունից անմիջապես հետո հիմնվեց Արտակարգ դատարանը՝ հենվելով հակահեղափոխական հանցանքների մասին օրենքի վրա. առաջին հեղափոխական դատարանի առաքելությունն էր՝ պահպանել հեղափոխության ձեռքբերումները: 1984 թ. Մեջլիսի որոշմամբ հեղափոխական դատարաններն սկսեցին ենթարկվել Դատական իշխանության ղեկավարին: Հեղափոխական դատարանների գործառույթների մեջ է մտնում արտաքին և ներքին անվտանգությանն ուղղված հանցագործությունների, Առաջնորդի դեմ անհարգալից վերաբերմունքի և զրպարտությունների, ԻԻՀ դեմ գինված հարձակում կատարելու, սահմանադրական կարգի տապալման կամ լրտեսության, թմրանյութերի ապօրինի շրջանառության, մոլախաղերի հետ կապված արարքների քննությունը: Հեղափոխական դատարանի լիազորությունների մեջ է մտնում մահապատժի, երկարաժամկետ ազատազրկման վերաբերյալ վճիռների կայացումը:

Հարկ է նշել, որ Իսլամական հեղափոխության դատարանները, ըստ գործերի, բաժանվում են մի քանի տեսակների.

- Իսլամական հեղափոխական դատարաններ՝ տնտեսական հանցագործությունների համար,

- Իսլամական հեղափոխական դատարաններ՝ քաղաքական հարցերի համար,

---

<sup>458</sup> **Скляр Л.Е.** *Становление новых органов власти в Иране (1978–1981)* // *Иран: история и современность*, М., Наука, 1983, стр. 203.

- Իսլամական հեղափոխական դատարաններ՝ թմրանյութերի դեմ պայքարելու համար<sup>459</sup>:

Հեղափոխական դատարաններում դատվում են հանցագործությունների որոշակի տեսակների համար, ինչպիսիք են՝ ազգային անվտանգության դեմ ուղղված հանցագործությունները (ներառյալ քաղաքական և մամուլի հետ կապված հանցագործությունները), թմրամիջոցների մաքսանենգությունը և Իսլամական Հանրապետության անվտանգությանն սպառնացող գործողությունները:

2015 թ. իր զեկույցում Human Rights Watch-ը նշում է, որ 2014 թ. Իսլամական հեղափոխության դատարանն առնվազն 9 մարդու նկատմամբ մահվան դատավճիռ է կայացրել՝ մեղադրելով վերջիններիս Մուհարաբայի (muharaba)՝ Աստծո նկատմամբ թշնամանքի մեջ<sup>460</sup>: Ըստ էության, muharaba տերմինը կիրառվում է երկրի անվտանգությանն սպառնալու դեպքում, բայց քանի որ այն ամբողջովին կանոնակարգված չէ, դատավորն այն կարող է կիրառել ըստ իր հայեցողության:

Հեղափոխական դատարանների կանոններին համապատասխան, դատարանը պետք է կազմված լինի հոգևորական դատավորից, քաղաքացիական դատավորից, ինչպես նաև դատարանում պետք է լինեն վստահություն վայելող անձինք, որոնք նշանակվում են, համապատասխանաբար, Առաջնորդի և Արդարադատության նախարարի կողմից: Սակայն իրականում դատավարությունն իրականացվում է մեկ հոգևորական դատավորի կողմից՝ պարզեցված ընթացակարգով<sup>461</sup>: Մեղավորության չափը որոշվում է «արդար» մարդկանց ցուցմունքներով, որոնք կարող են հաստատ-

---

<sup>459</sup> **П.А. Гусенова**, *Общая характеристика судебной системы Исламской Республики Иран*, стр. 91.

<sup>460</sup> *Иран, Human Right Watch*, [https://www.hrw.org/sites/default/files/related\\_material/iran\\_ru.pdf](https://www.hrw.org/sites/default/files/related_material/iran_ru.pdf)

<sup>461</sup> *Иран: оппозиционные политические группы, силовые структуры, избранные проблемы в области прав человека, верховенство права Сборник ИСПИюль 2015 г.* <https://www.refworld.org/cgi-bin/tehis/vtx/rwmain/opendocpdf.pdf?reldoc=y&docid=57b71856a>

վել երդումներով: Երդումով հաստատված վկայությունը չի կարող բողոքարկվել մեղադրյալի կողմից: Իսլամական հեղափոխության դատարանի որոշումները կարող են բողոքարկվել միայն Գերագույն դատարանում<sup>462</sup>:

Այդպիսի արդարացված դեպքերից էր Համիդ Ղասեմի Շալլիի գործը, որը Կանադայի քաղաքացի էր, ազգությամբ՝ պարսիկ, մասնագիտությամբ՝ ինժեներ. նա մեղադրվել էր Իրանի դեմ լրտեսության մեջ, և Իսլամական հեղափոխության դատարանը մահապատիժ էր պահանջել նրա համար: Հետագայում, Կանադայի կառավարության ջանքերի շնորհիվ, գործը վերանայվեց, և Համիդ Ղասեմի Շալլիին դատապարտեցին 5 տարի ազատազրկման, և նա ազատ արձակվեց 2013 թ.<sup>463</sup>:

### ***Զինվորական դատախազություն և ռազմական դատարան***

ԻԻՀ Սահմանադրության 172-րդ հոդվածն ամբողջովին նվիրված է ռազմական դատարանի ստեղծմանը, որն իրավասու է քննելու զինվորականների, ժանդարմերիայի և ոստիկանության ներկայացուցիչների, Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի ծառայողների կողմից կատարված ռազմական հանցագործությունները<sup>464</sup>: Այս դատարաններում քննվում են միայն վերոհիշյալ կառույցների ներկայացուցիչների վերաբերյալ գործերը, քանի որ նման հանցանքներ շարքային քաղաքացին չի կարող կատարել, դրանք են՝ ռազմական գաղտնիքի արտահոսքը, դասալքությունը, ռազմական հրամանատարության հրահանգները չկատարելը, զենքի հանձնումը թշնամուն, ռազմական ամրությունների

---

<sup>462</sup> **П.А. Гусенова**, *Общая характеристика судебной системы Исламской республики Иран*, стр. 91.

<sup>463</sup> **Hamid Ghassemi-Shall**, *Toronto man who spent time on death row in Iran has returned home*, <https://globalnews.ca/news/895792/toronto-man-who-spent-time-on-death-row-in-iran-has-retuned-home/>

<sup>464</sup> ԻԻՀ Սահմանադրություն, հոդված 172:

հանձնումը հակառակորդին:

1985 թ. մայիսի 15-ին՝ Զինված ուժերի քրեական դատավարության մասին օրենքի ընդունումից հետո, Իրանում ստեղծվեցին առաջին և երկրորդ աստիճանի ռազմական դատարաններ: Առաջին աստիճանի ռազմական դատարանը քննում է առավել ծանր հանցագործությունները և կայացնում ծանր դատավճիռներ, ներառյալ մահապատիժ, իսկ երկրորդ աստիճանի զինվորական դատարանը քննում է առավել թեթև հանցանքները:

Ռազմական դատարաններն ունեն իրենց կանոններն ու ընթացակարգերը, համաձայն որոնց՝ հանցագործությունների դեպքերը, որոնցով անձինք կարող են դատապարտվել երկարաժամկետ ազատազրկման՝ մինչև տասը տարի կամ ավելի, կամ նույնիսկ մահապատիժ, քննվում են առաջին աստիճանի ռազմական դատարանների կողմից: Երկրորդ մակարդակի ռազմական դատարանները քննում են գործեր, որոնք կարող են ենթադրել ավելի մեղմ պատիժ<sup>465</sup>: Զինվորական դատախազությունը և ռազմական դատարանները համարվում են Դատական իշխանության բաղկացուցիչ մասը, և դրանց վրա տարածվում են դատական իշխանության բոլոր սկզբունքները: Միևնույն ժամանակ զինվորականների կողմից կատարված ընդհանուր ոչ ռազմական բնույթի հանցագործությունները քննվում են ընդհանուր դատարաններում<sup>466</sup>:

Զինված ուժերի դատական համակարգն ունի իր քրեական օրենսգիրքը և պահպանում է երկրում գործող քրեական դատավարության ընդհանուր կանոնները:

1979 թ. դեկտեմբերի 8-ին հիմնված ռազմական հեղափոխական դատարանը չէր նախատեսում վերանայման որևէ գործընթաց, այսինքն՝ դրա կայացրած վճիռները վերջնական էին և բեկանման

---

<sup>465</sup> *Иран: оппозиционные политические группы, силовые структуры, избранные проблемы в области прав человека, верховенство права* Сборник ИСП Июль 2015, р. 215 <https://www.refworld.org/cgi-bin/texis/vtx/rwmain/opendocpdf.pdf?reldoc=y&docid=57b71856a#page=215&zoom=100,109,224>

<sup>466</sup> *ԻԻՀ Մահմանադրություն*, հոդված 172:

ենթակա չէին: Սակայն հետագայում՝ 1985 թ. մայիսի 15-ին՝ Զինված ուժերի քրեական դատավարության մասին օրենքի ընդունումից հետո, որոշվեց ստեղծել նաև բողոքարկման համակարգ, ինչը կարելի է ակնհայտ առաջընթաց համարել այս ոլորտում, որի արդյունքում էլ ձևավորվեց ռազմական դատարանի երկաստիճան համակարգը: Երկրորդ աստիճանի դատարանների որոշումները կարող էին վերանայվել առաջին ատյանի ռազմական դատարանների կողմից: Համաձայն 1985 թ. օրենքի՝ նախատեսվում էր Գերագույն դատարանում մի քանի մասնաճյուղ բացել, որոնք կվերաքննեին նաև առաջին աստիճանի ռազմական դատարանի որոշումները<sup>467</sup>:

Ուշագրավ բացահայտումներ եղան, երբ 2011 թ. մայիսին Իրանի ոստիկանության պետը հայտարարեց, թե 2010 թ. մոտ 1500 ոստիկան ազատվել է աշխատանքից՝ կոռուպցիայի հետ կապված ոչ պատշաճ վարքագծի համար<sup>468</sup>: Այս գործընթացները, բնականաբար, տեղի ունեցան այն հանգամանքից հետո, երբ ԻԻՀ Առաջնորդ Ալի Խամենեին նշել էր, որ ոստիկանությունն է այն ուժը, որը պետք է պայքարի կոռուպցիայի դեմ. «չպետք է մի մարմնի մեջ լինի կոռուպցիա, որի դեմ այդ մարմինը կոչված է պայքարելու»<sup>469</sup>, այսպիսով, Առաջնորդը ևս մտահոգություն էր արտահայտել ոստիկանության շարքերում կոռուպցիայի ներթափանցելու կապակցությամբ: Բնականաբար, այս դատավարություններն իրականացվել են ռազմական դատարանի երկրորդ ատյանում:

ԻԻՀ ոստիկանության ղեկավարներից Իսմայիլ Ահմադի Մոդադամը արձանագրել է, որ ոստիկանության շարքերում վերջին շրջանում իրավախախտումների քանակը նվազել է միջինը 10%-ով:

---

<sup>467</sup> *Иран: оппозиционные политические группы, силовые структуры, избранные проблемы в области прав человека, верховенство права* Сборник ИСП Июль 2015 г, р. 216, [https://www.refworld.org/cgi-bin/tehis/vtx/rwmain/opendo\\_cpdf.pdf?reldoc=y&docid=57b71856a#page=215&zoom=100,109,224](https://www.refworld.org/cgi-bin/tehis/vtx/rwmain/opendo_cpdf.pdf?reldoc=y&docid=57b71856a#page=215&zoom=100,109,224)

<sup>468</sup> *1500 nafar az Naja ekhraj shodand*, <https://aftabnews.ir/fa/news/127534/1500>

<sup>469</sup> **Maranlou, S. (n.d.).** *Barriers in the Path to Justice. Access to Justice in Iran*, p. 92, doi:10.1017/cbo9781139680493.005

Ըստ նրա, «հանցագործությունների քանակը ոստիկանությունում իջել է 50%-ով՝ 5 տարի առաջվա համեմատությամբ»: Նրա խոսքով փոխվել է իրավիճակը. եթե նախկինում արձանագրվում էր թմրանյութերի վաճառքով զբաղվող խմբերի հովանավորություն ոստիկանների կողմից, ապա այս շրջանում այդ ոստիկանները հեռացվում են ոստիկանությունից»<sup>470</sup>:

### ***Հոգևորականների հարցերով հատուկ դատարան***

Իրանում մասնագիտացված դատարանների շարքում են նաև Հոգևորականների հարցերով հատուկ դատարանները, որոնց գլխավոր իրավասությունն է՝ պատժել հանցագործ հոգևորականներին և պաշտպանել հոգևորականի արժանապատվությունը: Այս դատարանը ևս ձևավորվել է Իսլամական հեղափոխությունից հետո, որն աստիճանաբար լուծարվեց, սակայն Առաջնորդի՝ 1987 թ. հրահանգով այն կրկին վերաբացվեց, որպեսզի քննի օրինախախտ հոգևորականների գործերը: Կարծում ենք՝ այդ դատարանի վերաբացման հիմնական շարժառիթը 1987 թ. քաղաքական այն ճգնաժամն էր, որն առաջացել էր գործող իշխանության շրջանակներում, երբ որոշ հոգևորականներ սկսել էին բացահայտելույթներ ունենալ ինչպես համակարգի գործունեության դեմ, այնպես էլ երբեմն կասկածի տակ էին առնում հոգևոր վերնախավի ընդունած որոշումների ճշմարտացիությունը:

1987 թ. ԻԻՀ-ում խիստ ակտիվացավ կառավարող էլիտայի ֆրակցիոնալիզմը, ինչը հանգեցրեց խորը քաղաքական և համակարգային ճգնաժամի: Երբ նույն կուսակցության տարբեր ֆրակցիաները բացահայտ սկսեցին հանդես գալ իրար դեմ, այաթոլլահ Խոմեյնին վճռեց իրավիճակը ամբողջությամբ կառավարելի դարձնել, որպեսզի վերահսկի ճգնաժամը<sup>471</sup>: Հարկ է հիշեցնել նաև, որ

---

<sup>470</sup> 1500 nafar az Naja ekhraj shodand, <https://aftabnews.ir/fa/news/127534/> 1500

<sup>471</sup> **Maziar Behrooz**, *Fractionalism in Iran under Khomeini*, Middle Eastern Studies, Vol. 27, No. 4 (Oct., 1991), p. 597.

ընթանում էր իրանա-իրաքյան պատերազմը, և Իրանի իշխանության բոլոր ճյուղերը և ազդեցիկ հոգևորականները պետք է լինեին համախմբված: Այսպիսով, 1987 թ. վերաբացվեց Հոգևորականների հարցերով հատուկ դատարանը, որը, ըստ էության, սկսեց հետապնդել անջատողական հայացքներ ունեցող բոլոր հոգևորականներին: 1987 թ., երբ Խոմեյնին վերակենդանացրեց Հոգևորականների հարցերով հատուկ դատարանները, առաջին գործը հարուցվեց Աշխարհի իսլամական շարժումների Թեհրանի օգնության բյուրոյի նախագահ Մեհդի Հաշեմիի դեմ<sup>472</sup>, որը դատապարտվեց, և որն այաթոլլահ Մոնթազերիի հովանավորյալն էր<sup>473</sup>:

Հոգևոր հարցերով մասնագիտացված դատարանները գտնվում են երկրի Առաջնորդի անմիջական վերահսկողության ներքո: Այս դատերն իրականացվում են դռնփակ, մեղադրվողը դատապաշտպան ունենալու իրավունք չունի և որոշումները պարտադիր չէ, որ հիմնված լինեն համակարգված օրենսդրության վրա: Այս դատարանի ընդունած վճիռը վերջնական է<sup>474</sup>: Հետագոտող Քունքլերը արձանագրում է, որ թեպետ ներկայիս գործող Առաջնորդը անձամբ չի հիմնադրել Հոգևորականների հարցերով հատուկ դատարանները, սակայն նրա հրամանով 1990-ական թվականներին Թեհրանից դուրս հիմնվեցին ևս տասը դատարաններ

---

<sup>472</sup> Հինգ շաբաթ բանտարկության մեջ պահված Մեհդի Հաշեմին 1986 թ. դեկտեմբերի 12-ին հանրային հեռուստատեսությամբ խոստովանեց, որ իրականացրել է հակահեղափոխական քարոզչություն Դոմի սեմինարիաներում, իր ենթակայության տակ ունեցել է պայթուցիկներ, որ անհրաժեշտության պարագայում կարողանա տապալել վարչակարգը և նույնիսկ խոստովանեց, որ մինչև 1979 թ. համագործակցել է շահի գաղտնի ոստիկանության հետ: 1979 թ. յոթ օր տևած դատավարության արդյունքում Մեհդի Հաշեմին դատապարտվեց մահապատժի: **Mirjam Künkle**, *The Special Court of the Clergy (dādgāh-ye vizheh-ye ruhāniyat) and the Repression of Dissident Clergy in Iran*, pp. 15–16.

<sup>473</sup> **Mirjam Künkle**, *The Special Court of the Clergy (dādgāh-ye vizheh-ye ruhāniyat) and the Repression of Dissident Clergy in Iran*, p. 15.

<sup>474</sup> *Иран: оппозиционные политические группы, силовые структуры, избранные проблемы в области прав человека, верховенство права* Сборник ИСПИ Июль 2015 г., <https://www.refworld.org/cgi-bin/texis/vtx/rwmain/opendocpdf.pdf?eldoc=y&docid=57b71856a>

այլ քաղաքներում, և դրանց տրվեցին լիազորություններ՝ 47 հոդվածից բաղկացած հրամանով, որոնք փոփոխվեցին և ավելացվեցին 2005 թ.<sup>475</sup>:

Քանի որ այս դատարանը ինչ-որ չափով դուրս է դատական ողջ համակարգից, ապա բնականաբար դրա թե՛ պաշտպանվածությունը, թե՛ բյուջեն ևս առանձնացված են: Ըստ վերլուծաբան Մ. Քունքլերի՝ սույն դատարանն ունի իր անվտանգության համակարգերն ու բանտերը, և դրա բյուջեն առանձնացված է դատական իշխանության բյուջեից և ենթակա է հաստատման ոչ թե Մեջլիսի, այլ Նպատակահարմարության ժողովի կողմից<sup>476</sup>:

### ***ԶԼՄ-ների հարցերով դատարաններ***

ԻԻՀ Սահմանադրության 168-րդ հոդվածը վերաբերում է քաղաքական բնույթի և մամուլի հետ կապված հանցագործություններին, որը նախատեսում է այդ դատերը իրականացնել դոնբաց՝ երդվյալ ատենակալների մասնակցությամբ<sup>477</sup>: Ըստ էության, Սահմանադրության մեջ նշվում է, որ քաղաքական հանցագործությունների որակումը սահմանված է օրենքով և իրագործվում է իսլամական նորմերին համապատասխան: Այս անորոշ նկարագրությունը պարունակում է մանկերելու հնարավորություն, և, անհրաժեշտության պարագայում, փաստորեն, ցանկացած քաղաքացու կարելի է այս հոդվածով մեղադրանք ներկայացնել:

ԶԼՄ-ների հարցերով դատարաններն ստեղծվել են «Մամուլի մասին» օրենքի համաձայն՝ իշխանության կողմից անցանկալի համարվող լրատվամիջոցներն ու մարդկանց վերահսկելու համար:

---

<sup>475</sup> **Mirjam Künkler**, *The Special Court of the Clergy (Dādgāh-Ye Vizheh-Ye Ruhāniyat) and the Repression of Dissident Clergy in Iran*, May 13, 2009, p. 14 [https://papers.ssrn.com/sol3/papers.cfm?abstract\\_id=1505542](https://papers.ssrn.com/sol3/papers.cfm?abstract_id=1505542)

<sup>476</sup> **Mirjam Künkler**, *The Special Court of the Clergy (Dādgāh-Ye Vizheh-Ye Ruhāniyat) and the Repression of Dissident Clergy in Iran*, May 13, 2009, p. 2, [https://papers.ssrn.com/sol3/papers.cfm?abstract\\_id=1505542](https://papers.ssrn.com/sol3/papers.cfm?abstract_id=1505542)

<sup>477</sup> ԻԻՀ Սահմանադրություն, հոդված 168:

Այս դատարանների վճիռներով փակվում են թերթերը և ամսագրերը, ձերբակալվում հակաիշխանական տեսակետներ արտահայտող լրագրողները :

Ինչ խոսք, այս մեթոդները ԻԻՀ-ն կիրառում է՝ երկրի ազգային անվտանգությանն սպառնացող ցանկացած գործընթաց բացահայտելու և կանխելու առաջնային նպատակով: Սակայն ակնհայտ է, որ այդ գործընթացները երբեմն մոտենում և անգամ հատվում են մարդու հիմնարար իրավունքների ու սկզբունքների հետ:

### ***Ֆինանսական դատարան***

Իրանում կա հատուկ մարմին՝ Ֆինանսական դատարան, որի գործառույթների մեջ մտնում են նախարարությունների, պետական ձեռնարկությունների և հաստատությունների և այլ կառույցների հաշիվների ստուգումը, որոնք այս կամ այն չափով օգտագործում են երկրի պետական բյուջեն, դրանց ծախսերի և վարկերի համապատասխանությունը վերահսկելը, յուրաքանչյուր գումարի ծախսման հաշվետվությունն ուսումնասիրելը<sup>478</sup>:

Այս կառույցի աշխատանքները, դրա լիազորությունները և պարտականություններն ամրագրված են ԻԻՀ Սահմանադրության 54 և 55-րդ հոդվածներում: Ընդ որում Ֆինանսական դատարանը գտնվում է Մեջլիսի անմիջական վերահսկողության ներքո<sup>479</sup>:

Ֆինանսական դատարանը, համաձայն օրենքի, պատրաստում է համապատասխան ֆինանսական հաշվարկներ, հաշիվներ և փաստաթղթեր, ամեն տարի բյուջեի կատարման մասին հաշվետվություն է ներկայացնում Մեջլիսին՝ իր առաջարկությունների և եզրակացությունների հավելվածով: Այդ հաշվետվությունը հրապարակվում է համընդհանուր ծանոթության համար<sup>480</sup>:

Ֆինանսական դատարանը վերահսկում է պետական գան-

---


<sup>478</sup> Гусенова, П.А. *Общая характеристика судебной системы Исламской Республики Иран*, <http://vestnik.spbu.ru/html16/s14/s14v2/08.pdf>

<sup>479</sup> ԻԻՀ *Սահմանադրություն*, հոդված 54:

<sup>480</sup> ԻԻՀ *Սահմանադրություն*, հոդված 55:

ձարանում նավթի նախարարության ավանդները, ինչպես նաև Ազգային զարգացման ֆոնդը:

## ԻԻՀ Դատական իշխանությունը՝ ըստ մեր կողմից կազմված գծապատկերի



Այսպիսով, կարելի է եզրահանգել, որ Իսլամական հեղափոխությունից հետո Իրանը, այնուամենայնիվ, հավատարիմ մնաց ոմանագերմանական դատական համակարգին, որը համալրվեց կրոնական հավատալիքների և նորմերի գաղափարներով: Քրեական իրավունքի մեջ իսլամական օրենքները փոխարինեցին շահական շրջանում գոյություն ունեցած դատական պատիժներին: Մի շարք քաղաքացիական և իրավաբանական խնդիրների հակասությունների պարագայում նախապատվությունը տրվում է իսլամական իրավունքի վստահելի աղբյուրներին<sup>481</sup>:

Այդ հանգամանքը վկայվում է նաև այն փաստով, որ Իրանի իրավական համակարգում մինչ օրս նախադեպային իրավունքի կիրառությունը բացակայում է, և հանցագործությունների քննության շրջանակում իրավական հիմնավորումը հիմնվում է իսլամական իրավաբանական աղբյուրների վրա:

Իրավաբանության ոլորտում մասնագիտացած Աբուլֆազլ Ամերի Շահրաբին իր ատենախոսության մեջ նշում է, որ «Ի տարբերություն Իրանի, մի շարք զարգացած երկրներում Գերագույն ատյանների կողմից հրապարակված որոշումները քննարկվում են իրավաբանների կողմից, և ստեղծվում է մի ժողովածու, որում հստակ նշվում են նախադեպ որոշումների ուժեղ և թույլ կողմերը: Ցավոք, Իրանում դատական համակարգի հաստատումից հետո 100 տարի է անցել, և նախկին որոշումների հրապարակման և հրատարակման բացակայությունը աչք է զարնում»<sup>482</sup>:

Սահմանադրության 167-րդ հոդվածի համաձայն, դատավորը պարտավոր է յուրաքանչյուր գործի համար գտնել օրենքով կոդավորված դատավճիռ, իսկ եթե չի կարողանում դա անել, ապա

---

<sup>481</sup> **Nargess Tavassolian**, *The future of Iran: Judicial Reform within the Judiciary of Iran*, <https://lif.blob.core.windows.net/lif/docs/default-source/future-of-iran/2012-future-of-iran-by-nargess-tavassolian-reform-within-the-judiciary-of-iran.pdf?sfvrsn=0>

<sup>482</sup> **Աբուլֆազլ Ամերի Շահրաբի**, *Իրանի Իսլամական Հանրապետության իրավական համակարգը*, Ատենախոսություն, Երևան, 2018, էջ 67:

պետք է օգտվի իսլամական հեղինակավոր աղբյուրներից կամ ճանաչում գտած ֆեթվաներից<sup>483</sup>:

Ըստ Աբուլֆազլ Ամերի Շահրաբիի. «Իրանում առևտրի մասին իրավունքի կամ դատարաններում և արդարադատության կառույցներում դատավարության մի շարք դրույթներ, ինչպես նաև իշխանության բաժանումը օրենսդիր, գործադիր և դատական երեք իշխանությունների, նույնությամբ ընդօրինակվել են Ֆրանսիայի իրավական համակարգից, որովհետև նման հարցերում իսլամական իրավաբանությունը չունի նախապատմություն»: Քաղաքացիական օրենսգրքի 2-րդ գլուխը, ըստ հետազոտողի, էականորեն կրում է Շվեյցարիայի իրավական համակարգի ազդեցությունը: Որքան էլ տարօրինակ է, սակայն իսլամի իրավական սկզբունքներն ունեն հետաքրքիր նույնականություն արևմտյան իրավունքի սկզբունքներին, օրինակ՝ «Մասնավոր սեփականության և այն հարգելու մասին», «Արյունակից մարդկանց հետ ամուսնության արգելման մասին», «Ամուսնուց կնոջ ֆինանսական անկախության մասին» օրենքները<sup>484</sup>: Հարկ է արձանագրել, որ թեպետ իսլամական և արևմտյան իրավունքի որոշ սկզբունքներ օրենքում միանման են, բայց դրանց կիրառման, կյանքի կոչման ձևերը էապես տարբերվում են երկու հասարակություններում:

Կարող ենք հստակ արձանագրել, որ դատական իշխանությունն Իրանում անկախ է գործադիրից, սակայն ամբողջությամբ գտնվում է Առաջնորդի ուղղակի և անուղղակի վերահսկողության ներքո, և, որպես կանոն, դատական իշխանության վերին էշելոններում նշանակվում են խիստ պահպանողական հայացքներով աչքի ընկած հոգևորականները:

---

<sup>483</sup> *ԻԻՀ Սահմանադրություն*, հոդված 167:

<sup>484</sup> **Աբուլֆազլ Ամերի Շահրաբի**, *Իրանի Իսլամական Հանրապետության իրավական համակարգը*, Ատենախոսություն, Երևան, 2018, էջ 39:

## **Իրանի Իսլամական Հանրապետության զինված ուժերը**

ԻԻՀ Սահմանադրության 143-151-րդ հոդվածները վերաբերում են ԻԻՀ զինված ուժերի գործառույթներին, որտեղ խիստ հպանցիկ անդրադարձ է կատարվում այդ կառույցի լիազորություններին և պարտականություններին:

Իրանի զինված ուժերն ու պաշտպանական համակարգն էականորեն տարբերվում են իրենց առանձնահատկություններով ու կառուցվածքով, ինչը բխում է պետության իսլամական կարգերից:

Իսլամական հեղափոխությունից հետո ԻԻՀ բանակին (արթեշ, պարսկերեն՝ բանակ) զուգահեռ ստեղծվեց մեկ այլ ռազմական կառույց, որը կոչվեց Իսլամական հեղափոխության պահապանների կորպուս (Մեփահ): Այս երկու կառույցները փորձում են չեզոքացնել երկրին սպառնացող ներքին և արտաքին վտանգները:

Իրանն ունի կուտակած մեծ ավանդույթներ ինչպես ռազմարվեստում, այնպես էլ դիվանագիտության ոլորտում: Սակայն Իրանի նորագույն պատմության ժամանակաշրջանում բանակաշինության ոլորտում բեկումնային քայլ կատարեց Իրանի շահ Ռեզա Փահլավին, և 1927 թ. Համընդհանուր զինապարտության մասին օրենքի ընդունմամբ, ըստ էության, դրվեց իրանական ժամանակակից բանակի հիմքը, որի շնորհիվ 1928 թ. Իրանի կանոնավոր բանակի՝ արթեշի թիվը հասցվեց 60 հազարի: Զինակոչին մասնակցում էր նաև ոչ մուսուլման բնակչությունը: Ռեզա շահը, որը ազնվական ընտանիքից չէր սերում, ողջ մանկությունը և պատանեկությունն անցկացրել է՝ ծառայելով ռուսական կոզակական բրիգադում. նա ուղնուծուծով զինվորական էր: Նրա գլխավոր խնդիրն էր՝ պայքարել Իրանի կենտրոնախույս ուժերի դեմ, հզորացնել և արդիականացնել իրանական բանակը, որը թույլ կտար նաև պայքարել իր իշխանության լեգիտիմությունը չընդունող ազնվականության և հոգևորականության դեմ: Այսպիսով, բանակը Ռեզա շահի համար

դարձավ ուժի կենտրոն, որի վրա հենվելով՝ նա իրականացրեց Իրանի արդիականացման մեծ ծրագրերը: Ազգային եկամտի մեծագույն մասը Ռեզա շահը ներդնում էր բանակաշինության զարգացման վրա: Ուշագրավ է, որ նա բանակը վերակառուցեց կոզակական բրիգադի օրինակով՝ օտարերկրացիներին հեռացնելով բանակից: Ստեղծեց մեկ ռազմական հրամանատարական ապարատ և տարածքային մարմիններ, և կազմակերպեց վեց ռազմական շրջան:

1930-ական թվականների կեսերին ավարտվեց ռազմական ուժերի արդիականացման առաջին փուլը, որի վրա մեծ ազդեցություն էր ունեցել Գերմանիան: Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ Գերմանիայի չափազանց ակտիվացումը Իրանում առիթ դարձավ Սովետական Միության համար զորքեր մտցնելու երկրի տարածք՝ օգտվելով 1921 թ. սովետա-իրանական պայմանագրի 6-րդ կետից<sup>485</sup>:

1941 թ. Իրանը բռնազավթվեց սովետա-անգլիական ուժերի կողմից, և Ռեզա շահը ստիպված հրաժարական տվեց՝ հանգրվան գտնելով Հարավաֆրիկյան Հանրապետությունում: Նրան փոխարինեց որդին՝ Մուհամմադ Ռեզա Փահլավին, որը, գահ բարձրանալու պահից սկսած, որոշեց շարունակել հոր որդեգրած քաղաքական կուրսը:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Իրանն իր ռազմական ուժերը հզորացնելու համար երկիր հրավիրեց ամերիկյան ռազմական փորձագետների: Իրանական բանակաշինության և ռազմական արդիականացման գործում նոր փուլ բացվեց, երբ արևմտյան, հատկապես ամերիկյան աջակցությամբ դրվեց իրանա-

---

<sup>485</sup> *Договор между Российской Социалистической Федеративной Советской Республикой и Ираном (Персией)*. Москва. 26 февраля 1921 года, Электронная библиотека исторических документов <http://docs.historyrussia.org/ru/nodes/136131-dogovor-mezhdu-rossiyskoy-sotsialisticheskoy-federativnoy-sovetskoy-respublikoy-i-iranom-persiey-moskva-26-fevralya-1921-goda#mode/inspect/page/3/zoom/4>

կան բանակն արևմտյան մոդելով զարգացնելու հիմքը՝ դոկտրինալ և ռազմատեխնիկական առումով:

Այսպես, գնդապետ (հետագայում՝ գեներալ) Նորման Շվարցկոպֆին 1942 թ. հանձնարարվեց կատարելագործել Իրանի ժանդարմերիան (այն հայտնի էր ՋԵՆՄԻՇ<sup>486</sup> անվամբ): 1943 թ. Իրանի և ԱՄՆ-ի միջև կնքված պայմանագրի 20-րդ հոդվածի համաձայն, ՋԵՆՄԻՇ-ի ղեկավարության խնդիրն էր՝ վերահսկել 25,000 հոգուց բաղկացած ներքին անվտանգության ուժերը: Այն ուղղակիորեն հաշվետու էր Իրանի ներքին գործերի նախարարությանը: Գեներալ Քլարենս Ս. Ռիդլին աշխատելու էր իրանական բանակում (այդ նպատակով 1947 թ. ստեղծվեց ԱՌՄԻՇԸ<sup>487</sup>), իսկ Լ.Ս. Ռիմերմանը վերահսկում էր ոստիկանության աշխատանքները և խորհրդական էր Իրանի ներքին գործերի նախարարությունում: Ջեյմս Փ. Շերիդանը պարենավորման նախարարության խորհրդական էր<sup>488</sup>:

Այսպիսով, Իրանի շահ Մուհամմադ Ռեզա Փահլավին բանակի արդիականացման հարցում իր հույսերը կապեց Արևմուտքի և հատկապես Միացյալ Նահանգների հետ: Թրումենի հայեցակարգով Իրանին հատկացվում էին զենք, զինամթերք. ամերիկյան ռազմական փորձագետները և խորհրդականները դարձել էին Իրանի բանակի անբաժանելի մասը: 1957 թ. Իրանին զենք, զինամթերք, պարագաներ հատկացվեցին ԱՄՆ-ի Նախագահի կողմից՝ Դ. Էյզենհաուերի հայեցակարգի շրջանակներում: 1955 թ. Իրանն

---

<sup>486</sup> US Military Mission with the Imperial Iranian Gendarmerie.

<sup>487</sup> US Military Mission with the Imperial Iranian Army.

<sup>488</sup> 1942 թ. Շերիդանը ԱՄՆ-ից գործուղվել էր Իրան՝ որպես սննդի և մատակարարման խորհրդատու: **Գ. Իսկանդարյան**, *Իրանու-ամերիկյան հարաբերությունները 1942–1960 թթ.*, Երևան, 2011, էջ 14: **James F. Goode**, *The United States and Iran, 1946–51*, *The Diplomacy of Neglect*, 1989, p. 24: **Samih K. Farsoun** and **Mehrdad Mashayekhi**, *Iran: Political Culture in the Islamic Republic*, London & New York, 1992, p. 238. **Мельников Л.И.**, *Политическая экспансия американского империализма в Иране, Политика США на Ближнем и Среднем Востоке (США и страны СЕВТО)*, Москва, 1960, с. 168.

անդամակցեց ռազմական բլոկ համարվող Բաղդադի պակտին, իսկ 1959 թ. ԱՄՆ-ի հետ կնքեց առանձին ռազմական պայմանագիր: Իրանի գինված ուժերը փորձում էին ամբողջովին ներդաշնակվել ամերիկյան բանակի հետ: 1964 թ. Իրանի Մեջլիսը օրենք ընդունեց, որի համաձայն՝ Իրանում գործող ամերիկյան սպայակազմը, ռազմական խորհրդականներն այդուհետ ստանում էին դիվանագիտական անձեռնմխելիություն, ինչը նրանց ազատություն էր տալիս երկրում մի շարք գործողություններ իրականացնելու ժամանակ:

Իրանի սպայակազմը հիմնականում վերապատրաստվում էր ԱՄՆ-ում: 1953 թ. ռազմական հեղաշրջումից հետո շահին հավատարիմ 20 սպաներ՝ գեներալ Բախտիարի գլխավորությամբ, վերապատրաստվեցին ԱՄՆ-ի Վիրջինիա նահանգի Հետաքննությունների դաշնային բյուրո հատուկ դպրոցում, ինչպես նաև Լենգլիում գտնվող Կենտրոնական հետախուզության վարչության շտաբում: Նրանք էլ հենց դարձան Իրանի ռազմառոտիկական կառույցի՝ ՍԱՎԱԲ<sup>489</sup>-ի ողնաշարը: Տասը տարիների ընթացքում և հատկապես 50-ականների կեսերին Իրանից 2000 սպա ուղևորվեց Միացյալ Նահանգներ՝ վերապատրաստվելու: Մի մասն էլ մեկնեց Ֆրանսիա և Գերմանիա<sup>490</sup>: Ամեն տարի ՍԱՎԱԲ-ի 35 աշխատակից գործուղվում էր ԱՄՆ, 24-ը՝ Իսրայել, 16–20-ը՝ Մեծ Բրիտանիա:

1970-ական թվականներին նավթի գնի կտրուկ բարձրացմամբ Իրանը տարածաշրջանային հզոր խաղացող դառնալու իրական հնարավորություն ստացավ՝ հենվելով արդիական և հզոր բանակի վրա: Այդուհետ Իրանը պահանջում էր, որ տարածաշրջանային խնդիրները լուծվեն միայն տարածաշրջանային երկրների ուժերով: Այսպիսով, 1979 թ. հեղափոխության նախօրյակին Մուհամ-

---

<sup>489</sup> سازمان اطلاعات و امنیت کشور

<sup>490</sup> **Кременюк В.А.**, *Борьба Вашингтона против революции в Иране*, М., 1984, стр. 40. **Hurewitz J.C.**, *Middle East Politics: The Military Dimension*, New York, 1969, pp. 284–286.

մադ Ռեզա շահի ջանքերի շնորհիվ իրանական բանակի թիվը հատեց 415 հազարի շեմը<sup>491</sup>: Շահը մեծ ուշադրություն էր դարձնում հատկապես ռազմաօդային ուժերի զարգացման վրա: 1947–1970 թթ. ԱՄՆ-ը Իրանին հատկացրեց բավարար քանակի ռազմական տեխնիկա, հիմնականում անհատույց օգնության շրջանակներում: Իրանը Վաշինգտոնի համար վերածվեց սպառազինություն ներկրող հիմնական գործընկերոջ: Բացի ԱՄՆ-ից, Իրանը ռազմական տեխնիկա էր ձեռք բերում նաև Մեծ Բրիտանիայից, Ֆրանսիայից, Իտալիայից և ԽՍՀՄ-ից:

1973 թ. Մուհամմադ Ռեզա շահ Փահլավին «Նյուսվիքին» տված հարցազրույցում նշեց, որ Միացյալ Նահանգներից ձեռք բերված ռազմական տեխնիկայից զատ, Իրանը Մեծ Բրիտանիայից գնում է «Չիֆթեն» տիպի 800 տանկ՝ 480 մլն դոլար ընդհանուր արժողությամբ, վերանորոգում և արդիականացնում է «M-47» տիպի 400 տանկ, որոնք ձեռք էին բերել ԱՄՆ-ից, ինչպես նաև «M-60» տիպի 460 տանկ, ընդհանուր՝ 1700 տանկ: Նավատորմի ռազմանավերի թիվը ևս կրկնապատկվեց: Իրանը Միացյալ Նահանգներից ստացել է նաև լազերի միջոցով կառավարվող «Սմարթ» տիպի ռումբեր<sup>492</sup>: Մի քանի տարի անց՝ 1977 թ., շահը ԱՄՆ-ից գնեց շուրջ 6 միլիարդ դոլարի զենք և ևս 12 միլիարդի պատվեր տվեց<sup>493</sup>:

Այս ամենով հանդերձ, ունենալով արդիական զենք-զինամթերքով համալրված բանակ, այն, ըստ էության, փորձարկում չէր անցել որևէ գործողությունում մինչև 1973 թ.: Այդպիսի հնարավորություն ստեղծվեց Զոֆարում առաջացած խնդիրների պատճառով, երբ Օմանի սուլթան Ղաբուս բեն Սայիդը պաշտոնական

---

<sup>491</sup> *Number of armed force troops in Iran between 1970 and 1979*, Published by Statista Research Department, Aug 26, 2020, <https://www.statista.com/statistics/876398/iran-armed-forces/>

<sup>492</sup> Newsweek, 16.05.73.

<sup>493</sup> **Ramazani R.K.**, *Iran's Revolution. The Search for Consensus*, Washington, 1990, p. 49.

խնդրանքով դիմեց Մուհամմադ Ռեզա շահին, որ վերջինս օգնություն տրամադրի երկրի հարավում՝ Զոֆար նահանգում առաջացած հեղափոխական շարժումները ճնշելու համար: Շահը, բնականաբար, չմերժեց խնդրանքը: 1973 թ. դեկտեմբերի 23-ին իրանական երեքհազարանոց զորքը ներխուժեց Զոֆար<sup>494</sup> կատարելով իր առջև դրված խնդիրը: Մինչև 1975 թվականին՝ Օմանից իրանական զորքերի դուրսերումը, այնտեղ ծառայում էր 15 հազար իրանցի զինվոր, որից 500-ը զոհվել է տարբեր բախումների ժամանակ<sup>495</sup>:

Ըստ էության, Իրանի շահ Մուհամմադ Ռեզա Փահլավին, հենվելով Արևմուտքի աջակցության վրա, աննախադեպ թռիչքային զարգացում ապահովեց Իրանի բանակի համար: Որպեսզի առավել պարզորոշ երևան Իրանի կայսերական ամբիցիաները, ներկայացնենք այն գումարները, որոնք ներդրվեցին բանակաշինության վրա, ինչի շնորհիվ կարճ ժամանակահատվածում Իրանը զինված ուժերի հզորությամբ հավակնում էր մտնելու աշխարհի ռազմականացված հնգյակի մեջ:

1953–1970 թթ. Իրանի բյուջեից բանակին տրվող գումարները 67 մլն-ից բարձրացան մինչև 844 մլն-ի՝ արձանագրելով 12,5-ապատիկ աճ: 1973 թ. նավթի գնի բարձրացման արդյունքում բյուջեից ռազմական ուժերին հատկացումները կրկին մեծացան: 1977 թ. ռազմական բյուջեն կազմեց 9,4 մլրդ, իսկ 1978 թ. այն գերազանցեց 10 մլրդ դոլարը<sup>496</sup>:

Իրանի ռազմականացումն առավել ակնհայտ դարձնելու համար ներկայացնենք 1973–1980 թթ. Մերձավոր Արևելքի երկրների

---

<sup>494</sup> **Գ. Իսկանդարյան**, *Իրանը՝ Պարսից ծոցի ազդեցիկ գործոն, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ*, հ. XXIII, Երևան, 2004, էջ 91:

<sup>495</sup> *Iran Military power, Defense Intelligence Agency*, 2019, [https://www.dia.mil/Portals/27/Documents/News/Military%20Power%20Publications/Iran\\_Military\\_Power\\_LR.pdf](https://www.dia.mil/Portals/27/Documents/News/Military%20Power%20Publications/Iran_Military_Power_LR.pdf)

<sup>496</sup> **Paul Balta**, *la Révolution Islamique en Iran*, Revue Tiers Monde, Vol. 23, No. 92, L'Islam et son actualité pour le Tiers Monde (Octobre-décembre 1982), p. 904. <http://www.jstor.org/stable/23590276>

ռազմական ծախսերի հաշվեկշիռը՝ ըստ ԽՍՀՄ պետական անվտանգության կոմիտեի տվյալների<sup>497</sup>:

| Երկիր           | 1973–1976 թթ. |                                   | 1977–1980 թթ. |                                   |
|-----------------|---------------|-----------------------------------|---------------|-----------------------------------|
|                 | մլրդ դոլ.     | Մասնաբաժինն ընդհանուր գումարում % | մլրդ դոլ.     | Մասնաբաժինն ընդհանուր գումարում % |
| Իրան            | 29,1          | 44,0                              | 28,0          | 27,6                              |
| Իրաք            | 6,1           | 9,2                               | 10,3          | 10,1                              |
| Սաուդյան Արաբիա | 19,8          | 29,9                              | 41,1          | 40,5                              |
| Թուրքիա         | 4,9           | 7,4                               | 7,3           | 7,2                               |

Այսպիսով, Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո՝ մինչև 1979 թ. Իսլամական հեղափոխությունը, Իրանը իր զինված ուժերը համալրում էր ամերիկյան զենքով, և իրանական բանակի վրա ընդհանրապես մեծ ազդեցություն ունեւ Միացյալ Նահանգները: Շահի վարած հետևողական քաղաքականության շնորհիվ Իրանի բանակը երկու տասնամյակում թոչքային աճ գրանցեց թե՛ թվաքանակով, թե՛ սպառազինությամբ. իրանցի սպայակազմը վերապատրաստվեց աշխարհի լավագույն ռազմական կենտրոններում, և այդ փորձը ներդրվեց Իրանում: Իրանը դարձավ տարածաշրջանային իրական խաղացող: Սակայն շահը, հիմնականում կենտրոնանալով ռազմական ուժերի հզորացման վրա, բավարար ուշադրություն չհատկացրեց ներքաղաքական և սոցիալ-տնտեսական խնդիրներին, ինչն էլ պատճառ դարձավ Իսլամական հեղափոխության:

Իսլամական հեղափոխությունից հետո իրավիճակն էապես փոխվեց: Երկրի պետական բոլոր ոլորտների պատասխանատվությունը հոգևորականները վերցրին իրենց ձեռքը: Ըստ էության, իրանական բանակի համար բացվեց նոր ժամանակաշրջան:

<sup>497</sup> Военная экономика стран Востока, научный сборник N 6, для служебного пользования, М., 1986, стр. 11–12.

Երկրից վտարվեցին ամերիկյան ռազմական խորհրդականները, մասնագետները, Իրանը դուրս եկավ ՄԵՆՏՕ-ից, Սահմանադրության 110-րդ հոդվածի 4-րդ կետով երկրի Առաջնորդը ստանձնեց Զինված ուժերի գերագույն հրամանատարությունը, և 5-րդ կետով էլ արձանագրվեց, որ միայն նա կարող է հայտարարել պատերազմ և զորահավաք կազմակերպել<sup>498</sup>:

Իսլամական Հանրապետության առաջնորդ Խոմեյնին իշխանության գալուց հետո էլ հստակ գիտակցեց, որ ամբողջովին չի կարող վստահել մի բանակի, որը հավատարմության երդում էր տվել նախկին ղեկավարին: Թեպետ բարձրաստիճան սպայակազմի մի մասն արտագաղթել էր, մյուս մասը՝ կալանավորվել, սակայն միջին և ցածր սպայակազմը բանակի հիմնական կորիզն էր կազմում: Մինևույն ժամանակ Իսլամական հեղափոխության արժեհամակարգը պահպանելու համար ստեղծվեց Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսը: Եթե Իրանական բանակի հիմնական գործառույթների մեջ էր մտնում սահմանների անվտանգության ապահովումը, ապա ԻՀՊԿ գործառույթները բազմաշերտ էին, որին կանդրադառնանք ստորև:

## **Իրանի Իսլամական Հանրապետության բանակ – Artesh-e Jomhuri-ye Eslâmi-ye Irân**

ԻԻՀ զինված ուժերի աճող տեմպը հասկանալու համար պետք է հաշվարկենք, թե տարածաշրջանում ինչ նպատակներ ունի ԻԻՀ-ը, և թե ինչ վտանգներ կան ԻԻՀ-ի շուրջը: Այս երկու, ըստ իս, գլխավոր թեզերի շուրջ է իրականացվում ԻԻՀ օրեցօր աճող ռազմական պոտենցիալը: Վտանգների շարքում են դասվում, ըստ էության, Միացյալ Նահանգները, Իսրայելը, ՆԱՏՕ-ն, ինչպես նաև տարածաշրջանում դրանց հովանավորությունը վայելող և ազդե-

---

<sup>498</sup> ԻԻՀ Սահմանադրություն, հոդված 110:

ցության տակ գտնվող պետական և ոչ պետական այլ դերակատարները:

ԻԻՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 11-րդ կետն արձանագրում է, որ անհրաժեշտ է իրականացնել «Ազգային պաշտպանական հիմքերի լիակատար հզորացում՝ համընդհանուր ռազմագիտական ուսուցման միջոցով՝ երկրի անկախության, տարածքային ամբողջականության և իսլամական համակարգի պահպանման նպատակով»<sup>499</sup>: Իսկ Սահմանադրության 143-րդ հոդվածում նշված է, որ Իսլամական Հանրապետության բանակը կոչված է պահպանելու երկրի անկախությունը, տարածքային ամբողջականությունը և իսլամական հանրապետական կարգերը: Իսկ 144-րդ հոդվածը նշում է, որ ԻԻՀ բանակը պետք է լինի իսլամական բանակ՝ ծառայելով իսլամական գաղափարախոսությանը և իսլամական պետության ժողովրդին: Այն իր կազմ պետք է ընդունի այն անհատներին, որոնք նվիրված են Իսլամական հեղափոխության արժեքներին և պատրաստակամ են՝ դրանք իրականություն դարձնելու<sup>500</sup>: Սա էր հենց այն հիմնավորումը, որով պայմանավորված՝ 1979 թ. հեղափոխությունից հետո սկսվեցին գտումներն իրանական բանակում: Փաստացի գտումների սկիզբն ազդարարվեց 1979 թ. փետրվարի 16-ին, երբ մահապատժի ենթարկվեց բարձրաստիճան չորս գեներալ, այդ թվում՝ ՍԱՎԱԲ-ի նախկին ղեկավար գեներալ Նասիրին: 30,000-հոգանոց կայսերական գվարդիան լուծարվեց զինված ուժերի նոր գլխավոր շտաբի պետ գեներալ Ղարանիի կողմից<sup>501</sup>:

Այս քաղաքականության հետևանքով զինվորական ստորաբաժանումները սկզբնական շրջանում կորցրին մարտունակու-

---

<sup>499</sup> ԻԻՀ Սահմանադրություն, հոդված 3:

<sup>500</sup> ԻԻՀ Սահմանադրություն, հոդված 143, 144:

<sup>501</sup> **Nicholas M. Nikazmerad**, *A Chronological Survey of the Iranian Revolution*, Iranian Studies, Volume XIII, Nos. 1–4, 180, p. 350.

թյունը, ռազմական տեխնիկան և սպառազինությունը դարձան ոչ մարտունակ, զինված ուժերը՝ անկազմակերպ և բարոյալքված<sup>502</sup>:

Զտումներին զուգահեռ ստեղծվեց նաև Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսը, որի գլխավոր առաքելությունն էր՝ պահպանել իսլամական գաղափարախոսությունը, պայքարել շահական ռեժիմի մնացուկների դեմ: Իրանը փաստացի ունեցավ երկու բանակ. թեպետ դրանց գործառույթները տարբեր են, սակայն ունեն նմանատիպ մի շարք գորատեսակներ:

Իսլամական Հանրապետության ձևավորման սկզբից «Խոմեյնիի վարդապետությունը» փաստացի դարձավ «Իրանի ազգային անվտանգության հայեցակարգը», որը հաստատվեց Մեջլիսի կողմից: Անվտանգության հայեցակարգի հիմնական մաս է կազմում այն թեզը, ըստ որի՝ իսլամական աշխարհը Իրանի հովանու ներքո պետք է միավորվի՝ ստեղծելով համաշխարհային իսլամական համայնք՝ ումմաթ: Ըստ էության, այս մասին հստակ նշվում է նաև ԻԻՀ Սահմանադրության 11-րդ կետում, որտեղ փաստացի ասվում է. «Բոլոր մուսուլմանները համարվում են մի ումմաթ (ազգ), և ԻԻՀ-ը պարտավոր է իր համընդհանուր քաղաքականությունը հիմնել իսլամական ժողովուրդների համախոհության և միասնականության վրա՝ հետևողականորեն աշխատելով իրականացնել իսլամական աշխարհի քաղաքական, տնտեսական և մշակութային միասնականությունը»<sup>503</sup>: Ըստ պետության պաշտպանության ռազմական դոկտրինի՝ բանակը օտար նվաճողներից երկրի պաշտպանության առաջին գիծն է:

Իրանի հոգևորականությունը հեղափոխությունից հետո հստակ առանձնացրեց իր հիմնական ռազմավարական հակառակորդներին՝ օգտագործելով իսլամական սկզբունքները, ըստ որի՝ աշխարհը բաժանվում է «հավատի տարածքի» և «պատերազմի

---

<sup>502</sup> **Сажин В.И., Бондарь Ю.М.**, *Военная мощь Исламской Республики Иран*. М.: Издательство Московского университета, 2014, стр. 178.

<sup>503</sup> ԻԻՀ *Սահմանադրություն*, հոդված 11:

տարածքի» և ուղղորդվում խոմեյնիական գաղափարախոսության տեսական հասկացությունների՝ շիայականության վրա: Հակառակորդների շարքում էին դասվում ԱՄՆ-ը, ԽՍՀՄ-ը, Իսրայելը և «ոչ ճշմարիտ մահմեդական վարչակարգերը»<sup>504</sup>:

Իրանա-իրաքյան պատերազմը, որը բռնկվեց Իսլամական հեղափոխությունից հետո, լուրջ մարտահրավեր դարձավ իրանական բանակի համար: Պատերազմի առաջին տարիներին իրանական բանակում ի հայտ եկան լրջագույն խնդիրներ, որոնք ստիպեցին գործող իշխանությանը պատերազմի ընթացքում զինված ուժերում իրականացնել բարեփոխումներ. մեծացավ դիվիզիաների և առանձին բրիգադների թիվը: Զորքերի կառավարումն առավել արդյունավետ դարձավ՝ շնորհիվ օպերատիվ խմբերի միացյալ շտաբի աշխատանքների, որը ներառեց բանակի, ԻՀՊԿ-ի և Բասիջի ներկայացուցիչներին<sup>505</sup>:

Պատերազմի ընթացքում սկսվեց իրանական բանակի ամբողջական իսլամականացման գործընթացը: Փաստացի զինված ուժերի բոլոր օղակներում ներդրվեցին վարչական մարմիններ, այսպես կոչված՝ իսլամական ներկայացուցիչներ: 1982 թ. պատերազմի ընթացքում ակնհայտորեն մեծացավ իրանական բանակի մարտունակությունը, հատկապես հաջողություններ գրանցվեցին ցամաքային ստորաբաժանումներում: Իրանա-իրաքյան պատերազմի ընթացքում Իրանի բանակաշինությունում ակնհայտ երկու միտում նկատվեց՝ իսլամականացում և պրագմատիզմ<sup>506</sup>: Ակնհայտ էր, որ բանակի իսլամականացումն անհանգստացնում էր կադրային զինվորականությանը, քանի որ հոգևորականները բավականին

---

<sup>504</sup> *Армии на современном Востоке*, Подед., Д.В. Стрельцова Вооруженные силы Исламской Республики Иран, М. 2018, стр. 129.

<sup>505</sup> **Сажин В.И.** (2017). *Корпус стражей исламской революции Ирана – государство в государстве*. Контурь глобальных трансформаций: политика, экономика, право, 10 (3). 83-109. DOI: 10.23932/2542-0240 -2017-10-3-83-109, стр. 90–91.

<sup>506</sup> **Сажин В.И., Бондарь Ю.М.,** *Военная мощь Исламской Республики Иран*. М.: Издательство Московского университета, 2014, стр. 179.

հեռու էին բանակաշինությունից, ռազմարվեստից, ուստի նրանց երբեմն ոչ տեղին պահանջներն ու կարգադրություններն առաջացնում էին զինվորականության դժգոհությունը:

Ուշագրավ է, որ նման տեղեկություն էր տեղ գտել նաև 1983 թ.<sup>507</sup> Խորհրդային Միության զինված ուժերին պատկանող մի պաստառում, որում ներկայացված էին Թուրքիայի և Իրանի բանակների ուժեղ և թույլ կողմերը<sup>507</sup>: Իրանի բանակի թույլ կողմերից էր համարվում «սպայակազմի դժգոհությունը» բանակի «կղերականացման» փաստից, առկա լարվածությունը բանակային զորամասերի և ԻՀՊԿ զորաջոկատների անձնակազմի միջև, ազգամիջյան ընդհարումները, բարոյապես հոգնածությունը Իրաքի դեմ երեք տարի պատերազմելուց հետո, ժամանակակից զենքի և տեխնիկայի բացակայությունը, անձնակազմի տեխնիկական և տակտիկական ցածր պատրաստվածությունը, զինատեսակների օգտագործմանը չտիրապետելը: Իրանական բանակի ուժեղ կողմերի շարքում էր դասվում «բարձր աստիճանի հավատարմությունը գործող իշխանությանը, սեփական կառավարության քաղաքական նպատակների նկատմամբ վստահությունն առ այն, որ Իրանն արդար է իր պատերազմում: Ուժեղ կողմերից էին նաև անձնակազմի մոտ թույլ արտահայտված դասակարգային հակասությունները: Անձնակազմը խորապես բարեպաշտ էր, բնորոշ էին բարձր կարգապահությունը, կրոնական մոլեռանդությունը, ինքնազոհության պատրաստակամությունը, տոկունությունը, պատերազմի դժվարություններն աննահանջ հաղթահարելու ունակությունը, ընդդիմության տրամադրությունների նկատմամբ պետության վերահսկողությունը, պատերազմի ընթացքում ձեռք բերած փորձառությունը»<sup>508</sup>:

---

<sup>507</sup> *Внимание, противник! Сильные и слабые стороны подразделений и частей вероятного противника*, [http://www.tipologic.narod.ru/dok\\_plakat\\_vnimanie\\_protivnik.htm](http://www.tipologic.narod.ru/dok_plakat_vnimanie_protivnik.htm)

<sup>508</sup> *Внимание, противник! Сильные и слабые стороны подразделений и частей вероятного противника*, [http://www.tipologic.narod.ru/dok\\_plakat\\_vnimanie\\_protivnik.htm](http://www.tipologic.narod.ru/dok_plakat_vnimanie_protivnik.htm)

Իրականացրած մի շարք բարեփոխումների և նոր մոտեցումների շնորհիվ 1987 թ. իրանական բանակի թիվը հատեց 400 հազարի սահմանագիծը<sup>509</sup>, որն այդ ժամանակաշրջանի համար մեծ թիվ էր: Իրանա-իրաքյան պատերազմով պայմանավորված 1980–88 թթ. համընդհանուր մոբիլիզացիայի արդյունքում պատերազմին փաստացի մասնակցել է շուրջ 10 մլն քաղաքացի, որը կազմում էր բնակչության 18 %-ը<sup>510</sup>:

Պատերազմի ավարտից հետո փորձ կատարվեց այդ երկու կառույցները միավորել: Իրանի Նախագահ Հաշեմի Ռաֆսանջանին Առաջնորդ Խամենեին առաջարկեց միավորել արթեշն ու սեփահը, ինչը կտրուկ մերժվեց Առաջնորդի կողմից<sup>511</sup>:

Իրանական բանակը բաղկացած է չորս բանակային ստորաբաժանումներից՝ ցամաքային, ռազմաօդային, ռազմածովային ու ժեր և հակաօդային պաշտպանություն, որոնք անմիջականորեն ղեկավարվում են բանակի գլխավոր հրամանատարի կողմից՝ միացյալ շտաբի միջոցով: Բանակի գլխավոր շտաբն էլ ենթարկվում է ԻԻՀ Ազգային անվտանգության բարձրագույն խորհրդին (ԱԱԲԽ), որի մեջ ընդգրկված է ԻԻՀ գրեթե ողջ ղեկավար կազմը:

**Ազգային անվտանգության բարձրագույն խորհուրդը** (ԱԱԲԽ) ձևավորվել է 1989 թ. Սահմանադրության 176-րդ հոդվածի համաձայն՝ Նախագահի գլխավորությամբ, և ենթարկվում է անմիջականորեն Առաջնորդին: Սակայն կառույցի աշխատանքները ոչ թե անձամբ վերահսկում է Առաջնորդը, այլ նրա գրասենյակը, որն օժտված է գերագույն հրամանատարի ամբողջ իշխանությամբ և համակարգում է նաև Ազգային անվտանգության բարձրագույն

---

<sup>509</sup> **Сажин В.И., Бондарь Ю.М.,** *Военная мощь Исламской Республики Иран*. М.: Издательство Московского университета, 2014, стр. 179.

<sup>510</sup> **Ю.Г. Сумбатьян,** *Воины “Мировой исламской революции”*, 24.08.2001, [https://nvo.ng.ru/forces/2001-08-24/3\\_revolution.html](https://nvo.ng.ru/forces/2001-08-24/3_revolution.html)

<sup>511</sup> **Saeid Golkar, Kasra Aarabi,** *The View from Tehran: Iran’s Militia Doctrine, 2021, Tony Blair institute for global change*, p. 27, <https://institute.global/sites/default/files/2021-05/Tony%20Blair%20Institute%2C%20The%20View%20From%20Tehran%2C%20February%202021.pdf>

խորհրդի աշխատանքները<sup>512</sup>: ԱԱԲԽ-ի հիմնական պարտականություններն են՝ Ազգային շահերի ապահովումը, երկրի տարածքային ամբողջականության և անկախության պահպանությունը, երկրի Առաջնորդի կողմից ուղենշված ընդհանուր քաղաքականության ապահովումը<sup>513</sup>: Անվտանգության խորհուրդն անսահմանափակ լիազորություններ ունի երկրի պաշտպանական և անվտանգային ռազմավարության մշակման գործում, տիրապետում է ռազմական, տեղեկատվական, տնտեսական լուրջ լծակների, որոնք ծառայեցնում է անվտանգության մակարդակի բարձրացմանը:

Անվտանգության խորհուրդը ղեկավարում է երկրի Նախագահը, որն ստեղծում է քարտուղարություն և դրա միջոցով համակարգում է ԱԱԲԽ աշխատանքները: Դրանով իսկ մեծանում են Նախագահի լիազորությունները, քանի որ, ըստ էության, նա կարողանում է որոշակի ազդել արտաքին հարաբերությունների և երկրի պաշտպանական քաղաքականության վրա: ԱԱԲԽ քարտուղարը նշանակվում է Նախագահի առաջարկով, սակայն նրա թեկնածությունը պետք է պարտադիր հաստատվի Առաջնորդի կողմից: ԱԱԲԽ-ն փաստացի նաև ռազմավարական պլանավորման, կառավարման բնագավառում ամենակարևոր ինստիտուտներից մեկն է: Խորհրդում ընդգրկված են իշխանության երեք թևերի ղեկավարները, ԶՈՒ գլխավոր շտաբի պետը, Պլանավորման և բյուջեի կազմակերպության նախագահը, երկու անդամների նշանակում է երկրի Առաջնորդը՝ անձամբ, խորհրդի կազմում են արտաքին գործերի, ներքին գործերի, հետախուզության և անվտանգության նախարարները: ԱԱԲԽ-ն ընդհանուր առմամբ տասը մշտական անդամ ունի: Անհրաժեշտության պարագայում խորհրդի կազմում կարող են ընդգրկվել նաև համապատասխան նախարարը,


---

<sup>512</sup> Под ред. М.С. Каменева, *40 лет Исламской Республики Иран*, Москва, 2020, стр 91.


<sup>513</sup> ԻԻՀ *Մահմանադրություն*, հոդված 176:

բանակի բարձրագույն պաշտոնյաներ, ԻՀՊԿ գլխավոր հրամանատարը<sup>514</sup>, որոնք խորհրդի ոչ մշտական անդամներ են:

### Ազգային անվտանգության բարձրագույն խորհրդի կառուցվածքը



Ոչ մշտական անդամներ



Այսպիսով, երկրի պաշտպանական գործառույթներն իրականացվում են Ազգային անվտանգության բարձրագույն խորհրդի կողմից, հիմնականում Իրանի բանակի և ԻՀՊԿ-ի միջոցով: Ջինված ուժերի գլխավոր շտաբը վերադաս ուղղության մարմինն է, որը սահմանում է ուղղության քաղաքականությունը և իրականացնում ուղղակիորեն պլանավորումը՝ ուղղորդվելով Առաջնորդի կողմից: **Խաթամ օլ-Անբիա** կենտրոնական շտաբը հիմնականում

<sup>514</sup> ԻԻՀ Սահմանադրություն, հոդված 176:

պատասխանատու է ռազմական գործողությունները համակարգելու համար: Զինված ուժերի գլխավոր շտաբը և Խաթամ օլ-Անբիա կենտրոնական շտաբը, ըստ էության, վերահսկում և համակարգում են Իրանի երկու զինված ուժերի գործունեությունը: Իրանի բանակի զորակազմը 2023 թ. հաշվվում է 610,000 մարդ, որից 350,000-ը բանակն է, 190,000-ը՝ ԻՀՊԿ-ն, 18,000-ը՝ ռազմածովային ուժերը, 37,000-ը՝ ռազմաօդային ուժերը, 15,000-ը՝ ՀՕՊ-ը, 40,000-ը՝ ժանդարմերիան և կիսառազմական ուժերը: Ծառայությունը տևում է 18–21 ամիս, որը կախված է ծառայության վայրից: 2024 թ. տվյալներով պարտադիր զինծառայության ժամկետը կրճատվել է՝ հասցվելով 14 ամսի<sup>515</sup>: Իրանի պահեստագործը հաշվվում է 350,000 մարդ<sup>516</sup>:

Իրանի բանակը համարվում է օտար նվաճողներից երկրի պաշտպանության առաջին գիծը: Բանակը, որի թիվը հաշվվում է 350,000 մարդ, բաղկացած է 130,000 հիմնական ծառայողներից և 220,000 զորակոչիկներից<sup>517</sup>:

**Իրանի բանակի ցամաքային զորքերը**, ըստ պաշտոնաթող գնդապետ Յուրի Սումբատյանի, 2001 թ. դրությամբ բաղկացած էին չորս կորպուսից, 12 դիվիզիայից (վեց հետևակ, չորս զրահատանկային, հատուկ նշանակության ջոկատներ), մի քանի բրիգադներից (այդ թվում՝ օդային, դեսանտային, տանկային, հետևակային), հինգ հրետանային խմբից<sup>518</sup>:

Բանակի ցամաքային զորքերը վերահսկվում են հինգ օպերատիվ հրամանատարությունների (ՕՀ) միջոցով, որոնք իրենց տարածքային և օպերատիվ «բաժանումներով» համընկնում են երկրի ռազմավարչական բաժանման հետ.

---

<sup>515</sup> *Iran To Shorten Mandatory Military Service To 14 Months*, [https://www.iranintl.com/en/202403170295?fbclid=IwAR3fb9jfq5Wtzlc63eldu\\_H5bKL4Wi7ypv\\_T h-xQxl4KH2EQ-fX44ANUL7Y\\_aem\\_AWokBb8UPKrLL6xAEm6srWkf6UrfANZr-GFRBL0AgTvhH3Mdpk6jJYSHaOFK-s3zoLKQXvj9DwnHGT9Q5qqqTqm5](https://www.iranintl.com/en/202403170295?fbclid=IwAR3fb9jfq5Wtzlc63eldu_H5bKL4Wi7ypv_T h-xQxl4KH2EQ-fX44ANUL7Y_aem_AWokBb8UPKrLL6xAEm6srWkf6UrfANZr-GFRBL0AgTvhH3Mdpk6jJYSHaOFK-s3zoLKQXvj9DwnHGT9Q5qqqTqm5)

<sup>516</sup> *The Military Balance 2024*, p. 352.

<sup>517</sup> *Ibid*

<sup>518</sup> **Ю.Г. Сумбатян**, *Воины “Мировой исламской революции”*, 24.08.2001, [https://nvo.ng.ru/forces/2001-08-24/3\\_revolution.html](https://nvo.ng.ru/forces/2001-08-24/3_revolution.html)

1. «Հյուսիս-Արևմուտք» – թուրքական ուղղության օպերատիվ հրամանատարություն,
2. «Արևմուտք» – իրաքյան ուղղության ՕՀ,
3. «Հարավ» – Պարսից ծոցի ՕՀ,
4. «Հարավ-Արևելյան» – պակիստանյան ուղղության ՕՀ,
5. «Հյուսիս-Արևելյան» – Աֆղանստանի ուղղության ՕՀ<sup>519</sup>:

ԻԻՀ ցամաքային ուժերը հիմնականում բաղկացած են երեք ստորադաս զորամասերից, որոնք ընդգրկված են մեկ՝ առավել բարձր օդակի մեջ: Օրինակ, յուրաքանչյուր հետևակային բրիգադ սովորաբար բաղկացած է երեք հետևակային գումարտակից, յուրաքանչյուր զրահապատ բրիգադ բաղկացած է երկու զրահապատ գումարտակից և մեկ մեխանիզացված հետևակային գումարտակից, և յուրաքանչյուր մեխանիզացված հետևակային բրիգադ բաղկացած է երկու մեխանիզացված հետևակային և զրահապատ գումարտակներից<sup>520</sup>:

2011 թ. տվյալներով Իրանի ցամաքային ուժերում ծառայում էր մոտավորապես 350,000 զինծառայող, ի դեպ նույն թիվը հաստատվում է նաև 2019 թ. համար<sup>521</sup>: Ռուս վերլուծաբանները 2018 թ. հետաքրքիր վերլուծություն էին իրականացրել և վերահաշվել, թե իրանական բանակը ինչ տեսք կունենա մինչև 2025 թ., ներկայացնում ենք այդ տվյալների մի մասը.

---

<sup>519</sup> *Армии на современном Востоке*, Под. ред., Д.В. Стрельцова Вооруженные силы Исламской Республики Иран, М. 2018, стр. 139.

<sup>520</sup> *Iran Military Power*, Ensuring Regime Survival and Securing Regional Dominance, 2019, [https://www.dia.mil/Portals/110/Images/News/Military\\_Powers\\_Publications/Iran\\_Military\\_Power\\_LR.pdf](https://www.dia.mil/Portals/110/Images/News/Military_Powers_Publications/Iran_Military_Power_LR.pdf), p. 73

<sup>521</sup> **Hossein Aryan**, *The Artesh: Iran's Marginalized and Under-Armed Conventional Military* November 15, 2011, <https://www.mei.edu/publications/artesh-irans-marginalized-and-under-armed-conventional-military>. **Farhad Rezaei**, *Iran's Military Capability: The Structure and Strenght of Forces*, *Insight Turkey* Fall 2019 / Volume 21 Number 4, <https://www.insightturkey.com/articles/irans-military-capability-the-structure-and-strength-of-forces>

Բանակի ցամաքային զորքերի հրամանատարության ուժի, մարտական կազմի և սպառազինության գնահատումը մինչև 2025 թ.<sup>522</sup>:

| Անվանում                                 | 2015 | 2020 | 2025 |
|------------------------------------------|------|------|------|
| Մարտական կազմ                            |      |      |      |
| Դիվիզիա                                  | 13   | 14   | 17   |
| - հետևակային                             | 6    | 7    | 8    |
| - զրահատանկային                          | 5    | 5    | 6    |
| - օդադեսանտային                          | 1    | 1    | 2    |
| - դեսանտագրոհային                        | 1    | 1    | 1    |
| Հրետանային խմբեր                         | 6    | 8    | 12   |
| Զենիթային հրետանու խմբեր                 | 3    | 5    | 10   |
| Բանակի ավիացիոն բրիգադներ                | 6    | 8    | 9    |
| Սպառազինություն                          |      |      |      |
| Հակատանկային կառավարվող հրթիռային կայանք | 112  | 135  | 172  |
| Մարտական տանկեր                          | 2100 | 2400 | 2500 |
| Հրետանի                                  | 5000 | 5708 | 6320 |
| Հակատանկային միջոցներ                    | 1400 | 1700 | 1900 |
| Զենիթային միջոցներ                       | 3000 | 3700 | 4400 |
| Զրահապատ մարտական մեքենա                 | 2138 | 2370 | 3360 |

**ԻԻՀ բանակի ծովային ուժերում** 2011 թ. տվյալներով ծառայում էր 18,000 զինծառայող. նրանք պատասխանատու էին Օմանի ծոցում և դրանից դուրս պաշտպանության առաջին գիծը պահելու համար<sup>523</sup>: Իրանն ունի վեց ռազմածովային բազա, մեկը՝ Կասպից ծովում, հինգը՝ Պարսից ծոցում: Հրթիռային զորքերի չորս բրիգադներում կա ավելի քան 300 հականավային հրթիռային համալիր<sup>524</sup>:

Արթեշի ռազմածովային ուժերը բաղկացած են մոտ քառասուն տարվա հնության նավերից. բացառություն են ռուսական ար-

<sup>522</sup> *Армии на современном Востоке*, Под ред., Д.В. Стрельцова Вооруженные силы Исламской Республики Иран, М. 2018, стр. 140–141 <https://mgimo.ru/upload/iblock/5fd/armii-na-sovremennom-vostoke.pdf>

<sup>523</sup> **Hossein Aryan**, *The Artesh: Iran's Marginalized and Under-Armed Conventional Military* November 15, 2011, <https://www.mei.edu/publications/artesh-irans-marginalized-and-under-armed-conventional-military>

<sup>524</sup> **Ю.Г. Сумбатян**, *Воины “Мировой исламской революции”*, 24.08.2001, [https://nvo.ng.ru/forces/2001-08-24/3\\_revolution.html](https://nvo.ng.ru/forces/2001-08-24/3_revolution.html)

տադրության «Կիլո» դասի երեք սուզանավերը և տեղական արտադրության մեկ կործանիչ նավը<sup>525</sup>: «Կիլո» դասի երեք սուզանավերը Իրանը Ռուսաստանից ստացել է 1992–1997 թթ.<sup>526</sup>, որոնք համալրված են 18 տորպեդոներով<sup>527</sup>: 2019 թ. փետրվարի 17-ին Իրանը ցուցադրեց նաև տեղական արտադրության «Ֆաթեհ» սուզանավը, որը, ըստ Press TV-ի, համալրված է գերժամանակակից սպառազինությամբ՝ ներառյալ տորպեդոներով, ծովային ականներով և թևավոր հրթիռներով, որոնք կարող են արձակվել սուզված դիրքից<sup>528</sup>: Իրականում իրանական սուզանավը չափազանց դժվար է համեմատել աշխարհի առաջատար արտադրողների ժամանակակից ոչ միջուկային սուզանավերի հետ, սակայն այն իրանական նավաշինության մեջ իրական թռիչք է<sup>529</sup>:

2021 թ. երեք «Կիլո»-ները վերանորոգման նպատակով դուրս բերվեցին ջրից, և, փաստացի, Բանդար-Աբբասի ջրային հատվածը հսկվում էր Ֆաթեհի կողմից<sup>530</sup>:

Իրանի ռազմածովային ուժերի ենթակայության տակ կա նաև «Ղադիր» և «Նահանգ» տիպի մոտ երկու տասնյակ մինի սուզանավ: Այսպիսով, եթե ծանծաղ ափամերձ ջրերում Իրանը դեռ կա-

---

<sup>525</sup> **Hossein Aryan**, *The Artesh: Iran's Marginalized and Under-Armed Conventional Military November 15, 2011*, <https://www.mei.edu/publications/artesh-irans-marginalized-and-under-armed-conventional-military>

<sup>526</sup> **Iranian Naval Forces**, *A Tale of Two Navies*, Published by the Office of Naval Intelligence, February 2017, p. 10

<sup>527</sup> **H I Sutton**, *Iran's Best Submarines Have Been Out of the Water for a Month*, <https://news.usni.org/2021/01/31/irans-best-submarines-have-been-out-of-the-water-for-a-month>

<sup>528</sup> *Iran presents new Fateh submarine armed with cruise missile: TV*, Reuters, February 17, 2019, <https://www.reuters.com/article/us-iran-submarine-fateh/iran-presents-new-fateh-submarine-armed-with-cruise-missile-tv-iduskcn1q60eb/>

<sup>529</sup> **Юрий Лямин**, *Подлодка для аятоллы: новое пополнение ВМС Ирана в состав флота Исламской Республики вошла субмарина собственной постройки*, 21 февраля 2019 <https://iz.ru/847672/iurii-liamin/podlodka-dlia-aiatolly-novoe-popolnie-vms-irana>

<sup>530</sup> **H I Sutton**, *Iran's Best Submarines Have Been Out of the Water for a Month*, <https://news.usni.org/2021/01/31/irans-best-submarines-have-been-out-of-the-water-for-a-month>

րող է որոշակի գործողություններ ծավալել, ապա երեք խոշոր դի-  
զելային-էլեկտրական սուզանավերը պարզապես բավարար չեն՝  
Օմանի ծոցում և Արաբական ծովի խորքայն շրջաններում բոլոր  
առաջադրանքները կատարելու համար<sup>531</sup>: Իրանը երկար ժամանակ  
աշխատում էր նաև Բեսաթ տիպի սուզանավի ստեղծման ուղղու-  
թյամբ: Հնացած է նաև հակածովային օդուժը, որը բաղկացած է հիմ-  
նականում հակասուզանավային և հերթապահ ուղղաթիռներից:

| Բանակի ռազմածովային ուժերի մարտական կառուցվածքը <sup>532</sup>                   |   |
|----------------------------------------------------------------------------------|---|
| <b>Նավատորմ</b>                                                                  |   |
| Օպերատիվ հրամանատարություններ                                                    | 6 |
| Ռազմածովային շրջաններ                                                            | 4 |
| Ռազմանավերի բրիգադներ                                                            | 2 |
| - Սուզանավերի դիվիզիա                                                            | 1 |
| - Էսկադրոնային ականակիրների կառավարվող հրթիռային սպառազինությամբ դիվիզիա         | 1 |
| - Եռակայմ հետախուզական նավ (ֆրեգատ) կառավարվող հրթիռային սպառազինությամբ դիվիզիա | 1 |
| - Հետախուզական հակասուզանավային ռազմանավ (կորվետ)                                | 2 |
| - Ականազերծիչ նավերի դիվիզիա                                                     | 1 |
| - Դեսանտային նավերի դիվիզիա                                                      | 1 |
| - Պահակային մոտորանավակների դիվիզիա                                              | 1 |
| - Դեսանտային մոտորանավակների դիվիզիա                                             | 3 |
| - Օդաբարձիկով մոտորանավակ                                                        | 2 |
| - Հրետանային մոտորանավակների դիվիզիա                                             | 1 |
| - Պարեկային մոտորանավակների դիվիզիա                                              | 1 |
| - Հակասուզանավային մոտորանավակների դիվիզիա                                       | 1 |
| - Մարտական մոտորանավակների բրիգադներ                                             | 1 |
| - Հրթիռային մոտորանավակների դիվիզիա                                              | 3 |
| <b>Ռազմածովային ուժերի ավիացիա</b>                                               |   |
| Մարտական ավիացիոն ջոկատներ                                                       | 4 |
|                                                                                  | 2 |

<sup>531</sup> **Юрий Лямин**, *Подлодка для аятоллы: новое пополнение ВМС Ирана в состав флота Исламской Республики вошла субмарина собственной постройки*, 21 февраля 2019 <https://iz.ru/847672/iurii-liamin/podlodka-dlia-aiatolly-novoe-popolnenie-vms-irana>

<sup>532</sup> *Армии на современном Востоке*, стр. 145.

|                                       |   |
|---------------------------------------|---|
| - Պարեկային ավիացիայի բազա            | 1 |
| - Հակասուզանավային ուղղաթիռներ        | 1 |
| - Ուղղաթիռ-ականազերծիչ                | 2 |
| - Էկրանապլանների սավառնակախումբ       |   |
| Ծովային հետևակ                        |   |
| - Ծովային հետևակի բրիգադ              | 2 |
| - Ծովային հետևակի ուսումնական կենտրոն | 1 |

**ԻԻՀ ռազմաօդային ուժերն** անմիջականորեն ենթարկվում են ռազմաօդային ուժերի շտաբին, որը ռազմաօդային ուժերի ստորաբաժանումների վարչական և օպերատիվ վերահսկողության հիմնական մարմինն է: Շտաբը բաղկացած է վարչություններից և բաժիններից: Այն անմիջականորեն վերահսկում է յոթ ենթակա հրամանատարությունները՝ օդուժ, ռադիո և ռադիոհետախուզություն, կապ, կենտրոնական կայազորի ապահովում, թիկունք և ուսումնական գործընթաց:

Իրանի օդուժը 2001 թ. տվյալներով համալրված էր 307 մարտական և 100 ռազմատրանսպորտային ինքնաթիռներով, ինչպես նաև մարտական ուղղաթիռներով: Մարտական ինքնաթիռների պարկի մեծ մասը ամերիկյան արտադրության են (F-4, F-5, F-14, F-15, Boeing-707, Boeing-737, Boeing-747 և այլն): Իրանցիներն ունեն նաև ռուսական Սու-24 և ՄԻԳ-29: ՀՕՊ-ը զինված է «երկիր-օդ» հրթիռներով<sup>533</sup>: 2008 թ. տվյալներով Իրանի օդային և հակաօդային ուժերում ծառայում էր 52.000 զինծառայող<sup>534</sup>:

Իրանի ՀՕՊ համակարգը կառուցված է տարածքային-թիրախային սկզբունքով: Իրանի տարածքը բաժանված է ՀՕՊ հինգ շրջանների, որոնք գտնվում են ՀՕՊ պաշտպանության և դիտարկ-

<sup>533</sup> **Ю.Г. Сумбатьян**, *Воины «Мировой исламской революции»*, 24.08.2001, [https://nvo.ng.ru/forces/2001-08-24/3\\_revolution.html](https://nvo.ng.ru/forces/2001-08-24/3_revolution.html)

<sup>534</sup> FACTBOX: How big is Iran's military? <https://www.reuters.com/article/us-nuclear-iran-military-idUKHAF23819820080702>

ման տիրույթում. հյուսիսարևելյան, հյուսիսարևմտյան, հարավ-արևմտյան, հարավային, հարավարևելյան<sup>535</sup>:

Իրանի օդային ուժերի տեխնիկան նույնպես հիմնականում ձեռք է բերվել Մուհամմադ Ռեզա շահ Փահլավիի օրոք, որոնք ամերիկյան արտադրության կործանիչներ են, ինքնաթիռներ և ուղղաթիռներ: Արթեշի օդուժի կազմում կան նաև համեմատաբար նոր, ռուսական արտադրության Սու-24, Սու-25 և ՄԻԳ-29 ինքնաթիռներ: Օդուժի անձնակազմը հաշվվում է մոտ 37.000 զինծառայող<sup>536</sup>: Սակայն խնդիրը միայն որակյալ, նոր սերնդին պատկանող ինքնաթիռների բացակայությունը չէ: Իրանի օդային ուժերին անհրաժեշտ են նաև որակյալ դասընթացներ, վերապատրաստման աշխատանքներ այս ոլորտում, որից Իրանին կրկին զրկում են տարատեսակ պատժամիջոցներով:

Ակնհայտ է, որ Իրանի հրթիռաշինությունն ամենաակտիվ զարգացող ճյուղերից է, ինչն այսօր խիստ անհանգստացնում է ինչպես տարածաշրջանային որոշ երկրների, այնպես էլ Միացյալ Նահանգներին. Նախագահ Թրամփի նախագահության շրջանում ակնհայտ դարձավ Իրանի՝ հրթիռաշինության նկատմամբ ԱՄՆ-ի վերահսկողություն սահմանելու մեծ ցանկությունը: Միացյալ Նահանգները, փոխելով 2015 թ. Վիեննայում ձեռք բերված պայմանավորվածությունների տրամաբանությունը, Թրամփի վարչակարգի միջոցով սկսեց փորձել հավելյալ պահանջներ թելադրել Իրանին, որը վերաբերում էր Իրանի հրթիռաշինությանը:

Իսրայելին անհանգստացնում է այն փաստը, որ Իրանի զինված ուժերի տրամադրության տակ կա «Շահաբ-3» տիպի հրթիռ, որը, իրանական կողմի հավաստմամբ, հանգիստ կարող է հատել Իսրայելի սահմանը (հրթիռի առավելագույն հեռահարությունը 1500

---

<sup>535</sup> Առավել մանրամասն տե՛ս **Լ. Հովսեփյան, Ա. Հովհաննիսյան, Ս. Մինասյան**, *Տարածաշրջանի ռազմական տեղեկագիրք*, Երևան, 2016, էջ 90:

<sup>536</sup> **Hossein Aryan**, *The Artesh: Iran's Marginalized and Under-Armed Conventional Military*, November 15, 2011, <https://www.mei.edu/publications/artesh-irans-marginalized-and-under-armed-conventional-military>

կմ է, իսկ հաշվարկային հեռահարությունը՝ 1300 կմ: Հրթիռը մշակվել է հյուսիսկորեական NoDong-1 հրթիռի հիմքի վրա)<sup>537</sup>: Վաշինգտոնի տվյալներով Իրանը 1990-ականների վերջերին և 2000-ականների սկզբներին, Ռուսաստանից և Չինաստանից ստանալով որոշ տեխնոլոգիաներ, աշխատանքներ է տարել հեղուկ վառելիքով երկու հրթիռ՝ «Շահար-3» և «Շահար-4», և պինդ վառելիքով NP-110 հրթիռներ<sup>538</sup> ստեղծելու ուղղությամբ: 2025 թ. Իսրայելի կողմից Իրանի ռազմավարական օբյեկտները ռմբակոծելուն ի պատասխան Իրանը արձակեց Իսրայելի ուղղությամբ միջին հեռահարության բալիստիկ հրթիռներ՝ թե՛ պինդ, թե՛ հեղուկ վառելիքով, ներառյալ «Ղադր», «Էմադ», «Խեյբար Շեքան» և «Հաջ Ղասեմ»: Իսրայելի պաշտպանության բանակի գնահատմամբ Իրանը «Ճշմարիտ խոստում III» գործողության ընթացքում Իսրայելի ուղղությամբ արձակել է շուրջ 500–550 բալիստիկ հրթիռ և ավելի քան 1,000 անօդաչու թռչող սարք<sup>539</sup>:

Իրանի իշխանությունները միշտ մեծ ներդրումներ են կատարել հրթիռաշինության և ընդհանրապես ռազմարդյունաբերության մեջ. դրա վառ ապացույցներից մեկն էլ ԻԻՀ Նախագահ Հասան Ռոհանիի հայտնի ելույթն էր 2017 թ., որի ընթացքում նա փաստեց, որ իր կառավարման առաջին չորս տարիներին երկրի ռազմական բյուջեն ավելացվել է 145 տոկոսով<sup>540</sup>: Այնուամենայնիվ, 2018 թվա-

---

<sup>537</sup> **Գ. Իսկանդարյան**, *Իրանում տեղի ունեցած վերջին իրադարձությունների շուրջ*, Նորավանք, 2006, էջ 27, [http://www.noravank.am/upload/pdf/61\\_am.pdf](http://www.noravank.am/upload/pdf/61_am.pdf)

<sup>538</sup> ՀՀ ԱԳՆ, Պատմադիվանագիտական բաժին (արխիվ), Մերձավոր և Միջին Արևելքի վարչություն, Իրանի բաժին, ցուցակ 5, գործ 240:

<sup>539</sup> **Avery Borens, Ben Schmida, Ben Rezaei, Ria Reddy, Kelly Campa, Johanna Moore, Carolyn Moorman, Andie Parry and Brian Carter**, *Iran Update Special Report*, June 24, 2025, Evening Edition, pp. 13–15. <chrome-extension://efaidnbmnnnibpcajpcglclefindmkaj/https://www.understandingwar.org/sites/default/files/Iran%20Update%20Special%20Report%2C%20June%2024%2C%202025%2C%20Evening%20Edition%20PDF.pdf>

<sup>540</sup> **Ahmad Majidiyar**, *Rouhani Says Iran's Military Budget Increased by 145 Percent During His Term*, April 18, 2017 <https://www.mei.edu/publications/rouhani-says-irans-military-budget-increased-145-percent-during-his-term>

կանին ռազմական ծախսերը նվազել էին 9,5%-ով՝ հասնելով 13,2 միլիարդ դոլարի, քանի որ Իրանի տնտեսությունը անկում էր ապրել, գնաճը 2018 թվականին հասել էր 30-ի<sup>541</sup>, ինչը կապված էր ԱՄՆ-ի՝ ՀԳՀԾ-ից դուրս գալու և Իրանի նկատմամբ միակողմանի պատժամիջոցներ կիրառելու հետ: 2018 թվականին Իրանի ռազմական ծախսերը կազմել են ՀՆԱ-ի 2,7%-ը, որով Իրանը զբաղեցրել էր 25-րդ տեղը աշխարհում: Ուշագրավ է, որ Ստոկհոլմի Խաղաղության միջազգային հետազոտությունների ինստիտուտի պնդմամբ Պարսից ծոցի ավազանում Իրանը շատ ավելի թափանցիկ է ներկայացնում իր ռազմական ծախսերը, քան մյուս երկրները<sup>542</sup>:

| <b>Բանակի ռազմաօդային ուժերի մարտական կազմը</b> <sup>543</sup> |     |
|----------------------------------------------------------------|-----|
| Օդային ուժերի հրամանատարության շտաբ                            | 1   |
| Օպերատիվ հրամանատարություններ՝ ըստ գոտիների                    | 3   |
| Վարչական հրամանատարություն                                     | 7   |
| Օդային բազաներ                                                 | 18  |
| Հարձակողական                                                   | 14  |
| Տրանսպորտային                                                  | 4   |
| Մարտական ավիացիոն ջոկատներ                                     | 30  |
| Ռմբակոծիչներ                                                   | 2   |
| Կործանիչներ                                                    | 25  |
| Հետախուզական                                                   | 3   |
| Ուղղաթիռային ջոկատներ                                          | 8   |
| <b>Բանակի ռազմաօդային ուժերի սպառազինություն</b>               |     |
| Մարտական ինքնաթիռ                                              | 300 |
| Կործանիչ-ռմբակոծիչ                                             | 291 |
| Հետախույզ ինքնաթիռ                                             | 9   |
| Օդուժին աջակցող ինքնաթիռներ                                    | 130 |

<sup>541</sup> Pieter D. Wezeman and Alexandra Kuimova, *Military spending and arms imports by Iran, Saudi Arabia, Qatar and the UAE*, SIPRI Fact Sheet, May 2019, [https://www.sipri.org/sites/default/files/2019-05/fs\\_1905\\_gulf\\_milex\\_and\\_arms\\_transfers.pdf](https://www.sipri.org/sites/default/files/2019-05/fs_1905_gulf_milex_and_arms_transfers.pdf)

<sup>542</sup> Ibid

<sup>543</sup> *Армии на современном Востоке*, стр. 142.

|                             |     |
|-----------------------------|-----|
| Ուղղաթիռ                    | 66  |
| Զենիթային կառավարմամբ հրթիռ | 102 |

Իրանի զինված ուժերի մաս էր կազմում նաև Ժանդարմերիան, որի մարդուժի քանակը 1977 թ. տվյալներով, կազմում էր 75.000<sup>544</sup>: Սակայն Իսլամական հեղափոխությունից հետո, ըստ էության, որոշում է կայացվել Ժանդարմերիային պակաս ուշադրություն դարձնել, ինչն էլ արտահայտվել է դրա թվաքանակի կրճատմամբ: 2001 թ. տվյալներով Իրանում Ժանդարմերիայի թվաքանակը կազմում էր 40.000 զինծառայող: Ժանդարմերիայի ութ գնդերը պաշտպանում էին Իրանի հյուսիսային սահմանները, այդ թվում՝ երեքը՝ Անդրկովկասի, երկուսը՝ Կասպից ծովի, և երեքը՝ միջինասիական սահմանները<sup>545</sup>: Սակայն Արցախյան 2020 թվականի պատերազմից հետո, Ադրբեջանում Իսրայելի ներկայության մեծացման հետևանքով, այդ սահմաններն արդեն վերահսկվում են ԻՀՊԿ ուժերի կողմից:

Ըստ Global Firepower տարեկան հաշվետվության՝ 2021 թ. դրությամբ Իրանը զինծառայողների թվաքանակով զբաղեցրել է 14-րդ տեղը 140 երկրների շարքում<sup>546</sup>: Փաստացի, ԻԻՀ զինված ուժերի ակտիվ մարդուժի թիվը կազմում է 523.000 զինծառայող՝ 2021 թ. տվյալներով, որի շնորհիվ երկիրն աշխարհում զբաղեցնում է 8-րդ տեղը, իսկ պահեստագործ կազմում է 350.000 մարդ, որով Իրանը 17-րդ հորիզոնականում է<sup>547</sup>: Սակայն այս թվերում ընդգրկված են նաև ԻՀՊԿ ուժերը: Ծառայության ժամկետը ամեն տարի հաս-

<sup>544</sup> *The Imperial Iranian Gendarmerie*, <http://www.aryamehr.org/eng/iaa/gen.htm>

<sup>545</sup> **Ю.Г. Сумбатян**, *Воины «Мировой исламской революции»*, 24.08.2001, [https://nvo.ng.ru/forces/2001-08-24/3\\_revolution.html](https://nvo.ng.ru/forces/2001-08-24/3_revolution.html)

<sup>546</sup> 2021 Iran Military Strength, Global Fire Power, [https://www.globalfirepower.com/country-military-strength-detail.php?country\\_id=iran](https://www.globalfirepower.com/country-military-strength-detail.php?country_id=iran)

<sup>547</sup> Comparison of Iran and Israel Military Strengths (2021), <https://www.globalfirepower.com/countries-comparison-detail.php?Submit=COMPARE&country1=iran&country2=israel&form=form>

տատվում է օրենքով՝ կախված ԶՈՒ կարիքներից: Ժամկետային ծառայությունը 2015 թ. սկզբի դրությամբ կազմել է 18 ամիս<sup>548</sup>: Պարտադիր զինծառայության տարիքը 18 տարեկանն է, վերին շեմը՝ 49 տարեկանը: Զինծառայությանը 16 տարեկանից կարող են մասնակցել կամավորները, 17 տարեկանից կարող են ծառայության անցնել իրավապահ մարմիններում, 15 տարեկանից՝ անդամագրվել Բասիջին<sup>549</sup>: Կանայք ազատված են պարտադիր զինծառայությունից: Զինծառայածները պահեստազորում մնում են մինչև 55 տարեկանը: Իրանի՝ 18 տարին լրացած քաղաքացին պետք է ներկայանա ռազմական իշխանություններին՝ իրանական օրացուցային տարվա մեկնարկից հետո՝ մեկ ամսվա ընթացքում: Լրատվամիջոցներով (ներառյալ թերթերը, ռադիոն և հեռուստատեսությունը) հայտարարություններ են արվում՝ կոչ անելով որոշակի տարում ծնված տղամարդկանց ներկայանալ տեղական գորակոչային բյուրո<sup>550</sup>: Մոբիլիզացիայի պարագայում բնակչության մոտ 10%-ը կարող է համալրել բանակը, իսկ այսօր այդ թիվը կանցնի 8 մլն-ի շեմը:


---

<sup>548</sup> *Иран: оппозиционные политические группы, силовые структуры, избранные проблемы в области прав человека, верховенство права Сборник ИСПИ Июль 2015 г.*, стр. 163, [https://www.refworld.org/cgi-bin/texis/vtx/rwmain/opendo\\_cpdf.pdf?reldoc=y&docid=57b71856a](https://www.refworld.org/cgi-bin/texis/vtx/rwmain/opendo_cpdf.pdf?reldoc=y&docid=57b71856a)

<sup>549</sup> *Country Policy and Information Note Iran: Military service Version 3.0 November 2022, Home Office*, p. 14, [https://assets.publishing.service.gov.uk/government/uploads/system/uploads/attachment\\_data/file/1121092/IRN\\_CPIN\\_military\\_service.pdf](https://assets.publishing.service.gov.uk/government/uploads/system/uploads/attachment_data/file/1121092/IRN_CPIN_military_service.pdf)

<sup>550</sup> Նույն տեղում:

ԻԻՀ բանակի՝ արթնշի գծապատկերը տե՛ս ստորև.



Իրանական բանակի ռազմական սպառազինությունը հիմնականում հին է, իսկ նոր ձեռքբերումները ռուսական, չինական և հյուսիսկորեական արտադրության են: Արդի ռազմական տեխնիկան հասու չէ Իրանին, քանի որ Իրանը Իսլամական Հանրապետության ստեղծումից ի վեր գտնվել է ԱՄՆ-ի, այնուհետև ՄԱԿ-ի տարբեր պատժամիջոցների ներքո, որոնք առաջին հերթին վերա-

բերել են Իրանի ռազմական ուժերի համալրմանը: 2010 թ. ՄԱԿ-ի ԱԽ թիվ 1929 բանաձևի կիրառումը մեծապես սահմանափակեց օրինական ճանապարհով հարձակողական տիպի զենք (տանկ, հրթիռ, ռազմական ուղղաթիռ, ինքնաթիռ և այլն) ձեռք բերելու՝ Իրանի հնարավորությունները<sup>551</sup>:

2020 թ. օգոստոսի 21-ին ցուցադրվեցին Իրանի ռազմարդյունաբերական համալիրի կողմից ստեղծված նոր՝ «Հաջ Ղասեմ» մարտական հրթիռները (անվանակոչվել է Ղասեմ Սուլեյմանիի պատվին), որը 1400 կմ հեռահարություն ունի և աշխատում է պինդ վառելիքով<sup>552</sup>, ինչպես նաև «Աբու Մեհդին», որն ունի 1000 կմ հեռահարություն<sup>553</sup>:

Ոչ պակաս կարևոր է նաև Իրանի զինված ուժերի տրամադրության տակ գտնվող սպառազինության ներկայացումը: Ինչպես վերը արդեն նշել ենք, շահական Իրանը Միացյալ Նահանգներից և եվրոպական երկրներից ձեռք էր բերել ժամանակաշրջանի արդիական սպառազինություն, սակայն իրանա-իրաքյան պատերազմի ընթացքում դրանց զգալի մասը փաստացի սպառվեց:

Իսլամական հեղափոխությունից հետո ԱՄՆ-ի հետ կնքած ռազմական պայմանագրերը, ըստ էության, սառեցվեցին, վճարած գումարը Իրանին չվերադարձվեց, իսկ տեխնիկական չմատակարարվեց: Իրանը սկսեց զենքի հայթայթման նոր աղբյուրներ փնտրել և զենքի որոշ տեսակներ ստացավ ՌԴ-ից, այնուհետև Հս. Կորեայից, Չինաստանից և սկսեց նաև մեծ աշխատանքներ իրականացնել սեփական արտադրության զենք-զինամթերք ստեղծելու ուղղությամբ:

---

<sup>551</sup> UN, Security Council SC/9948, Security Council Imposes Additional Sanctions on Iran, Voting 12 in Favour to 2 Against, with 1 Abstention 9 June 2010, <http://www.un.org/News/Press/docs/2010/sc9948.doc.htm>

<sup>552</sup> Պինդ վառելիքով հրթիռները համարվում են նախընտրելի հեղուկ վառելիքով հրթիռների համեմատ, օրինակ՝ հեղուկ վառելիքի որոշակի նվազման հետևանքով բաքում առաջանում են տատանումներ, ինչը ազդում է հրթիռի կայուն թռիչքի վրա:

<sup>553</sup> Iran unveils “Haj Qasem”, “Abu-Mahdi” missiles, Aug 20, 2020, <https://en.mehrnews.com/news/162524/Iran-unveils-Haj-Qasem-Abu-Mahdi-missiles>

2020 թ. օգոստոսին ԻԻՀ պաշտպանության նախարար, բրիգադային գեներալ Ամիր Հաթամին նշել է, որ Իրանի ռազմարդյունաբերությունը հասել է զարգացման բարձր մակարդակի և այդ պահի դրությամբ արտադրում է 770 տեսակի տարբեր արտադրանք, ինչը կարող է բավարարել Իրանի զինված ուժերի կարիքները<sup>554</sup>:

Նշենք նաև, որ որոշ բաց աղբյուրների տեղեկություններով 2015 թ. տվյալներով Իրանի ԶՈՒ տրամադրության տակ հաշվվել են 1,783 միավոր մարտական տանկ, հետևակի մարտական մեքենաներ՝ 750, զրահափոխադրիչներ՝ 500, հրետանի (ինքնագնաց և քարշակվող)՝ 2,322, հրետանային հրթիռներ՝ 1,474, կործանիչ/հարձակողական ինքնաթիռ՝ 273, տրանսպորտային ինքնաթիռներ՝ 104, հարձակողական ուղղաթիռներ՝ 50, տրանսպորտային ուղղաթիռներ՝ 241, պարեկային նավեր (ափերում և ծովում)՝ 322, սուզանավեր՝ 20, ֆրեգատ/կորվետ՝ 5<sup>555</sup> միավոր:

2011 թ. ԻԻՀ ռազմական պոտենցիալը՝ ըստ CSIS տվյալներին<sup>556</sup>.

| Ցամաքային զորքեր            | Ծովային զորքեր         | Օդային զորքեր | Հրետանային զորքեր                          |
|-----------------------------|------------------------|---------------|--------------------------------------------|
| 1613 հիմնական մարտական տանկ | 8 ջրային փոխադրամեքենա | 35 MiG-29     | 5000 ականանետ                              |
| 725 թեթև տանկ               | 3 սուզանավ             | 13 Su-25      | Համագարկային կրակի ռեակտիվ համակարգ<br>876 |
| 640 զրահափոխադրիչ           | 12 փոքր սուզանավ       | 30 Su-24      | Քարշակ Towed Tube 2010                     |
|                             | 5 Հրթիռային            | 44 F-14       | 310 Self-Propelled                         |

<sup>554</sup> Ibid

<sup>555</sup> *How strong is Iran Military? Estimated military strength of Iran 2015*, [https://www.statista.com/chart/17915/estimated-military-strength-of-iran/?fbclid=IwAR3747klv\\_JoRs4psPo09nDhBnYsR481bCJD-RN2dkJYhqQYa2Ex\\_eas8bQ](https://www.statista.com/chart/17915/estimated-military-strength-of-iran/?fbclid=IwAR3747klv_JoRs4psPo09nDhBnYsR481bCJD-RN2dkJYhqQYa2Ex_eas8bQ)

<sup>556</sup> **Anthony H. Cordesman, Alexander Wilner, Iran and the Gulf military balance**, The Conventional and Asymmetric Dimensions, Center for Strategic International Studies, 2012, p. 33–37.

|  |                                                                               |           |      |
|--|-------------------------------------------------------------------------------|-----------|------|
|  | մարտական նավ<br>(major missile<br>combat)                                     |           | Tube |
|  | 1 խոշոր տրամա-<br>չափի հակահրթի-<br>ռային համակարգ<br>(major other<br>combat) | 65 F-4D/E |      |
|  | 57 հրթիռային<br>պարեկ                                                         | 3 Saegheh |      |
|  | 76 այլ պարեկա-<br>յին փոխադրամի-<br>ջոց                                       |           |      |
|  | 117 ռազմական<br>նավակ                                                         |           |      |
|  | 7 ականորսիչ,<br>Mine                                                          |           |      |
|  | 14 դեսանտային<br>նավ                                                          |           |      |
|  | 17 ամֆիբիա-նա-<br>վակ                                                         |           |      |
|  | 26 օժանդակ նավ                                                                |           |      |

Անշուշտ, այս տեղեկությունները չեն կարող լինել բացարձակ ճշգրիտ և ամբողջական չեն կարող արտացոլել իրական պատկերը, ուստի որոշ տվյալների պետք է խիստ ընդհանրական վերաբերվել:

Այսպիսով, ԻԻՀ բանակը 1921 թվականից մինչ այսօր անցել է զարգացման փուլեր և այսօր տարածաշրջանում մարտունակ բանակ ունեցող երկրներից է համարվում: Որքան էլ պարադոքսալ թվա, դրա մասին էին մտածում և երազում Իրանի վերջին չորս առաջնորդներն էլ՝ Ռեզա շահը, Մուհամմադ Ռեզա Փահլավին, Այաթոլլահ Խոմեյնին և Այաթոլլահ Ալի Խամենեին: Թեպետ այդ բանակի հզորացման մոդելները նրանց մոտ տարբեր էին, սակայն, ըստ էության, նպատակը մեկն էր՝ Իրանի բանակը դարձնել տարածաշրջանի լավագույն բանակներից մեկը:

## Իրանի բանակի զարգացման ժամանակագրությունը<sup>557</sup>

| Տարի |                                                                                                                                                                                             |
|------|---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| 1921 | Բանակի (արթեշ) հիմնում                                                                                                                                                                      |
| 1923 | Իրանի թագավորական ցամաքային ուժերի հիմնում                                                                                                                                                  |
| 1924 | Իրանի թագավորական օդային ուժերի հիմնում                                                                                                                                                     |
| 1932 | Իրանի թագավորական ծովային ուժերի հիմնում                                                                                                                                                    |
| 1979 | ԻՀՊԿ հիմնում, Իրանի թագավորական ցամաքային, օդային և ծովային ուժերի վերանվանում Իրանի Իսլամական Հանրապետության ցամաքային, օդային և ծովային ուժերի                                            |
| 1980 | Բասիջի հիմնում                                                                                                                                                                              |
| 1981 | Բասիջի ներառում ԻՀՊԿ կազմ                                                                                                                                                                   |
| 1985 | ԻՀՊԿ-ի ցամաքային, օդային և ծովային ուժերի ստեղծում                                                                                                                                          |
| 1990 | ԻՀՊԿ-ի շրջանակներում Ղողս ուժերի ստեղծում                                                                                                                                                   |
| 2007 | Բասիջի անցումը ԻՀՊԿ-ի հրամանատարության տակ                                                                                                                                                  |
| 2008 | Խաթամ օլ-Անբիայի հակաօդային պաշտպանության շտաբի ստեղծումը                                                                                                                                   |
| 2009 | ԻՀՊԿ օդային ուժերի վերանվանումը ԻՀՊԿ օդատիեզերական ուժերի, Բասիջի որոշ միավորումների ինտեգրումը ԻՀՊԿ ցամաքային ուժերին                                                                      |
| 2019 | Խաթամ օլ-Անբիա հակաօդային պաշտպանության շտաբի տեղափոխում Արթեշի գլխամաս, Արթեշի հակաօդային պաշտպանության ուժերի վերանվանումը Իրանի Իսլամական Հանրապետության հակաօդային պաշտպանության ուժերի |

Ըստ էության, Իրանի ռազմական քաղաքականությունն այսօր ունի մեկ հիմնական նպատակ, որի իրագործմանն է միտված երկրի ղեկավարության ներուժը, այն է՝ Իրանը վերածել տարածաշրջանի ազդեցիկ պետության: Իրանի ռազմական դոկտրինի հիմքը Խոմեյնիի ուսմունքն է կամ «նեոշիայականությունը», որն իրականացվում է երեք եղանակով՝ խաղաղ (քարոզչական), կիսառազմական կամ ռազմական մեթոդներով<sup>558</sup>: Իրանի ռազմաքաղա-

<sup>557</sup> *Iran, Military power*, p. 8 [https://www.dia.mil/Portals/27/Documents/News/Military%20Power%20Publications/Iran\\_Military\\_Power\\_LR.pdf](https://www.dia.mil/Portals/27/Documents/News/Military%20Power%20Publications/Iran_Military_Power_LR.pdf),

<sup>558</sup> **Сажин В.И.**, *Военная мощь Ирана двадцать лет: от пепла до алмаза*, стр. 73, *Исламская революция в Иране*. Прошлое, настоящее, будущее, Сборник статей, М., 1999.

քական ղեկավարությունը ռազմական դոկտրինի հիմքում է դրել անհամաչափ պատասխանի և գործողությունների ռազմավարությունը, ինչպես նաև ամբողջական մոբիլիզացիոն հնարավորություններն ու կրոնական նկատառումները<sup>559</sup>:

Իրանը տարածաշրջանային խոշոր ռազմական տերություն է: Իրանի ռազմական դոկտրինը միավորում է տարածքային պաշտպանության (համապետական գորահավաքի և հրթիռային զգալի զինանոցի միջոցով) և անհամաչափ պաշտպանության ռազմավարությունները: Վերջին նպատակին հասնելու համար Իրանը ռազմական ճնշում է գործադրում՝ օգտագործելով տարածաշրջանային մի շարք դաշնակիցների և երրորդ (պրոքսի) կողմերի՝ հիմնականում ապավինելով ԻՀՊԿ «Ղոդա» ուժերի հետ նրանց հարաբերություններին, ինչպես նաև զենք մատակարարելու միջոցով: Այսօր պաշտոնական Թեհրանը ռազմական ոլորտում կարևոր հարաբերություններ ունի Ռուսաստանի, Չինաստանի հետ և ունի ազդեցություն Լիբանանում, Եմենում՝ հենվելով ոչ պետական խմբավորումների ցանցի վրա:

Թեհրանը իր ենթակայության տակ ունի փոքր և միջին հեռահարության բալիստիկ և թևավոր հրթիռներ, թռչող սարքեր, որոնց մեծ մասը սեփական արտադրության են: Թեև Իրանի զինված ուժերն իրենց քանակական կազմով տարածաշրջանային մակարդակում համարվում են խոշոր զինվորական համակարգ, այնուամենայնիվ նրանց ռազմատեխնիկական հենքը լիարժեք չի համապատասխանում ժամանակակից ստանդարտներին: Ըստ «The Military Balance»-ի՝ Իրանի կանոնավոր բանակի և ԻՀՊԿ-ի միջև կարողությունների բաժանումը խոչընդոտում է արդյունավետ հրամանատարությանը և վերահսկումը: ԻՀՊԿ-ի մոտ են կուտակված օպերատիվ գերակայությունը և մարտական փորձը, քանզի կանոնավոր զինված ուժերը հիմնականում կախվածություն ունեն ժամ-

---

<sup>559</sup> **Լ. Հովսեփյան, Ա. Հովհաննիսյան, Ս. Մինասյան**, Տարածաշրջանի ռազմական տեղեկագիրք, Երևան, 2016, էջ 73, 74:

կետային զինծառայողներից: Թեև Իրանը չի կարողանում ամբողջությամբ տրամադրել երկրին անհրաժեշտ հիմնական սպառազինությունը, այնուամենայնիվ, տեղական արդյունաբերությունը շարունակում է արտադրել սարքավորումներ, ներառյալ՝ «երկիր-օդ» հրթիռային համակարգեր և ռազմական անօդաչու թռչող սարքեր:

## **Իսլամական հեղափոխության պահապանների կորպուս – Sepâh-e pâsdârân-e enqelâb-e Eslâmi**

1979 թ. Իսլամական հեղափոխությունից հետո, չնայած բանակում իրականացրած գտումներին, նոր իշխանությունը, ըստ իս, ամբողջովին չէր կարող վստահել մի բանակի, որի շարքերը համալրելիս զինվորականները հավատարմության երդում էին տվել շահին: Ինչպես վերը նշեցինք, հեղափոխությունից հետո հոգևորականությունն սկսեց ներթափանցել Իրանի բանակ, և բանակում մի շարք գործառույթներ անհնար էր կազմակերպել առանց հոգևորականների մասնակցության:

Ռուս իրանագետ Սափինը հետաքրքիր կերպով է նկարագրում Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի ձևավորումը. «Հեղափոխության հետևանքով առաջացած պայքարի ընթացքում տարբեր քաղաքական կառույցներում ազդեցություն ունենալու համար Իրանի հոգևորականությունը խաղադրույք կատարեց ապադասակարգային տարրերի՝ կրոնական առումով առավել մոլեռանդ խմբերի և այդ կառույցների ներկայացուցիչների վրա: Լյումպեն-պրոլետարիատի ներկայացուցիչներին ընդգրկելով ռազմաքաղաքական կազմակերպությունում, որը ղեկավարվում և ուղղորդվում էր մզկիթների կողմից, օգտագործվում էին որպես զենք իրենց քաղաքական հակառակորդների դեմ պայքարում: Հոգևորականությունը հասկանում էր, որ մանր բուրժուական զանգվածներին մոբիլիզացնելով՝ կկարողանա հենվել դրանց վրա և գրավել

ու իրենց ձեռքում պահել իշխանությունը, ապա երկրում իրականացնել քաղաքական միջոցառումներ, որոնք ուղղված կլինեին Իսլամական պետականության ստեղծմանը: Այդպիսի կառույց դարձավ Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսը»<sup>560</sup>:

1979 թ. փետրվարի 24-ին Իսլամական հեղափոխության ռազմականացված ջոկատների միավորմամբ ստեղծվեց Իրանի էլիտար ռազմաքաղաքական կազմավորումը, որը հեղափոխության գաղափարների ջատագովն էր և պայքարում էր առաջին հերթին հակահեղափոխական տարրերի դեմ: ԻԻՀ Սահմանադրության 150-րդ կետը վերաբերում է ԻՀՊԿ-ի գործառույթներին, որի համաձայն՝ «իր դերակատարությամբ պահպանում է Իսլամական հեղափոխության նվաճումները»: ԻՀՊԿ իրավունքներն ու պարտականությունները, դրա լիազորություններն ու այլ գինված ուժերի հետ հարաբերությունները կանոնակարգվում են օրենքով՝ դրանց եղբայրական համագործակցության և համատեղ գործողությունների հատուկ շեշտադրումներով<sup>561</sup>:

Իրականում ԻՀՊԿ-ում սկզբնական շրջանում հավաքվեցին տարբեր հոսանքների, գաղափարների հարող մարդիկ, և ներսում փաստացի ձևավորվեցին երեք տարբեր հոսանքներ, որոնց շահերը շատ հաճախ չէին համընկնում, և իրենց գործողություններում դրանք փորձում էին միմյանց դեմ խնդիրներ առաջացնել: Այդ երեք հոսանքներից մեկում համախմբվել էին ինչպես ձախականներ, այնպես էլ չափավոր հոգևորական գործիչներ, որոնք դեմ էին Խոմեյնիի Վելայաթ-է Ֆադիհի սկզբունքներին: Երկրորդ խումբը գլխավորում էին Բազարգանի կառավարության ներկայացուցիչները, և այն վերահսկվում էր բուրժուազատական ուժերի կողմից: Երրորդ թևը, որը գործնականում ինքնուրույն կենտրոն էր և

---

<sup>560</sup> **Сажин В.И.** (2017). *Корпус стражей исламской революции Ирана – государство в государстве*. Контуры глобальных трансформаций: политика, экономика, право, 10 (3). 83–109. DOI: 10.23932/2542-0240 -2017-10-3-83-109, стр. 87.

<sup>561</sup> ԻԻՀ Սահմանադրություն, հոդված 150:

ստեղծվել էր որպես հակակշիռ մյուս երկուսին, վերահսկվում էր Հաշեմի Ռաֆսանջանիի կողմից<sup>562</sup>:

Ակնհայտ էր, որ Խոմեյնին չէր հանդուրժելու ԻՀՊԿ-ում նման տարաձայնությունների շարունակությունը, քանզի այն նոր իշխանությունների անվտանգության ապահովման հիմնական երաշխիքն էր: Այդ իսկ պատճառով ԻՀՊԿ-ում Խոմեյնին իրականացրեց մի շարք վերակազմավորումներ և կադրային փոփոխություններ, իսկ 1979 թվականի մայիսի 1-ին ԻՀՊԿ-ում ստեղծեց Կենտրոնական շտաբ, որն անմիջապես ենթարկվում էր այաթոլլահ Խոմեյնիին:

Ի սկզբանե Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսը ռազմառոտիկականական միավորում էր՝ բանակից անկախ վերահսկողության համակարգով: Սակայն բռնկված իրանա-իրաքյան պատերազմն ստիպեց ամբողջությամբ վերանայել ԻՀՊԿ-ի գործառնությունները:

Բարձրագույն հոգևորականության կարծիքով ապագայում ԻՀՊԿ-ը և Իրանի բանակը պետք է միավորվեն և ստեղծեն մեկ ընդհանուր իսլամական բանակ՝ ըստ Խոմեյնիի գաղափարախոսության: Սա նաև Իրանի ռազմական դոկտրինի առանցքային մեխերից մեկն է. հնարավոր պատերազմի դեպքում Իրանը պետք է կարողանա մոբիլիզացնել և ստանալ «20 միլիոնանոց Իսլամական բանակ»:

Ի տարբերություն բանակի կադրային համալրման՝ ԻՀՊԿ-ն համալրվում է կամավորության սկզբունքով, հիմնականում խիստ բարեպաշտ, 16 տարին լրացած քաղաքացիների շարքերից, ինչպես նաև պահեստագործից և ժանդարմներիայից: ԻՀՊԿ-ում ծառայությունն անժամկետ է, ընդհուպ մինչև թոշակի անցնելը: ԻՀՊԿ-ի շար-

---

<sup>562</sup> **Сажин В.И.** (2017). *Корпус стражей исламской революции Ирана – государство в государстве. Контуры глобальных трансформаций: политика, экономика, право*, 10 (3). 83-109. DOI: 10.23932/2542-0240 -2017-10-3-83-109, стр. 87.

քային զինծառայողը պատրաստվում է մասնագիտացած ուսումնական կենտրոններում<sup>563</sup>:

Ըստ էության, Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսին են վստահված բանակի և ոստիկանության առանձնահատուկ հանձնառությունները և կրոնական-իսլամական բնույթի ռազմաքաղաքական այլ առաքելությունների կատարումը, որոնց թվում է «հատուկ գործողությունների» իրականացումը ևս:

Փաստացի ԻՀՊԿ-ն ոչ միայն բանակի հետ համատեղ պաշտպանում է երկրի սահմանները սպառնալիքի դեպքում, այլ նաև երկրի ներսում տեղի ունեցող դժգոհությունների, բողոքի ակցիաների ժամանակ ստանձնում է նաև ոստիկանության դերակատարություն: Միևնույն ժամանակ ԻՀՊԿ-ի ստորաբաժանումները զբաղված են երկրի գաղափարախոսության պաշտպանությամբ, օտար գաղափարախոսությունների՝ երկիր թափանցելու կանխմամբ, ինչպես նաև կարող են անհրաժեշտության դեպքում օտար երկրներում իրականացնել հատուկ գործողություններ, որոնք դուրս են իրանական բանակի լիազորությունների շրջանակից: Այս կառույցի պարտականություններից է նաև Մերձավոր և Միջին Արևելքի երկրներում իսլամական գաղափարախոսության տարածման գործառույթը:

Ակնհայտ է, որ ԻՀՊԿ-ն մասնակցում է նաև Իրանի արտաքին քաղաքական կուրսի ձևավորմանը, ինչպես նաև ազդեցություն ունի սոցիալ-տնտեսական ոլորտների զարգացման վրա: ԻՀՊԿ-ն դարձել է պետություն պետության ներսում: Ըստ էության, ԻՀՊԿ-ն ռազմաքաղաքական կառույց է, որն այսօր ստացել է վարչական, ոստիկանական և գաղափարական գործունեություն ծավալելու մեծ լիազորություններ: Առկա տեղեկատվության համաձայն, ԻՀՊԿ-ն այսօր նաև ներգրավված է Իրանի գործարար կյանքում, սակայն ներգրավվածության չափը և եկամուտները, շահույթը անհայտ են:

---

<sup>563</sup> **Юрий Сумбатян**, *Воины “Мировой исламской революции”* [https://nvo.ng.ru/forces/2001-08-24/3\\_revolution.html](https://nvo.ng.ru/forces/2001-08-24/3_revolution.html)

ԻՀՊԿ-ի՝ տնտեսության մեջ ներգրավվելու մասին խոսել է նաև ԻՀՀ Նախագահ Հասան Ռոհանին վերընտրվելուց երկու ամիս անց: Նա, ի մասնավորի, նշել է, որ «ԻՀՊԿ-ն ստեղծվել է «կառավարություն զենքով», որը «վախեցնում է» մասնավոր հատվածին»<sup>564</sup>:

Դրանից զատ, Նախագահ Հասան Ռոհանին ԻՀՀ Առաջնորդին ներկայացրել էր երկրի տնտեսության վիճակը և ճգնաժամի պատճառները. խոսելիս մատնացույց էր արել «կոռուպցիայի բարձր մակարդակը և տնտեսության վրա ԻՀՊԿ-ի զանգվածային վերահսկողության պատճառը», - նշում է Financial Times-ը՝ հղում անելով Առաջնորդի ազգականներից մեկին: «Բացի տնտեսական մտահոգություններից, Ալի Խամենեին անհրաժեշտություն է զգում փրկելու ԻՀՊԿ-ին (կոռուպցիայի ճիրաններից) և, բնականաբար, իր աջակցությունն է հայտնել այդ քայլին»<sup>565</sup>: Այստեղ արդեն ակնհայտ է դառնում, որ թե՛ երկրի Նախագահը և թե՛ երկրի Առաջնորդը գիտակցում են այն իրական ուժը, որ կուտակվել է ԻՀՊԿ-ի ձեռքում: Այն, ըստ էության, երկրում վարում է ստվերային կառավարության կամ, ավելի շուտ՝ խորքային պետության գործունեություն:

Իրականում տնտեսական ոլորտում առաջացած խնդիրները հիմնականում կապվում են **Իսաթամ օլ-Անբիա** կենտրոնի հետ, որի ինժեներական շտաբն ստեղծվել էր 1989 թ. իրանա-իրաքյան պատերազմից անմիջապես հետո՝ Իրանի Սահմանադրության 147-րդ հոդվածի համաձայն, ըստ որի՝ խաղաղ պայմաններում բանակի անձնակազմը կառավարությունը պետք է օգտագործի միայն բանակի տեխնիկական, փրկարարական, արտադրական և վերակառուցողական նպատակներով<sup>566</sup>:

Իսլամական հեղափոխությունից հետո ԻՀՊԿ շրջանակներում ստեղծված Իսաթամ օլ-Անբիա կառույցը, ըստ էության, բարձ-

---

<sup>564</sup> **Bozorgmehr N.**, “Iran cracks down on Revolutionary Guards business network”, Financial Times, 14 Sep. 2017.

<sup>565</sup> Ibid

<sup>566</sup> ԻՀՀ Սահմանադրություն, հոդված 147:

րագույն օրգանն էր թե՛ բանակի, թե՛ ԻՀՊԿ-ի համար: Խաթամ օլ-Անբիա կառույցը իրանա-իրաքյան պատերազմի ժամանակ հիմնականում պատասխանատու էր ռազմական գործողությունների համակարգման համար, և, ըստ էության, կառույցն սկսեց ստանձնել գլխավոր շտաբի գործառույթները, որի աշխատանքները ղեկավարում էր Ալի Խամենեին: 1983 թ. Խաթամ օլ-Անբիա շտաբի ղեկավար նշանակվեց Հաշեմի Ռաֆսանջանին: Պատերազմի ընթացքում այս կառույցը, փաստորեն, ոչ միայն զբաղվում էր ռազմական գործողությունների համակարգմամբ, այլև ուներ սեփական զորաջոկատները, որոնք մարտեր էին մղում թշնամու դեմ: Պատերազմի ավարտից հետո, ըստ էության, ստեղծվեց Խաթամ օլ-Անբիա վերականգնողական շտաբը, որի գլխավոր առաքելությունն էր՝ պատերազմից հետո վերացնել արհավիրքների հետևանքները, աջակցել հաշմանդամություն ստացած զինվորականներին և զոհված մարտիկների ընտանիքներին: Այս կառույցի երկու գործադիր թևերն են՝ շինարարական, վերականգնողական, օդային և հրետանային ջոկատները: Մինչ օրս էլ այն Իրանի ռազմական շտաբն է, որտեղ իրականացնում են զինված ուժերի համախմբման, նախագծերի իրականացման աշխատանքներ<sup>567</sup>:

Սկզբում Խաթամ օլ-Անբիայի հիմնական գործառույթն էր՝ աշխատանքի տեղավորել պատերազմից հետո զորացրված զինվորներին և վերականգնել ավերված տարածքները: Այդ նպատակներն իրականացնելու համար կառույցին տրվեցին որոշ լիազորություններ: Շուտով Խաթամ օլ-Անբիան ներգրավվեց խոշոր ենթակառուցվածքային նախագծերում: Ընկերության ազդեցությունը Իրանում մեծացավ, երբ 2005 թվականին Նախագահ ընտրվեց Մահմուդ Ահմադինեժադը<sup>568</sup>:

<sup>567</sup> *Gharargah-e markyazi-e Khatam-al-anbiya be ravayet-e tarikh*, <https://www.isna.ir/news/95050114395>

<sup>568</sup> *Правительство Ирана борется со стражами исламской революции за контроль над экономикой*, 19 мая 2016, <https://www.vedomosti.ru/economics/articles/2016/05/19/641661-irana-strazhami-revolutsii-kontrol-ekonomikoi>

Այս կառույցն այսօր էլ զգալի աշխատանք է իրականացնում պասիվ պաշտպանության կազմակերպման ծրագրերում: Մասնավորապես Խաթամ օլ-Անբիայի մասնաճյուղերն ակտիվորեն մասնակցել են նաև Ղոմի ուրանի հարստացման Ֆորդոու օբյեկտի կառուցման աշխատանքներին<sup>569</sup>, և այս փաստն արձանագրվել է ՄԱԿ-ի՝ 2010 թ. թիվ 1929-րդ բանաձևում:

Խաթամ օլ-Անբիա կենտրոնական շտաբի պաշտոնական կայքում կարելի է գտնել տեղեկություն Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի՝ տնտեսության մեջ ներգրավված լինելու վերաբերյալ: Մասնավորապես նշվում է, որ նշված կառույցը գործում է Իրանի Իսլամական Հանրապետության Ազգային անվտանգության բարձրագույն խորհրդի ենթակայության ներքո և իրականացնում է մատակարարման գործառույթներ ինչպես բանակի, այնպես էլ ԻՀՊԿ-ի համար: Կայքէջում հղումներ կան այն ոլորտներին, որտեղ կառույցը աշխատում է, ներառյալ հանքարդյունաբերության, նավթաքիմիական, առողջապահության և գյուղատնտեսության ոլորտներում: Սակայն ընկերությունների անունները չեն նշվում: Որոշ տնտեսագետներ և գործարարներ գտնում են, որ ԻՀՊԿ ընկերությունների ցանցը կարող է գնահատվել մոտ 100 միլիարդ դոլար: Ըստ Financial Times-ի՝ ԻՀՊԿ-ն նման լայնածավալ արտոնություններ ստացավ և բիզնեսի մեջ մտավ հատկապես Մահմուդ Ահմադինեժադի կառավարման շրջանում, երբ կորպուսին շնորհվեց պետական նախագծեր իրականացնելու իրավունք ռազմավարական այնպիսի ոլորտներում, ինչպիսին է, օրինակ, նավթագազայինը<sup>570</sup>:

Այսպիսով, կարելի է ասել, որ այսօր ԻՀՊԿ-ի ամենահզոր մարմինը Խաթամ օլ-Անբիան է, որն ստեղծվել է որպես ԻՀՊԿ-ի

---

<sup>569</sup> *Резолюция 1929 (2010)*, принятая Советом Безопасности на его 6335-ом заседании 9 июня 2010 года, стр. 17, <https://www.cbr.ru/Content/Document/File/124011/1929.pdf>

<sup>570</sup> **Bozorgmehr N.**, “Iran cracks down on Revolutionary Guards business network”, Financial Times, 14 Sep. 2017

շինարարական թնի գլխավոր շտաբ, սակայն այժմ հսկա հոլդինգ է, որը վերահսկում էր ավելի քան 812 գրանցված ընկերություն Իրանի ներսում կամ դրսում և պետական շուրջ 1700 պայմանագրերի կապալառու է<sup>571</sup>: Խաթամ օլ-Անբիա ինժեներա-շինարարական շտաբը 2018-19 թթ. նախատեսում էր իրականացնել 1180 տրիլիոն ռիալի (28 միլիարդ ԱՄՆ դոլար) խոշոր զարգացման 40 ծրագրեր, նշել է բրիգադային գեներալ Էբադոլլահ Աբդոլլահին: Փաստացի կառույցը վարում է արդյունաբերական և ենթակառուցվածքային զարգացման բազմամիլիարդանոց ծրագրեր, որոնցում ուղղակիորեն աշխատում է մոտ 200.000, իսկ անուղղակի՝ մինչև 1.000.000 մարդ<sup>572</sup>: Հայտնի իրանագետ Աբբաս Միլանին էլ նշում է, որ ԻՀՊԿ-ն երկրի տնտեսության 60%-ի նկատմամբ վերահսկողություն ունի<sup>573</sup>:

Financial Times-ը, հղում անելով ԻՀՊԿ-ի հետ համագործակցող ոմն գործարարի, մեջբերում է ստեղծված իրավիճակի հետ կապված նրա խոսքերը. «Ռոհանին ցանկանում է, որ ԻՀՊԿ-ն լինի հզոր ռազմական մարմին և հզոր հակաահաբեկչական ուժ Մերձավոր Արևելքում, բայց չգբաղվի կոսմետիկայի ներմուծմամբ», - ասել է գործարարը<sup>574</sup>: Այստեղից ստեղծվում է մի պատկեր, որ հիմնականում ԻՀՊԿ-ն է զբաղվում երկրում պահանջված տարբեր ապրանքների ներկրման գործընթացով: 2010 թվականին Հարավային Ֆարս գազային նախագծից (21 միլիարդ դոլար արժողությամբ) դուրս

---

<sup>571</sup> *The financial power of the Revolutionary Guards*, 15 Feb 2010, <https://www.theguardian.com/world/2010/feb/15/financial-power-revolutionary-guard>

<sup>572</sup> *Khatam al-Anbiya to Operationalize Projects Worth \$28b*, May 05, 2018, <https://financialtribune.com/articles/economy-domestic-economy/85831/khatam-al-anbiya-to-operationalize-projects-worth-28b>

<sup>573</sup> **Milani A., Sadjadpour K. Taking, Gary Sick, Tehran's Temperature: One Year On, panel at the Carnegie Endowment for International Peace**, 8 June 2010, <https://carnegieendowment.org/files/0609carnegie-tehran.pdf>, (22.06.2011)

<sup>574</sup> **Bozorgmehr N.**, "Iran cracks down on Revolutionary Guards business network", Financial Times, 14 Sep. 2017

եկան եվրոպական էներգետիկ ընկերությունները, քանի որ շահագործման պայմանագրերի մեծ մասն անցել էր ԻՀՊԿ-ի ձեռքը<sup>575</sup>:

Ըստ էության, Նախագահ դառնալուց անմիջապես հետո Հասան Ռոհանին կատարել է ԻՀՊԿ-ի դիրքերը թուլացնելու փորձեր, և նրա նախագահության գրեթե ողջ ժամանակահատվածում ակնհայտորեն զգացվում էր Նախագահ-ԻՀՊԿ հարաբերությունների լարվածությունը: ԻՀՊԿ-ն էլ իր հերթին ամեն ինչ անում էր՝ հասարակությունում Նախագահի և կառավարության դիրքերը թուլացնելու համար, միջամտում էր Արևմուտքի հետ Իրանի մերձեցման փորձերին: Հարաբերությունների այս լարմանն անդրադարձել էր ամերիկյան The Wall Street Journal թերթը «Իրանի կառավարությունը և ԻՀՊԿ-ն պայքարում են տնտեսության նկատմամբ վերահսկողության համար» հոդվածում: Խնդիրն առաջացել էր, երբ Թեհրան-Ղոմ-Սպահան ճեպընթաց երկաթգծի լայնածավալ ծրագրի կառուցման մեջ բաժնեմաս ունեցող Խաթամ օլ-Անբիան չափազանց բարձր գին էր պահանջել իր աշխատանքների համար, ինչն արձանագրել էր պետական հանձնաժողովը<sup>576</sup>:

ԻՀՊԿ-ն մեծացնում էր ճնշումները Նախագահի նկատմամբ: 2017 թ. կոռուպցիայի մեջ ներգրավված լինելու մեղադրանքով ձերբակալվեց Նախագահի եղբայր Հոսեյն Ֆերեյդունը<sup>577</sup> և դատապարտվեց հինգ տարվա ազատազրկման:

ԱՄՆ-ում գործող Ժողովրդավարությունների պաշտպանության հիմնադրամն էլ իր նյութերում ներկայացնում է, որ ԻՀՊԿ-ն իր ֆինանսավորման հարցում կախված չէ միայն պետական բյուջեից:

---

<sup>575</sup> *Правительство Ирана борется со стражами исламской революции за контроль над экономикой*, 19 мая 2016, <https://www.vedomosti.ru/economics/articles/2016/05/19/641661-irana-strazhami-revolutsii-kontrol-ekonomikoi>

<sup>576</sup> **Benoit Faucon, Stacy Meichtry and Asa Fitch**, *Iran's Government and Revolutionary Guards Battle for Control of Economy* <https://www.wsj.com/articles/irans-government-and-revolutionary-guards-battle-for-control-of-economy-1463584510>

<sup>577</sup> **Hossein Fereidoun**, *brother of Iran's president, is arrested*, 16 Jul 2017, <https://www.theguardian.com/world/2017/jul/16/hossein-fereidoun-hassan-rouhani-brother-iran-arrested>

Ռազմական ղեկավարությունը վերահսկում է Թեհրանի ֆոնդային բորսայում ներկայացված ընկերությունների շուկայական արժեքի հինգերորդ մասը և հազարավոր այլ ընկերությունների սեփականատեր է, որոնք բոլորն էլ եկամուտ են բերում զինված ուժերին: Բացի այդ, ԻՀՊԿ-ն վերահսկում է Իրանի ընդհատակյա տնտեսության զգալի մասը<sup>578</sup>: Նախորդ տարիներին մեջլիսի պատգամավորները, որոնցից շատերը ԻՀՊԿ նախկին ծառայողներ են, զգալիորեն մեծացրին պաշտպանական ոլորտի ծախսերը՝ գերազանցելով Նախագահի առաջադրած թվերը<sup>579</sup>:

Եվս մեկ անգամ արձանագրենք, որ ԻՀՊԿ-ն կանոնավոր բանակից տարբերվում է նրանով, որ հնարավորություն ունի մասնակցելու երկրի տարբեր խոշոր տնտեսական բնույթի գործարքներին և, պետական բյուջեից զատ, այլ եկամուտ ևս ունի: ԻՀՊԿ-ի և կանոնավոր բանակի տարբերությունը նաև այն է, որ ԻՀՊԿ-ի մեջ կան կառույցներ, որոնք չկան կանոնավոր բանակում. դրանք են՝ Ալ-Ղոդս, Բասիջ և Անսար Ալ-Մահդի ստորաբաժանումները:

ԻՀՊԿ կառույցը պատկերացնելու համար արձանագրենք, որ այն ունի երկրի սահմաններից դուրս գործողություններ իրականացնելու լիազորություններ, ինչպես նաև ներգրավված է սահմանների պաշտպանության գործում: Ունի կոնկրետ բաժիններ, որոնք զբաղվում են երկրի ներսում առաջացած տարատեսակ խնդիրների լուծմամբ, սկսած երկրում ծայր առած անհնազանդության հարցերի կարգավորումից, տեղեկատվության հավաքումից, ահաբեկչական գործողությունների կանխումից, վերջացրած անառողջ գաղափարախոսության դեմ պայքարելով: ԻՀՊԿ-ն ունի հրամանատարություն, որն անմիջականորեն ենթարկվում է Առաջնորդին: ԻՀՊԿ-ն բանակի նման ունի ծովային ուժեր, որոնք հիմնականում վերա-


---

<sup>578</sup> **Saeed Ghasseminejad, Tzvi Kahn**, *New Iranian Draft Budget Slashes Military Spending*, <https://www.fdd.org/analysis/2019/01/08/new-iranian-draft-budget-slashes-military-spending/>

<sup>579</sup> Նույն տեղում:

հսկում են Պարսից ծոցը, ցամաքային ուժեր, օդատիեզերական ուժեր, որոնց մեջ են մտնում նաև հրթիռային զորքերը: ԻՀՊԿ-ի ենթակայության տակ են գործում հետախուզությունը, հակահետախուզությունը, Ալ-Ղոդսի ստորաբաժանումը, Անսար Ալ-Մահդիին և Բասիջը՝ աշխարհագորը. վերջիններիս նման այլ կառույցներ բանակում չկան:

**ԻՀՊԿ գծապատկերը ներկայացնում ենք ստորև<sup>580</sup>.**



<sup>580</sup> Morad Veisi, A look at Three decades of Iran's Secretive Quds Force, 08.01.2020, [www.rferl.org](http://www.rferl.org)

Ըստ էության, ԻՀՊԿ-ն մարտական առաջին թրծվածությունն ստացավ իրանա-իրաքյան պատերազմում, որից հետո էականորեն աճեցին դրա տեղն ու դերը երկրում:

ԻՀՊԿ զորքերի անձնակազմի թիվը հստակ ասելն անհնար է՝ հաշվի առնելով կառույցի խիստ գաղտնիությունը, սակայն որոշակի տեղեկատվություն առկա է: Ըստ ԱՄՆ Կենտրոնական հետախուզական վարչության 2021 թ. տեղեկությունների՝ ԻՀՊԿ-ում ծառայություն անցնողների թիվը հասնում է մոտավորապես 150-190,000-ի, որոնցից 100-150,000-ը՝ ցամաքային ուժերում<sup>581</sup>: Այս թիվը ամրագրված է նաև հեղինակավոր The Military Balance (Ռազմական հավասարակշռություն) 2023 թ. հրատարակությունում: Ըստ նույն հրատարակության՝ ԻՀՊԿ-ն ունի 31 նահանգային կորպուս, որից 2-ը՝ Թեհրանում<sup>582</sup>:

ԻՀՊԿ ցամաքային ուժերն առաջին հերթին աչքի են ընկնում բարոյական և քաղաքական բարձր ոգով, իսլամական հեղափոխության և ընդհանրապես իսլամի գաղափարներին նվիրվածությամբ, ինչպես նաև լավ պատրաստված բազմաթիվ պահեստազորայիններով: ԻՀՊԿ-ի ցամաքային զորքերը գլխավորում է հրամանատարը, որը ենթարկվում է ԻՀՊԿ-ի միացյալ շտաբի պետին և նրա միջոցով՝ ԻՀՊԿ-ի գլխավոր հրամանատարին, Իրանի զինված ուժերի գլխավոր շտաբի պետին, որն էլ ուղիղ ենթարկվում է երկրի Առաջնորդին<sup>583</sup>:

ԻՀՊԿ-ի **օդատիեզերական ուժերի** մեջ են ներառված ինչպես ռազմաօդային ուժերը, այնպես էլ հրթիռային զորքերը: Ըստ ԿՀՎ-ի տվյալների՝ օդատիեզերական ուժերում ծառայում է 15 հա-

---

<sup>581</sup> *Military and security service personnel strengths*, Iran, The World Factbook, <https://www.cia.gov/the-world-factbook/countries/iran/>.

<sup>582</sup> *The Military Balance*, 2023, p. 325.

<sup>583</sup> **Сажин В.И.** (2017). *Корпус стражей исламской революции Ирана – государство в государстве*. Контуры глобальных трансформаций: политика, экономика, право, 10 (3). 83-109. DOI: 10.23932/2542-0240 -2017-10-3-83-109, стр. 95.

զար մարդ<sup>584</sup>, սակայն Վ. Սաժինը նշում է 20 հազար զինծառայողի մասին<sup>585</sup>: Վերջինս նշում է, որ Իրանի ԻՀՊԿ օդատիեզերական ուժերն ունեն երեք օդային բազա, 11 օդային խումբ, վեց հրթիռային բրիգադ, ինքնաթիռների կապի և կառավարման մեկ ջոկատ, օդային ուսուցման մեկ խումբ, երկու ուսումնական կենտրոն: Առկա է 72 մարտական ինքնաթիռ, այդ թվում՝ 40 կործանիչ, ութ գրոհային ինքնաթիռ, 24 միավոր ՀՕՊ կործանիչ ինքնաթիռ: ԻՀՊԿ օդատիեզերական ուժերն ունեն զինված ուժերին աջակցող այլ տեսակի ինքնաթիռներ ևս, այդ թվում՝ կապ ապահովող՝ 180, տրանսպորտային՝ 26, ուսուցողական՝ 90 ինքնաթիռ, 25 ուղղաթիռ<sup>586</sup>:

Կառուցվածքային առումով ԻՀՊԿ օդատիեզերական ուժերի վերահսկողության տակ են գտնվում հրթիռային զորքերը («Ալ-Լադիիր» հրթիռային հրամանատարությունը), «Շահար 1», «Շահար 2», «Շահար 3» հրթիռները: Ալ-Լադիիր հրթիռային հրամանատարությունը 2010 թ. հայտնվեց Եվրամիության «սև ցուցակում», քանի որ մեղադրվեց Իրանի միջուկային ոլորտի հետ կապ ունենալու մեջ<sup>587</sup>: Օդատիեզերական ուժերի վերահսկողության տակ են գտնվում ՀՕՊ զորքերը, կառավարվող ավիացիան և ԻՀՊԿ անօդաչու թռչող սարքերը: ԻՀՊԿ օդատիեզերական ուժերը ղեկավարվում են Թեհրանում տեղակայված շտաբի կողմից՝ հրամանատարի գլխավորությամբ:

2020 թ. ապրիլի 22-ին ԻՀՊԿ օդատիեզերական ուժերը հաջողությամբ տիեզերք են բաց թողել ռազմական նշանակության ա-

---

<sup>584</sup> *Military and security service personnel strengths*, Iran, The World Factbook, <https://www.cia.gov/the-world-factbook/countries/iran/> .

<sup>585</sup> **Сажин В.И.** (2017). *Корпус стражей исламской революции Ирана – государство в государстве*. Контуры глобальных трансформаций: политика, экономика, право, 10 (3). 83-109. DOI: 10.23932/2542-0240 -2017-10-3-83-109, стр. 96

<sup>586</sup> **Сажин В.И.** (2017). *Корпус стражей исламской революции Ирана – государство в государстве*. Контуры глобальных трансформаций: политика, экономика, право, 10 (3). 83-109. DOI: 10.23932/2542-0240 -2017-10-3-83-109, стр. 96

<sup>587</sup> *IRGC-Air Force Al-Ghadir Missile Command*, <https://www.iranwatch.org/iranian-entities/irgc-air-force-al-ghadir-missile-command>

ռաջին արբանյակը, որը դուրս է եկել ուղեծիր՝ տեղակայվելով 425կմ բարձրության վրա՝ երկաստիճան «Ղասեդ» հրթիռակիրների աջակցությամբ: «Նոու» անվամբ իրանական հրթիռն արձակվել է Իրանի կենտրոնական Սեմնան նահանգի տիեզերակայանից: Աշխատանքներ են իրականացվում «Սոումառ» և «Սիմորդ» տիպի միջմայրցամաքային հրթիռների գործարկման ուղղությամբ<sup>588</sup>:

Առկա տեղեկատվության համաձայն, Իրանի տարբեր շրջաններում կառուցվել են ստորգետնյա հրթիռային բազաներ, սակայն տեղեկության սուղ լինելու պատճառով հնարավոր չէ ամբողջական պատկերացում կազմել հրթիռային ամբողջ ներուժի վերաբերյալ: Այս մասին 2015 թ. Իրանը արդեն բացահայտ խոսեց<sup>589</sup>, անգամ ակնարկելով, որ Իրանի շատ քիչ շրջաններում է, որ ստորգետնյա նման բազաներ դեռ չկան:

ԻՀՊԿ հաջորդ գորատեսակն է **ռազմածովային ուժերը**, որոնք, ըստ ԿՀՎ տվյալների, կազմում են 20 հազար մարդ, իսկ Սաժինը նշում է, որ կառույցն ավելի քան 23 հազար զինծառայող ունի: Այս կառույցի գլխավոր խնդիրն է՝ ապահովել ոչ միայն Պարսից ծոցի ափամերձ ջրերի, այլև Պարսից և Օմանի ծոցերի ջրատարածությունների, ինչպես նաև Հորմուզի նեղուցի պաշտպանությունը: Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ Կասպից ծովը չի մտնում ԻՀՊԿ ռազմածովային ուժերի ուղիղ վերահսկողության ներքո: Կասպից ծովում իրենց գորավարժություններն իրականացնում են Իրանի բանակի ռազմածովային ուժերը. վերջին անգամ

---

<sup>588</sup> *Военно-экономическое развитие и безопасность*, Под ред. Л.В. Панкова, О.В. Гусарова, М, 2020, стр. 293. <https://www.imemo.ru/files/File/ru/publ/2020/VoenEconRazvitye.pdf>, стр. 293.

<sup>589</sup> *Iran shows off secret underground missile base in new video*, Oct 16, 2015, CNN, <https://www.youtube.com/watch?v=xM1kevVVVok>

գորավարժություն անցկացվել է 2020 թ.՝ Իրան-Ադրբեջան լարված հարաբերությունների ժամանակահատվածում<sup>590</sup>:

ԻՀՊԿ ռազմածովային ստորաբաժանումների մարտական կազմը բաղկացած է չորս հրամանատարությունից, ռազմածովային հինգ շրջաններից՝ Շահիդ Բահոնար, Բուշեիր, Բանդար Մահշահիր, Ասալույե և Բանդար Լենգե<sup>591</sup>: Ռազմածովային շրջանի հրամանատարներն ամենօրյա պատասխանատվություն են կրում իրենց շրջաններում տեղի ունեցող գործունեության համար: Շտաբը գտնվում է Բանդար Աբբասում:

ԻՀՊԿ ռազմածովային ուժերում առկա է ռազմանավային երկու բրիգադ, մարտական մոտորանավային երկու բրիգադ, Սինա տիպի հրթիռային մոտորանավակների երկու դիվիզիոն, գերփոքր սուզանավերի երկու դիվիզիա, փոքր սուզանավերի երկու դիվիզիա, երկու հականավային հրթիռային բրիգադ, շարժական հականավային հրթիռների 4-6 հրթիռային գումարտակ, ծովային երկու բրիգադ, առափնյա պահպանության չորս բրիգադ, վեց ուսումնական կենտրոն, մեկ ուղղաթիռային հականավային հրթիռային ջոկատ<sup>592</sup>:

ԻՀՊԿ ռազմածովային ուժերը 2019 թ. ցուցադրեցին Իրանի կողմից մշակված ևս մեկ տեսակի հրթիռ՝ սուզանավից արձակվող թևավոր հրթիռը, որն առաջին անգամ փորձարկվեց փետրվարին Պարսից ծոցում<sup>593</sup>: ԻՀՊԿ ռազմածովային ուժերի ենթակայության տակ են գտնվում 12 փոքր սուզանավ, 9 գերփոքր սուզանավ, դե-

---

<sup>590</sup> *Корабли Каспийской флотилии и ВМС Ирана артиллерийским огнём уничтожили морские силы НВФ в рамках СКШУ «Кавказ-2020*, 24.02.2020, [https://function.mil.ru/news\\_page/country/more.htm?id=12316092@egNews](https://function.mil.ru/news_page/country/more.htm?id=12316092@egNews)

<sup>591</sup> **Iranian Naval Forces**, *A Tale of Two Navies*, Published by the Office of Naval Intelligence, February 2017, p. 15.

<sup>592</sup> **Сажин В.И.** (2017). *Корпус стражей исламской революции Ирана – государство в государстве. Контуры глобальных трансформаций: политика, экономика, право*, 10 (3). 83-109. DOI: 10.23932/2542-0240 -2017-10-3-83-109, стр. 97.

<sup>593</sup> *Военные Ирана осуществили первый запуск крылатой ракеты с подлодки*, 25.02. 2019, Fars News Agency, <https://www.youtube.com/watch?v=hxaqIF3hVBI>

սանտային 9 նավ, 230 մարտական մոտորանավակ, հականավային հրթիռների արձակման 80 տեղակայանք, այդ թվում՝ 40 միավոր «С-801 Կառուզ» տեսակի, НУ-2 (40 միավոր С-802 «Տոնդառ» տեսակի) արձակման 40-60 շարժական կայանք (հականավային հրթիռներ), 4 միավոր «Мн-17» («Мн-8») ուղղաթիռ՝ Նուռ տիպի հականավային հրթիռներով, 24 միավոր դաշտային հրետանի, 72 ականանետ<sup>594</sup>:

Պետք է արձանագրել, որ վերը նշված ռազմական տարատեսակ ուժերից բացի, Իրանում փորձում են զարգացնել նաև ռազմական արդյունաբերությունը: Քանի որ Իրանն ավելի քան 40 տարի գտնվում է Միացյալ Նահանգների, ինչպես նաև ՄԱԿ-ի ԱԽ տարատեսակ պատժամիջոցների տակ, արտերկրից ռազմամթերք ձեռք բերելը բավականին բարդ է: Իսկ առանց նորացված ռազմական արդյունաբերության, որքան էլ մարտունակ լինի բանակը, Իրանը ներկայումս չի կարող լուծել իր առջև դրված խնդիրները: Այսպիսով, ԻԻՀ-ը մեծ գումարներ է հատկացնում՝ սեփական ռազմարդյունաբերությունն ունենալու համար. ռազմարդյունաբերության գիտաարտադրական բազայի կառուցումն իրականացվել է 1997–2021 թթ. «Իրան-1400» պետական ծրագրի շրջանակներում<sup>595</sup>:

Ստոկհոլմի Խաղաղության միջազգային հետազոտությունների ինստիտուտի տարեգրքի համաձայն, 2018 թվականին Իրանի ռազմական բյուջեն կազմել է 13,2 միլիարդ դոլար: Դա թույլ է տվել երկրին՝ ռազմական ծախսերի առումով զբաղեցնել աշխարհում 25-րդ տեղը<sup>596</sup>: Բացի այդ, հանրապետությունում թույլա-

---

<sup>594</sup> **Сажин В.И.** (2017). *Корпус стражей исламской революции Ирана – государство в государстве*. Контуры глобальных трансформаций: политика, экономика, право, 10 (3). 83-109. DOI: 10.23932/2542-0240 -2017-10-3-83-109, стр. 97.

<sup>595</sup> *Военно-экономическое развитие и безопасность*, Под ред. Л.В. Панкова, О.В. Гусарова, М., 2020, с. 299. <https://www.imemo.ru/files/File/ru/publ/2020/VoenEconRazvitye.pdf>

<sup>596</sup> **Pieter D. Wezeman and Alexandra Kuimova**, Military Spending and Arms Imports by Iran, Saudi Arabia, Qatar and the UAE, May 2019, SIPRI Fact Sheet, [https://www.sipri.org/sites/default/files/2019-05/fs\\_1905\\_gulf\\_milex\\_and\\_arms\\_transfers.pdf](https://www.sipri.org/sites/default/files/2019-05/fs_1905_gulf_milex_and_arms_transfers.pdf)

տրվում է նաև, այսպես կոչված, ստվերային տնտեսության միջոցով ռազմական ծախսերի որոշակի հոդվածների արտաբյուջետային կամ քողարկված ֆինանսավորումը:

Ինչպես վերը նշեցինք, Իրանի ղեկավարությունն ստիպված էր ոչ միայն ջանքերը կենտրոնացնել ազգային հետազոտական և մշակման աշխատանքների, արտերկրում նախորդ տարիներին գնված զենքի մարտունակության արդիականացման, պահպանման և ազգային ռազմական արդյունաբերության ստեղծման վրա, այլ նաև գտնել զենքի մատակարարման նոր աղբյուրներ: Իրանի ռազմական տեխնիկան համալրվում է հիմնականում Ռուսաստանի, Չինաստանի միջոցով: 1995–2000-ական թվականներին Իրանի և ՌԴ-ի միջև ռազմատեխնիկական համագործակցությունը դադարեցվել էր ԱՄՆ-ի ճնշման ներքո, սակայն արդեն 2000–2007 թթ. ՌԴ-ին բաժին էր ընկնում Իրանի ռազմական ներմուծման շուրջ 85%-ը<sup>597</sup>: 2025 թ. հունվարի 17-ին Իրանի և ՌԴ-ի միջև կնքվեց «Ռուսաստանի և Իրանի միջև համապարփակ ռազմավարական գործընկերության մասին համաձայնագիր»:

### **Բասիջ-Sāzmān-e Basij-e Mostaz'afin**

ԻՀՊԿ-ի ներքո գործող հաջորդ կառույցը, որն առավել հայտնի է Բասիջ անվամբ, ստեղծվել է 1979 թվականի դեկտեմբերին ազգային աշխարհագրի հիմքի վրա: ԻԻՀ Սահմանադրության 151-րդ հոդվածով ամրագրվեցին դրա տեղն ու դերը Իրանի քաղաքական, ռազմական ոլորտում: Սահմանադրության 151-րդ հոդվածում նշված է. «ձեր կարողության սահմաններում նրանց համար պատրաստե՛ք ուժեր և հեծյալ ջոկատներ և դրանցով կսարսափեցնեք Ալլահի և ձեր ժողովրդի թշնամիներին, դրա հետ մեկտեղ՝ նաև մյուսներին»։ Կառավարությունը պարտավոր է բոլոր քաղաքացի-

---

<sup>597</sup> *Военно-техническое сотрудничество Ирана и России*. Досье, 19 янв 2015, <https://tass.ru/info/1707163>

ների համար նախատեսել և իսլամական նորմերին համապատասխան ստեղծել ռազմական պատրաստության պայմաններ, որպեսզի բոլորը կարողանան ի գործու լինել՝ զինված պաշտպանելու երկիրն ու Իսլամական Հանրապետության համակարգը: Միևնույն ժամանակ զենք ունենալ կարելի է միայն պաշտոնական մարմինների թույլտվությամբ<sup>598</sup>: Արդեն 1980 թ. Իրանում կյանքի կոչվեց «Իրանի ընչագուրկ ժողովրդի մոբիլիզացիայի կազմակերպությունը»՝ «Բասիջ»-ը: Բասիջի ներկայացուցիչներն իրենց մարտական մկրտությունն ստացան Իսլամական հեղափոխությունից անմիջապես հետո բռնկված իրանա-իրաքյան պատերազմի ընթացքում: Հենց նրանք էին «ապահովում մարդկային ալիք» կոչվածը. ԻԻՀ քաղաքացիները զոհվում էին հանուն իրենց կրոնի ու սկզբունքների՝ դառնալով շահիդներ: Իրանա-իրաքյան պատերազմի ժամանակ մարտի դաշտում զոհվել են 11 և բարձր տարիքի Իրանի քաղաքացիներ, այդ թվում՝ աղջիկներ ու կանայք, որոնք անմնացորդ հավատացել են, որ մարտիրոսանալով հայտնվելու են դրախտում: Նրանք իրենց հետ մշտապես ունեցել են դրախտի «բանալիները»<sup>599</sup>: Հատկանշական է, որ Բասիջի կողմից գործադրվող այդ մարդկային ալիքը հոգեբանական ծանր հարված էր հասցնում Իրաքի զինվորներին, քանզի տեսնում էին վատ զինված Բասիջի անդամներին, որոնք մոլեռանդությամբ կռվում էին հանուն իրենց գաղափարների և հայրենիքի: Իրանա-իրաքյան պատերազմի ընթացքում Բասիջն ամենից շատ զոհ տված ռազմական կառույցն էր: Պատերազմի ավարտից հետո Բասիջի ներկայացուցիչներն իշխանություններից պահանջեցին իրենց տրամադրել որոշակի լիազորություններ և արտոնություններ՝ երկրի պետականաշինությանը մասնակցելու համար: Առաջնորդ Ալի Խամենեին արձագանքեց

<sup>598</sup> ԻԻՀ *Սահմանադրություն*, հոդված 151:

<sup>599</sup> Մարտիրոսության գնացող ԻԻՀ քաղաքացիների վզից կախված էին լինում պլաստիկ փոքրիկ բանալիներ, որպեսզի «դրախտ հասնելուն պես հնարավորություն ունենան այդ բանալիներով բացելու դռները», քանզի զոհվել էին հանուն հայրենիքի:

Բասիջում աճող հիասթափությանը՝ խնդրելով կառավարությանը՝ մեծացնել ֆինանսական աջակցությունը բասիջիներին, և, այդպիսով, 1992 թ. հիմնվեց Բասիջի համագործակցության հիմնադրամը (Bonyad-e Taavon-e Basij), որի նպատակն էր սոցիալական աջակցություն ցուցաբերել նրանց<sup>600</sup>: Արդյունքում Իրանի իշխանությունները մեծացրին ինչպես ԻՀՊԿ-ի, այնպես էլ Բասիջի դերն ու գործունեության ոլորտը երկրի ներքաղաքական կյանքում: 1994 թվականին Ալի Խամենեիի կարգադրությամբ Բասիջի ներկայացուցիչները և պատերազմի վետերաններն այդուհետ պետք է առաջնահերթություն ունենային՝ նոր սեփականաշնորհված ընկերություններում բաժնետոմսեր գնելու դեպքում<sup>601</sup>:

Խամենեին, ըստ էության, աստիճանաբար հզորացնում էր ինչպես ողջ ԻՀՊԿ-ն, այնպես էլ, ի մասնավորի, Բասիջի ինստիտուտը: Առաջնորդի անմիջական ենթակայության տակ գտնվող բոնյադների<sup>602</sup> միջոցով մեկնարկեց հավելյալ աջակցությունը Բասիջին: Փաստացի այսօր էլ բոնյադները պետության անբաժանելի մասն են<sup>603</sup>, և դրանց միջոցով լուծվում են տարատեսակ խնդիրներ:

1996 թ. Մեջլիսը հաստատեց Բասիջի ընդլայնման ծրագիրը և Բասիջի կոոպերատիվ հիմնադրամի լիազորությունները, որը ներառում էր.

1. Բասիջիների բնակարանային հաստատությունը,
2. Բասիջիների անտոկոս վարկի ինստիտուտը,

---

<sup>600</sup> **Saeid Golkar**, *Paramilitarization of the Economy: The Case of Iran's Basij Militia*, *Armed Forces & Society*, Vol. 38, No. 4 (2012), p. 628.

<sup>601</sup> **Saeid Golkar**, *Paramilitarization of the Economy: The Case of Iran's Basij Militia*, *Armed Forces & Society*, Vol. 38, No. 4 (2012), p. 629.

<sup>602</sup> Բոնյադները, ըստ էության, կիսամասնավոր բարեգործական իսլամական հիմնադրամներ են, որոնք ուղղակի ենթարկվում են Առաջնորդին և, ամենակարևորը, ենթակա չեն խորհրդարանական վերահսկողության:

<sup>603</sup> *Иран: оппозиционные политические группы, силовые структуры, избранные проблемы в области прав человека, верховенство права Сборник ИСП*. Виенна 2015 г., стр. 93.

3. Բասիժիներին սպառողական ապրանքների տրամադրման հաստատությունը,

4. Իսլամի մարտիկների մշակութային ինստիտուտը,

5. Մարտիկների գիտամանկավարժական ծառայությունների ինստիտուտը<sup>604</sup>,

6. Բասիժների բժշկական հաստատությունը<sup>605</sup>:

Ընդհանուր առմամբ, Բասիժի անդամները հավաքագրվում են երկու ձևով. նախ, նրանք նշանակվում են Իրանի ողջ տարածքում գործող ավելի քան 40.000 Բասիժ բազաներից մեկում (Paygha-e Basij): Այնուհետև նրանք խմբավորվում են մարտական գումարտակների և միավորվում ԻՀՊԿ-ի ցամաքային ուժերի հետ: Թեև Իրանը պաշտոնապես պնդում է, որ ամբողջ Իրանում կա Բասիժի ավելի քան 15 միլիոն անդամ, ըստ Գոլքարի գնահատականի, Իրանում ներկայումս կա մոտ 3 միլիոն կանոնավոր անդամ, 800.000 գործող անդամ և 200.000 հատուկ անդամ<sup>606</sup>: 2008 թ. կառավարությունը հայտնել էր, որ Բասիժի կազմում ծառայում է 13.639.722 քաղաքացի. ստացվում էր, որ Իրանի յուրաքանչյուր 5-րդ քաղաքացին այդ ժամանակահատվածում ենթադրաբար այդ կառույցի անդամ է<sup>607</sup>: Նույն 2008 թ. հաշվվում էր Բասիժի նահանգային 300 գրասենյակ, սակայն 2009 թ. քաղաքական զարգացումներից հետո դրանց թիվն ավելացավ: Օրինակ, մինչ 2009 թ. միայն Թեհրանում գործում էր Բասիժի տարածքային վեց գրասենյակ,

---

<sup>604</sup> **Ali Alfoneh**, *Iran Unveiled: How the Revolutionary Guards Is Turning Theocracy into Military Dictatorship*, Washington, 2013, p. 182.

<sup>605</sup> **Saeid Golkar**, *Paramilitarization of the Economy: The Case of Iran's Basij Militia*, *Armed Forces & Society*, Vol. 38, No. 4 (2012), pp. 628–629.

<sup>606</sup> **Saeid Golkar**, *Paramilitarization of the Economy: The Case of Iran's Basij Militia*, *Armed Forces & Society*, Vol. 38, No. 4 (2012), pp. 627–628, (pp. 625–648), DOI: 10.1177/0095327X12437687

<sup>607</sup> **Saeid Golkar**, *Captive Society: The Basij Militia and Social Control in Iran*, Woodrow Wilson Center Press, Washington, 2015, p. 52.

իսկ արդեն 2013 թ.՝ 23 գրասենյակ<sup>608</sup>: Բացի գրասենյակներից, յուրաքանչյուր նահանգում առկա են գործող գումարտակներ, և ըստ Յուրևի՝ յուրաքանչյուր նահանգում կա 15-ից 50 գումարտակ<sup>609</sup>:

Այսօր Բասիջը վերածվել է համապետական հասարակական կազմակերպության, որն իր ներկայացուցիչներն ունի դպրոցներում, համալսարաններում, գործարաններում, արհմիություններում, գրասենյակներում և մզկիթներում: Կազմակերպությանը տրվեց նաև իսլամական բարոյական նորմերի պահպանման նկատմամբ օրինական վերահսկողության թույլտվություն: Արդյունքում դրանց անդամները հասարակական վայրերում քաղաքացիների վարքականոնների նկատմամբ վերահսկողություն սահմանելու և քաղաքական գործունեության ոլորտ մուտք գործելու փաստացի իրավունք ստացան<sup>610</sup>: 1990-ականներին հենց Բասիջն էր հետամուտ լինում, որ հասարակության կյանքում պահպանվեն իսլամական նորմերը: Սա վերաբերում էր թե՛ հասարակական վայրերում կանանց ու տղամարդկանց հանդերձանքին, թե՛ կին-տղամարդ հարաբերություններին, այդ թվում՝ նաև հասարակական տրանսպորտից օգտվելու կանոններին, ինչպես նաև իսլամական սզո տոներն ըստ պատշաճի նշելուն, որի ժամանակ երգ ու պարն արգելված էին: Բասիջին նաև տրվեց իրավունք՝ բացահայտելու Իսլամական Հանրապետության գաղափարական այլախոհներին, որից հետո նրանցով կզբաղվեին ԻԻՀ պետական համակարգի իրավապահ կառույցները: Բասիջի դերը կրկին մեծացավ 1999 թ. Իրանում հակապետական ցույցերից հետո: Այս ցույցերի ցրման գործում մեծապես ներգրավվեցին Բասիջի ուժերը:

---

<sup>608</sup> **Saeid Golkar**, *Captive Society: The Basij Militia and Social Control in Iran*, p. 33.

<sup>609</sup> **Юрьев М.М.** *Силы сопротивления «Басидж» в оборонной политике ИРИ*, 2006, <http://www.iimes.ru/?p=5201>

<sup>610</sup> **Afshon Ostovar**, *Iran's Basij: Membership in a Militant Islamist Organization*, *Middle East Journal*, Vol. 67, No. 3 (Summer 2013), p. 349.

Բասիջի լիազորությունների մեջ ներառվեցին նաև խաղաղ բնակչության գորակոչը, քարոզչությունը և ուսուցումը: Բասիջի գորակազմը ռազմական գործողությունների բռնկման դեպքում օգտագործվում է՝ ԻՀՊԿ-ի ստորաբաժանումները համալրելու և աշխարհագրի նոր մարտական ստորաբաժանումներ ձևավորելու համար<sup>611</sup>:

1990-ական թվականների վերջին և 2000-ականների սկզբներին Բասիջի դերակատարությունը Իրանի կյանքում ռազմականից անցում կատարեց դեպի ամբողջովին հասարակական ոլորտ, քանզի Իրանն այլևս ներքաշված չէր որևէ մեծ ռազմական գործողության մեջ: Բասիջը հիմնականում զբաղված էր այլախոհների հայտնաբերմամբ, հասարակական կարգի պահպանմամբ և անհնազանդությունների ճնշմամբ: Իրականում երկրի ներսում առաջացած հուզումների մեծ մասը, 2000-ականներից սկսած, ճնշվել են Բասիջի միջոցով. այդ խնդրին ընդհանրապես չի մասնակցում Իրանի բանակը՝ արթեշը, և ամեն ինչ արվում է, որ չմասնակցեն նաև ԻՀՊԿ մյուս ստորաբաժանումները: Նպատակն է՝ փորձության չենթարկել ԶՈՒ ծառայողների բարոյահոգեբանական վիճակը. զինվորը չի կարող կռվել սեփական ժողովրդի դեմ: Իրանի իշխանություններն այսպիսով փորձում են կանխել նաև քաղաքացիների բացասական վերաբերմունքը ԶՈՒ-ի նկատմամբ, և երկրորդ՝ բոլորին ցուցադրվում է, որ ժողովրդական շարժումները հանդարտեցվում են հենց ժողովրդական աշխարհագրի՝ Բասիջի միջոցով<sup>612</sup>:

Ըստ Մ. Յուրևի՝ Բասիջը բաժանվում է երեք խմբի՝ **սովորական Բասիջ, գործող Բասիջ և հատուկ Բասիջ**: Սովորական Բասիջի մեջ ընդգրկվում են այն քաղաքացիները, որոնք հավատարիմ են Սահմանադրությանը և իսլամական հեղափոխության նպատակ-

---

<sup>611</sup> *Мощь Востока: каков военный потенциал Ирана*, [https://tass.ru/armiya-i-opk/3209054?utm\\_source=google.com&utm\\_medium=organic&utm\\_campaign=google.com&utm\\_referrer=google.com](https://tass.ru/armiya-i-opk/3209054?utm_source=google.com&utm_medium=organic&utm_campaign=google.com&utm_referrer=google.com)

<sup>612</sup> Под ред. М.С. Каменева, *40 лет Исламской Республики Иран*, Москва, 2020, стр. 97.

ներին, և, անցնելով ընդհանուր ռազմական պատրաստվածություն, համալրում են 20-միլիոնանոց բանակի շարքերը<sup>613</sup>: Գործող Բասիջի շարքերը համալրվում են սովորական Բասիջից, որոնք, ինքնակամ անցնելով ռազմական պատրաստվածության հատուկ դասընթացներ, անցնում են ծառայության ԻՀՊԿ-ի ստորաբաժանումներում: Հատուկ Բասիջը ԻՀՊԿ-ի անձնակազմն է, որն անցել է օրենքով սահմանված ռազմական պատրաստության բոլոր փուլերը և անհրաժեշտության դեպքում պատրաստ է միանալու ԻՀՊԿ-ի կանոնավոր ստորաբաժանումներին:

Սովորական և գործող Բասիջի կադրերի պատրաստումը տեղի է ունենում հետևյալ փուլերով.

ա) ընդհանուր հիմնական վերապատրաստման դասընթաց, որը տևում է 15 օր,

բ) ընդհանուր լրացուցիչ վերապատրաստման դասընթաց, որը տևում է 45 օր,

գ) հատուկ վերապատրաստման դասընթաց, որին հավելյալ մեկ ամիս մասնակցում են՝ նախորդ երկուսը անցնելուց հետո,

դ) մարտական պատրաստության պահպանման կուրս<sup>614</sup>:

Ֆինանսական տարատեսակ ցանցերի մեջ ներգրավվելով՝ Բասիջի ներկայացուցիչներն սկսեցին ներթափանցել նաև քաղաքային ոլորտ: Թեհրանի քաղաքային խորհուրդը 2003 թ. Թեհրանի քաղաքապետ նշանակեց Բասիջի դասախոսական կազմակերպության (Lecturer Basij organization) անդամ Մահմուդ Ահմադինեժանին: Քաղաքապետ նշանակվելուց հետո Ահմադինեժանն աջակցեց Բասիջի ավելի շատ ներգրավմանը քաղաքային նախագծերում՝ հրավիրելով Բասիջի ինժեներներին և դասախոսներին՝

---

<sup>613</sup> Ըստ Իրանի ռազմական դոկտրինի՝ հնարավոր պատերազմի դեպքում Իրանը պետք է կարողանա մոբիլիզացնել և ստանալ «20 միլիոնանոց Իսլամական բանակ»:

<sup>614</sup> **Юрьев М.М.** *Силы сопротивления «Басидж» в оборонной политике ИРИ*, 2006, <http://www.iimes.ru/?p=5201>

միանալու Թեհրանի քաղաքային կառավարմանը<sup>615</sup>: Ուշագրավ է, որ 2004 թվականի փետրվարին Մեջլիսում ընտրված 152 նոր անդամներից 91-ը կապ են ունեցել ԻՀՊԿ-ի հետ, իսկ ԻՀՊԿ-ի նախկին 34 սպաներ այդ ժամանակահատվածում բարձր պաշտոններ էին զբաղեցնում կառավարությունում<sup>616</sup>:

Բասիջի տեղն ու դերը մեծացան հատկապես 2005 թվականի նախագահական ընտրություններից հետո, երբ, ի զարմանս բոլորի, փաստացի Բասիջի անդամ Մահմուդ Ահմադինեժադը հաղթանակեց Իրանի «քաղաքական ծանրքաշային» համարվող Ալի Աքբար Հաշեմի Ռաֆսանջանիին: Մահմուդ Ահմադինեժադի՝ Նախագահ ընտրվելուց հետո ակնհայտ դարձավ Բասիջի ներկայությունը քաղաքական գործընթացներում: Եվ, ինչպես նշել է Բասիջի պաշտոնաթող գեներալ Մուհամմադ Հեջազին. «Ահմադինեժադը Բասիջից է, և նրա կառավարությունում բասիջները կարևոր դեր են խաղում»<sup>617</sup>: Ահմադինեժադի օրոք երկրում մի շարք արտոնություններ տրվեցին ինչպես Բասիջին, այնպես էլ ԻՀՊԿ-ի ներկայացուցիչներին՝ ընդհանուր առմամբ: Նրանք ներգրավվեցին տնտեսական, շինարարական, բանկային և բազմաթիվ այլ ոլորտներում: 2007 թ. Ղորբ-է Բասիջը<sup>618</sup> միավորվեց ԻՀՊԿ-ի Խաթամ օլ-Անբիա կառույցի հետ, որի ենթակայության տակ են գտնվում նաև շինարարական բազմաթիվ ընկերություններ, և որը ներգրավված է Իրանի տնտեսության տարբեր ոլորտներում, հատկապես էներգետիկայի և ենթակառուցվածքների: Այս կառույցի ենթակայության

---

<sup>615</sup> **Saeid Golkar**, *Paramilitarization of the Economy: The Case of Iran's Basij Militia, Armed Forces & Society*, Vol. 38, No. 4 (2012), p. 632.

<sup>616</sup> **Jerrold D. Green**, *Frederic Wehrey and Charles Wolf, Understanding Iran, Features of the Iranian System*, RAND Corporation, 2009, p. 13. <https://shorturl.at/akxOY>

<sup>617</sup> **Saeid Golkar**, *Paramilitarization of the Economy: The Case of Iran's Basij Militia, Armed Forces & Society*, Vol. 38, No. 4 (2012), p. 632

<sup>618</sup> Բասիջը ստեղծել է ինժեներաշինարարական շտաբ, որն զբաղվում էր բասիջների համար շինարարական տարբեր աշխատանքներով, ինչպես, օրինակ, Թեհրանի արևելքում մայրուղու կառուցումը, որը հանձնարարվեց Ղորբ-է Բասի-ջին:

տակ են գտնվում նաև Իրանում ամբարտակների և կարևոր պետական ենթակառուցվածքների կառուցման նախագծերը:

Աջակցելով Բասիջին և ԻՀՊԿ-ին՝ Ահմադինեժադը սին հույսեր էր փայփայում, որ համապատասխան պահին կկարողանա երկրում իրականացնել կառուցվածքային որոշակի փոփոխություն. նվազեցնել Առաջնորդի ինստիտուտի լիազորությունները՝ փոխարենը մեծացնելով Նախագահինը:

2007 թվականի սեպտեմբերի 1-ին Առաջնորդ Այաթոլլա Ալի Խամենեին ԻՀՊԿ ղեկավար նշանակեց բրիգադի գեներալ Մուհամմադ Ալի Ջաֆարիին: Վերջինս հայտարարեց, թե ԻՀՊԿ-ում իրականացվելու են կառուցվածքային բարեփոխումներ՝ Իսլամական Հանրապետության պաշտպանության կորպուսի ուշադրությունը արտաքին պաշտպանությունից ուղղելով դեպի ներքին անվտանգություն<sup>619</sup>:

Բասիջը երկրում գործում է ցանցային մեխանիզմով և ունի իր մասնաճյուղերը: Կան մի քանի հիմնական զինված թևեր: Դրանցից մեկը «Իմամ Հոսեյնի» բրիգադն է, որը կազմված է Բասիջի՝ պատերազմի վետերան անդամներից, որոնք սերտորեն համագործակցում են ԻՀՊԿ ցամաքային զորքերի հետ: Այս բրիգադի գործունեությունը նախատեսված է Իրանի սահմաններից դուրս և Իրանի տարածք թշնամու ներխուժման դեպքում մարտական գործողություններ իրականացնելու համար: «Իմամ Հոսեյն» գումարտակները Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի օպերատիվ ստորաբաժանման ենթակայության տակ են և բավականին ակտիվ գործողություններ են ծավալել Սիրիայի վերջին պատերազմի ժամանակ<sup>620</sup>:

---

<sup>619</sup> **Ali Alfoneh**, *Iran Unveiled: How the Revolutionary Guards Is Turning Theocracy into Military Dictatorship*, Washington, 2013, p. 47.

<sup>620</sup> **Marie Donovan, Nicholas Carl and Frederick w. Kagani**, *Iran's Reserve of Last Resort Uncovering the Islamic Revolutionary Guard Corps Ground Forces Order of Battle*, January 2020, p. 6.

«Իմամ Ալի» գումարտակը, որն ստեղծվել է 2009 թ., զբաղվում է երկրի ներքին անվտանգության դեմ ուղղված սպառնալիքների ոչնչացմամբ: «Իմամ Ալի» գումարտակը համալրվում է նաև «Աշուրա» և «Ալ-Ջահրա» գումարտակների անվտանգության և ռազմական ճյուղերով, որոնց առաքելությունն է՝ արտակարգ իրավիճակների դեպքում պաշտպանել բնակավայրերը: Նրանք ներքին անվտանգությունը պաշտպանելու խնդիր ունեն և նախատեսված չեն՝ արտերկրում գործողություններ իրականացնելու կամ ներխուժող ուժերի դեմ ուղղակի պայքար մղելու համար<sup>621</sup>: Ի դեպ, նշենք, որ եթե «Աշուրան» ամբողջովին բաղկացած է տղամարդ զինծառայողներից, ապա «Ալ-Ջահրան» կանանց ռազմականացված խումբ է: «Աշուրա» և «Ալ-Ջահրա» գումարտակներից յուրաքանչյուրում ընդգրկվելու համար Բասիջի համակարգում միջինը պատրաստվում է 400 մարդ<sup>622</sup>: Առկա են նաև հատուկ մարտական խմբեր՝ «Քարբալա» և «Ջուֆաղար» անուններով<sup>623</sup>: Ալ-Ջահրայի կանանց ռազմական խմբի ուսուցումն իրականացվում է՝ հաշվի առնելով կանանց համար անհրաժեշտ հատուկ պայմանները: Նրանք հիմնականում սովորում են ցուցաբերել առաջին բուժօգնություն, լուծել բնակության տարածքի և քաղաքացիական պաշտպանության հարցեր<sup>624</sup>:

«Իմամ Ալի» գումարտակներ կան յուրաքանչյուր նահանգում, և դրանք անմիջականորեն ենթարկվում են ԻՀՊԿ-ի նահանգային անվտանգության ստորաբաժանումներին: Նրանց ուսուցումը, կրթությունը և նյութատեխնիկական ապահովումը համակարգվում են կենտրոնական հրամանատարության միջոցով, որը կոչվում է

---

<sup>621</sup> Նույն աղբյուրում:

<sup>622</sup> **Юрьев М.М.** *Силы сопротивления «Басидж» в оборонной политике ИРИ*, 2006, <http://www.iimes.ru/?p=5201>

<sup>623</sup> *The Rise of the Pasdaran, Assessing the Domestic Roles of Iran's Islamic Revolutionary Guards Corps*, RAND, 2009, [https://www.rand.org/content/dam/rand/pubs/monographs/2008/RAND\\_MG821.pdf](https://www.rand.org/content/dam/rand/pubs/monographs/2008/RAND_MG821.pdf), p. 44.

<sup>624</sup> **Юрьев М.М.** *Силы сопротивления «Басидж» в оборонной политике ИРИ*, 2006, <http://www.iimes.ru/?p=5201>

«Իմամ Ալիի» շտաբ: «Իմամ Ալիի» գումարտակների անդամներն ապահովված են անհրաժեշտ սարքավորումներով և անցնում են խոռովության հակազդման մարտավարության ուսուցում: «Իմամ Ալիի» յուրաքանչյուր գումարտակ ունի մոտոցիկլային միավորներ՝ արագ տեղակայման համար<sup>625</sup>: «Իմամ Ալիի» ներկայացուցիչներն աչքի ընկան հատկապես 2019 թ. հակապետական ընդվզումները ճնշելու ժամանակ, երբ ժողովուրդն սկսեց բողոքել վառելանյութի թանկացման դեմ, սակայն ընթացքում այն վերափոխվեց հակակառավարական և հակաիշխանական զինված ցույցերի: Այն Արևմուտքում կոչեցին «Արյունոտ նոյեմբեր» և նշեցին, թե Իսլամական հեղափոխությունից հետո սա ամենասփովածն էր աշխարհագրական առումով, քանի որ ընդգրկել էր մոտ 200 քաղաք<sup>626</sup>:

Ինչպես «Իմամ Հոսեյն», այնպես էլ «Իմամ Ալի» գումարտակների թիվը, անձնակազմը և արդյունավետությունը հայտնի չեն: Բասիջն ունի նաև բազմաթիվ ճյուղեր՝ մասնագիտացված գործառույթներով: Դրանք ներառում են.

- Արհմիությունների Բասիջ [Basij-e Asnaf]
- Աշխատանքային Բասիջ [Basij-e Karegaran]
- Ցեղային Բասիջ [Basij-e 'Ashayer]
- Հանրային ծառայողների Բասիջ [Basij-e Edari]
- Ուսանողական Բասիջ [Basij-e Daneshjouyi ]
- Աշակերտների Բասիջ [Basij-e Danesh-Amouzi]<sup>627</sup>:

Ի դեպ, տարրական և միջնակարգ դպրոցների աշակերտների դպրոցական պարտադիր դասընթացի ծրագրում ընդգրկված են ռազմական և քաղաքացիական պաշտպանության, ինչպես նաև

---

<sup>625</sup> **Saeid Golkar, Saeid Golkar, Taking Back the Neighborhood, The Washington Institute for Near East Policy, Policy Note N81, pp. 15–16.**

<sup>626</sup> *A year after “Bloody November,” reformists in Iran still fight for legitimacy, By ABC News 20 November 2020, <https://abcnews.go.com/International/year-bloody-november-reformists-iran-fight-legitimacy/story?id=74300820>*

<sup>627</sup> **Ali Alfoneh, The Basij Resistance Force, October 6, 2010, <https://iranprimer.usip.org/resource/basij-resistance-force>**

բնակության տարածքի պաշտպանության հարցեր: Այս դեպքում սահմանվում է պարտադիր պարապմունքների անցկացման հետևյալ կարգը.

Ա. տարրական դասարաններում՝ շաբաթական առնվազն երկու դասաժամ տեսական և տարեկան մեկ օր՝ գործնական պարապմունք:

Բ. Միջնակարգ դպրոցներում՝ շաբաթական առնվազն երեք ժամ տեսական ուսուցում և տարեկան երեք օր գործնական պարապմունք՝ այն ակնկալիքով, որ մինչ միջնակարգ ուսումնական հաստատությունն ավարտելը շրջանավարտները կյուրացնեն նախնական ուսումնական պատրաստության դասընթացը: Տարրական միջնակարգ դպրոցի՝ մինչև 15 տարեկան և համապատասխան պահանջները բավարարող աշակերտները համալրում են Սովորական Բասիջի շարքերը: 15 տարին լրացած Սովորական և Հատուկ Բասիջի ներկայացուցիչների համար սահմանվում են հետևյալ կոչումները՝ մարտիկ, ուսումնական, խիզախ, մոջթահեդ: «Ռազմիկի» և «խիզախի» շարքերում ծառայության նվազագույն ժամկետը հինգ տարի է<sup>628</sup>:

Սայիդ Գուլարը Բասիջի մասնագիտացված ճյուղերին ավելացրեց մի քանիսը ևս՝ Բժշկական հանրության, Ինժեներների, Իրավաբանների, Արվեստագետների, Սպորտային, Պրոֆեսորների, Մշակութային/ուսուցիչների բասիջ կազմակերպություններ: Հետագոտողը նաև ներկայացնում է Բասիջի գաղափարական շրջանակների հիերարխիան մեկ պատկերով՝ ներկայացնելով, թե ինչպես է ապահովվում գաղափարական հենքը մարտիկների համար<sup>629</sup>:


Պետք է նշել նաև, որ Բասիջը ժամանակներին համընթաց է շարժվում: Այսօր Բասիջի համակարգում գործում է նաև Բասիջի կիրքերիտրիուրդ, որն անվտանգության հարցերով պատասխանատվություն ունի, սակայն դրանում աշխատում է ավելի քան 1000

---

<sup>628</sup> **Юрьев М.М.** *Силы сопротивления «Басидж» в оборонной политике ИПИ*, 2006, <http://www.iimes.ru/?p=5201>

<sup>629</sup> **Saeid Golkar**, *Taking Back the Neighborhood*, p. 11.

քաղաքացի, որոնք ստեղծում և կիրառարածության մեջ տեղադրում են քարոզչական և թիրախային նյութեր<sup>630</sup>:



Ամփոփելով կարող ենք վստահորեն ասել, որ ԻԻՀ ստեղծումից ի վեր Բասիջն իրականացրել է այն ուրույն առաքելությունը, որով հնարավոր է եղել երկրում պահպանել պետական կարգը՝ ուստիկանության և ժանդարմերիայի հետ միասին: Կառույցը նաև իր վրա է վերցրել ռազմական գործառույթներ, որն արտահայտվել է ինչպես իրանա-իրաքյան պատերազմի ժամանակ, այնպես էլ հետագայում՝ տարածաշրջանում մի շարք խնդիրներ լուծելու ժամանակ: Թեպետ Իրանի հանրության մոտ առկա է որոշակի բացասական վերաբերմունք Բասիջի նկատմամբ, բայց պետք է նշել նաև,

<sup>630</sup> **Carl Anthony Wege**, *Guide to the Study of Intelligence Iran's Intelligence Establishment*, *The Intelligencer Journal of U.S. Intelligence Studies*, Vol. 21, Number 2, Summer 2015, p. 64, <https://www.afio.com/publications/WEGE%20Iranian%20Intel%20Services%202015%20Sep%2001%20FINAL.pdf>

որ այդ հասարակության մի զգալի հատված անդամագրված է Բասիջի այս կամ այն կառույցում և դրա շնորհիվ պետությունից ստանում է որոշակի աջակցություն:

### **Ալ-Ղոդսի ստորաբաժանում**

Իսլամական հեղափոխությունից անմիջապես հետո ԻՀՊԿ-ի շրջանակներում ստեղծվեց «Ազատագրական շարժումների ջոկատը»: ԻՀՊԿ ղեկավարներն այդ ջոկատները միավորեցին մեկ ընդհանուր «900 վարչության» շրջանակում. այս վարչությունը հետագայում ԻՀՊԿ-ում դարձավ առանձին ստորաբաժանում: Իրանա-իրաքյան պատերազմի բռնկմամբ խիստ հավատացյալներից բաղկացած այդ ուժերն ամբողջովին ներգրավվեցին պատերազմի մեջ: Ստորաբաժանման հիմնական գործառույթների մեջ են մտնում նաև Իրանի տարածքից դուրս իրականացվող հատուկ գործողությունները, ռազմական հետախուզությունը, համագործակցությունը շիայական շարժումների հետ:

Որպես Իրանի զինված ուժերի գլխավոր հրամանատար՝ Առաջնորդը պատերազմից հետո հրամայեց ընդլայնել ԻՀՊԿ-ն և կոչ արեց ստեղծել նոր և առանձին ստորաբաժանումներ, որոնց առաքելությունը կլիներ ԻՀ արտասահմանյան գործողությունների իրականացումը: Այս նոր ճյուղը պետք է կոչվեր «Ալ-Ղոդս» (Երուսաղեմ), ինչը բացահայտ հղում էր կատարում ԻՀՊԿ-ի նպատակներին՝ ազատագրել Երուսաղեմը Իսրայելի ոչնչացման միջոցով<sup>631</sup>:

Ղոդսը, ըստ էության, մասնագիտացված հետախուզական, հատուկ նշանակության ծառայություն է՝ ուղղված արտերկրում ընդհատակյա խնդիրների լուծմանն ու պետության ազդեցության տարածմանը: Դրանով իսկ այն տարբերվում է ԻՀՊԿ հետախուզության մարմնից, որը, ըստ էության, ուղղված է հետախուզական տեղեկատվության հայթայթմանը:

---

<sup>631</sup> Saeid Golkar, Kasra Aarabi, The View from Tehran: Iran's Militia Doctrine, <https://institute.global/sites/default/files/2021-05/Tony%20Blair%20Institute%2C%20The%20View%20From%20Tehran%2C%20February%202021.pdf>

Ըստ հետազոտող Բոնդարի՝ ստորաբաժանումը, լրտեսական գործողություններից բացի, իրականացնում է նաև հատուկ հետախուզություն: Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի հատուկ նշանակության ուժերի զորքերի ընդհանուր թիվը 2013 թ. դրությամբ կազմում էր մոտ 100,000 մարդ, որոնցից 25,000-ը բաժին էր հասնում հատուկ նշանակության Ղոդս ստորաբաժանմանը: ԻՀՊԿ հատուկ նշանակության ուժերը լիարժեք հագեցած են անձնակազմով, սպառազինությամբ և ռազմական տեխնիկայով<sup>632</sup>:

Բնականաբար, Ղոդս ուժերի թիվը ևս հստակ ասել հնարավոր չէ, սակայն ուշագրավ է, որ Բրիտանիայի թագավորական զինված ուժերի ինստիտուտի հետազոտող Ջեք Ուոլթինգը NBC-ի լուրերի թողարկմանը հաղորդել է, որ Ղոդսի «մարդուժի քանակը հավասար է դիվիզիայի», այսինքն՝ մոտավորապես 17,000-ից մինչև 21,000 անդամ, «որի զինյալները բաժանված են ըստ տարածաշրջանային խմբերի»: Ըստ հետազոտողի՝ այս թվերը «շատ անորոշ» են, քանի որ Ղոդսի մեջ, ըստ անհրաժեշտության, կարող են ներգրավվել զինծառայողներ ԻՀՊԿ-ից և վստահելի այլ անձանց թվից: Նրա խոսքերով, դժվար է հասկանալ, թե ով է Ղոդս ուժերի տեխնիկական ծառայող, ով՝ գործակալ<sup>633</sup>:

Ղոդսում գոյություն ունեն հետախուզությամբ, ֆինանսներով, քաղաքականությամբ, սաբոտաժով և հատուկ գործողություններով զբաղվող բաժիններ:

Կազմակերպչական առումով Ղոդս ուժերը բաղկացած են հրամանատարությունից, շտաբից, հատուկ ջոկատներից, թաքնված օտարահպատակ, ինչպես նաև անօրինական ռեզիդենտների, գործակալների պատրաստման և վերապատրաստման ուսումնական կենտրոնների ցանցից, ինչպես Իրանում, այնպես էլ արտերկ-

---

<sup>632</sup> **Бондарь Ю.М.**, *Войска специального назначения Вооруженных Сил Ирана*, 3 апреля, 2013, <http://www.iimes.ru/?p=17191>

<sup>633</sup> **Henry Austin**, *What is Iran's secretive Quds Force?* Jan. 4, 2020, <https://www.nbcnews.com/news/world/who-are-iran-s-secretive-quds-forces-n1110156>

րում<sup>634</sup>: Առկա տեղեկության համաձայն՝ Ղոդս ուժերի գործուն մասնակցությամբ հնարավոր է եղել Լիբանանում նպաստել Հեգբոլլահի ստեղծմանը: Ղոդսի ուժերում ծառայում են այն զինյալները, ովքեր իրենց թիկունքում ունեն ծառայության իրական փորձառություն Սիրիայում, Իրաքում, Լիբանանում, Աֆղանստանում:

Ըստ Բոնդարի՝ Ղոդսի հիմնական նպատակն է՝ պատրաստել և իրականացնել հատուկ գործողություններ աշխարհի ցանկացած կետում: Դրան են վստահված հետևյալ խնդիրները.

- իրականացնել հատուկ գործողություններ՝ նպատակ ունենալով ոչնչացնել ընդդիմության առաջնորդներին և անցանկալի անձանց.

- հատուկ նշանակության ուժեր ուղարկել աշխարհի տարբեր շրջաններ՝ դիվերսիոն և ահաբեկչական գործողություններ իրականացնելու համար.

- կազմակերպել մահապարտ-ահաբեկիչների պատրաստումը, որոնք կգործեն թշնամու թիկունքում՝ ռազմական բախման սկսվելուն պես կամ դրա սպառնալիքի պարագայում<sup>635</sup>: Նույն մտքերն են շարադրված նաև 2014 թ. Մոսկվայի համալսարանի կողմից հրատարակված աշխատության մեջ, և ավելացված է մի քանի գործառույթ ևս.

- ցուցաբերել աջակցություն, ֆինանսավորել և համապարփակ օգնություն տրամադրել աշխարհի տարբեր իսլամական կազմակերպություններին, առաջին հերթին՝ իրանամետ ուժերին,

- լրտեսական ցանցի ստեղծում՝ օպերատիվ և ռազմավարական հետախուզության համար,

- ռազմավարական և օպերատիվ հետախուզություն,

- օտար երկրներից իսլամական զինյալների ուսուցման կազմակերպում և լրտեսելու նպատակով դրանց գործուղում տարբեր

---

<sup>634</sup> **Владимир Сажин**, *Дональд Трамп vs иранского КСИР*, 15.04.2019, <https://interaffairs.ru/news/show/22218>

<sup>635</sup> **Бондарь Ю.М.**, *Войска специального назначения Вооруженных Сил Ирана*, 3 апреля, 2013, <http://www.iimes.ru/?p=17191>

տարածաշրջաններ՝ իրանական վարչակազմի շահերից բխող դիվերսիոն և ահաբեկչական գործունեություն իրականացնելու նպատակով<sup>636</sup>:

Փաստացի, Ղոդս ստորաբաժանումն իր գործողությունները համաձայնեցնում և համակարգում է օպերատիվ վարչությունների և ԻՀՊԿ-ի Միացյալ շտաբի հետախուզության գլխավոր վարչության հետ: Ուշագրավ է Սաժինի արձանագրումն առ այն, որ Ղոդս ստորաբաժանումները գործում են ինչպես Իրանի ներսում, այնպես էլ Իրանից դուրս: Խաղաղ պայմաններում Ղոդսի նպատակը մնում է Հեղափոխության գաղափարների արտահանմանը նպաստելը, ինչպես նաև ի շահ պետության հետախուզություն իրականացնելը<sup>637</sup>:

Ղոդս ուժերի ղեկավարներից հայտնի են Բրիգադային գեներալ Ահմադ Վահիդին, որը կառավարեց կառույցը 1988–1998 թթ., նրան հաջորդեց Իրանի թերևս ամենահայտնի գործիչներից մեկը՝ Ղասեմ Սուլեյմանին՝ ղեկավարելով կառույցը 22 տարի՝ 1998–2020 թթ.: Նա սպանվեց ԱՄՆ Նախագահ Դոնալդ Թրամփի անձնական հրամանով, քանզի տեսնում էին, թե նա ինչպես է կարողանում խառնել Միացյալ Նահանգների խաղաքարտերը Մերձավոր Արևելքում: Նրա սպանությունից հետո այդ կառույցը գլխավորեց Բրիգադային գեներալ Էսմայիլ Ղանին:

Գեներալ-մայոր Ղասեմ Սուլեյմանիի օրոք Ղոդս ուժերը, որոնք, ըստ էության, գտնվում էին ԻՀՊԿ-ի ենթակայության տակ, կարելի էր կոչել կիսաինքնավար ստորաբաժանում: Ղասեմ Սուլեյմանին, որն ուներ «Սովեր» մականունը՝ երկար տարիներ գաղտնի հետախուզության մեջ աշխատելու պատճառով, անմիջական հրամաններ էր ստանում Իրանի Առաջնորդից: Նա միաժամանակ գաղտնի հանդիպում էր երկրների առաջնորդների և բարձրաստիճան պաշտոնյաների հետ: Դրա լավագույն օրինակներից էր, երբ Սուլեյմանին Առաջնորդի կարգադրությամբ անձամբ հանդիպեց

---

<sup>636</sup> **Сажин В.И., Бондарь Ю.М., Военная мощь Исламской Республики Иран**, М., 2014, стр. 408. <https://book.ivran.ru/sites/31/files/sazhin.pdf>

<sup>637</sup> Там же.

Սիրիայի Նախագահի հետ և կազմակերպեց նրա այցը Իրան, մինչդեռ դրա մասին տեղյակ չեն եղել ո՛չ երկրի Նախագահը, ո՛չ էլ արտգործնախարարը: Ավելին, տեղեկանալուց հետո էլ ԻԻՀ արտաքին գործերի նախարարին թույլ չէին տվել մասնակցել բանակցություններին. փոխարենը ներկա էր գտնվել Ղասեմ Սուլեյմանին<sup>638</sup>: Մյուս հանդիպումը տեղի ունեցավ ՌԴ Նախագահ Վլադիմիր Պուտինի հետ: Ղասեմ Սուլեյմանին, եռօրյա այցով գտնվելով Մոսկվայում, տարբեր հանդիպումներ էր ունեցել ՌԴ ռազմաքաղաքական ղեկավարների հետ, քննարկել էին Սիրիայի, Եմենի և Իրաքի հետ կապված խնդիրները<sup>639</sup>: Պուտինի հետ հանդիպման ժամանակ, ըստ որոշ աղբյուրների, Պուտինն անգամ Սուլեյմանինին կոչել է «Իմ ընկեր Ղասեմը»<sup>640</sup>: Փաստացի, Ղասեմ Սուլեյմանիի օրոք Ղոդս ստորաբաժանումն իր գործառույթների մեջ արդեն բացահայտ ներառել էր նաև արտաքին քաղաքականության որոշ գործիքներ, իսկ անձամբ Ղասեմի հեղինակությունն այնքան էր մեծացել, որ նրան ընդունում էին ոչ միայն Սիրիայի, Իրաքի ղեկավարները, այլև ՌԴ Նախագահը ևս: Բնականաբար, այս ամենը շատ լավ տեսնում ու հասկանում էին նաև Միացյալ Նահանգներում, և դրանով էր պայմանավորված ԱՄՆ-ի պետքարտուղար Մայք Փոմփեյդի՝ Ղասեմ Սուլեյմանինին «թիվ մեկ ահաբեկիչ» կոչելը<sup>641</sup>, որով փաստացի հող էին նախապատրաստում նրա չեզոքացման համար:

---

<sup>638</sup> **Parisa Hafezi**, *Bozorgmehr Sharafedin, Stay in your job, Iranian president tells moderate ally Zarif*, February 27, 2019 <https://www.reuters.com/article/us-iran-zarif-resignation-idUSKCN1QG0LY>

<sup>639</sup> **Bozorgmehr Sharafedin**, *Iranian commander Soleimani meets Putin in Moscow*, December 16, 2015, <https://www.reuters.com/article/uk-mideast-crisis-iran-russia-idukkb0tz1ny20151216>

<sup>640</sup> *Иранские СМИ рассказали о поездке генерала Сулеймани к Путину*, 16 дек 2015, Подробнее на РБК: <https://www.rbc.ru/politics/16/12/2015/56716295a7947764a193b23>

<sup>641</sup> **Владимир Сажин**, *Дональд Трамп vs иранского КСИР*, <https://interaffairs.ru/news/show/22218>

Վաշինգթոն Փոսթի տվյալներով, Մայք Փոմփեյնոն է ճնշում գործադրել Նախագահ Թրամփի վրա նման քայլի գնալու հարցում<sup>642</sup>:

### **Անսար ալ-Մահդի կորպուս կամ Իմամ Մահդիի հետևորդները**

ԻՀՊԿ հատուկ ծառայություններից է համարվում Իմամ Մահդիի հետևորդների էլիտար կորպուսը, որի անմիջական գործառույթների մեջ է մտնում ԻՀԿ պաշտոնատար անձանց պաշտպանությունը: Անսար ալ-Մահդի անվտանգության ստորաբաժանումն ունի 10,000–15,000 անձնակազմ և պատասխանատու է Նախագահի և նրա տեղակալների, Դատական իշխանության ղեկավարի և նրա տեղակալների, խորհրդարանի խոսնակի և նրա տեղակալների, ինչպես նաև նախարարների և այլ պաշտոնյաների պաշտպանության համար, որոնք ունեն մշտական կամ ժամանակավոր թիկնապահներ՝ համաձայն Ազգային անվտանգության բարձրագույն խորհրդի որոշման<sup>643</sup>:

Ուշագրավ է, որ նրանց պարտականության մեջ չի մտնում Առաջնորդի պաշտպանության խնդիրը<sup>644</sup>: Առաջնորդ Իսամենեիի, նրա երեխաների և նրա գրասենյակի անդամների պաշտպանությունը, այնուամենայնիվ, պատկանում է Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի մեկ այլ ստորաբաժանման, որը կոչ-

---

<sup>642</sup> **John Hudson, Josh Dawsey, Shane Harris, Dan Lamothe**, Killing of Soleimani follows long push from Pompeo for aggressive action against Iran, but airstrike brings serious risks, [https://www.washingtonpost.com/world/national-security/killing-of-soleimani-follows-long-push-from-pompeo-for-aggressive-action-against-iran-but-airstrike-brings-serious-risks/2020/01/05/092a8e00-2f7d-11ea-be79-83e793dbcaef\\_story.html](https://www.washingtonpost.com/world/national-security/killing-of-soleimani-follows-long-push-from-pompeo-for-aggressive-action-against-iran-but-airstrike-brings-serious-risks/2020/01/05/092a8e00-2f7d-11ea-be79-83e793dbcaef_story.html)

<sup>643</sup> **Reza Vaisi**, *The Fakhrizadeh assassination: A major failure for Iranian intelligence*, 2020, <https://www.mei.edu/publications/fakhrizadeh-assassination-major-failure-iranian-intelligence>

<sup>644</sup> *Корпус Стражей Исламской Революции*, <https://iran1979.ru/korpus-strazhej-islamskoj-revolyucii/>

վում է Վալի-է-Ամր, որը, ըստ հաշվարկների, ունի 15,000-ից մինչև 20,000 անձնակազմ<sup>645</sup>:

Այս կառույցն ստեղծվել է 1979 թ. Այաթոլլահ Խոմեյնիի կողմից, և կառույցի ստեղծման ժամանակ նա հայտնել է հետևյալ միտքը. «Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսը պատասխանատու է վարչակազմի նշանավոր դեմքերի կյանքի պաշտպանության և անվտանգության երաշխավորման համար, նույնիսկ եթե նրանք հրաժարվեն դրանից: Այն նաև պետք է վերահսկի երկրում իրականացվող կասկածելի գործողությունները»<sup>646</sup>: Վերջին նախադասությունը գալիս է հաստատելու մեր կասկածները առ այն, որ այս կառույցը միայն պահպանությամբ չէ, որ զբաղվում է:

Բացի պաշտոնատար անձանց պաշտպանությունից, Անսար ալ-Մահդի կորպուսի անմիջական պատասխանատվության տակ է գտնվում նաև հույժ կարևոր կառույցների պաշտպանությունը:

ԶԼՄ-ներում այս կառույցի մասին երբեմն հայտնվող տեղեկություններից դատելով՝ ակնհայտ է դառնում, որ կառույցը պետք է պաշտպանի ԻԻՀ բարձրաստիճան պաշտոնյաներին ինչպես երկրում, այնպես էլ երկրից դուրս, իսկ դա նշանակում է, որ կառույցն ունի նաև երկրից դուրս որոշակի գործողություններ իրականացնելու լիազորություններ՝ ի պաշտպանություն իր պաշտպանյալի: Սակայն Իսլամական Հեղափոխությունից հետո ԻԻՀ պետական պաշտոնյաները հայտնվել էին թե՛ Իսրայելի, թե՛ ԱՄՆ-ի թիրախում, և փաստացի վերոնշյալ կառույցը միշտ չէ, որ կարողացել է ապահովել բարձրաստիճան պաշտոնյաների անվտանգությունը:

---

<sup>645</sup> **Reza Vaisi**, *The Fakhrizadeh assassination: A major failure for Iranian intelligence*, 2020, <https://www.mei.edu/publications/fakhrizadeh-assassination-major-failure-iranian-intelligence>

<sup>646</sup> *The IRGC Security and Intelligence Agencies*, April 9, 2019, IRANWIRE, <https://iranwire.com/en/features/65742>

## ԻՀՊԿ-ի հետախուզությունը

Իրանի Իսլամական Հանրապետությունում բնակվում են տարբեր էթնիկ խմբերի ներկայացուցիչներ, այդ թվում՝ ատրպատականցիներ (թյուրքալեզու), քրդեր, արաբներ և այլք, որոնց զգալի մասը բնակվում է երկրի սահմանային նահանգներում: Ակնհայտ է, որ սահմանային տարածքներում բնակվող էթնիկ փոքրամասնությունների նկատմամբ արտաքին ազդեցության հնարավորությունը ազգային անվտանգության տեսանկյունից զգայուն հարց է, և այդ պատճառով այդ թեման մշտապես գտնվում է Իրանի անվտանգության և հետախուզական ծառայությունների օրակարգում:

Իրանի հետախուզության և անվտանգության կազմակերպությունների հզորությունը խարսխված է Հետախուզության և անվտանգության նախարարության և Հեղափոխության պահապանների զույգ սյուների վրա:

2005 թ. Օդաբ 2 (Արծիվ) կազմակերպությունը Ահմադ Վահիդիի ղեկավարությամբ ԻՀՊԿ շրջանակներում ստեղծեց Իրանի միջուկային ծրագրի պաշտպանության կազմակերպություն, որը, գտնվելով ԻՀՊԿ ենթակայության ներքո, ըստ էության, հաշվետու է Հետախուզության և անվտանգության նախարարության հակահետախուզության վարչությանը և ունի մի քանի հազար աշխատակից, որոնց հանձնարարված է պաշտպանել միջուկային ծրագրի տարբեր ոլորտները: Փաստորեն Օդաբ 2-ի գործառույթները բավականին լայն են. առաջատար գիտնականներին և ինժեներներին, միջուկային ծրագրի արդյունաբերական սարքավորումները պաշտպանելու պատասխանատվությունը: Այժմ ավելացել է նաև միջուկային ծրագրին աջակցող տեղեկատվական ցանցերին կիբեր տիրույթում պաշտպանելու հարցը<sup>647</sup>: Կառույցի գլխամասը գտնվում է

---

<sup>647</sup> **Carl Anthony Wege**, *Guide to the Study of Intelligence Iran's Intelligence Establishment*, The Intelligencer Journal of U.S. Intelligence Studies, Vol. 21, Number 2, Summer 2015, p. 65, [https://www.researchgate.net/publication/282016560\\_Guide\\_to\\_Iran's\\_Intelligence\\_Establishment](https://www.researchgate.net/publication/282016560_Guide_to_Iran's_Intelligence_Establishment)

Թեհրանի մերձակայքում՝ Քամալի կոչվող ավանի Քասր-է Ֆիրուզե թաղամասում:

2025 թվականի հունիսի 22-ին ԱՄՆ-ի կողմից Իրանի միջուկային օբյեկտներին հասցված հարվածներից հետո շրջանավեցին տեղեկություններ առ այն, որ հարստացված ուրանը նախապես դուրս էր բերվել նշված տարածքներից և տեղափոխվել ու պահեստավորվել այլ վայրում: Ըստ հրապարակված տվյալների՝ դեռևս հունիսի 13-ին Իրանի Իսլամական Հանրապետության արտգործնախարարի տեղակալ Աբբաս Արադչին նամակով դիմել էր ՄԱԿ-ի ԱԷՄԳ գլխավոր տնօրեն Ռաֆայել Գրոսիին՝ նշելով. «Իրանը կձեռնարկի հատուկ միջոցներ՝ մեր միջուկային սարքավորումները և միջուկային նյութերը պահպանելու նպատակով»<sup>648</sup>:

Նշենք, որ ԻԻՀ որևէ Նախագահ, ըստ էության, վերահսկողություն չի ունեցել այս կառույցի նկատմամբ:

2009 թ., երբ տեղի ունեցած նախագահական ընտրություններից հետո սկսվեց Կանաչ շարժումը՝ ԻԻՀ երբեմնի վարչապետ Միր Հուսեյն Մուսավիի գլխավորությամբ, երկրի տարբեր քաղաքներում սկսվեցին բողոքներ, ցույցեր, որտեղ առաջին անգամ բացահայտ ցույցն ուղղված էր գործող կառավարման համակարգի դեմ՝ ընդհանուր առմամբ, կարգախոսներում բացասական առումով հիշատակվում էր նաև Առաջնորդի անունը: Սա առիթ դարձավ Այաթոլլահ Խամենեյիի համար, որպեսզի նա ընդլայնի կառույցի լիազորությունները և դրա անձնակազմի թիվը: Այս ծառայությունը հիմնականում զբաղվում է երկրի ներսում տեղեկություն հավաքելով, վերհանում և առանձնացնում է նրանց, ովքեր դեմ են գործող համակարգին և պայքարում են դրա դեմ: Կառույցն զբաղվում է նաև ընդդիմադիր լրագրողների, իրավապաշտպանների, քաղաքացիական ակտիվիստների հայտնաբերմամբ և անհրաժեշտության դեպքում, ձերբակալում է նրանց:

---

<sup>648</sup> IAEA Director General's Introductory Statement to the Board of Governors, 23 June, 2025. <https://www.iaea.org/newscenter/statements/iaea-director-generals-introductory-statement-to-the-board-of-governors-23-june-2025>

ԻՀՊԿ Հետախուզության կազմակերպությունը երկար տարիներ ղեկավարել է Հոջաթոլեալամ Հոսեյն Թայեբը, որը եղել է Առաջնորդ Ալի Խամենեիի աշակերտը<sup>649</sup>, ուստի ամբողջությամբ վայելում էր նրա վստահությունը: 2022 թ., ի զարմանս բոլորի, կայացվեց նրան փոխարինելու որոշում. նոր ղեկավար նշանակվեց Մուհամմադ Քազեմին<sup>650</sup>:

Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի հետախուզության գրասենյակը նաև վերահսկում է Հետախուզության նախարարության ներքին անվտանգության տնօրինության բաժինները, Բասիջի անվտանգության տնօրինությունը, Առաջնորդի հատուկ հետախուզական գրասենյակը, որը կոչվում է 101-ի դեպարտամենտ, և ԻՀՊԿ-ի նորաստեղծ կիբերպաշտպանության հրամանատարությունը<sup>651</sup>:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ սույն գերատեսչությունն ունի լայն լիազորություններ՝ երկրում ինֆորմացիա հավաքելու և ըստ հայեցողության այն օգտագործելու համար: Ուշագրավ է, որ առաջին հայացքից թվում է, թե կառույցը պետք է ղեկավարեր զինվորական անձ, բայց Իսլամական Հանրապետությունում այն գլխավորում է հոգևորական անձ, և նա հաշվետու է Առաջնորդին:

Այսպիսով, ամփոփելով ԻՀ ԶՈՒ ենթաբաժինը, գալիս ենք եզրակացության, որ Իրանը, գիտակցելով տարածաշրջանում իր զբաղեցրած տեղն ու դերը, հստակ պատկերացնելով իր առջև ծառացած մարտահրավերները, ձեռնարկում է բոլոր հնարավոր միջոցները՝ ԻՀ ԶՈՒ-ն մարտունակ պահելու, զորքին հնարավորության սահմաններում արդիական զենք, զինամթերք տրամադրելու, Իրանի հնարավորությունների սահմաններում սեփական ուժ-


---

<sup>649</sup> *Iran's new spymaster*. June 20, 2010, <https://www.iranfocus.com/en/intelligence-reports/exclusive-reports/20815-irans-new-spymaster/>

<sup>650</sup> *Connor Bradbury*, Profiles: Iran's Intelligence Agencies, <https://iranprimer.usip.org/blog/2023/apr/05/profiles-iran%E2%80%99s-intelligence-agencies>

<sup>651</sup> *“Iran exile group: Khamenei tightens intelligence grip,”* Reuters, November 12, 2009. <https://www.reuters.com/article/us-iran-intelligence-idUSTRE5AB2KS20091112>

մարդյունաբերությունը զարգացնելու ուղղությամբ՝ հզոր տերություններից կախվածության աստիճանը նվազեցնելու համար: Որպեսզի առավել ակնհայտ լինի Իրանի ԶՈՒ պատկերը, այն ներկայացնում ենք գծապատկերի տեսքով<sup>652</sup>.



<sup>652</sup> Сажин В.И., Бондарь Ю.М., *Военная мощь Исламской Республики Иран*, М., 2014, стр. 205. <https://book.ivran.ru/f/sazhin.pdf>

## ՎԵՐՋԱԲԱՆ

Ամփոփելով աշխատանքը՝ կարող ենք հստակ ասել, որ թե՛ շահական Իրանը, թե՛ Իսլամական Հանրապետությունը ձգտել են և ձգտում են հզորացնել երկիրը, հետ բերել նախկին փառքը, տարածաշրջանում դառնալ առանցքային պետություն, առանց որի տարածաշրջանային խնդիրներին լուծումներ չեն տրվի: Երկու իշխանությունների միջև տարբերությունը իրականացման մեխանիզմների մեջ է: Եթե շահական Իրանը որդեգրել էր ավանդական, բոլորին քաջ հայտնի քայլերի հաջորդականություն, ռազմական առումով հզոր երկիր, որն աջակցում և հովանավորում է հարևան թույլ երկրներին, ապա Իսլամական Իրանը ինքնին նորարարական գաղափար էր, որի շնորհիվ կրոնի քողի տակ հնարավոր կլիներ ազդեցություն ունենալ Մերձավոր Արևելքի իսլամադավան երկրների վրա:

Իրանն աստվածապետական պետություն է, որտեղ թեպետ ժողովուրդն ընտրում է Նախագահին, այնուամենայնիվ, համաձայն Սահմանադրության, երկրում առավել մեծ ազդեցություն ունի հոգևորականությունը, որը ղեկավարվում է Առաջնորդի կողմից, ով ունի ամենալայն լիազորությունները և վեր է դասվում կառավարման մարմինների համակարգից: Իրանը ներդրել է իսլամական արդարադատության համակարգ՝ հիմնված Ղուրանի և շարիաթի պահանջների վրա:

Իսլամական հեղափոխությունից հետո Իրանի գործող իշխանություններն ի վիճակի եղան ստեղծելու նախատիպը չունեցող մի պետություն, որն իր էությամբ փորձում էր նմանվել բերդ-պետության, այսինքն՝ գերակայությունը տրվեց Իրանի անվտանգային համակարգին և Դատական իշխանությանը: Սրա նպատակն էր՝ նորաստեղծ պետությունը պաշտպանել ինչպես արտաքին թշնամիներից, այնպես էլ ներսում գործող խմբերից, որոնք կարող էին վնաս

պատճառել թե՛ պետական համակարգին և թե՛ խոմէյնիականության գաղափարախոսությանն ընդհանրապես:

Սակայն առաջին հայացքից շատ կոտ թվացող կառույցը՝ Իրանի պետական համակարգը, ըստ էության, անհրաժեշտության դեպքում ցուցաբերում է բավականին ճկունություն, և, կարծում ենք, դա գալիս է հատկապես Առաջնորդի ներդրած գաղափարախոսությունից: 2013 թ. Իրանում ակտիվացավ Առաջնորդ Խամենեյի «Հերոսական ճկունություն» գաղափարախոսությունը, որը, ըստ էության, իրականացվում է ինչպես ներքաղաքական խնդիրների լուծման անհրաժեշտության պարագայում, այնպես էլ արտաքին քաղաքականության դաշտում: Ուշագրավ է նրա ելույթի մի հատված, ըստ որի՝ «Մարտիկը երբեմն կարող է ցուցաբերել ճկունություն՝ տեխնիկական պատճառներով, սակայն երբեք չպետք է մոռանա, թե ով է իր թշնամին, և թե որն է իր հիմնական նպատակը»<sup>653</sup>:

Այս համատեքստում պետք է նաև արձանագրենք, որ Իրանի Իսլամական Հանրապետության կառավարման համակարգը, ըստ էության, կարծրացած և վերջնական մոդել չէ, այն ունի որոշակի փոփոխությունների հնարավորություն, ինչն այս 45 տարիների ընթացքում տեղի է ունեցել: Օրինակ՝ Իրանի պետական համակարգից հանվեց և կրկին ներդրվեց Բանիմացների ինստիտուտը, ավելացվեց Նպատակահարմարության ժողովը: Իրանում գործում էր վարչապետի ինստիտուտը, սակայն 1989 թ. այդ պաշտոնը հանվեց Իրանի պետական համակարգից: Ուշադրության են արժանի այն քննարկումները, որ երբեմն տեղ են գտնում իրանական խոսույթում. այն է, որ հնարավոր է վարչապետի պաշտոնի վերականգնումը, փոխարենը՝ վերացնելով Նախագահի պաշտոնը: Ռաֆսանջանի, Խաթամիի, Ահմադինեժադի կառավարման հատկապես վերջին շրջանում քննարկվող թեմաներ էին դարձել նաև Առաջնոր-

---

<sup>653</sup> **А.Ш. Хакимов**, «Героическая гибкость» – новая внешнеполитическая доктрина Ирана, Вестник Томского государственного университета. История. 2018. № 54, стр 87.


դի ինստիտուտը միանձնյա կառավարելու աննպատակահարմարությունը, որը, սակայն, խիստ բացասական արձագանք է ստացել:

Սակայն վերջին տարիներին Իրանում տեղի ունեցող ներքաղաքական զարգացումներն ստիպում են մեզ կարծել, որ Իրանի Իսլամական Հանրապետությունը կանգնած է լուրջ մարտահրավերների առաջ, որոնք հաղթահարելու համար անպայման և առաջին հերթին պետք է իրականացվեն լուրջ բարեփոխումներ: Կարծում ենք, որ նկատվում է նաև աստվածապետական և հանրապետական գաղափարների միջև հավասարության նշաճող դնելու անհրաժեշտություն:

2025 թ. հունիսին ԱՄՆ-ի և Իսրայելի կողմից Իրանի դեմ իրականացված ռազմական գործողություններն ի ցույց դրեցին Իրանի պետական համակարգում առկա որոշ խնդիրներ: Մասնավորապես պարզ դարձավ, որ իսրայելական հատուկ ծառայություններին հաջողվել է ներթափանցել երկրի տարածք, ինչը լրջորեն սպառնաց Իրանի ազգային անվտանգության կայունությանը: Հնարավոր է կանխատեսել, որ Իրանը հետագայում կձեռնարկի համակարգային բարեփոխումներ, ինչը կնպաստի Իրանի կայունության ինդեքսի մեծացմանը:

Այսպիսով, ամփոփելով պետք է արձանագրենք, որ 1978–79 թթ. Այաթոլլահ Խոմեյնիին հաջողվեց ստեղծել մի պետական համակարգ, որի նախատիպը մինչ այդ չէր եղել, և, հակառակ արևմտյան բազմաթիվ վերլուծությունների, թե այս համակարգը կենսունակ չէ, գալիս է ապացուցելու, որ վերջին 46 տարին Իրանը՝ իբրև անկախ պետություն, կարողացել է ինքնադրսևորվել:

ԻԻՀ պետական համակարգն ամբողջովին և ավելի լավ պատկերացնելու համար կազմել ենք հետևյալ գծապատկերը, որն ակնառու ցույց է տալիս ԻԻՀ պետական համակարգի առանցքային ինստիտուտները:



- > Ժողովրդի կողմից ընտրված պաշտոններ  
 —————> Նշանակված պաշտոններ, որոնք վերահսկում են մյուս կառույցները

# ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

## ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

1. Իրանի Իսլամական Հանրապետության Սահմանադրություն (Հիմնական օրենք), Գառնիկ Բադալյանի թարգմանությամբ, Թեհրան, 2005:
2. ՀՀ ԱԳՆ, Պատմադիվանագիտական բաժին (արխիվ), Մերձավոր և Միջին Արևելքի վարչություն, Իրանի բաժին, ցուցակ 5:
3. Decision on an urgent political crisis: Iran, Vienna International Model United Nations 07 - 11 August, 2005 <http://afa.at/vimun/review/2005SC-Paper.pdf>
4. IAEA Director General's Introductory Statement to the Board of Governors, 23 June, 2025. <https://www.iaea.org/newscenter/statements/iaea-director-generals-introductory-statement-to-the-board-of-governors-23-june-2025>
5. Joint Comprehensive Plan of Action, <https://www.state.gov/e/eb/tfs/spi/iran/jcpoa/>
6. National Report of Geomatics in Islamic Republic of Iran, [https://unstats.un.org/unsd/geoinfo/rcc/docs/rccap19/crp/E\\_Conf.102\\_CRP2\\_Iranian%20NationalReport\\_Final.pdf](https://unstats.un.org/unsd/geoinfo/rcc/docs/rccap19/crp/E_Conf.102_CRP2_Iranian%20NationalReport_Final.pdf)
7. Security Council Imposes Sanctions on Iran for Failure to Halt Uranium Enrichment, Unanimously Adopting Resolution 1737 (2006), <http://www.un.org/press/en/2006/sc8928.doc.htm>
8. Security Council Tightens Restrictions on Iran's Proliferation-sensitive Nuclear Activities, Increases Vigilance Over Iranian Banks, has states inspect cargo, <http://www.un.org/press/en/2008/sc9268.doc.htm>
9. Security Council Reaffirms Earlier Resolutions on Iran's Uranium Enrichment, Calls on Country to Comply with Obligations 'Fully and Without Delay' <http://www.un.org/press/en/2008/sc9459.doc.htm>
10. Resolution 1747 (2007) Adopted by the Security Council at its 5647th meeting on 24 March 2007, [https://www.iaea.org/sites/default/files/unsc\\_res1747-2007.pdf](https://www.iaea.org/sites/default/files/unsc_res1747-2007.pdf)
11. Security Council Imposes Additional Sanctions on Iran, Voting 12 in Favour to 2 Against, with 1 Abstention <http://www.un.org/press/en/2010/sc9948.doc.htm>
12. The Memorandum of the Foreign Trade Regime of the Islamic Republic of Iran Ministry of Commerce, 2009,

<https://web.archive.org/web/20130310232210/http://www.irantradelaw.com/wp-content/uploads/2010/03/Irans-Foreign-Trade-Regime-Report.pdf>

13. UN, Security Council SC/9948, Security Council Imposes Additional Sanctions on Iran, Voting 12 in Favour to 2 Against.

14. Договор между Российской Социалистической Федеративной Советской Республикой и Ираном (Персией). Москва. 26 февраля 1921 года, Электронная библиотека исторических документов <http://docs.historyrussia.org/ru/nodes/136131-dogovor-mezhdu-rossiyskoy-sotsialisticheskoy-federativnoy-sovetskoy-respublikoy-i-iranom-persiey-moskva-26-fevralya-1921-goda#mode/inspect/page/3/zoom/4with> 1 Abstention 9 June 2010, <http://www.un.org/News/Press/docs/2010/sc9948.doc.htm>

15. Конвенция против пыток и других жестоких, бесчеловечных или унижающих достоинство видов обращения и наказания [https://www.un.org/ru/documents/decl\\_conv/conventions/torture.shtml](https://www.un.org/ru/documents/decl_conv/conventions/torture.shtml)

16. Резолюция 1696 (2006), принятая Советом Безопасности на его 5500-м заседании 31 июля 2006 года, Совет Безопасности, ООН, Distr.: General 31 July 2005, [https://www.iaea.org/sites/default/files/unsc\\_res1696-2006\\_rus.pdf](https://www.iaea.org/sites/default/files/unsc_res1696-2006_rus.pdf)

17. Резолюция 1929 (2010), принятая Советом Безопасности на его 6335-ом заседании 9 июня 2010 года, стр. 17, <https://www.cbr.ru/Content/Document/File/124011/1929.pdf>

18. Советский Союз в борьбе за разоружение. Сборник документов, М., 1977.

## **ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔԵՐ**

1. ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն, <http://old.mineconomy.am/hy/244>

2. ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն, <http://www.minenergy.am/page/502> (վերջին մուտք-22.08.2025)

3. Atomic Energy Organization of Iran, <https://aeoi.org.ir/en/>

4. Home Office, Country Policy and Information Note Iran: Military service, [https://assets.publishing.service.gov.uk/government/uploads/system/uploads/attachment\\_data/file/1121092/IRN\\_CPIN\\_military\\_service.pdf](https://assets.publishing.service.gov.uk/government/uploads/system/uploads/attachment_data/file/1121092/IRN_CPIN_military_service.pdf)

5. Defense Intelligence Agency – Iran Military Power (2019) <https://www.dia.mil/>

Portals/27/Documents/News/Military%20Power%20Publications/Iran\_Military\_Power\_LR.pdf

6. Government of the Islamic Republic of Iran, <https://irangov.ir>

7. Iran 1984 (IPU Archive) [http://archive.ipu.org/parline-e/reports/arcIRAN\\_1984\\_E.PDF](http://archive.ipu.org/parline-e/reports/arcIRAN_1984_E.PDF)

8. Iranian Naval Forces – A Tale of Two Navies, Office of Naval Intelligence <https://apps.dtic.mil/sti/citations/AD1028527>

9. Khamenei.ir – english.khamenei.ir

10. Library of Congress, <https://irp.fas.org/world/iran/mois-loc.pdf>

11. CIA, Military and Security Service Personnel Strengths – The World Factbook, CIA <https://www.cia.gov/the-world-factbook/countries/iran/>

12. Ministry of Culture and Islamic Guidance – Introduction (3 Mar 2013 – 31 Aug 2022) <https://web.archive.org/web/20170120205936/> <http://www.farhang.gov.ir/en/profileofministry/responsibilities>

13. Ministry of Culture and Islamic Guidance – Affiliated Organizations <https://web.archive.org/web/20170108172507/http://www.farhang.gov.ir/en/affiliateorganizations>

14. Ministry of Energy <https://moe.gov.ir/%D9%88%D8%B2%D8%A7%D8%B1%D8%AA-%D9%86%D9%8A%D8%B1%D9%88/%D8%AA%D8%A7%D8%B1%D9%8A%D8%AE%DA%86%D9%87>

15. Ministry of Foreign Affairs, IRI, <https://en.mfa.ir/>

16. Ministry of ICT, [www.ict.gov.ir/en/topmainmenu/aboutus](http://www.ict.gov.ir/en/topmainmenu/aboutus)

17. Ministry of Roads and Urban Development – The History <https://web.archive.org/web/20170205103404/http://mrud.ir>

18. National Iranian Gas Company <https://en.mop.ir/en-US/en.mop/5753/page/National-Iranian-Gas-Company>

19. National Iranian Petrochemical Company <https://en.mop.ir/en-US/en.mop/5755/page/National-Iranian-Petrochemical-Company>

20. Report of Achievements and Performance of the Ministry of the Interior <https://web.archive.org/web/20160420033049/> <http://www.moi.ir/portal/File/ShowFile.aspx?ID=eb9523e0-0334-450f-9945-7eb2455689f5>

21. The National Library of Medicine (PMC) <https://pmc.ncbi.nlm.nih.gov>

22. UNESCO, <https://en.unesco.org>

23. US Naval Institute – Iran’s Best Submarines...  
<https://news.usni.org/2021/01/31/irans-best-submarines-have-been-out-of-the-water-for-a-month>

24. 2021 Iran Military Strength – Global Fire Power [https://www.globalfirepower.com/country-military-strength-detail.php?country\\_id=iran](https://www.globalfirepower.com/country-military-strength-detail.php?country_id=iran)
25. Vezārat-e Omūr-e Khārejeh, <https://mfa.gov.ir/>
26. Ahamiyat-e majles-e khobregan-e rahbari, <https://majlesekhobregan.ir/fa/cont/4680/>

## **ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐ**

1. Հարցազրույցներ ԻԻՀ Մեջլիսի պատգամավոր Կարեն Խանլարյանի հետ, Թեհրան, նոյեմբեր 3, 2012, ԻԻՀ:
2. Հարցազրույցներ ԻԻՀ Մեջլիսի պատգամավոր Ռոբերտ Բեգլարյանի հետ, Թեհրան, նոյեմբեր 3, 2012, ԻԻՀ:
3. Հարցազրույցներ ԻԻՀ Մեջլիսի նախկին պատգամավոր Ռոբերտ Բեգլարյանի հետ, Երևան, օգոստոսի 28, 2025, ՀՀ:
4. Milani A., Sadjadpour K. Taking, Gary Sick, Tehran's Temperature: One Year On, panel at the Carnegie Endowment for International Peace, 8 June 2010, <https://carnegieendowment.org/files/0609carnegie-tehran.pdf>
5. Twelve Speeches by His Imperial Majesty Mohammad-Reza Pahlavi Aryamehr, Shahanshah of Iran on Ideological Basis of Iran's National and International Policy, Tehran, 1971. Extract from the Speech at the University of Bucharest on receiving a Honorary "Doctor of Political Law" Degree (Bucharest, May 27, 1966)

## **ԳՐՔԵՐ**

### **ՀԱՅԵՐԵՆ**

1. Իսկանդարյան Գ., Իրանա-ամերիկյան հարաբերությունները 1942-1960 թթ., Երևան, 2011:
2. Իսկանդարյան Գ., Հայաստան-Իրան հարաբերությունները անկախության ձեռքբերումից ի վեր, Երևան, 2016:
3. Իրանի Իսլամական Հանրապետության Սահմանադրություն (Հիմնական օրենք), թարգմանությունը Գառնիկ Բադալյանի, Թեհրան, 2005:
4. Հովսեփյան Լ., Հովհաննիսյան Ա., Մինասյան Ս., Տարածաշրջանի ռազմական տեղեկագիրք, Երևան, 2016:
5. Փահլևանյան Օ., ԻԻՀ Սահմանադրությունը և պետական կառուցվածքը, Երևան, 1997:

## ՌՈՒՍԵՐՆԵՐ

1. Армии на современном Востоке, Под. ред. Д. В. Стрельцова. Вооруженные силы Исламской Республики Иран, М., 2018.
2. Беккин, Р.И., Тоухидная экономика как разновидность исламской экономической модели, Экономика и Религия, М., 2012.
3. Военно-экономическое развитие и безопасность, Под ред. Л.В. Панкова, О.В. Гусарова, М., 2020.
4. Дорошенко, Е.А., Шиитское духовенство в двух революциях: 1905–1911 и 1978–1979 гг., М., 1998.
5. Дунаева, Е.В., Развитие политического процесса в Иране в 2005–2012 гг., Иран при М. Ахмадинежаде, М., 2013.
6. Иранская Революция 1978–1979, Причины и уроки, М., 1989.
7. Иран при М. Ахмадинежаде. Памяти А.З. Арабджяна, Н.М. Мамедов (под ред.), М., 2013.
8. Исламская Революция в Иране: Прошлое, настоящее, будущее, Н.М. Мамедов (отв. ред.) М., 1999.
9. Кременюк, В.А., Борьба Вашингтона против революции в Иране, М., 1984.
10. Иран: Диалог цивилизаций, 2003, Н.М. Мамедов (отв. ред.), М., 2003.
11. Манучихри, А., Политическая система Ирана, Санкт-Петербург, 2007.
12. Мельников, Л.И., Политическая экспансия американского империализма в Иране, Политика США на Ближнем и Среднем Востоке (США и страны СЕНТО), М., 1960.
13. Сажин, В.И., Бондарь Ю.М., Военная мощь Исламской Республики Иран, М.: Издательство Московского университета, 2014.
14. Скляр, Л.Е., Становление новых органов власти в Иране (1978–1981) // Иран: история и современность. М.: Наука, 1983.
15. 40 лет Исламской Республики Иран, Под ред. М.С. Каменева., М., 2020.

## ԱՆԳԼԵՐՆԵՐ

1. Abrahamian, E. – Iran Between Two Revolutions, Princeton, 1982.
2. Alem, Y. – Duality by Design: The Iranian Electoral System, Washington, 2011.

3. Alfoneh, A. – Iran Unveiled: How the Revolutionary Guards Is Turning Theocracy into Military Dictatorship, Washington, 2013.
4. Bakhtiari, B. – Parliamentary Politics in Revolutionary Iran, University press of Florida, 1996.
5. Banani, A. – Modernization of Iran, 1921–1941, Stanford, Stanford University Press 1961.
6. Behrooz, M. – Rebels with a Cause: The Failure of the Left in Iran, 2000.
7. Boroujerdi, M., Rahimkhani K. – Postrevolutionary Iran: A Political Handbook, Syracuse University Press, 2018.
8. Edited by Brumberg, D., Farideh F. – Power and Change in Iran: Politics of Contention and Conciliation, Indiana University Press, 2016.
9. Buchta, W. – Who Rules Iran? The Structure of Power in the Islamic Republic, Washington, 2000.
10. Clawson, P., Rubin, M. – Eternal Iran: Continuity and Chaos, New York: Palgrave Macmillan, 2005.
11. Cordesman, A. H., Wilner, Al. – Iran and the Gulf Military Balance, Washington, 2012.
12. Donovan, M., Carl, N., Kagani, F. W. – Iran's Reserve of Last Resort, Uncovering the Islamic Revolutionary Guard Corps Ground Forces Order of Battle, American Enterprise Institute, 2020.
13. Esposito, J. L. – The Islamic Threat: Myth or Reality? Oxford University Press, 1995.
14. Farsoun, S., K., Mashayekhi, Mehrdad – Iran: Political Culture in the Islamic Republic, London: Routledge, 1992.
15. Goode, J. F. – The United States and Iran, 1946–51: The Diplomacy of Neglect, Palgrave Macmillan, 1989.
16. Golkar, S., Aarabi, K. – The View from Tehran: Iran's Militia Doctrine, Tony Blair Institute for Global Chance, 2021.
17. Green, J. D., Wehrey, F.; Wolf, Ch. – Understanding Iran, RAND, 2009.
18. Hurewitz, J.C. – Middle East Politics: The Military Dimension, Pall Mall Press, 1969.
19. Keddie, N.R. – Modern Iran: Roots and Results of Revolution, Yale University Press, 2006.
20. Koch, S. A. – Zendeabad, Shah! CIA and the Fall of Mossadeq, Washington, 1998.

21. Maranlou, S. – Access to Justice in Iran: Women, Perceptions, and Reality, Cambridge University Press, 2014.
22. Military Balance, The Military Balance, London: Routledge, 2024.
23. Mohseni, P. – The 2016 Iranian Parliamentary Elections and the Future of Domestic Politics, Cambridge, 2016.
24. Ramazani, R.K. – Iran's Revolution: The Search for Consensus, Indiana University Press, 1990.
25. Sadjadpour, K. – Reading Khamenei: The World View of Iran's Most Powerful Leader, Washington, 2009.
26. Thaler, D. E., Nader, A., Chubin, Sh., Green, J., Lynch, Ch.– Mullahs, Guards, and Bonyads, RAND, 2010.
27. Upton, Joseph M. – The History of Modern Iran, Center for Middle Eastern Studies of Harvard University, 1960.
28. Wehrey, F., Green J., Nichiporuk, B., Nader, A., Hansell L., Nafisi R., Bohandy, S., Rise of the Pasdaran, The – Assessing the Domestic Roles of Iran's IRGC, RAND, 2009

## **ՀՈԴՎԱԾՆԵՐ**

### **ՀԱՅԵՐԵՆ**

1. Առաքելյան, Գ., Ռալիսին Իրանի ապագա հոգևոր առաջնորդ, 14/07/2021, <https://azg.am/am/2021070911/>
2. Իսկանդարյան, Գ., ԻԻՀ 2008–2010 թթ. Արտաքին և ներքին քաղաքական հիմնական խնդիրները, Եվրասիա, Երևան, 2012, հ. 1:
3. Իսկանդարյան, Գ., Իրանում տեղի ունեցող վերջին իրադարձությունների շուրջ, Նորավանք, Երևան, 2005:
4. Իսկանդարյան, Գ., Իրանի նկատմամբ ՄԱԿ-ի ԱԽ-ի (2006-2007 թթ.) ընդունած բանաձևերի շուրջ, Մերձավոր Արևելք, Երևան, 2007:
5. Իսկանդարյան, Գ., Իրանը՝ Պարսից ծոցի ազդեցիկ գործոն, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XXIII, Երևան, 2004:
6. Մկրտչյան, Ա. «Եթե Իրանը լուրջ խնդիրների առաջ կանգնի, մենք շատ լուրջ դժվարություններ ենք ունենալու», Հունվար 02, 2018, <https://www.azatutyun.am/a/28951541.html>

### **ԱՆԳԼԵՐԵՆ**

1. Akhavi, Sh. – The Thought and Role of Ayatollah Hossein'ali Montazeri in the Politics of Post-1979 Iran, Iranian Studies, vol. 41, no. 5, December 2008

2. Aryan H., The Artesh: Iran's Marginalized and Under-Armed Conventional Military, November 15, 2011, Middle East Institute.
3. Azizi, F. – Medical Education in the Islamic Republic of Iran: Three Decades of Success, *Iranian J Public Health*, Vol. 38, Suppl. 1, 2009
4. Bahrami, A. – Was I Right to Pardon the Man who Blinded me with acid? *The Guardian*, 2015
5. Banuazizi, A., *Faltering Legitimacy: The Ruling Clerics and Civil Society in Contemporary Iran*, *International Journal of Politics, Culture and Society*, Vol. 8, No. 4, 1995
6. Bassam, L., Perry T., How Iranian general plotted out Syrian assault in Moscow, Oct. 6., 2015
7. Baldwin G. B., The Legal System of Iran, *International Lawyer*, Vol. 7, No. 2.
8. Behrooz, M. – Fractionalism in Iran under Khomeini, *Middle Eastern Studies*, Vol. 27, No. 4 (Oct. 1991)
9. Boroujerdi, M., Rahimkhani, K. – *The Office of the Supreme Leader: Epicenter of a Theocracy*, *Indiana Series in Middle East Studies*, 2016
10. Borden, E., Maloney, S. – Wednesday: Iran's Guardians' Council Has Approved a Record-Low Percentage of Candidates. What Will That Mean for the Upcoming Vote? *Brookings*, Feb. 24 2016
11. Bourens, A., Schmida, B., Rezaei, B., Reddy, R., Campa, K., Moore, J., Moorman, C., Parry, A., Carter, B. – *Iran Update Special Report*, June 24 2025
12. Bozorgmehr, N., 'Iran cracks down on Revolutionary Guards business network', *Financial Times*, 14 Sep. 2017.
13. Cronin, St. – Opposition to Reza Khan within the Iranian Army, 1921–26, *Middle Eastern Studies*, Vol. 30, No. 4 (Oct., 1994).
14. Dousti, M, Goodarzi M, Asadi H, Khabiri M., Sport policy in Iran, March 2013, *International Journal of Sport Policy* 5
15. Ensor J., Rare public protests spread across Iran amid spiraling inflation, *The Telegraph*, 29 December 2017
16. Erdbrink, Th. – In Iran, Rouhani Begins 2nd Term with Signs He's Yielding to Hard-Liners, *NYT*, Aug. 3 2017
17. Farhi, F. – *The Assembly of Experts*, *Iran Primer*, 08.2015
18. Farhi, F. – *Iran's 2008 Majlis Elections: The Game of Elite Competition*, *Brandeis*, 2008, N. 29.

19. Faucon, B., Stacy Meichtry and Asa Fitch, Iran's Government and Revolutionary Guards Battle for Control of Economy, The Wall Street Journal, 2016.
20. Fereidoun, H. – Brother of Iran's President Is Arrested, The Guardian, Jul. 16 2017
21. Ghasseminejad, S., Kahn, T., New Iranian Draft Budget Slashes Military Spending, The Foundation for Defense of Democracies, Washington
22. Golkar, S., Paramilitarization of the Economy: The Case of Iran's Basij Militia, Armed Forces & Society.
23. Kessler G. – Was Obama's \$1.7 Billion Cash Deal with Iran Prohibited by US Law? Washington Post, Mar. 1 2018
24. Knysh, Al. – "Irfan" Revisited: Khomeini and the Legacy of Islamic Mystical Philosophy, Middle East Journal, Vol. 46, No. 4 (Autumn, 1992).
25. Hakimzadeh, Shirin – Iran: A Vast Diaspora Abroad, Abroad and Millions of Refugees at Home, Migration Policy Institute, September 1, 2006
26. Hudson, J., Dawsey, J., Harris, Sh., Lamothe, D. – Killing of Soleimani Follows Long Push from Pompeo..., Washington Post, Jan. 5 2020
27. Jones St., The Islamic Republic of Iran: An introduction Research paper 09/92 11 December 2009, House of Commons.
28. Lorentz, J. H. – Educational Development in Iran..., Iranian Studies, Sep. 2011
29. Majidiyar, A. Rouhani Says Iran's Military Budget Increased by 145 Percent During His Term, April 18, 2017, Middle East Institute.
30. Montazeri, H.A., – Encyclopaedia Britannica, accessed 29 May 2020
31. Montazeri, H.A., Encyclopaedia Britannica, Iranian cleric.
32. Nikazmerad N. M., A Chronological Survey of the Iranian Revolution, Iranian Studies, Volume XIII, Nos. 1-4.
33. Ostovar, A. Iran's Basij: Membership in a Militant Islamist Organization, Middle East Journal, Vol. 67, N. 3.
34. Reisinezhad, A. – The Iranian Green Movement: Fragmented Collective Action..., Iranian Studies, Feb. 24 2014
35. Rezaei, F. – Iran's Military Capability: The Structure and Strength of Forces, Insight Turkey, Fall 2019
36. Randjbar-Daemi, Siavush – Building the Islamic State: The Draft Constitution of 1979 Reconsidered, Iranian Studies, 2013, Vol. 46, No. 4

37. Sharafedin, B. – Iranian Commander Soleimani Meets Putin in Moscow, Reuters, Dec. 16 2015
38. Sarab, F. The Post-Khomeini Era in Iran: The Elections of the Fourth Islamic Majlis, Middle East Journal, Vol. 48, no. 1, Winter 1994.
39. Shmidt P., Understanding Iran's Assembly of Experts Vote, The Washington Institute for Near East Policy, 16.02.2016
40. Verulava, T. – Health Care System in the Islamic Republic of Iran, Insurance, Health Policy & Management, 2006
41. Vaisi, R., The Fakhrizadeh assassination: A major failure for Iranian intelligence, 2020, Middle East Institute.
42. Wege, Carl Anthony – Guide to the Study of Intelligence: Iran's Intelligence Establishment, The Intelligencer Journal... Summer 2015
43. Wezeman P., Kuimova, Al., Military Spending and Arms Imports by Iran, Saudi Arabia, Qatar and the UAE, SIPRI Fact Sheet, May 2019, SIPRI Fact Sheet.
44. Wotyagov, Sergey – Islamic Republic of Iran, Comparative National Systems, Nov. 19 2009
45. Zweiri M., Understanding Iran's Assembly of Experts, Center for Iranian Studies, Durham University, 2006.

## ԱՌՒՍԵՐԵՆ

1. Бондарь Ю.М.- Войска специального назначения Вооруженных Сил Ирана, Институт Ближнего Востока, 3 апреля 2013.
2. Боев Э.Б. Представления о роли и месте монархии в Иране в работах последнего иранского шаха Мохаммеда Реза Пехлеви, Вестник Нижегородского университета им. Н.И. Лобачевского, 2013, N2.
3. Гамов А. – Юридическая и судебная система Исламской Республики Иран, Институт Ближнего Восток, 2003.
4. Гусенова П.А. – Общая характеристика судебной системы ИРИ, Вестник Санкт-Петербургского Университета, Сер. 14, Вып. 2, 2016.
5. Дорошенко Е. – Иран, Специальный бюллетень, №12/103.
6. Дунаева Е.В. – Ирано-Славика, 2010, №1 (21).
7. Ищенко В.Б., Разумный В.В. – Медицина в Каджарском Иране XIX века, «Архонт», N 6 (9), 2018.
8. Лямин Ю. – Подлодка для аятоллы: новое пополнение ВМС Ирана, Известия, 21.02.2019.

9. Мамедова Н.М.- Политическая система исламской республики Иран: особенности и возможности трансформации, «Контурсы глобальных трансформаций: политика, экономика, право», 2018.

10. Мамедова Н.М., Политико-экономический аспект Диалога цивилизаций, Иран: Диалог цивилизаций, 2003.

11. Сажин В.И. – Военная мощь Ирана: от пепла до алмаза, Исламская Революция в Иране: Прошлое, настоящее, будущее, М., 1999.

12. Сажин В.И. – Корпус стражей исламской революции Ирана – государство в государстве, Контурсы глобальных трансформаций, Том 10, N 3, 2017.

13. Сажин В.И. – Парламентские выборы в Иране и их влияние на внутреннюю и международную политику, Международная Жизнь, 04.03.2020.

14. Сажин В.И. – Дональд Трамп vs КСИР, Международная Жизнь, 15.04.2019.

15. Сумбатян Ю.Г. – Воины "Мировой исламской революции", Независимое военное обозрение, 2001.

16. Торин Андрей – Исламская революция в Иране и современная внешняя политика стран Востока, Международная Жизнь, 16.02.2017.

17. Хакимов А.Ш. – «Героическая гибкость» – новая внешнеполитическая доктрина Ирана, Вестник Томского государственного университета. История. 2018. № 54, 2018.

Ходунов А. – Демографическая модернизация Ирана, Демографическое обозрение, Том 4 № 2 (2017).

18. Юрьев М.М. – Силы сопротивления «Басидж» в оборонной политике ИРИ, Институт Ближнего Востока, 1.12.2006.

## **ՖՐԱՆՍԵՐԵՆ**

1. Paul Balta, la Révolution Islamique en Iran, Revue Tiers Monde, Vol. 23, No. 92, L'Islam et son actualité pour le Tiers Monde (Octobre-décembre 1982), <http://www.jstor.org/stable/23590276>.

## **ՕժԱՆԴԱԿ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

1. Շահրարի, Ա.Ա., Իրանի Իսլամական Հանրապետության իրավական համակարգը, Ատենախոսություն, Երևան, 2018:

2. Военная экономика стран Востока, научный сборник N 6, для служебного пользования, М. 1986.

3. Внимание, противник! Сильные и слабые стороны подразделений и частей вероятного противника, [http://www.tipologic.narod.ru/dok\\_plakat\\_vnimanie\\_protivnik.htm](http://www.tipologic.narod.ru/dok_plakat_vnimanie_protivnik.htm)

4. Иран, Human rights watch, 2015, [https://www.hrw.org/sites/default/files/related\\_material/iran\\_ru.pdf](https://www.hrw.org/sites/default/files/related_material/iran_ru.pdf)

5. Иран: оппозиционные политические группы, силовые структуры, избранные проблемы в области прав человека, верховенство права Сборник ИСП, Июль 2015 г.

6. Марчуков В. Ф., Зобова И. Ю., Социально-политические системы стран Среднего Востока (Турция, Иран, Афганистан) (с углубленным изучением истории и культуры ислама), Курс лекций, Казань, 2012,chrome-extension://efaidnbmnnnibpcajpcgicfindmkaj/[https://kpfu.ru/docs/F1027564676/4\\_Zobov\\_lekts.pdf](https://kpfu.ru/docs/F1027564676/4_Zobov_lekts.pdf)

7. How strong is Iran Military? Estimated military strength of Iran 2015, [https://www.statista.com/chart/17915/estimated-military-strength-of-iran/?fbclid=IwAR3747kIv\\_JoRs4psPo09nDhBnYsR481bCJD-RN2dkJYhqQYa2Ex\\_eas8bQ](https://www.statista.com/chart/17915/estimated-military-strength-of-iran/?fbclid=IwAR3747kIv_JoRs4psPo09nDhBnYsR481bCJD-RN2dkJYhqQYa2Ex_eas8bQ)

8. Iran, Submission to the Committee on Economic, Social and Cultural Rights (Amnesty International Publications, 2012) 49<sup>th</sup> Session, Pre-sessional Working Group (21-25 MAY 2012)

9. Iranian Naval Forces, A Tale of Two Navies, Published by the Office of Naval Intelligence, February 2017.

10. Mirjam Künkler, The Special Court of the Clergy (Dādghāh-Ye Vizheh-Ye Ruhāniyat) and the Repression of Dissident Clergy in Iran, May 13, 2009, p. 14 [https://papers.ssrn.com/sol3/papers.cfm?abstract\\_id=1505542](https://papers.ssrn.com/sol3/papers.cfm?abstract_id=1505542)

11. Nargess Tavassolian, The future of Iran: Judicial reform Reform within the Judiciary of Iran, <https://lif.blob.core.windows.net/lif/docs/default-source/future-of-iran/2012-future-of-iran-by-nargess-tavassolian-reform-within-the-judiciary-of-iran.pdf?sfvrsn=0>

12. Number of armed force troops in Iran between 1970 and 1979, Published by Statista Research Department, Aug 26, 2020, <https://www.statista.com/statistics/876398/iran-armed-forces/>

13. Rights Denied: Violations against ethnic and religious minorities in Iran, Ceasefire Centre for Civilian Rights.

14. The Iranian Judiciary: A Complex and Dysfunctional System, October 12, 2016, [https://iranhrdc.org/the-iranian-judiciary-a-complex-and-dysfunctional-system/#\\_ftn53](https://iranhrdc.org/the-iranian-judiciary-a-complex-and-dysfunctional-system/#_ftn53)

15. The Imperial Iranian Gendarmerie, <http://www.aryamehr.org/eng/iaa/gen.htm>

## **ԿԱՅՔԵՐ**

### **ՀԱՅԵՐԵՆ**

1. Ինչպե՞ս կարող է Երևանը պահպանել իր տեղը «Հյուսիս-Հարավ» էներգետիկ միջանցքում, <https://armeniasputnik.am/20210214/inchpes-karox-erevan-pahpanel-ir-tex-hyusus-harav-energetik-mijancqum-26436166.html>

2. Հայաստանում պատրաստվում են պատշաճ ընդունել Նովրուզի օրերին երկիր այցելող իրանցիներին, <https://armenpress.am/arm/news/968452/>

3. «Նավասարդ» հայ-իրանական մշակութային խոհանոցային փառատոն, <https://int-heritage.am/navasard-armenian-iranian-cultural-cuisine-festival/>

4. Բարեկարգչական 6-րդ մեջլիսը եւ իրանահայութեան պատգամաւորները... [http://www.diplomat.am/publ/authors/derenik\\_meliqean/1/87-1-0-1534](http://www.diplomat.am/publ/authors/derenik_meliqean/1/87-1-0-1534)

### **ՌՌԻՍԵՐԵՆ**

1. Ахмадинеджад может закончить карьеру на виселице, (13.06.2023) [http://web.archive.org/web/20110605060125/http://www.mignews.com/news/society/world/030611\\_32819\\_21470.html](http://web.archive.org/web/20110605060125/http://www.mignews.com/news/society/world/030611_32819_21470.html)

2. В Тегеране и Москве откроются культурные центры, 6 февр. 2023 <https://ru.irna.ir/news/85021432>

3. Военно-техническое сотрудничество Ирана и России. Досье, 19 янв 2015 <https://tass.ru/info/1707163>

4. Военные Ирана осуществили первый запуск крылатой ракеты с подлодки, 25.02.2019, Fars News Agency <https://www.youtube.com/watch?v=hxaqIF3hVBI>

5. Выборы в Иране: четыре главных вопроса и ответа, 26 февраля 2016 [http://www.bbc.com/russian/international/2016/02/160226\\_iran\\_elections\\_guide](http://www.bbc.com/russian/international/2016/02/160226_iran_elections_guide)

6. Избирательная система Ирана не отражает волю народа, 26.05.2016 <https://surli.cc/qrmcly>

7. Корабли Каспийской флотилии и ВМС Ирана артиллерийским огнём уничтожили морские силы НВФ в рамках СКШУ «Кавказ-2020, 24.02.2020 <https://nrnews.ru/news/war-news/118777-korabli-kaspiyskoy-flotilii-i-vms-irana->

artilleriyskim-ognem-unichtozhili-morskie-sily-nvf-v-ramkah-skshu-kavkaz-2020.html

8. Корпус Стражей Исламской Революции <https://iran1979.ru/korpus-strazhej-islamskoj-revolyucii/>

9. Министерство транспорта и градостроительства Ирана открывает 500 проектов по всей стране, 08.02.2022 [https://iran.ru/news/economics/119823/Ministerstvo\\_transporta\\_i\\_gradostroitelstva\\_Irana\\_otkryvaet\\_500\\_proektov\\_po\\_vsey\\_strane](https://iran.ru/news/economics/119823/Ministerstvo_transporta_i_gradostroitelstva_Irana_otkryvaet_500_proektov_po_vsey_strane)

10. Министр культуры: Иран возглавляет мусульманские государства по количеству библиотек, 15 нояб. 2022, <https://ru.irna.ir/news/84944003/>

11. Министр дорог Ирана заявил о трансформации транспорта страны в ближайшие 4 года, 4 окт. 2022 г., <https://nournews.ir/ru/news/110647>

12. Мощь Востока: каков военный потенциал Ирана, <https://tass.ru/armiya-i-opk/3209054>

13. Новый президент Ирана Хасан Роухани: кто он? [https://www.bbc.com/russian/international/2013/06/130615\\_iran\\_rouhani\\_profile](https://www.bbc.com/russian/international/2013/06/130615_iran_rouhani_profile)

14. Почти 3 млн туристов посетили Иран за последние 11 месяцев <https://ru.irna.ir/news/84857491>

15. Президент Ирана назвал резолюцию СБ ООН "Клочком бумаги", а парламент принял закон, пересматривающий отношения с МАГАТЭ. 24 декабря. ИНТЕРФАКС, <http://www.scrf.gov.ru/news/allnews/140/>

16. Правительство Ирана борется со стражами исламской революции за контроль над экономикой, 19 мая 2016 <https://www.vedomosti.ru/economics/articles/2016/05/19/641661-irana-strazhami-revolyutsii-kontrol-ekonomikoi>

17. Разработки Электронной промышленности Ирана <https://imp-navigator.livejournal.com/390247.html?fbclid=IwAR20gitNR-Fu10x2hSOFGZzlGPC7wxOi3hF-ERbQRNLJneKxC73nYS98R2Y>

18. Реформистские партии Ирана решили игнорировать парламентские выборы, ТАСС, 2011 <https://tass.ru/politika/535466>

19. Судьбы иранских президентов, 21 мая 2017 [https://rus.azattyq.org/a/world\\_seven\\_iranian\\_presidents/28500387.html](https://rus.azattyq.org/a/world_seven_iranian_presidents/28500387.html)

## ԱՆԳԼԵՐԵՆ

1. Abolhasan Bani-Sadr, president of Iran <https://www.britannica.com/biography/Abolhasan-Bani-Sadr>

2. Ayatollah Dastgheib: Supreme Leader Has No Right on the People, Payvand, <http://www.payvand.com/news/10/oct/1001.html>

3. Arash Karami, "Shahrودي seen as likely candidate to head Assembly of Experts", Al-Monitor, 27 October, 2014 <https://www.al-monitor.com/pulse/fr/originals/2014/10/shahrودي-nominated-assembly-experts.html>

4. Analysis: 2016 Iranian Parliamentary & Assembly of Experts Election Results, Majlis Monitor, 2016/03/07, <https://majlismonitor.com/en/2016/03/analysis-2016-iranian-parliamentary-assembly-of-experts-election-results/>

5. A year after 'Bloody November,' reformists in Iran still fight for legitimacy, By ABC News 20 November 2020, <https://abcnews.go.com/International/year-bloody-november-reformists-iran-fight-legitimacy/story?id=74300820>

6. Analysis - Energy Sector Highlights, <https://www.eia.gov/international/overview/country/IRN>

7. Analysis: Iran supreme leader comments signal strategy shift, By Jon Gambrell, May 23, 2019, <https://apnews.com/article/ali-khamenei-donald-trump-persian-gulf-tensions-tehran-international-news-cad4384061504c1b959a5533bae2e59e>

8. @AmoliLarijaniir, May 25, <https://twitter.com/amolilarijaniir/status/1397166112874409984?s=25&fbclid=IwAR29izBdC1krflb8KyY9ixE8nJCifg8lUKkj17JV57dGHtdvhHKhTJrq3Hs>

9. Bezhani F., Leaked Video of Khamenei Raises Questions about Iran's Supreme Leadership, RadioFreeEurope RadioLiberty, January 11, 2018, <https://www.rferl.org/a/iran-khamenei-leaked-video-1989-questions-leadership/28969517.html>

10. BBC, By James Reynolds, Analysis: Row between Iranian leaders comes to a head, 7 May 2011, <http://www.bbc.co.uk/news/world-middle-east-13312907>

11. Connor Bradbury, Profiles: Iran's Intelligence Agencies, <https://iranprimer.usip.org/blog/2023/apr/05/profiles-iran%E2%80%99s-intelligence-agencies>

12. Death Penalty 2022, Recorded executions skyrocket to highest figure in five years, Amnesty International, <https://www.amnesty.org/en/latest/news/2023/05/death-penalty-2022-executions-skyrocket/#:~:text=Recorded%20executions%20in%20Iran%20soared,while%20Egypt%20executed%2024%20individuals.>

13. Disqualifying the Qualified: Female Candidates & the Assembly of Experts, 2016/02/22 <https://majlismonitor.com/en/2016/02/disqualifying-the-qualified-female-candidates-for-the-assembly-of-experts/>

14. Dushanbe (IP) - Iran's Minister of Culture and Islamic Guidance said that interaction with neighboring countries in cultural, economic, and political sectors is

on the agenda of the Iranian government <https://iranpress.com/content/69118/interaction-with-neighbors-one-pillar-iran-foreign-policy-minister>

15. Executive bylaws for the election of the Assembly of Experts of the leadership, 1.04.2013 <http://irandataportal.syr.edu/executive-bylaws-for-the-election-of-the-assembly-of-experts-of-the-leadership>

16. Everything, you need to know about Iran's Assembly of Experts election, February 9, 2016, <https://www.brookings.edu/blog/markaz/2016/02/09/everything-you-need-to-know-about-irans-assembly-of-experts-election/>

17. FACTBOX: How big is Iran's military? <https://www.reuters.com/article/us-nuclear-iran-military-idUKHAF23819820080702>

18. Government of Islamic Republic of Iran, Cabinet, <https://irangov.ir/cat/500>

19. Haghighatnejad R., Top Secret Committee Plans Successor for Supreme Leader, <https://iranwire.com/en/features/1864>

20. Hafezi P., Sharafedin B., Stay in your job, Iranian president tells moderate ally Zarif, February 27, 2019 <https://www.reuters.com/article/us-iran-zarif-resignation-idUSKCN1QG0LY>

21. Hamid Ghassemi-Shall, Toronto man who spent time on death row in Iran has returned home, <https://globalnews.ca/news/895792/toronto-man-who-spent-time-on-death-row-in-iran-has-returned-home/>

22. Hashemi Rafsanjani: The Life, Times and Legacy of the Islamic Republic's Machiavelli, Masarat, King Faisal Centre for Research an Islamic Studies, February - March 2017, <https://www.kfcris.com/pdf/d8ee509f82e591e75ae63e88efcefbdb35887b60cc596b.pdf>

23. Human Rights Watch, Access Denied: Iran's Exclusionary Elections, 12 June 2005, [https://www.hrw.org/legacy/backgrounder/mena/iran0605/2.htm#\\_Toc106176106](https://www.hrw.org/legacy/backgrounder/mena/iran0605/2.htm#_Toc106176106)

24. Hassan Rouhani, Feb 29, 2016, [https://twitter.com/HassanRouhani/status/704352856292384768?ref\\_src=twsrc%5Etfw%7Ctwcamp%5Etweetembed%7Ctwterm%5E704352856292384768%7Ctwgr%5E%7Ctwcon%5Es1\\_&ref\\_url=https%3A%2F%2Firanprimer.usip.org%2Fblog%2F2016%2Ffeb%2F29%2Felection-results-1-parliament](https://twitter.com/HassanRouhani/status/704352856292384768?ref_src=twsrc%5Etfw%7Ctwcamp%5Etweetembed%7Ctwterm%5E704352856292384768%7Ctwgr%5E%7Ctwcon%5Es1_&ref_url=https%3A%2F%2Firanprimer.usip.org%2Fblog%2F2016%2Ffeb%2F29%2Felection-results-1-parliament)

25. Henry Austin, What is Iran's secretive Quds Force? Jan. 4, 2020, <https://www.nbcnews.com/news/world/who-are-iran-s-secretive-quds-forces-n1110156>

26. Ilan Berman, Understanding Ahmadinejad, The American Foreign Policy Council, Washington, June 2006, No. 1,

<https://www.afpc.org/uploads/documents/UnderstandingAhmadinejad.pdf>

27. Imam Khamenei received the first dose of the Iranian Covid vaccine June 25, 2021, <https://www.youtube.com/watch?v=laP4eGzsi3g>

28. Iran's Supreme Leader In 1989: 'I Am Not Qualified', RadioFreeEurope RadioLiberty, January 10, 2018, <https://www.rferl.org/a/irans-supreme-leader-not-qualified/28966534.html>

29. Iran's Rafsanjani Loses Key Post on Assembly of Experts, March 08, 2011, [https://www.rferl.org/a/iran\\_rafsanjani\\_assembly\\_of\\_experts/2331272.html](https://www.rferl.org/a/iran_rafsanjani_assembly_of_experts/2331272.html)

30. "Iran hardliner Yazdi picked to head Assembly of Experts", BBC News, 10 March 2015, <https://www.bbc.com/news/world-middle-east-31814087>

31. Iran elections: Reformists make gains in Assembly of Experts, BBC News, 29 February 2016, <https://www.bbc.com/news/world-middle-east-35684776>

32. Iran Presidential Election to Feature 7 Candidates, May 25, 2021, <https://www.voanews.com/middle-east/iran-presidential-election-feature-7-candidates>

33. Iran's President Rouhani urges greater 'competition' in election, 26/05/2021, <https://www.france24.com/en/live-news/20210526-iran-s-president-rouhani-urges-greater-competition-in-election>

34. Iran parliament backs reformist bill, 10 November, 2002, [http://news.bbc.co.uk/2/hi/middle\\_east/2436427.stm](http://news.bbc.co.uk/2/hi/middle_east/2436427.stm)

35. Iran: Veto on Torture Bill Condemned, June 11, 2002, Human rights watch, <https://www.hrw.org/news/2002/06/11/iran-veto-torture-bill-condemned>

36. Iran Parliament Gives Vote of Confidence to all but one Raisi Minister, Wednesday, 25.08.2021, <https://old.iranintl.com/en/iran/iran-parliament-gives-vote-confidence-all-one-raisi-minister>

37. Iran ranked 16th in world in science production terms, <https://en.mehrnews.com/news/169554/Iran-ranked-16th-in-world-in-science-production-terms>

38. Iran Launches Production of Stealth Sub, [https://www.foxnews.com/story/iran-launches-production-of-stealth-sub?fbclid=IwAR2so3EX\\_ybXA MgcSwTtuGromk XEDOiZ7g4g35Jr\\_AfY4uvtdcqW\\_Bpd2L4](https://www.foxnews.com/story/iran-launches-production-of-stealth-sub?fbclid=IwAR2so3EX_ybXA MgcSwTtuGromk XEDOiZ7g4g35Jr_AfY4uvtdcqW_Bpd2L4)

39. Iran's Drone Industry: Past, Present and Future, 2nd January 2023, <https://fairbd.net/iran-drone-industry-history/>
40. Iran Aviation Industries Organization (IAIO), 07.08.2019 <https://www.globalsecurity.org/military/world/iran/iaio.htm>
41. The Iran Primer, <https://iranprimer.usip.org/blog/2020/jan/30/trends-parliamentary-elections>
42. Iran vote turnout hits historic low amid discontent  
[https://www.reuters.com/world/middle-east/unofficial-reports-put-iran-election-turnout-around-40-2024-03-02/?utm\\_source=chatgpt.com](https://www.reuters.com/world/middle-east/unofficial-reports-put-iran-election-turnout-around-40-2024-03-02/?utm_source=chatgpt.com)
43. Iran's parliament votes to combat financing of terrorism, 07.10.2018, <https://www.dw.com/en/irans-parliament-votes-to-combat-financing-of-terrorism/a-45788328>
44. Iran Military power, 2019, [https://www.dia.mil/Portals/27/Documents/News/Military%20Power%20Publications/Iran\\_Military\\_Power\\_LR.pdf](https://www.dia.mil/Portals/27/Documents/News/Military%20Power%20Publications/Iran_Military_Power_LR.pdf)
45. Iran To Shorten Mandatory Military Service To 14 Months, [https://www.iranintl.com/en/202403170295?fbclid=IwAR3fb9jfq5Wtzlc63eldu\\_H5bKL4Wi7ypv\\_Th-xQxl4KH2EQ-fX44ANUL7Y\\_aem\\_AWokBb8UPKrLL6xAEm6srWkf6UrfANZr-GFRBL0AgTvhH3Mdpk6jJYSHaOFK-s3zoLKQXvj9DwnHGT9Q5qqqTqm5](https://www.iranintl.com/en/202403170295?fbclid=IwAR3fb9jfq5Wtzlc63eldu_H5bKL4Wi7ypv_Th-xQxl4KH2EQ-fX44ANUL7Y_aem_AWokBb8UPKrLL6xAEm6srWkf6UrfANZr-GFRBL0AgTvhH3Mdpk6jJYSHaOFK-s3zoLKQXvj9DwnHGT9Q5qqqTqm5)
46. Iran presents new Fateh submarine armed with cruise missile: TV, Reuters, February 17, 2019, <https://www.reuters.com/article/us-iran-submarine-fateh/iran-presents-new-fateh-submarine-armed-with-cruise-missile-tv-iduskcn1q60eb/>
47. Iran unveils 'Haj Qasem', 'Abu-Mahdi' missiles, Aug 20, 2020, <https://en.mehrnews.com/news/162524/Iran-unveils-Haj-Qasem-Abu-Mahdi-missiles>
48. IRGC-Air Force Al-Ghadir Missile Command, <https://www.iranwatch.org/iranian-entities/irgc-air-force-al-ghadir-missile-command>
49. Iran shows off secret underground missile base in new video, Oct 16, 2015, CNN, <https://www.youtube.com/watch?v=xM1kevVVVok>
50. Iran's new spymaster. June 20, 2010, <https://www.iranfocus.com/en/intelligence-reports/exclusive-reports/20815-irans-new-spymaster/>
51. Iran exile group: Khamenei tightens intelligence grip, Reuters, November 12, 2009. <https://www.reuters.com/article/us-iran-intelligence-idUSTRE5AB2KS20091112>
52. Joint Submission by Abdorrahman Boroumand Foundation, The Advocates for Human Rights, Association for Human Rights in Kurdistan of Iran-

Geneva, Iran Human Rights, and World Coalition against the Death Penalty, [chrome-extension://efaidnbmnnnibpcajpcglclefindmkaj/https://upr-info.org/sites/default/files/documents/2014-10/js1\\_upr20\\_irn\\_e\\_main.pdf](chrome-extension://efaidnbmnnnibpcajpcglclefindmkaj/https://upr-info.org/sites/default/files/documents/2014-10/js1_upr20_irn_e_main.pdf)

53. Khatam al-Anbiya to Operationalize Projects Worth \$28b, May 05, 2018, <https://financialtribune.com/articles/economy-domestic-economy/85831/khatam-al-anbiya-to-operationalize-projects-worth-28b>

54. Marine Industries Group, Iran Watch, <https://www.iranwatch.org/iranian-entities/marine-industries-group>

55. Omer Carmi, Raisi's National Security Team, September 10, 2021, <https://iranprimer.usip.org/blog/2021/aug/13/raisi-national-security-picks>

56. On National Week of Natural Resources, the Leader planted a sapling, Mar 8, 2016. <https://english.khamenei.ir/photo/3492/On-National-Week-of-Natural-Resources-the-Leader-planted-a-sapling>

57. President Donald Trump Delivers Remarks on Iran Deal - May 8, 2018 | CNBC, May 8, 2018, <https://www.youtube.com/watch?v=-QiMvernILOhttps://www.youtube.com/watch?v=-QiMvernILO>

58. 2021 Presidential Election, Iran Data Portal, <https://irandataportal.syr.edu/2021-presidential-election>

59. Pharmaceuticals, Monday, October 20, 2008, <https://web.archive.org/web/20110707183052/http://www.atiehbahar.com/Resource.aspx?n=1000012>

60. Prolific Cleric Appointed as Member of Guardian Council, Radio Farda, November 02, 2020, <https://en.radiofarda.com/a/a-younger-extremist-cleric-appointed-as-member-of-guardian-council/30926442.html>

61. Parliamentary Chamber: Majles Shoraye Eslami, Elections held in 1996, [http://archive.ipu.org/parline-e/reports/arc/2149\\_96.htm](http://archive.ipu.org/parline-e/reports/arc/2149_96.htm)

62. Retrial for girl due to hang for killing rapist, <https://www.independent.co.uk/news/world/middle-east/retrial-for-girl-due-to-hang-for-killing-rapist-431113.html>

63. Showdown: 6 Things to Know about Rafsanjani's Confrontations with Conservatives, Majlis Monitor, 27 January 2016, <https://majlismonitor.com/en/2016/01/showdown-6-things-to-know-about-rafsanjanis-confrontations-with-conservatives/>

64. Structure of the Assembly of Experts, <http://www.majlesekhobregan.ir/en/ashnayibamajles/View/3294/Structure-of-the-Assembly-of-Experts>

65. Second 1981 Presidential Election, <https://irandataportal.syr.edu/second-1981-presidential-election>
66. Special Reports, Iran: Who holds the power? - BBC NEWS [http://news.bbc.co.uk/2/shared/spl/hi/middle\\_east/03/iran\\_power/html/expediency\\_council.stm](http://news.bbc.co.uk/2/shared/spl/hi/middle_east/03/iran_power/html/expediency_council.stm)
67. Structure of Iran's State-Run TV IRIB, <chrome-extension://efaidnbmnnnibpcajpcgiclfefindmkaj/https://irp.fas.org/dni/osc/iran-tv.pdf>
68. The Assembly of Experts, June 13, 2011, <https://iranprimer.usip.org/resource/assembly-experts>
69. Top Secret Committee Plans Successor for Supreme Leader, <https://iranwire.com/en/features/1864>
70. The Guardian Council, May 21, 2013, IRNA, <https://en.irna.ir/news/80665495/The-Guardian-Council>
71. The Constitutional Council <https://www.shora-gc.ir/fa/members>
72. The Assembly of Experts, June 13, 2011 <https://iranprimer.usip.org/resource/assembly-experts>
73. The Final Deal: Rouhani Statement, July 14, 2015 <http://iranprimer.usip.org/blog/2015/jul/14/final-deal-rouhani-statement>
74. Trump: Iran has been "Emboldened" by Nuclear Deal, Published on Feb 5, 2017, <https://www.youtube.com/watch?v=9yNqt-sDKvw>
75. The financial power of the Revolutionary Guards, 15 Feb 2010, <https://www.theguardian.com/world/2010/feb/15/financial-power-revolutionary-guard>
76. The IRGC Security and Intelligence Agencies, April 9, 2019, IRANWIRE, <https://iranwire.com/en/features/65742>
77. Zarif hopes his resignation be a wake-up call, 26 February 2019, <https://en.isna.ir/news/97120703593/Zarif-hopes-his-resignation-be-a-wake-up-call>
78. 1997 Presidential Election, Iran Data Portal, <https://irandataportal.syr.edu/1997-presidential-election>
79. 2005 Presidential Election, Iran Data Portal, <https://irandataportal.syr.edu/2005-presidential-election>
80. Presidential election, Iran Data Portal, <https://irandataportal.syr.edu/2005-presidential-election>
81. 2005 Presidential Election, Iran Data Portal, <https://irandataportal.syr.edu/2005-presidential-election>

82. 2009 Presidential Election, Iran Data Portal, [https:// irandataportal.syr.edu/2009-presidential-election](https://irandataportal.syr.edu/2009-presidential-election)

83. 2013 Presidential election, <https://irandataportal.syr.edu/2013-presidential-election>

84. 2016 Assembly of Experts Election, Fifth Experts Assembly Elections, Iran data portal, <https://irandataportal.syr.edu/assembly-of-experts-elections/2016-assembly-of-experts-election>

85. 2016 Parliamentary Election, <https://irandataportal.syr.edu/parliamentary-elections/2016-parliamentary-election>

86. 2017 Presidential Election, Iran Data Portal, <https://irandataportal.syr.edu/presidential-elections/2017-presidential-election>

### **ՊԱՐՍԿԵՐԵՆ**

1. Hokm-e rahbar-e moazam-e enghelab khatab be shoura-ye negyahban: nesbat-e elam-e salahiyat-e aghayan-e doktor-e Mostafa Moin va Mohandes Mehralizadeh tajdid-e nazar surat girad, <https://www.isna.ir/news/8403-01124>

2 . Ertebat-e tasviri ba nemayandegan-e majles-e shoura-ye eslami  
<https://farsi.khamenei.ir/video-content?id=47928>

3. Che kyasi dar foghdan-e Ayatollah Shahrudi majma-e tashkhis-e maslahat ra edare mi konad? <https://www.mashreghnews.ir/news/923687>

4. Emam Khomeyni: Kuchektarin sahl engari, bozorgtarin faje'eye tarikh ra bevojud mi avarad <https://www.isna.ir/news/96042212449/>

5. Gharargah-e markyazi-e Khatam-al-anbiya be ravayet-e tarikh, <https://www.isna.ir/news/95050114395>

6. Nagofteha-ye khandani tanha zan-e tarikh-e khobregan, <https://www.isna.ir/news/95022615758>

7. Ahmad Khatami: Agha goftand shoma bayad dar astinetan 10 rahbar dashte bashed <https://www.khabaronline.ir/news/642718>

8. Pakhsh-e zende-ye shabake-haye television <https://telewebion.com/channels?fbclid=IwAR2dqp2y6N2gxn3IzYidXhtfINcP0Xe6ete6GXa073XqCvye vZGBvPPL6ao>

9. 1500 nafar az Naja ekhraj shodand <https://aftabnews.ir/fa/news/127534/1500>

## ԳՈՀԱՐ ՄԱՆՎԵԼԻ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ

### ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԻՆԸ ՍՅՈՒՆԵՐԸ

Հրատ. խմբագիր Ազատուհի Սահակյան  
Հայերենի խմբագիր և սրբագրիչ Նինետա Ադամյան

Հրատ. պատվեր N 1412  
Ստորագրված է տպագրության՝ 05.12.2025 թ.:  
Չափսը՝ 60x84<sup>1</sup>/<sub>16</sub>: 21.75 տպ. մամուլ:  
Տպաքանակը՝ 100 օրինակ:

---

ՀՀ ԳԱԱ տպարան, Երևան,  
Մարշալ Բաղրամյան պ., 24